ԺՈՂՈՎՐԴԱՑԻՆ ԵՐԳԱՐԱՆ



Հրատարակություն Ի. Ա. ԵՐԱՆ թիվ 5

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Ի. Ա. ԵՐԱՆ, ԹԻՒ 5

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՒԵԼԻ ՔԱՆ 500 ԵՐԳԵՐ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ,
ԱԶԳԱՅԻՆ, ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ, ԿՐՕՆԱԿԱՆ, ԵՐԻՏԱԿԱՆ
ՄՕՏ 50 ՋԱՅՆԱԴՐՈՒԱԾ ԵՐԳԵՐ



ԵՐԻՆ ՍԱՍՄՈՒԼ
Boston. Mass.

Յառաջաբան

ԱՌԱՋԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ

ՏԱՐԻՆԵՐԷ ի վեր կը փափաքէինք տեսնել ժողովրդային Երգարան մը, որ իր ճոխ եւ բազմակողմանի հանգամանքով կարող ըլլար գոհացում տալ ժողովրդի բոլոր դասակարգերուն — ազգասէրին, յեղափոխականին, կրօնասէրին և երգիծաբանին, եւ իբրեւ տպագրական գործ ալ պատիւ բերէր իր սեփականատիրոջ:

Արդարեւ Թիւրքիոյ սահմանադրութենէն ետք երեւան եկած են բազմաթիւ երգարաններ — գրեթէ ամէնքն ալ փոքրածաւալ, միակողմանի և տպագրական աղքատութիւնը ցուցադրող նմուշներ, որոնց խմբագիրները մեր Թիւրք հայրենակիցները չվշտացնելու տարօրինակ փափկանկատութիւնով երգերու ոճն ու ոգին այնքան փոփոխումի ենթարկած են որ նոյնիսկ իրենց հեղինակներուն անծանօթ կը մնան:

Մեր կարծիքով երգարանի մը խմբագիրը պատմագրի մը հաւատար դերին մէջն է. ան տարբերութեամբ միայն որ մինչդեռ վերջինը իրողութիւնները կ՚արձանագրէ անպայման, առաջինը այդ իրողութիւններու առթիւ արտայայտուած ժողովրդային յոյզերը կ՚ամփոփէ հատորի մը մէջ:

Ծիծաղելի պիտի չըլլա՞ր այն պատմաբանը որ նոյնօրինակ նկատումներով ջանար Աւտանայի կոտորածը պարսիկներուն վերագրել, որովհետեւ անոնք աւելի հեռուն, աւելի տակաւ, և հետեւաբար անվնաս կը կարծուէին ըլլալ: Խեղաթիւրելով երգերու ոգին՝ մենք ո՛չ միայն հակասած կ՚ըլլանք պատմաբանը, այլ և սխալ կ՚առաջնորդենք պատմութեան ուսանողը, ապագային:

Մեր երգարանին մէջ զետեղած ենք երգերը ինչպէս որ հեղինակները գրած են, և ոչ թէ ինչպէս որ մենք կը սիրէինք որ գրուած ըլլային ներկայ պարագաներուն մէջ: Մեր թիւրք հայրենակիցներն ալ վշտանալու պէտք մը չունին մեր այս ընթացքէն, քանի որ բարեշրջման օրէնքով այսօր «Իսլամական գոռ վաչաերուն» սկսեր են յաջորդել «Մենք խնամի ենք թիւրք ցեղին», կամ «Գացէք ըսէք վատ թիւրքին» տեղ՝ «Եղբայր ենք մենք հայ, թիւրք, ևն.», «Մեր հայրենիք թշուառ անտէր»ին հետ՝ եռանդով կերգուի այսօր «Գալգըն էյ վաթանտաշլար»ը, և մեր ազգային հերոսներուն քով միշտ պատրաստ ենք աթոռ մը հրամցնելու Նիազի և Էնվէր պէյերու:

Մեր երգարանը ջինջ հայելիի մը պէս կը ցօլացնէ Հայ ցեղի անցեալն ու ներկան — «երէկն», իր բոլոր Համիտական խժդժութիւններով, ու «այսօրը» իր եղբայրութեան ու հաւասարութեան օրհներգութիւններով:

Ի. Ա. ԵՐԱՆ


ՔԱՆԱՍՏԵՂԾՈՒՀԻ
LES POÈTES ARMÉNIENS



Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ



ԱԶԱՏՆ Աստուած այն օրից՝
Երբ հաճեցաւ չունչ փչել.
Իմ հոգանիւթ չինուածքին,
Կենդանութիւն պարգևել:

Ես անբառբառ մի մանուկ՝
Երկու ձեռքս պարզեցի,
Եւ իմ անզօր թևերով,
Ազատութիւն դրկեցի:

Մինչ գիշերը անհանգիստ՝
Օրօրոցում կապկապուած.
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած՝

Խնդրում էր նորանից՝
Բազուկներս արձակել.—
Ես այնօրից ուխտեցի՝
Ազատութիւնը սիրել:

Թոթով լեզուիս մինչ կապերն՝
Արձակուեցան, բացուեցան.
Մինչ ծնողքս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան:

Նախկին խօսքն որ ասացի՝
Չէր հայր, կամ մայր, կամ այլ ինչ,
«Ազատութի՛ւն» դուրս թռաւ,
Իմ մանկական բերանից:

«Ազատութի՛ւն» ինձ կրկնեց՝
Ձակատագիր վերևից.
«Ազատութեան դու զինուոր,
Կամի՞ս գրուիլ այս օրից»:

«Ո՛հ, փշոտ է ճանապարհդ՝
Քեզ շատ փորձանք կ'սպասէ.
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»:

«Ազատութի՛ւն», գոչեցի
Թո՛ղ որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ դաւ դնէ թշնամին:

Ես մինչ ի մահ կախաղան՝
Մինչև անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտ կրկնեմ,
Անդադար՝ ազատութի՛ւն:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏ, համարձակ միմեանց ձեռք տանք
Եւ յառա՛ջ գնանք բոլորս միասին.
Եւ թող գիտութեան դրօշակի տակ
Մեր Դաշնակցութիւնը գօրանայ կրկին։

Մենք չենք չինելու մեզ համար կուռքեր,
Ոչ երկրի վերայ, ոչ էլ երկնքում.
Եւ աշխարհային բոլոր փառքերին
Երբէք տալու չենք երկրպագութիւն։

Մենք կը քարոզենք սիրոյ ուսումը,
Մեծատուն մարդկանց, չքաւորներին,
Եւ դրա համար հալածանք կը կրենք,
Ներելով ցնորած թշնամիներին։

Երանի՛ նրան, որ միշտ նեղութեան մէջ
Դաժան հոգսերուն է կեանքը մաշել.
Եւ ծոյլ խորամանկ ծառայի նման՝
Իրա տաղանդը գետինը չէ թաղել։

Լսեցէ՛ք, եղբայրք, ձեր եղբօր խօսքին,
Քանի որ թարմ այժ է մեր մէջ եռում—
Մենք յառա՛ջ դիմենք, ինչ էլ որ բաղդը
Պատրաստած լինէր մեզ ապագայում։

ԻՁԷՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ այն վառ սէրը
Թունդ որոտաց իմ սրտում
Իմ հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում։

Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք,
Ելէ՛ք, Հայկայ զաւակունք.
Ելէ՛ք, ելէ՛ք, Հայ եղբարք,
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ։

Ահա՛, եղբարք, հայ եղբայրներ,
Առէ՛ք զրահ, սուր և զէնքեր,
Մահը դաշտում Շաւարշանայ
Մեզի հրաւէր կը կարդայ։

Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք, ևն։

Ա՜խ, հայրենիք, սուրբ անունդ
Անշէջ վառի իմ սրտում,
Մեր Հայ եղբարց շիրիմները
Իրանց գիրկն են մեզ կանչում.

Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք, ևն։

Այս օրերը մեր քաջ կեանքին
Նուիրական թող լինին.
Ո՛վ սիրում է ազատութիւն՝
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն։

Ելէ՛ք, ելէ՛ք, հայկազունք, ևն։



Նահատակներու Յիշատակին

Ազատութեան սիրոյն համար
Շատ արիւններ թափուեցան,
Անմեղ հայրեր ու զաւակներ
Եկան այստեղ թաղուեցան։

Ահա եղբարք ես ալ կերթամ
Ազգիս համար մեռնելու,
Ազատութեան սիրոյն համար
Ամբողջ կեանքս զոհելու։

Գերեզմանիս հողին վրայ
Թափէ արցունք իմ մայրիկ,
Սրտէդ ծաղիկ բուրուճնաւէտ
Նահատակ եմ ես յաւէտ։

Ահա այսօր հայ եղբայրներ
Կուգան այստեղ ողբալու,
Նահատակայ հողին վրայ
Աղի արցունք թափելու։

Ո՛վ եղբայրներ, դուք ալ ելէք
Գերեզմանի խոբերէն,
Ուրախացէք և ցնծացէք
Ազատութեան գոչերէն։

ՉՂԹԱՅ

Ազատութեան քայլ մինուորը պատանին,
Մութ բանտին մէջ նստած է հիմա.
Եւ չարժելով անիծում է չղթային.
Որ ճնշում է ձեռն ու ոտը անխնայ.
«Քայլ պատանի, ասաց չղթան, ա՛հ, չարժիր,
Շարժիր, փշրիր ինձ, միայն մի անիծիր.

Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնս անէծք է,
Կայծակի պէս բռնաւորին կը զարկէ»:

«Գիտեմ, դու ինձ հիմա էլ չես ճանաչում,
Ես իրրև սուր փայլում էի քո ձեռքին.
Ազատութեան պատերազմի դաշտերում,
Հաւատարիմ ծառայելով սուրը գործին.
Աւա՛ղ, հիմա այս ինչ տեղ ենք մենք, ա՛խ ո՞ւր,
Անբա՛խտ ազգ, և ես նոյնպէս անբախտ սուր:

Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնս անէծք է, ևն.

Աւա՛ղ, ինձնից, փայլուն սրից կռեցին
Կոպիտ չղթայ և մի գործիք բռնութեան,
Ազատութեան պաշտպանին իմ ազակից,
Ինքըս ահա չղթայում եմ յաւիտեան.
Այս ժանգը, որ շուրջ պատում է ինձ հիմա,
Իմ ամօթի և բարկութեան գոյնն է նա:

Շարժի՛ր, չարժի՛ր, չառաչիւնս անէծք է, ևն:

(Թարգմ.) Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ՀԱՅՈՒՆ ԵՐԳԸ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ, եկո՛ւր հոս.
— Մեր փրկութեան հրեշտակ.
Հին ռէժիմէն բարբարոս
Ա՛լ մի թողուր յիշատակ։

Սփոփանքի շուքըդ բեր,
Քեզ կ՚սպասենք անհամբեր,
Բռնակութեանդ ենք տեղեակ,
Հոգիներնիս քեզ դըղեակ։

Ազատութիւն, քեզ տեսանք.
Հայոց Ազգն ա՛յ ապահով՝
Քեզ կը կարդայ գովասանք
Հայրենաշունչ բառերով։

Կեանք, ինչք, պատիւ, արդար տուրք
Քեզ կը պարտին Հայ և Թուրք։

Բռնակութեանդ ենք տեղեակ,
Մեր Թուրքիան քեզ դղեակ.
Ազատութի՛ւն քեզմով մենք
Պիտի ապրինք երջանիկ։

Ա՛լ ուխտած ենք սէր մանենդ
Բոլոր Հայ, Թուրք պատանիք,
Ատելութեան չունինք թոյն,
Մեր դաշինքն է միութիւն։

Բնակութեանդ ենք տեղեակ,
Խըղճմտանքնի՛ս քեզ դղեակ։

ԹԷՈԴԻԿ

ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

ԱԶՆԻՒ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգով
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով:

Հեռանում եմ, անգին ընկեր,
Չըգնահատուած ոչ ոքից.
Բայց հաւատեաւ անձնանուէր
Ազգիս մշակ կը հաշուիմ:

Ազնիւ ընկեր, չըմոռանաս,
Անդաւաճան ջերմ սիրով.
Ես սիրել եմ իմ հայրենիք,
Գնա և դու նոյն շաւղով:

Խեղճութիւնը հայոց ազգին,
Կարեկցաբար մտածիր.
Ոսկէ դրդոյկն Եղիշէի՝
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր:

Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,
Ազատ կամքով ու խղճով,
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան,
Իւր խնկելի քաջերով:

Հայրենիք սեղան սրբութեան
Ես Աստուծոյ առաջև,
Շատ կաղաչեմ, շատ կարտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արև:

Իմ մտերիմ, մահս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգով,
Որովհետև խիղճս արդար է
Ազգասիրութեան ջատագով:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆՑ

ԱԼ ԲԱՒ Է

ԱԼ ԲԱՒ Է, հայ եղբարք,
Այս անտարբեր մեր ընթացք.
Հայրենիքը կորաւ,
Հայ ժողովուրդը մեռաւ:

Տուրքի տակ հայ անհատ,
Ծընչըւում է անընդհատ.
Հայ գեղջուկ իր կեանքով,
Զոհ է դարձել վատերին:

Հայ գլուխ հինգ փարայ,
Այն էլ լոկ քէֆի համար.
Հայի հող ու ոչխար,
Քիւրդի, Տաճկի համար են:

Ա՛լ բաւ է, հայ եղբարք,
Թէ կը սիրենք մեր ազգ.
Եւ մեր սուրբ կրօնը,
Թէ պիտ պաշտենք համարձակ:

Մէկ հոգով ի մի սիրտ,
Կապուինք հայեր ամրապինդ.
Վառ Թիւրքի լծի տակ,
Թող վիզ ծըռեն անզգայք:

Զըմռռնանք այն հայեր,
Որ հայրենի սուրբ սիրոյն.
Իրենց անձը զոհել
Մեզ օրինակ են դարձել:

Օն, ուրեմն, եղբայրներ,
Առնենք մեր սուրը—սուսեր.
Զուխ հեստուկ արիւնոտ,
Մեզ կ'սպասէ անհամբեր:

ՎԱԶԳԷՆ

Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ա՛Լ ԹՈՂ դարերին արցունք հայուն աչերէն,
Փոչոտ քնարն ա՛լ վար առնուի որմէն
Եւ սիրասփոփ նուագը իր լարք թող հնչեն՝
Չի հայք այսօր սէր միութիւն կը դոչեն:

Ա՛յս սիրոյ նշան
Մեր ընկերութեան
Մաղթենք բարձր ի ձայն
կեցցէ՛ յաւիտեան:

Հայեր, երթանք լեռ, ձոր ղուարթ պարելով,
Հայաստանի մեր սիրելի հէգ մօր քով.
Զմեզ բաժնող խաւարն վանենք և յառաջ:
Երթանք սիրել ծաղկունս ոտքին ընդ առաջ:

Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Մեր ընկերութեան
կեցցէ՛ ձայն կուտան:

Մեր հայրենեաց արիւնազանգ սուրբ դաշտեր,
Ե՛րբ կը բուսանին արդեօք փշոց տեղ վարդեր.
Ե՛րբ կը կանգնին աւերակներն և հայեր
Ճանչնան իրենց պարտք իրաւունք, այս ուխտ մեր:

Հայրենեաց ի նուէր
Պատրաստ մեր սրտեր
Սէր և միութիւն
կեցցէ՛ ձայն կուտան:

Ահա պարտուց և իրաւանց սուրբ դրօշակ
կը ծածանի մեր խեղճ ազգին յոյն ու փառք.
Սահման, օրէնք դրուշմած կան իր վրան
Որոնք կրնան կեանք տալ հայոց ազգութեան:

Ազգի կենսատուն
Սէր և միութիւն
Գոչէ քաղաքն վան
կեցցէ յաւիտեան:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԾԲԳ

Ա՜Խ ԹԷ երկինք գէթ մի վայրկեան
Լսէր կրծքիս հառաչանք,
Փայլէր ինձ սուրբ ազատութեան
Վառ կենսատու արեգակ։

Ա՜խ թէ և ես կարենայի
Որպէս արծիւ անարգել
Գէթ մի րոպէ ազատ կեանքի
Ազատ օդում սաւառնել·

Որպիսի՜ ջերմ լի փափաքով
Կարօտ պայծառ երկնքի
Կը թռչէի ես խնդալով
Դէպ հայրենիքս անձկալի։

Դէպ այն երկիր նուիրական,
Ուր սահեցան անխռով՝
Զըքնաղ օրերն իմ մանկութեան
Լի դրախտային սուրբ սիրով։

Դէպ այն երկիր երջանկալից,
Ուր մայրիկս նազելի
Իւր ջերմ գրկում պարգևեց ինձ
Եւ՛ կեանք, և՛ սէր, և՛ հոգի։

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

Հայերուս Բաղձանքը

Ա՜խ, ի՜նչպէս կ'ուզեմ տեսնել մեր հայրն
Ազատ, ապահով, կրթեալ, ինքնագոհ,
Ամէն հայի տուն—դրախտ երկնային...
Լոկ այդ բանն ինձնից չուզենար մէկ զոհ:

Ա՛խ ի՜նչպէս կուզեմ տեսնել Հայաստան
Մի օր ազատուած թշնամու ձեռքէն,
Հայի երկիրը հայի սեփական...
Լոկ այդ չի բաժնէր ինձ իմ կոպէկէն:

Ա՛խ, ի՜նչպէս կուզեմ որ մեր հայերուս
Արծարծուէր սէրը ուսման, գիտութեան,
Հայի մէջ չի մնար մէկ հատիկ անուս...
Լոկ հեռու ինձնից թուղթ ստորագրութեան:

Ա՛խ, ի՜նչպէս կուզեմ որ հայ պատանիք
Դէպ համալսարան խմբով վազէին,
Եւ Զուիցերիա երթար հայ աղջիկ...
Լոկ ինձնից նոքա կոպէկ չուզէին:

Ա՛խ, ի՜նչպէս կուզեմ որ մեր Զէյթունցին
Միթռալյեօզ, շասպօ, ռըմբիկէն ունենար,
Զարդ ու բուրդ անէր քուրդ ու չէրքէզին...
Լոկ ինձնից զինքի նա փող չուզենար:

Երբ մեր հայրենիք հրաշքով ազատուէր,
Մերոնք էլ ազատ կեանք օր վարէին,
Ա՛խ, ի՜նչպէս, ի՜նչպէս լաւ բան կը լինէր՝
Երբ հայք ինձ իրանց իշխան ընտրէին:

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ.

ԱԽ ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արև չը տեսանք
Վա՛խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չ'իմացանք:

Հարուստ մարդիկ կուտեն կը խմեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորթ տըղերքն ենք,
Մեզ վայ չըկայ աշխարհից:

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ
Քարից հողից հայց քամէ—
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ վայելէ····

Խեղճ աղքատը դառը դառի—
Դառարիկ նառի···· Էյ, աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քա՛ր աշխարհ····

Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ ցաւ
Օր ու արև չը տեսանք.
Վա՛խ, մեր կեանքը սևով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ԱԽՉԻ, հարսնառու եկաւ
Վերի կալերէն
Քեզի հինայ բերին
Թղթի ծալերէն:

Ախպէր, արի՛ ախպէր,
Եզները բառնանք,
Երթանք ղարիբ երկիր,
Թէզօք յետ դառնանք:

Կանչէ, կռունկ կանչէ,
Քանի գարուն է,
Ղարիբների սիրտը
Գունդ գունդ արիւն է:

Կանչէ, կռունկ, կանչէ
Ձէնըդ բարակ է,
Եարիս լեզուն թաղա
Մեղրած կարագ է:

Կռունկ, եղած տեղըդ
Ջայիր-չիման է,
Աշխարհքը արեգակ՝
Ինծի դուման է:

ՈՂԲ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ա՜խ, Վասպուրական, տխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողվեցան.
Ահեղ կռուի մէջ այնքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան:

Ա՜խ բաւ է հայեր, մինչ այսպէս դերի,
Թողնել հայրենիք դիմել օտարի.
Օտար սիրում է մեզ իբրև հիւրի,
Եւ մեր հացն ու ջուր դարձնում է աղի:

Ա՜խ բաւ է հայեր, ձեր անմիութիւն,
Պատիւ չի բերեր մեր հայ ազգութեան.
Պէտք է շուտ գտնել միութեան դարման,
Որով ազատենք մեր մայր Հայաստան:

Պէտք է միանայ ամբողջ Հայաստան,
Թող տեսնէ Եւրոպ ու Ամերիկան,
Պէտք է մենք լուծենք վրէժ հայկական,
Քանի այսպէս է Թուրքի դատաստան:

Վան փոքրիկ քաղաք իր գաւառներով,
Լեցուեցաւ դիակ հարիւր հազարով,
Ներկուեցան դաշտեր հայու արիւնով,
Ձայն տուին երկինք ամպերն աստղերով.

Տեսէք Թուրք ազգը ինչքան անամօթ,
Քաշեց մեր վրայ զօրք ու թնդանօթ
Բայց երբ շողշողաց հայկազեան սուսեր,
Խաւարը պատեց թշնամեաց սրտեր:

Ելէ՛ք ընկերներ առնենք հրացան,
Անգութ թուրքերը նոր կատաղեցան.
Մեր հայ եղբայրներ շրջապատուեցան
Եւ մեր տուները հրոյ ճարակ դարձան:

Իմ վերջին համբոյրս կուտամ ձեզ հայեր,
Չըլլայ թէ մոռնաք դուք իմ պատուէրներ:
Եւ Հայաստանի անմեղ մանուկներ
Շուտով լուծեցէք հայու վրէժներ:

Ս. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԿԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ

ԱԿԱՆՋ դրէք իմ խօսքերուն,
Քարոզ կուտամ ես առջերուն.
Ծօ տիւք անտաշ, կոշտ շինական.
Հերիք չելաւ մնաք անբան:

Մէկ իրիշկէկ ձեր քօլօղներ.
Նման են սարի սուրուխ ծէրեր.
Ապա էտա քէդախկըներ,
Ձե արեր են մէկ մէկ տէվէր:

Ձիւմ իրիկուն կը ճենճռտաք,
Կուգեաք մէջ խողին բոլկտաք.
Ծօ տիւք մանկեար էշ է՞ք դարձե,
Ձէ՛ Աստուած ձե մարդ ի ստեղծե:

Շներ կուտեն ձեր անուշ կաթ,
Ձեր կիրածն ի անեղ կէօրօմսա.
Է՛, ինչխ էլնի պագի էլ թան,
Պագի պինդթան, պագի չորթան:

Պախս օր կուտէք անխամ վրռօշ,
Ինոր խամար կաֆէյդ ի պօշ.
Արաւց կ՚խանէք ոըսուռ ցորեն,
Ձեր կերածն ի տարեկընէն.

Թէ որ խօճայ քիւրդ մ՚դայ ձեր տուն,
Դառնաք առջև թէօյլընկի շուն.
Հիչ չէ՛ք տսե որ մենք չելնենք,
Սև օր կուդեայ ինոնց գլխուն:

Թէ բութրնի խատնի կըռտան,
Կը լըփըռտէք քանց դեղի շան.
Ձեր ուշխարներ կուտեն աղէք,
Դիւք քանց տպուշ իշու կ՚նայէք:

Մարթ որ բըռթնի ձեր կուշտ նստի.
Կույեա խոստու կը խեռըլի·
Էշ կը թըռքի, կը կույեի,
Խօտն ինչի՞ ձեր մօտէն բիւրի:

Ձեր շապըկներ թէ շուն ծամի,
Քասսուն տարի սիրտ կը խառնի.
Վանոյ մունտառ կեամու ելքեան,
Քեանց էն հաղար կալթ աղէկի ի:

Կառէք ըստեղ որ չարչարուենք,
Առքեաւութնին արժան կ՛ էլնենք.
Արքաւութիւն քե ի՞նչ, տաւար,
Աստուած չարե իշու խամար:

Քրիստոս առջև ձեր կը քըփրեն,
Կառէք «Աստամ հա թող խաճեն».
Շուն իր տիրոջ թարափ կ՛ էլնի,
Քրիստոս ինչի՞ ձեր ումուր չի:

Ապա Քրիստոս էլ ի՞նչխ անի,
Որ ձե չի տայ Սաղայէլի.
Ծօ դրախտ մանկեար անտէր չայիր ի,
Որ էշն էրթայ մէջ թաւալի:

Հոլա շատ բան պիտի ասի,
Ամա՞ն իմ ջան գինի կուգի.
Քիչ մ՛էլ քեաւար աղէն թէզի,
—Էտ ինչ պէղ ի, էտ ի՞նչ չէնք ի:

Որը թըլթան, որ կարմիր կեադ,
Որն էլ ցից ցից քանց խողու մադ,
Էստ էլաւ չէ՞նք, էստ էլաւ հա՞լ,
Գեաւին մըռանի էստ ձեր պաժ:

Մէկ իրիշկէք էսանց մաղեր,
Մանեն մէյմէկ խառնած կաժեր.
Ոջիլ մէջ փայլէվան դարձե,
Սանտըր, սապօն ե՞րբ ի տեսե:

Տ. ԱՄԻՐՋԱՆԵԱՆ

ՆԿԱՐԻՉԸ

ԱԿՆԱՊԻՇ անձայն, խորհուրդ ճակատիդ,
Պատանի, ո՞ւր ես մտքով մոլորած.
Ներկ ու վրձիններ ցիր ցան առաջիդ,
Վչեայ կտաւը քու հանդէպ փռած:

Շուռ տուր աչերդ, նայէ՛ դէս ու դէն,
Տե՛ս, քեզ ծաղրում է անմիտ ամբոխը.
Զարթի՛ր, սիրելի այդ անուշ քընէն
Գոնէ մի անգամ հանէ՛ քո ոխը:

Բայց դու ներում ես նոցա վեհ հոգով,
Խուլ ես աշխարհի ունայն շըշուկէն...
Ցանկարծ աչերըդ փայլեց սուրբ շնորքով,
Հըսկայի սիրտըդ թնդաց խիստ ուժգին:

Առիր վրձինը, թաց արիր ներկով,
Շունչ տուիր անշունչ կոպիտ կտաւին.
Երկնից խորհուրդը մեկնեցաւ քեզմով,
Քեզ անկարելին անյայտ է բնաւին:

Սէր, ատելութիւն, հանճար, բարութիւն,
Տուիր պատկերին մատիդ շարժուածքով.
Ինչ որ չըյայտնեց ճարտարի լեզուն.
Դու պարզ յայտնեցիր անձայն խօսուածքով:

Ապշեց ամբոխը, վազեց, հառաչեց,
Քու կենդանագիր պատկերի դիմաց.
Ծնկաչօք զմուռս ու հալուէ խնկեց,
Գոչեց միաձայն «դա՛ է իմ Աստուած»:

Բայց, ա՜խ քու անքուն ժամերի ճիգը,
Քանի մի արծաթ հազիւ գին դրին.
Ստեղծողդ դարձար քու խեղճ խրճիթը,
Ակեր շարեցին շուրջ քո պատկերին:

ՔԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ.



ԱԿՈՌԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ակռաի մեծ կարասին
Բոլորաիքն են բազմեր.
Աւագ իշխանք, մեծ պարոնայք
Ժողովք են կազմեր.
Այո, այո, ժողովք են կազմեր:

Սատիկ է վէճ, մեծ է խնդիր
Զոր հոն տեղը կը խորհին,
Թէ ինչ կերպով զարման մ' ընեն
Հիւանդ մեր աշխարհին.
Այո, այո, հիւանդ մեր աշխարհին:

Մէկն աս կ'ըսէ, մէկն ան կ'ըսէ
Կը ծագի լոյն առաուն.
«Ինձ լսեցէք, տիարք», կը գոչէ
Աւանին պետն արթուն
Այո, այո, աւանին պետն արթուն:

«Թող թաց առնու, կ'ըսէ, Բագոս
Եւ փառօք ապրի չատ.
Իսկ ցնծութիւն ըլլայ գժխոյ,
Եւ գահն ալ Արտաշատ:
Այո, այո, գահն ալ Արտաշատ:

Այսպէս մեզի նոր զուարթութիւն,
Արևները կը ծագին.
Ուրախ ըլլայ մեր ժամանակ
Եւ փառք մեր աշխարհին.
Այո, այո և փառք մեր աշխարհին:

Հ. Վ. ՋԱԳԼՃԵԱՆ



ԱԻԵՏԱԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ահա ապաւինի Նոյեան տապանի·
Թռած Մասեաց մառախլապատ երկնքէն,
Հրաւէր կարդայ ապաւութեան հայրենեաց
Ազին անդին թափառական հայերուն,
Զայն աւետեաց Հայաստանի բերանէն,
Ողջոյն կուտայ հայոց ողջոյն նոր փառաց·
Հերի՛ք կ՚ըսէ, այսչափ հարիւր տարուան քուն,
Օ՛ն, աչք
Մեր հայրենեաց հրաւիրակին
Ակա՛նջ,
Չի պատգամ է այս երկնային:
Արթնութիւն արդ, պանդուխտ հայեր,
Հասաւ կ՚անցնի հայոց օրեր·
Առէք ողջոյն ապաւութեան,
Ողջոյն սիրոյ եղբայրութեան,
Վերջ վիճակին ձեր գերութեան,
Յերկնից հայոց այս է պատուէր:
Դարերէ ի վեր արիւն արցունքով
Թացաւ հայրենեաց քաղցր աւերակներ,
Թռչող հրեշտակն ալ ահա ինձ ընկեր,
Վկայ է խօսքիս խնդում երեսով:

Այո, այո, հայ տղաք,
Վկայ, ես՝ ձեր հրեշտակ
Հայաստանի նոր գարնան
Ծաղկունքն ահա ձեզ կուտամ:
Օ՛ն անդր, քորք և եղբարք, որդիք դիւցազանց
Ջերմ թռչներ գարնան գեղ դայլայլիկով
Սուրանք փոյթ ի գիրկ հայրենի փառաց:
Հոս թողունք, հոս,
Վատթար սրտեր,
Հետ առնունք սէր·
Հոս թողունք, հոս,
Անելութիւն,
Ոսոխն հայուն,
Հոս թողունք, հոս.
Ազգերնիս մէկ, լեզունիս մէկ, հաւատքնիս մէկ,
Հայրենիք մէկ, հայրերնիս մէկ, փառքերնիս մէկ,
Ինչ՞ու չըլլայ սրտերնիս մէկ
Եւ արդ հոս ի սև կրից զինաթափ,
Ամենքս ալ հաւասար հայ եղբարք,
Մեր զէնքը խաչ՝ ի կուրծս վառ ի վառ,
Օ՛ն զհետ հրեշտակիս ծափ ի ծափ՝
Զարնենք տաւիղք ոսկեքնար,
Սրբենք դառն ցաւի աչեր·
Աշխոյժ ի սիրտ ձայն վար ու վեր·
Ապրի հայոցս աւետաբեր,
Ուրախութիւնն այս հայոց տար:
Օ՛ն պար, խաղ,
Մէն մ՛ի ձախ,
Եա, յառաջ.
Ուրախութիւնն այս հայոց տար:

Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԵՐԳ ԲԱԺԱԿԻ

ԱՀԱ ԲԱԺԱԿ ուրախութեան.
Ի սէր յաւէրժ միութեան
Զի վայելուչ որդիք Հայկեան
Մեկտեղ հրճուին և ցնծան:
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրենք մի սիրտ մի արիւն:

Վերցուր աչքդ յերկնից կամար
Փայլի հեռուն աստղ մի պայծառ,
Եւ դու, ո՛ Հայ, զարթիր, սիրտ առ,
Հայոց բաղդն ալ չէ խաւար:
Կեցցէ՛ սէր և միութիւն, ևն:

Բաւ է այսչափ բաժանում,
Ըլլանք ուրախ ու խնդում,
Նախանձ վրէժ ձեզ թողունք
Անդունդք և վիհք անհատնում:
Կեցցէ՛ սէր և միութիւն, ևն:

Փորձ մը ըրինք բաժանման,
Փորձ մ' ալ ընենք միութեան.
Լեցուի փափաքդ Հայաստան,
Տե՛ս, որդիք քո միանան:
Կեցցէ՛ սէր և միութիւն, ևն:

Ի՛նչ և ընենք, ի՛նչ և առնենք,
Ո՞ չը գիտաց թէ մենք Հայ ենք,
Ո՞վ չի գիտեր թէ եղբայր ենք,
Արիք ծիծաղ դիմօք երգենք.
Կեցցէ՛ սէր և միութիւն, ևն:

Ո՞ր բռնաւոր, ո՞ր օրէնքներ,
Կը պատուիրեն թէ մի՛ սիրեր
Ազգիդ օգուտ ու բարիքներ.
Սիրոյ ձայնն է յերկինս ի վեր:
Կեցցէ՛ սէր և միութիւն,
Կրենք մի սիրտ, մի արիւն:

Ս. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ



ՍԻՐԱՀԱՐՈՒԹԻՒՆ

Ահա ելաւ լուսինն արծաթ,
Մութ ամպերու ստուերէն,
Ահա նաւակն ալ գնդալարդ,
Դուրս սահեցաւ ժայռերէն։

Անուշ հովի՛կ, փչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր բիւր-բիւր ալիք։

Նաւակին մէջ իմ գեղուհիս,
Փռուած անփոյթ լուսնի տակ.
Կը ձայնակցի իմ կիթառիս,
Հնչուն ձայնով մը յստակ։

Անուշ հովի՛կ, փչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր ձայնն անուշիկ.

Զայնով կ'երգէ սէր ու գըգուանք,
Համակ յուզում ու սառսուռ.
Ալ թող աղջիկ ներդ ու նուագ,
Բոց աչերդ ինձ դարձուր:

Անուշ հովի՛կ, փչէ՛ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր նաւն ու աղջիկ:

ՇԱՆԹ



ՀԱՅՈՑ ԵՐԳԸ

ԱՀԱ ԾԱԳԵՑ կարմիր արև,
Տաք և պայծառ է օրը.
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Յառա՛ջ տարէ՛ք արօրը:
Վարը վարենք, ակօս փորենք,
Ես՛ր ակօսներ հողի մէջ,
Սերմ ցանենք, որ հունձ հնձենք,
Ցորեան դիզենք կալի մէջ:
Ուտելու մի՛շտ պաշար ունենք
Ուրա՛խ կ'անցնի մեր օրը,
Կը գայ ձմեռ — մենք վախ չունենք —
Լի և կուշտ է մեր փորը:
Դէ՛, քաշեցէ՛ք, սիրուն եզներ,
Շուտով վարենք արտերը.
Թո՛ղ չասեն մեր դրացիքը՝
Ծոյլ են Հասօի եզները:—

ՐԱՖՖԻ.

ԵՐԳ ՌԱՄԿԱԿԱՆ

ԱՀԱ ԿԵՐԹԱՄ, սիրելի մայր,
Ազգիս համար մեռնելու.
Քաջ ընկերներով միասին.
Անգութ Թուրքը ջարդելու:

Գերեզմանիս քարին վրայ,
Թափէ արցունք հայր և մայր.
Թափէ արցունք, ցանէ ծաղիկ,
Դեռ պզտիկ եմ ես, մայրիկ:

Գերեզմանիս հողին վրայ,
Թեթև քարեր դիզեցէք,
Ասկից վերջը, խեղճ աղքատներ,
Զաւակներնիդ սիրեցէք:

Ես երբ Սեբաստիա կ'երթայի,
Երկու օրէն կուգայի.
Երկու օրը կ'ըլլար տարի,
Ես քեզ կը կարօտնայի,

Ելլէի լեռանը վրայ,
Քար մը զարնէի գլխուս.
Իմ գլխուս եկած ձիւնն ալ,
Մասեաց գագաթն ալ չկայ:

Պարտէզիս մէջ երկու ծառ կայ,
Տեսնողին զարմանք կուտայ.
Հայ քաջերու արիւնովը,
Կարծես ներկած ճիւղեր կայ:

Արդեօք այս մեր քաշածները,
Պիտի լսես, ո՛վ Աստուած.
Թէ ողջ պիտի տեսնենք մենք,
Հայու դրօշակը պարզած:



ԵՐԳ ՄԱՀՈՒԱՆ

ԱՀԱ ՄՕՏԵՑԱՆ մահուան ժամերս,
Ալ չեմ իմանար բոլոր ցաւերս·
Կը զատուիմ քենէ, սիրուն ծաղիկս,
Բայց դադրում չունին իմ խեղճ աչերս։

Ինչպէս պիտի զատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս։

Համբերէ քիչ մը, ո՛վ մահ սոսկալի,
Ձե՞ս մեղքնար դու սիրտն իմ ցաւալի·
Համբերէ քիչ մը որ սէրս առնեմ,
Եւ այնուհետեւ հանգիստ քուն ընեմ։

Ինչպէս պիտի զատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս։

Երբ կը մտածեմ մէկ երկու ժամէն,
Հողեր ու որդեր գլխս պիտի ծածկեն·
Ամեն կողմերս ծակեն ծակծկեն·
Իմ մատղաշ մարմինս մատաղ պիտի անեն։

Ինչպէս պիտի զատուիմ, սաստիկ է սէրս,
Բայց օգուտ չունի, Աստուած է տէրս։

ԿԱՊՈՒՏԱԿ ԱՉԵՐ

Ահա սուրհանդակի սայլակը
Ուղիղ ճամբով է դուրս թըռչում,
Եւ վալդայի սխուր զանգակը
Կամարի տակն է ղօղանչում։

Արթուն սայլորդը գիշերուայ դէմ
Իր վիճակի վրայ տըխրեց,
Եւ սիրուհու աչաց կարօտը
Նա տըխրադին ձայնով երգեց.

«Կապոյտ աչեր, կապոյտ աչեր,
Կըտրիճիս կեանքը մաչեցիք.
Ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք չար ոտխներ,
Ինչո՞ւ սըրտերս բաժնեցիք։

«Մընաս բարեաւ իմ տուն հայրական,
Մընաս բարեաւ իմ սիրական,
Ես կը հանգչեմ գերթ բոց կըրակին՝
Այս անըբնակ դաշտի մէջին։

«Արեւիս լոյսը խաւարել է,
Այս աշխարհում էլ որը եմ ես.
Սըրտիս կարօտը աղջկաս տեսնելու
Մինչև ի մահ գըկուած եմ ես»։

Այս որ ասաց՝ չարժեց մըտրակը,
Երեք ձիանց մէջքին խրտխեց.
Իր սիրուհու պարզ յիշատակը
Այսպէս երգով նա վարատեց։

ԱՂՈՒԷՍԸ

Աղուէսն եկաւ տափիկ մափիկ,
Քանց մեր կատուն կանափըտիկ.
Աղուէսն եկաւ կէօմշայ սարէն,
Եկաւ մտաւ մեր պիւղարէն.
Փչրուկ կերաւ թաւիլց վերէն,
Աչխարհն եկաւ ուր թամաշէն:

Աղուէսն եկաւ սարէն՝ լալով,
Սիրտ կը տիէր ջուխտ մ՚քնարով.
Աղուէսն ասաց իմ տեղ նեղ ի,
Խաւար ճիտեր փորիս դեղ ի:

Մեծ խաւ մը կէր վիզն էրկէն էր.
Ճիտերն եաւ տասնըմէկ էր.
Աղուէսն եաւէն կը մէրմըկէր.
Աղուէսն նստե վեր տախտըկին,
Պոչն ի տնկե տեխ տանտըկին:

Աղուէսն իրե տափիկ մափիկ,
Քանց մեր կատուն կանափըտիկ.
Խաւար ճիտերն արաց խորտիկ:





ՐԱՖՖԻ

ՎԱՆԱՅ ՓՈՎԱԿ

Ամէն տեղ տիրած խորին լռութիւն,
Կարծես թէ մեռած լինի բընութիւն,
Նըստած սրգաւոր, պանդուխտ, միայնակ,
Ո՛հ, քեզ եմ տեսնում, ո՛վ փայլուն լուսնակ:

Աշխարհի սկզբից դու մինչ ի վախճան
Երկնակամարով առնում ես շըրջան,
Ո՛հ, դու տեսել ես հայ ազգ բարեփառ,
Արդեօք տեսնո՞ւմ ես նրա ցաւն անճար:

Արդեօք դու ես խըղճալոյս նըման,
Տեսած Հայաստան ժանտ ոտից կոխան՝
Թափո՞ւմ ես աչքիդ ազի արցունքները,
Եւ սըրտիդ մէջում ցըցւում են նետեր:

Քար է քո սիրտը, և խիղճդ մեռած,
Քանի՛ արիւններ, քանի՛ կոտորած
Տեսար, լռեցիր, ու դարձեալ պայծառ
Հայ երկնից վըրայ կապում ես կամար:

* * *

Ձա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չկամի՞ս դըժբախտիս.
Շարժեցէ՛ք, ջնիխուաք, ալիքը վէ՛ր-վէ՛ր,
Խառնեցէ՛ք արտասուքս այս ջրերի հետ:

Հայաստանի մէջ անցքերին վըկայ,
Սկզբից մինչև այժմ խնդրեմ ինձ ասա՛.
Մի՞թէ միշտ այդպէս կը մնայ Հայաստան,
Փըշալից անապատ, երբեմն բուրաստան:

Մի՞թէ միշտ այդպէս ազգը խղճալի,
Կը մընայ ըտորուկ օտար իշխանի,
Մի՞թէ Աստուծոյ աթոռին մօտին
Անարժան են հայն ու հայի որդին։

Արդեօք գալո՞ւ է մի օր, ժամանակ՝
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ հայապզիք
Դիմեն դէպ իրենց սիրուն հայրենիք։

* * *

Յանկարծ ծովակի երեսին մի լոյս —
Ջրից դուրս եկաւ նազելի մի կոյս,
Մի ձեռքում ունէր նա վառած լապտեր,
Իսկ միւսում քընար՝ փայլուն փըղոսկեր։

Արդեօք հիւրի՞ էր, հրեշտա՞կ աննման,
Ոչ, հայ մուզաների տիպ համանման.
— Հայոց ճակատագիրն կարդա՛, ա՛վ մուզա,
Ներկան ու գալոցն դուշակի՛ր, ասա՛։

(Աստց երկնային այն ոգին քաղցրիկ.)

Աչեափք տամ քեզ, նըժդեհ հպատանի,
Սըրբի՛ր աչքերիդ արտասուքն աղի.
Կը գան նոր օրեր, օրեր երջանիկ,
Երբ Տիրոջ կամքով, ազատ ու արդար,
Կը թագաւորէ կրկին ոսկեղար»։

«Հայոց մուզաներ կը զարթնեն կըրկին,
Հայոց Պառնասը կը ծաղկի վերստին,
Եւ Ապոլլոնեան կառքը լուսարար
Կը բոլորէ հայ թուխ երկնակամար»։

«Մենք ևս քեզ պէս, երբ խորին դիշեր
Պատեց Հայաստան, սրգաւոր օրեր
Շատ ենք անցուցել. այժմ, սիրելի՛,
Մենք ևս հաշտութեան առացանք ձիթենի»։

«Սըրբեցէ՛ք քնարի լարերը ժանգոտ,
Ելէ՛ք Հայաստան՝ երգով եռանդոտ,
Զարթեցրէ՛ք հայոց աչխոյժքը մեռած.
Լըցուեցաւ կամքը, հնոտաւ ժամանակ.
Օրը կը բացուի, — ահա Արուսեակ
Ձեզ յայտնի նըշան — ասում է Աստուած»։

Կրկին մթնեցաւ...։ Ջըքացա՛ւ պատկեր.
Երկար ժամանակ դիւթական ձայնը
Հընչում էր խառնըն՝ ալիքների հետ.
Օդին սիրել էր բուրում հոտաւէտ։

Ախորժելի՛ լուր, աւետիք քաղցրի՛կ,
Ո՛րպիսի հըրճուանք. մուզայդ գեղեցիկ,
Ասա՛ մեզ, մեկնի՛ր, արդեօք՝ է՞ հնարին
Մի մեռած մարմնի կեանք տալ վերստին։

ՐԱՖՖԻ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԸՈՒ ԸՄՊ

Ամպ · · · դէպի ո՞ւր այդքան շտապ,
Ինչ կը վազես բուռն ի տագնապ · · ·
Արդեօք առեր տանի՞ս պատգամ.
Երկրիս մէկ կողմը տարաժամ:

Ա՛մպ · · ·քո երես տխուր է, սև,
Աա՛, վրէ՞ժ մ'ունիս ներքև.
Թէ՝ տրտմութիւն մը վշտահար,
Ձերմակ դէմքիդ ածէ խաւար:

Արդեօք երկնից բնիկդ ի դեհ,
Հով մը հատաւ վարե՞ց նժդեհ,
Եւ դու՝ ցաւով քո հայրենեաց,
Ինձ պէս դնաս աչո՞ք ի լաց:

Ինձ պէս որ լոկ և ի յերեր
Ձգաւս միայն ունիմ բնկեր.
Եւ հայրենեաց իմ կարօտով՝
Հալիմ, մաշիմ բնդ հող ու ծով:

Ա՛մպ · · ·թէ լցուած դու սիրտ ունիս՝
Ցօղ և անձրև հեղուս՝ հանդչիս.
Թէ գոռ լցուած ցասմանդ է չափ՝
Ցորտ և չանթ թափես սարսափ:

Իմ ալ լցուած վշտօք է սիրտս
Ծանրացեալ ճակատս է դառնաքիրտ.
Բայց ո՞ւմ աչքիս գետեր դեղում,
Պանդուխտիս ցաւ թափեմ ես ո՞ւմ:

Ա՛մպ, ա՛մպ · · · քան դիս չատ երջանիկ
Տեղ մը չունիս քեզի բնիկ.
Հիւսիս և կամ հարաւ վազես՝
Երկինք բոլոր քեզ ասպարէզ:

Իսկ ես՝ որչափ առնում մի քայլ
Թափեմ արցունք, զի քայլ մըն այլ․
Ի հայրենեաց իմ հեռանամ…
Բայց մ՚ալ ի մահ յառաջ գնամ։

Խ․ ԵՊ․ ՆԱՐ-ՊԷՅ

ԱՅՍ ՍԵՒ ԱՄՊԵՐ

ԱՅՍ ՍԵՒ ամպեր, վայ սև ամպեր,
Սիրտս պատեց սև ու մութ…
Նարար ինչ էք դուք ինձ բերում —
Գարնան անձրև՛, թէ կարկուտ…

Յուսով-լուսով արտ եմ ցանել,
Արիւն թափել ու քրտինք,
Ողջ սուրբերին մոմ եմ վառել,
Աղօթք արել… որ երկինք՝

Արտիս նայի, տունս խնայի
Կեա՛նք տայ, օ՛ր տայ իմ հացին․
Վայ բալէքիս… Աստուած չ՚անի,
Թէ որ անհաց մնացին…

Ա՛յ սև ամպեր, ինչ էք գալում․
Սիրտս պատեց սև ու մութ…
Նարար ինչ էք արտիս բերում —
Գարնան անձրև՞ թէ կարկուտ։

Ա․ ԾԱՏՈՒՐԵԱՆ

Յեղափոխական Այբուբէն

(Բացատրութիւն Հայ տառերու իբր յեղափոխական խորհրդանշանք)

Ա ՅՔՆ աւետիս Ազատութեան։
Բէնն է բոլոր դէմ բռնութեան.
Գիմը գաղտնի գործել փաստէ,
Դան ալ՝ «Դատին Դրամով նպաստէ»։
Եչըն երգէ Եղբայրութիւն.
Զան թէ Զէնքով ազատութիւն.
Էն էրկրուծին մեզ կը յիշէ,
Ընկերութեան Ըթը նիշ է.
Թօն Թնդանօթ նչանակէ,
Ժէին մրտաքն ալ Ուժանակ է.
Ինին դուցիչ Իրաւունքի,
Լիւնը Լոյսի և ուսմունքի.
Խէն Խորհրդով գործել խրատէ,
Ծան Ծայրահեղ Ծրագիր կատէ,
Կէն կը կտրէ Կիրքն ու Կեղծիք,
Հօն Հրաւէր Հայն Հայրենիք·
Ձեզ անձնուէրը կը ճայնէ Ձան,
Ղատն ըսենք Ղեկ մեր ուղղութեան,

Ճէն ալ ճչգրիտ ճանչցնէ ճամբան,
Մէն Միութիւն մեզ կը մաղթէ,
Յին յուսադրէ թէ Հայն Ցաղթէ.
Նուն Նոր կեանքի է նշանակ,
Շան Շարժումի է գըսպանակ.
Ոն սրտնէ Ուժ և ուսում,
Չան Չարերուն ոչնչացում.
Պէն Պարտք ճանչնալ կը պահանջէ.
Ջէն Ջոջերուն չանք նեըչնչէ.
Ռան պահէ Ռումբն յարմար կէտին.
Սէն Սէր կըսէ Սուրն հեռին.
Վէվն ալ Վրէժ ու Վայ վատին,
Տիւնը սիրտ Տայ Տըկար վհատին.
Րէն Րախտական օրն բարեէ,
Ցօն Ցուցամոլք ու Ցնցք Ցրուէ.
Իւն Իւծելոց հիւսէ սփոփանք,
Փիւրն՝ մեր հին Փառք և նոր Փրկանք.
Քէն քարոզէ՝«Քէնն է Քակտիչ»,
Եւն՝ «Եւրոպան չէ՛ ապստիչ»,
Օն յորդորէ՝ «Օգնէ՛ Հային».
Ֆէն Ֆրանկը չէ՛, այլ Ֆէտային:
Իննսուն և ութ Փրկչի Թուին
Երգեց Լոնտոն ՊԵՐՃ Մչեցին:



ԱՍՈՒՄ ՍԸ

Այդ ապրիլը երէկ տեսայ,
Հե՛ղ մը մխայն, ան ալ վերջին.
Կարծես ասուպ մը դիւրաւահ,
Որ կը կորչի աչքիդ առջին

Հապիւ գողցայ ակնարկ մը վառ
Սև աչքերէն իր տենչարծարծ,
Ու ժպիտ մը, որ այսէն վար
Ինձի նետել ուզեց յանկարծ:

Հապիւ դիպայ քնքուշ թաթին
Հրաժեշտի պատրուակով,
Ու գգացի քայլ մը անդին
Սրտէս բան մը ծնաց իր գով:

ՇԱՆԹ

ՑՂԱՏԻՆ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐԸ

ԱՅՆ ՈՐ ծանօթ է պատմութեան աղբին,
Ճանաչէ Վահան, Մուշեղ, Գարեգին.
Նոքա գնացին՝ Տէր եաս մեզ կրկին
Սէգ կարօն, Մուսէն և քաջն Աղասին:
Ապրին պաշտպանք մեր աղբին,
կարօն, Մուսէն, Աղասին.
կեցցեն դիւցազք մեր աղբին
Սէգ կարօն, Մուսէն և քաջն Աղասին:

Միշտ պիտի պարծի Քանաքեռ աւան,
Որ ծնաւ ձեզ պէս կորիւն աննման.
Դուք Արարատայ ամուր ախոյեան,
Փառք և ցնծութիւն ասքանազեան տան:
Ապրին եայլն:

Մասիս, Արագած, Նպատ ու Ցիրաւն,
Սիրով տեղի տան ձեր սուրբ մխիթեան.
Դուք նոցա գլխին կեցէք Հայաստան,
Ուր տեղ վտանգ կայ հասէք օգնութեան:
Ապրին եայլն:

Մինչ մեր սև բախտէն սատանն այն գազան,
Լկէր խեղճ հայոց վշտօք զանազան.
Դուք անոր պարծաք սարսափ յաւիտեան
Զորս նորին վանեալ տարաք ցիր ու ցան:
Ապրին եայլն:

Չի մոռնար Անին այն ձեր յաղթութիւն
Որ քրդաց պարակայ արարիք նկուն.
Այնու Հայ գերեաց հասաք օգնութիւն
Ամէն խումբ օգնեցիք դառնալ իրենց տուն:
Ապրին, եայլն.

Ղ. Վ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ



ԿՅԾԵՑՄ

Անհոգ ես, չես գիտեր
ինչ կայ քո մասին.
Պարտաւմ են քո խեղճ
անձի վերսին.
Գամբռներով բարակներով, միասին.
Փախիր, այծեամ, փախիր,
որսկանն է գալիս.
Զազուկներդ տխուր, լալիս
են լալիս:

Որսկանը ճրագով քեզի ման կուգայ,
կ'ուզէ ձեռքերը արիւնովդ լուայ.
Աղճալի քո ոտքեր սար ու ձոր կուլան
Փախիր այծեամ, փախիր, ևայլն:

Որսկանը գութ չունի, կ'անէ կրակը,
կամ քեզի կ'ապաննէ կամ քո գառակը,
Ի զուր չ'անցնիր հրացանի դնդակը:
Փախիր այծեամ, փախիր, ևայլն:

Զորեր մի մաներ, վտանգաւոր է.
Որսկան ման կուգայ այնտեղ, սովոր է,
Քարայրից խփելով քեզ կը գլորէ:
Փախիր այծեամ, փախիր ևայլն:

Դաշտումը ման մի դար, թէ մտածես լաւ.
Քեզ կը վիրաւորեն կ'ատանաս մեծ ցաւ.
Դուրս մի ելլեր դու խիտ անտառից բնաւ:
Փախիր այծեամ, փախիր, որսկանն է գալիս.
Զազուկներդ տխուր, լալիս են լալիս:

ՋԻՒԱՆ

ԻՆԻՔ ՈՂԲԸ

Ինի քաղաք նստեր կուլամ,
Չի կայ ըսող՝ մի՛ լար, մի՛ լար.
կ'ըսեն թէ, չէ՛, թող նստի լայ,
Ա՛խ, ե՞րբ լսեմ՝ մի՛ լար, մի՛ լար:

Շատ յաւերով կ'այրիմ, տապիմ,
Զունիմ մէկ մարդ հաւատարիմ,
Որ խըղճալոյս գայ մօտենայ,
Գանէ ըսէ՝ մի՛ լար, մի՛ լար:

Ա՛յ հայ տըղայ, խըղճա ինձի,
Տե՛ս քո Անին ի՛նչպէս է.
Հերիք ես լամ, դու չը գթա՞ս,
Չէ՞ քո Անին ափսոս է:

Ախ ու վախով օրերս անցան,
Լալէն աչքերս կուրցան,
Որը ճիալն ինձ վիճակուեցաւ,
Բախտս խպտաւ գիս մոռցաւ:

Կորսուեր եմ թագաւորներ,
Ժողվեր եմ գըլխուս բուեր,
Որ միշտ կ'երգեն, «Անին անցաւ,
Անին անտէր աւերեցաւ»:
Ա՛յ, հայ տըղայ, խղճա ինձի, ևն.:

Անին էի մարդաբընակ,
Մնացեր եմ դառն աւերակ.
Իմ լաց, իմ կոծ, իմ աղաղակ
Անտէր որբոց է նմանակ:

Երբեմն էի չատ աննման,
Հայոց քաղաքն արքայական,
Այժմ աւեր, հիմնայատակ՝
Նատեր կուլամ ես միայնակ։
Ա՛յ հայ տըղայ, խղճա՛ ինծի, ևն.։

Եկար, տեսար, դարձար, կերթաս,
Լալով կ'ըսես՝ «Բարեաւ մընաս».
Աստուած սիրես, ձիս չը մոռնաս,
Մասիս սարին երբ մօտենաս՝

Ասա՛ իմ քաջ Արարատին՝
Նատեր կուլայ քո խեղճ Անին».
Կ'ըսես՝ ե՞րբ գաս աւետիք տաս,
Թէ՝ «իմ Անի, հերիք է լաս»։
Ա՛յ հայ տըղայ, խըղճա ինծի, ևն.։

(Հայ տղան)

Ողբերգութիւնդ հերի՛ք, Անի,
Թըշնառացեալ գու լաս քանի՛,
Օր մը գըթած աչն Անհոգին
Մարդասիրեալ՝ առ քեզ հայի։

Գան ժողովին հայք միաբան,
Գեղեցկանաս չատ աննման.
Հապա մի՛ լար, սիրուն Անի,
Անի՛, Անի, իմ ջահն Անի։

Ա. Վ. ԱՐԱՐԱՏԵԱՆ

ԳԻՆԻ

ԱՆՄԱՀ անուշ, դու գինի.
Շատ սիրելի ես քաջի,
Ձի գոյնդ արեան նման
Պատերազմաց ի դաշտի։

Բոսորափայլ քո փրփուր
Որ մեզ ի կռիւ փչէ՛ հուր,
Թէ հաշտութիւն գայ արդար՝
Փոխի ի ցօղ զովարար։

Դափնիք քեզմով կ'առնեն ուժ,
Կարմիր կրակոտ, դու գինի.
Քեզմով զուարթ և աշխոյժ
Կ'ըլլայ հեզիկ ձիթենի։

Քեզմով վառի բոցագոյն
Օրիորդի համեստ գոյն.
Կեցցե՜ն, մեր քաջ պատանիք.
Եւ նազելի գեղեցիկք։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՎԱՂԱՄԵՌԻԿ

ԱՇՆԱՆ չորցած թփերու հետ,
Հովիկ վայն էլ գլեց տարաւ.
Վաղաթորշոմ ծաղիկն անեղծ,
Դեռ չբուրած խապառ կորաւ։

Սև գերեզման մը փորեցին,
Լացող չեղաւ անոր վրայ.
Սիրոյ համար ծնած հոգին,
Անսիրտ իջաւ ի գերեզման։

ՀԱՅ ՊԱՆԴՈՒԽՏԻ

ՍՊԱՌԱԺՈՒՏ լերան մը կող
Ցեցեալ ի քար գերեզմանի՝
Աչք մերթ յերկինս և մերթ յերկիր
Խարտիշագեղ կայր պատանի։
Ո՜վ դու որդիդ լեռանց, հովտաց,
Ինչո՞ւ այդպէս սիրտդ է ցաւած։

Կ'ուզե՞ս որ մեծ փոթորկեալ ծով
Մատուցանէ քեզ մխիթար,
Կոհակաշարժ իր լարերով
Երգեալ ի շունչ մրրկավար։
Ո՜վ դու որդիդ, են.։

Կ'ուզե՞ս որ քեզ ահեղաշուք
Խնդայ կամարն աստեղց անթիւ,
Եւ բնութիւն պայծառ զարդուք
Ժպտի ծաղկամբ և զեփիւռիւ։
Ո՜վ դու որդիդ, են։

Կամ փափկագոյն այլ սփոփանք.
Միթէ կ'ուզես մօր քաղցուենի
Ու սիրուհւոյ անոյշ գգուանք
Որ քու կսկիծդ փարատի։
Դեռ ի՞նչ կ'ուզես, ո՛հ, մի՛ ծածկեր...
—Կ'ուզեմ վառօդ և գնդակներ։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ



ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա՛Ռ ԸՆԿԱԼ ի գիրկդ, մայրդ Հայաստան,
Զորգիս քո սիրուն գրուեալ ատա և անդ,
Տե՛ս՝ ի՛նչպէս սիրով և քու կաթօտով,
Վառուած բորբոքած՝ քու տեսդ ցանկան:

Յորդորակ

Արի՛, կա՛ց ուրեմն, ո՛վ մայր Հայաստան,
Նոր ոգի գդեցիր փառօք անվախճան:

Օ՛ն, զրահաւորիմք, ո՛վ որդիք Հայկեան,
Մեր մօր արցունքներն ջնջել յաւիտեան.
Զօրանանք սիրով և սուրբ միութեամբ,
Ընդել ախոյեան ընդդէմ թշնամեաց:

Յորդորակ

Հապա գործելու ժամանակն հասաւ
Հայրենասիրին կայ փառք անպըրաւ:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԳԵՂՋՈՒԿ

Ա ՌՏՈՒՆ կանուխ թէ ելլենք
Քաղցր է վաստակը դաշտին,
Զուարթ կ'ըլլանք ու կ'երգենք
Գեղջուկ երգերը մերին:

Անցաւ գիշեր մութ սեաւ,
Ժպտին դաշտերը մերին,
Պայծառ արև ծագեցաւ
Կանաչ լեռան վրայէն:

Ելլենք աչխոյժ ի մեր երկ
Հրաւէր կարդան թռչնոց երգ,
Աչխատութիւնը դաշտին
Սիրուն գանձ է աղքատին:

Թող ճոխն անդին նիրհէ խոր
Հեշտութեանց մէջ նուրանոր.
Անոր կեանքին չեմ ցանկար
Թէև սոխ ուտեմ ամեն օր:

Մշակին կեանք ոսկի է,
Խաղաղ անփոյթ ու անդորը,
Գեղջկուհուն երգ դայլայլ է
Սոխակի մը տարփաւոր:

Թող ճոխն առատն սեթափի,
Իր խոհն ունի ու վիշտերը,
Բայց այս կեանք կը նմանի
Վերի կեանքին ցանկալի:

Առաւն կանուխ թէ ելլենք
Քաղցր է վաստակը դաշտին,
Զուարթ կ'ըլլանք ու կ'երգենք
Գեղջուկ երգերը մերին:



Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ



Աստղով բանուած գիշերին մէջ
Պլպուլն աղօթքներ երգէ,
Եւ սարերուն ու ձորերուն մութ
Գիրերը կը հեգէ:

Երգէ՛ զուարթ
Ծաղիկ ու վարդ,
Ով դու սոխակ
Գիշերին վարդ:

Քու երգիդ մէջ ամբողջ հոգիս,
Համակ քու սէրդ կը թրթռայ,
Մութն երբ իջնէ իր խաւարով,
Քու փշահիւս թառիդ վրայ:

Քու երգդ հնչուն,
Երգող թռչուն,
Սրտիս կուտայ
Երկնատենչ շունչ:

Երգդ հնչէ հաւատքի պէս,
Միշտ ըսփոփանք, յոյս ու գորով,
Երբ իմ աչքերս փակուին յուշիկ
Անուշ ձայնիդ օրօրով:

Ջով դիշերին
Մէջ դու լռին
Երգէ թրթռուն
Քու մեղեդին:

Իմ յոյզերուս, ըզգացմանցս մխիթարիչն
Ես միայն.
Քու հրճուանքովդ, երբ երկնքի
Հանգին յոյսերն ընդունայն,

Ըստուերներուն
Մէջ երերուն,
Պլպուլ, հոգիս,
Նուագես դուն:

ՄՈՒՇԵՂ ԵՊԻՍԿՈՊՈՍ

ՉԱՅՆ ԲԱՐԲԱՌՈՑ ՅԱՆԱՊԱՏԻ

ԱՍՏՈՒԱԾ վկայ որ մենք կը յաղթէնք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք.
Օրէ օր թուրքը կ'ելլէ մեր տեղէն,
Տեղը մարդ չի մնայ՝ գառ ծծի տղէն:

«Հայը պէնք չունի», կ'ասէ Օսմանցին,
Անտէր թողը է նա մեր հայրենին . . .
—Աստուած վկայ որ մենք կը յաղթէնք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Լոկ այն, որ կուտաք խումի և թըղթի,
Հա՛յք, ձեզ կը հասնէր տղոյին բախտի.
Աստուած վկայ որ մենք կը յաղթէնք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ո՞ր կաթողիկոս գրեց մէկ կոնդակ,
Ո՞ր եպիսկոպոս ցըրուեց հրաւիրակ,
Ո՞ր գիտնականը ձայնը բարձրացուց,
Ո՞ր զօրականը թուր ու զէնք վերցուց:

Ով հայ ազգասէր, ո՞ւր ես, ո՞ր ծակն ես:
Ազգային զգացմունք, մի՞թէ դեռ խակ ես.
— Աստուած վկայ որ մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

Ա՜խ, անդարձ կանցնի լաւ ժամանակը,
Անփոփոխ կը մնայ մեր դառն վիճակը,
Սլաւօնի ձեռքէն թափթըփած շղթան,
Քեզ պինդ կը կապէ, խղճուկ Հայաստան...

Բայց լաւ յիշեցէք, սառնասիրտ Հայեր,
Որ փրկութիւնը ձեզի շատ մօտ էր...
Եւ ես միշտ կ՚ասեմ. — «Մենք կը յաղթէինք,
Թէ մէկ անձնուրաց մարդ ունենայինք:

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ԱՂԵՐՍ

ԱՐԻ Աստուած հարցն մերոց,
Որ ապաւէնդ ես նեղելոց.
Ձ·մ՚ս օգնութիւն ծառայից քոց,
Լեր օգնական ազգիս Հայոց:
Միջնորդութեամբ սրբոյ խաչին,
Եւ անարատ սուրբ ծնողին.
Յիշեա՛ զհեղումն արեան Փրկչին,
Ե՛ւ ի խնդիր փոքու հոգին:
Զի գիտացաք մեք հաւատեաւ,
Որչափ մեղաց մերոց լըցաւ.
Ուստի և Տէրդ մեր բարկացաւ,
Առ ի խրատել զմեզ զարթեաւ:
Արդ անկանիմք առաջի քո,
Գոչեմք մեղայ տեառնդ մերոյ.
Անցո՛ ի մէնջ զցասումն քոյ,
Վասն անսպառ գթութեան քո:

ՍԻՄԷՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Ա՛ՐԻ, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը չուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօվէ՛լ։

Քաշի՛ր, եզս, ուսիդ մատաղ,
Քաշի՛ր, քաշենք, վար անենք։
Ճիպտին արա, քըշի՛ր, հօտաղ,
Մեր ան օրին ճար անենք։

Պարաքատէրը գանգատ գընայ,
Քեօխվէն կը գայ, կը ծեծի,
Տէրտէրն օրհնէց, անվարձ մընայ,
Կը բարկանայ, կանիծի,

Էն օրն եկան թօվլի արին,
Հարկ են ուզում տէրութեան։
Ի՞նչ տամ կօտին ու բէգ եարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան։

Զեռըս պակաս, ոյժըս հատած,
Հազար ու մի ցաւ տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տունը լիք մանուկներ։

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել։
Առը չուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօվէ՛լ։

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՕՐՈՐՈՑԻ ՆՐԿ

Ա ՐԻ իմ սոխակ, թող պարտէզ մէրին,
Տաղերով քուն բեր մըղիս աչերին.
Բայց նա լալիս է. — դու, սոխակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ տիրացու դառնալ:

Թո՛ղ, դու, տատրակիկ, քո ճադն ու բունը
Վուվույով մըղիս բե՛ր անոյշ քունը.
Բայց նա լալիս է. տատրակիկ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սըգաւոր դառնալ:

Կաչաղակ ճարպիկ, դող, արծաթաստէր,
Շահի ղըրոյցով որդուս քունը բեր.
Բայց նա լալիս է. կաչաղակ, մի՛ գալ,
Իմ որդին չուզէ սովդագար դառնալ:

Թո՛ղ որսըդ, արի՛, քաջասիրտ բազէ,
Գուցէ քո երգը իմ որդին կուզէ...
Բազէն որ եկաւ՝ որդիս լըռեցաւ,
Ռազմի երգերի ձայնով քընեցաւ:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՄԱՐԴ

Ա ՐԻ՛Ք, ընկերք, քաջակորով
Ի պատերազմ դիմենք փութով,
Մեր սկզբունք է պաշտպանել
Ազատութիւն, զրկանք վանել:

Անգութ պատասխան,
Արդար ապստան,
Մեր արիւն ահա
Կայ վասն թշուառին:

Կեցցէ Լեռն, օծցի Լեռն,
Թագ կապեցի տանս Հայոց.
Ջէյթունն լիցի մայրաքաղաք,
Եւ Կիլիկիա ազատ երկիր:

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁ

Ազգային Սահմանադրութեան

Ա ՐԴԻՔ Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարև մ՚ալ տանք.
Որ ազգն երբ զանի փրկարար գոչեց.
Նոր հոգի, նոր կեանք անոր պարգևեց:

Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած,
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած:
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց
Եւ կենաց ուղին մեր առջև հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամէն վայրկեան գոչել պարտ է մեզ՝
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Ջնջեց ամենայն կարծիք անձնական,
Խեղդեց ամենայն ձայն անհատական.
Հրաւէր կարդաց Աստուծոյ ձայնին՝
Առաջնորդ լինել գործոց ազգային:

Այն որ Աստուծոյ ձայն առաւ մեզի,
Մենէ թող առնու ձայնով մ՚այնպիսի.
Կեցցէ՛, կեցցէ՛ կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայերս անարգուած փրկեց բարձրացուց,
Մարդկային կոչման մեզ արժանացուց.
Շնորհեց մեզի զոր ազատն Աստուած,
Մարդկութեան երկրորդ նշանն է դրած:

Որուն շնորհիւն յարգ ստացանք մենք.
Անոր յարգ տալով ապրինք ու երգենք՝
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Դո՛ւ ալ, Հայաստան, սիրուն հայրենիք,
Ալ այսուհետև մի՛ սգար լռիկ.
Զի ա՛լ քու որդիք նոր ոգւով բերկրեալ՝
Զքեզ հարս կ'ուզեն տեսնել զարդարեալ:

Ալ մի՛ լար, մայրիկ, լացդ ի պար փոխէ,
Եւ ձայնով քաղցրիկ որդւոցդ հետ երգէ՝
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Հայե՛ր, միանանք, մեր մօր հետ օրհնենք,
Զանոնք որ մեզի տուին սուրբ օրէնք.
Սահմանադրութեան բարեաց փոխանակ,
Թող վարեն ուրախ կեանք մը բարունակ:

Թո՛ղ և մեր որդիք հետ անոնց անուան,
Բիւրաւոր տարիք օրհնեն ու կարդան՝
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Յ. Գ. ՍՐՎԱՃԵԱՆ

ՈՒՐ ՀԱՅ, ՋԻՔ ՎԱՅ

ԱՐԿԱԾՔ Հայոց ժամանակին ընդ անիւ
Փշրին տակաւ մինչդեռ սիրոյ համբուրիւ,
Ուխտենք ի սէր եղբօր՝ զկեանս դնել գրաւ.
Օ՜ն անդր ի մէջ այր ընկերին լարել դաւ :

Սրացաւ ի մէնջ բաղդն անհամբոյր,
Արդ նոր բաղդիս քաղցր է համբոյր.
Եղբայր զեղբայր գրգռէ Սիրով,
Ճոխն աղքատին մատչի Գթով,
Էանց գիշեր՝ արդ առաւօտ.
Եւ վառ ի վառ շողշողելով՝
Լոյսն արեգին ծփայ ի ծով :

Հապա մանկունք,
Վեհ քաջազունք,
Իգլուխ պսակ,
Ի յաղթանակ.
Առեալ նուագս,
Արագս արագս.
Օ՜ն փութացուք,
Օ՜ն երգեսցուք,

Սէր և գութ
Մեր պսակ
Առ մեր բաղդ
Հրաւիրակ,
Ցնծասցեն
Որք լսեն՝
Թէ «ուր Հայ,
Ջի՛ք անդ վայ» :

Ե. ՄԵԼԻՔԵԱՆ

ՈՐԿՐԱՄՈԼԻ ԱՂՕԹՔԸ

Արեւելք առաջին,
Եւ արեւմուտք որ է վերջին՝
Նստեալ հայրն դէմ փարչին,
Եւ զանազան ի լի Փըչին:
Բարեխօսեա՛ մեծ կարասին,
Որ զանազանէ իր գինին:

Բարեխուում է գինի,
Եւ յայս փայլուն սեղանն ի լի,
Գէր գէր հաւեր զանազան
Եւ այլ կարագ խառն ընդ մեղրի:
Բարեխօսեա՛, են:

Գերազոյն լաւ մազա,
Եղով տապկած ձուկն Թազա,
Խումար մարդուն բող պատուկ,
Բըղղով բռնած սիրուն բազա:
Բարեխօսեա՛, են:

Դարձեալ հայիր Թէ ի՛նչ կայ,
Հալվա, բէօրակ, փախլավա,
Գառն բրած ղափամա,
Փորն է լիք պահարլամա:
Բարեխօսեա՛, են:

Երանեալ հերիսա,
Եւ պատուական քալափաչա,
Սամիթ, Թարխուն, ասիդա,
Ցոլով եփած փալուզա:
Բարեխօսեա՛, են:

Զարդարեալ է սեղան
Խափլու փլաւով, մըսով եփման,
Ցեղ ու ցեղ պիպէռով
Եւ քիչմիշովըն միաբան։
Բարեխօսեա՛, են։

Երեւցաւ օրհասական,
Փուշթով եկեալ լաշանա,
Եափրաղ, քուֆթէ, ղալիա,
Այխին եկուն և ղապուրղա։
Բարեխօսեա՛, են։

Ընտրեալ ընտիր աղաւնի,
Եւ պըտըրըշին սեղանոյս իրաբ,
Ոչխարի միս, իլիկամ,
Փանճակէօշն է լաւ քէպապ։
Բարեխօսեա՛, են։

Թագաւոր է խորովըն,
Եւս առաւել գեղեցկագոյն,
Կարմիրերանգ և գոյնըզգոյն,
Թագ ու պարծանք մեր սեղանւոյն։
Բարեխօսեա՛, են։

Ժողովեցին ի սեղան,
Արձակեցին զխորոջան,
Ուտեն, խմեն անոյշ գինին,
Եւ փառքս տան անճառելոյն։
Բարեխօսեա՛, են։

Ի կաքաւուց բերեալ միս,
Ի սալամուց լաւ նաֆայիս,
Աղաւնոյ ձագ մեզ ընթրիս
Հաճոյ թուեցաւ բաղմականիս։
Բարեխօսեա՛, են։

Լուեցին միաբան,
Եւ ննջեցին ամենեքեան.
Երբ որ քնեցան ու զարթեցան,
Շուտով հասեալ գաւն ու կըթղան:
Բարեխօսեա՛ էն:

Խընդացին և զուարճացան,
Երբ որ տեսան գաւն ու կըթղան,
Նստան բոլոր ի սեղան,
Ըմպեն զօրաղն, ուրախանան:
Բարեխօսեա՛, էն:

Ծաղիկ բերեալ ի սեղան,
Վարդ, մանուշակ և ռէհան,
Ղարանֆիլ և սուսամ,
Նարգիզ, զիւմպուլ և չուշան:
Բարեխօսեա՛, էն:

Կարմրացեալ գոյնզգոյն,
Կանաչ բերեալ զվարդենին,
Մանուշակ թիւ պարանոց,
Քաղցրատեսիլ հոտոտելի,
Բարեխօսեա՛, էն:

Հազարավարդն ալ բոլոր,
Զգունովն դեղ ու աղուոր,
Կոկոնին հետ միաւոր՝
Ի մէջ նոցա փառաւոր:
Բարեխօսեա՛, էն:

Ջեռացան ի սեղան,
Պայծառ տեսլեամբըն աննման,
Արձակեցին հոտ անուշ,
Քաղցրացուցին քիմս մարդկան:
Բարեխօսեա՛, էն:

Ղամբարանման փայլէին
Պայծառ գոյնով մէջ սեղանին,
Նոքա առեալ վայելեցին
Եւ փառս տուին պարգեւողին:
Բարեխօսեա՛, ևն:

Ճրադաթափ արարին,
Ճրնգղուկն մեծ և ահագին,
Բերին յառաջ, ղենեցին,
Ջփեռուրն իրմէ կողոպտեցին:
Բարեխօսեա՛, ևն:

Մեծամեծք խորհուրդ արին,
Բերին զսպաղն ընդ արօսին,
Մանրամասն կարատեցին,
Եւ ճրնգղկան փորը լըցին:
Բարեխօսեա՛, ևն:

Ցեղոյ սինի մեծ կազմեցին,
Անուշահամ զարդարեցին,
Բերեալ յառաջ մատուցին,
Մէջ սեղանին բազմեցին:
Բարեխօսեա՛, ևն:

Նորոգեցան նոր սեղան,
Երբ որ եհաս ճրնգղկան,
Ի յայն քառատուն մարդ միաբան,
Մէկ թևն կերան կշռացան:
Բարեխօսեա՛, ևն:

Շնորհեցին ի մրգերոց,
Ցառաջ բերեալ մատուցին.
Գեղեցիկ և զանազան
Նորոգ սեղան զարդարեցին:
Բարեխօսեա՛, ևն:

Ուղիղ բոլոր և աղուոր,
Սպիտակ կարմիր և փառաւոր,
Համով, հոտով լի խնձոր,
Մէջ մըրգեղացն թագաւոր:
Բարեխօսեա՛, ևն:

Ջամիշ, կըծուն եկեալ չատ,
Արմատ և ծուգ մէկ մէկ հատ.
Շահրալուծ, լապլապուն,
Ծառնեալ ի մէջ նոցա փշատ.
Բարեխօսեա՛, ևն:

Պնդուկն եկեալ ամաններով,
Եւ նուշն ի հետ անուշ համով.
Ֆըստուխին է մաղտարով,
Քան զամենայն մրգերն յոլով:
Բարեխօսեա՛, ևն:

Ջանաց խիեարն յատաջ մենակ,
Եւ յետ նորա խարպիզակ, սեխ,
Եւ չըլինքին գձմերուկ
Շատով հասուցէք ի դանակ:
Բարեխօսեա՛, ևն:

Ռեհին քաղցրիկ, մանանա,
Նօդլըն չաքար միանայ,
Զազուց մեղր ծաղր բոլոր:
Մէջ սեղանին գօրանան:
Բարեխօսեա՛, ևն:

Սերկևիլ թըթուաշիկ,
Նաւեն ալ հետ լինի քաղցրիկ,
Անուշ մաճառ, տանձ, մալաշի,
Արտասի և մէհրէնիկ:
Բարեխօսեա՛, ևն:

Վասըն մեր գայ խարանֆիլ,
Քաղցր տարչին և զանճաֆիլ.
Խարապիպէռ, ղաղուլայ,
Ձուրգ և բաղում տարիֆիլֆիլ,
Բարեխօսեա, և այլն.

Տէրտէրներն և տիրացուքն,
Յորժամ սեղանոյս հանդիպին,
Հնչեցուցէք զանգն ու ծընծղան,
Երգեցուցէք տաղ և շարական:
Բարեխօսեա՛, են:

Բամք Թառերայ սուղան Դուլթի,
Եւ քաղցրաձայն սանտուր հըզօր,
Մուղնի և փող, տամպուրա,
Նարինջատակ քամանչա:
Բարեխօսեա՛, են:

Ցան էր պատեր զիս չորս դիմաց,
Եւ ես տկար էի մտաց.
Զայսչափ կարի ժողովեցի,
Ոռնելով կամաց կամաց:
Բարեխօսեա՛, են:

'Ի սեղան պատիւ զուարճացէք,
Ո՛վ մեծամեծք և տանուտէրք,
Կերէ՛ք, արբէ՛ք, ուրախացէ՛ք,
Այսչափըս բաւ է, թէ գիտէք:
Բարեխօսեա, և այլն.

Փառքս տացուք ըստեղծողին,
Այսչափ բարեաց պարգեւողին.
Օրհնէ տէրտէր զհայր մեր յերկին,
Ելեալ գնայք յեկեղեցին:
ՄԻՔԱՅԷԼ ՍԱՐԿԱՒԱԳ



Հայոց Գինը

Բաժակներ առնուենք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով.
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով:

Բերնեբիս տանենք անվախ.
Չէ պա խառնած կամ խարդախ.
Նեկտար է և ոչ գինի.
Ամենք՝ մեզ անուշ լինի:

Արաքսայ ջրով ցօղած,
Հայոց արևով հասած.
Հայոց աղջիկ է քաղել,
Քնքուշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրին,
Հայաստան ընկած նոյէն.
Անմահ, երկնային գինին.
Նա խմից երբ իջաւ սարէն:

Այս անուշ գինին խմողը,
Սրտէն թող հանէ ախը.
Ամէնքս ալ բանենք ամէն,
Որ չատ տայ մեզ ամ էն:

ԴԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

Վրէժ ի Շաւարշան

ԲԱՄԲ, որոտան բարձուստ բամբիւնք Այրարատեան դաշտն ի վայր
Արի արանց արիւնք յեռանդ առատանան ի հրազայր,

Հրաւէր հայրենեաց հռչակ ի 'նդ հանուր·
Ոգիք Հայկազանց բորբոքին ի հուր·
Որք երկնաւորին պսակին էք կարօտ,
Որք երկրաւորին փառաց երկնայորդ,
Հապ' օ՜ն, արի արանց մանկունք,
Հայրենավրէժքդ Հայկազունք:
Հապ' օ՜ն, ի զէն դունդագունդ,
Ցեռեալ ի պար թունդ ի թունդ·
Ի զէ՜ն ի վրէ՜ժ, օ՜ն անդր յառաջ,
Ի զէ՜ն ի վրէ՜ժ, մի ձախ մի յաջ:

Օ՜ն անդր, յառա՛ջ,
Մի ձախ մի յաջ,
Յառա՛ջ յառա՛ջ,
Հապ' օ՜ն, յառաջ:

Հայկեան փանդռանց որոտընդոստ դռնչին բարբառք մարտագոռ
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկեր ի շեփոր·

Շարժեն հրեշտակք թեւս լուսափողփողս,
Ճիւաղք ճիւաղաց կայտռեն ի դժոխս,
Շունդ չանթառաք զեթերօք փարի,
Սարսափեն սանդարք ի խոլ խաւարի:
Հապ' օ՜ն, արի արանց մանկունք, և այլն·

Մամիկոնեան սուսանեցաւ դրօշն յայերս գոգ ծալ ի ծալ,
Ի ճակատուց ի Թշնամեաց՝ սա ոչ գիտաց յուրաստ կալ.

Հեծեալ հրանժոյգ վեհին Վաչանայ,
Վրէ՛ժ կանչէ արեան կարմիր Վարդանայ:
Փանչեալ բոցաշունչ սափր ի գարշապար,
Թագմամուստ վարգի յանյոյժ երիվար:
Հայ՛ օ՞ն, արի արանց մանկունք, և այլն:

Ի գուպարել մարտայարդար գարշապարաց Արամայ,
Գոռան Կորդրիք Մասիք սարին, հռնչեն Սահանք Երասխայ,

Ի գրոհ ի գրոհ տալ բիւրուցն ոտնատրոփ,
Տատանին դաշնակք՝ յառնէ չռինդն ապշոպ,
Կռուփ առ կռուփ կոփեն կըմրայք տէգ առ տէգ,
Դղորդ առնուն սարերք՝ կորովեանց ի վէգ:
Հայ՛ օ՞ն, արի արանց մանկունք, և այլն:

Արի՛ք ի կռիւ, քաջակորովք ընդ կորակոր հրոսն Արեաց.
Հայոց համհարզք մեր բիւրայաղթք ձեզ նոր հանդէսք են փառաց:

Թռէ՛ք ի ռազմ, ի խազմ, առէք զէն և զարդ.
Երեանիւք, յըանիւք, հարիւր բիւրս հազարս,
Ի սուր, ի սուսեր կարնչեղ յաղեղունս,
Զսեաւ Սասանեայ ջարդել կառափունս:
Հա՛յօն, արի արանց մանկունք, և այլն:

Մինչև ցե՞րբ, ցե՞րբ սուգ ունի զՀայս, հառէ՛ք զարտօսր որբք, այրիք,
Հարանց՝ հարսանց՝ եղբարց՝ որդւոց՝ հանրուց Հայոց վրէժխընդիրք,

Թինդս առեալ երթամք յասպարէզ քաջաց,
Ցերկնից հընչէն ձայնք արեան սիրելեաց,
Սօսափիւնք վերինք արշաւիրք յերկրէ
Քաջացս օժանդակ՝ ըզպարր հերքեսցէ։
Հապ՝ օ՛ն, արի, և այլն։

Օ՛ն անդր ի բա՛ց Հայկեան հողոյ հսկայազանց և սրբոց՝
Ի բա՛ց Ջոլիր չուառական մոխրապաշտիցըն պըղծոց.

Դաշտք մեր մերժեսցին զսոկրատին անգամ.
Արիւնք վրկայից զճապաղին անժամ.
Ոտն ընդ գլխ առնեալ դարձցին ի փախուստ,
Մատնակուրծք ընդ Հայս հայեսցին հեռուստ։
Հապ՝ ՛օն, արի արանց մանկունք, և այլն։

Արք աղեղանց, բարձր ի Թիրախ Թռուցիք՝ վերջին ձեզ խրախոյս,
Առեալ տարցուք զանթլինադարձ զայս վարդագոյն դրօշ անխոյս,

Ի վերայ յիմնից յաղթեց Վարդանայ,
Պարսկավան բազկաւ որւոյն Վահանայ,
Տեշտ ի ծայր շիրմի դաշտին Շաւարշան
Տնկել յաղթանակ անմահ Հայութեան.
Հապ՝ օ՛ն արի արանց մանկունք, և այլն։

Ղ. ԱԼԻՇԱՆ



ԸՆԿԵՐԸ

ԲԱՐԻ, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Որ փայլեցնէ արևի պէս պատկերը մարդուն:
Ինչ մարդ ունենայ իր մօտը հաւատարիմ ընկեր,
Ցերեկի նման անցնում է մութ գիշերը մարդուն:
Ընկեր խոհատուն, Աստուածավախ, ճշմարիտ ընկեր,
Որ բարձրացնէ աստիճանը միշտ վերը մարդուն:
Կեանքդ նուիրես ընկերիդ լաւին, քիչ է դարձեալ.
Այնպէս է հոգեկան լուսատու լապտերը մարդուն:
Թշնամիներ իր վրայ քալած ժամանակը,
Կարիճ, հարազատ ընկերն է՝ սուսերը մարդուն:
Ինչ մարդ ունենայ մտերիմ ընկեր, ձիվան Աչըգ,
Չի սպիտակիր ամենևին մէկ հերը մարդուն:

ԱՇԸՂ ՋԻՎԱՆ.

Ի ՆՈՑԱՆԷ

ԲԱՐԻ, ազնիւ և օգտակար մարդ մըն ես դուն.
Ու գործիդ մէջ հաւատարիմ միշտ եռանդուն.
Բայց եթէ չես անդամ մ' ու մէկն ի նոցանէ.
Ցարդանք, պատիւ վայելեն իսպա՛ռ մաքէդ հանէ:

Զեռնհաս ես, գրիչդ զօրեղ, խօսքերդ ազդու,
Լուրջ փաստերով պարտուած չես օ՛ր մ' իսկ դուս.
Բայց եթէ չես համարուիր մէկն ի նոցանէ,
Շա՛տ գոհ եղիր երբ պրծեր ես կախաղանէ:

Զարիք ըրած չես քնաւ մէկուն, Ագգիդ համար,
Որքա՛ն անկեղծ ըլլան գործերդ ու անհամար,
Սակայն քանի որ չես եղած ի նոցանէ,
Զարժող մարդն ալ պատուոյդ վրայ մուր կը ցանէ:

Եկիր խարդախ, գող, մարդասպան, վատ, աննշան,
Հազար սրտեր չարիքներէդ թո՛ղ խըչխըչան,
Բա՛ւ է որ դուն կը նըկատուիս ի նոցանէ,
Աւեր ու մահ սփռէ, չքսուիր թէ դէշ բան է...:

Մ. ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ԽԱՆՈՒՄ ԵՒԱ ՋԱՆ

ԲԵՐԴԻՑԸ դուրս եկայ Ալագեազ տեսայ,
Խանում, Եւա Ջան
Աբարանը աչքերիս դուման ա դառել.

Դուն կեցիր բարով, ես կերթամ լալով,
Լալով ողբալով, քեօչ ու բարխանով,
Սարեր ման գալով:

Ոչխարն էսաին կ'արծայ, էնդին գառները,
Խանում, Եւա Ջան.
Կանչըցել ա ծաղիկները, ծառները:

Դուն կեցիր բարով, ևն.

Սրի երթանք քո ման գալած արտերը,
Ջեզի տեսայ թազացաւ իմ դարդերը:

Դուն կեցիր բարով, ևն.

Ձեռ ու ոտս կապին՝ բերդը դրեցին,
Ջուխա, չալվար, լալով տունը բերեցին.
Օրեր, գարնան օրեր դուք ո՞ւր էք կորեր:

Ես Ալէքն եմ, չամըլեցի մէկ ջիւան,
Տուխտաղ եղայ բաւուց չուրի Երևան:

Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով, քէօչ ու բարխանով,
Սարեր ման գալով:



Բերէ՛ք հիշը, բերէ՛ք բաժակ
Քանի խումբ կայ ախորժակ.
Որանք բոպէն զուր բերկրանքի
Յաւերժական չէ մարդուս կեանք:

Առանց գինու փուճ է կեանքը,
Սէրն է տալիս մեզ բերկրանքը:
Սէր ու գինի, գինի ու սէր —
Այս է կեանքի մեր ափսանքը:

Խմեցնք գինի կրնոջ կենաց.
Կրնկան սիրենք անկեղծ սրտանց.
Տըղամարդուն գինի ու կին
Ընծայել են Նոյ և Աստուած:

Լցրէ՛ք բաժակ փըրփըրապէպ,
Բերէ՛ք իմ մօտ կին բոցակէպ.
Խմեմ, պրկեմ ու համբուրեմ —
Այնուհետև իմ կեանքը ձեզ:

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ՍԻՐԱՀԱՐ ԿԻԿՕՆ

ԲԼԲՈՒԼ թռաւ բարձր քեարին,
Կուլայ դարտեր իւր ջիկերին.
Ես չէ խուրպան կեղնիմ եարին,
Ծիկ մօտ տարէք Սիփնա սարին։

Սիփնա սարեր դուման մըժ է,
Ես ա՛խ կենիմ, էն չէ փօշ է,
Կանեն արախ դարտին խօշ է.
Էլպէթ Կիկօն ձիպ սէրխօշ է։

Ես սէրխօշ եմ սիրով էնջախ,
Թօռ ու ջաշնամ աղնի արախ.
Եար դու մարես իմ տան օջախ,
Քեղնից մահրում կէնիմ ա՛խ-վա՛խ։

Եարս որ կըլնէր կիջնէր պախչան.
Կու սաուսար ճայտին մախճան.
Աչկից չողքէն խոմցաւ իմ ջան,
Իմ հեչտ կեանքի տուեց վախճան։

Կիփեամ, եար նստեր մըր խօտին,
Շուշան ցանեմ ես քեօ ոտին.
Թէքս կեղնին մէջիցդ գօտին
Տէրտէ կօխնա մեր նէրօտին։



ՄԵՆԱԿԸ, Ե. ԱՌԱՍՏԱՄԵԱՆԻ

ՆՈՒԻՐԱԿԱՆ ՍՏՈՒԵՐԻՆ

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր
Հոմն է հեծեծում Բասենայ դաշտում. —
Ոսկի երգերըդ, իմ ազիզ ընկեր,
Էն հոմն է երգում Բասենայ դաշտում:

Ա՛յ, սիրուն արտուտ լալագար գարնան,
Արագի դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Դուն թըռչում էիր սիրտըդ վա՛ռ-վառման
Գովքն ազատութեան երգելով անուշ:

Քաջ ընկերներով կռիւ սլացար,
Ազատ երգերով Արագի դաշտում.
Նամարդ թշնամուն զարկիր, զարկուեցար
Ընկերներիդ հետ Բասենայ դաշտում:

Ու ժողովուրդը կարօտ քո սիրուն,
Բասենայ դաշտից մինչ Խլաթ ու Մուշ
Երգում են անվերջ երգերըդ սիրուն . . .
Ու չեն մոռանում երգերըդ անուշ . . .

Ա՛խ, սուրբ վէրքերով ընկերներիդ հետ
Արնոտ հողի տակ անուշ քնեցիր.
Թող ծանր չքնայ այն հողը վըրէդ,
Որն այնպէս՝ հզօր, անհուն սիրեցիր . . .

Բոցիկու սարին սև ամպն է չոքեր,
Հոմն է հեծեծում Բասենայ դաշտում.
Անուշ երգերըդ, իմ ազիզ ընկեր, —
Էն հոմն է երգում Բասենայ դաշտում . . .

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ՊԵՏՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԳԱՐԱՀԻՍԱՐ լերան կրծքին՝
Նա էլ ընկաւ վիրաւոր.
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած,
Ջար թշնամու գնդակով:

Ժայռոտ լերան լերկ կատարից
Վա՛ր սրլացիր, սև արծի՛ւ,
Թևերդ բաց, լայն թևերդ,
Ու ջիւանուն հո՛վ արա:

Խոցուած սրտից մուգ արիւնը
Կաթիլ-կաթիլ կը ծորայ...
Ա՛խ, ջիւանու կեանքն է հոսում
Ցաւոտ կըրծքի լայն վէրքից...

Ժայռոտ լերան լերկ կատարից
Վա՛ր սրլացիր, սև արծիւ,
Թևերըդ բաց, լայն թևերըդ
Ու ջիւանուն հո՛վ արա...

ԿԱՐՕՏ ԱՌ ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԳԱՐՈՒՆՆ է եկել գեղեցկատեսիլ,
Կարօտ ենք տեսքիդ, շուտ արա՛, հասիր·
Տարակաց սրտեր դու մորմոքեցիր,
Երբ քաղցր հայրենիք թողիր գնացիր։

Մեր սիրտն ու հոգին քո գլխին խուրպան։
Հրեշտակ Հայ ազգին, դարձիր դէպի Վան·
Վօսփորի վայելք գիտեմ սիրել չես,
Վարագայ վանքին կարօտ կը քաշես։

Գալիլեան տաղիկ, բուրաստան ծաղկանց
Սիրով տեղի տան արծուոյդ հայրենեաց·
Ողջ Վասպուրական երկրին կեանք տուիր,
Սիրոյդ կրակով զամէնք վառեցիր։

Պատանիք, մանկունք, օրիորդք, կուսանք,
Հայրիկ, կանչելով հանեն հառաչանք
Իսկ անտէր որբեր, արտասուք աչքին,
Կարօտ կը մնան քո հովանիքին։

Սողոն, Սոկրատէս, ճարտարն Կիկերոն,
Զունեցան խօսքերդ· հովիւ ես զգօն,
Թշուառին բողոք, զրկեալին պաշտպան·
Դու ես Հայ ազգին զոհ նուիրական։

Ուր որ ալ լինիս, ուր որ ալ գնաս,
Քու փայլուն ջահովդ մեզի լոյս կուտաս·
Ներող ճանաչեց քո բարձր արժանիք·
Ունիս մի տիտղոս՝ Հայրենեաց Հայրիկ։

Գ. ՇԵՐԵՆՑ

ԱՆՁՈՒԿ ՀԱՅ ՄԱՆԿԱՆՑ Կ. ՊՕԼՍԵՑԻՈՑ

ՎԻՇԵՐ ցերեկ կը հառաչեմ,
Ա՛խ, Հայաստան, քո սիրուդ.
Նախնի փառաց վեհ քաջերուդ
Լոյսն է մարեր, ի՛նչ օգուտ:

Կարօտ մնանք սարիդ, դաշտիդ
Եւ ոսկեգոյն արեւուդ.
Միայն առ Տէր այս պաղատինք,
Որ ունենայ առ մեզ գութ:

Գիտնայ և բաղդն ալ հայ մանկունք
Զեն դիմանար այս ցաւուն,
Քեզի համար մեր աչերից
Հոսէ արցունք օրն իրուն:

Քեզի միայն մենք կը յիշենք,
Թէ քուն ըլլանք թէ արթուն,
Տրտում, տխուր միշտ քեզ երգենք
Այրած հոգով մեր կեանքում:

Շատ ուխիներ թեպէտ տեսանք,
Բայց մեր սրտերը քեզ սիրեց,
Ո՛հ, չենք գիտեր առաւօտուն
Մեր ցաւն ինչպէս քեզ տիրեց:

Քո բերդերուդ արդեօք սև քօղ
Անգթաբար ո՞վ ծածկեց,
Ա՛խ, ով էր նա որ մեզ քեզնից
Գերուոյ նման իսկ զրկեց:



ԳՈՒՐԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գլգլալով ջուր է իջնում
Մշու մշուշ սարերէն.
Ծիծեռնները ծի՛ւ — ծի՛ւ եկան
Գարնան գալը երգելէն։

Գարուն չկայ Հեյի համար,
Ծաղիկ ծիծեռ մեզ պէտք չեն.
Գերեզմանս հողին հաւատար,
Թո՛ղ փուշ բուսնի իմ վրան...
Գնա՛, ծիծեռ ... Թո՛ղ ինձ մենակ,
Վէրքը սրտիս՝ հողի տակ ...

Բայց երբ տեսնես թշնամու դէմ,
Հայ ժողովուրդ սարի պէս
Ջէնքը ձեռին հպարտ կանգնած,
Հայե՛ր, լեռնե՛ր իրար պէս —

Ա՛խ, այն օրը արի՛, ծլուա՛,
Գարնան գալը նոր կանչէ. —
Հայո՛ց գարնան, որ բի՛ւր արև
Սիրտս խորէն զօղանչէ ...

ՀԱՑ — ԳՈՒՄԱՆ

ԸՆ ՄԸՆԿՈՒՆՔ ԳՈՂԹԸՆ

ԳՈՂԹԱՆ մանկտի, ահա ձեզ
Շքեղ փառաց ասպարէզ.
Օ՛ն, փութայէք, խումբ կազմեցէք,
Պատկ անթառամ մնայ ձեզ:

Գիտէ՞ք ոյք են ձեր նախնիք.
Բանաստեղծից էք որդիք,
Որ քնարով, ոսկի լարով
Հայրենիքին փառք բերին:

Դուք ամենից էք գրկուած,
Փառքեր ունիք բայց կորած.
Հայ եղբայրներ են մերկ քաղցած,
Եւ հայրենիք մ՛աւերած:



ՔԱՋ ԱՐԱԲՕԻ ԵՐԳԸ

ԳՐՈՂ տանի քիւրդ Աքօյին,
Ըսպաններ է ջոջ Ախօյին․
Իլլած մայրը Արաբօյին,
Զարթի՛ր, Լաւօ, մեռնիմ քըզի։

Զուր ե՛ք մնամ էլու դռներ,
Երթամ գտնեմ զիմ խեղճ գառներ․
Սուքեմ զիմ բաղչայի ծառներ
Զարթի՛ր, Լաւօ, մեռնիմ քըզի։

Դէն երիշկէ գալող ո՞րն է,
Քաջ Արաբօ բախտաւորն է․
Կարմիր իրիցանց զինուորն է,
Զարթի՛ր, Լաւօ, մեռնիմ քըզի։

Խեղճ Մշեցին մնաց լալով,
Հեռու երկիրներ ման գալով․
Մեռաւ Թուրքի պարաքը տալով,
Զարթի՛ր, Լաւօ, մեռնիմ քըզի։

Ոտքի կայնէք կտրիճ Խերան,
Զօրքով գնա՛ առաջ ուրան,
Սալաթ մէյրու բաժին ղուրպան,
Զարթի՛ր, Լաւօ, մեռնիմ քըզի։

Սէֆիլ — չիւար, մացած Հայեր,
Եղած անտէր — բնաւեր հաւքեր․
Տէ՛ր, դու փրկէ, պաշէ արթուն,
Զարթի՛ր, Լաւօ, օգնէ՛ Հայուն։

ՖԻԴԱՅԻ ԵՐԳԸ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ խումբ, գընանք մենք Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում,
Անդրանիկը քաջ իր ընկերներով
Կուզէ պատերազմ, կը ըսպասէ գարնան:

Մօտ է գարունը, շուտով կը բացուի,
Հայի խօսքն է քաջ, գարուն թող բացուի,
Հայերը բոլոր հոգով միացած՝
Հրացանն ուսերնին, մերն է Նոր Տարին:

Խմբապետները հոգւով են երդուած,
Ֆիդայի ուժով գնում են առաջ,
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ,
Գոռում է գոչում, կուզէ պատերազմ:

ԴԱՐԴԸՍ լացէ՛ք, սարի սըմբո՛ւլ,
Ալւան-ալւան ծաղիկներ,
Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբո՛ւլ,
Ամպշող երկնուց զով-հովեր:

Երկինք-գետինք գըլխուս մըթնան,
Անտուն-անտէր կուլամ ես.
Նարիս տարա՛ն — ջանիս տարա՛ն,
Հոնգո՛ւր-հոնգուր կուլամ ես...:

Ա՜խ, եարս ինձի հանեց սըրտէն,
Անճար թողեց ու գընաց.
Սըրտիս տուղէն, խորունկ եարէն
Անդեղ թողեց ու գընաց:

Դարդըս լացէ՛ք, սարի սըմբո՛ւլ,
Ալւան-ալւան ծաղիկներ,
Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբուլ,
Ամպշող երկնուց զով-հովեր:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ

ԴԱՐՁԵԱԼ փայլեց Սասնոյ գլխին
Ազատութեան ճրագ,
կեցցէ հայրենիք գոչելով
Բարձրացրին աղաղակ:

Թընդաց, որոտաց ձայներից
Ողջ աշխարհը հայկական.
Խումբ-խումբ կը գան հայ զաւակներ
Հայրենիքին օգնութեան:

Գուրգէն, Վահան, Հրայր-Դժոխք
Քաջ Անդրանիկ զեկավար՝
Տալւորիկի լեռներում
Շրջում էին անդադար:

Սարսափեցին քիւրդ ցեղերը,
Մինչ պալատը սուլթանի,
Հրամայեց չուտ կործանել
Դիրքերը հայդուկների:

Ահա անգութ մեր թշնամին...
Սարսափելի տեսարան...
«Ժամանակ է վրէժ լուծել...»
Գոչեց ձայնը հայկական:

Կրակ տեղաց հայ քաջերի
Բընակավայր դիրքերից,
Կատարուեցին թըշնամիներ
Ահռելի ընդհակներից:



ԴԷ ԳՆԱ ԿԻԳԱՄ

ԴԷ ԳՆԱ՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ չուտ կիզամ,
Նշխաւն մխտրս առնեմ իզամ, չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ, չուտ կիզամ,
Կարմիր սօլերս հագնիմ իզամ, չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ, չուտ կիզամ,
Ոսկոտ բրճերս առնիմ իզամ, չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛, կիզամ, չուտ կիզամ։
Գլխուս լաչին առնիմ իզամ, չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ, չուտ կիզամ,
Թափալիկներս առնիմ իզամ, չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ, չուտ կիզամ,
Ականջաններս առնիմ իզամ չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ, չուտ կիզամ,
Միզրիս կապերն առնիմ իզամ, չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ, չուտ կիզամ,
Էրեսներս առնիմ իզամ, չուտ կիզամ։
Դէ՛ գնա՛ կիզամ, վա՛յ գնա՛ կիզամ, չուտ կիզամ,
Դեզ ու դեղգիս առնիմ իզամ, չուտ կիզամ։



Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ



ԶԷՅԹՈՒՆՑԻ ՊԱՏԱՆԻԻՆ ՄԱՀԸ

ԴՈՒ զո՞վ խնդրես մայր իմ անուշ,
Եկ մի՛ գողար, մոռցիր հաս·
Անլաց աչօք գիտէ զորդիդ,
Ու իւր վէրքերն արիւնահոս·
Թրքաց մայրեր թող լան, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ինչպէս երբեմն որրանիս մէջ
Կակուղ ձեռամբ փայփայելով,
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր,
Իբրև հրեշտակ նուագելով·
Զիս հանգչեցուր ի հող, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

«Նորեկ որդւոյս կենացն արև
Ձեզի համար փայլի Հայեր·»
Այսպէս յայնժամ դու երգէիր
Օրօրոցիս նստեալ քովեր·
Անոնց համար չիջու, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Կարմիր կայլակը ցայտեն վէրքէս,
Սակայն մայր իմ նայէ չորս դիս,
Զարիւնրռուչա թիւրքերըն տես,
Հազարներով փըռուած գետին.
Կերաւ զանոնք սուր մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ինչպէս վիշապ մըռնչելով,
Ու մեր վրայ յարձակեցան,
Ցնցեց Զէյթուն՝ գլուխն ժայռոտ,
Իւր վհից մէջ թօթափեցան.
Կարմիր ներկաւ ձորձք մեր, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Ու ծափ զարկին մեր հարց ըստուերք,
Թէ չէ մեռած Հայոց կրակ,
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Չի լուծաւ վրէժ յարեան վտակ.
Ննջեց Մասիս, մայր իմ և դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Վերջին համբոյր տամ քեզ մայրիկ,
Հատուցանես զայն սիրուհւոյս,
Վերջին անգամ դրկեմ մեր հող,
Ոյր արդ իջնեմ ի ծոցն անլոյս.
Խաչ մի անկէ վրաս, ու դուն
Ուրախ լուրեր տար ի Զէյթուն:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ



ՀԱՅԵՐՈՒՍ ԹՈՒՐՔԸ

ԴՈՒՆ ԽԵԼՕՔ հաշուով վաճառական ես,
Միւլք, փող ու ապրանք կասեն շատ ունես,
Բայց թէ փողէդ չահ չունի Հայաստան՝
Թքել ենք քո՛ւ ալ, փողիդ ալ վրան:

Քաջ ես, լսել ենք, ինքդ մեծաւոր,
Անուն յաղթողի ունիս փառաւոր.
Բայց թէ թըրէդ չահ չունի Հայաստան՝
Թքել ենք քո՛ւ ալ, թըրիդ ալ վրան:

Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փռուած է.
Բայց թէ գըրչէդ չահ չունի Հայաստան՝
Թքել ենք քո՛ւ ալ, գըրչիդ ալ վրան:

Հեռատես մըտքով դուն զարդարեցար,
Հըզօր իշխանի սիրելին դարձար.
Բայց թէ մըտքէդ չահ չունի Հայաստան՝
Թքել ենք քո՛ւ ալ, մըտքիդ ալ վրան:

Բանուկ ու ճարտար դուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանկագին բաներ,
Բայց թէ ձեռքէդ չահ չունի Հայաստան՝
Թքել ենք քո՛ւ ալ, ձեռքիդ ալ վրան:

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հըռչակ ու հանճար,
Բայց թէ լեզուէդ չահ չունի Հայաստան՝
Թքել ենք քո՛ւ ալ, լեզուիդ ալ վրան:

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լցուած է մարդոց բերան.
Բայց թէ ուսումէդ չահ չունի Հայաստան՝
Թքել ենք քո՛ւ ալ, ուսմանդ ալ վրան:

Կուտամ քեզ պատիւ, կունենաս դու յարգ,
Ու կը դնեմ քեզ ազնիւ մարդոց կարգ՝
Երբ օրօրանէդ մինչև գերեզման,
Ձըգտումըդ լինի փրկել Հայաստան:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.



ԱՐՇԱԿ ՉՕՊԱՆԵԱՆ

ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

ԴՈՒՆ նստեր ես ճամբաներուն անկիւնը․
Մազերդ ի վար իջեր կախուեր է ձիւնը․
Մարմնոյդ վրայ կը փոսանան մութ խոցեր,
Եւ աչուըներդ արիւնի լիճ են դարձեր։

Ո՞ր չար պարիկը հիւսեց թելը բաղդիդ ․․․
Ո՞վ տեսնելով քեզ տապալած ու վրախտ՝
Պիտի յիշէ որ դուն երբեմն հզօր
Աղջիկն էիր սէգ աչքերով լուսաւոր։

Կը ծփային մազերդ ինչպէս դրօշ մը լայն
Ազատ լերան մէջ՝ ուր հոգիդ մեծաձայն
Կը մռընչէր խոյանալով սարէ սար․
Ու ծոցդ հպարտ՝ մեղր ու կաթով կ'ուռենար։

Քեզ ցանկացին յելուզակները բոլոր,
Պաշարեցին քեզ ոսոխներ ահաւոր․
Երկա՜յն ատեն ոգորեցար կռուեցար,
Մինչեւ՝ ա՛լ խոնջ, ընկար գետին ուժասպառ։

Եւ քու հոգիդ արդաւանդ էր ու բարի՝
Կործանարար ուժերուն մէջ վիթխարի․
Դուն կեանքի ծիլ մ'աւելցուցիր աշխարհին,
Մատներդ հողէն գեղեցկութիւն հանեցին։

Դուն Անահիտն էիր խաղաղ աչքերով,
Ոսկիամայրն էիր պայծառ լանջքերով․
Ծոցէդ բարիք, նայուածքէդ լոյս կը տեղար,
Շըրթերդ դաշն էին և ձե՛ռքըդ ճարտար։

Եկան խուժերն ու ձեռքիդ կապ անցուցին,
Բըղըքաեցին, աղաբաեցին ծոցդ անգին.
Եւ բիւրախոց դարձար դուն Մա՛յրը կարմիր,
Գողգոթային ճամբուն վրայ ծընրադիր:

Ի՛նչ գեղեցիկ, ի՛նչ քաջ եղար ցաւին մէջ...
Աղէտքին տակ հոգիդ ճնացեր էր անչէջ.
կարծըր լուծեր կոտրտեցիր, ու մահէն
Քանի՛ անգամ ոտքի ելար դու նորէն:

Աչքըդ լոյսին կը սեւեռէր անդադար.
Միտքըդ խիզախ, Նոր Աշխարհին կը դառնար.
Ու դարերով յամառեցար առանձին,
Թումբ ձևանալ Ասիական հեղեղին:

Մեծցաւ հեղեղն ու ղգեաննց քեզ՝ մոլեգին,
Ու մարեց բո՛ցըդ թափովն իր ալիքին.
Զըուառական, խաւարին մէջ՝ հոդամած
Միչա կենդանի, դուն ոտատեցիր գալարուած:

Գիշեր առեն, մերթ հին չիրմաց խաչերը
կ'երերային, և Մասիսի քաջերը
Մութին մէջէն կը շողային բարկաճայթ
Աչուըներէն արձակելով շառ ճառագայթ:

Օգին մէջ խուլ կը թընդային թըմբուկներ.
Դուն դող ելած, կ'առնէիր պահ մ'աչքըդ վեր,
Ու վրդոված կը նայէիր լեռներուն.
Ոչինչ, բայց մութը ծանր ու պա՛զ լուսթիւն:

Օր մ'ալ ցաւի ցընցման մը մէջ անոահման՝
Ցընցուեցար՝ մեծ ճիչով մ'անձկոտ ընդվզման.
Աչխարհ ձայնիդ խուլ մնաց. ու Բիրտ Ուժին
Կոյր գարշապա՛րը ճըզմեց ճիպդ քուկին:

Ժանտ հուրերու մէջ ճիւաղներ ցատկեցին,
Սիրտդ այրեցին և աչուըներդ փորեցին.
Տունէն վանուած, հովերուն տակ մնացիր,
Մերկ տարածուած, չորսդիդ արիւն ու մոխիր:

Հիմա նստեր ես, ցաւագին ուրուական,
Աւերներուն պատկերին մէջ տխրական.
Կը խածկըռտէ վէրքերդ հովը սառուտ.
Ախին կ'իյնայ խեղճ ծիծերէդ կաս—կապուտ:

Դանդաղօրէն կը չարժես գլուխդ ու կուլաս,
Ու ցած անուշ ձայնով օրօր կը կարդաս
Զաւկըներուդ որ արիւնին մէջ ինկան
Եւ անոնց՝ որ չորս հովերուն ցրուեցան:

Օրօր կանաչ արևներու, լուսաւէտ
Աչուըներուն որ մարեցան առ յաւէտ.
Եւ անոնց որ դեռ կ'ապրին ու կը տանջուին
Զընտաններուն մէջ ու մռայլ աքսորին:

Հերի՛ք, հերի՛ք, այդ օրօրդ ա՛ղբ է մահու.
Հերի՛ք, մենք նոր օրօր ունինք երգելու.
Պիտի երգենք օրօրն յոյսին ու վրէժին,
Ու մեռելները պիտի հողուն տակ սարսին:

Հերի՛ք, հերի՛ք ... վեր առ գլուխդ ու մի՛ լար,
Ցաւը սուրբ է, ցաւը՝ մեծ ու փրկարար.
Ոչինչ կայ վեհ քան խաչին տակ զոհն արի,
Գիշերին մէջ կը հիւսուի ա՛յգը բարի:

Շատ դահիճներն ու քանդողնե՛րը մըթին
Փուշի պէս պիտի անցնին ու ցընդին.
Ու մոխիրին մէջէն ելլես պիտի դուն
Տառապանքէն նորոգուած ու շողշողուն:

Մի՛ լար, մի՛ թոյլ մաղերդ հովուն տարտըղներ,
Մի՛ լար, մի՛ խեղճ գլուխդ վար կործաններ
Ճանչցիր դուն քեզ, ժողվէ՛ արիւնդ ցիրցան,
Հերի՛ք ուժերդ օտար տան սիւն կանգնեցան:

Հանգի՛ստ որժդոյն եղբայրներուն որ ինկան.
Ելի՛ր, օրհնէ՛ մեզ, տարածէ մեր վրան
Թևերդ անհուն, թող մեր արիւնն ու հոգին
Ջու արևուդ մատաղ ըլլան ու ցամքին:

Մութին մէջէն պիտի ցըցուիս յաղթական.
Աչքերդ աստղեր պիտի դառնան ու ցոլան.
Վէրքերդ վարդ պիտի ըլլան հոտաւէտ,
Ու լոյս պիտի թաւիլ ճերմակ մաղերէդ:

Պիտի կանգնիս Ճամբաներուն բերանը,
Պիտի քանդես Բըռնութեան ահ խորանը.
Ոտքի՛ ելիր, ցաւերդ երկունք են հըսկայ.
Ո՛վ մայր, աշխարհ մը ծոցիդ մէջ կը խլըրտայ:

Ա. ՉՕՊԱՆԵԱՆ



ՀԱՅ ԵՂՅՈՒԿ

Դու տեսե՞լ ես երկնքումը
Պայծառ լուսին ծագելիս,
Կամ թէ կանաչ աերևի մէջ
Կարմիր ծիրան փայլելիս:

Դու տեսե՞լ ես ծաղկոցումը
Կարմիր վարդը փըթթած,
Շուշան, մեխակ ու նունուֆար
Զօրս բոլորքը պար բռնած:

Բայց լուսինը խիստ խաւար է
Հայ աղջկայ տառջին,
Ծիրան, մեխակ ու նունուֆար
Զարժեն նորա մէկ պահին:

Երկու թըչին վարդ են նըստել,
Ձերմակ ճակտին՝ մէկ շուշան,
Ժըպիտը բերնից ցած չի գալիս —
Անմեղութեան է նըշան:

Տե՛ս, նա առաւ կարմըրելով
Իր ընկերից դահիրան,
Դըմդըմբեցուց փափուկ մատով
Ու ըսկսեց լեզգինկան:

Նազուք մէջքը ծառի նման
Տատանում է գեղեցիկ,
Մէկ թռչում է նա անդուման,
Մէկ գընում է խիստ հեզիկ:

Հալւում է խեղճ կըտրիճների
Սիրտը՝ նորան տեսնելով,
Ծերը իրան պնծում է,
Որ ծերացու խիստ չուտով:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

ԶԵՓԻՒՌ ՄԱՆԿԱՆՑ

ԴՈՒ ՓԱՓԿԱԹԵՒ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաջ,
Անուշ հոտով ծաղկանց սփիւռ,
Ի՞նչպէս թռչիս ինձ ընդ առաջ:
Ու խունկ ու զով ընծայելով,
Զիս ողջունես հեզիկ շընչով:

Ո՜հ, կը սիրեմ զքեզ, հողմիկ,
Երբ կը փութաս ինծի գալու,
Ի պար, ի թռիչ, ի սոյլ մեղմիկ,
Այրած ճակտիս ինձ այցելու:
Ծաղիկ հոգւոյս քեւ զովացած,
Ծիլ ծիլ բացուի ի լոյս կենաց:

Սլացիր փափկիկ դու սուրհանդակ,
Լուր տուր հովտին ու ծործորին,
Որ անտառաց բարձրադիտակ,
Ուր երամով սոխակք թառին:
Թէ մանրիմն իւրեանց նկաւ,
Բիւր զմայլմանց յիշատակաւ:

Ո՜հ, կորուսած եմ հաճոյքներ,
Հոս վերստին ես գտնեմ զձեզ,
Ծառոց շքով էք ծածկուեր,
Ու փրփուրով առուակին հեզ։
    Ահա կայտռէք ի յայս ծըմակ,
    Ի յայս թըփուտ հովանոցակ։
Հոս դառն հոգեր մէկիկ մէկիկ,
Ճակտէս ի բաց հեռանային,
Եւ հոյլք ժամուց գեղապարիկ,
Սիրտս թեթեւ օրօրէին։
    Եւ բնութիւն՝ մայր որդեսէր,
    Քնքուշ գրկաց մէջ մեր։
Հոս ճեմէին երեկոյեան,
Ի զով ստուեր պար մի կուսից,
Մազերը հովուն բազմարուրեան,
Սիրտք ընծայուած հեշտ վայելից։
    Շող լուսնակին, կոյսն ու ծաղիկ,
    Զիրար շոյեն սիրատարփիկ։
Մտերմութիւն, սէր կրակուբոց,
Ի՞նչ անոյշ էք յայս տեսարան,
Ուր դալարիք ձեզ հանգստոց,
Ու անհուն դաշտեր ձեզ զբօսարան։
    Մտերմութիւն, ինձ երանի,
    Թէ հոս հոգիս ծոցէդ թռանի։
Դու փափկաթեւ մանկիկ զեփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաչ,
Անուշ հոտով ծաղկանց սփիւռ
Թռի՛ր, թռի՛ր ինձ ընդ առաջ.
    Ու խունկ ու զով ընծայելով,
    Իմ շուրջ պատէ հեղիկ շնչով։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ



Խ. ԱԲՈՎԵԱՆ



ԻՄ ՍԻՐԸ

Եթէ ՏԺԳՈՑՆ մահու հրեշտակ
Անհուն ժպտալ մ՚իջնէ իմ դէմ,
Շոգիանան ցաւքս ու հոգիս,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ արնարբու իմ սիպար,
Մամ մը վրաիս ու մահադէմ,
Ո՛հ, նըչուլէ ցուրտ ճառագայթ,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ ճակատիս արտօսրագօծ
Չիս պատանի մէջ ցուրտ գերթ վէմ
Փաթթուեն, դնեն սև դագաղը,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ հընչէ սրխուր կաչնակ,
Թրթռուն ծիծաղն մահու դժկամ,
Դագաղս առնէ իր համր քայլ,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթէ մարդիկն այն մահերգակ,
Որք սև աւնին ու խոժոռ դէմ,
Համասփռեն խաւնկ ու աղօթք,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Եթ՚ յարդարեն իմ հոգւակոյտ,
Եւ հեծեծամբ ու սըգալէն,
Իմ սիրելիքը բաժնուին,
Գիտցէ՛ք որ դեռ կենդանի եմ։

Իսկ աննշան եթէ ճնայ
Երկրի մէկ խորշն հոգւակոյտ իմ,
Եւ չիշատակս ալ թաւամի՝
Ո՛հ, այն ատեն ես կը մեռնիմ։

Պ. ԴՈՒՐԵԱՆ



ԱՌ ԹՌՉՈՒՆՍ

(Եղանակ «Մայր մ՚ունէր ես միայն»)

ԵԿԱՅՔ թռչունք թեւաւորք,
Մեր պարսպին ձեւաւորք.
Բարձրագագաթ եղերաց
Վրայ թառիք թեւարաց։

Վախկոտ, վառոյժ ձեր թեւեր,
Չերիք առնէք ի յերեր.
Մի՛ չտապէք հասանիլ
Զագուց ձերոց ի բոյնիկ։

Սուինաւորք մեր սանեաց
Ո՛չ, ձեզ համար չեն կանգնած.
Ձեզի պէս թռչունք չեն որսար —
Բանտարկեալցս են համար։

Ես ալ ձեզ պէս թափառկոտ,
Տարագիր մ՚եմ արցունքոտ.
Իմ սիրելեաց կամ հեռի,
Այս մահահոտ ի բանտի։

Աչքէս արցունք կը հոսայ,
Սիրտս արիւն կը խշայ,
Հոգիս ցաւօք հեկեկայ,
Ոտքս շղթայ կը շխկայ:

Արի՛ք, թռչունք, ո՜հ, արի՛ք,
Շատ կ՚աղաչեմ շտապիկ,
Ցաւած սրտիս կարեկից,
Ինձ այցելու դուք եղիք:

Թէ ձագունք ձեր միայնիկ,
Ճվան ճչան ի բոյնիկ,
Ա՜հ, դուք նոցա գորովով,
Թռչիք սուրաք թեւերով:

Շուտ հասնիլ և գգուել,
Տաքուկ թեւերով ծածկել,
Բայց այս ամէնն ինձ համար
Իսպառ դարձան անհնար:

Արդ, ո՛վ թռչունք, գթացէք,
Առէք երկտողս տարէք
Իմ սիրելեաց հասուցէք,
Ինձմէ շատ բարև արէք:

Առէք ընկեր ձեր նետահար,
Ձեր քաղցր տեսոյն սիրահար,
Թռչի առ ձեզ բերկրապարար,
Գթով երկնից ազատարար:

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ

(Հեղինա՛կը չփոխելու չէ ծանօթ համանուն դերասանին հետ: Պետրոս Ս. Ադամեան բնիկ Չմշկածագցի, Միաց. Ընկ. ուսուցիչներէն, կը ձերբակալուի քաղաքական յանցանքով և տասը տարուայ բանտարկութեան կը դատապարտուի: Վերի երգը գրած է Տիգրանակերտի բանտին մէջ, ուրկէ արձակուելով հայրենիք վերադարձած պահուն ճամբան կ՚սպաննուի 1896ի բնդհ. ջարդին:)

ԵՐԳ ՄԻՈՒԹԵԱՆ

ԵԿԱՒ ժամանակ, բարեկամ բախտին,
Նոր գարուն բերաւ Հայաստան երկրին.
Իջաւ յԱրարատ, հասաւ ի Տիգրիս,
Դարձաւ, դադրեցաւ, կեցաւ ի Մասիս:
Եւ ձայն տուաւ անկէ Հայոց,
Ձայն մը Թորգոմայ որդւոց,
Որ մերկանան զցուրտ ձմրան վարագոյր:
Ժամ է, արդ Հայեր,
Ընկեր առ ընկեր,
Տանք սիրոյ համբոյր.
Համբոյր մեր ըլլայ վրկայ միութեան
Սահմանադրութեան:

Եւ չիջելափառ հայրենեաց խորան,
Բացաւ տխրագին իր քօղ ճգնութեան.
Հասին հոն մուսայք և յուսոյ հրեշտակք՝
Ախորժ երգեցին ցնծութեան նուագք.
Եւ սիրտ տուին անկէ Հայոց,
Սիրտ մը Թորգոմայ որդւոց.
Որ մերկանան հեռ նախանձուն վարագոյր,
Ժամ է արդ, Հայեր, ևն.

Ելաւ Հայաստան նոր գարնան ի տես,
Դարձաւ ի չքեղ իր փառաց հանդէս.
Դարձիր բախտակոծ քնարդ իմ հոգւոյն,
Դարձէք աւուրք կենաց, դարձէք յայդ յուսոյն.
Եւ լոյս տուէք անկէ Հայոց,
Լոյս մը Թորգոմայ որդւոց.
Որ մերկանան մութ գիշերուան վարագոյր.
Ժամ է արդ, Հայեր,
Ընկեր առ ընկեր,
Տանք սիրոյ համբոյր.
Համբոյր մեր ըլլայ կնիք միութեան
Սահմանադրութեան:

Ս. Հ. ՓԻԼԻԿԵԱՆ

ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՐԵՆԵՑՅ

Եկել է գարուն սոխակը սիրուն,
վարդի թուփ գալ, կ'երգէ Հայրենիք,
Ծիծեռնակ, բազէն, թռչունք համօրէն.
Քաշուած են միշտ ա՛խ, օտարաց երկրէն:

Կռունկ մեր պանդուխտ, իր բարձր եթերքով,
Փութաց ձայն տալ մեզ հայրենի սիրով.
Արծիւն Հայրիկ, հայրենակարօտ՝
Հեռանում է արդ դէպի Մուշ, Տարօն:

Վասպուրականի երիտասարդները
Եւ օրիորդներ հագան սև լաթեր.
Լաց ու արտմուքեամբ մոռցան Ծաղկազարդ
Ինչպէս որ սոխակ իր սիրելի վարդ:

— Հայրիկ, ո՛հ Հայրի՛կ, ո՞ւր այդպէս արագ:
— Գնամ հրաժեշտ տալ՝ և վերջին կտակ.
Նորաչէն, Արարք, Յանկոյսաձորոյ վանք,
Ուր կան ժողովուած տղայ, մարդ և կանայք:

Իսկ երկուշաբթին որ օրն էր աւագ
Ի սուրբ Յակոբէն տուն դառնար արագ.
Վերջին տեսութիւն, վերջին վառ կարօտ՝
Զը կրցաւ երբէք տալ ոչ մէկին մօտ:

Մի ջինջ արցունք աչքերէն վազեց,
Զը կարաց ժուժել, տեղէն վար կայնեց:
Լոկ մի բան ասաց, խօսք մը հայրական,
Ա՛խ, կարծես Հայրիկ մեռած է, կուլան:

Լալական խումբեր, ո՛հ, առին տարան
Հայրենի քաղաք, Առաջնորդարան.
Փակեալ կրպակներ կարծես սուգ առած՝
Աւա՛ղ կարդային Արծւին Հայրենեաց:

Թռա՛ւ, ալացա՛ւ մեր երկրէն ի բաց:

Չէ՛, այլ չէ տեսնում սիրուն Հայրենիք՝
Հայրենի վառքէն կարօտ մեր Հայրիկ:

Կ. Ց. ՊԱԼՈՒՋԵԱՆ



ՍՐԻՆԳԸ

Եկ իմ սրինգ, իմ բարեկամ սըրտագին,
Նիհար չըրթներդ, ո՛հ երեսուն,
Դի՛ր գալկահար իմ չըրթներուն,
Երգենք ու լանք, լանք ու երգենք տրամագին։

Լա՛յ, պի լոկ քեզ գըտայ հատորն իմ սրտին։
Դու բարեկնակ էիր կանուչ,
Երբ մի անգութ ձեռք անճանուչ
կարեց զքեզ, անջատեց մայրն ու որդին։

Եւ թոյլ տուիր որ լանջքիդ վրայ գալարուտ
Ծակեր բացին, վէրք երկաթի,
Թող այս վէրքէն, ըսիր, կաթի
Արիւն, բողոք՝ մխակ սիրտիանք վիշտերուդ։

Ես ալ մանուկ էի անմեղ երբ վազուց
Մի անծանօթ պատճառ վըրդիս
Լուծ մը գըրաւ, ո՛րք կոչեց գիս,
Եւ հօր ու մօր սիրոյս կարօտ գիս թողուց։

Իմ ալ կուրծքըս ծակծըկեցին ժանտ վէրքեր,
Եւ որպէս դուն սիրես որմին
Ցեղուլ, լըռել, մինչև որ մին
Զի յուզէ քեզ, չես հառաչեր, չես երգեր։

Լըռիկ մընջիկ սիրեմ և ես հեռու կալ
Ընկերութեան սին ժըխորէն,
Եւ իմ սըրտին, հոգւոյն խորէն
Զընեալ, ըզգալ, լոկ զարմանալ ու խոկալ։

Թող երգիհոն, դաչնակ, քնար գեղգեղեն
Ցեկեղեցւոյ ի գինեատան,
Աղօթք և պար թըռչին, խայտան՝
Թող այլք վայլեն հաճոյք մարմնոյ հոգեղէն.

Ա՛խ, իմ սըրինգ, աշխարհ յոյսով թող բերկրի,
Թող բախտն անոր ժըպտի յոյսին,
Ե՛կ, ես և դու ի մխաին
Լանք և երգենք, մեր բաժինն այս է յերկրի։

ՍԻՈՒԹԵՍԻՆ ԵՐԳ

Նկէք միաբանինք լուր մը լսելու,
Սքանչելի բարբառներդ ո՞ւր մնաց.
Աւա՛ղ, աւա՛ղ ուր մնաց:

Ժամանակաւ սրեր, գէնքեր մաքրեցինք,
Ելէ՛ք, ելէ՛ք դաշտին վրայ գինուեցէք.
Աւա՛ղ, աւա՛ղ, գինուեցէք:

Բանտին ամուր չէնքը հիմէն քանդեցէք,
Ա՛ռ Հայաստան, առիւծներդ ո՞ւր մնաց:
Աւա՛ղ, աւա՛ղ ուր մնաց:

Լոյսը դէպի պատուհանը բարձրացաւ,
Դաշտին մէջի գառնուկները, ո՞ւր, մնաց.
Աւա՛ղ, աւա՛ղ, ուր մնաց:

Գնա՛ եղբայր, գնա՛ ինձնէից հայրենիք,
Իմ ցաւերս շատ ու շատ են, ես մենիկ.
Աւա՛ղ, աւա՛ղ, ես մենիկ:

Անդ հայրենիք ունիմ ես շատ գանձ և ինչք.
Գանձ իմ, եղբարք, և մըտերիմք թանկագին
Աւա՛ղ, աւա՛ղ, թանկագին:

Տաճկաց զօրապետներ չան պէս մրմռան,
Ա՛ռ Հայաստան, կարիճներդ ո՞ւր մնաց:
Աւա՛ղ, աւա՛ղ, ո՞ւր մնաց:

Գիշեր ցորեկ առչորում եմ բանտին մէջ,
Ա՛ռ Հայաստան, մարդիկներդ ո՞ւր մնաց:
Աւա՛ղ, աւա՛ղ ուր մնաց:

Փայլակում էք մարզարիտի հանքին մէջ,
Թող Հայ մեռնինք եղբայրներով բանտին մէջ.
Աւա՛ղ, աւա՛ղ, բանտին մէջ:

ԱՐԲԵՑՈՂԻ ԿՏԱԿԸ

ԵՂԲԱՐՔ, ուժից ընկած պաղատագրով,
Էլ աւելի չեմ կարող խմել,
Կարելի է որ մեռնիմ շուտով,
Կ'ուզեմ կտակս ձեզ յայտնել:

Այն գինետան ինձ թաղեցէք,
Ուր շատ անգամ ես հարբել եմ,
Գերեզմանս այնպէս փորեցէք,
Որ տակառի տակը պառկեմ:

Ոտներս պատի կողմ ուղղած,
Բերանս լինի չուչի տակ·
Երկու ձեռքով ունենամ բռնած,
Ահագին՝ գինով լի բաժակ:

Թաղման հանդէս մի կատարէք,
Պատարագի զանգակներով·
Դիակիս վրայ գինի թափեցէք,
Բաժակներ չխչխկացնելով:-

Գերեզմանիս վրայ քար չը դնէք,
Տակառն արժան է ինձ համար·
Վրան միայն չորս բառ գրեցէք,
«Արբեցողի է սա տապան»:

Գերեզմանիս այցելութեան գալով,
Շուտ, շուտ, ինչպէս լաւ ընկերներ·
Իմ խեղճ հոգուս ողորմի տալով,
Կոնծեցէք լիք լիք բաժակներ:

Բայց եթէ կտակս դուք մոռանաք,
Խռով կենայ ձեզ մեծ Բագոս·
Ծարաւնաք մի կաթիլ գինուն.
Կուլ տայ ձեզ դժոխքի փոսը·

Բայց դեռ քանի հոգիս բերանումս է,
Տուէք եղբարք, ինձ մի շիշ գինի·
Ամօթ է որ մահու հրեշտակը գայ
Եւ ինձ արբած չը գտնի:

(Թարգ.) Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

ԵՍ ԵՄ ազատ հայ պատանի,
Աշխարհս են այս լեռները,
Սուրս է միակ իմ սիրելին,
Եւ ընկերըս՝ պէրտանը:

Իմ զարդերս են զէնքերս,
Ոսկի են իմ փամփուշտներըս,
Անկողինս կանաչ մարգեր,
Փափուկ, մաքուր, պատուական:

Ապարանըս՝ ժայռ քարերը,
Եւ հայելիս՝ ջինջ վտակ,
Բնակարանըս՝ անտառները,
Եւ լապտերըս՝ վառ լուսնակ:

Ես պարծենալ բնաւ կարող չեմ
Որեւիցէ ուսումով,
Միայն գողտրիկ երգել գիտեմ,
Եւ զէնք շարժել սուրբ սիրով:

Խմբապետ եմ մէկ հայ խումբի,
Զարդարուած լազի զգեստով,
Յանուն ազգի կռւում եմ ես
Քաջարի ընկերներով:







ԵՐԱԶ

ԵՍ լսեցի մի անույշ ձայն,
Իմ ծերացած մօր մօտ էր,
Փայլեց նըշոյլն ուրախութեան,
Բայց ափսո՛ս որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւրն այնտեղ
Թաւալում էր մարգարիտ,
Նա յատակ էր, որպէս բիւրեղ —
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեզնից ախուր մայրենի՝
Ցիշեց մանկութեան օրեր,
Մօրս համբոյր ես ըզգացի —
Ա՛խ, ափսոս որ երազ էր։

Կրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերը սրբեց — չատ թաց էր.
Բայց արտասուք գընում էին...
Ա՛խ, այն ինչո՞ւ երազ էր։

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ՄՕՏԱՑԻ ԱԶԳԱՍԷՐԸ

ԵՍ ԽՕ լեզուով շա՛տ բան ըրի,
Որ Հայաստան լուանայ.
Թէև կում մը ես չը տուի՝
Բայց «մե՛նծ» անուն շահեցայ:

Երթալ կռուիլ քարոզեցի,
Կուրծք տալ հանդէպ թշնամուն,
Ոգեւորուած ես դիմեցի...
Կամացուկ մը դէպի տուն:

Ու երգեցի «Ազգիս համար
Թող գիս հանեն կախաղան».
Բայց սոսկ տեսքէն լեղապատառ՝
Քար կը կտրիմ կը մնամ:

Ըսի՝ «Արիւն պէտք է հոսի,
Պէտք է մեռնիլ առնաբար»,
Բայց թէ քիթս որ արիւնի...
Աշխարհ աչքիս չ'երեւնար:

Կ'երթամ երկիր ջարդ տալ Թիւրքին,
Խոշո՛ր սուր մը ինձ տուէք.
Բայց պէտք է որ Թիւրքին, քիւրտին...
Ոտքն ու ձեռքը պինդ կապէք:

Կատարածի լուրեր հասան,
Ալ համբերել չկրցայ,
Ըսի. հայե՛ր, մեր նշանաբան՝
Դէպ Հայաստան թող ըլլայ:

Ու փոխանակ նաւու «պիլէթ»,
Ես թրէնի գնեցի,
Սխալմունք մ'էր, հազա՛ր նալէթ,
Քալիֆօրնիա... կըծկեցի:

Ա. ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՀԱՅՈՒԿԸ ԵՐԳ

ԵՍ ՀԱՆԵՑԻ տուրս պատեանից,
Արտասուքով օծեցի,
Տըրտմաւ անուշ սիրականս,
Երբ վճիռս կարդացի։

Նա երդուեցաւ իմ սիրովս,
Զը խնայել թիւրքերին,
Այս պայմանով աչխոյժ քաջին
Սուր և հրացան յանձնեցին։

Ատուած սիրէք, հայ աղջիկներ,
Եկէ՛ք, ուխտանք միասին,
Այսուհետև էլ չը սիրենք
Կռուից փախչող վաաերին։

Ախատ ղղուելի կերպով նայենք
Ոսկու սիրուն մեռնողին,
Համբոյրի տեղ թոյն կամենանք
Թիւրքից վրէժ չառնողին։

Ոգևորուած կրկնեց քաջը,
Ո՞ւմ կը սպասենք, վա՛յ մեզի.
Նա հեռացաւ մրռնչալով
Ինչպէս կորիւն առիւծի։

Կը գայ գարուն. մենք կը սպասենք.
Նոր կեանք, նոր բախտ քիւրդի հետ,
Մեր լեռներից սիրտ հասի
Արիւնն իրեւ վարար գետ։

ԾԻՐԱՆԻ

ԵՍ ՄԷԿ ծառ եմ ծիրանի,
Հին արմատ եմ անուանի,
Պտուղներս քաղցրահամ,
Բոլոր մարդկանց պիտանի:

Հին ծառ եմ արևելեան,
Զունեմ որոչ այգեպան,
Տունկերս ամէն երկիր
Ընկած են բաժան-բաժան:

Արևելքում ինձ տնկեց,
Երբ որ Աստուած ինձ ստեղծեց,
Ասաց՝ աճէ-բազմացիր,
Մի այդի էլ ինձ տուեց:

Ուղարկեց մի այգեպան,
Հարուածց մի հսկայ իշխան,
Այն հսկայի անունով
Կոչուեցայ ծառ հայկական:

Զորս հազար տարուայ ծառ եմ,
Արմատս պինդ, կայուն եմ.
Թէպէտ այժմ պակաս է,
Բայց անունով պայծառ եմ:

ՋԻՎԱՆԻ

ԳԼՈՒԽ ՄՇԵՑԻ

ԵՍ ՄՇԵՑԻ ճամբորդ եմ հեռու տեղերէն,
Ձեզ չատ բարև բերեր եմ հայի գեղերէն.
Սխրէրքըս ինձ զրկեցին դէպ էս կուման —
(Մի վախնաք, չուզեմ ձեր մանէթին ու թուման)
Վարագայ սուրբ խաչէն բերեր եմ ձեզ լուր.
Ազճացէք Հայ ազգիս, տուէք մէկ-մէկ թուր:

Հայ ազգը մեր տեղ նեղ օր կը քաշի,
Օսմանլին ու քիւրդը կեանքերս կը մաշէ.
Օր կ'ըլլայ՝ գերեվար կ'անէ մեր տըղոց,
Օր կ'ըլլայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց.
Թէ չօգնէք՝ մենք ալ կ'ըլլանք ყիր ու ցան.
Ազճացէք Հայ ազգիս, տուէք մեզ հրացան:

Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կոյանք,
Ուրաններս պղծեցին, քանդեցին սուրբ վանք.
Ազգ Հայն օրնիբուն ծաղր է ու ծանակ,
Ո՛վ ազբարք, բերեր եմ ձեզ ահ բօթ —
Ջուզենք մենք ձեր ոակին, տուէք մեզ վառօդ:

Այսքան չատ տանջանքին ինչպէս դիմանանք,
Մինչև ե՞րբ ձեր դիաց անօգ պիտի մնաք.
Մեր ազգը տէր չունի Սլամօնի նման,
Բարի՝ դուք ըլլայիք մեզի օգնական,
Հոգիներս տրորած է ջանքերս ցաւոտ.
Ջուզենք մենք ձեր փարան, տուէք թնդանօթ:

Շատ տառապանք քաշեցինք դուշմանի գէնքէն,
Շատ ալ մահ դուշման կերաւ մեր ձեռքէն,
Առանց ատոր աշխարհքը մեր չէ բազմամարդ,
Հիմի փուշ կը բրանի ուր առաջ էր վարդ.
Բայց մենք ձեր անառուկի փողին կարօտ չենք —
Հայ եղբարք, չնորհեցէք դուք մեզ մէկմէկ գէնք:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ.



ԵՍ ՈՒ տանն օրիորդը, երկուքս ենք մինակ՝
Հիւրասրահին մէջ։
Նուրբ ու գեղունակ,
Հազիւ բոլորած տասնեւթը գարուն,
Դէմքը հրապուրիչ, աչքը բարբառուն,
Ժըպիտն ու նայուածքն արթուն, խելանի,
Պիծակի մէջքով աղջիկ մ՚է անի։
Իր շարժուձեն ու արդուզարդն ամէն՝
Զարգացման չափն ու ճաշակը պատմեն...։
Ճակտէն ցոլացող շնորհքը շողշողուն
Զիս պահիկ մ՚ յուզուած ու լուռ կը թողուն...։
Կուզեմ օգտուիլ այն վայրկեաններէն.
Բայց ի՞նչ խօսք բանամ, ի՞նչ ըսեմ իրեն,
Որ պարզուին առջեւ այդ մատաղ միտքին
Գաղափարներն ու ծալքերը ներքին,
Եւ այս կոյս լանջքին տակ հսկող հոգուն
Հասկնամ խոհանքն ու խոյանքը թագուն։
Կը բաբախէ սիրտս ուժգին՝ թի՛ք, թի՛ք, թա՛ք,

Ու կը հարցունեմ.
— Ի՞նչ կը կարդաք.
«Ո՞րն է ձեր սիրած հեղինակն օտար...»:
Օրիորդը, ժըպտուն, պատասխան չի տար:
— Պայրո՞ն, Լամարթի՞ն, Ալֆրէտ տը Միւսէ՞
«Որ այնքան չքնաղ տաղեր կը հիւսէ՝
«Փափուկ, սրտաբուխ ու սիրապատառ...»:
Օրիորդը, ժըպտուն, պատասխան չի տար:
— «Հիւկո՞, Ժան Ռիշբէ՞ն, Միրպօ՞ կամ Զօլա՞
«Որոնց գըրչին տակ կ'եռայ ու կուլայ
«Մարդկութիւնն իր կուռ կիրքերով վատթար...»:
Օրիորդը, ժըպտուն, պատասխան չի տար:
— «Հապա նրբազգած, յուզիչ Բիէռ Լօթի՞ն,
«Որ ճամբորդելով աշխարհի չորս դին
«Նկարէ գայն այնքան բանաստեղծօրէն...»:
Ժպտուն, պատասխան չի տար ինձ նորէն:
Կը չարունակեմ.
— «Հապա Ռօլլինա՞,
«Որ ահաբեկիչ կոչեր կը բառնայ,
«Մահուան ժամու տեսիլն հեգնէ անդադար...»:
Օրիորդը, ժպտուն, պատասխան չի տար:
«Չէ՞ք կարդար — Թի՛ք, Թա՛ք, զարնէ սիրտս ուժգին,
«Սէնքիեվիչ, Իպսէն, Թէննիսըն, Բուչքին,
«Կամ Մարսէլ Բրէվօ, Ժիւբ, Պուրժէ, Գօդէ...»:
Օրիորդն աչք ձեռքով ճակտը կը շփէ:
— «Բօլ էրվիէօ, Ռօսթան, Լավտան, Գուրթըլին,
«Նորերէն, որոնք տակաւ կը փայլին,
«Ո՞րն է որ զձեզ կը հետաքրքրէ...»:
Օրիորդն իր սիրուն քիթը կը քերէ:
— «Ձեր նախասիրած ո՞րն է վիպասան,
«Տիւմա՞, Ժիւլ Մարի՞, Տօտէ՞, Մօրասա՞ն,
«Բօլ տը Ֆօ՞ք, Օնէ՞, Ֆէօյյէ՞, Ռօպիտա՞...»:

Օրիորդն անուշիկ — փշո՛ւ — կը փըրընդտայ...»:
Ու միշտ կը լռէ. ես՝ միշտ կը խօսիմ.
— «Բօլ Անտա՞ն, Լօնպա՞ր, Լօրէ՞ն, Ալպէր Սի՞մ
«Հաճելի՞ են ձեզ Մաքս Նօրտաու, Նիչէ...»:
Օրիորդն, անխօսուկ քիթը կը խնջէ:
— «Շաթօպրիանի ոճն ազնիւ ու սէգ
«Չէ՞ հմայած ձեզ, կ՚աղաչեմ, ըսէք.
«Գօրնէյլի մասին ձեր կարծիքն ի՞նչ է...»:
Կը բանայ բերանն ու կը յօրանջէ:
— «Պատմաբաններէն՝ Թիէռ, Էտկար Գինէ,
«Մասնաւորապէս ձեր հաւնածն ո՞րն է,
«Միշլէ՞, Կիզօ՞, Թէ՞ն, որ Ռէմիւզա՞...»:
Օրիորդն, անհամբեր, — ըհը՜մ — կը հազայ,
Եւ կը մնչէ. — «Դուրսն, ի՞նչ անպիտան օդ...»:
— «Անկապաշտներէն ո՞րն է ձեզ ծանօթ...
«Մեթերլինկի վրայ կարծիքն ի՞նչ է ձեր...»:
— «Թէրլիկի՞ վրայ... բան չեմ կարդացեր»:
Այս պատասխանէն ահռելի՛, վսե՛մ,
Շանթահար եղած. — «Ա՜հ, օրիորդ, կ՚ըսեմ,
Ու կը բաբախէ սիրտս ուժգին թի՛ք, թա՛ք,
— «Ձեր տան մէջ ի՞նչ գիրք, ի՞նչ թերթ կը կարդաք,
— «Պարո՛ն, հայերէն՝ «Փունջ» կը կարդանք լոկ,
— «Իսկ ֆրանսերէ՞ն...»:
— «Լուվրի գաթալօկ...».

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ



ՍԻՐԱԿԱՆԻ ԸՆԿԵՐԸ

ԵՍ ՔԵԶ սիրի, որ դու ինձի չը թարկես,
Եթէ թարկես՝ հոգով մաճիովդ խարկես,
Անիծեմ, տաս տարի տեղումդ պտուկես,
Եօրլանի մէջ անքայ կոլերդ, աղջի՛կ։

Ում հետ էլ ոլ երթաս՝ հետդ չը վարուի
Պահուեըւդ օրը՝ քօղդ սև կարուի,
Հօրդ տուն ու դուռը սև քարով չարուի,
Ա՛խ ու վա՛խով ճնայ ախպէրդ, աղջիկ։

Մօրդ լեզուն ուռի, բերանը փակուի,
Քառասուն օր տանջուի՝ հոգին չը քակուի,
Ինձնէն զայրի հետդ ով որ պսակուի,
Իրեք օր չի վայլէ սէրդ, այ աղջի՛կ։

Չ'գանես խամ կտաւ էնես արխալուդ,
Լէն բօլ աչխարքի մէջ օրդ անցնի սուդ,
Հացդ կորեկ եղնի, գարին հետը կուդ,
Օձի պէս սակաւ քո կերդ, աղջի՛կ։

Ես մի խեղճ տղայ եմ, էրի քեզ դիւան,
Աստուածածինն էնի քու մօրդ դիւան,
Իր կենաց մէջ նա չունենայ սաղ ջան,
Որ ինձ էրաւ անիծ դարբէդար աղջիկ։

Պատճառն ի՞նչ էր, որ չհաւնաք դուք ընձի
Կարօ՞տ էք դովլաթի, փափա՞ք էք գանձի,
Առաջ խօսք տուողի լեզուն պապանձի,
Տանողդ չը տեսնի քու խէրդ, աղջիկ։

Ալագեօզ աչքերդ, կամար ունքերդ,
Ուզում եմ հետանամ՝ չի թողնու սէրդ,
Քեզի ընձէն էրաւ քու քեաֆիր մէրդ,
Խնդրում եմ չատանայ վէրքերդ, աղջիկ։

Ես Զուլալ-օղլին եմ, դարդովդ եմ կեցի.
Գիշերն եմ մտածի, ցորեկն եմ լացի,
Տասը տարի խաթրիդ ազատ ճնացի,
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերդ աղջիկ։

ՀԵՐՈՍԻՆ

ԵՍ ՔԵԶ տեսայ բանտում խաչուած,
Աղաչեցի առ տէր Աստուած,
Որ տեսանեմ քեզ ազատուած.
Անկեղծ կտրիճ ես միշտ սիրուած:

Բոյրդ բարձր սէվլի չինար,
Աչերդ կապոյտ, սիրտդ պրինդար.
Դու ծնուած ես ազգիդ համար,
Անկեղծ կտրիճ ես միշտ սիրուած:

Սիրտդ նման է հրեշտակի,
Զէնքերդ քեզի կը յարմարի.
Նպատակիդ հասնիս պիտի՝
Դու այդ մասին լեր անկասկած:

Թիւրք տանջում է քեզ բանտին մէջ,
Նետ է ձգում մեր սրտի մէջ.
Փոյթ չէ՛ ընաւ, մօտ է իր վերջ,
Նա կործանւում է անկասկած:

Գիշերները տխուր նստած,
Մենք քեզ յիշում ենք խիստ տրտմած.
Աղօթում ենք որ քեզ տեսնենք,
Հրացան ուսիդ նժոյգ նստած:

Դէմքդ տեսնող քեզ սիրում է,
Քեզի սիրող փրկւում է.
Քեզ հետեւող երկնքում է.
Անկեղծ կտրիճ ես միշտ սիրուած:

Խիստ տխուր են մեր օրերը,
Կենսամարտի մէջ է Հայ ազգ.
Ծախենք մեր Թանգ չորեր, եղբարք,
Տանք զէնք գնենք, լինենք զինուոր:



ՅՈՒՅՍ

Երբ ալեկոծ ծովի վրայ,
Իմ մակոյկը խորտակուի.
Ես փրփրապէպ ալեայց մէջը
Դեռ իմ յոյսը չեմ կորի:

Բոլոր ուժովս և համարձակ
Բազուկներս կը չարժեմ,
Ալիքները պատռտելով
Դէպի ափը կը թռչեմ:

Անհաւասար այս կռուի մէջ
Թէ ուժերս ինձ թողնեն,
Ալիքները յորձանք տալով
Դէպ անդունդը ինձ տանեն:

Այն ժամանակ լոկ սփոփանք
Ես կը գտնեմ նորա մէջ,
Որ մեռնում եմ քաջի նման
Կռիւ տալով մինչև վերջ.

Գ. ԹՈՒԴԻՈՍԵԱՆ



Մ. ՓՕՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Հառաչանք Սրմեցուհուն

Երբ կը լսեմ Հայաստանիս անունն,
Թնդայ սիրտս ուժգին.
Երբ կը յիշեմ իմ տառապանքն,
Արցունքով աչքս թրջին:

Անոր նման լքուած կա՞յ
Հայրենիք մ՚ալ արդեօք,
Որուն ձայնին լսող չ՚ինկայ,
Կուլայ կողբայ դառն ցաւովք:

Ելէ՛ք, վարպա՛ն, Տիգրա՛ն, Արա՛մ,
Տեսէք ձեր մայրն մխանգամ,
Թո՛ղ իր որբերն արթնցնեն ձեզ
Ձեր չիրմանց մէջ անգամ:

Տեսէ՛ք, ի՛նչպէս վտարանդի
Կը թափառի տուն Հայկայ
Եւ ամեն կողմէն կը հալածուի,
Կը հարուածուի անխնայ:

Ա՛հ, Հայաստան, դուն սիրուն մայր,
Մինչ ե՛րբ այսպէս քու որդիք.
Ինձմէ հեռու պիտ հառաչեն,
Իսկ դու՛ք, մինչ ե՞րբ թափառիք,

Մինչ ե՛րբ և ես մայրակարօտ
Սրմենուհիս քու սուրբ դիրկ
Ձիգամ պիտի որ արցունքովս
Թրջեմ ձեռքերդ քո վսեմիկիկ:

Թէ կրնայի թռչիլ երթալ
Գլխիկս դնել իմ մօր ծոց,
Ուրախութեան արցունքով հոն
Հանդչեցնել սրտիս բոց:

Գէթ մէկ անգամ փայփայանքով
Գգուիլ անկէ, ամէն համբոյր,
Ա՛լ թո՛ղ պիտ գոհ ընէր այնուհետ
Թշնամուն սուր սայրատուր:

Եկէ՛ք եղբա՛յրք և սիրուն քո՛յրք,
Ձեռք ձեռքի տանք և գործենք,
Մեր թշնամին տգիտութիւնն է,
Ուրիշ տեղ չը փնտռենք:

Այդ թշնամին մեզի ըրաւ
Թշուառ, բաժնեց մեր մօրմէն.
Պէտք է որ ան սիրով և ուսմամբ
Ցաղթենք վանենք մեր մէջէն:

Ա՛հ, Հայ եղբարք, հայկազն քոյրեր,
Մինչ ե՛րբ այսպէս անտարբեր,
Թողունք որ գան որոմ ցանեն
Աչխատանքի մեր արտեր.

Է՛հ, ա՞յն ատեն պիտ արթնանք,
Երբ ամեն բան թշնամին,
Ջանդէ, ցրուէ և տայ հովին,
Որ յիշատակց չը մնայ մին:

Արմէնուհի՛, ալ յուսահատ
Ձեզմէ սիրտդ որ դուրս թռչի.
Խեղդուած ախուր հառաչանքիդ
Ձայնը ամեն կողմ թող հնչի:

Երթայ հասնի մինչ Հայաստան,
Լսէ քու մայրդ և գըթայ,
Թերևս քեզի մխիթարէ
Ձի օտարէն յոյս չըկայ:

Ա՛հ, այս ցաւով վախնամ թէ
Ես պիտի մըտանեմ գերեզման.
Արձագանք մ՛ալ տուող չիկայ
Երբ կը պոռամ Հայաստա՛ն:

Ա՛խ, ամեն կողմ լռութիւն է,
Կարծես մահն է թագաւորեր,
Մեռելոց ու աւերակաց մէջ
Ես ալ բու եմ դարձեր:

Ա՛խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
Քեզ նուիրեմ ընդունէ,
Թէ կարելի թող ես մեռնիմ
Ու Հայաստան ոտքի ելնէ:

Անոր սիրուն բանտ ալ դրուիմ,
Պալատ է ան ինձ համար,
Ոտքերս ձեռքերս չղթայ զարնեն,
Երջանկութիւն է ան ալ:

Թէ մինչև իսկ աքսորուիմ,
Ձիս թափառական ընէ իմ բախտ,
Հայաստանիս սիրուն համար,
Ամէն տեղ ինձ կ'ըլլայ դրախտ:

Նպատակիս հասնիմ միայն,
Թո՛ղ գիս հանեն կախաղան,
Կախաղանէն ալ խեղդուող ձայնս
Պիտի կանչէ Հայաստան:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ



ԽՐԱՏ

Երբ որ ազգին գահը վերցաւ,
Երբոր ազգին թագ փշրեցաւ.
Յայնժամ մոլի վատ կղերներ
Բարձրացուցին իրենց թագեր։

Ըսին Հայոց լոկ հայրենիք
Է կղերին պաշտած երկինք.
Լաւ է կրօնի չըհաւատալ,
Քան թէ անոր դերի ըլլալ։

Հին բռնակալ թագիդ փոխան,
Հայ մարդ, ընտրէ դու քո իշխան.
Թանգ գարդն, պչրանքն գէշ կղերին,
Ա՛ռ, տուր, կրթէ հայի որդին։

Ազգ մ՚որ չունի ազատութիւն,
Ան չունի կեանք, չունչ և արիւն.
Չունի կրօն, յոյս հոգեկան,
Անբան նիւթ է ոանկոխան։

Երդմամբ վճռէ կամ կեանք կամ մահ,
Փշրէ կոտրէ լուծ և կապանք.
Լաւ է մարդուն բնաւ չապրի
Քան թէ ապրի այլոց գերի։

Փամփուշտ, զնդակ, ռումբ, ուժանակ,
Առատ լեցուր քո լայն տոպրակ.
Պատերազմի դաշտին մէջ դուն
Ընտրէ մեռնիլ, քան թէ քո տուն։

Լաց, կոծ, բողոք, արիւն, աղօթք,
Անօգուտ են, կը ցնդին յօդ.
Քանզի ազգաց իրաւունքներ
Որպէս են քաջաց սուրեր։

Որու սուրը կարուկ լինի,
Որու գնդակն հեռու նետուի,
Իրաւունքը անոր կ՚ըլլայ.
Աչխարհն այսպէս կը հաւատայ։

ՏԱՐՕՆՑԻ

ԿԻԼԻԿԻԱ

Երբ որ բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զբքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլի իր մաքուր օրեր,
Երբ որ ծիծառն իր բոյն դառնայ,
Երբ որ ծառերն հագնին տերև՝

Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աչխարհն որ ինձ եառւր արև:

Տեսի դաշտերն Ոնորիոյ,
Լեռն Լիբանան և իր մայրեր.
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ և իր կօնտօլներ,
Կըզգի նման չինք մեր Կիլիկիայ,
Եւ ոչ մէկ վայրն է արդարև

Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աչխարհն որ ինձ եառւր արև:

Հասակ մը կայ մեր կեանցմէջ,
Ուր ամենայն իզձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Ցիչատակաց իր կարօտի:
Ցարժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարև՝

Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աչխարհն որ ինձ եառւր արև:

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՇԱՅԴՈՒԿԻ ԵՐԳԵՐ

Երբ որ ես մեծցայ, տղամարդ դարձայ
Ու սիրտս վընդաց վառ — վառման,
Ուզեցի սիրել աղջիկ սևաչեայ,
Բայց դու դիրկս ընկար, անգի'ն հրացան։

Ու բոց կարօտով դրկեցի ես քեզ,
Սղմեցի կրծքիս, անգին հրացա՛ն.
Իմ սրտի տէրը — հարնացուս դարձար
Աննենգ ընկերս, իմ սիրուն հրացան...

Երբ թշնամու դէմ կռիւ եմ վազում,
Դո՛ւ՝ կրծքիս սղմուած՝ անպաժան հետս ես,
Դո՛ւ ես մինչ սրտիս մրրիկը յայտնում,
Քեզնով եմ փնչում, որոտում վրէժ...

Եւ երբ դ ազդած գլուխս դնեմ,
Կռուի դաշտերում, կուզեմ որ փարեն
Քեզնով ինձ մի փոս, կռուի ընկերներ
Քեզ հետս թաղեն, իմ հա՛րս, իմ ընկեր...

* * *

Սառնոյ ձորերում, կռուի ձորերում
Հայդուկն է ընկել խոր վէրքը սրտին, —
Վէրքը վարդի պէս բացուած կարմրուն,
Ու ձեռն է գցեր կոտրած հրացանին։

Արնոտ դաշտերում ծղրիտն է ծղրում,
Հայդուկն է քնել մահուան խոր քնով,
Հայդուկը հողում երազ է տեսնում, —
Հայրենի աշխարհն ազա՛տ, ապահո՛վ...

Տեսնում է ․․․ արտում հոգին է շշնչում,
Փայլում գերանդին, գնգում է անո՛ւշ,
Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք՝
Հայդուկի վրայ երգելով անո՛ւշ ․․․

Սասնոյ ձորերով ամպեր են անցնում․
Հայդուկի վրայ արծիւն է գալիս․
Ա՜խ, սև աչքերը արծիւն է հանում։
Հայդուկի վրայ ամպերն են լալիս ․․։

ՀԱՅ — ԳՈՒՍԱՆ

ԳԱՐՆԱՆԱՄՈՒՏ

ԵՐԲ ՈՐ լինի գարնանամուտ նոր գարուն,
Կը բազմանան վտակներդ, հայրենի՛ք,
Շարիշար ցնծութեամբ երգով զուարթուն
Շարժւում են բանակներդ, հայրենի՛ք։

Օդըդ սիրուն, ջուրըդ սիրուն, դու սիրուն,
Պէս-պէս գոյնով ծաղիկներդ դալարուն,
Չեն դադարիր աշխատելուց օրն ի բուն
Քո հարազատ մրջակներդ, հայրենի՛ք։

Մարդիկ կուգան քո սարերդ ման գալու,
Իբր որսորդ եղնիկներդ որսալու,
Ե՞րբ կը փոխեն երգը ուրախ կարդալու
Քո ոգազգեաց սոխակներդ, հայրենի՛ք։

Դու դրախտն ես, քեզի սուրբ դիրքը վկայ,
Քո միջից անմահութեան հոս կուգայ,
Հազա՛ր ափսոս, մարդուց թափուր են հիմա
Խիստ բազմամարդ քաղաքներդ, հայրենի՛ք։

ՋԻՒԱՆԻ

ՈՒՍԱՆՈՂ

ԵՐԲ ՈՐ հողից մարդ դարձայ,
Երբ Աստուած ինձանից հարցաւ,
Թէ ի՞նչ վիճակ ես ուզում,
Ասի, «ուսանողութիւն»։

Աստուած ուզեց զարդարել,
Ինձ դիպայ չորեր կարել,
Ասի էն դու կանանց տուր,
Ինձ մի նշանագեաւ տուր։

Կապտաճաղիկ գոտակ տուր,
Մէջքս կապէ հաստ տուր,
Մառանումս լաւ գինի՝
Թող միշտ անպակաս լինի։

Իմ սիրելի նազելին
Մնայ միշտ հաւատարիմ,
Փղշտացի ախոյեան,
Տե՛ս իմ սուրն է իմ պաշտպան։

Ո՛վ չի լինիլ ուսանող,
Լաւ է որ միշտ ծնար հող,
Քանց Աստուծոյ լոյս արև
Ունայն տեղը վայելէր։

Ո՛վ չի կոնծել երգելով,
Ընկերաց հետ պաչուելով.
Նա չը գիտէ ցնծութիւն,
Եղո՛ւկ սրտին, վա՛յ հոգուն։

Ով չի երդուել ընկերայ,
Պաշտպան լինել Հայրենեաց,
Վերջին արիւնը թափել՝
Հայրենիքը ազատել։

Ինպէս մեզնից հեռանայ,
Լոյս աչխարհից վերանայ,
Թո՛ղ անանուն կարդն անցնի,
Թո՛ղ նա մեր մէջ չը մրանի։

(Թրգմ. Գևրմ.) Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

Յուշեր

ԵՐԵԿՈՑԵԱՆ՝ երբոր մի հով,
Կը գուրգուրայ ծաղկանց վզով.
Հորիզոնէն երբոր լուսին,
Կանթեղ վառէ ճամբորդ կուսին:

Ես ալ կ'երթամ իմ թաւին տակ,
Հոն գիտեմ ու ջուրն ու վտակ,
Ինչ հաճոյքներ կան հոն, գիտե՞ս,
Տարագրի մը ինծի պէս:

Որ երբեմն նայի յերկին,
Ու ակնարկն գառնայ կրկին
Ետ, ու ջրին մէջը սուգի...
Անոր սիրտը որքա՜ն յուզի...:

Ինչ վեհ խղճեր անրջային,
Անոր հոգուն մէջ կը չրջին.
Ինչ խոհմանքներ հոն, բարձր ու լուրջ,
Կը բոլորին իր ճակտին չուրջ:

—Հոն գայ հանգիլ այն ճամբորդ կոյս,
Թաւերուն գիրկ մինչև ի լոյս.
Եւ հոնկն ալ գայ ու գուրգուրայ,
Ծաղիկներու ծառոց վրայ:

Բայց չէ այդ կոյս չուչանագեղ
Որ գիս քարչէ, տանի այդ տեղ.
Ու այն հովերն հաճոյք չեն տար,
Անոնք ամէն ինձ են օտար:

Ո՛հ, իմ Հայոց չքնաղագիւտ
Աչխարհ, ու ջուրն երկնակապոյտ,
Դո՛ւ մանաւանդ, դո՛ւ ծով վանի,
Քեր յուշքն է որ գիս հոն տանի:

Ընդ միշտ աչքիս՝ ջրոց վրայ,
Ձեր պատկերն է որ կ'երերայ.
Ու այս օտար ափերէն, յիս
Ջարթուն յուշքեր հայրենիքիս:

Աքսորեալի պէս միայնակ,
Ինկած օտար ծառերու առակ.
Հոս վշտալի ու յուսահաբ,
Հոգիս թրռի մինչև ձեր ափ:

Ջուր մը թաւուաք... ու փսփսոց
Ու յուշքերը խնծդան իմ ծոց.
«Ախ» մը, «Ուխ» մը սիրտներէն—
Հոգիս ձեր քով թռի նորէն:

Քանի՛, քանի անգամ քու քով
Պառկած եմ ես, ո՛վ վանի ծով,
Ափերուդ մէջ կանաչազեղ,
Ուր սոխակը կ'երգէր գեղգեղ:

Ու սև աչուի մի գեղջուկ կոյս
Կ'օրօրէր գիս մինչև ի լոյս
Ու գլուխս փայփայելով,
Հանգչեցնէր իր գիրկը գով:

Ա՛խ, կը խայտա՞ն դեռ այն ալիք.
Դեռ կանա՞չ են այն ուռենիք,
Դեռ այն ճնճղուկն կը ճլուլլա՞յ,
Այն ազջիկը դեռ հոն կուլա՞յ:

Դեռ այն հովերն կը գուրգուրա՞ն
Հայոց ծաղկանց, ծառոց վրան,
Աստղեր, լուսին հոն լոյս կուտա՞ն,
Ա՛խ դեռ կ'ապրի՞ իմ Հայաստան—

Լո՛ւր մը, լո՛ւր մը ինծի թող տան,
Ձի իմ պաշտած ան է միայն:

Տ. Ս. ԼԵՒՈՆԵԱՆ

ԹՌՉՈՒՆԻՆ

ԵՐԵԿՈՅ է. բոցավառ է հորիզոն.
Կառք մը կ'անցնի դագաղի պէս յամրընթաց,
Գեղուհի մը ընկողմանած տրտմէ հոն,
Վերջալուսի աղջի՞կ մ'է սա, ո՜վ Աստուած.
Եթէ նայի՝
Կ'ըսես — «Հիմա՛ կը մարի»:
Մեղրամոմէ անդրիանդի մ'է հանգոյն,
Ի՜նչ դալկահար... կարծես հաշաղը վառէ,
Պատան մ'է նուրբ նէրս վարդիցը արժգոյն,
Աստուած ըզնէ զոյգ մ'աչերովն կը վառէ,
Եթէ ժըպտի՝
Կ'ըսես — «Ո՛հ, հիմա կ'անցնի:
Նայիլ կ'ուզէ, բայց աւելի կը նուաղի,
Սիրտը խունկի պէս կը մխայ սիրավառ.
Նէ չողերու, բոյրերու է թագուհի,
Խոնջ թիթեռնիկ մ'է որ խնդրէ ծաղկէ թառ.
Եթէ շարժի՝
Կ'ըսես — «Հիմա՛ կը թռչի:
Լանջն է յուզեալ ովկիանի մը նման,
Կ'ուզէ սիրե՜լ... համբոյրի մ'հետ նուաղիլ,
Մաշիլ, խամրիլ, խոնջած ընկնիլ գերեզման,
Քամել սիրոյ կրակէ բաժկին հուսկ կաթիլ.
Եթէ շիկնի՝
Կ'ըսես — «Հիմա՛ կը բռնկի»:
Սրտի մեղո՜ւ, ինչպէս կոչեց Լամարթին,
Որուն ծըծած ծաղիկը՝ սիրտ, մեղրն է սէր,
Ես կոչեմ զնէ կո՜յս՝ որուն սիրտն է երկին
Անհուն սիրոյ, որ հորիզոն չունի դեռ:
Եթէ խօսի՝
Կ'ըսես — «Հիմա՛ կը հատնի»:
Նէ կը վառի, մի՜շտ կը վառի, չի հատնիր,
Տընանկ կընոջ տաճարն վառած ճրագին պէս,
Աստղի նման՝ գիշեր սիրէ փողփողիլ,
Կրակ մ'է փըրթած կողէն սիրոյ բոցակէզ:
Իսկ թէ մեռնի՝
Կ'ըսես — «Հիմա՛ կը ծնի»:

Գ. ԴՈՒՐԵԱՆ

ԸՈՒՉՅԻՆ ՍԻՐ

Երէկ տեսայ քեզ պարտիզում,
Ծաղկած էիր վարդի պէս.
Եւ քո պատկերդ հոգուս խորքում
Նկարուեցաւ լուսատես:

Այնտեղ, ո՛վ կո՛յս, ինձ գերեցիր,
Այնտեղ ես քեզ սիրեցի,
Այնտեղ հոգիս ջերմ, սիրալիր
Ես քեզ ընծայ բերեցի:

Այժմ չունիմ մի ուրախ ժամ,
Տըխուր է սիրտս իբր դագաղ.
Ես մեռանել մինչև անգամ
Ցանկանում եմ, ո՛հ, աւա՛դ:

Որպէս օձից՝ ժանտ թունաւոր
Դու ինձանից փախչում ես.
Տեսանելով ինձ ոգաւոր՝
Ծիծաղում ես, խնդում ես...

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

ԵՐԿՈՒ ԳՈՂԸՆ

Երկու գողեր, ժիր ու ճարպիկ,
Մութին ապաստան,
Պատերէ վեր, ոտքով բռպիկ,
Շուռլսուելով իբրև կապիկ,
Վերնայարկ՝ չըքեղ մի տան՝
Պատուհանէն ներս մըտան.

Տըներիններն էին բացակայ.
Գողերն առանձին,

Անհոգ, անվախ ու անվրկայ,
Ոսկի, գոհար, թանգ առարկայ,
Մէջ սրբահին, ննջախուցին՝
Ինչ որ գըտան՝ հաւաքեցին։

Ջննել էր եաքն արթուն փութով
Ամէն ծակ ու ծուկ,
Սանդուխներէն վար իջնելով
Դուրս կ'ելլէին լուռ, անվրդով,
Յոհաննոյին դռնէն ցածուկ,
Երբ մին՝ ձայնով կամացուկ՝

«Ընկեր, ըսաւ, մենք այս գիշեր,
«Ինչո՞ւ հոս մըտանք.
«Այս ըրածնիս հարկաւ պէշ էր...
«Ոտքերս ծակեն կարծես փուշեր,
«Կը նեղէ պիս իմ խղճմտանք...
«Մեզ կը սպասէ մե՛ծ վըտանգ...»

Միւսն, ապշահար, յարեց. — «Ընկե՛ր,
«Զաւեշնք չուտաքայլ,
«Խիղճն ընելն, է՛հ, մե՞զ է ինկեր,
«Ինչ որ ուրիշն ունի, դո՛ւն կեր։
«Ապրէ՛, անխռով և անայլայլ,
«Շատեր ոչխար են — մենք՝ գայլ»։

«Ո՛չ, ո՛չ, կրկնեց միւսը նորէն,
«Դարձի գամ այսօր.
«Գողն արարած մ'է անօրէն,
«Եւ վախճանն ալ՝ հաւանօրէն՝
«Դատարանին վճռովն հըզօր,
«Բանտ է կամ աքսոր»։

— «Բանտ և աքսո՞ր, ըսիր... — հարկաւ,
«Թերևս կախաղան..
«Երթանք պատուով չահիլ սակաւ...։
— «Օ՛ն, կծկելու առնեն ևկաւ...»։
Եւ հոն թողլով գողօն, թալան,
Դռնէն անձայն դուրս ելան։

ԱԼՓԱՍԼԱՆ

ԶԻ՜ՆՈՒՈՐ

Երկրի մը մէջ երբ ամէն ինչ
Զանազանաց կը պատկանի,
Որ երկրացին սովորած է
Հետեւեալ սոյն ընտիր խօսքը.
«Իւրաքանչիւր վասն ամենի,
Իսկ ամենայն վասն հայրենի՝
Զինուո՛ր, զինուո՛ր»:
Եւ հիմակուան ժամանակը
Որ միակերպ ապրելու է,
Սիրտ մը քաջազն ո՞վ կունենայ
Որոյ վրայ պէտք է յուսայ,
Որ կընդհարի թշնամիին
Եւ որ երբէք չի լքանիր՝
Զինուո՛ր, զինուո՛ր,
Գիշերապահ ո՞վ կը լինի
Երբ ամէն ոք քնացած է,
Ամբողջ քաղաք երբոր քուն են
Մեռել դարձեր, ո՞վ կը հսկէ.
Ո՛վ կը տոկայ և մարտնչի,
Երկրի համար ո՛վ կը մեռնի՝
Զինուո՛ր զինուո՛ր:
Ո՛վ պաշտելի, անեգր արուեստ,
Ո՛վ դու սուրբ գործ և անարատ.
Քալել առանց աղաղակի,
Մեռնիլ առանց արցունքի.
Ո՛վ է այն անձ, որ կ՚աշխատի
Յազատութիւն մեր հայրենի՝
Զինուո՛ր, զինուո՛ր:
Եւ ո՞ւմ մթին ու ահաւոր
Գերեզմանաց քարի վրայ,
Ի փոխարէն սուրբ աղօթից
Եւ սուրբերու միջնորդութեանց՝
Իր պանծալի անուն դրոշմի
Ի փառս պատիւ իր սերնդի.
Զինուո՛ր, զինւո՛ր:

ՄԱԳՆՈՍ ՊԱՐՈՒԹՃԵԱՆ

ՀԱՅՈՑ ՆՈՐ ՏԱՐԻ

Երանէ՛կ թէ այս նոր տարին
Վերջ տար Հայի ցաւերին,
Զարը կորչէր ու բարին
Բուն դրներ մեր սրտերին։

Երանէ՛կ թէ այս նոր տարին
Ապատ չըննչէր Հայաստան,
Եւ չուրջ Մասիս մեր սարին
Փայլէին վարդ — անդաստան։

Երանէ՛կ թէ այս նոր տարին
Ոտքի կանգնէր Հայաստան,
Ու կիսաքանդ մեր կարին
Լինէր քաղաք մեր ոստան։

Երանէ՛կ թէ այս նոր տարին
Հայ սրտի մէջ ուժ հոսէր,
Ապաւինած իր սրտին
Հայը քիւրդէն չի սարսէր։

Երանէ՛կ թէ այս նոր տարին
Հայ ազգ իմի գումարուէր,
Ի գլուխ կարնոյ Հայ ամրին
Հայի դրօշակ ծածանէր։

Հայեր, երբէք չերկմըտինք,
Կը կատարուի այդ ամէն.
Եթէ իսպառ մենք հաւնինք
Փոքրոգութիւն մեր սրտէն։

ՔԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ԻՄ ՕԽՏԸ

Ես ԵՍ երբեմն երգում էի,
Անհոգ քնարիս լարերով,
Գեղեցկուհին միայն սէրի,
Վառուած նորա յուզմունքով:

Եւ իմ Մուսան ինքնահաւան
Կամէր այդպէս ինձ պահել,
Եւ միշտ երազ, ցնորք, քաղցրութիւն
Հոգուս առջև ժողովել:

Նա զօրացայ... խորտակեցի
Այդ Մուսայի բռնութիւն,
Եւ ուրտ սիրով ողջունեցի
Ջըրտնաջան աշխատութիւն:

Նա լքսեցի խոր հառաչանք,
Եւ վիշտ հոգու և դանգատ,
Եւ լաց և սուգ և ազաչանք,
Այն էր «Ա՛զգ իմ հարազատ»:

Նա ուխտեցի լինել մշակ,
Հասարակաց պիտոյքի,
Երգել ուսոյ «գործ ու վաստակ,
Աբդար հայը այս կեանքի»:

Ս. ՇԱՀԱԶԻԶ



ՊԱՆԴՈՒԽՏ ՄՈՒՇԵՑՈՒ ԵՐԳԸ

Եօթն օր, եօթ գիշեր
Շախկամնի գօտիս թռումշեր,
Եար մըզիկ դըռնէն դուրս չելնայ
Փշուրմի սիրտ մըզիկ խոմնայ —
Վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛ ..

Էրթամ Սթամբօլ,
Դատիմ փարա բօլ,
Իմ եարի խամար
Առնեմ ջուխտ մի սօլ:
Արի՛, եար, արի՛,
Խռով մի՛ կենայ
Աստուորխ բան՝
Եա՛ր, մըզիկ չի մնայ:

Առնիմ զատնըրուրէն
Ցէլնամ քու մամու յէրթիս,
Ջիմ կաքվու անուշ ձէննի լսիս;
Եար, անուշ քնէդի զարթիս:
Վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛ ...

Կայնիր ես յիգին
Խաղող կու քաղես,
Շամամ ծծերով՝
Շաքար կու մաղես:
Ալմաստ բիչաղով՝
Ջիմ սիրտ կու դաղես,
Արի՛, եար արի...

Վա՛յ, սանկէր կիվկիվ,
Դու գայլը ի Մուշ բարով,
Էլ չըս յիզայ հազար տարով·
Ծարս պարկե տըղայ բերէ,
Առջընեկ լէ գութան կու վարէ —
Վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛։

Քամբախ Բուլանըխ
Ի՞նչ աշուչ գեղ է,
Էրկուսս մէ չապիկ՝
Փողպատնի նեղ է,
Ետրխս մէ պազնի
Սրախս ի դեղ է,
Արի՛, եար արի՛...

Մկլօրսի քամբախ երկրէն
Ծաբրիկ մէ եկեր —
Թէ Տաճիկ լցուեր գեղ,
Զըմէն թալներ ու տարեր,
Վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛, վայլէ՛,

Ծայե՛ր, վա՛խ, խայե՛ր,
Շիւար էք մացեր,
Չինա՞ք մեր երկրի
Լացերն ու թացեր,
Արի՛, եար արի՛...

ԽՂՃԻ ԽԱՅԹ

Զ ԱՆԳԱԿԱՏՈՒՆՆ գիւղին մատրան
Հնչէր ժամացոյցն տա՛ն, տա՛ն, տա՛ն,
Կէս գիշեր…
Ամէն մարդ խոր քուն կը քաշէր.
Լուսինն, երկինքէն անամպ ու պայծառ,
Լճակին վրայ կը ցոլար վառ վառ…
Հովիկն ալ, շունչով մ՚հեշտ ու մեղմագին,
Թաւ սաղարթն օրրէր լուռ անտառակին..
Արթուն՝ մարդ մը լոկ, մութի սիրահար.
Գետնախնձորներ գողնալու կերթար դրացիին արտէն.
Ու ճամբան, սայլակն առաջ քշած տանէն,
Անիւն, որ ամէն դարձին, ճռռնչէր,
Իր լեզուով, կարծես անոր կը գոչէր.
«Բռնուի՛ս պիտի, բռնուիս պիտի…»:
— «Ո՛չ, ո՛չ» մրմնջէր մարդն…: Անտի, աստի
Ջղջիկներ, պզտիկ ճիչերով սո՛ւր սո՛ւր,
Կ՚ըսէին «սի՛ն, սի՛ն, սի՛ն, ո՞ւր կ՚երթաս, ո՞ւր…»
— Հասաւ ու լեցուց սայլակն, և ահա՛
Ընկուզենւոյ մը կատարին վըրայ,
Թառած բու մը ձայն հանեց «հո՛ւ, հո՛ւ, հո՛ւ,»
«Տեսա՛յ քեզ, տեսա՛յ, աւազա՛կ մ՚ես դու…:»
Վախցաւ, ու սկսաւ փախչիլ սըրիկան,
Մինչդեռ անիւին ճռինչը գուժկան,
Իր թաւալումին մէջ արագօրէն՝
Կը կրկնէր. «Պիտի կախուի՛ս, անօրէն…:»
Անվըտանգ, այլ շատ յուզուած, տուն եկաւ,
Եւ երբ գողոնը կը պահէր անձկաւ,
Լըսեց կատու մը որ կը ձայնէր «միա՛ու,

Զարագործ մ'ես դու, վա՛տ ու անիրա՛ւ...»
— Ֆունն եղաւ խըռով, երազն՝ ոստիկան,
Եւ կ'արթննար բուռն յոյզով հոգեկան
Երբ աքլորն երգեց. «Կո՛ւ, կուկուլիկ, կո՛ւ,
Մէկն առնելու չէ ինչքն ուրիշ մէկու...:»
— Դուրս վազեց, կատաղած. «Անշահ կենդանի»,
Պոռաց, «գո՞ղ մ'եմ ես,
«Բայց պիտի լըռէ՛ լեզուդ անճոռնի,
«Պիտի փրցունեմ գըլուխդ որ տեսնե՛ս...»:
Դրացի մը լսեց այս խօսքն, ու գընաց
Դրացուհուոյն ականջն ի վար, խիստ կամաց,
Կրկնեց զայն...: Կինն ալ՝ գաղտնեաց պահարան՝
Երկու կիներու պատմեց, կէս բերան....
Ու բարեկամ մ'ալ, փութկոտ ու սիրուն,
Սուրաց, ու լուր տըուաւ... ոստիկաններուն...
Եկան, մեր մարդուկն առին ու տարին
Վայրն այն խաւարին
Ուր կ'երթան մարդիկ ամէն ո՛ւր որ կան —
Որք դրամ չը տալով պէտքերնին հոգան:
Ահա պատմութիւնս. յուսամ թէ անոր
Վերնագիրս յարմար գտնէ ձեր չընորհ:

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ



ԶԱՆԿԻ

Զանկին եկաւ կռիւ տալով,
Ձոր քարերը իրար տալով.
Սևան — ծովից մինչև Արագ —
Ախ այդիներ զարդարելով:

Զանկի, դիտեմ դարդ չատ ունես —
Բարձր ձայնով բողոքում ես,
Դարդս խառնեմ դարդերիդ հետ —
Արտասուքս չրերիդ հետ:

Ժայռի գլխին բանտ է չինուած,
Անուշ եարս մէջը քնած,
Հարուստ Զանկի, այժդ ցոյց տուր,
Ազիդ կանգնեմ եարս ինձ տուր:

Ախտ մազերս պարան հիւսեմ,
Ժայռի գլխից վար քաշ անեմ,
Կամար ունքերս մէջդիդ կապեմ,
Ֆաղցր եարիս կամուրջ կապեմ:

Էլ մի՛ վազիր դէպի յառաջ,
Կուրծքդ դէմ տուր ժայռի առաջ.
Ձիչ արձակիր՝ ժայռը դողայ,
Բալքեամ բանտը ջանիս թողայ:

Թէ չըհասայ իմ մուրազին.
Սև գիակս տուր Արագին.
«Սև աչերը» կեանքը զոհեց —
Առանց եարի ապրիլ չուզեց...



ԱՂՔԱՏԻ ՄՕՐ ԵՐԳԸ

Զարթիր, մանուկ իմ նազելի,
Բա՛ց այդ պայծառ աչերդ.
Թերթերունքէդ քունը թօթուէ,
Գիրկը հանգչիր քու մօրդ.
Բա՛ւ քեզ որքան բարի հրեշտակք
Հեքիաթ տւին երազում.
Այժմ արի՛, քեզ այն պատմեմ,
Ինչ պիտ տեսնես աշխարհում:

Զարթի՛ր, որդեա՛կ, քանի՞ քնես,
Բա՛ց աչերդ այդ նախշուն,
Ուր որ մայրդ իր բախտ, փառքը,
Կեանք ու արև է տեսնում:

Դու կը մեծնաս, բոյ կը քաշես —
Ջինար բոյիդ ես ղուրբան,
Քեզ այժ կուտան Մասսի քաջեր,
Որ դու լինես քաջ Վարդան:
Իմ մատներով մի ոսկեթել

Մէջքիդ գօտի եմ կարել,
Գօտիիցըդ սուր կը կապեմ,
Այն էլ ինքս եմ սրել։

Զարթի՛ր, որդեակ, ևն։

Մեր բակումը ձի է կապուած,
Քեզ է մընում անհամբեր,
Զարթի՛ր, որդեակ, քանի՞ քնես,
Սա քո թուրը մահարեր.
Քո հայ ազգը հեծեծում է,
Զեռքը, ոտքը չղթայուած,
Եղբայրներդ գերութեան մէջ,
Քա՛ջ, միայն դո՞ւ ես քնած։

Զարթի՛ր, որդեակ, ևն։

Չէ՛, իմ որդին չուտ կը զարթնի,
Ձին կը հեծնէ սանձակոծ,
Հայի արցունքը նա կը սրբէ,
Կը դադրեցնէ լաց ու կոծ։
Հայ եղբայրներ, քիչ էլ կացէք,
Իմ Աղտաին զարթեցաւ,
Գօտին կապեց, թուրը կախեց
Եւ իր նժոյգ ձի նըստաւ,

Զարթի՛ր, մանուկ, ևն։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ



ՉԻՆԱՒՈՐԻ ՄՕՐ ԵՐԳԸ

ՉԱՐԹԻ՛Ր, որդեակ, յուշ բեր, վեր կաց,
Պատերազմի փողն հնչեց,
Զարթի՛ր, գոչեց ձայնն հայրենեաց
կնոջ, մահու ժամ հընչեց։

Պատրաստեր եմ քո պէնքերը,
Ահա գըլխիդ վերև կան,
Ինչպէս երբեմն քո գրքերը,
Երբ կ'երթայիր վարժարան։

Ելի՛ր, կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կապեմ քո ուսէդ,
Եւ սուրբ դրօշակն հայրենիքիդ
Թող ծածանի ալ թեւէդ։

Փոխան գրքիդ ահա սուսեր,
Փոխան թղթի՝ կռուի դաշտ,
Գնա՛ մեռիր ազգիդ համար,
Թող մայր-երկիրդ ապրի հաշտ։

Գըրչով ուսար ազգ, հայրենիք,
Գընա՛ սուրով փրկել զայն,
Մեր հայրենեաց վըշտաց հե՛րիք,
Զըսաւ աշխարհը համայն։

Մեր հայրենեաց թըշուառութիւն
Երկրիս ազգաց մէկը չունի,
Մեր խեղճութեան կարեկցութիւն
Երկրիս վրայ մարդ չունի։

Գնա՛, որդեակ, այդ սև չարիք
Ձեզնից չունչը քո ազգի,
Գնա՛ փրկել քո հայրենիք,
Թէ ոչ՝ ինչո՞ւ ծնայ քեզ:

Քանի տարի կերակրեցի,
Մինչ հասակդ այդ առիր,
Բարձր հասակիդ մայրդ մեռնի,
Դուն ալ քո ազգիդ մեռիր:

Դո՛ւ հայրենեաց սեղանին զոհ,
Մարտի՛ր, որդեակ, ժամ հասաւ,
Երկինք ու ազդ յայդ մընան գոհ,
Մայրդ ալ վանն այդ քեզ ծընաւ:

Յառաջ, որդեակ, ահա կ՛երթան
Քու ընկերներդ բիւրաւոր,
Որպէս ընկեր դպրոցական,
Քաղցր է ընկեր կռուարար:

Յառաջ, որդեակ, ի մարտ անմահ,
Տո՛ւր անվախ կուրծք ու ճակատ,
Հոգ չէ թէ քեզ կը գտնէ մահ,
Ձի յայնժամ է ազգն ազատ:

Պ. Վ. ՆԱԹԱՆԵԱՆ



ԵՐԳ ԶԷՅԹՈՒՆՑՈՑ

ԶԷՅԹՈՒՆՑԻ ենք, ժայռի ձագ ենք
Կը թռչըտինք սարէ սար,
Որ որս գտնենք ու բըզըքտենք
Եւ յօշոտենք չարաչար։

Զէյթունցիին կերակուրն է
Արիւնապուր, ոսկրէ թան
Զոր ոսոխի սեւ արիւնէ
Կը պատրաստենք միաբան։

Մենք վախ չունինք ո՛չ գնդակէ
Ե՛ ո՛չ սուրէ երկաթի
Խաղ մ՚է մեզի — Աստուած գիտէ —
Թափել արիւն գազանի։

Ապառաժի քով զաւակաց՝
Վախ կամ երկիւղ ամօթ է.
Զէյթունցիին պատիւն փառաց՝
Լեռի դաշտի կռիւն է։

Զէյթունցի ենք, մարդ ենք կռուի
Միշտ ջարդելու ենք յօժար.
Այս է կտակ մեր պապերի
Զարնել մէկի դէմ հազար։

Ուրեմն հաստ փոր դուք հարուստներ
Գըզրոց, սնտուկ դուք բաց ըրէք,
Ծրարներով շատ ոսկիներ
Մեզի պաշար ղրկեցէք։

Եւ դուք եղբարք, օ՛ն անդր յառա՜ջ,
Զէնք ու զրահ կապեցէք,
Բա՛ւ է ալ ես լաց ու հառաչ,
ԱԶԱՏՈՒԹԻ՛ՒՆ գոչեցէ՛ք։

Յ. Յ. ԶԱՔԸՐԵԱՆ

ԶԷՅԹՈՒՆՑԻՔ

ԶԷՅԹՈՒՆՑԻ ենք մենք քաջազունք,
Տաճիկներէն վրէժ առնենք․
Մեր մայրերէն սուրբ կաթի տեղ,
Կաթիլ կաթիլ արիւն քամենք։

Կեցցէ՜ Զէյթուն, ապր՛ի Զէյթուն,
Թող չըտեսնէ ստրկութիւն․
Քանի ունի ձեզ պէս որդիք,
Կեցցէ՜ Զէյթուն, ապրի՜ Զէյթուն։

Քանի՜ թմրինք, բաւ է եղբա՛րք,
Շրջենք աչերս աջ ու ահեակ․
Շատ ստրուկներ եղան ազատ
Միայն մենք ենք հլու հպատակ։

Արիւնածարաւ զէյթունցիներ,
Զէնքեր ունինք դիմենք յառաջ․
Հերիք մինչ այժմ գլուխ ծռած,
Բռնաւորին գերի ըլլանք։

Ամբողջ հինգ դար գերի ենք մենք,
Մենք մեր չղթայք պատրաստեր ենք․
Ինչո՞ւ այժմ մենք չըստիպենք,
Մեր գերողին կրելու ան։

Զէյթունցի ենք, մեր սփոփանք
Է պատերազմ և արշաւանք․
Գնդակ, վառօդ, սուր, հրացան,
Խաղալիքն են մեզ յաւիտեան։

Կեցցէ՜ Զէյթուն, ապրի Զէյթուն,
Թող չըտեսնէ ստրկութիւն,
Քանի ունի ձեզ պէս որդիք,
Կեցցէ՜ Զէյթուն, ապրի Զէյթուն։

ԿՈՐԿՈՏԵՑՆԻ ԵՐԳԸ

Զինքեա տուր, մայրիկ,
Սուսերս տուր, քոյրիկ,
Թէ չը զոհուիմ ազգիս համար,
Հապա ինչու պիս ծնար,

Ազատութեան վառ սէրը
ինձ հանել է լեռները,
Թըշնամու դէմ կռուելու,
Հայրենիքս փրկելու։

Առաւօտ արշալոյսին,
Զորս կողմերս պատեցին.
Զորս ցերեկ և չորս գիշեր
Անհամար թըշնամիներ։

Լեռն, սուրդ քաշեցիր,
Վըրէժ առնել ուզեցիր.
Երբ որ դնդակը դիպաւ՝
«Ա՛խ, ընկերներ», գոչեցիր։

Բուն անունս է Արամեան,
Մականունս է Կորկոտեան,
Երբ որ բանտէն ազատուեմ,
Նորէն խումբեր կը կազմեմ։



ԶԻՆՈՒՈՐԻՍ ԵՐԳԸ

ԶԻՆՈՒՈՐԻՍ երգերը, եղբա՛րք լսեցէք,
Աշխարհիս բաները լաւ ճանաչեցէք:
Մէկն ունի մեծ տներ, միւսը գիւղ ունի,
Միայն խեղճ զինուորը ոչինչ բան չունի:
Շորերը թանկագին, փորը միշտ քաղցած,
Տուր ձիուն միշտ գարի, ինքդ կեր չոր հաց:
Թէ քաջ պատերազմես՝ կը տան մեծ պարգև,
Թէ ոտքդ կորցնես՝ կ'ասեն մնաս բարև:
Ո՞ւր գնամ ես մենակ աշխարհքիս վրան,
Ահա քեզ լաւ վաստակ քսան մէկ տարուան:

Դ. ԴՈԴՈԽԵԱՆՑ

ՀԻԱՍԹԱՓՈՒՄ

ԶՄՐՈՒԽՏԵԱՅ երգե՛ր, երազնե՛ր չքեղ
Գարնան վարդի հետ եկա՛ն, գնացի՛ն,
Համբոյր ծաղկաբոյր և սէր հրաշագեղ՝
Գարնան վարդի հետ եկա՛ն, գնացի՛ն:

Ուրիշի նման բոյն չը շինեցիր,
Կեանքի մրրկով զարնուած թռչո՛ւն,
Ու հիմի մենակ ու որբ մնացիր,
Եւ թարմ տարիներդ եկա՛ն, գնացին:

Մնացիր անտուն և թափառական,
Ընկեր, բարեկամ եկան, գնացին,
Մնացիր մոլոր օտար ճամբէքում,
Քարավան, երամ եկա՛ն, գնացին:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՏՐՏՈՒՆՋԻՔ

Ի Ճաք բարով, Աստուած իմ արև,
Որ կը պըլպլաք իմ հոգւոյս վերև...
Աստղ մ'ալ ես կ'երթամ յաւելուլ երկնից,
Աստղերն ի՞նչ են որ, եթէ ոչ անբիծ
Եւ թշուառ ոգւոց անէծք ողբագին,
Որք թռին այրել ճակատն երկնքին.
Այլ այն Աստուծոյն՝ չանթերո՛ւ արմատ
Ցաւելուն ջէնքերն ու զարդերն հրատ...
Այլ, ո՛հ, ի՛նչ կ'ըսեմ... չանթահարէ դիս,
Աստուած, իմին հակայ, փշրէ՛ հիւլէիս՝
Որ ժպրհի ձգտիլ՝ սուզիլ խորն երկնի,
Ելնել աստղերու ոանդուխն անալի,
Ողջո՛յն քեզ, Աստուա՛ծ դողդոջ էակին,
Շողին, փրթիթին, ալուայն և վանկին,
Դո՛ւ որ ճակտիս վարդն ու բոցն աչերուս
Խըլեցիր թրթռումս չրթանց՝ թռիչքն հոգւոյս,
Ամպ տուիր աչացս, հևք տուիր սըրտիս,
Ըսիր, մահուան դուռն ինձ պիտի ժըպտիս.
Անչուշտ ինձ կեանք մը պահած ես եաքի,
Կեանք մը՝ անհուն չողի, բոյրի, աղօթքի.
Իսկ թէ կորչի պիտի իմ հուսկ չունչ
Հոս՝ մառախուղի մէջ՝ համր ու անշշունչ,
Այժմէն թո՛ղ որ չանթ մ'ըլլամ դալկահար,
Պլլուխս անուանդ, մըռնչեմ անդադար,
Թո՛ղ անէծք մ'ըլամ ու կողդ խըրխմ,
Թող յորջորջեմ քեզ. — «Աստուած ոխերիմ»:

Ո՛հ կը դողդոջե՛մ, տըժգոյն եմ, տըժգո՛յն,
Փըրփրի ներսս դըժոխքի մ'հանգոյն...
Հառաչ մ'եմ հեծող նոճերու մէջ ահ,

Թափելու մօտ չոր աչնան մէկ տերև...
Ո՛հ, կայծ մը տուէք ինձ, կայծ տուէք, ապրի՛մ,
Ի՛նչ, երազէ մը վերջ գրկել ցուրտ չիրի՛մ...
Այս ճակատագիրն ի՛նչ սև է, Աստուա՛ծ,
Արդեօք դամբանի մրուրո՞վ է գծուած...
Ո՛հ, տուէք հոգւոյս կրակի մի կաթիլ,
Սիրե՛լ կ'ուզեմ դեռ, ե՛ապրիլ ու ապրիլ.
Երկնքի աստղե՛ր, հոգւոյս մէջ ընկէ՛ք,
Կա՛յծ տուէք, կեա՛նք՝ ձեր սիրահարին հէք:

Գարունն՝ ո՛չ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ո՛չ երկնի չոզեր ժպիտ մ'ինձ չեն տար.
Գիշերն միշտ դագաղս, աստղերը՝ ջահեր,
Լուսինն յար կուլայ խուզարկէ վրէս.
Կ'ըլլան մարդիկ որ լացող մը չունին,
Անոր համար է նա դրաւ այդ լուսին.
Եւ մահամերձն ալ կ'ուզէ երկու բան.—
Նախ՝ կեանքը, վերջը՝ լացող մ'իր վրան:
Իզո՛ւր գրեցին աստղերն ինծի «ակ՛ր»,
Իզո՛ւր ուսոյց բուլբուլն ինձ «սիրել»,
Իզո՛ւր սիւգեր «ակ՛ր» ինձ ներչնչեցին,
Եւ գիս նորատի ցուցուց ջինջ ալին,
Իզո՛ւր թաւուտքներ լռեցին իմ չուրջ,
Գաղտնապահ տերևք չառին երբէք չունչ
Որ չը խռովեն երազքս վսեմ,
Թոյլ տուին որ միշտ գնէ երազեմ,
Եւ իզո՛ւր ծաղկունք՝ փրթիթներ գարնան՝
Միշտ խընկարկեցին խոկմանցս խորան.
Ո՛հ, նոքա ամէնք գիս ծաղրեր են...
Աստուծոյ ծաղրն է աշխարհ ալ արդէն:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՒԵՏԻՍ ՄԱԼՕՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Էն ԱՐԾԻՒՆ էր թըռա՜ւ, գնաց
Մեր վըրայով, մեր միջով —
Ա՜խ, էն մեր սիրտ, մեր ոգին էր
Գընաց սարով, սար-դարդով:

Էնոր դարդը ա՜խ, մեր դարդն էր՝
—Ու մեր սրտից էն գնաց.
Էնո՛ր դարդը խեղճի դարդն էր,
—Խեղճի սրտից էն գընաց:

Ու գընացի՜ր, ազիզ ընկե՛ր,
Մենակ, մենակ գընացիր...

Հեռո՜ւ տեղեր, արնոտ տեղեր՜,
Վէրքը սրտիդ, հոգի ջան.
Ընկար մենակ ու անընկեր
Դուշման-դաշտեր, Աւօ ջան:

Ընկերներդ ա՜խ, քեզ մոռցան,
Կեանքի ճամբով գընացին,
Քու սուրբ սրտի սէրը մոռցան,
Գերեզմանդ կորցրին...

ՀԱՅԸ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

ԷՍ ՀԱԿՈՏՆԵԱՅ աշխարհում
Ամենայն ինչ է փոխուել,
Կրօնք, լեզու, ազգութիւն,
Մօդայի է վերածուել:
Էս ի՞նչ է —մօտայ է:

Հայ պատանին թէ ըսես,
Օ՛, նա գիտէ ամէն բան.
Դատարկ գլխով փաթաթէս,
Խօսքով փրկէ Հայաստան:
Էս ի՞նչ է — մօտա է:

Եկեղեցի գնալիս
Քաֆէ-շանթան է կարծում,
Ոտքը ոտքի վրայից
Նա երբէք վար չի առնում.
Էս ի՛նչ է — մօտա է:

Մէկ էլ տեսնես փողոցում.
Ոսկի ակնոցը քթին,
Անգլիերէն է ջարդում,
Քծնող ժպիտն երեսին:
Էս ի՞նչ է —մօտա է:

Հայ տիկինը իր զաւկին
Անգլիերէն է խօսում,
«Փափա, մամա, կուտ մօրնինկ.»
Անպէտ թութակ է դարձնում:
Էս ի՞նչ է — մօտա է:

Հայ քարոզիչ - պատուելին
Հայաստանն է մոռացել.
Վարդան, Ներսէս, Սահակին,
Նա բընաւ չի քարոզել.

Էս ի՞նչ է — մօտա է:

Հայհոյում է Բաֆֆիին,
Նրան սրիկայ է կոչում.
Դրանց փոխան Հիշքօքիյ
Իւզոտ ռոճիկ է գանձում.

Էս ի՞նչ է — մօտա է.

Դուք չէ՛ք տեսնի վարդապետ
Լայն մօրուքով ու վեղար,
Հագած ունի բրինտ ալպէրթ
Ու սիլինդրը շողահար:

Էս ի՞նչ է — մօտա է:

Նա չէ պահում և մեծ պահք,
Ա՛խ, ստամոքսն է տկար.
Բայց ամբիոնից պահք ու ծոմ
Քարոզում է անդադար:

Էս ի՞նչ է — մօտա է:

Հայ օրիորդ նազելի,
Օ՛, շատ սիրում է ոսկան,
Սեռնակումը հայելի,
Դէմքն է զննում անպակաս

Էս ի՞նչ է — մօտա է:

Նա չէ սիրում հայ տղայ ,
Սա կարճ է , միւսը ցած ,
Դա տգեղ է , նա աղքատ ,
Աչքն օտարին է տնկած :

Էս ի՞նչ է — մօտա է :

Թէ ուզում ես բաղդ չինել ,
Ճաշարանապետ կը լինես ․
Բայց քիչ օրից անպատճառ
Ցունչդ Եգիպտոս կը քաշես :

Էս ի՞նչ է — մօտա է :

Ճաշարանում չիք պարոն
Կոկոզավիզ , թեթեւիկ ․
Հոն պառկում է , հոն ուտում ․
Վճարում է պատուիկ :

Էս ի՞նչ է — մօտա է :

Եւ խօսում է ալամօտ ,
«Պօնժուռ միւսիւ» քեզ կ՚ըսէ ․
Բայց հէնց իր պարտք թէ ուզես ,
Քիթն ու բերանը կը կախէ ․

Էս ի՞նչ է — մօտա է :

Մի էլ տեսնես երկու Հայ
Ընկերութիւն են կազմել ,
Բայց հաշիւներ քննելիս՝
Իրար գլուխ են պատռել ․

Էս ի՞նչ է — մօտա է :

Ա․ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՊՈՒՊԱՆԻԿԻՆ

Ի՛ր հեռանաս քո մայրենի աչխարհից,
Կարօտ թողուս սերտ բարեկամք քեզանից.
Մեր ամենիս դուն մայր էիր գթառատ՝
Արդ հեռանաս մեզ մութ պատէ անփարատ:

Քո սուրբ ձեռքով մեր վէրքերը չատ անգամ
Լուանայիր, դեղ դնէիր ամեն ժամ.
Քո մազերից ոլորէիր վիրակապ,
Քո բոլոր կեանք ազգիդ համար է ադապ:

Արդ հայոց զօրքն իրեն մօրից որբանայ,
Վրաց ազգը քու խնամօք պերճանայ.
Հայաստանը զրկուի իր սուրբ չուչանից,
Վրաստանը բուրէ հոտով քաղցրալից:

Ուր որ երթաս, ուր որ լինիս, ախտուհի,
Մեր սիրտ հոգին քեզ հետ տանես, Մաքրուհի,
Գնաս բարեաւ, միշտ լոյս հաւատն քեզ ընկեր,
Աչն ու խաչը քեզ պահապան օր, գիչեր:

Ազգդ ու հաւատդ պինդ պահպանէ մէջ վրաց,
Հայ անունդ միշտ պահէ անմոռաց.
Լոյս հաւատիդ հատատա կացիր յաւիտեան՝
Լոյս հաւատդ քեզ միշտ պահէ անատան:

Ց. ԿԱՐԻՆԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

ԸՆԴ ԱԱՏԵՂՕՔ օտար ափանց
Տարագրելոյս չի՛ք բերկրանք,
Լքեալ հոգւոյս, լոյս հայրենեաց,
Դո՛ւ ես միակ սիրտիանք։

Օտար ասպղեր լոյս չունին,
Օտար երկին ինձ մըթին։

Օտար բոյսեր դառն են, անհամ,
Ջրերը պըղտոր ու լեղի,
Դաշտք, անապատք, հովիտք, արտեր
Ու պարտէզներն անբերրի։

Օտար ծառեր չուք չունին,
Օտար ծաղիկք հոտ չունին։

Օտար երկիր երջանկաբեր՝
Ծանր այդ պայման ինձ համար.
Ջիւն ձըմեռ են իր գարուններ,
Ջունի երբէք ինձ ամառ։

Օտար երկինք ամպոտ են,
Օտար սըրտեր անգութ են։

Թէև օտար չընչեմ ես օդ,
Ցաւօք սահին իմ օրեր,
Քեզ, Հայաստան սիրակարօտ
Սիրտս համայն քեզ նուէր։

Օտարութիւն, փուչ ես դու,
Այլ հայրենիք, վարդ ես դու։

ԿԱՐՕՏ ՀԱՅ ՊԱՆԴԽՏԻ

ԸՆԿԱԼ դու զիս, Հայաստան,
Զիս քու որդիդ տարաբախտ.
Հերիք եղաւ որ շրջիմ
Օտար երկրում ես թշուառ:

Շատ տարիներ ծնունդ, զատիկ,
Եկան անցան ու գնացին.
Պանդխտին չիք ուրախ օրեր,
Ոչ տօնական հանդէսներ:

Հացն իմ օտար, ջուրն իմ օտար,
Արեւն օտար, օդն օտար.
Զիս հայրենիք ծնաւ սնոյց,
Օտար հողում եմ ապրում:

Հայաստա՛ն, իմ Հայաստա՛ն,
Հէք զաւկիդ տայիր արձագանք.
Շունչն իմ հատաւ, դու ցե՞րր լսես,
Ես քո ձայնին եմ սիրահար:

Ձայն տուր ինձ և լուր իմ այս
Սրտիս խորին հառաչանք.
Տա՛ր, հօ՛ն յինէն դու իմ սուգ,
Սրբէ աչացս դառն արցունք:

Ա՜հ, ե՞րբ կցէ զքեզ տեսից,
Զքեզ սիրեցի խանդակաթ.
Եւ հայրենիք հասայ, վա՜հ,
Ասեմ՝ մեռնիմ ես քո գիրկ:

Թաղէ՛ դու զիս այն սուրբ հող,
Ուր իմ նախնիք ննջեցին.
Շատ է քո հող ինձ տապան,
Քան օտարին մարմարիոն։

Թող գայ գարուն և բուսնի
Շիրմիս վրայ մանուշակ.
Ես չեմ ուզեր օտար հող
Որ ընձիւղէ փուշ տատասկ։

Հանգչին ոսկերքս այն բլրոյն տակ,
Ուր գահ և թագ գլորեցան.
Թէ վեր բերես, Տէր իմ Յիսուս,
Հան զիս յայնժամ ի նոր լոյս։

ԵՐԳ ՄՕ՛ՆԹՕ՛ՆԻ

ԸՆԿԵ՛ՐՔ, յաղթութեան ժամն է արդ հասեր,
Մեզ կ՚սպասեն փառք, առնունք քաջալեր,
Արեան ծարաւի մեր հատու սուսեր
Կենաց թշնամուն թող կտրին թելեր։

Ո՛հ, մեր ախոյեան թողինք ի տագնապ,
Չըլլանք աչարեկ, մենք, ի զէն ըշտապ.
Փութանք արշաւել, այլ՝ մի՛ վեհերոտ,
Մի՛, օն անդր իբաց սիրտք վատ և երկչոտ։

Իզէ՛ն, իզէ՛ն, օն անդր իբաց
Սիրտք վատ և երկչոտ։

ՄՇԵՑՈՑ ԽՂՃՈՒԿ ՁԱՅՆ

Ընցաւ տարին, Հայոցս էլ փառք ընցաւ հետ,
Դրախտի սարէն գարուն յետին բարև ետ·
Կարիճք առան զէնքեր, իջան տակ հողին
Վա՜յ մեր գլխին, սև մուր էկաւ էն օրին:
Հայու աչքեր թող մեզ լան,
Ա՜խ, մեզ լան, վա՜խ, մեզ լան:

Հայերս գերի եղանք բախտին անողոք,
Աստուած, հրեշտակ, մարդ չըլսեց մեր բողոք·
Մեր լացերու ձէն ծածկըւաւ Տարնոյ տակ,
Մշու դաշտեր պահեն սրտի հառաչանք,
Հայու աշուղք թող մեզ լան,
Ա՜խ, մեզ լան, վա՜խ, մեզ լան:

Մեր աշխըրհի քակվուկ չէնքերու ներքև
Նստուկ մամ, պապ, ճժեր մնացին անարև·
Նօթի, ակլող, ա՜խ, չըկայ տէր տիրական,
Անգութ քրդու զուլմին եղած ենք խուրպան·
Ղարիպ աղբէրք թող մեզ լան,
Ա՜խ, մեզ լան, վա՜խ, մեզ լան,

Մատղաշ աղջիկ ու հարս հալաւ մի չունի,
Որ իր մարմին անօրէնին դէմ ծածկի·
Ինչպէս դրած ձեռքերն աչից ամչկոտ,
Գութի, սիրոյ, ողորմութեան է կարօտ·
Հայ աղջիկներ թող մեզ լան·
Ա՜խ, մեզ լան, վա՜խ, մեզ լան:

Կեցէ՛ք, Մշու դաշտի քամիք· քիչ մ՚ կեցէ՛ք·
Մեր ողբաձէն բարեն էլ ձըր հետ տարէք·
Ու երբ ընցնիք Սահմանադրութեան կամարից,
Հոնկաց, ըսէք Ղարիպ մեր հայ ախպըրտանց·
Մեր արտասուք որբէն թող մեր աչուընուց,
Կ՚ընցնի տարին էլ հլանք, էլ հլանք:

ՊԱՌԱՒ ՕՐԻՈՐԴԻ ԵՐԳԸ

ԹԱՔ տանէին, տանէին.
Ցախաւելը թագաւոր էնէին,
Թաք տանէին, տանէին.
Գոմէշը կէսրար էնէին,
Մատակը կէսուր էնէին,
Ոսկու տեղ փուշ դնէին,
Իշու պոչը փեսկիլ էնէին,
Թընդրին չուլը քօղկ էնէին,
Նալերը պօզմախ էնէին,
Դագլէ չապիկ հագցնէին,
Իշու կաշին գուլպայ էնէին,
Ճէճիմը խրխայ էնէին,
Ճլօփը դագնոց էնէին,
Փատէ պաշմաղ հագցնէին,
Թընդրին խուփը բարձ էնէին,
Իշուն չուլը դօշակ էնէին,
Թաք տանէին, տանէին.
Խըսիրը եօրղան էնէին,
Գոմշին կոտոշը զուռնա էնէին,
Ալըրմաղը դըմպլիկ էնէին,
Էշը տաւլճի էնէին,
Նախըր հարսնառ էնէին,
Կատուն սարկաւագ էնէին,
Խորոզը ժամկոչ էնէին,
Քուզան կոլոտ էնէին,
Խաչերկաթը խաչ էնէին,
Խատէ խալի փռէին,
Խըսրի տեղ դնէին,
Մէյմունի պէս խաղցնէին,
Վեց-օխտ օր ծուռ պահէին,
Օրը տաս ժուռ ծեծէին,
Թաք տանէին. տանէին:



ԹԷ ԶԻՍ կանչեն օտարաց
Արքայական պալատում
Այլ կը սիրեմ հայրենիք,
Ուր որ լինիմ ես բանտում:
Կ'ասեմ անդադար՝

«Այլ ուր կայ տեղ քաղցրիկ
Մարդուն քան իւր հայրենիք»
Կ'ասեմ անդադար (կրկնել):

Եթէ գիս կանչեն Թագաւոր,
Ըլլալ մի օտար երկրի.
Այլ կը սիրեմ հայրենիք,
Ուր և լինեմ ես գերի:
Կ'ասեմ անդադար՝ ևն.

Թէ ինձ մի օտարի ձեռք
Տայ փունջ մի լեցուն ծաղիկ.
Չեմ առներ գի մեր երկրի՝
Փուչն է քան գայն գեղեցիկ:
Կ'ասեմ անդադար՝ ևն:

Թէ ամենէն ոսկեփայլ,
Երկրի մը լինիմ բնակիչ.
Այլ կ'երազեմ հայրենիք,
Իր սև բախտով մահակիզ.
Կ'ասեմ անդադար՝ ևն.

ԻՂՁ ՊԸՆԴՈՒԽՏԻ

ԹԷ ԹԵՒ ՈՒՆԷԻ,
Ո՛Հ ԿԸ ԹՈՒՉԷԻ
Ազատ Մասեաց սարերն ի վեր ես ուժգին.
Անկէ ձեզ Հայեր,
Կարդայի հրաւէր
Թ՛եկէ՛ք, հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրենք ընկեր զընկեր՝ սիրենք կաթոգին:
Թէ դեռ յիմ արիւն
Չը խառնուէր թոյն,
Դեռ երակաց մէջ աչխոյժ խաղային,
Ո՛Հ, քանի՛ հպարտ
Կանչէի ազատ
Թ՛եկէ՛ք, հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, եւն.
Թէ կեանք ունէի,
Ո՛Հ կը լարէի
Թել քնարի բախտին հայոց անկենդան,
Որ նա ձեզ խօսէր,
Զեզ պանդուխտ հայեր,
Թ՛եկէ՛ք, հայեր, ըլլանք մէկ սիրտ մէկ մարմին, եւն.
Թէ սէր ըլլայի
Կամ անմահ հոգի,
Կը կապէի հայոց սրտեր անմեկին,
Ցայնժամ և նոքա
Մի սրտիկ հայկայ
Կ'ըլլան ի մի անշուշտ մէկ սիրտ մէկ մարմին,
Սիրենք ընկեր զընկեր՝ սիրենք կաթոգին:

Ս. Ց. ՖԷԼԷԿԵԱՆ

Ողջոյն առ Խրիմեան

ԹԷ Ի ՀՐԱՑԱՆ, դրօշ մահաբեր,
Այլք ողջունեն իրենց աչերը.
Կամ ի գոռիւն թնդանօթաց,
Ահեղ ողջոյն ատեն իչխանաց.
Մենք մեր արտից ի բաբախիւն,
Խոնարհ այլ ջերմ տամք քեզ ողջոյն.
Եւ թէ չունինք դրօշս արեան՝
Հեզ ձիթենիք են մեր նշան։

Օ՛հ, Հայրիկին ընդ առաջ,
Երթանք, հայե՛ր, ալ ի յաջ.
Հերիք կոհակք անջատեն,
Ջափըն որդոց հօր լաստէն,
Պատռենք վոսփորն քաղցր ի ձայն,
«Ողջո՛յն քեզ, ո՛ Խըրիմեան»։

Հրեչտա՛կդ յուսոյ, թռիր առ մեզ,
Շա՛տ թառեցար, բո՛ւ սրտակէզ
Համր ի նոճիս աւերակաց...
Թէ բարեկամ ես ամայեաց՝
Մեր սիրտք ալ են աւեր թափուր։
Լից զնոսա հոգւոյդ ի հուր.
Բոցավէդ աչաց սառն արծարծես,
Զանզգայ սիրտս իսկ վառես։
Օ՛հ, Հայրիկին ընդ առաջ, ևն։

Մեղմ Ատուծոյն հեզ փառատրան,
Դու խաչակի՛ր խաղաղութեան,
Շանթից փոխան մեղր հասէ,

Զմեզ վերացու յայս թուխ փոսէ,
Եւ մութի մէջ, Հայաստանցին,
Թէ կորնչի հեծեծագին՝
Հացու նման ջահ լուսաւոր
Չե՞ս դու լուսոյ ուխտեալ գինուոր
Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ, ևն։

Բախան այս անգամ բանայ գաչեր,
Նահմ արժէքն հանէ ի վեր։
Եւ թէ թաւշէ տայ քեզ գահոյս՝
Լօռուա պաւերս ածէ ի յուշ։
Եւ դաւազան թէ տայ ոսկի՝
Դու նոյն հովիւն ես պարզ, արի
Որ ջաղխեցիր ի ցուպդ անփուտ
Գայլս վայրի, քուրդս անգութ։
Օ՛ն, Հայրիկին ընդ առաջ, ևն։

Մարդ որ հըզօր է ի պատժել,
Չի՛ անզօր է ի վարձատրել։
Երկու աերև, մինչ մեծ արք կան,
Մի քար՝ երբ չեն։ — այս իր վարձան։։
Հայրիկ, քս վարձն է վեհագոյն։
Դէմ սլաքաց վատ նախանձուն
Դէմ գընդակաց կոյր խաւարի,
Մեր լանջատպար քեզ կանգնեցի»։

Օ՛ն, Հայրիկին մենք յառաջ
Սըփռենք մեր իղձ և հառաչ
Մեր երակաց գիտէ թինդ,
Ըզգայ սրտից խոց և խինդ։։
Պատռենք վոսփորն քաղցր ի ձայն՝
«Ողջո՛յն քեզ, ո՛ Խրիմեան»։

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ



Առաջադրութիւն

ԹԷ ԻՄ ալաւոր հեքաս աւնային,
Այժս ինձ յետ գար, կտրիճ դառնայի,
Նըժոյգ ձի նատած, պեխս ոլորած,
Ձեռս թուր առած՝ ես դաշտ կ'երթայի:

Ես դաշտ կ'երթայի — դաշտն Աւարայրի,
Ողողած, ցօղած հայոց արիւնով,
Աղգ իմ սիրական, դու ազգ Թորգոմեան,
Քո կորցրած թագը քեզ յետ կուտայի:

Կ'ասէի հայոց օրիորդներին,
Ծախեցէ՛ք հազի ձեր թանկ շորերը,
Թողէ՛ք պաճուճանք, գարդ, մարգարիտներ՝
Ժանգոտած ու բութ են մեր թրերը:

Տուէ՛ք բեհեզեայ մեզ ձեր շապիկը,
Որ մենք վահվահենք մեր մարմնու վէրքը,
Վիրակապ հիւսէ՛ք դուք ձեր մազերից —
Այդպէս յայտնեցէք դուք մեզ ձեր սէրը:

Թէ ես լինէի հարուստ մեծատուն,
Սնդուկներս լի ոսկով, արծաթով՝
Շատերի նման ես չէի լինիլ
Երբէք ազգասէր ունայն խօսքերով:

Շամպանիա գինու, փառք ու պատուի տեղ
Կառնէի առատ գնդակ ու վառօդ,
Արձակ, համարձակ կ'երթայի հանդէպ՝
Հայատեաց ազգաց՝ անթիւ զօրքերով:

Թէ ես լինէի մի երկրի իշխան,
Կուտայի զօրքիս սաստիկ հրաման —
Շուտաքայլ երթալ դէպի Հայաստան,
Խղճուկ հայ ազգին լինել օգնական:

Եւրոպ, Ասիա արեան գետերը
Կը վազեցնէի հեղեղի նման,
Մինչև որ թագ, գահ ու ազատ կրօն՝
Ինձնից չը ստանար թշուառ Հայաստան.

Բայց՝ եթէ մի օր, մի ժամ, մի րոպէ
Աստուած լինէի մեր հողագնդին՝
Ինչ սուր սլաքներ պիտի շաղ տայի
Մեր արիւնարբու թշնամեաց գնդին:

Նենգ ռուս, թիւրք մոլի, պարսիկ ոխերիմ,
Դարաւոր ոսոխ՝ դո՛ւ յոյն կրօնամոլ,
Գիտցէ՛ք, որ իմ սուր երկսայրի սրից
Անվնաս չէր մնալ ոչ մի ձեր որդին:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ



Théatre de la rue d'Alger - Marseille

Dimanche, 23 Fevrier 1947, à 20 h. 45

CONCERT de Musique Symphonique Arménienne

Sous la direction de K. M. ALEMCHAH

ԿԻՐԱԿԻ 23 ՓԵՏՐՈՒԱՐ 1947 ԺԱՄԸ 20.45ԻՆ

ԳԱՁԱ Տ'ԻԹԱԼԻԱ (ՌԻ Տ'ԱԼԺԷ) ՄԱՐՍԷՅԼ

Գ. Մ. ԱԼԷՄՇԱՀ

ՊԻՏԻ ՏԱՅ ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ

ԲԱՑԱՌԻԿ ՆՈՒԱԳԱՀԱՆԴԷՍ ՄԸ

Մասնակցութեամբ Մարսէյլի Ռատիօկայանի մեծ ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲԻՆ

(Աւարայրի Պատերազմը, Հէքեաթ, եւն.:)

ԵՒ ՕՐ. ԱՍՏՂԻԿ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

որ պիտի երգէ Սայաթ Նովայի, Դ. Ղազարեանի

եւ Ալէմշահի էն ժողովրդական գործերէն։

ԿԱՐԵՒՈՐ.— Նուագահանդէսին օրը տոմս պիտի չծախուի։

Տոմսերը կանխաւ ապահովելու համար դիմել.—

M. MALAKIAN, 3, Boulevard Théodore Turner - Tél. L. 09-02
M. EXERJEAN, 40, La Canebière, Tél. C. 30 88
M. CHEHIGUIAN, Pharmacie Centrale, 1, Boul. d'Athènes, Tél. C. 33-80
M. DURAND, Photo d'Art, 8,5 rue d'Aubagne, Tél. C. 50-75
M. DIRADOURIAN, 2, rue Philippe de Girard
M. E. ARMEN, 39, rue St. Savournin, Tel. G. 76-83
M. CHEHIKIAN, 334, Chemin de St. Julie-nBeaumont, Tél. G. 91-66
M. Der-MINASSIAN, 40, rue Centrale, Chateau-Gombert, Tél. N. 92-67
M. H. ALEXANIAN, St-Loup-Marseille

Տեսիլ Հայաստանի

Թէ ԻՄՍ հայրենեաց քնար սգաւոր
Հեծէ տխրագին՝ իմ հոգիս է այն.
Թէ անոր բնկրնկ թելեր վշտաւոր
Ասին բարձրաձայն՝ իմ սրտիկս է ան:

Թէ հայ մուսային սրտառուչ նուագ
Դեռ կ'եղերերգէ՝ հառաչանքս է ան.
Թէ Հայաստանի սև բախտին հազագ
Լայ աղէկտուր՝ հեծեծանքս է ան:

Թէ իմս հայրենեաց կիսամեռիկ չունչ
Դեռ լսուի տխուր՝ իմ ոգբերս է ան.
Թէ լռիկ-ճնշիկ հեծէ անշչունչ՝
Ո՛հ, անկարեկիր իմ հոգիս է ան:

Եւ Հայկայ փառաց յօժար ոգբերգուն
Հարազատ լացողն՝ իմ ձայնիկս է ան.
Զորս հազար տարուայ պարծանաց գարուն
Արձագանք տուողն՝ աղաղակս է ան:

Իմ Հայաստանիս ցաւերուն հատոր
Ահա այս մաշած իմ կուրծքս է ան.
Սև-սև թերթերուն մէջ սրտակոտոր
Արցունքով գրուած՝ իմ աղիքս է ան:

Թէ բանաս կարդաս արիւնոտ դաշտեր,
Վարդապոյն ներկուած՝ իմ կողերս է ան.
Թէ աչքէ անցնես չամփրած նիզակներ
Մահահոտ ցցուած՝ իմ թիկունքս է ան:

Թէ Հայկ և Արամ, Վարդան, Վահաններ
Ինկած սեսանես՝ իմ ուժս է ան.
Թէ, գէնք, թէ գրահ, թէ սուր, թէ սուսեր
Փշրած, կոտրած՝ ոսկորներս է ան:

Թէ արեամբ ներկեն ակունք եղեմին՝
Նշխար քաջերուն՝ իմ բիբերս է ան.
Թէ քաղցր ու անբիծ ալիք Եփրատին
Լեզի են դարձեր՝ արտասուքս է ան:

Թէ վճիտ գետերն, ուերքն արծաթի
Լալով առուակեն՝ երակներս է ան.
Թէ Տիգրիս, Գեհոն, Փիսան մռչեն,
Եւ պղտոր գնան՝ իմ արիւնս է ան:

Թէ սառնամանիք ձմրան բքաբեր
Լեռներ է պատեր՝ իմ գագաթս է ան.
Եւ քաղցրիկ գետիւռ, անուշիկ հովեր
Ցրտագին փչեն՝ իմ շնչիկս է ան:

Թէ վտակ-վտակ ցօղէ գյուղատակ
Զայս արտասուատակ՝ աչերս է ան.
Թէ արտաճայնիկ երգէ գՀայաստան,
Կանչէ գՀայաստան՝ անկեղծ սէրս է ան:

Թէ մթին խորշերն ու ձորերն լուսն,
Սևեռով ծածկին՝ մենաստանս է ան.
Թէ ողբ կը կարդան վայրերն Եղեմին՝
Ճնշած լեարդերուս արձագանքն է ան:

Եւ Հայաստանի հողերը ուխտիս
Պինդ սիրով գրկողն՝ իմ ձեռքերս է ան.
Թէ կը համբուրեն կաթոգին խնդիս՝
Ո՛հ, մայրակաթօտ շրթունքներս է ան:

Եւ Հայոց լերանց ցուրտ շուքերուն տակ
Ընկած ապարախտ՝ իմ ճակատս է ան.
Մասեաց սուրբ քարերն իր բարձն ու պսակ
Դրած սգաւոր՝ իմ գլխիկս է ան։

Եւ կիսակործան տաճարն Հայրենի
Սև սուգ է պատեր՝ տաղաւարս է ան.
Ուր չիջելափառ կանթեղ դեռ հիւծէ,
Նուաղ առ նուաղ՝ իմ յոյս է ան։

Ու տխուր նստեր, մազերն են ծածկեր
Իր սեւուկ աչքեր՝ սիրականս է ան.
Ձեռքերն ի ճակատ, կռնակն ի հողեր
Յուսով կռթներ՝ Հայաստանն է ան.

Ու երբ տեսանեմ զիմ հեգ Հայաստան
Ի մէջ իր փառաց՝ իմ բաղձանքս է ան.
Յայնժամ թող մեռնիմ իր ծոց մայրական,
Զիմ վերջին շնչոյս՝ միակ ուխտս է ան.

Ս. Հ. ՅԷԼԷԿՆԵԱՆ



Աւարայրի Նահատակք

ԹԷ ՀԱՅՐԵՆԵԱՑ պատակապիր
Գողթնի քնարք լռեր են.
Երկնից Թոզ գան անմահ հոգիք
Հայոց քաջերն պատկել:

Մատեաց գադաթ Թոզ գան բազմին
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Ատուած իջեր ի Հայաստան
Հայոց արիւն հատուցել:

Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցօղէք ձեր ցօղեր.
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնով:

Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այն դաշտին մէջ ոչ խոտ, վարդ.
Այլ վարդանայ ինկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ:

Քանդակագործ քաջն եղիշէ
Գրիչն ի ձեռ գայ յԱրտազ,
Զաւիշ, ձևէ, գրէ, դրոշմէ,
կեանք, մահ, հաւատք վարդանայ:

Ահ, վարդանայ անուան արժան,
Մասիս կանգնէ մահարձան
Մենատանները, խաչն ի գմբէթ,
Աւետարան սուրբ տաճար:

Ծագէ արև քոյդ ճառագայթ,
Խաղաղաց լեռներ, մութ խորչեր.
Այն տեղ ինկաւ քալն Հմայեակ,
Այնտեղ պատկեր նահատակ:

Լուսին, լուսին, աչքովդ անքուն.
Պահէ հայոց ոսկորները,
Եւ մայիսի ղուարթ ցօղով՝
Ցօղէ անոնց չէրխմներ:

Արծիւք, բազէք Հայաստանի,
Եւ արագիլք ամրան հիւր.
Դուք հսկեցէք այս աշխարհին,
Ժառանգեցէք հայոց տուն:

Մոխիրներու վրայ նատէք,
Աւերակներ չինէք բոյն.
Եւ ծիծեռնակ գայ ու երթայ
Մինչև հայոց գայ գարուն:

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՀԱՅԱՍՏԱՆ

Թէպէտ ես մեծ տան նշանն եմ,
Ամենից ազնիւ իշխանն եմ,
Ոչ մեռած եմ, ոչ կենդան եմ,
Օգնական չունեմ, ի՞նչ անեմ:

Ո՛վ անցաւոր, ինձի նայիր,
Անբախտութեանս խնայիր,
Ի՛նչ կուլէր փոքր միայիր,
Իմանայիր թէ ի՛նչ բան եմ:

Թըշնամիքս մորդս մեռուցին,
Մէջքս ծանրութեամբ կեռուցին,
Որդիքս ինձնից հեռուցին,
Այժմ այլոց ապաստան եմ:

Ձեռքումս կոտրուեց սուրս,
Վնասուեցաւ առուտուրս,
Լեղի դարձաւ քաղցր ջուրս,
Բաս ես ո՞նց չը հոգուոց հանեմ:

Առաջ կէի անձամբ անձին,
Այժմ կարօտ այլոց գանձին,
Սիցաղ, քեզ ասեմ առանձին —
Այրիացեալ Հայաստանն եմ:

ՎՏԱՐԱՆԴԻ

Թէպէտ վտար քաղքէ քաղաք կամ թափառ,
Բաղդն ու մարդիկ զիս հալածեն անգթաբար,
Այլ արդէն իսկ Ազատութեան երբ վէհ ձայն
Թռաւ բերնէս, յանձն առի զայս վիշտս համայն:
Ազատութեան ես անձնուէր,
Վիշտ, ցաւ սիրով եմ յանձն առեր:

Թէպէտ հեռի իմ սիրելեաց գիրկերէն,
Հեռի անոնց զուարթիկ ձայնէն, երգերէն,
Տխուր քնարս նոճիներէն վար կախած՝
Լռիկ ողբամ խեղճ Ազգիս բաղդն մըտայած,
Ազատութեան ես անձնուէր, են:

Թէպէտ յաչաց դառն հոսեն արտասուք,
Ցայտնել սրտիս կարօտն ու սուգ և պասուք.
Այդ արտասուք սրտիս վէրքերն լուանան,
Վէրքեր, զորոնք Ազգիս ցաւերն հօն բանան.
Ազատութեան ես անձնուէր, են:

Վտարանդի, թէպէտ դառն են այս օրեր,
Օր մ'ալ տեսնես նպատակիդ ես հասեր.
Ազատութեան յաղթանակը քո ձեռքիդ՝
Վարդն ու շուշան պըսակ ըլլնել դան ճակտիդ.
Ազատութեան ես անձնուէր, են:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ՀԱՅՈՒՆ ԲԱԽՏԸ

ԹՄՐԱԾ Հայը զարթեցաւ.
Ելաւ քաջի պէս ոտքի.
Բայց մարդասէր Եւրոպան
Չուզեց որ Հայն ազատուի:

Թօթուեց շղթան ամրակուռ,
Բազմադարեան ստրուկը.
Սակայն Եւրոպ մնաց լուռ,
Չուզեց որ Հայն ազատուի:

Հայն ալ ուզեց մարդկօրէն
Ապրիլ, դառնալ տէր բախտին:
Այլ բռնակալն անօրէն
Չուզեց որ Հայն ազատուի:

Բռնութեան կուռքն ալ դըժխեմ
Որուն անուն «Ցար» կոչուի,
Մեր սուրբ դատին կեցաւ դէմ,
Չուզեց որ Հայն ազատուի:

Աշխարհակալ այն ոսոխ,
Հայու արեան ծարաւի՝
Ըզմեզ բրաւ ոտնակոխ,
Չուզեց որ Հայն ազատուի:

Սասուն, Պոլիս, ամէն տեղ
Վազեց արեան մեր հեղեղ,
Դեռ մեց հզօր պետութիւնք
Չուզեն որ Հայն ազատուի:

Հայաստանն է սպանդանոց
Եւ Կիլիկան ալ՝ դըժոխք,
Դեռ իրաւանց այն դըրժողք
Չուզեն որ Հայն ազատուի:

Լերինք, քարինք ողբացին
Հայոց բախտը եղկելի,
Սակայն իշխողք չուզեցին,
Որ ըստրուկ Հայն ազատուի:

Ելաւ Զէյթուն քաջարի
Եւ կռուեցաւ յաղթական,
Վեց պետութիւնք մէջ մըտան՝
Որպէս զի Հայն չազատուի:

Արիւնաներկ մահիկը
Յաղթեց Խաչին — որ պաշտուի.
Խաչին կուռքը չամըչցաւ,
Չուզեց որ Հայն ազատուի,

Մի քրիստոնեայ «վեհափառ»
Մարդախօշոշ հետ տաճկի
Դաշինք կռեց անպատկառ
Որպէս զի Հայն չազատուի:

Հայ արեան մէջ լողալով
Մեր դահիճն արդ կը հրճուի
Եւ կը գոչէ անվրդով՝
«Կոտորե՜նք որ չազատուի»:

Բայց այն ըստրուկն անարգուած
Առիւծ դարձած անվըհատ՝
Կը մռնչէ երկանց մէջ՝
«Պէտք է լինի Հայն ազատ»:

Անգո՛ւթ դահիճ, դու գիտցի՛ր,
Հայը մնայ անվրկանդ.
Թէպէտ տաս ջարդ, կոտորած.
Պէ՛տք է լինի Հայն ազատ:

Թէ բանտ, երկաթ, կառափնատ
Սպառնաս, հայեր հարազատ
Չըլլան երբէք յուսահատ,
Մինչև լինի Հայն ազատ:

Դիւանագէ՛տք անամօթ,
Որ անարգէք մեր գանգատ.
Ձեր աչք ճնայ քընոյ կարօտ,
Ցորչափ չըլլայ Հայն ազատ:

Գիշերէ մինչ առաւօտ՝
Ձեր հաշիւներ ցնդին յօդ.
Բայց կը յաղթէ արդար դատ,
Եւ կը լինի Հայն ազատ:

Հայ ազգն ունի մի նպատակ,
Մէկ ուխտ, մէկ յոյս, մէկ հաւատ.
Կա՛մ ամէնքս նահատակ՝
Կա՛մ կը լինի Հայն ազատ:

Ողորմութիւն և կամ գութ
Մենք այլևս չե՛նք ապասեր.
Վըրէ՛ժ, կըռի՛ւ — այլ և ոչ, —
Եւ կը լինի Հայն ազատ:

Մեր սուրը արեան մենք ի լիճ
Բռնութիւնը կը խեղդենք.
Թէպէտ ջարդեա մեզ, դահի՛ճ,
Մենք մեր արեամբ կը յաղթենք:

Եւ դո՛ւ գոռոզ բռնակալ,
Որ թագըդ դեռ չը կոպած՝
Մեր արեան մէջ թաթխեցիր,
Մեր արտասուքով լուացիր:

Թող անիծուի՛ քո անուն՝
Ցո՛րչափ սուրը են իրաւունք,
Ցո՛րչափ արև լինի վկայ
Թըշուառութեանդ՝ երկրի վրայ:

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

Հայոց Հայրիկին

Թո՛ղ բարձրացնեն ճռինչ, աղաղակ
Թուխթակ, կաչաղակ,
Մխակ վայելուչ, մխակ սրտառուչ
Երգիչն է Սոխակ:
Թո՛ղ վայեն բուեր, ագռաւներ անթիւ,
Հազար հու ու ճիւ,
Ամենից մեծը, ամենից բարձրը —
Է ազատն Արծիւ:
Թո՛ղ ասեն՝ ում կուզեն՝ մանեակ, մատանիք,
Նշաններ, դափնիք,
Մխակ արժանին, մխակ սիրելին
Կը մնայ Հայրիկ:
Հայրի՛կ, ո՛հ, Հայրիկ, քո քաղցր անուան
Լինեմ ես ղուրբան,
Սիրե՛մ այն հողը, որ ծնաւ քեզ պէս
Հրեշտակ պահապան:
Ո՛վ տէր, պահպանի՛ր Դու մեր Հայրիկին,
Քո հաւատարմին,
Անպակաս արա մեր գլխի վրայից
Նորա հովանին:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ



ԹՈՂ ԵՐԳԷ ԲԼԲՈՒԼ

ԹՈ՛Ղ երգէ բլբուլ Մշու դաշտերում,
Թո՛ղ վարդեր բացուեն Սասնոյ լեռներում
Թո՛ղ մեր թշնամիք սարսեն, սարսափեն,
Գաղան ոսոխներ ճաքեն, տրաքուեն։

Մշու դաշտեր ծաղկունքով բացուած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կուզեն թշնամիք թող գան,
Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի տանան։

Ի՞նչու կը ծաղկի ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ,
Թող հայ աղջիկը երգէ վառվռուն,
Սուր զէնքը ձեռին՝ ջարդ տայ քիւրտերուն։

ԿԱՐՕՏ

ԹՈՂԷՔ գլխս, անէծք, ոճիրք մշտաւե,
Վճիռք անողոք բախտին անարե·
Թողէ՛ք որ փշրեմ շղթայք իմ ոտից,
Ցոր դարք Աստուծոյ հեծեն վշտալից·
Զի գլխս մայրական կարօտ տանջէ յար
Թողէ՛ք որ երթամ մեռնիմ յԱւարայր։

Թողէ՛ք գլխս, օտար ափունք մի անգամ,
Թողէք որ սար ձոր անցնիմ ու գնամ·
Վազեմ թեւաբաց դեռ աչերս ի լոյս,
Տեսնեմ ամպամած արեն իմ հոգւոյս·
Զի գլխս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ մեռնեմ յԱւարայր

Թողէ՛ք գլխս, անգութ աստղեր ու լուսին,
Ծաղիկ ու զեփիւռ, արցունք պանդխտին,
Թողէ՛ք որ ծածկիմ նոճեաց շուքի տակ,
Ուր Վարդան հանգչի ու փառաց վրտակ·
Զի գլխս մայրական կարօտ տանջէ յար,
Թողէ՛ք որ երթամ նայիմ յԱւարայր։

Թողէ՛ք որ գրիչս առնեմ ու քնար,
Սրտիկս ու հոգիս լարեմ վշտահար.
Երգեմ, ո՛հ, երգեմ հառաչանք ու սէր,
Յաշխարհն Աստուծոյ, յերկիրն իմ աւեր։
Զի գլխս մայրական կարօտ տանջէ յար
Թողէ՛ք որ երթամ ու լամ յԱւարայր։

Թողէ՛ք մէն մազերս շուրջ ածեմ կարօտ,
Տեսնեմ Եղեմիս կենաց առաւօտ.
Տամ անդ սիրահար շնչիկս յետին
Զոր Հայուն բաժակ դրած է յերկին.
Բաւ գլխս մայրական կարօտ տանջէ յար.
Թողէ՛ք, ալ թողէք մեռնիմ յԱւարայր։

Ս. Հ. ՑԷԼԷԿԵԱՆ

ԿՏՐԻՃԻՆ ՁԱՅՆԸ

ԹՈՂ կորնչին տաճիկները
Հայաստանի սուրբ հողից
Իսլամական անարգ լուծը
Ջընջուի մեր հայրենիքից։

Բաւական է որքան նրանք
Հայի արիւն ծծեցին,
Հայի ջանքով, աշխատանքով,
Պետութիւն հաստատեցին։

Հայի հացը, հայի փողը,
Մինչև ե՞րբ Տաճիկն ուտէ.
Իր զարշելի պիղծ բերանով
Հայութիւնը անարգէ։

Աչքի տեղ աչքեր հանել,
Ատամի տեղ ատամներ.
Մեր մէկ հաւը գողացողին
Ամբողջ տունը թալանել։

Վրիժուց կայծակ թող բորբոքուի
Հայ առիւծների սրտում,
Թողնենք իսլամի գլուխներ
Դիւցազուներու երկրում։

Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՅՈՅՍ

ԹՈ՛Ղ փչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն, ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Ո՛րքան որ կուզէ՝ թող կատղի հիւսիս,
Յուսով եմ, վաղ-ուշ գարունը պիտ գայ:

Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թո՛ղ փակէ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ-ուշ արև պիտ ծագէ:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

ԳԷՈՐԳ ՉԱՒՈՒՇԻ ԵՐԳԸ

ԹՈՒՐՔԸ լսաւ անունդ Չաւուշ,
Դէմքդ սիրուն, լեզուդ անուշ.
Կեանքիդ մէջ հանգիստ չունեցար.
Թշնամեաց դարձուցիր ապուշ.
Սասունն է քո ապաստան,
Վրէժ է քո դատաստան:
Հայոց համար սպարապետ,
Անդրանիկին ընկեր վարպետ.
Սասունը կանգուն պահեցիր,
Օգնող է քեզ սուրբ Կարապետ.
Սասունն է քո ապաստան, ևն:
Կոտորեցիր քանիցս վաշտ,
Թուրք արիւնով ներկեցիր դաշտ,
Անվախ հերոս քուրդաց դէմը,
Մինչև վերջը մնացիր անհաշտ:
Սասունն է քո ապաստան, ևն:

Միութեան Կոչ

ԺԱՄ է հայեր, արիք ձեր բախան ողջունել,
Լուսոյ դարուն վերածնութեան դրօշի տակ.
Հայրենիք ձեզ հրաւէր կարդայ գալ խմբիլ
Ուր ապագան ձեր գրուած կայ փառաւնակ:

Բաց են ասպարէզք ազատ քայլերու,
Եւ երկինք լըցող ղգայուն ուխտերու.
Մի՛ ապա, ճարակ մատնէք կոյր մրցմանց,
Ֆիրան, արտասուք և տենչ ձեր հայ դիւցապանց:

Յառա՛ջ, յառա՛ջ,
Մեծ է ձեր կոչում,
Քաջի ծնունդ քայլեր.
Մատեաց սարերէն
Ալեւոր դարեր
Լուռ ձեզ կը դիտեն,
Քայլերու չարժում,
Յառա՛ջ, յառա՛ջ:

Մայր ձեր սիրուն, մայր դարերու Հայաստան,
Ձեզ է կարօտ, ձեր ժիր ու ազատ ջանքերու.
Անոր լուսոյն խաւարած դարատատ միաբան
Ելէք պճնել, հայեր ժամ է քրտնելու:

Ձեր ճակտին ցօղուղ կինչ պիտի ցոլան,
Միւն, կոթող փոշոտ լուսոյ հայութեան.
Բաւ է ձեր զոհեր, բաւ, ալ միացէք,
Դար նոր ձեզ բանան Աստուած և օրէնք:
Յառա՛ջ, յառա՛ջ, ևն:

ԵՂՐԱՅՐ ԵՒՐԻ ՄԵՐ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ
Թէ երգք թըռչին սիրուլաբար,
Մատունք կուսին ամենագեղ
Թէ որ զարնեն փափուկ քընար,
Զուռին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Տո՛ւր ինձ ձեռքդ, եղբայր ենք մենք,
Որ մրրկաւ էինք պատուած,
Բախտին ամէն ոխ չարանենգ,
Ի մի համբոյր ցրուին ի բաց:
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Երբ ալևոր Մայրն Հայաստան
Տեսնէ զորդիս իր քովէ քով,
Սըրտին խորունկ վէրքը դաժան
Քաղցր արտասուաց բուժին ցօղով:
Ընդ աստեղօք, ևն:

Մէկտեղ լացինք մենք ի հնում,
Եկէ՛ք դարձեալ յար անբաժան,
Խառնենք զարտօսր և ըղձանդում,
Որ բաղմածնանդ ըլլայ մեր ջան:
Ընդ աստեղօք, ևն:

Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցաւնինք,
Մէկտեղ թափին մեր քրտինքներ,
Ըզհունձ բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն հայոց դաշտեր:
Ընդ աստեղօք, ևն:

Մ. ՊԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ



ԸՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրեւ արծիւ սաւառնում եա լեռ ու ժայռ,
Թնդացնում եա երկինք գեաին սենչավառ.
Սուրը անունդ պիտի յիշուի պարէ դար,
Հակայ լերինք քեզ ապաստան, Անդրանիկ:

Ֆիւրդ ու տաճիկ երբ լսեն քո անունը,
Օձերու պէս կը սողան իրանց բոյնը.
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Զը ցամքէ մինչև յաւիտեան, Անդրանիկ:

Հայոց կառանք, դափնեայ պսակ թո՛ղ հիւսեն,
Ինքդդ ձեռամբ քո ճակատը զարդարեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
կեցցես յաւէտ դու անսասան, Անդրանիկ:

Հայաստանի սոխակները քեզ համար,
Թող դայլայլեն գիշեր ցորեկ անդադար.
Անյաղթ միտս դու քաջ կռուի սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանիկ:

Ի ՔԷՆ ՀԱՅԵՐ

Ի Քէ՛ն հայե՛ր, իսուբ և իհրացա՛ն,
Տաճկահայաստանէն կոչում է մի ձայն.
Լեռից լեռ թնդում է ահեղ հրաման,
Թռէք հայեր, թռէ՛ք դէպի Հայաստան:

Արևելք, արևմուտք, հարաւ ու հիւսիս,
Դղրդաց ու թնդաց քաղցր աւետիս.
Հայկայ քաջ զաւակաց առոյգ կրծքերից
Ազատութիւն հնչեց, ամէն կողմերից:

Խումբ խումբ հայեր դէպի Տաճկահայաստան
— Փրկութեան աւետիս առած ի բերան —
Դիմում են ցնծութեամբ իբրև հարսանիք,
Ուխտած սուրբ արիւնով փրկել հայրենիք:

Տաճկահայաստանը ոտքի է կանգնում
Արիւնածարաւ վրէ՛ժ, վրէ՛ժ է գոչում.
Արիւնով ներկւում են բոլոր դաշտերը,
Լոկ արիւն են հոսում բոլոր գետերը:

Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,
Անթիւ աւար ու գանձ հայերին թողնում.
Ցաղթութի՛ւն, յաղթութի՛ւն զուչենք միաձայն,
Թշնամին յաղթուած է. կէցցէ՛ Հայաստան:



ՎԱՐԴԱՆ

ԻՄ ՀԱՅՐԵՆԵԱՑ հոգի Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի զուրպան.
Որ Տղմուտի ափերու քով,
Վաթսուն հազար կարիճներով,
Զարկիր, զարկուար, ինկար՝ քալքալ
Պարսիկ սփռած իճախ ու ալ.

Իմ հայրենեաց արև Վարդան,
Արևս ար՛ւուտ եղնի զուրպան:

Աւետարանն ու խաչն առիր,
Տարիր երկինք բարձրացուցիր,
Եւ դուն ալ հետ Թողիր գացիր,
Անուշ արևդ հողին տուիր,
Որ հայրենեաց չողայ արև
Շաւարշանայ դաշտին վերև.

Իմ հայրենեաց, ևն:

Արիւնդ կարմիր կարմիր Թափուաւ,
Դաշտ ու ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն ելաւ ամպի տակից,
Պաղ պաղ Թափեց ցօղիկն աչից,
Որ հայրենեաց վարդեր բացուին,
Պլպուլն երգէ դրախտի տարին.

Իմ հայրենեաց արև Վարդան,
Արևս ար՛ւուդ եղնի զուրպան:

Ս. Հ. ՇԻԼԻԿԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ

ԻՄ ՀԱՅՐԵՆԻՔ զիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն,
Հայու որդուն կը վայելէ՞
Հեռանալ Հայաստանէն:

Մի՞թէ արծաթ, ոսկի, գոհար
Կը սփոփէ՞ Հայաստանը.
Այն որ կ՚ողբայ որդւոց համար,
Խղճալի Հայաստանը:

Խոր տխրութեան մէջ է թաղուեր
Թագուհի Հայաստանը:
Բոպիկ ոտքով, արձակ մազով:
Կ՚արտասուէ Հայաստանը:

Անգութ երկինք ալ չի յիշեր,
Մոռցեր է Հայաստանը.
Անսիրտ հայեր ալ չեն սիրեր,
Անուշիկ Հայաստանը:

Ո՛հ, թողէ՛ք զիս՝ խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անո՛ւշ երկիր, կոյս անարատ,
Աննման Հայաստանը:

Արև ծածկեր է իր դէմքը,
Խաւար է Հայաստանը:
Հայոց արևն ալ մարեր է,
Սև է հագեր Հայաստանը:

Մինչև կտրի իմ վերջին շունչ՝
Պիտի կանչեմ Հայաստան,
Պըլլուիմ մէյ մ՚իմ հայրենեացս,
Ապա մտնիմ իմ գերեզման:

Անդորրութիւն ես կը խնդրեմ
Սիրելի Հայաստանին.
Կտրել այս ձայն չէ՛, չէ՛ կարող
Սոսկումը գերեզմանին:

Ս. ՀԱՅԿՈՒՆԻ

ԳԱՆԳԱՏ

Իմ հայրենիքի թշուառ, անտէր,
Քու հաղն ու ջուրն ինձ սիրուն.
Լոյսդ, բոյսդ և օդդ ընտիր,
Բայց կեանք չի տար հայերուն:

Հայի ստացուածք թէ ճոխ լինի
Կը կողոպտէ զայն օտար.
Հայն միշտ բոկոտն թող պըտըտի,
Ո՞վ է իրեն հոգատար:

Հայի կալուածք թէ ճոխ լինի
Կ'ըլլայ աւար օտարին,
Հայ չինուածիւնք, տուն և այգի
Յափշտակէ թշնամին:

Հայի արեամբ ներկուեցաւ
Հայաստանի լեռն ու ձոր.
Հայի փրկիչ վերէն տեսաւ՝
Բայց լուռ կեցաւ անտարբեր:

Աստուա՛ծ, միթէ դուն գութ չունի՞ս,
Թշուառ հայի սերնդին.
Հայ արիւնէն չա՞տ կ'ախորժիս,
Կ'ուզես խապտռ կորնչի՞:

Թէպէտ հայի մեղքը չատ է,
Նոյնպէս չատ է իր տանջանք.
Շուտով ելիր պինդ ազատէ՝
Գործ մը գործէ ընդունակ:

ՀԱՅՏԱՍՏԱՆԻ ՍՈՒԳԸ

Իմ Սիրելի զաւակունքս
Կը թափառին օտար աշխարհ,
Ես ո՞ւր դիմեմ, ո՞ւր փնտռեմ,
Կը ծառային այլոց խոնարհ:
Եկա՛յք, որդեակք իմ,
Ձեր մօրն այցելութեան:

Դարեր անցան, լուր մը չառի,
Իմ քաջերս մեռան, կորան,
Կուլամ, արիւնս կը սառի,
Մէկը չունիմ՝ տայ ինձ դարման:
Եկայք, ևն:

Արիւնս ցամքած, սիրտս մաշած,
Դէմքս է տխուր մինչ յաւիտեան,
Եւ կարօտով իմ որդեկաց
Պիտի լքնեմ ի գերեզման:
Եկայք, ևն:

Եւ դո՛ւ, հովիւ թափառական,
Կ'երգես տխուր ի մէջ հովտաց,
Ե՛կ, արտասուենք թանկ կորստեան
Տխուր մահուան մեր որդեկաց:
Եկայք, ևն:

Իսկ դո՛ւ, կուսնկ իմ հայրենեաց,
Գնա՛ հեռու, աչքէս ի բաց,
Ցեսին ողջոյն տո՛ւր զաւակաց,
Չի կեանքիս մէջ յոյս է մեռած:
Եկայք, ևն:

ԱՆԷԾՔ

Ինեկ, Մինեկ, Վարդիկ, ճինեկ,
Օվասափ մռճեկ·
Սարի ծաղիկ կոճիկ,
Թօրվան վիրվի էրկու կոր ախչիկ:

Արևուդ մեռնի ձօռօյի Նազար
Ճապալէգի Կազար·
Աբգարի Նավօն,
Պըլըթրօյի Պետօն:

Նարեկայ մուխսի Կալօն,
Արարուց ծուռ Պիտօն·
Կազար, Նազար, Շէկօն, Ակօն,
Փիլօն, Գէվօն, Ջաչալ-Խաչօն·
Իլլահ կճօն, իլլահ կճօն:

Խէր խռաւաթ,
Շան միս կտաւաս·
Էրկու չուն կնային Բաղդադ·
Կռուան, էլան խաղք մալամաթ:

Ջար աչք՝ չար փուշ,
Ջար փուշն ի կրակ·
Կոր անձղան պլաթրակ,
Սխկլ՛, թալ աչքդ·
Թէ չ՚ժրաւ, փո՛ւ քեօ երես···

Ի՞ՆՉ Կ'ԸՍԵՆ

Ինձի կ'ըսեն. — «ինչո՞ւ լուռ ես».
Ո՛հ, մինթէ բառ կամ խօսք ունի՞
Արշալոյսը որ կը բռնկի,
Ջի անհուն է այն ալ ինձ պէս:

Ինձի կ'ըսեն. — «Միշտ տխուր ես».
Ի՞նչպէս չըլլամ, մէկիկ մէկիկ
Թօթափեցան գլխուս աստղիկք,
Արշալոյս մը չանցաւ սրտէս:

Ինձի կ'ըսեն. — «Կըրակոտ չես,
Լըճակի մը պէս ես մեռած,
Դալկահար՝ դէմքդ ու հայեցուածք»:
Ո՛հ, յոտակն են իմ փրփուրներ:

Ես ինձ կ'ըսեմ. ժամդ է հասեր,
Քու երկրորդ ևս մօրդ գընա՛ գոգ,
Գերեզման՝ հոն գտնես դու հոգ,
Վարդեր, թրթռուտ, թռիչ ու աստղեր:

Պ. ԴՈՒՐԵԱՆ



Ինձ Համար չէ

Ինձ համար չէ գարնան գալը,
Ինձ համար չէ ծառի ծաղկիլը,
Ուրախութեան սրտի գրգիռը,
Ոչ մի բերկրանք չեն ինձ համար։

Ինձ համար չէ կենաց բախտը,
Ինձ համար չէ երջանկութիւնը,
Եւ մրայօն կուսին աչերը,
Նոցա արցունք չեն ինձ համար։

Ինձ համար չէ փայլուն լուսնի
Անտառ ու սար լուսաւորելը,
Գարնան վարդի երգչի տաղերը,
Սոխակ ու վարդ չեն ինձ համար։

Ինձ համար չէ բարեկամաց
Մէկտեղ սիրով տօն կատարելը.
Զատկի օրուայ ուրախ ասելը
«Քրիստոս յարեաւ» ը՝ չէ ինձ համար։

Ինձ համար չէ ծնողաց լացը,
Ինձ համար չէ աղջկայ տխրիլը.
Գերեզմանիս վրայ արտասուելը
Բարեկամացս՝ չէ ինձ համար։

Բայց ինձ համար կուգայ ժամը
Կ'երթամ թշնամեաց պատերազմը.
Եւ մահառիթ սպանիչ գնդակը՝
Անդ պատրաստուած է ինձ համար։

(Թարգմ.) Ք. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՈՂԲԱՑԵԱԼ ԶԻՆՈՒՈՐԻ ՅԻՇԱՏԱԿ

Ինձ համար չէ գերեզման,
Եւ խաչաքարին այն յիշատակ·
Ա՛հ, մեռանիմ ես ի մահու դաշտ,
Կորչի անունս անյիշատակ:

Ինձ համար չէ շքեղ դագաղ,
Դիազարդին ունայն պատրանք·
Ո՛չ բարեկամք յուղարկաւորք,
Ոչ ընտանիք իմ սգաւոր:

Այլ ինձ համար կայ մի խոր վիհ,
Զոր ես ձեռքովս փորեցի·
Հազար հազար մեռեալներուն,
Մի գերեզման է հողաբլուր:

Հանէք անձէս իմ համազգեստ,
Առէ՛ք նշանս և իմ զէնքերս·
Թողէ՛ք բաժին ինձ միայն,
Իմ արիւնոտ շապիկ պատան:

Զինուորի դին չունի պատիւ,
Ցատից քարշեալ ձգեն ի վիհ·
Որպէս խրցունք ի կալոցին,
Դիզեալ կուտեն ի բարդոցին:

Մահու դաշտէն ուղեւորեալ,
Հասինք ահա մեր հանգիստ·
Հանգչեցէ՛ք արդ քուն անխռով,
Արեան դաշտի խոնջեալ զինուորք:

Այլ մինչ հնչէ Գաբրիէլի փող,
Շարժի յայնժամ մեր հողաբլուր,
Եւ մենք առնենք ի կեանս նոր,
Որպէս արծուի նորափետուր:

196 Ինձ համար չէ գերեզման

Գայ Քրիստոս, Տէր դատաւոր,
Գահերն ամէն կորչին առեան.
Արդար Աստուած չառնէ անտես
Արեան դաշտի մեծ դատաստան:

Ողջամբ մնացի՛ք դուք, ողջ գինուորք,
Կտակ թողում ձեզ յետ մահուս,
Ես սուր առի սրով անկայ,
Ցուց առնեմ ձեզ Քրիստոսի բան:

Աստուած ստեղծ զմարդ հողագործ,
Դաշտի մշակ աշխատաւոր.
Անէ՛ծք ձեռին այն չարարուեստ,
Որ զմարդ արար արիւնագործ:

Ասեն մարդիկ աշխարհաւրան,
Գայ ժամանակ մեզ ոսկեդար.
Գահերն ամէն գան ի համբոյր,
Ուխտեն դնել սուրն ի պատեան:

Առիւծ դառնայ հեզ անմռունչ,
Գայլ ընդ գառին շրջին յարօտ.
Արեան դաշտեր ծաղկին շուշան,
Խաղաղութիւն տիրէ աշխարհ:

Այդ երազ է չեմ հաւատար,
Ես միտ բերեմ Քրիստոսի բան.
Ցարեցին ազգ ազգի վրայ,
Աշխարհ դառնայ մի ծով արեան:

Յիսուս փրկիչ խաղաղարար,
Եկար տեսար դու մեր աշխարհ.
Մարդիկ խեռ են և խոլամիտ,
Դեռ ևս չուսան աւետարանդ:

Ո՛վ մարմնացեալ սիրոյ հրեշտակ,
Դու կոչեցիր զմարդիկ եղբայր.
Տո՛ւր մեզ դքոյդ խաղաղութիւն,
Զոր չկարէ տալ մեզ աշխարհ:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ

ՀԱՅՈՒԿԻ ԵՐԳԸ

Ինձ տեղ տուէք, Սիփան սարե՛ր,
Բռնաւորի լուծն եմ թողեր.
Ազատութիւնս՝ արնով գնած,
Պահէք ձեր ծոցն, ազատ սարե՛ր:

Մասից ազա՛տ, Մասից բա՛րձր ես,
Աչխարհից թանկ, ազատութի՛ւն.
Կեանքի պէրն ես, կեանքի պէրն ես,
Արծրուի պէս բարձր ես թռնում:

Ազատ օդում, ազատ հովում,
Արծրուի պէս ազատ կ՚ընիմ.
Բաց թևերս թափ - ծափ տալով,
Ախպրատանցս քով կը թռնիմ.

Հա՛յ ախպրատանք, ձեր ժանգ չղթան,
Իմ երկաթէ սուր կտուցով՝
Ես կը կըտցեմ, կը քըծըծեմ,
Մէկանէ կ՚երգենք ազատ կրծքով. —

— «Ազատութի՛ւն, ազատութի՛ւն,
Կեանքի արև ազատութիւն.
Մասից ազա՛տ, արծրուից ազա՛տ,
Աչխարհի տէ՛ր ազատութիւն:

«Արծրուի պէս բա՛րձր ես թռնում,
Մասից բա՛րձր ազատութիւն.
Դու՛ կեանքից վե՛ր, դու լո՛յս — արև,
Ազատութի՛ւն, ազատութի՛ւն»...:

ՀԱՑ — ԳՈՒՍԱՆ

ԻՆՉ ԱՆԵՆՔ

ԻՆՉ ԱՆԵՆՔ… Ամօ՛թ այսպէս ասողին,
Ամօ՛թ, բի՛ւր ամօթ յուսահատուողին…
Մա՛հ, մա՛հ, հազա՛ր մահ հէգ վըհատուողին․
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

Ասէ՛ք, ի՞նչ կ՚անէ ջուրը ինկածը,
Ասէ՛ք, ի՞նչ կ՚անէ քաղցած-սովածը․
Ասէ՛ք, ի՞նչ կ՚անէ գերի ընկածը…
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

Ջըրամոյնք ճըգնին՝ քանի ուժ ունին,
Քաղցածը մաշէ շէմքը դրացիին․
Փախչել կը հնարի կաշկանդած գերին….
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր՝ ի՞նչ անենք»։

Հա՛րուստ՝ հէ՞ր ոսկիդ սնտուկ դրել ես,
Կտրիճ՝ ո՞ր օրուայ ուժդ պահել ես,
Ա՜ռ ի՞նչ, ազգասէ՛ր, ազգդ սիրել ես…
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր ի՞նչ անենք»։

Հա՛րուստ՝ դիմացդ է ազնիւ ասպարէզ,
Հայրենի լաւ է, քան թէ ոսկու դէզ,
Թէ մեռնիս՝ ոսկիդ հե՞տդ կը տանես…
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր ի՞նչ անենք»։

Կտրի՛ճ՝ ալ կ՚անցնի քանի մը տարի,
Այդ թշիդ վարդը խայտառ կը խամրի,
Չի թառմիր միայն յիշատակ բարի…
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր ի՞նչ անենք»։

Հայը կըստիպէ վեհ պատրիարքին
Յորդորակ սփռել բոլոր հայ ազգին,
Թօթուել — զարթեցնել մեր թմրած հոգին…
Եղբա՛րք՝ ալ չասենք «Հայեր ի՞նչ անենք»։

ՔԱՄԱՌ — ՔԱԹԻՊԱ

ԼՃԱԿ

Ինչո՞ւ ապշած ես, լճակ,
Ու չեն խայտար քու ալիք,
Մինթէ հալուոյդ մէջ անձկաւ
Գեղուհի՞ մը նայեցաւ։

Եւ կամ մինթէ կ'զմայլին
Ալեակդ երկնի կապոյտին,
Եւ այն ամպոց լուսափթիթ
Որք նմանին փրփուրիդ։

Մելամաղձոտ լճակ իմ,
Քեզ հետ ըլլանք մտերիմ.
Սիրեմ քեզի պէս ես ալ
Գրաւիլ, լռել ու խոկալ։

Որքան ունիս դու պլի՝
Ճակատս այնքան խոկ ունի.
Որքան ունիս դու փրփուր՝
Սիրտս այնքան խոց ունի ըիւր։

Այլ եթէ դոգդ ալ թափին
Փայլքն աստեղաց երկընքին,
Նըմանիլ չես կրնար դուն
Սիրտիս՝ որ է բոց անհա՛ւն։

Հոն աստղերը չե՛ն մեռնիր,
Ծաղիկները հոն չեն թառամիր,
Ամպերն չեն թրջիր հող,
Երբ խաղաղ էք դու և օդ։

Լճա՛կ, դու ես թագուհիս,
Չի թ՝ հովէ մ՚ալ խորչոմիս,
Դարձեալ խորքիդ մէջ խռով
Չիս կը պահես դողդղալով։

Շատերը գիս մերժեցին,
«Ինար մ՚ունի սոսկ», ըսին.
Մին՝ «Դողդոջ է, գոյն չունի»,
Միւսն ըսաւ. «Կը մեռնի»։

Ոչ ոք ըսաւ. «Հէգ տըղայ,
Սրտաօք ինչո՞ւ կը մխայ,
Թերևս ըլլայ գեղանի,
Թէ որ սիրեմ չմեռնի»։

Ոչ ոք ըսաւ. «Սա տըղին
Պատռենք սիրտը տրտմագին,
Նայինք ինչեր գրուած կան..։»
— Հոն հրդեհ կայ, ոչ մատեան։

Հոն կայ մոխիր... յիշատա՛կ...
Ալեակդ յուզին թող լճակ,
Չի քու խորքին մէջ անձկաւ
Ցուսահատ մը նայեցաւ...

Պ. ԴՈՒՐԵԱՆ



ՍԱՍՈՒՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ գոռ վաշտերը կատաղի
Պաշարեցին մեր լեռները սոսկալի.
Մի վհատիր քաջ Սասուն,
Քեզ համար չէ նորութիւն.
Մեր պապերից սովրել ենք
Մեռնիլ տղամարդի պէս,
Զոր մեզ թողին յիշատակ:

Շէնիկ, Սէմալ պաշարուած են քիւրտերով,
Տալորիկի անցքն է փակուած թիւրքերով.
Զքեզ տեսնեմ քաջ Մուրատ,
Սուրդ չարժիր անվհատ.
Մեր հեռաւոր եղբայրներ
Չեն կենար միշտ անտարբեր
Շուտով կըգան օգնութեան:

Թնդանօթի դէմ դրել ենք քաջ սրտով,
Սովի դիմադրել ենք կաթով, բանջարով,
Իսէր Աստուծոյ դժուար է
Հպատակիլ իսլամին.
Լաւ է մեռնիլ առանց հայց,
Քան յանձնուիլ վատ թուրքին
Անգութ և անաստուածին:

Հայ աղջիկներ, առէք վառօդ ու կապար,
Լցէք դատարկ փամփուշտները չարաչար.
Իսկ դուք կանայք անվհատ,
Առէք սուր և հրացան,
Խրախուսեցէք հայ քաջեր,
Ազատենք մեր հայրենիք
Ձեր կանացի արիւնով:

ՍԻՐՈՑ ՁՈՂԵՐ

Լճի մէջ նաւակը
Մեղմ հոգմիկ կը տանի
Նորա մէջ նստած է
Սիրահար պատանի:

Պատանին ձեռքն ունի
Կիթառա ու կ'երգէ.
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եզերքէ:

Լճակի մէջը կայ
Քարաշէն մի ամրոց,
Սիրուհւոյ բնակարան՝
Հանապազ փակ ու գոց:

Պատանուոյ նաւակը
Դէպ ամրոց կը վազէր,
Ուր նորա անձկալին
Սրտատրոփ կը սպասէր:

Մեղմ հովը աւելի՝
Աւելի սաստկացաւ,
Երկինքը թուխպ պատեց
Փոթորիկ բարձրացաւ:

Ալիքի լեռները
Գոռալով կը ծփան,
Պատանին աներկիւղ
Կը նուագէ կիթառան:

Լուսինը ամպերի
Տակերէն երևցաւ,
Սոսկալի աղէտի
Պատկերը բացուեցաւ:

Կէս ճամբան ալիքը
Նաւակին խփուեցան,
Նաւակը փշրեցին,
Ցոյս չկայ փրկուեան:

Պատանին աչքերը
Լուսնեակին բարձրացուց
Կիթարի լարերը
Նա ուժգին հնչեցուց:

«Տար վերջին խօսքերս
Անձկալուոյս, ո՛վ լուսին,
Թէ՝ քաղցրիկ անուշդ
Ցիշելով կը մեռնիմ»:

Դադրեցաւ փոթորիկ,
Ու ալիք պառկեցան.
Ջրի վրայ կոտրտանք
Նաւակի երևցան.

Սիրուհին սրտատրոփ՝
Նայեցաւ լճակին,
Հասկացաւ դառնութիւն
Իւր անբախտ վիճակին:

«Իրարմէ բաժնեցին
Մեզ աչխարհ և այս կեանք
Գէ՛թ մահով այսուհետ
Ջրի տակ միանանք»:

Ասաց՝ և աղաղակ
Բարձրացուց նա ուժգին
Գլորուեց, ցոհ եղաւ
Անկուշտուտ ծովակին:

ՔԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ.

Խանի երգը

Լուսին չկար մութ գիշեր էր,
Մի խումբ կերթար արագ արագ,
Տեսանք որ քալ Խանի խումբն էր,
Զինուած էին բոլոր նրանք։

Կեանքերը ազգին նուիրած,
Կարիճ Խանն առաջ ինկած։
Գնում էին տաճկաց սահման.
Թըռչում էին որպէս կրակ։

Հրացանները ուսերին՝
Դրօշակը պարզել էին,
Գնում էին ուրախ գուարթ,
Ապատութիւն երգում էին։

Մութ անտառից անցնում էին.
Ամէն մէկը առիւծ էին.
Ժոյզ ձիանց վրայ նստած,
Մերկ սըրերը քաշել էին։

Երբ քալ Խանը ելաւ Բասեն,
Թնդանօթներ արձակեցին,
Հայ քալերի մօսիններից
Գնդակները զոռզոռացին։

Ահեղ կռիւն ահա սկսեց,
Երկու անյաղթ թշնամեաց մէջ.
Թուրք զօրքերին դիմադրեցին.
Փառաց պսակ վաստակեցին։

Երբ քալ Յանը հրահանգ կուտար,
— Սրիք առիւծներ իմ քալ.
Մտան թշնամուն խիտ շարքեր,
Կատորեցին ճախըն ու ալ:

Երբ քալ Յանը «ուռա՛» գոռաց,
Թշնամիքը մոլորուեցան,
Հազարաւոր տաճիկներուն
Գլուխները չախչախուեցան:

Ջերմ եռանդով կռւում էին,
Սրտերումը կար չատ պահանջ,
Փախչում էին տաճկաց զօրքեր,
Չէին կարող կանգնել առաջ:

Կեցցէ՛ Յանը իւր խմբովը,
Սարսափ թողեց Բասենումը,
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչքերիցը քունը կտրեց:

Հայաստանի հողի վրայ,
Քաջը թափեց իւր արիւնը,
Ցիշենք հայեր, չը մոռանանք,
Կարիճ Յանի քալ անունը:



ՍԻՐԱՀԱՐՆԵՐ ԼՈՒՄՆԱԿ ԳԻՇԵՐՈՎ

ԼՈՒՄՆԱԿ գիշեր բոլորովին քուն չունիմ.
Ինձ տեսնողը կարծում է թէ տուն չունիմ:
Ննջարանս սենեակիդ պատի տակն է.
կեանք խնդութիւն պարզ գիշերուայ քունակն է:
Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ համար ունքերուդ.
Արտասուքը վնաս կուտայ աչերուդ:
Արի՛ գնանք խորհուրդ անենք միասին.
Ամուսնանանք ալ չըսպասենք մեծ պասին:

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

ԼՈՒՄՆԿԱՆ համար համար,
Ես կուլամ քեզի համար.
Գառս, եկու կ'ըլլի քնացիր,
Իմ անուշ խաթէրս համար.
Ձագս, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

Օր ըսեմ, օրիկդ չատնայ,
Օրդ ու արեդ չատնայ,
Օրէդ արեւէդ տաքնամ,
Քեզի աղէկ եար մը դտնամ:
Ձագս, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

Օրօր ըսեմ քնանաս,
Հազար փառքի տիրանաս,
Բայց երբ քունդ չիգայ,
Մախու առնեմ քնանաս.
Ձագս, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

Պահչան կապեմ կախ օրան,
Մառէ ծառ չուքեր վրան.
Շուք ըրէք որ տղաս քնանայ,
Ձագուկ օրօ՛ր, օրօ՛ր, օրօ՛ր:

ԿԱՐՆՈՅ ԶԱՐԿ

Լ ՈՒՐԸ հնչեց ի Հայաստան,
Մեծաց հայոց բարձր աշխարհից.
Թրթռաց բոլոր սիրտ հայկական
Հայն արթնցաւ իր խոր քնից.
Կարնոյ զաւակ ազատութեան
Հնչեց նախակին աւետեաց ձայն:

Հայաստանի սարեր, ձորեր,
Ոգի առին սառած սրտեր.
Զի կաշկանդուած հայի բազուկ,
Փշրել փորձէ չղթայ սաստուկ:
Կարնոյ զաւակ գգաց յայտնի,
Թէ արիւնով չղթան փշրի:

Համեստաբար հայ սիրտ ճակատ,
Ո՛հ, իջուցին մինչ ի փոշի.
Իր մարդկային պատիւն ազատ,
Շատ անարգեց ձեռն լրբին.
Երդուաւ ուխտեց, Կարնոյ զաւակ,
Արեամբ սրբել սա անարգանք:

Իր իրաւանց, սուրբ պահանջմանց,
Ո՛հ, փոխարէն արդար ձայնին.
Բանտ և չղթայ, հրաւէր մահուան,
Պատրաստեալ է հայ զինուորին:
Կարնոյ քաջաց, չղթայից ձայն,
Հնչեց հայի փրկութեան ժամ:

Սակայն խարդախ, մատնիչ վաճառակ,
Եղաւ հայուն իր վատ եղբայր.
Թէ չըլինէր ցած սիրտ Զանգակ,
Ղևոնդ, Վարդան, ե՞րբ քալէանար:
Կարնոյ զաւակ ազգի համար,
Կը պատժէ նաև մատնիչ եղբայր:

Ազգի անմահ յիշատակներ,
Ձեր սկզբունք չպիտի մեռնին.
Ցղթայ, բանտ, մահ, նորնոր քաջեր,
Ձեզ հետևորդ պիտի ծնին:
Կարնոյ զաւակ, քո վեհ հոգին,
Արդ կը ներշնչէ ողջ հայ որդին:

Ապատութեան մարտիրոսներ,
Ձեր քիրտ, արիւն, վեհ հառաչանք
Պիտի լինի հայի նոր կեանք,
Դուք հայրենեաց վեհ որդիներ:
Կարնոյ զաւակ, մեծ պարզաւք քեզ,
Վատ է այն հայ որ չէ ընդ քեզ:

Հայոց քաջաց ազնիւ մայրեր,
Դուք մի՛ ապաք, մի՛ արտասուէք.
Ձեր քաջ որդիք ազատաբեր,
Փրկիչ ծնաք հայրենեաց հէգ:
Կարնոյ մայրե՛ր, վասն հայրենեաց,
Ծնէ՛ք ազատ որդիներ քաջ:

Ո՛հ, դու հայ մարդ, որ Հայաստան,
Ծնաւ անոյշ քեզ իր զաւակ,
Եւ հայու կրօն, սուրբ աւազան,
Դրօշմեց խաչով իր նահատակ.
Զե՛ս դու երբէք, չե՛ս հարազատ,
Թէ չպաշտպանես սա հայ սուրբ դատ:

Հայոց ազգն չնչէ ձեզ կեանք,
Հայ դիւցազունք և զօրականք.
Ընդունեցէք իմ համակրանք,
Դուք հայրենեաց վեհ որդիներ.
Ազատն Աստուած երբ մարդկութեան.
Ձեզ օրինակ ողջ Հայաստան:

Մ. Թ.



ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

Լռեց — ամպերը եկան ծածկեցին·
Երկինքն ու լուսինն աչքէս խլեցին·
Մնացի մինակ հոգիս վրդովուած,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ արած։

Եւ այնուհետև ամէն իրիկուն,
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն,
Նրա տխրամած դէմքը նայելիս,
Ցիչում եմ թշուառ վիճակը ազգիս։

Ա՛խ, ցոլա՛, փայլէ տխրադէմ լուսին,
Գուցէ քու փայլից փայլ տաս և հային։

Պատմէ շատերուն Վարդանի մահը
Կամ ինչպէ՛ս կորաւ հայ ազգի պահը·
Կամ ինչ վհ սիրով սիրում էր Վարդան,
Մայրենի հողը – աշխարհն Հայաստան։

ԴԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ՍԻՓԱՆԱՅ ՍԱՐԵՐ

Լօ՛, լօ՛, լօ՛, Սիփանայ սէգ սարի վրայ,
Կարիճներ չտապով գալիս են միանում.
Այն տեղ անյագթ որդիք, անյագթ հսկայ լերան,
Ջէնք ու զրահի են ընթանում:

Ի՞նչու վառուում են, գինուում,
Սանձակոծ ձի հեծնում անհամբեր.
Արիւնը նոցա բորբոք սրտի մէջ եռում,
Փայլում անցնում անհամբեր,

Բանց Սիփանայ պինդ քամին.
Սըլանում է դէպի ցած, դաշտի մէջ է թշնամին.
Նա է վարում նորանց վըրէժ անմոռաց:
Ահեղ կռուի մէջ վատ թշնամին

Հասու սուսեր է հանել, ցեղապետին սպաննել,
Նա վարում է քաջերին.
Բոլոր ցեղն այժմ ոտքի կանգնած,
Թշնամու ընդդէմ, մահու մարտի է կանչում

Արեան մեծ վրէժ է թշնամուց պահանջում.
Ու թշնամին պարտուած թողնում փախչում սառէսար
Ցեղ է ձըգում մեծ աւար:

Արիւն թափեցին արիւնի փոխան,
Արիւն խմեց ծարաւի սուսեր.
Նորան յագեցած դրեցին պատեան,
Ելնում են հիմա սէգ Սիփանն ի վեր:

Սէգ Սիփանայ կանաչ գլխին,
Ցաղթող ցեղն անում է մեծ խնդում,
Եւ ամպերի բարձրութեան միջից
Հսկայ Սիփանն է երևում.
Էլ չի գայ մեզ մօտ թշնամին,
Սուր աներա մեր պողովատին:



Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ



Խաղաղութիւն Ձեզ

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ձեզ, սուրբ մարտիրոսներ
Որ կռուի դաշտում ընկաք անվեհեր,
Դուք ջուր ու ցամաք արեամբ ներկեցիք,
Որ ձեր արիւնով փրկէք հայրենիք։

Դուք սուր առնելով՝ արիւ կամեցաք
Փշրել բռնութեան շղթան ու կապանք,
Բայց աւա՛ղ, ձեր հետ մեռան ձեր խղձեր...
Խաղաղութի՛ւն ձեզ, սուրբ մարտիրոսներ։

Խաղաղութի՛ւն ձեզ, հերոս եղբայրներ,
Թող չվրդովեն ձեր սուրբ ոսկորները,
Ձեր վերջին կամքը՝ —«անէծք թշնամուն» —
Մենք միշտ կը պաշտենք որպէս սրբութիւն։

Անէծք ու վրէժ — դոքա մեր միակ
Կը լինին կեանքի հզօր նպատակ...
Քնեցէք խաղաղ, հերո՛ս եղբայրներ,
Թող չը վրդովուեն ձեր սուրբ ոսկորները։

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք, լեռները ելլենք,
Արօր, գութան մոռնանք, հրացան առնենք.
Խեղդուած մեր բողոքը յայտնենք զէնքերով
Եւ մեր արդար դատը վօթենք արիւնով.
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճնշուած հայի որդիք հարազատ:

Քան թէ ամէն վայրկեան կենդանի մեռնիլ,
Ազատութեան վճռենք աներկիւղ գոհուիլ.
Փափուկ մահճում հանգիստ կեանքը վայել է
Ով որ հայրենիքում ազատ ապրում է:
Մեր կեանք, մեր մահ, ևն:

Ըստրկութեան չըղթան խուլ չառաչում է
Ազատութեան ճնշուած ձայնը կոչում է.
Ազատ լեռները թող լինի ապաստան
Եւ ընդարձակ ձորեր ազատ գերեզման:
Մեր կեանք, մեր մահ ևն:

Առաջ գնանք, անվախ զարնենք Համիդին,
Փրկենք հայ գիւղացին հանենք վախուկէն.
Իմաց տանք սուլթանին անխիղճ բռնաւոր,
Ծագեց հայ հրոսակաց համար պայծառ օր:
Մեր կեանք, մեր մահ ևն:

Ցրուած խմբեր, Հաճըն, Զէյթուն, Սըուէտիա,
Շտապեն միանալ և կազմել գունդ հայկեան.
Հայի ազատութեան կանգնել մի դրօշակ,
կեանքը մահով կապուած կանգնել նրա տակ:
Մեր կեանք, մեր մահ, ևն:

Խաւարել եմ Ինչպէս Գիշեր

ԽԱՒԱՐԵԼ եմ ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ,
Ջունիմ քեզ սէր, չունիմ քնդ սէր,
Ես սիրում եմ հայրենիք:

Այնտեղ անթիւ անբախտ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ.
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր
Թափում են յորդ արցունքներ:

Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես չատ ու չատ փոխուել եմ,
Առ Թաշկինակդ աչերդ սրբիր.
Ես քեզ սիրել կարող չեմ:

Մնա՛ս բարեաւ, իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Արդ արտասուք ես պիտ Թափեմ
Որ իմ ցաւերս սփոփեմ:

Ա՛խ, տուէք ինձ մի քաղցր քուն,
Կեանքից հեռու սրտանամ՝
Այն աշխարհը ուր խնդութիւն
Ուր սէրն է միշտ անթառամ:





ԱՂԲԻՒՐ

Խաթի ԳԱԽԱՌ,
Սոխորդ գեղ բուսած
Իրեն բնակից՝
Աղբիւր Յան,
Բաբիքով լցուած։

Պօղոս, Գրիգոր
Թիւրքին սիրական.
Կ'ուզեն վերջացնել,
Աղբիւր Յան,
Ամբողջ Հայաստան։

Պօղոս, Գրիգոր
Խորհուրդ կազմեցին,
Թուրք ոստիկաններ,
Աղբիւր Յան,
Ամբողջ կանչեցին։

Ստանաթ տուեցին
Նորէն խրկեցին,
Թեղուտ ու Սոխորդ
Աղբիւր Յան,
Ճանկարծ պատեցեն։

Անիծած Դաւիթ
«Աղա — Յան» կանչեց.
— կեղծութեամբ ըսաց —
Աղբիւր Յան,
Թէ զօրք մեզ պատեց։

Անիծեալ ըլլայ
Դաւիթ ծնած տեղ.
Աւերակ դառնար,
Աղբիւր Յան,
Կոչտան ըսուած գեղ։

Սոխորդայ վերև՝
Նումբուտ մեծ սարէն
Ցուցակ տուաւ մեզ,
Աղբիւր Յան,
Չէն մօսիններէն։

Բազէշ վիլայէթ
Անուն Սալվի — Զար՝
Սօսի կը կանչէ.
«Հոգիս Յան,
Կեանքդ ազգին տուր։»

Կեցցէ՛ քաջ Աղբիւր
Եւ իր մօսինին.
Ցիսաւն և հինգ զօրք
Աղբիւր Յան,
Ըրաւ ցան ու ցիր։

Անունդ էր Աղբիւր
«Մինչև Ռուսաց Դուռ
— Աչոտ կը գրէր —
Աղբիւր Յան,
Կորա՛, վճիռ տուր։»

ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ

Ծագեց աւև ազատութեան,
Մութ փարատեց հորիզոնին Թորգոմայ տան.
Հրաւէր կարդաց քաջաց հայոց,
Իգէն, իլբահ գինուորութեան.
Գոռ թշնամուն կանգնել հանդէպ ի ճակատ,
Վանել զոսոխս, նահատակել՝ կանգնել նշան յաղ-
թութեան:

Մեր հայրենեաց անցեալ փառքեր,
Գահ, գայիսոն, թագ, գաւազան կորուսեր ենք,
Հապա մանկունք սիրտ սրտի տանք,
Ցեաս նահանջել նախնեաց պարծանք:
Վօթենք արիւն, լուծել չղթայից կապեր,
Ազա՛տ, ազա՛տ, ազա՛տ չարժին մեր թև թիկունք
ու ձեռներ

Ոսկերք նախնեաց մեր քաջազանց,
Սէդ Տրդատայ, Միհրդատայ վեհապետաց.
Հրճուին նոքա ի տապանի,
Ոգիքն բերկրին յերկնից կայան.
Առնունք ասպար, վանել կեղեքիչ վոհմակ,
Կանգնել անդրէն Հայկայ զարմից հին հին փառաց
յիշատակ:

ԳՈՐԾԵԼՈՒ ԱՏԵՆ

ԾԱՂԿԱՒԷՏ դաշտի վրայ ցօղը կը փայլի,
Առտուան հրաւէր է քեզ, ո՛վ պատանի.
Օ՜ն, չահէ ջանքովդ ոսկեղէն ժամեր,
Գործելու ատեն է և կուգայ գիշեր:

Կէս օր մօտեցած է, արդ օր հասարակ,
Կէս օրուան յորդորն է քեզ միջահասակ.
Դեռ ևս տաքութիւն կայ, գործդ մի ձգեր,
Քանզի վարձքդ մեծ է երբ որ գայ գիշեր:

Կ՚երկընան շուքերը, օր կը վախճանի,
Իրիկուան հրաւէրն է քեզ, ո՛վ ծերունի.
Քիչ է ժամանակը ձեռքդ կը թուլնայ,
Կատարէ քու գործերդ դի գիշեր կուգայ:

ԾԻԾԵՌՆԱԿԸ ԲՈՅՆ Է ՇԻՆՈՒՄ

ԾԻԾԵՌՆԱԿԸ բոյն է շինում.
Ե՛ւ շինում է և՛ երգում.
Ամէն մի շուղ կպցնելիս՝
Առաջուան բոյնն է յիշում:

Նա յիշում է անցեալ տարուան
Իր սնուցած ձագերին,
Որոնց շատերն յափշտակեց
Արիւնարբու թռչնամին:

Մի անգամ էր նա բոյն շինել,
Շատ անգամներ կարկատել,
Բայց այս անգամ վերադարձին՝
Բոյնն աւերակ էր գտել:

Բայց նա դա՛րձեալ բոյն է շինում,
Ե՛ւ շինում է և՛ երգում.
Ամէն մի շուղ կպցնելիս՝
Առաջուան բոյնն է յիշում:

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ԾԻԾԵՌՆԱԿ



Ծիծեռնակ, ծիծեռնա՛կ,
Դո՛ւ, գարնան սիրուն թըռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թըռչում ես այդպէս արագ.

Ա՛խ, թըռի՛ր, ծիծեռնա՛կ,
Մընաց տեղս — Աչտարակ.
Անդ չինիր քո բոյնը —
Հայրենի կըտուրի տակ։

Անդ հեռու՝ ալեւոր
Հայր մը ունիմ ագաւոր,
Որ միակ իւր որդւոյն
Սպասում է օրէ օր։

Երբ տեսնես դու նորա՝
Ինձնից չատ բարև արա՛.
Ասա՛, թող նատի լայ
Իր անբախտ որդւոյն վըրայ։

Դու պատմէ՛, թէ ինչպէս
Ատ անտէր ու խեղճ եմ ես,
Միշտ լալով, ողբալով՝
Կեանքս մաշուել, նըվել է կէս։

Ինձ համար ցերեկը
Մութ է թուում արեգը,
Գիշերը թաց աչքիս
Քունը մօտս չէ դալիս։

Շուտով սատ հողի տակ
Կը պառկեմ այստեղ մենակ,
Թողնելով հօրս սրտում
Միշտ ցաւալի յիշատակ։

Դէ՛հ, սիրուն ծիծեռնա՛կ,
Հեռացի՛ր, գնա՛ արագ,
Դէպ՝ հայոց աշխարհը։
Ծընած տեղս — Աչտարակ։

Գ. ԴՈՂՈՒԿԵԱՆ



Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՀԻՆ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Կանաչ, փիթխարի ընկուզենու տակ
Իրենց հասակի կարգով, ծալպատակ,
Միասին բազմած.
Մի շրջան կազմած,
Քէֆ էին անում
Եւ ուրախանում
Մեր հոկայ պապերն ու մեր հայրերը՝
Գիւղի տէրերը։

Մենք առոյգ ու ժիր գեղջուկ մանուկներ
Երեք դասընկեր,
Նրանց առաջին գլխարաց կանգնած,
Ձեռքներս խոնարհ, սրտներիս դրած,
Ձի՛ղ, ուժեղ ձայնով նրանց սպասում
Տաղ էինք ասում։

Երբ զուարթաձայն մեր երգը լռեց,
Մըռայլ Թամազէն բեխերն ոլորեց,
Նրա հետ վերցրին լիք բաժակները
Բոլոր մեծերը,
Ու մեզ օրհնեցին. — Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք...

Ժամանակ անցաւ, նրանք էլ անցան,
Զուարթ երգերս վշտալի դարձան.
Եւ ես յիշեցի մեր օրը լալիս,
Թէ մեզ օրհնելիս
Ինչո՞ւ ասացին. — Ապրէ՛ք, երեխէ՛ք.
Բայց մեզ պէս չապրէք...

Խաղաղութի՛ւն ձեզ, մեր անբախտ պապեր,
Ձեզ տանջող ցաւը մեզ էլ է պատել.
Այժմ, տխրութեան թէ քէֆի ժամին,
Մենք էլ՝ օրհնելիս մեր զաւակներին՝
Ձեր խօսքն ենք ասում — Ապրէ՛ք, երեխէ՛ք,
Բայց մեզ պէս չապրէք...

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՏՊԱՇՆՈՐԴԻՐ

Կանգնի՛ր, ո՛վ անցորդ,
Դու այս չիրմի մօտ
Եւ հանգիստ կարդայ քալէ նահատակին,
Որ կռուի դաշտում
Սուր ու գէնք ձեռքում,
Զոհ բերեց կեանքը իւր ազգի փառքին։
Բայց կարեկցութեան
Ո՛չ լաց, ո՛չ կական
Թող չը պղտորեն քո սիրտն ու հոգին.
Նա լաց չէր սիրում.
Կռուի փոթորկում
Նահատակն ընկաւ ժպիտը դէմքին։

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԹԱՄԱՆԱԿ

Կանչնի կ'երթայ, չի տանար,
Կեցուննլ գինքն է անկընար.
Ծովէն ու ցուրէն
Ա՛լ արագօրէն
Թռչի՛, չողուն ու լուսագէս,
Փայլակի մը պէս։
Կ'անցնի կ'երթայ, չի տանար.
Լեռ, սար ու ձոր, բարձր ու խոնարհ,
Կը գլէ, կ'անցնի,
Վազքով տիտանի.
Նըուազ ակնարկ մը անգամ յետին
Չի նետեր ետին։

Կ'անցնի կ'երթայ անկարեկիր·
Այս իսկ է իր ճակատագիր·
Եւ մարդիկ ամէն
Երբոր կը յամեն՝
Խնդալով ինքն անոնց վրայ՝
Յառա՜ջ կը սուրայ:

Պարգեւներու մեծահարուստ
Բաշխող մըն է ան ի վերուստ
Թանկագին շընորհ,
Ճիշտ արժէքն անոր
Այս աշխարհի վրայ շատեր
Վա՜խ որ չեն գիտեր:

Կ'անցնի կ'երթայ, անդարձ և շուտ,
Պէտք է քաղել անկէ օգուտ,
Կառչելով ուժգին
Անոր քղանցքին,
Աշխատանքով, եռանդով շատ
Գործել անընդհատ:

Ժամանակին պէտք է փարիք,
Ան կուտայ ձեզ ամէն բարիք:
Դիրք, պատիւ, համբաւ,
Գանձեր ալ ամբաւ
Եւ իրական, հեշտ, քաղցրագին,
Վայելքը կեանքին:

ԱԼՓԱՍԼԱՆ

ԻՄ ԸՆՏՐՈՒԹԸ

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլ և լուսնակը.
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
Է արեգակը:

Կանաչ դաշտերում
Եւ այգիներում
Ծաղիկներ կան շատ,
Բայց և ոչ մինը
Վարդի նման է.
Նա է բնութեան զարդ:

Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ,
Ամէն տեղ կան շատ,
Բայց իմ ընտրածը,
Սըրտիս սիրածը
Հրեշտակի է նման:

Գ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ



ԺԱՄԱՆԱԿ ՀԱՅՈՑ

Կար ԺԱՄԱՆԱԿ որ և հայերն,
Արքայ իշխող ունէին.
Եւ զինավառ անթիւ զօրքեր,
Իրենց երկրում պահէին։

Կար ժամանակ որ և անոնք,
Նման ծաղկած ազգերի.
Զարդարելով աշխարհ Հայկայ,
Փայլում էին անուանի։

Բայց այժմ անտէր, անթագաւոր,
Գերի, ծառայ ցաւագին.
Այստեղ, այնտեղ խիստ չքաւոր,
Զարչարւում են գլխովին։

Հիմա անոնք անմխիթար,
Հայրենիքից զրկուելով,
Վա՛յ են կանչում թշուառաբար,
Հալածանքներ կրելով։

Յ. Մ. ՎԱՐԱՆԴԵՑԻ

ԽԱՆԱՍՈՐ

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,
Ֆէտայիներ դաշնակցական, վրէժ առան հովտումը։
Սոսկաց քիւրտը, լեղապատառ Մազրիկցին,
Չէր սպասում իսպառ ջնջուել քաջ Ֆէտայու դնդակից։

«Եամա՛ն, Աստուած Ֆէտան եկաւ ո՞ւր փախչիմ»,
Ասաց որդուն կուրծքին սեղմած լեղապատառ քրդուհին։
«Մի վախենար, հանգիստ եղիր, ջաշի ջան,
Կանանց երբէք ձեռք տալու չէ վրէժառու քաջ Ֆէտան»։

Մի ժամուայ մէջ Մազրիկ ցեղը ջնջուեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր արեամբ ներկուեցաւ։
Հայեր յիշեցէք նուիրական այս օրը.
Յուլիս ամսոյ քսանհինգին կատարեցէք մեր տօնը։

ՄԵՂԱՅ ՔԵԶ ԱՍՏՈՒԱԾ

Կուշտ եմ և առողջ, կեանքից բաւական,
Սեղանս առատ, ճաշս պատուական,
Բայց թէ ի՞նչպէս եմ այդ կեանքին հասած —
Այդ մի՛ հարցնէք... Մեղա՛յ քեզ, Աստուած..

Շատ կարճ միջոցում ես հարուստ դառայ,
Հողեր, կալուածքներ, կառք ու ձի առայ,
Բայց թէ ի՞նչ փողով, ի՞նչպէս վաստակած —
Այդ մեր մէջ մնայ... Մեղա՛յ քեզ, Աստուած...

Տներ չինեցի, չքեղ փառաւոր,
Ապրում եմ մէջը ինչպէս թագաւոր,
Բայց քանի՞ մարդու ես տուն եմ քանդած —
Այդ մի հարցնէք... Մեղա՛յ քեզ Աստուած...

Կեանքումս ես գտայ մի «աղնիւ ընկեր»,
Գործիս մէջ դրեց տաւնեակ հազարներ,
Բայց վե՞րջը... վերջը նա քաղցած մնայ,
Իսկ ես կշտացայ... Մեղա՛յ քեզ Աստուած...

Ես միշտ ասում եմ և միշտ քարոզում.
«Աղքատն էլ մարդ է, ուտել է ուզում».
Բայց քանի՞ մարդ եմ ես աղքատ թողած —
Այդ մի հարցնէք... Մեղա՛յ քեզ Աստուած...

Երբ տեղն է գալիս՝ սուրբ եմ ձևանում,
Ժամում ծնկաչոք աղօթք եմ անում.
Բայց հոգիս վաղուց աստանին ծախած՝
Աչխարհք եմ խաբում... Մեղայ քեզ Աստուած...

Թէ մէկը պատուիս դպչի աչկարայ,
Ես կրակ կը թափեմ այդ մարդու վրայ,
Բայց ծածուկ ինչքա՜ն ես թուք եմ կերած—
Այդ մեր մէջ մնայ... Մեղա՛յ քեզ Աստուած...

Է՛հ, բաւական է դլուխներդ տանեմ,
Ախր «զորն ասեմ, զորն խոստովանեմ»...
Ոտով ու գլխով մեղքի մէջ թաղուած
Ես մի հրէշ եմ... Մեղա՛յ քեզ, Աստուած...

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ

ԸՆԴՐԸՆԿՈՒՆ ԵՐԳԸ

Կովկասի քաջե՛ր, համբեր կազմեցէք,
Քաջ Անդրանիկին օգնութեան հասէք.
Առած իր շուրջը զինուորներ ութսուն,
Մաքրէ ճանապարհ նա դէպի Սասուն:
Սուլթանը սարսափած, ճարը կտրուած,
Հազար ոսկի է գլխին խոստացած:

Հայ պատանիներ, շուտով չարժուեցէք
երբէք մի վախնաք, սուրեր չարժեցէք,
Հասել է ժամը սուրբ ազատութեան,
կենալու ժամ չէ, շուտով քայլեցէք:
Սիրենք միութիւն, չանենք վատութիւն,
Ունենանք, հայեր, սուրբ ազատութիւն:

Քաջ Անդրանիկը անվախ, սուր առած,
Հայաստան գնալ վաղուց էր ուխտած,
Այ ու ձախ ջարդել տաճկաց զինուորին,
Քիւրդերից մատաղ բերել վանքերին:
Դէ՛հ, Շաքիր փաշա, մտածիր հնար,
Հազար ոսկիով անես գլխիդ ճար:

Կովկասի քաջե՛ր, առիւծի ճտեր,
Սիրէք ձեր սուսեր, առէք նիզակներ,
Հայ օրիորդներ, օրհնեալ տիկիններ.
Ծախէք ձեր զարդեր, առէք գնդակներ:
Աղքա՛տ, քո լուման տուր հայրենիքին,
Փրկելու քո խեղճ, կարօտ ընկերին:

Դէ՛հ հայ ընկերներ, հեծէք ձեր ձիեր,
Բաց թողէք սանձեր, անցէք սար ու ձոր,
Ահա կռուի դաշտ, թշնամին անհաշտ,
Մեր սուր թող ուտէ Օսմանեան վաշտեր:
Ասաւ քաջ Մուրատ, առած եմ խրատ.
Կամ կռուել ազատ, կամ մահ անարատ:

Խանասորի Քայլերգ

ԿՌՈՒԵՑԷ՛Ք տղերք, կռուեցէք քաջ քաջ
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ.
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից ստրկին ահը,
Յառաջ խիզախենք իբրեւ նահատակ,
Իզուր թող չանցնի մեզնից մի գնդակ:

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր,
Մեզի կ'սպասեն մեր հէգ եղբայրներ,
Զի ծնանք ազատ, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.
Այս անգամին ալ ցոյց տանք թշնամուն,
Թէ ինչ է հայու ուժն ու քաջութիւն:

Ահա քիւրդերը փախան սարսափած
Ահա դիակներ արեամբ շաղախուած.
Կրակ տեղացէ՛ք, անդադար կրա՛կ,
Փառք ժողովրդին, առատ է գնդակ.
Օ՛ն, կռուենք, տղերք, մինչեւ շունչ վերջին,
Արժանի լինինք փառաց պսակին:

Մեռնինք յուսալով, մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան.
Այսպէս յորդորեց ու ընկաւ արին,
Թողլով մեզ անուն յիշատակ բարին,
Ահեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալի կարիճ Մարտիրոս: Մ. Ե.

ՊԸՆԴՈՒԽՏՆ ԸՈՒ ԿՈՒՆԿ

ԿՌՈՒՆԿ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ,
Կռունկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս
Մի՛ վազեր, երամիդ չուտով կը հասնիս,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Թողեր եմ եկեր միւլքս ու այգիս,
Քանի որ ա՛ռ կանեմ կը քաղուի հոգիս.
Կռո՛ւնկ, պահ մը կացի՛ր, ձայնիկդ ի հոգիս,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Քեզ խաբար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անուշ կուգայ քան գլխի տօլապ.
Կռո՛ւնկ, Պաղտատ իմնուս կամ Թէ ի Հալապ,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Սրտերնիս կամեցաւ ելանք գնացանք,
Այս աուտ աստուրիս դարդերն իմացանք,
Աղուհացկեր մարդկանց կարօտ մնացանք.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Աստուրիս բաներն կամաց կամաց է,
Մի՛թէ Աստուած լըսէ դըռնակն բացցէ.
Ղարիբի սիրտն է աուգ, աչերն ի լաց է,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս:

Ատուած, քեզնէ խնդրեմ մուվրէթ ու քէրամ,
Ղարիպի սիրան է խոց, ճիկէրն է վէրամ.
կերած հացն է լեզի ու ջուրն է հարամ,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս

Ոչ ըզլուր օրն գիտեմ, ոչ ըզկիրակին,
Ձարկած է գիս չամփուրն, բռնած կրակին.
Այրիլս չեմ հոգար, ձեզնէ կարօտ եմ.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս

Պաղտատու կուգաս, կ'երթաս ի Սէհրատ,
Թղթիկ մը գրեր եմ, տամ քեզ ամանաթ,
Ատուած թող վրկայ լինի քու վըրադ,
Տարեալ հասուցանես գոյն իմ սիրելեաց:

Գրեր եմ մէջ թղթիս թէ հոս ճնայի
Օրիկ մը օրանց գաչերս չբացի,
Սիրելիք ձեզնէ կարօտ ճնայի,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խաբրիկ մը չունի՞ս

Աչուն է մօտեցեր, գնալու ես թէպաիր,
Երամ ես ժողվեր հալար ու բիւր,
Ինձ պատասխան չտուիր, ելար գնացիր.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն գնա հեռացի՛ր:

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ





ՇՈՒՇԱՆ ՎԱՐԴԵՆԻ

ԿՐԱՄԲԱՄԲՈՒԼԻՆ

ԿՐԱՄԲԱՄԲՈՒԼԻՆ էն օղին է,
Որ մեզի քալ ծանօթ է.
Որու համը չի տեսնելը
Ուսանողին ամօթ է:
Բայց հանապազ իմ սիրելի,
Մենք կոնծում ենք կրամբամբուլի:

Հայրս անդադար ինձ գըրում է,
«Որդի ջան, չուտ ուարտէ,
Ժամանակդ արագ անցնում է:
Տե՛ս, գըրեըդ լաւ սերտէ:»
Բայց նրա պարոն որդին,
Կանծում է կրամբամբուլի:

Թէ դարդս ու հոգս ինձ նեղում է,
Թէ իմ քէֆը տեղը չէ,
Թէ աղջիկս ինձ խաբում է,
Ու էլ հաւատարիմ չէ.
Կ'ասեմ, «աղջիկ իմ նազելի,
Քու տեղ կը սիրեմ կրամբամբուլի:»

Թէ լերդս ու թոքս մաշուել է,
Գլուխս էլ սաստիկ ցաւում է,
Թէ որ խմել ու քէֆ անելը
Բժիշկն ինձ արգիլում է.
Բայց ինչ ցաւ կ'ուզէ ըլլի,
Ես կը կոնծեմ կրամբամբուլի:

Բայց երբ կուգայ կեանքիս վերջը,
Մահս էլ առաջիս տեսնեմ,
Օղին կոնծեմ բաժակիս մէջ,
Հոգեհանիս էլ կ'ասեմ.
«Վերջին անգամ, իմ պատուելի,
Եկ, առաքացնենք կրամբամբուլի»
Կրամբամբուլի, կրամբամբուլի:

(Թարգմ.) Ք. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՀԱԲՐԲԱՆ

Հաբրբան, ջանէ ջան,
Սիրել եմ սէրն երեսին,
Անթառամ թերն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չի տայ
Ատրճոյ կրակն երեսին:

Հաբրբան, ջանէ ջան
Սարի թըրթընջուկ թագա,
Մեղր ու չաքար քեզ մազա,
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տըղին ո՞նց սազայ:

Ջեր տան տակին վար կ՚անեմ,
Ջար քրդերին քար կ՚անեմ,
Թող իմ սիրածն ինծի տան,
Գլժուխնա թարկ անեմ:

Աչուղի պէս խաղ ասա,
Բլբուլի պէս տաղ ասա,
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մօր գովական փեսայ:



ՍՐԲՈՒՀԻ ՏԻՄԱՔ

ՆԷՐՍԻ ԶԵՏՑ

ՀԱՄԲՈՅՐ մ'առի Նէրսանէ,
Համբո՛յր մ'անհուն գորովի,
Երբ կարմիր ղողք մարէին
Հորիզոնին վերեւի:

Զեռքերս տարաւ կուրծքին՝ հոն
Սիրոյ երկին մ'որոտար,
Թօչնեցայ գիրկն ես իրրեւ
Համբոյր մ'անհուն դալկահար:

Նէ դիս իր քով նըստեցուց՝
Գորգի վըրայ դալարեայ.
Հուսկ ճաճանչ մը պըլպլըլար
Նէրսա դիմացը վըրայ:

Թոթովեցի... դողացի...
Առի համբոյր անհամար,
«Ցօսինք», ըսաւ, — ո՛հ, խօսիլ՝
Հատնիլ է լոկ ինձ համար:

Աչերաւ բոցն երբ մարի,
Դադրի արուիրն երբ սըրտին,
Լոկ այն ատեն հարկ է որ
Անգօր շուրթերըն խօսին:

Հուր հորիզոնն մարեցաւ,
Երկինքն աստղեր փըթթեցան.
Համբոյր մ'առի դարձեալ ես
Ցանուն աստեղց ցիր ու ցան:

Նէ թողուց որ վարսքն ազատ
Սիւգը դէպ յիս բերելով՝
Միչտ հովահրէ բըռընկած
Ճակատըս զով բոյրերով։

Ո՛հ, այն ժամը ոսկեզօծ
Անչուչտ սահած թռած է
Ճակատագրին անողորմ
Սև ձեռքերէն երկաթէ։

Մեր համբոյրներն պահեցին
Տերևներն խարչափմամբ,
Եւ չաղերու տուին չուք
Ատղերն երկնից այն անամպ։

Ձեռք վերցուցինք ատղերուն,
Սէր ուխտեցինք իրարու,
Դողդողացին ատղերն ալ
Մեր երդումէն ահարկու։

Լսեց երկինք մեր ջերմ ուխտ,
Ատղեր սրսկեց ի դորով,
Բնութիւնն եղաւ պսակիչ՝
Մեզ պսակեց ատղերով։

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՀԱՅ ՄԱՅՐԵՐ

ՀԱՅ ազգութեան ազատութիւն,
Պիտի գնենք մեր արիւնով.
Եւ մեր խլուած հող, իրաւունք,
Մենք յետ բերենք կարմիր մահով:
Հայոց մայրե՛ր, քաջ զօրական
Ծնէ՛ք դուք, վասն ազատութեան:

Մեր հայրենեաց տխրած ճակատ,
Արդ կը ժպտի ուրախ զուարթ.
Զի հայ զաւակ ուխտեց յօժար,
Զոհ տալ իր կեանք անոր համար:
Հայոց մայրե՛ր, վասն հայրենեաց,
Զոյգ, զոյգ ծնէք որդիներ քաջ:

Հայ աղջիկնե՛ր, ձեր քաջ եղբարց.
Նուրբ վիրակապ նահատակաց
Հիւսէք մազեր ձեր գեղեցիկ,
Եւ արցունքով օծէք մեղմիկ:
Հայոց կուսանք, ձեր հայրենեաց
Փրկիչ, տուք կեանք ձեր քաջ եղբարց:

Մեր տաճարներ երկնանըմման,
Պալատ, տմրոց արքայական.
Աւեր, քանդեալ հողաբլուր,
Հիւծեն, մնջեն, աղեկտուր:
Հայոց մայրե՛ր, հայ մեծութեանց
Կանգնող տնուցէք ձեր որդիք քաջ:

Զէ՛, հայն երկար պիտի չըլռէ,
Անարգանաց սա բռնութեան.
Իր վառ պահած արիւն կը զոհէ,
Փշրել չղթան տարակութեան:
Հայոց մայրե՛ր, հայ մեծութեան
Տնուցէք ազատ որդիներ քաջ: Մ. Թ.

Հայ Ապրինք

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կնքեր է մեզ պատմութեան էջը.
Հայ անուամբ զմեզ կ'ողջունէ երկինք:
Եղբայրք, հայ ապրինք:

Հայ ապրինք. մեր հայն է ան դիւցազուն,
Որ ազատութիւն սովրեցուց մարդուն.
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժինք.
Եղբայրք, հայ ապրինք:

Մեր աշխարհն է սուրբ, մեր հողին վրայ
Աստուած է քալեր, օրհնելով զԱդամ.
Մեր լեզուն ստեղծեր ու խօսեր նախ ինք.
Եղբայրք, հայ ապրինք:

Հայն ու մարդկութիւն նոյնն ունին օրրան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան.
Կրօնի նախկին սեղանն է Մասիք.
Եղբայրք, հայ ապրինք:

Հայու պերճ անուն՝ ոչ միայն յերկիր,
Այլ և եթերց մէջ շողայ լուսալիր.
Քաջ Հայկին աստեղք անմահ են երկինք.
Եղբայրք, հայ ապրինք:

Հայ ապրինք, ո՞ր ազգ կայ հայու նման
Որ ունենայ հին պարծանքներ այսքան,
Ո՞ր ազգ հայուն պէս չքեղ հայրենիք.
Եղբայրք, հայ ապրինք:

Ըսէ՛ք, ո՞ր ազգին չորս առաքեալներ
Երկնից թագաւորն է դեսպան ղրկեր,
Ո՞ր թագաւորին հետ թղթակցեր ինք.
Եղբայրք, հայ ապրինք:

Ո՞վ կրնայ համրել սրբոց մեր զանուանք,
Մեր պատմութիւնն է նահատակաց ցանկ,
Մեր եկեղեցին յերկրի է երկինք.
Եղբայրք, հայ ապրինք:

Քրիստոսի ունինք անգրանիկ օրհնէնք,
Հաւատոյ եղանք միշտ ախոյեան մենք,
Հայը պարմայուց վերկիր և վերկինք.
Եղբայրք, հայ ապրինք:

Մեր ազգն հեռուղ ճիշտ Ցիսուսի,
Որ խաչն այսքան դար առած յուսի,
Ո՛չ, չ'խոնարհիր, չ'ըլլար դասալիք.
Եղբայրք, հայ ապրինք:

Այո, խաչին կեանք, կեանք է վշտալից,
Այո, հայուն կեանք, կեանք է ցաւալից,
Բայց խաչն յաղթութեան ունի վեհ կնիք.
Եղբայրք, հայ ապրինք:

Մեր քաղցր հայրենիք, մեր թոռ, պատսպան,
Ամպերն են ծածկեր արեւ նման,
Ցուսացէք արեւ կուտայ մեզ երկինք,
Եղբայրք, հայ ապրինք:

Ո՛չ, ճակատագիր մեր, չէ միշտ սըխուր,
Զթշուառութեան ատել հացն ու ջուր,
Նոր երջանկութեան ապագայ մը ունինք,
Եղբայրք, հայ ապրինք

Հայ ապրինք որ մեր որդիք ալ, եղբայրք,
Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք,
Ըլլանք հայ անուան, չըլլանք նախատինք
Եղբայրք, հայ ապրինք:

Խ. ԵՊ. ՆԱՐ-ՊԷՅ

Ողբ Հայաստանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ աւերակներ, է՞ր ամայի մնացիք,
Ճոխ և հարուստ բնակիչներ, ինչո՞ւ եղաք մուրացիկ,
Տգեղութիւն քո յիշելով կուլամ . . . բաւ է մի հանգչիք,
Աւա՜ղ, աւա՜ղ, աւա՜ղ մի հանգչիք:

Ա՜խ Հայաստան, վա՜խ Հայաստան,
Պիտի կնքեմ քաղցրիկ կեանքս քո սիրուդ,
Տե՛ս հարազատ քաջ որդիքդ միշտ հեռուն.
Աւա՜ղ, աւա՜ղ, միշտ հեռուն:

Հայաստանի կտրիճ եղբարք, է՞ր անտարբեր կը ննջէք,
Ելէ՛ք, տեսէ՛ք հայու վիճակ, քանի՛ ազգաց գերի են.
Ձեր քաջութեան սէրն յիշելով աչքէս արցունք կը ցայտեն
Աւա՜ղ, աւա՜ղ, աւա՜ղ, կը ցայտեն:
Ա՜խ Հայաստան, վա՜խ Հայաստան, ևն:

Հայաստանի այգիք, պարտէզք, վարդենիներ թառամեցաք
Անուշահոտ բուրմունք սիրուն, ինչո՞ւ մեզմ է զլացաք.
Եդեմական պտղունք, ծաղկունք քո յիշելով կողբամ ո՜հ.
Աւա՜ղ, աւա՜ղ, աւա՜ղ, կ՚ողբամ ո՜հ:
Ա՜խ Հայաստան, վա՜խ Հայաստան, ևն:

Հայաստանի չքնաղ վայրեր հայ արեամբ են ներկուեր,
Վրէժ առնուլ կ՚աղաղակեն մեր նախահարց շիրիմներ,
Օ՛ն. հայ սերունդք, դիմենք իգէն որ չկորչիմք անտարբեր
Աւա՜ղ, աւա՜ղ, աւա՜ղ, անտարբեր:
Ա՜խ Հայաստան, վա՜խ Հայաստան, ևն:

ՉԱՅԴՈՒԿ ԵՄ

Չ ԱՅԴՈՒԿ եմ ես Դաշնակցական,
Սուրը կողքս, ձեռքս հրացան,
Որպէս զինուոր անձնանուէր
Ես սիրում եմ քաջ ընկերներ:

Քաղցր է ինձի լեռներ ման գալ,
Թշնամուն դէմ միշտ կռիւ տալ,
Լսել ահեղ մարտի կոչը,
Երգել, կռուիլ զերդ դիւցազանց:

Հայեր, սուրը է մեր նպատակ,
Ահա ձեզ գէնք, ահա դրօշակ,
Մահ ու կորուստ մեր թշնամուդն,
Կեցցէ՛, կեցցէ՛ Դաշնակցութիւն:

ՓԱՓԱԳԷՆԻ ՅԻՇԱՏԱԿԸՆ

Չ ԱՅԴՈՒԿ մի վախնար քիւրդի գնդակից,
Նա մահաբեր չէ քաջերիդ համար·
Բո «ջան — ֆէտայի» ահեղ անունից,
Քիւրդը սոսկում է, ինչպէս դիւահար:

Առէք հրացան ու ելէք հանդէս,
Տանջանքի մէջ է ձեր մայր հայրենիք.
Մի՞թէ չէք լսում, նա կանչում է ձեզ,—
«Օգնութեան արի՛ք, հարազատ որդիք»...

Ձեր հրացանը վրէժով լցրէք,
Զարդէք թշնամուն, թշնամուն գաղան.
Դուք ձեր մօր սիրուն զարկէք ու ընկէք,
Միայն թէ կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան:

ՊԵՏՐՈՍ — ՍԱՄՈՒԷԼ



ԱՆԴՐԱՆԻԿ

Երգ Սահմանադրութեան

Ձ ԱՅԵ՛Ր, մինչև ե՞րբ արտասուենք,
Լանք յուսահատ, յիշենք, հեծեծենք,
կնոջ անկ է ողբալ, կոծել,
Մեզի՝ քրտինք, արիւն թափել:

Կ՛ուզե՞նք փրկութիւն,
—Սիրենք գիտութիւն.
Սիրենք միութիւն
Ու ազատութիւն.
Սիրենք Հայութիւն,
Սահմանադրութիւն:

Միթէ ողբո՞վ կ՛անդնին, հայեր,
Մեր բազմադպիր աւերակները.
Արի կենա՛նք, գործե՛նք փութով,
Լոյս ծաւալենք ջերմ եռանդով:
Կ՛ուզենք փրկութիւն, ևն,

Թող մեր աչեր հուր արձակեն,
Ու մեր լանջեր թընդան, սրրուփեն,
Երակաց մէջ, փոխան արեան,
Հայրենասէր բոցք ընթանան:
Կ՛ուզե՞նք փրկութիւն, ևն:

Անցա՛ն, անցա՛ն, ուզի դարեր,
Սէր, յոյս ու լոյս խայտան յեթեր.
Օ՛ն, շարժեցէ՛ք, ճակատք արի,
Զարթի՛ք, առիւծք Հայաստանի.
Կ՛ուզե՞նք փրրկութիւն, ևն:

ՄԻՆԱՍ ՁԵՐԱՋ

ԱՆՎԱԽ ՀԱՅԸ

ՀԱՅԸ բանտէն չի վախնար,
Հայը մահէն չի վախնար.
Միշտ կ՚ուզէ պատերազմիլ
Հայկական հողին համար։

Գացէք ըսէք վատ Թուրքին,
Թող հեռանայ մեր հողէն.
Հայը վարժութիւն ունի,
Պատերազմը մօտեցաւ։

Հինգհարիւր տարուան մեռեալն
Այսօր ոտքի կանգնեցաւ.
Գացէք ըսէք վատ Թուրքին,
Դատաստանը վերջացաւ։

Հերի՛ք այսչափ տառապանք,
Հերի՛ք այսչափ գերութիւն.
Փշրենք մեր շղթաները,
Շուտով երթանք Հայաստան։

Արարատ լեռան վրայ
Հայու քաջ խումբ պատրաստենք.
Զէնք, սուր ձեռքերնիս առած
Կռուենք վասն հայրենեաց։

Արի՛ք, հայկազն քաջեր,
Առէք ձեր հետ ձեր սուսեր.
Շուտով վազեցէք Կարին,
Որ յաղթենք վատ Թուրք ցեղին։

Արիւնածարաւ հայեր,
Ջնջեցէք Կարնոյ զօրքեր.
Հայուն վերջին ժամն է,
Պէտք չէ Թիւրքին խնայել։

Խրախոյս առ Հայաստան

ՉԱՑ չէ՞ք, մի՛ թուլանաք, առէք ձեր վահան,
Շողշողուն ճչմարիտ սուր, մի՛ դնէք պատեան,
Զեզի նման քաջ հայեր ղոհ եղան գացին,
Երկնից մէջ վեհ քաջութեան անուն կնքեցին:

Զկա՞յ մի ճչմարիտ հայ ձեզ ըլլայ ընկեր,
Երկչոտ ու թուլասիրտ հայք թող չըլլան ընկեր.
Զեզի նման, ևն.

Չէ՞ք ճանչնար այն գառնուկը — անկէ սովրեցէք,
Թափեցէք ձեր արիւնը, սիրէք, սիրուեցէք.
Զեզի նման, ևն.

Յորդորակ

Ո՛հ, հայ ենք, հայ եղբայրներ, սիրտ սրտի կապենք,
Զեռք ձեռքի տանք, առաջ երթանք, չուտ երկինք հասնինք:

ՊԱՐԵՐԳ

ՉԱՑԿԱԶՈՒՆՔ, պար բռնենք,
Թև ի թև, օ՛ն, ելնենք,
Ցնծութեան ձայներով,
Եւ գուարթ երգերով:

Չի ահա ի նոր բախտ,
Զայն կուտայ երկինք արդ,
Ի սուրբ կոչումն ուխտենք հաստատ
Անձնուէր զոլ պատրաստ:

Մ. ՓԱՓԱԶԵԱՆ

Յիշեցի

Հայկ ու Տիգրանին յիշենք միշտ, եղբարք,
Թափ տանք նրանցից հնութեան փոշին,
Նրանց յիշելով արդեօք մի նոր կեա՞նք
Առնու Հայաստան, նոցա խեղճ այրին:

Կեցցէ՛ յաւիտեան այրին Հայաստան,
Նա որ իր որդոց դեռ սրտի խորքում
Ջունի հաստատուն մի ոգի կայան,
Ու որդիքը պանդուխտ իրենց բուն երկրում:

Եղբարք, բանը չէ անչօշափելի,
Միայն թէ կամաւ չը կարծենք ցնորք,
Վաղուց մարմնացեալ ու տեսանելի
Դարձել է հայոց լուծը անողոք:

Մեր յոյսը սակայն մեր վրայ լինի,
Այսինքն ազգի մեր ընդհանրութեան,
Աղքատ ու հարուստ տուած թև թևի,
Այսպէս թէ միայն կայ ճար փրկութեան:

Կեցցէ՛ Հայաստան, որ երազական
Նկել է այսօր, իրօք ու խօսքով.
Ոչինչ աւելի հնախօսական
Քան թէ անխորհուրդ անուն դառնալով:

Ազատութեան իղձ չըթաւնքի վրայ
Մի քանի մարդոց տեսնում ենք, այո՛,
Ո՞վքեր են դոքա, ո՞չ երդուեալ ծառայ,
Որ օտար լուծին ճնշան միշտ հնչու:

«Կը փչբէ չղթան... կերթայ Հայաստան...»
Հա՛, հա, հա՛, այդ էր պակաս ճնացել,
Որ նախանձախոյզ դառնայ հայութեան,
Կատարելապէս, բայց յետոյ ի՞նչ էլ:

Կասէ. «Եկել եմ, մայր իմ հարազատ,
Գիրկդ բաց որդուդ քո չուառական,
Համբուրում եմ քո փոշին անարատ»,
Յետոյ մի ամբողջ գայլի չարական:

Հարաւ հիւսիսից փոշի վերացաւ,
Շառաչիւն գէնքի, մթնեցաւ օրը,
Ղաւաղ սարբազի գլուխն երևցաւ,
Մեր ազգասէրը մտաւ ծակուծուկ:

«Հը՛, Հայաստա՞նը — թող տեղը ճնայ»,
Ասում է զգոյշ մեր ազգասէրը.
«Բահ ու հրացան», ի՞նչ եղան նոքա,
Թէ՞ քշում էիր դու ուրիշները:

Եւ այդ ամէնը անում եմ բերնով,
Կեցցէ՛ սուրբ Մեսրոպ, որ մեզ գիր տուեց,
Հազեր եմ վարում հեռուից՝ խօսքով,
Իմ պէս հրացանը կրծքին ո՞վ սեղմեց:

Հայկ ու Տիգրանին յիշենք, մենք, եղբարք,
Նորոգենք նոցա փառքը սուրբ անուան,
Գուցէ այդ կերպով մի ատյգ նոր կեանք
Առնու խեղճ այրին՝ մեր Մայրն Հայաստան:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ

ՀԱՅ ՄԱՐԴՈՒ ՀԱՅՐԵՆԻՔԸ

ՀԱՅ մարդ, հայ ազգ, ասա՛ արդեօք,
Ո՞ր տեղ է քո հայրենիքը·
Կամ ունի՞ս դու որ և իցէ,
Ո՞վ են արդեօք ազգակիցքդ։

Հայ մարդ, ասա՛, ո՞ւր է տունդ,
Հայ մարդ, ո՞րտեղ է քո կեդրոն·
Ունի՞ս մի բան քեզ սեփական·
Ցոյց տուր ինձ դու քո պարծանք։

Ի՞նչ հայրենիք, յիմար զքեզ,
Հարցնում ես դու ինձանից·
Ուր եմ ծնած ա՞յդ ես քննում·
Այս տեղ եկած եմ Թիֆլիզից։

Ես տուն ունեմ, և այդ քարեայ,
Երկու յարկով չէնք փառաւոր·
Ծառաներիս թիւը չկայ,
Իմ հիւրերը հարիւրաւոր։

Եղբարք ունիմ, ունիմ որդիք
Դստերք և այլ շատ ազգական,
Ընտիր ծանօթք, շատ մեծատուն
Ունիմ փեսայ և այն իշխան։

Իմ պարծա՞նքը, յիմար զքեզ,
Ցոյց տուր ինձի հապա քոնը·
Ճաշ եմ ուտում, ազնիւ ընթրիք,
Որ չէ կերել Լուկուլլոսը։

Ես խմում եմ շամպայն, մաստիկ,
Ուռցնում ես դու փորդ ջրով·
Ունիմ քանի տեսակ կառքեր,
Բայց դու ման ես գալիս ոտքով։

Ոսկի, արծաթ, գոհարեղէն,
Իմ պարծանքը իմ գանձերը·
Թէ դոցանով չես բաւական,
Տես իմ երկու պատուի նշանք։

Դու ի՞նչ կեդրոն ես հարցնում,
Իմ կեդրոնը է իմ փորը.
Ոսկի, արծաթ, հարստութիւն —
Ահա կեանքիս լոկ խորհուրդը:

Բան էք սովրել, յիմար գլեզ
Թէ հայրենիք պիտի սիրել.
Բայց թէ ի՞նչպէս հարկաւոր էր,
Ամենևին չկամիք լսել:

Ես սիրում եմ հայրենիքը,
Նրան միշտ ու միշտ գովում եմ.
Օտար ազգի առջևը,
Պակասութիւնք ծածկում եմ:

Ամենայն օր դուք մեր ազգը,
Բամբասում էք անխղճմտանք.
Ազգի գլխից ձեզ պէսներով,
Եկաւ անցաւ այնքան փորձանք:

Ողորմելի, դու կարծո՞ւմ ես,
Թէ հայրենիքդ սիրելով.
Բան կը չինես, սքնալուսում ես,
Այդպէս յիմար մտածելով:

Քո ուսումը չէ կշտացնում,
Իմ կամ իմպէսիների փորը.
Միշտ պիտոյ է հարստութիւն,
Որ պարարենք մեր մարմինը:

Հոգու համար ուսում պէտք չէ,
Ո՞ր սուրբերը ուսել էին,
Կրօնի ձևերը պահելով,
Անշուշտ կերթամ արքայութիւն:

Ուրախացիր դու, Հայաստան,
Լսելով քու որդու խօսքը.
Փառք ու պատիւ քեզ կը բերեն,
Քո մարմնապաշտ մեծատունքը.



ՏԻԳՐԱՆ Բ.

ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

ՀԱՅՈՑ աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միաքս էք գալիս՝ ասում եմ ես ա՛խ,
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ.
Ա՛խ, սիրտս խորւում, ցաւիս չկայ վերջ:

Երբ կարմիր գինին բաժակումս ածած՝
Սեղանիս վերայ առաջս է դրած՝
Աչքերս ակամայ վերան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում:

Տեսնում եմ և, ա՛խ, միաքս է մոլորւում,
Դառն արտասուքով աչքերս պղտորւում,
կարծում եմ բոլոր աչխարհը մըթնեց.
Արևն էլ խաւրեց, էնդուր որ տխրեց:

Հայոց աղջիկներ, ձեր հոգուն մեռնիմ,
Ձեր սիրուն աչերն էլ, ե՞րբ կը տեսնեմ,
Էն սև սև աչերն՝ սև ունքով պատած,
Կարծես երկնային ղալամով քաշած:

Էն սև աչերն, որ չատին սպանեց,
Բայց էլի չատին դժոխքից հանեց,
Ես էլ կենդանի տեղովս եմ մեռած,
Առանց կըրակի էրւած, խորոված:

Էլ ե՞րբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Ինչտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբ որ ձեր կարմիր թըչերը տեսնում:

Բլբլուլն էլ վարդից ձեր ձայնը լսելիս՝
Թըռչում է, թըռչում, ամպերում կորչում,
Եւ իր Ադարչի տեսածն ասելիս
Փառք քեզ, Տէր Աստուած, փառք քեզ է կանչում:

Հայոց աղջիկներ, ինչ անուն տամ ձեզ.
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բեղամազ կ՚անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես:

Մոլորուած եմ ես օտար աշխարհում
Հաւատն էլ օտար, օտար և լեզուն,
Աղջիկն էլ օտար ու ձեզ չի նման,
Հայոց աղջիկներ, դուք էք աննման:

Ձեր սէրն է միայն սրբութիւն պահուած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրը միայն էս կեանքս մաշուած
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի:

ԳԷՈՐԳ ՄԻՐԻՄԱՆԵԱՆՑ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

Հ ԱՅՈ՛Ց լեզու, Ազգայ լեզու,
Նախ էիր մայր դիտութեանց դու,
Ընդէ՞ր եղիր աւերակի բու.
Դու չատ հին ես, թանկագին ես,
Թագուհին ես լեզուաց և ազգու:

Դուռն իմաստից ընտիր տառերով,
Զոր եգիտ Մեսրոպ Հոգւովն Սրբով,
Լեզուաց միջին մէկ ընդարձակ ծով.
Դու չատ հին ես, թանկագին ես, ևն.

Ցայսնիկ կոչէ սուրբ գիրք Ծննդոց՝
Թէ քև Եւային խաբեաց մէկ չար օձ,
Մեզ վիճակած եղև դառնութիւն և կոծ.
Դու չատ հին ես, թանկագին ես, ևն.

Օտար ազգաց կոչտ լեզուները
Հայոց լրութեան ազգային սէրը.
Ազատաղեցին քեզ քո հայերը.
Դու չատ հին ես, թանկագին ես, ևն.

Հայք կորուսին գայիսան, թագ, գահ,
Սէյեաղ, ճնացեալ է միմիայն անմահ
Լեզուն՝ որ ազգի է վահան, զրահ,
Դու չատ հին ես, թանկագին ես, ևն.

ՊԵՏՐՈՍ ՄԱՏԱԹԵԱՆ

Երգ, Սէր եւ Գինի

Հայոց երգերը, սէրն և գինին
Մեր հոգեկանից անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ:

Եղբա՛րք սիրելիք, մեր սրտերու մէջ,
Ինչպէս երկնային արեգակ անշէջ,
Թող պահէ հաստատ երկնային Տէրը
Անգին հայրենեաց բոցավառ սէրը:

Կեցցէ՛ մեր հայրս, երգենք միաբան,
Մեր ազգայնութեան միակ պահապան,
Նորան մոռացող, ուրացող հային
Անուանենք ընկեր մանուկ Յուդային:

Կեցցէ՛ յաւիտեան մեր գանձ թանկագին
Մեր հայոց լեզուն քաղցրիկ նորածին.
Թո՛ղ նա զօրանայ, ծաղկի և աճի
Ապահովութեամբ Աստուծոյ աչի:

Հայոց երգերը, սէրն և գինին
Մեր հոգեկանից անպակաս լինին.
Ապրինք պարզ սրտով, միաբան, ուրախ,
Միայն չար բանից ունենանք մենք վախ:

ՀԱՅՈՑ ՄԱՆՈՒԿՆԵՐ

Հայոց մանուկներ, փոքրիկ կարիճներ,
Վշտահար հոգուս մխիթարիչներ,
Վե՛ր կացէք չուտով, բացէ՛ք ձեր աչեր,
Տեսէ՛ք ի՛նչ քաղցրիկ երգում են ծաղեր։

Արևն էլ ահա գարնան վարդի պէս
Բացել է իրա փայլունակ երես,
Եւ վարդակարմիր ճառագայթներ պէսպէս
Սփռել, զարդարել դաշտեր գեղատես։

Ահա արտուտը, սիրուն սոխակը,
Իր ձագուկներով և ծիծեռնակը՝
Թռչում են ուրախ կապոյտ երկնի տակ
Եւ երգում իրենց երգը ներդաշնակ։

Տեսէ՛ք, մինչ անգամ և մրջիւնները
Մաքրում են չտապով իրենց բները,
Նոքա չինում են չափարաններ՝
Ձմեռուայ համար ածելու սերմեր։

Դո՛ւք էլ, մանուկներ, վե՛ր կացէք չուտով.
Ձեռք ու երեսներդ մաքրեցէք ջրով,
Եւ դէպի երկինք պարզած աչքերով՝
Աղօթք կարդացէք ջերմեռանդ սրտով։

Մանուկնե՛ր, խնդրեմ, ձեր արդար բերնով
Եւ քանի կաթիլ ջերմ արտասուքով,
Խնդրեցէք Փրկչից որ խեղճ հայ ազգին
Միշտ պահէ անփորձ իր թևի տակին։

Խնդրեցէ՛ք Փրկչից սրտով և հոգով,
Որ իր փրկարար մաքուր արիւնով
Ջրէ չորացած հայ ազգի այգին,
Որ առյ արժանի պտուղ իր հօտին:

Խնդրեցէ՛ք Փրկչից, անմեղ մանուկներ,
Ա՛խ... մեր մէջ ցանէ միութեան սերմեր,
Որ սիրենք միմեանց որպէս եղբայրներ,
Մի սիրտ, մի հոգի լինենք ողջ հայեր:

Խնդրեցէք Փրկչից, որ պահէ հաստատ
Մեր սուրբ աթոռն ի վաղարշապատ,
Տայ պայծառութիւն մեր եկեղեցուն,
Յարատեւութի՛ւն մեր մաքուր կրօնին:

Աղօթքից յետոյ՝ դուք զուարթ սրտով
Հարկաւոր գրքեր ժողովէք շտապով,
Դէպ ուսումնարան արագ քայլերով
Վազեցէք իսկոյն ուսման փափագով:

Այնտեղ են բոլոր ձեր ընկերները,
Այնտեղ ձեր բարի վարժապետները,
Վարժատունն է ձեր առաջին մայրը,
Վարժապետը՝ ձեր բարի ծնմայրը:

Թագաւոր, իշխան... ազայ թէ ազջիկ,
Այս մեծ աշխարհում, թէ մեծ, թէ փոքրիկ,
Ուսումով միայն հասան մեծ փառքի,
Ուսումն է ճրագ համայն աշխարհի:

ՎԱՐԴԵՆԻ

ՀԱՅՐԵՆԵԱՑ ՍԻՐՈՅ ՀԱՄԱՐ

ՀԱՅՐԵՆԵԱՑ սիրոյ համար
Խմբեր պատրաստուել են քաջ.
Հրացանները ուսերին,
Փամփուշտները աջ ու ձախ:

Հընազանդ կարգով շարուած,
Իրանք առիւծի պէս քաջ.
Խմբապետը հրահանգ տուեց
Գնալ դէպի յառաջ յառաջ:

Ոսկեզօծ բաշլուղներով.
Լազի չորեր թանկագին,
Գընում էին դէպի Սասուն
Օգնելու Անդրանիկին:

Հայ քաջերը դիրք մտան,
Թշնամուն պաշարեցին,
«Ամէն կողմից կրակ տուէք.
Կոտորեցէք», —գոռացին:

Եաման եկաւ ջան Ֆիդան,
Սարսափ տիրեց բանակին,
Փախչում էին դէպի լեռներ,
Վախկոտները խըմբովին:

Խաւարից լոյս ծագեցաւ,
Երեւում էին յոյսեր.
Դաշնակցութեան ցանած սերմեր
Տալիս էին նոր-նոր բոյսեր:

Մեր ապագայ սերունդից,
Ըսպասում ենք մեծ յոյսեր.
Կերգենք միշտ ազատ կրծքից
Խրախուսալից վեհ երգեր:

ԽՐԱԽՈՅՍ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԵԱՆ

ՀԱՅՐԵՆԵԱՑ սիրով վառուած վեհ սրտեր,
Ի՞նչ կը յապաղէք ելլել ի հանդէս.
Ի՞նչ կը յապաղէք — սիրտ կը դիմանա՞յ,
Սիրտ՝ որ ազգասէր ըլլալ կը ցանկայ,
Տեսնել հայրենեաց բիւր աղէտ,
Եւ դու անտարբեր ցարդ մնալ յաւէտ:

Խեռ ատելութեան չար նախանձու
Սերմերն ու հողին հեռու մղենք, հեռո՛ւ,
Սիրտ սրտի կապուած, թեւ թեւի տուած,
Հայրենեաց սիրոյ ասպարէզն բացուած,
Օ՛ն վազենք յառաջ, ի սուրբ խաչ վառաց
Օ՛ն երթանք յառաջ, և անձնանուէր,
Հայրենեաց օգտին ըլլանք ուխտանուէր:

Հա՛յ, մի վհատիր, սիրտ առ և սիրտ տուր.
Տըկարք զօրանան, քաջք խրախուսին.
Վատերը բացուին, վատերը զատուին,
Ճշմարիտ Հայերն յառաջ թող անցնին,
Խաչ, սէր են նշան ճշմարիտ հայուն:
Խաչ, սէր են պարծանք ճշմարիտ հայուն:
Սիրոյ դրօշներ
Թող արդ պարզուին,
Հաշտութեան ձայներ
Թող արդ հնչուին,
Հայն մէկ սիրտ եղաւ,
Սիրով միացաւ,
Սուտ են որ ասեն,
«Հայք զիրար կ'ատեն»:
Սուրբ Արարատեան մայր աթոռին գիրկը
Եկէք Հայկազունք եկէք միանանք,
Եւ սփոփենք մեր վշտացած մօր սիրտը,
Օրհնելով Տէրը որ մեզ պարգեւեց,
Մեր ազգին կապն ու հոգին
Ազգային սահմանադրութիւն,
— Յաւերժացիր արդիւնաւէտ:



Հայրենասէր

ՉԱՑՐԵՆԻՔԴ մոռցիր, կ'ըսեն օտարներ,
Անիծեալ է, լոկ փուչ ունի և ուեր,
Մեր հող դրախտ, ջուրն օշարակ,
Օդը քաղցր է, օդը քաղցր է։
Եկուր պանդուխտ, արեւիդ անոր նուիրէ,
Թէև ամուլ ամայի ըլլայ երկիրս հայրենի,
Ես կը սիրեմ Հայաստան, ապրի կարիճ Հաւաստան։

Թող հայութեան առջև լռէ պատմութիւն,
Թող սիեզերք մոռնայ հայուն քաջութիւն.
Ես կը սիրեմ, չեմ մոռնար,
Աննման, աննման,
Իմ մայրենի այբուբեալ կիլիկիան.
Թէև ամուլ ամայի, ըլլայ երկիրս հայրենի,
Ես կը սիրեմ Կիլիկիան, ապրի կարիճ Կիլիկիան։

ՁԱՅՆ ՄԸ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

ՀԱՅՐԵՆԻՔԷՆ ողբի ձայներ կը լսուին,
Որք ապառաժ սիրտերն անգամ կը յուզեն,
Մի՞թէ դուք չէք լսեր այդ ձայն սիրտագին,
Որ ձեր թշուառ մայր կարձակէ իր սրտէն։

«Հայեր, մինչև ե՞րբ դիս պիտի մոռնաք,
«Ձեր հայրենիք ցե՞րբ ճնայ աւերակ։»

Ահ, անգութներ, որ հայ անուն կը կրէք,
Բայց այս ձայնին անկարեկիր սիրտ ունիք.
Ձեր մէջ չկայ Հայկի անուն, դուք հայ չէք,
Ձի մարիտ հայն կը սիրէ իր հայրենիք։

կեցցէ՛ յաւիտեան մեր հայ ազգութիւն,
Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»։

Հնա՞ր է որ մարդ չսիրէ հայրենիք,
Մինչ գազանն իսկ կը պաշտպանէ իր որջը,
Ի՞նչ անուն տանք այն հային որ է գործիք,
Օտարին ձեռք՝ իր հայրենեաց դաւ լարել։

կեցցէ՛ յաւիտեան մեր հայ ազգութիւն,
Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»։

Չէ՛, ալ մենք չենք կարող ճնալ անտարբեր,
Հայրենիքի երբ ձայնն զմեզ կը կանչէ,
Մենք բարձրագոչ ձայն տանք, յառա՛ջ, ո՛վ հայեր,
Եւ թող տեսնեն վատպուրականն ալ վատ չէ։

կեցցէ՛ յաւիտեան, մեր հայ ազգութիւն
Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»։

Հայկի թոռներ, տեսէք, Մասիս սարերէն,
Քառասուն դարեր կը դիտեն ձեր չարժուձեր.
Յառա՛ջ անվախ այն դրօշակի ետևէն,
Ուր կ՝ամփոփուին հայրենասէր քաջ հայեր։

կեցցէ՛ յաւիտեան մեր քաջ ազգութիւն
Եւ «Հայրենասէր Հայոց Միութիւն»։

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԳԵՂԵՑԻԿ ԵՐԳԸ

ՀԱՅՐԵՆԻՔ սրբազան, իմ սիրուն աշխարհ,
Թռչում եմ դէպի քեզ հոգուովս անդադար.
Բայց աւա՛ղ, այս բանտում փակուած եմ անտէր,
Պատերազմի դաշտում չեմ կռուում և ես:

Հանապազ տանջուեցայ քո ճակատագրով,
Սրտումս չդիթաների ձայներ կրելով.
Չեմ կարող մոռանալ իմ ազգ հարազատ,
Ա՛խ, կամ ոչնչանալ, կամ լինիլ ազատ:

Քաջ ընկերներովս հեչտ է ինձ կռուիլ,
Եւ սուրբ գործի համար քաղցր է մեռանիլ,
Բայց աւա՛ղ, այս բանտում փակուած եմ անտես,
Պատերազմի դաշտում չեմ կռուում և ես:

Զգիտեմ, ի՞նչպէս է կռիւն հրդեհում,
Ես չունիմ ոչինչ լուր, բայց լուրն է թռչում...
Տարուում է միշտ համբաւ սպանութեան ահեղ,
Թափում է ազգն արիւն, բայց ես չեմ այնտեղ:

Ա՛խ, քո ազատութիւն փոթորկի մէջ է,
Եւ վառ արշալոյսով քո օր կարմրում է.
Թո՛ղ այստեղ չարչարուեմ անծանօթ կապուած.
Միայն քեզ, հայրենի՛ք, տեսնեմ ազատուած:

Ց. ՔՈՒՉՈՒԲԷԿեԱՆ

ՎԱՅՐ ԸՆԿՆՈՂ ԱՍՏՂԵՐ

ՀԱՅՐԻ՛Կ, ասաց դուստրը հօրը,
Կապոյտ երկնքի վերայ
Որքան աստղեր փայլում են վառ,
Ասես, համար, թիւը չկայ:

Ասո՞ւմ են որ՝ ամենայն մարդ
Աստղիկ ունի երկնքում.
Ճշմարի՞տ է, ասա՛, հայրի՛կ,
Իմը ո՞րտեղ է փայլում:

— Այո՛, դստրիկ, այդ աստղերը
Ունին հաշիւ ու համար
Եւ մեզանից իւրաքանչիւր
Մի աստղ ունի իւր համար:

«Հայրի՛կ, տես, տես, աստղը թռաւ,
Յետքից պայծառ գիծ թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքից,
Միւս անգամ այլ չերեւեց»:

— Ո՛չ, իմ դստրիկ, հանգիստ կացիր,
Դա մեծատան մի աստղ էր,
Որ իւր օրում, իւր կեանքումը
Խիղճ ասածը չը գիտէր.

Աղքատները նորա դռնից
Գնչեր ցերեկ հալածուած.
Մի մարդ չը կար նրան ծանօթ,
Որ չը լինէր վշտացած:

«Հայրիկ, դարձեալ թռաւ մի աստղ,
Վայր ընկաւ նա երկնքից.
Հայրիկ, ո՞ւր աստղն էր արդեօք,
Որ զրկուեցաւ իր տեղից»:

— Ո՛չ, դստրիկս, հանգիստ կացիր.
Կեղծաւորի դա աստղ էր,
Որ իւր օրում ուղիղ մի խօսք
Մարդու երբէք ասած չէր:

Փարիսեան իր ճեմերով
Աշխարհ խաբեց, զարմացուց.
Այդ պատճառաւ Աստուած նորա
Աստղի լոյսը խաւարցուց:

«Հայրիկ տես, տես, միւս աստղ թռաւ
Եւ դիծ անգամ չը թողեց.
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց»:

— Ո՛հ, սիրական, խաղա՛ղ մնա,
Բռնակալի դա աստղ էր.
Որ աշխարհը իւրեան գերի
Ծընած օրից կարծել էր:

Շատ հալածանք, շատ նեղութիւն
Պատճառեց նա իւր կեանքում.
Շատ տուն քանդեց, շատ մարդ զրկեց.
Գութ չունեցաւ իւր սրտում:

«Ապա այն ի՞նչ աստղ է, հայրիկ,
Որ այնպէս պարզ վառվում է,
Նորա մաքուր, պայծառ լոյսը
Զորս կողմը բակը բռնել է»:

— Ո՛հ, իմ դստրի՛կ, աղօթք արա,
Դա ծերունու մի աստղ է,
Որ իւր կեանքում ոչինչ մարդու
Ոչինչ վնաս տուած չէ:

Այն լուսաւոր աստղն է նորա
Առաքինի գործերը.
Աղօթք արա որ երկարեն
Նորա կեանքի թելերը:

Շատ օր չանցաւ, երկնքիցը
Մի այլ վառ աստղ պակասեց.
Ո՞ւմ աստղիկն էր որ ընկաւ,
Բան հարցնող չերևեց:

Մինչդեռ լուսինն արծաթափայլ
Լոյս էր տալիս գիշերին,
Խորհրդաւոր մինչ տիրել էր
Անվրդով, խոր լռութիւն:

Մի սրտաթափ, մաղերն արձակ
Վազեց աղջիկ սգաւոր
Դէպի գիւղի գերեզմանքը,
Ծունկ չոքեց մի չիրմի մօտ:

«Հայրիկ, ասաղիկդ չէ փայլում,
Դու յաւիտեան քընեցիր.
Առ ինձ քո մօտ, քո ծոց, քո գիրկ,
Ինչո՞ւ անտէր թողեցիր:

Իմ ասաղիկն առա՛ նայնպէս,
Որ չըփայլի, հերիք է.
Այս աշխարհը ինձ առանց քեզ,
Մութն ու խաւար մի բանտ է:»

Մի մարդ չը կար որ նկատէր,
Որ հեռւեռւալ գիշերին
Պակասեցաւ երկնքիցը
Մի պայծառ աստղ խնդագին:

Երրորդ օրը շատ սրգաւորք
Փորեցին մի գերեզման,
Ուր թաղուեցաւ իւր հօր մօտին
Մարմինը խեղճ աղջկան:

«Հայրիկ տե՛ս, տե՛ս, աստղը թռաւ,
Ցետքից պայծառ գիծ թողեց,
Աստղիկն ընկաւ երկնքիցը,
Միւս անգամ այլ չերևեց...»

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ՎԱՆԵՑՈՑ ՀԱՅՐ-ՄԵՐԸ

ՀԱՅՐ մեր երկնաւոր, սուրբ ըլլայ քո անուն,
Հային երկնաւոր տուր արքայութիւն.
Ամէն բանի մէջ քու կամքը թող ըլլայ.
Միայն թէ հայը լուծի տակ չի լայ.
Ո՛չ չոր, ոչ կակուղ հացդ մենք կ'ուզենք,
Միայն տուր ամէն հայի ձեռքը զէնք.
Չենք խնդրիլ թողնել մեր անձանց պարտքը,
Թաք վերցուր թիւրքի խայտառակ հարկը.
Գլորէ մեզ Աստուած մարտի փորձութեան,
Որ չուտ ազատի ազգը քո Հայկեան:

ԳԱՄԱՌ — ՔԱԹԻՊԱ

ՍԳԱՒՈՐ ԵՐԳ

ՀԱՆԳԻՍՏ իմ անոյշ
Անցար գնացիր.
Միայն վէրք անբոյժ
Սրտումս թողեցիր:

Սոխակ գեղեցիկ
Կանաչ պարտիզում.
Երգելով քաղցրիկ
Ինձ չէ զուարճացնում:

Քեզանով միայն
Երջանիկ էի.
Տիկին իմ քնքուշ խանն
Ինձ կարծում էի:

Ցերեկը մենակ,
Փակուած սենեակում
Ողբում եմ անյագ—
Ոչ ոք չէ լսում:

Գիշեր է գալիս—
Մահիճ եմ մտնում.
Տրտում է հոգիս.
Քունս չէ տանում:

Մազեր թուխ երկայն,
Աչեր գրաւիչ.
Ի՛նչ հասակ, ի՛նչ ձայն
Ի՛նչ հոգի կարիճ:

Ո՛հ, սիրտս այրուած
Ողջ քեզ է կանչում.
Ողջ քո անմոռաց
Անունդ է յիշում:

Անգութ ինձ խաբեց,
Ուրիշին սիրեց,
Ա՛խ, նա ինձ վա՛ղ
Գերեզման դաշտ:

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ԻՄ ԵՐԳԸ

Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Սերտ բարեկամք անջատուած են ինձանից.
Թառամում եմ այս օտար երկրումը,
Մինակ բուսած ծաղկի նման դաշտումը:

Կամաց կամաց տարիները անցնում են,
Մեզ նորոգող գարուն ամառ դարձնում են.
Միայն իմ խեղճ կեանքը չունի ոչինչ նոր,
Ինձ երէկը կրկնուում է միշտ այսօր:

Ասպարէզիս նեղ է ճամբան ու փշոտ,
Խեղճութիւնս համարում են ինձ ամօթ.
Իմ վիճակին կարեկցութիւն մարդ չունի,
«Դա, ասում են, իր կեանքումը դարդ չունի»:

— Ես դարդ ունիմ, դարդս մեծ է ու պէսպէս,
Բայց չեն տեսնում ձեր աչքերը կարճատես. —
Երբ ես մտայ անհուրընկալ այս աշխարհ,
Քանի՞ րոպէ բախտը ժպտաց ինձ պայծառ:

Չո՛, ասացի, դարձել է իմ անիւը,
Լրացել է իմ վատ բախտի չար թիւը,
Յանկարծ փչեց անտուժելի հիւսիսին,
Թառամեցայ վարդ մանիշակ մայիսին:

Այսպէս չորցուց իմ նազելի հասակը,
Իմ անողորմ, անագորոյն վիճակը.
Ա՛խ, մօտեցիր օրհասական, օր մահուան,
Ինր քու հետը ևս հոգ ու նեղ գերեզման:

Թող սառ լինի իմ նոր տան յատակը,
Ծանր քար է վրէս ծածկած վերմակը.
Բայց ա՛խ, երբոր կ՝անցնի ամիս ու տարի,
Կը մաշուռտի գերեզմանը այն քարի:

Հետքը անգամ չի մնալու իմ խաչին,
Իմ անունը, իմ յիշատակ կը կորչին.
Բայց կ՝ուզէի թողնել այստեղ մի արձան,
Որ գարէ դար մնար ամուր անկործան:

Ես երգեցի երգ սլորուն ու անուշ,
Իմ քնարի ձայնն էր մեղմիկ ու քնքուշ.
Միթէ այնքան անգո՞թ կը լինի Հեռա գետ,
Որ անունս անգամ կ՝անէ նա անհետ:

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՀԱՅՈՒՀԻՆԵՐ

Ես Հռոմի ձեզանից, հայուհինե՛ր, տարագրած եմ ես,
Օտար աշխարհում, հայուհինե՛ր, պանդխտած եմ ես,
Ասուած կը սիրէք, օրիորդնե՛ր, պահէք ձեր լեզուն,
Ազգ ու հայրենիք, օրիորդնե՛ր, և մեր հայոց տուն:

Օտարի խելքը, հայուհիներ, մեզ օգուտ չունին,
Օտարն է օտար, հայուհիներ, մեզ ինաս ունին.
Երբ լոյս կը բացուի, օրիորդներ, շուտով վեր կացէք,
Ազգ ու հայրենիք, եկեղեցի ձեր մխքը բերէք:

Մայրեր կը լինիք օրիորդներ, կունենաք զաւակ,
Պատրաստուեցէք անոնց հայոց մայրեր, մէկմէկ նահատակ,
Պաշտել սուրբ կրօն, հայուհիներ, սիրել սուրբ ուսում,
Այս է իմ աւանդ, հայուհիներ, զոր ձեզ կը թողում:

Գ. ՇԵՐԵՆՑ

ՀՆՉԱԿ

Հ ԵՌԱՒՈՐ երկիր նստած դու նժդեհ,
Հայրենեաց բախտին մօտուց ես տեղեակ·
Քարոզ քաջարի նոր սկզբանց վեհ,
Յեղափոխութեան ձայնատու Հնչակ:

Նոր գաղափարի քո ցանած սերման,
Ազնիւ պտուղներ հասուննան արագ·
Կարին ու Պոլիս որոտման նման՝
Անդրանիկ չարժմունք ծնաւ քեզ, Հնչակ:

Քար բռնակալը հայոց կեղեքիչ՝
Վախէն պահուեցաւ ոսկէ գահին տակ,
Ցուլ Եւրոպայի թրնդաց մեծ դահլիճ,
Հայը ցնծուեցաւ, կարմրեցաւ Հնչակ:

Այսօր քո սերմանց նոր պտուղք ահա՛
Հասան, կարմրին, արեան նմանակ,
Կենաց և մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հնչակ:

Կոչնակ հնչեցո՛ւր, հնչեցուր արագ,
Թո՛ղ հայք ոտք ելնեն — ծագէ մինչև ծագ·
Փչի՛ ժանտ չղթան, ծագէ նոր արև,
«Ազա՛տ ենք», հնչէ՛, ոսկեզօծ Հնչակ:

Մ· ՏԱՄԱՏԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Հեռու եմ քեզմէ օտար երկրի մէջ,
Եղած եմ պանդուխտ, սիրուն հայրենիք.
Ի լեռ և ի ձոր կ'ընեմ ել և էջ,
Քեզ չեմ տեսներ ես, սիրուն հայրենիք:

Ճարտարապետ չեմ Միլտոնի մը պէս,
Որ դրախտի մը նմանցընեմ քեզ
Ոչ ալ իւնկի պէս հնաբուխ եմ,
Որ գովաբանեմ սիրուն իմ երկիր:

Տելեմաքի պէս քաշեմ արկածներ.
Միշտ պատահին ինձ ձախորդ դիպուածներ.
Քեզ մոռնալո՞ւ եմ, երբէք, չեմ կարծեր,
Ծնած եմ քու ծոցդ, սիրուն հայրենիք:

Կ'ևրևակայեմ մտքիս մէջ ես դուն,
Ոչ թէ ցերեկներն, այլ գիշերն ի բուն,
Երբ մտաբերեմ կամ կ'ըլլամ ի քուն,
Երազներս ես դուն, սիրուն հայրենիք:

Լեռներդ ծաղիկով, դաշտերդ չուչանով
Լեցուն ես միշտ դու անուշ հոտերով.
Սարերն ու ձորերն կանաչ խոտերով,
Տեսնէի մէյ մ'ալ, սիրուն հայրենիք:

Երբ միտքս կուգայ իմ մանկութիւնս,
Ձեմելով քու մէջ վայելած սէրս,
Յայնժամ արտասուօք լնուն աչերս,
Ուժաթափ կ'ըլլամ, սիրուն հայրենիք:

Երբ կուգայ գարուն, կը բացուին վարդեր.
Ամբակ կը կազմեն երիտասարդներ,
Պար առեալ ցնծան քու օրիորդներ,
Ինդալով բերկրիմ, սիրուն հայրենիք:

Որպէս պատգամներ Մովսէսին Սինա՝
Ի քեզ յայտնեցաւ տառն Մեսրոբայ.
Ի պարծանս տան Արամայ, Հայկայ.
Պարծանք ես հայոց, սիրուն հայրենիք:

Հերիք ալ Հայեր

Հերիք ալ հայեր, այսչափ լռութիւն,
Դատաւորներու մեր այս գերութիւն,
Մեզ ի՞նչ վայել է այսչափ լռութիւն.
Ազգասեաց սրտեր, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, ի՞նչ խնդաք փրկեալ ազգի պէս,
Իշխան և ընչեղ՝ գխտուն մարդու պէս,
Մեզ ի՞նչ վայել է ապրիլ հայու պէս.
Դպրոց ատողներ, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, խորհեցէք ի՞նչ վիճակ ունիք,
Կրօնք, ազգութիւն, հայու սիրտ չունիք,
Մեզ ի՞նչ վայել է ծախսել հայու պէս.
Եղբայր ատողներ, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, ի՞նչ կ'ապրիք ազատ մարդու պէս,
Ո՞ւր ևն թագն ու տուրն ամէն ազգի պէս,
Նայեցէ՛ք չորս դին, կա՞յ ազգ ձեզի պէս.
Ամէնուն գերի՛, հերի՛ք, ալ հերիք:

Հայե՛ր, խորհեցէք, ի՞նչ վիճակ ունինք,
Ո՛չ կեանք, ո՛չ պատիւ, ոչ աի մ'հոգ ունինք,
Ամէնուն ձեռքը մենք ևնք խաղալիք.
Ջապրած ալ մեռնինք, հերի՛ք, ալ հերիք

Արդար Զայրոյթ

Հերի՛ք, որդեակք այսքան տարուան տառապանք,
Հերի՛ք, դաժան անգութ քիւրդի ոտն ինկանք,
Քանի խոնարհ գլուխ տուինք գայլերին,
Այնքան ծանր բեռներ դրին մեր վզին:

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՝ մենք հարազատ
Հին քաջերի արիւնից ենք և ազատ.
Թէև չունինք ոչ սուր, ոչ թուր, ոչ նիզակ,
Մեր բահերն ալ կ'անեն նրանց չանսասակ:

Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի,
Նրանք մարդ չեն, այլ գազաններ վայրենի.
Մերն է ձիրքը, մերն է ուսում ու հանճար.
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար:

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՝ մենք. ևն:

Նրանց է մեր կոյս աղջկունք, հարսունքը,
Նրանց է մեր ճակատ քրտանց արդիւնքը
Նրանց սրի ծայրն է կարծես մեր հոգին.
Նրանց գամբռ մեզնից շատ է թանկագին:

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՝ մենք. ևն:

Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում,
Որոնք մեր վրայ լռիկ արցունք են թափում,
Զեն խնայիլ թև ու թիկունք, կը հասնին,
Շուտով կը գան, կը միանան սուրը գործին:

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ՝ մենք. ևն:

ՄՆԱԿԵԱՆ

ՀԷՅ ԻՄ ՍԻՐՈՒՆ

Հէյ իմ սիրուն, հազար սիրուն,
Դրախտի խնձոր աղուշ մաղուշ,
Ախ եղեգնի շաքար ծորուն.
Բայց նրանից քաղցր ու անուշ:

Սիրուններում ընտիր սիրուն,
Ի՞նչ լաւ է գծեր քեզ Աստուած.
Կաթնով շաղուած են մոլորուն
Քո թաքցրած չամամ ծծեր:

Եար կը մեռնիս կը գայ օրը,
Մոգդ երկինք չես տանելու,
Ճիճուն կուտէ քո այդ բոլորը
Միթէ ի՞նձ ես լոկ զրկելու:

ՎԱՐԴՈՒՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ մեր թշնամին իր սուրն է զրել,
Իր օրհասական սուրը մեր կրծքին,
Ականջ չէ դնում մեր լաց ու կոծին:
Ասացէ՛ք, եղբարք, հայեր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք:

Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապոյրով սիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհից Հայկայ անունը,
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեղանից թափ, և՛ խօսք, և՛ զէնք.
Հիմի է՞լ լռենք:

Հիմի էՙլ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրբ — պաշտպան մեր անձին,
Մշակի ձեռքից էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր չղթան կըռեց.
Վա՛յ մեզ, չղթայով կապուած գերի ենք,

Հիմի էՙլ լռենք:

Հիմի էՙլ լռենք, երբ մեր թշնամին
Սոսկալի զէնքը բռնած մեր գլխին՝
Կուլ տալ է տալիս արտասուք առատ՝
Աղէկաբոյս բոզոք վազուց ապիրատ.
Մեր գլուխ լալու ներքատ ո՞ւր փնտռենք,

Հիմի էՙլ լռենք:

Հիմի էՙլ լռենք, երբ մեր թշնամին
Լիրը գոռոզութեամբ լցրած իր հոգին՝
Արդարութեան ձայնն հանած իր սրտից՝
Արտաքսում է մեզ մեր բնիկ երկրից.
Պանդո՛խտ, հալածակա՛ն եղբարք, ո՞ւր դիմենք

Հիմի էՙլ լռենք:

Հիմի՞ էլ լռենք, երբ մեր թշնամին
Անհոգ մեր բերած ծանր զոհերին,
Իր լիրը, նզոված ձեռքը կարկառից,
Ազգութեան վերջին կապը պատառից.
Հայի կորուստը մօտ է, ի՞նչ անենք,

Հիմի էՙլ լռենք:

Հիմի էՙլ լռենք, երբ մեր թշնամին
Արհամարհելով մեր փառքն ազգային՝
Մեր եկեղեցուն ձեռնամերձ եղաւ,
Գառնապղեստ գայլին մեր գլուխ դրաւ.
Սուրբ խորան չունինք, արդ ո՞ւր աղօթենք,

Հիմի էՙլ լռենք:

Հիմի է՞լ լռենք, մարդիկ ի՞նչ կասեն,
Երբ մեր տեղ քարինք, ապառաժք խօսեն,
Ջե՞ն ասիլ որ հայք արժանի են
Այդ սարկական անարգ վիճակին.
Մեր սուրբ քաջ նախնեաց գործերը գիտենք,
Մինչև ե՞րբ լռենք:

Թո՛ղ լռէ մունջը, անպատմելոյծը,
Կամ որոնց քաղցր է թշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝
Է՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք,
Ու այնպէս լռենք:

ԳԱՄԱՌ-ՔԱՔԻՊԱ.

ՎԱՀԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Հիմի է՞լ խօսենք, եղբարք, հիմի է՞լ,
Երբ ընտանեկան երկպառակութեամբ,
Ուրիշ բան չունենք, բայց իրար դաւել,
Եւ սարսափելի ազգութեամբ
Մեզ նախնեաց ուխտը ատքով կոխել ենք,
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ քաջն Վարդան
Վահան հազարից՝ հազարով մնաց,
Մինչ մնայել էր պարսից լուկ Մատեան
Գունդը՝ մեր Վահան հազարի դիմաց.
Երբ մեր վատութեամբ ո՛ղջ կորուսել ենք,
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ օտարից չատ
Մենք ենք մեր ազգի արիւնը խմում,
Մոխրատոով լցրինք Դուին, Արտաչատ,
Ծխի մէջ կորաւ խաչն եկեղեցուն.
Երբ այս ամէնը մենք կատարել ենք՝
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ հրապարակում
Պարսիկը առակ առել է հային —
«Թէև ասորու նման աշխարհում
Չկայ մի վատ ազգ, բայց քանց ասորին
Էլ վատ է հայը»: Մենք այդ տանո՛ւմ ենք,
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ իշխանութիւն
Ծախւում է անարգ հայկատակներին,
Մինչ ասրուկ մարդիկ նստան մեր գլխին,
Ու մեզ կարծում են իրենց հող ոտքին.
Ու մենք մեզ կոխող ոտքը լիզո՛ւմ ենք,
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ Լուսաւորչի
Բնիկ ժառանգի թևերը կտրած՝
Անարգ պարսիկը այս ու այն թեմի
կարգում է տեսուչ ըստ իր չար կամաց.
Ու մենք դեռ «կեցցէ՛ Արին» գոռում ենք,
Հիմի է՞լ խօսենք:

Հիմի է՞լ խօսենք, երբ ձեռք ենք տալիս,
Երբ ողջունում ենք մենք այդ չքերին,
Որոնք դրան չուն են և մեզ տեսնելիս
Շուտ դիմակները դնում են երեսին.
Այդ պիսիներին գարձեալ պատում ենք,
Հիմի է՞լ խօսենք.

Էլ մեր երեսին ճա՞ց մի կաթիլ
Ամօթի սուրբ ջուր, որ բերան բանանք.
Ո՛չ, թէ չենք ուզում հողից հող կորչել՝
Թչնամու արեամբ մեր թրին ջուր տանք,
Ազգ, եկեղեցի փրկենք, ազատենք,
Եւ ապա խօսենք:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ



ՀԻՄԻ՞ ԷԼ ՉՈՒՏԵՆՔ

Հիմի էլ չուտենք, եղբայրք, հիմի է՞լ,
Երբ ոսպ, լուբիան ամբողջ Մեծ պատում
Մեր խեղճ փորերն են կըռկըռացնում,
Ահա զատիկը մեզ բերաւ ուտիք.
Ատացէք, եղբայրք հայեր, ի՞նչ անենք.
Հիմի է՞լ չուտենք:

Հիմի է՞լ չուտենք, երբ քառասուն օր
Ապաչխարեցինք ու պատ պահեցինք,
Ի֊ժան ապրանքներ թանկ թանկ ծախեցինք,
Իւղ, պանիր, գառ կէս գնով առինք,
Թանկագին հաւեր էժան գնեցինք.
Հիմի է՞լ չուտենք:

Հիմի է՞լ չուտենք, երբ համոզուած ենք
Թէ աչխարհում մենք լաւ ապրելու ենք,
Շատ մեզք գործել ենք, բայց չենք կարմրել,
Թող կարմրեցնի կախէթու գինին,
Իսկ հաւկիթներն էլ մենք կարմրցնենք.
Հիմի է՞լ չուտենք:

Հիմի չ՚ենք չուտենք երբ մենք դարպ չունենք,
Մեր դարդը փորն է, պէտք է լըցնենք,
Լաւ խորովածը իր հոտը բուրեց,
Մատաղաշ գառնուկը փուռը կարմըրեց,
Մեր բերաններն էլ քաղցից չրոտեց.
Հիմի չ՚ենք չուտենք:

Հիմի չ՚ենք չուտենք, երբ Հայաստանում
Այս տարի՝ փառք որ սով չէ լսուում,
Դա էլ մի դարդ էր, քանզի մեզանից
Շատունակ հացի փող էին ուզում.
Իսկ մենք այս տարի էդ դարդից պրծանք,
Հիմի չ՚ենք չուտենք:

Հիմի չ՚ենք չուտենք, երբ մեր փորերը
Միշտ լաւ ուտելով մենք հաստացրինք,
Հաստափոր անուան իսկ արժանացանք,
Անիծեալ սիսեռը մեր գահլէն տարաւ,
Եւ մենք Մեծ պատում քիչ լղարացանք.
Հիմի չ՚ենք չուտենք:

Հիմի չ՚ենք չուտենք, երբ օրացոյցում
Ուտիք է գրուած մինչև Համբարձում,
Շատ հայեր Մեծ պատում ուտիք են ուտում,
Աստմ են հայ չենք, և չեն ամաչում,
Բայց մենք Մեծ պատը՝ ցայիմ բռնել ենք.
Հիմի չ՚ենք չուտենք:

Հիմի չ՚ենք չուտենք, խոզերն ի՞նչ կ՚ասեն,
Երբ մեր տեղ նրանք, գոմէշներ խօսեն,
Չեն ասիլ, դոքա խոտ ուտողներ են,
Եւ իրանց բերնի համը չըգիտեն.
Ամէնքս մսակեր քաչ գազաններ ենք,
Մինչև ե՞րբ չուտենք:

Եկէ՛ք անխնայ գառն ու հաւն պատռենք,
Տըռաքուելու չափ լալաթով ծամենք.
Ու այնպէս լռենք:

ԿԸՈՈՅ

Հնչակեան Գինուորին

Հնչակեան գինուոր, ուժգին, համարձակ,
Շողացուր միշտ աւուր, աւուրեցուր գնդակ,
Առանց տատանման անվեհեր թափով,
Դիմիր ու դիմիր դէպ վեհ նպատակ:

Նուիրիր կեանքդ քո եղբայրներին,
Զոհ բեր թշնամիդ քո կարուկ աւուրին,
Հակառակորդից դու մի՛ երկնչիր,
Դեզ դարման եղիր արնոտ վէրքերին:

Զարուեթեան ոգու թոյնը սպանիչ,
Թող հեռու կենայ սրտիցդ, ա՛վ կարիչ,
Իրրև դրօշակին հարազատ պաշտպան՝
Ատի՛ր միշտ ոխը, քէնը քայքայիչ:

Անխարդախ ոգով միշտ յառաջ գնա,
Բռնակալ ոյժը ջնջելու ջանա՛.
Յեղափոխութեան թշնամու հանդէպ
Եղի՛ր անողորմ, անգութ և անխնայ:

Կարիչ հնչակեան, ուժգին համարձակ
Շողացուր միշտ աւուր, աւուրեցուր գնդակ,
Յեղափոխութեան սրբազան դաշտում
Միայն այդ լինի քո վեհ նպատակ:

ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒՆ

(«Ձայն մը հնչեց»-ի եղանակով)

ՀՐԱԲՈՒԽ մը ժայթքեց Զէյթուն իր վեհ կողերէն,
Սրբեց մուրը նախատինքի հայ ճակատներէն:

Քաջ Զէյթունցիք ձըգեցին տուն և հպարտ ու վէս
Զարկին Թրքաց վատ խուժանը առիւծների պէս:

Հոն կանգնեցին սուրբ դրօշակ արեամբ ներկեցին
Անոր վրայ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ կամ ՄԱՀ գրեցին:

Եւ Հայաստան վեց դարերու քնէն արթնցած
Ծնելասէր հայ մայրերու «Մի՛ լաք» որոտաց:

Ահա ես եմ, Մայր մայրերու, տէր եմ զաւակաց.
Ես՝ որ դարեր իրենց համար լացած արտասուած:

Մահն ամէն տեղ մէկ է տղե՛րք, վայ որ վատանամ
Մեռէք յօժար, որ փրկութեան օրը մօտենայ:

Սևեր պատած իմ հովիտներս, լեռներ ու ձորեր,
Ձեր արիւնով թող ներկուին վարդ վարդ կարմիրներ:

Որ մաշիկի պատռտուած անարգ ցնցոտին
Ըլլայ յետին պատանքն աղտոտ, հոտած Սուլթանին:

Հապ օ՛ն, իղէն Զէյթունցիներս, ձեզ հետ թո՛ղ ըլլան
Մեծ խաչակրին աչքն ու թևեր ձեզ պատսպարան:

ՏԻՒՆՃԷ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՐԳ

ՀՈՒՐ բարկութեան համայն հայոց,
Բորբոքեալ զերթ բոց բարկածայթ
Ու կայծականցս բիւր բիւրոց,
Զայրոյթ ի մարտ սառս սառնապատ,
Զի՞ վարանիմք արդ ասա, եղբայրք,
Դատարկ ձեռամբ, դատարկ ձեռամբ:

Ձեռամբ յԱրտազ, Տղմուտ, օ՜ն դրոյդ ի դրոյդ
Ի դրոյդ թռչիմք սլանամք, սլանամք, սլանամք:

Հուր զէն ի ձեռին
Եւ վրէժ ահագին,
Սպասեն և կան
Քաջք Արշակունեան:

Եւ յոր երկինք հանդիսատես
Զաշխոյժ նախնեաց յեղու ի մեզ:

Հապօ՜ն, քաջք քաջաց,
Ընդ Սասան կուրծս
Մխեսցուք մկունս
Ուժգին ի հարուած:

ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀՕՅ ՆԱԶԱՆ ԻՄ

ՀՕՅ, ՆԱԶԱՆ ԻՄ, նազան իմ,
Ջան նազան իմ, նազան իմ,
Նազա՛ն, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Ծաղիկ քաղելով եկար:

Գարնան սիրուն ծաղիկ ես
Հօ՛յ նազան իմ, նազան իմ,
Ինձ համար աղաւնիկ ես.
Ջան նազան իմ, նազան իմ.
Գըլխիս վրով պըտիտ տուր,
Հօ՛յ նազան իմ, նազան իմ:

Նաշխուն թև թխթեռնիկ ես,
Ջան նազան իմ, նազան իմ,
Եար ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Շաքար ծամելով եկար.
Քիչմիչ ուտելով եկար:



ՁԱԽՈՐԴ ՕՐԵՐԸ

Ձախորդ օրերը ձըմռայ նըման կուգան ու կերթան,
Վհատեըլու չէ, վերջ կունենան, կուգան ու կերթան.
Դառն ցաւերը մարդու վերայ չեն մնայ երկար,
Որպէս յաճախորդ, շարուէ - շարան կուգան ու կերթան:

Փորձանք, հալածանք և նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան՝ կուգան ու կերթան.
Աշխարհը բուրաստան է յաւուրկ, մարդիկը՝ ծաղիկ,
Որքան մանիչակ, վարդ, պալասան՝ կուգան ու կերթան:

Ոչ ուժեղը թող պարծենայ, ոչ էլ տկարը թող տխրի,
Փոփոխակի անցքերը զանազան՝ կուգան ու կերթան.
Արևը առանց վախնալու ցայտուն է լոյսը,
Ամպերը դէպի աղօթարան կուգան ու կերթան:

Երկիրը ուսեալ գաւակին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական՝ կուգան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է, ՋԻՒԱՆ, և ազգերը հիւր, —
Այսպէս է կանոնը բնական — կուգան ու կերթան:



ԿԱՐՆՈՒՅ ՂԸՐԹՈՒՄԸ

ՁԱՅՆԸ հնչեց Էրզրումի հայոց լեռներէն,
Թունդ թունդ ելան հայի սրտեր զէնքի չաչխունէն։

Հայ գիւղացին պարուց ի վեր սուր զէնք չը տեսած,
Դաշտը թողուց, սուր, հրացան բահի տեղն առաւ։

Քնքուշ կեանքը ծանր է թուում հայ օրիորդին,
Զէնքը ձեռին յորդորում է հայոց քաջերին։

Հայ տիկինը սոխպում է ամուսնուն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ, առնալ։

Հայ ծերուկը յուսը ձեռին լալով խնդրում է,
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ։

Անմիութիւն տունը քանդող հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ տեղի տուաւ միութեան ձայնին։

Լսեց թուրքը ու սառեցաւ արիւնը վատին,
Չէր երազել հային տեսնել նա այդ վիճակին։

Եւրօպային լուրը հասաւ չարժման հայ գեղջկին,
Ուրախական ողջոյն տուաւ հայրենասէրին։

Ցնծա՛, մայր մեր, ո՛վ Հայաստան, որդիքդ միացան,
Ութը դարու սուգ ու թախիծ քեզնից վերացան։

Ուսումն ու լոյս ազատութիւն արդ քեզ են ընկեր,
Սուր, հրացան, եռանդ ազգի պաշտպան անվեհեր։

Ուրախացաւ մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,
Հին դարերու սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ։



ԲՈՂՈՔ ԱՌ ՆԵՐՈՆԸ

ՁԵՌՔԵՐՍ կապած, ոտքերս շղթայ,
Կ'ասէ Եւրոպան «հէ՞ր չէլաք ոտքի,
Ձեզ ազատութիւն, ձեզ օրէնք չի կայ,
Տարէ՛ք, կրեցէ՛ք դուք կեանք ստրկի»:

Վեց հարիւր տարի մեր երակներէն
Կա՛թ, կա՛թ ծորեցաւ մեր վերջին արիւն,
Եւրոպան կ'ասէ. «Շուռ գանք հայերէն,
Հայի մէջ չը կայ ուժ ու քաջութիւն»:

Ամբողջ Հայաստան ասեղ չէր մնացել,
Հայք «կ'ասեն, ինչո՞ւ թո՛ւր չի վերցուցին».
Միթէ փառօղի հո՞գս պէտք էր անել,
Թէ պէտք էր բրդել չոր հաց քաղցածին:

Եւրո՛պ, մոռացա՞ր երբ Ջրադաշտը
Ձեռքը թուր կուգար չիտակ քու ծոցը.
Բայց հայի աչեղ Աւարայր դաշտը
Շիջուց մոլեռանդ այն կրօնի բոցը:

Ե՛րօպ, մոռացա՞ր այն կուռ հարուածը,
Որ պատրաստել էր իսլամ՝ քո որդւոց,
Հայը չուզեց քու արտօսր ու լացը,
Ֆաղաքաց հրդեհ, խաղխաղանք մարդոց:

Երկերիւր տարի արիւն թափելով,
Դէմ տուեց ահեղ, ուժգին այն գրոհին
Մինչև որ ուժէն ինկաւ թշնամին...

Ե՛րօպ, մոռացա՞ր, երբ քո քաջերը
Անապատի մէջ Ճեպին քաղցած,
Ի՞նչ պիտ օգնէին նոցա դէնքերը,
Թէ որ հայք նոցա չտային կուշտ հաց:

Ապերա՛խտ Եւրօպ, յիշէ՛ հայերուն
Դու չատ մի՛ խաբուիլ սուրի շաչիւնէ
Արիւն վօթելը չէ առաքինութիւն,
Եւ ո՛չ նա ազատ ոգու նշան է:

Մենք խաղաղութիւն փրկչէն սովրեցանք
Նեղիչին ներել՝ — Աւետարանէն.
Մի՞թէ մենք այսօր պատուհասեցանք:
Մի՞թէ խարուեցանք մեր բարերարէն:

Ինչերո՞ւս պէտք առաքինի վարք,
Է՞ր չեղանք հայքս արիակայ մարդասպան,
Անշուշտ կը դասէր մեզի ազգի կարգ
Արիւնածարաւ գոլած Եւրօպան:

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ԴԻՀՈ ՄՆՆԻՐ ՄՆՆԻՐ

Չէթ եմ ածել ականջներդ,
Նոր չինեցիմ սըվլիկ.
Դէ՛հ, հուտ չարժիր լայն թևերդ,
Ոտեր չինէ սըրվտիկ։
Մանիր, մանիր, իմ ճախարակ,
Մանիր սպիտակ քիւլաներ.
Մանիր թելեր հատու ու բարակ,
Որ ես հոգամ իմ ցաւեր։

Տիզբանիկս գուլպայ չունի,
Դաչտ է գնում օտարաց,
Գաբրիէլա չուխա չունի,
Մէջտ անում է սուգ ու լաց։
Մանիր, մանիր, իմ ճախարակ, ևն.

Զրուալ չունինք, չաթու չունինք,
Ոչ ամարէն, ոչ պարան,
Այսպէս աղքատ դեռ եղած չենք,
Կըտըրուել է ամէն բան։
Մանիր, մանիր, իմ ճախարակ, ևն.

Դեռ հարս էի, որ գործեցի
Ֆանի կարպետ խալիչա,
Բայց դրանցից չուտ գրկուեցի,
Հիմա չունիմ մի քհչա.
Մանիր, մանիր, իմ ճախարակ, ևն.

Կարմիր օրս երբ անցաւ
Եւ պարտք մնաց թէև քիչ,
Պարտատիրոջ սիրտն ալ անցաւ —
Եկաւ տարաւ ամէն ինչ։

Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ

ԿՈՐՆԾ ՀՈՐԹՐ

Չիւնն էր գալիս փաթիլ փաթիլ,
Հետն էլ անձրև կաթիլ կաթիլ։
Այդ մէջտեղին մի պառաւ կին
Հորթ էր պտրում դաշտի մէջին։

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծք ու ծրծեր կաթով լիքը,
«Հորթուկս ո՞ւր է» նա բառաչեց.
Խեղճ պառաւին լացացըրեց։

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Ճանկարծ լսուեց մի բարակ ձայն,
Կոչն իմացաւ որ հորթն է այն։

Կովը վազեց բառաչելով,
Իսկ պառաւը սրնգաբնգալով.
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծրծերը բերանն առաւ։

Ծրծեց բոլոր կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չը թողեց,
Բայց պառաւը այս անգամին
Սիրով ներեց չար հորթուկին։

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ՄԻՈՒԹԻՒՆԸ ՉՕՐՈՒԹԻՒՆ Է

Ձիներն հատ հատ երկընքէն վար կը թափին,
Բայց երբ կ'իջնեն, մեղմով կ'ատեն ընկերին.
Դուն ալ, ես ալ, թոյլ էակները, ջրի պէս
կը հալինք՝ թէ չըմիանանք պնդապէս.
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց երբ մէկտեղ ենք մենք, լեռն ու դաշտը կը ծածկենք:

Անձրև կուգայ. ջուրի փոքրիկ կաթիլներ
Մէկտեղ կ'իջնեն և կը հանեն մեծ ձայներ.
կ'ատեն ի՞նչ կայ աւելի թոյլ քան թէ ջուր,
Բայց միութեանս չի դիմանար նոյն իսկ հուր.
Մենք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց երբ մէկտեղ ենք մենք, մեծ գետեր կը կազմենք:

Քամին փչեց, թէև ամառ, — տերևներ
Դողդղալով կը փըսփըսան իրենց մէջ —
Այս քամին մեզ զատ զատ ամէնքս կը թափէր,
Բայց շատին վրայ՝ կ'անէ միայն ել և էջ.
Մէնք ամէնքս մէն մինակ ի՞նչ կրնանք, ոչինչ ենք,
Բայց մէկտեղ՝ մենք մարդերն արևէն կը ծածկենք:

Շատ տկար են ծիծեռնակները, բայց խըմբով՝
կը ճամբորդեն գարնան ատեն ապահով.
Երբ գիշակեր թռչուն տեսնեն, խըմբովին՝
Մեծ աղմուկով կը փախցընեն թշնամին.
Այդ աղմուկ մեզ կ'ատէ. մենք մինակ տկար ենք,
Բայց երբ մէկտեղ ենք մենք, արծիւն ալ կը վանենք:

Բընականէն տրուած է այս մեծ օրէնք,
Որ տկարները թէև չունին ուժ և գէնք,
Միանալով կը զօրանան, կը կռուին.
Եւ միութեան չը դիմանար թշնամին.
Կը կրկնեն ձիւն, անձրև, տերև և թռչուն,
«Միացէ՛ք. միութեան մէջն է մեր զօրութիւն»:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԱՌ ԶԵՓԻՒՌՆ ԱՆՄՏՈՂԻ

ՁՄԵՌՆ անցաւ, գարուն է արդ.
Բլբուլի դէմ բացուում է վարդ,
Լեռներ, դաշտեր գորգով ծածկուած,
կենդանութեան արին նոր զարդ:

Շող լուսնեակին
Կոյսն ու ծաղիկ
Միմիանց դգուին
Սիրատարփիկ:

Ա՛խ, փափկասուն մանկիկ զեփիւռ
Անուշ հոտով ծաղկանց սփիւռ,
Աղբերց վրայէն լուսակարկաչ
Ի՜նչպէս թռչին կուսին առաջ:

Ղարսից Դուրս Եկան

ՂԱՐՍԻՑ դուրս եկան, Թաղրուր ժողուեցան,
Նոյն գիւղի մէջը կարգով շարուեցան,
Գիշերուայ ժամի զանգերը զողանչեցին,
Քաջերը սուրբ հաղորդութիւն առացան:
Քաջ Թումանը խնդրեց Թշնամեաց —
Զլեցին հերոսին, զոհուեցան միասին,

Քաջերը կանգնեցին սուրբ սեղանի առաջ,
Երդուեցին միասին սուրբ դրօշը բռնած,
Քայ խմբապետ Թումանը առաջն էր կանգնած,
Զայն տուեց, եղբայրք, դնանք դէպ առաջ:
Քաջ Թումանը խնդրեց Թշնամեաց, ևն:

Շտապով գիշերը գիւղից դուրս եկան,
Արշալոյսը բացուեց Բուրիկ ապրիւր հասան:
Անպիտան Թշնամիները չուտով տեսան
Երկու կազմից օգնութեան հասան:
Քաջ Թումանը խնդրեց Թշնամեաց, ևն:

Ղալա-Բողազից անչուշտ նկատեցին
Թշնամիքը քաջերին պաշարեցին,
Օգնող չեղաւ, անօգնական մնացին,
Ցոյները կտրեցին ու այնպէս զոհուեցին:
Քաջ Թումանը խնդրեց Թշնամեաց, ևն:

Քայ որսորդ Գէորգը չըկտրեց յոյսը,
Սուրբ դրօշակը պարզեց սուսնապետ Պետրոսը.
Գնդակով թափում էին Թշնամեաց յոյսը,
Անվեհեր կռուում էր Քեօսայ Հերոսը:
Քաջ Թումանը խնդրեց Թշնամեաց, ևն:

Մհերունի քահանան բռնել է խաչը,
Թումանից խնդրեց այսպէս Գուրդէն քաջը —
Կրակ բանանք դէպի Թշնամու չարքը,
Չի կարելի, ասաց խորամիտ քաջը:
Քաջ Թումանը խնդրեց Թշնամեաց, ևն:

Թումանեանցը մտածում էր մեր վիճակը,
Ասաց մի բանաք սոխի վրայ կրակ —
Սոսկալի կը լինի մեր վիճակ,
Թող մեր եղբայրներ քննեն մեր վիճակ:
Քաջ Թումանը խնդրեց Թշնամեաց, ևն:

ԳԱՐՈՒՆ ՄՇԵՑՈՒՆ

ԳԱՐՈՒՆ աղբէր, արի՛ մեր տուն,
Բուք բորանին ո՞ւր կերթաս,
Հերի՛ք այդքան թափառելով,
Սև դարդերդ քամուն տաս:

Անտուն աղբէր, արի՛ մեր տուն,
Էս էլ հայի օջախ է.
Իմ պաղ ջուրս, սև-չոր հացս
Քեզ պէս աղբօր հալալ է:

Մշա՛կ աղբէր, արի մեր տուն:
Դարդ ու ցաւդ ինձ պատմէ,
Լաց-լացի տանք էս մեծ տօնին,
Սիրտս լացի կարօտ է...

Տ. ՇՈՒՇ. ԿՈՒՌՂԻՆԵԱՆ.

ՃԱՄԲՈՐԴ ԿՈՒԳԱՅ

ՃԱՄԲՈՐԴ կուգայ, ի՜նչ խումաշի բեռներ կայ,
Արանիս ալ մեծ ծովեր ու լեռներ կայ:
Տուն եկուր սիրելիս, տուն եկուր,
Աշխարհս ոչինչ է, մեզ ալ մեռնիլ կայ:

Հագեր ես կարմիրդ, հաներ ես ալըդ,
Ես քեզի կարօտ եմ, ի՞նչ ա՛անեմ մալըդ,
Սաղլըղով չէր բերեր քեզ բերող մարդ,

Զարկեր կրակ տուեր, կէրիմ կու վառիմ:
Ջուրի պէս ծառուած եմ, ճամբուդ կու նայիմ
Տուն եկուր սիրելիս, տուն եկուր,
Արմուղանդ պէտք չէ, արևդ առ եկուր,

Բամբակ եմ ցաներ Խարբերդու օվան,
Պիւլպիւլ մի փլցուներ ձագերուս եուվան,
Լալէն աչուըներս կապերէ տուման:

Զարկեր, կրակ տուեր, կէրիմ կու վառիմ,
Ջուրի պէս ծառուած եմ, ճամբուդ կու նայիմ:

ՏԻԿԻՆ Ս. ԲՐՈՒՏԵԱՆ

ՊԱՆԴԽՏԻ ԵՐԳ

ՄԱՅԻՍ ամսոյ դու զեփիւռիկ,
Սլանում ես Մշոյ լերինք:
Կորուսեր եմ քաղցր հայրենիք,
Կուլամ, կ'ողբամ, չասե՞ս հերիք:

Լեառն Մշոյ է նման Մասիս,
Մայրիկս կուլայ կանչում է իս:
Կ'ասէ ինծի, եկուր առ իս,
Բաւ է, որդեակս, դուն թափառիս:

Հոս պանդուխտ եմ օտարութեան,
Ատեն չունիմ որ առ քեզ գամ.
Ցաւերս շատ են, վիշտք յարաժամ,
Գուցէ ասոնց եմ ես արժան:

Ես եմ միայն թշուառ անտէր,
Չիք կարեկից, ըլլայ ինձ Տէր.
Թափառում եմ օտար հողեր,
Բաւ է կրեմ ես այս ցաւեր:

Անբախտ եմ ես Տարօնացի,
Շատ ժամանակ պանդուխտ մնացի.
Ցաւօք սրտի ես միշտ լացի,
Մշոյ երկրէն կարօտ մնացի:

*
* *

Ո՛հ, դու անխիղճ, անգութ բախտիկ.
Է՛ր չես թողուր գնամ հայրենիք.
Չունիմ հայրիկ, իսկ ոչ մայրիկ,
Բա՛ւ է կրեմ դառն և վիշտք:

Վշտերս թագուն, ցաւերս անհուն,
Չունիմ ոչ տեղ և ոչ տուն.
Կուլամ, կ'ողբամ գիշերն ի բուն,
Հիւանդ եմ ես, ո՛հ, չունիմ քուն:

Հայրենիքս Տարօն — Մուշ է,
Ինձ ասում են թէ ապուշ է.
Լաց ու կոծում սրգոյ գուժ է,
Ան որ կեղծ է՝ վէրք չըբուժէ,

ՎԱՐԴԱՆ ՏԷՐ — ԱՒԵՏԻՍԵԱՆ



ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ

ԿՐԱՔՍԻ ԿՐՏԱՍՈՒԹԸ

ՄԱՑՐ Արաքսի ափերով
Քայլամոլոր գընում եմ.
Հին-հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը պըտուում եմ։

Բայց նոքա միշտ յեղյեղուկ՝
Պղտոր ջրով եզերքին
Դարիւ-դարիւ խփելով՝
Փախչում էին լալագին։

— «Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
«Պար չես բռնում մանկական,
«Դու դեռ ծովը չը հասած՝
Սըգաւոր ես ինձ նման։

«Ինչո՞ւ արցունք ցայտում են
«Քո սէգ, հըպարտ աչերից,
«Ինչո՞ւ արագ փախչում ես
«Այդ հարազատ ափերից։

«Մի՛ պղտորել յատակդ,
«Հանդարտ հոսէ խայտալով,
«Մանկութիւնը քո կարճ է,
«Շուտ կը հասնես դէպի ծով։

«Վարդի թփեր թող բուսանին
«Քո հիւըրնկալ ափի մօտ,
«Սոխակները նոցա մէջ
«Երգեն մինչև առաւօտ։

«Մշտադալար ուռիներ
«Սառ ծոցի մէջ քո ջըրին
«Ձրկուն ոստն ու տերև
«Թող թաց անեն տապ օրին։

«Ափերիդ մօտ երգելու
«Հովիւք թող դան համարձակ,
«Գառն ու ուլը քո վրձիտ
«Ջուրը մրտնեն միչտ արձակ»։

* * *

Մէջքը ուռցուց Արաքսը,
Փըրփուր հանեց իր տակից,
Ամպի նըման գոռալով՝
Այսպէս խօսեց յատակից. —

— «Խիզա՛խ, անմի՛տ պատանի,
«Նիրհես ինչո՞ւ դարևոր՝
«Վրդովում ես, նորոգում
«Իմ ցաւերը բիւրաւոր։

«Սիրելիի մահից յետ՝
«Ե՞րբ ես տեսել որ այրին
«Ոտքից գլուխ պըճնուի
«Իր զարդերով թանկագին։

«Որի՞ համար զարդարուեմ,
«Որի՞ աչքը հրապուրեմ,
«Շատերն ինձ են ատելի,
«Շատերին ես օտար եմ։

«Իմ ազգակից գիժ Կուրը
«Թէև այրի ինձ նման,
«Ստրկօրէն տանում է
«Գայթակղիչի կուռ չղթան:

«Բայց նա ինձ չէ օրինակ,
«Ես հայ՝ հայիս կը ճանչնամ,
«Օտար փեսայ չուզելով՝
«Ես միշտ այրի կը մնամ:

«Կար ժամանակ որ ես էլ
«Շքեղազարդ հարսի պէս՝
«Հազար ու. բիւր պերճանքով
«Փախչում էի ափերէս:

«Յատակըս պարզ ու վճիտ,
«Կոհակներըս ոլորուն,
«Լուսաբերը մինչև այգ
«Ջըրիս միջին էր լողում:

«Ի՞նչըս մընաց այն օրից,
«Ո՞ր ջըրամօտ գեղերըս,
«Ո՞րը իմ չէն քաղաքից,
«Ո՞ր բերկրալի տեղերըս:

«Տուրքը ջըրի ամէն օր
«Իր սուրբ ծոցէն Արարատ
«Մայրախնամ ինձ սնունդ
«Պարգևում է լիառատ:

«Բայց ես այն սուրբ ջրերով,
«Սուրբ Յակոբայ աղբիւրին
«Պիտի ցօղեմ արտօրա՞յքն
«Ինձ ատելի օտարին:

«Մինչ իմ որդիք, ո՞վ գիտէ,
«Ծարաւ, նօթի, անտէրունչ
«Օտար աշխարհ յածում են,
«Թոյլ ոտքերով, կիսաշունչ:

«Հեռո՛ւ, հեռո՛ւ քշեցին
«Բընիկ ազգն իմ Հայկեան,
«Նորա տեղը ինձ տուին
«Ազգ անկրօն, մոլեկան:

«Դոցա՞ համար զարդարեմ
«Իմ հիւրընկալ ափերը,
«Եւ կամ դոցա՞ հրապուրեմ
«Ծրպուտ, պըլշած աչերը:

«Քանի որ իմ զաւակունք
«Այսպէս կը մնան պանդուխտ՝
«Ինձ միշտ սգաւոր կը տեսնէք,
Այս է անխար իմ սուրբ ուխտ:

Եւ չը խօսեց Արաքսը,
Յորձանք տուեց ահագին,
Օղակ-օղակ օձի պէս՝
Առաջ սողաց մոլեգին:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մայրենի՛ լեզու, մայրենի՛ բարբառ,
Ախորժ՝ ընտանի իմ հոգու համար.
Առաջին դու խօսք ականջիս հասած,
Դու սիրոյ քաղցրիկ առաջին յօդուած,
Մանկական լեզուիս թոթովանք տկար,
Հնչում ես իմ մէջ դու միշտ անպատառ:

Գեղեցի՛կ լեզու, հրաշալի՛ լեզու,
Այդ ի՞նչպէս քաղցր հնչում ես ինձ դու.
Կամիմ աւելի քալ ծանօթանալ
Քո ճոխ գանձերին, հոգով հայանալ,
Ասես թէ ահա կանչում էին ինձ
Պապերն ու հայրեր խոր գերեզմանից:

Հնչի՛ր դու, հնչի՛ր այժմ և յաւիտեան.
Մայրենի լեզու, բարբառ սիրական,
Արի՛ բարձրացիր հնութեան փոշուց,
Դու իմ հայ լեզու մռայլուած վաղուց,
Զգեցիր նոր կեանք սուրբ գրուածներով.
Որ ամենայն սիրտ վառի քո սիրով:

Ամէն տեղ փչում է Աստուծոյ հունչը,
Սուրբ է, այո՛, միւս, այլ ձև ու ոճը,
Բայց թէ աղօթել, գոհանալ պէտք էր,
Իմ սրտի սէրը յայտնել արժան էր.
Իմ երանական մտածութիւնքը —
Ապա կը խօսիմ իմ մօրս խօսքը:

Ս. ՆԱՋԱՐԵԱՆՑ

ԼՈՒՍՆԱԿԸՆ

Մանեակդ հիւսուած լոյս մարգարիտէ,
Թռած ժուռ կուգաս դարերէ յետէ,
Ամպերու չղարչ մ'ունիս ոտքիդ տակ,
Մերթ մութ կերևիս, մերթ ջինջ ու յստակ։

Շղարչ ու բեհեզ հագուած հարսի պէս,
Բոց նայուածքներով դուն գիս կը դիւթես,
Հպարտ քայլուածքով, նայուածքովդ անոյշ,
Սրտեր գերեցիր տարփոտ դիցանոյշ։

Մերթ մութ կերևիս, մերթ քօղիդ տակ ես,
Մերթ որ երիզ մը գծես բոցակէզ,
Բուռ-բուռ ցանեցիր ղէմքէդ լուսարոց,
Ծպիտ, խինդ, ծիծաղ, հառաչ մշտակոծ։

Ձմրուխտ գահի տեզ քեզ պիտի բերեմ
Ցուրտ պատանք մ'հիւսուած խաժմուժ ամպերէն,
Այն տաեն դուն ալ եկուր չիրմիս քով
Մոխիրներս թրջէ սրտիդ արցունքով։

Սառակաչունչ փչէ, դո՛ւ, մեղմիկ զեփիւռ,
Լուանի չուրջ դիպչ՛ հէգ հոգւոյս փրփուր,
Լուանակ, չուտ փախիր ամպերու եահն,
Թող գոնէ պահ մը ցաւերս անհետին։

Երբ դուն ալ հիւծած լոյսէդ, ես՝ ցաւէս,
Գործուած ոճիրներ հեչա պիտի քաւես.
Այն տաեն դուն ալ եկո՛ւր, տա՛ր հեռուն
Գիրկը անհունին երկնի աստղերուն։

ՄՈՒՇԵՂ ԵՊ. ՍԵՐՈԲԵԱՆ



Պարերգ

ԱՍԱՑՐՍ մանէ մանածս,
Գնա քաղէ ցանածս.
Պապս հարանիք է բռներ,
Ձեմ ճանչնար նշանածս։

Ամպը լեցուեր ձիւն կուգայ,
Իրիկուն կ'ըլլայ տուն չի կայ.
Ախպէս չոր քար բարձին վրայ,
Առանց եարի քուն չի կայ։

Այս ի՞նչ բարձրկնկ լեռ է,
Ջուրը հիւանդին դեղ է.
Սիրածը սիրածին չեն տար,
Այս ինչ անառուեր տեղ է։

Թռչունի նման ըլլայի,
Թռչէի քովդ գայի.
Բարձիդ վրայ կանգնէի,
Սոխակի պէս խօսէի։

Սէրը ինչ է, սիրուիլն ինչ է,
Կըարիճ քու սէվտան ինչ է.
Ծառը բարձր, պըտուղը քաղցր է,
Ձեռք չի հասնիր, ֆայտան ի՞նչ է։

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութե՛ան օրեր, երազի նման,
Անցաք գնացիք, էլ չէք դառնալու.
Ո՛հ, դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու:

Զեզանից յետոյ եկաւ դիտուքիւն,
Իր ծանր հայեացքով աչխարհի վրայ.
Ամէն բան ընկաւ մտածութեան տակ,
Թոպէ չը մնաց ազատ կամ ունայն:

Գիտակցութիւնը յայտորդեց սըրան,
Ապրի վիճակը ծանրացաւ սրտիս.
Ապուշն տուեց ինձ իր քընարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս:

Աւա՛ղ, այդ քընար, իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վըշտահար.
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը,
Ուրախացուցիչ չը գտայ մի լար:

Ես այն ժամանակ միայն զգացի,
Որ այդ ցաւերից ազատուելու չեմ.
Որչափ իմ ազգս կը մնայ տրտուկ,
Օտարների ձեռք, անխօս, տխրադէմ:

Մանկութեան օրեր, ի՞նչու այդպէս չուտ,
Թռաք գնացիք, անդարձ յաւիտեան.
Ես այն ժամանակ անհոգ ու ազատ,
Կարծում էի ինձ աչխարհի իչխան:

Գերութեան չղթան ինձ պզալի չէր,
Եւ ոչ բռնութեան անգութ ճանկերը.
Զեզանից յետոյ ծանրացան նրանք,
Ո՛հ, անիծում եմ ես այն օրերը:

Լո՛ւռ կաց դու, քնար, այլ մի հնչիր ինձ,
Ապողո՛ն, յե՛տ առ դարձեալ դու նրան.
Տո՛ւր մի այլ մարդու, որ ընդունակ է,
Զոհ բերել կեանքը սիրած աղջկան:

Ես պիտի դուրս գամ դէպի հրապարակ,
Առանց քնարի, անգարդ խօսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խաւարի ընդդէմ պատերազմելով:

Ներկայ օրերում այլ ի՞նչ ուս քնար,
Սուր է հարկաւոր կըտրիճի ձեռքին.
Արիւն ու կրա՛կ թշնամու վրայ,
Այս պիտի լինի խորհուրդ մեր կեանքին:

Թո՛ղ պատգամախօսի՝ հնացած Դելփի,
Իր եռոտանու վրայ փըրփըրի.
Թո՛ղ վերջին դարու դաղափարներով,
Ամբոխը խաբել ճգնի, աչխատի:

Թո՛ղ նա թարգմանէ զրպարտութիւնը,
Թո՛ղ մխիթարուի ծովի ափերում.
Մենք ազատութեան ենք միայն թարգման,
Միայն այս խօսքս ունինք բերանում:

Ո՛վ Հայր, ո՛վ դու Հայր, որ երկնքումն ես,
Ինայի՛ր թշուառ մեր անտէր ազգին,
Մի՛ տար զոհ դնալ թշնամիներին,
Նա այլ չէ՛ լսում Դելփեան հարցուկին:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ



ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐ ԵՒ ԳԻՏՈՒՆԵՐ

LES ARTISTES ET LES SAVANTS ARMÉNIENS

ՄԱՐԴ ԿԱՅ, ՄԱՐԴ Է

Ա՛ՍՐԴ կայ՝ մարդ է աշխարհումս,
Մարդ կայ՝ մարդակերպարան է.
Մարդ կայ՝ անդգայ պատկեր է,
Մարդ կայ՝ ամէն բանէն բան է։

Մարդ կայ՝ լաւ խօսակից պատ ա,
Մարդ կայ՝ մարդկութեան անհատ ա.
Մարդ կայ՝ էշից քիչ պակաս ա,
Մարդ կայ՝ նորան թարիֆ կ'անէ։

Մարդ կայ՝ փողով մարդ է դառել,
Մարդ կայ՝ չունի, վիզն է ծռել,
Մարդ կայ՝ հոգսից սիրան է առել,
Մարդ կայ՝ պատն գառնչան է։

Մարդ կայ՝ սէրից բէյխաբար է,
Մարդ կայ՝ յատուկ սիրահար է.
Մարդ կայ՝ ևարն գարդուսար է,
Մարդ կայ՝ սէրն անհիման է։

Մարդ կայ՝ աւազակ՝ պատ պահող,
Մարդ կայ՝ պատակեր՝ մարդ չհոդ.
Մարդ կայ՝ քարոզիչ՝ ազահող,
Մարդ կայ՝ հագուստից նման է։

Մարդ կայ՝ տավար՝ առանց պոզի,
Մարդ կայ՝ չոր գլուխ կ'խոզի.
Մարդ կայ՝ լափող՝ նման խոզի,
Մարդ կայ՝ պատուոյ անարժան է։

Մարդ կայ՝ իմաստուն՝ ժանկ չունի,
Մարդ կայ՝ ժանկ ունի, յանկ չունի.
Մարդ կայ՝ անուանը գանկ չունի,
Մարդ կայ՝ լուրն Հնդստան է։

Մարդ կայ՝ անունդն է անառակ,
Մարդ կայ՝ վաթսունամեայ քուռակ.
Մարդ կայ՝ իր ազգին հակառակ,
Մարդ կայ՝ հոգուով պատուական է:

Մարդ կայ՝ վան մեր մանկացաւ,
Մարդ կայ՝ Առտուած էր, մարդացաւ:
Մարդ կայ՝ ընդ աչմէ Հօր կացաւ,
Մարդ կայ՝ սա լը Երրորդութիւն է:

Մարդ կայ՝ Զարկեար՝ ունի Մայիք,
Մարդ կայ՝ հազար բերան հայիք.
Մարդ կայ՝ մի ընծայիւ,
Մարդ կայ՝ չահող օգնական է:

ԱԲՐԱՀԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՄԱՔՈՒՐ ՍՐՏՈՎ

ՄԱՔՈՒՐ սրտով մտորուն,
Դաշտիցը տուն դառնալիս՝
Յանկարծ տեսայ վառվռուն
Արեգակն պէս եարիս:

Իսկոյն անցաւ իմ մտքով.
«Արի՛, սրան տամ մի պաչ,
Բայց նա սաստեց ինձ ունքով,
Խորհրդաւոր շըշընչաց:

«Մեր տուն կը գաս երբ մթնի, —
Հայրս ժամ է գնալու,
Մայրս էլ տուն չի մնայ —
Հիւր է այսօր մնալու:

Հէնց որ անցար դուռն չէմ՝
Իմ ծոցը քեզ կը բանամ,
Ինքան պաչեմ պաչպըշեմ,
Որ վերջապէս կշտանամ:»

Ն. ՓՈՒՉԱԿ

ԶԱՅԻ ԳԱՆԳԱՏԸ

Մեզի մոռցաւ հայոց ազգը,
Չի լսեց մեր պաղատանքը.
Տեսնել չ՚ուզեր մեր տանջանքը.
Ապա ո՞րին մենք գանգատինք:

Աստուա՛ծ, սրտով որ բարի ես,
Մենք վար, դուն վեր — շատ հեռի ես,
Այժմ ալ խուչոր գործերի ես.
Ապա ո՞րին մենք գանգատինք:

Ցոյնը մեզի ասլը կ՚առէ,
Նէմցէն, մեզնէ կրօնքով զատ է,
Ֆրանկի բանը, կ՚ասեն վատ է.
Ապա ո՞րին մենք գանգատինք:

Թուրքին միտքը դէպի Պալքան,
Իսպառ մոռցաւ նա Հայաստան,
Նրան պէտք է լոկ մեր փարան.
Ապա ո՞րին մենք գանգատինք:

Մեր տեղը քաջ կարիճներ կայ,
Պէտք որ եղաւ՝ ատակ ալ կուգայ:
Մենակ՝ ճամբայ ցուցնող չըկայ.
Ապա ո՞րին մենք գանգատինք:

Հայի դաչտե՛ր, արեա՛ն դաչտեր,
Շատ կուլ տուիք հայի քաջեր,
Թէ որ ձեզմէ մէկը ելլէր,
Մեր գանգատին վերջ կը դնէր:

ԳԱՄԱՌ - ՓԱԹԻՊԱ.

ԷԼԻ՞ ՀԱՄԲԵՐԵՆՔ

Մեզի յիշեց հայոց ազգը,
Լսում է մեր պաղատանքը.
Զգացել է մեր տանջանքը,
Ապա էլի՞ մենք համբերենք,

Այժմ Թիւրքի միտք դէպի հայ,
Նըրան խմել կ'ուզէ դերդ չայ,
Հայ եղբայրներ, զգալու ենք,
Ապա էլի՞ մենք համբերենք:

Ֆրանգ, Ինկլիզ շատ բարի են,
Բայց ափսո՜ս որ հայ ծնել չեն,
Հայի համար մտածող չեն,
Ապա էլի՞ մենք համբերենք,

Հայի Փրկիչ, երկնից Աստուած,
Շնորհեց հային իր կամք գթած,
Այժմ ասում է, դէ՜հ գործեցէք,
Ապա էլի՞ մենք համբերենք:

Հայ պատանիք հազարներով,
Թիւրք բանտերում չարչարուելով
Արնոտ աչքով խնդրում են կեանք.
Ապա էլի՞ մենք համբերենք:

Համբերութեան չափն անցաւ,
Հայոց լոյսն ալ նսեմացաւ.
Թէ չըփորձենք վերջին փորձ մ'էլ,
Հայ չի ապրիլ երկու դար էլ:

ԵՐԿՈՒ ՔՈՅՐԵՐ

Մեզնից շատ առաջ կար մի Թագաւոր,
Հոգւով դեռ արի, գլխով ալեւոր·
Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
Ոսկի ասացին գիտունք այն գահը:

Ունէր նա երկու մատաղահաս աղջիկ,
Մինը խիստ տգեղ, միւսը գեղեցիկ,
Մի օր տգեղը ասաց միւսին·
«Երթանք ծովի ափ, քուրիկ, միասին»:

Սիրունը գնաց առաջից տրտում,
Տգեղը ետնից ոխ պահած սրտում·
Հազիւ թէ ծովի ափին էր հասած,
Իր սիրուն քրոջ գլորեց նա ցած:

Կանչեց կիսամեռ սիրունը ջրից·
«Քուրի՛կ իմ, քուրի՛կ, փրկէ՛ ինձ մահից·
Ես ունիմ տանը գեղեցիկ մանեակ,
Ա՛ռ, էն քեզ լինի, պարգեւէ ինձ կեանք:»

— Էն առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:—
«Քուրի՛կ, մի՛ թողնիլ դու ինձ անտէրունչ,
Քեզ սիրուն փեսա կուտամ անտրտունջ:»

Տգեղի սիրտը դարձել էր ժէռ քար,
Քրոջ խնդիրքը թողեց անկատար:
Ձկնորսը ծովը ձգեց մեծ ուռկան,
Բռնեց մարմինը սիրուն աղջկան:

Ջրիցը հանեց, դրեց ափի մօտ,
Շատ ծաղիկ ցանեց վըրան ու չատ խոտ.
Մի աչուզ անցաւ, տեսաւ աղջըկան,
Լացեց ու առաւ, դրեց ուսի վրան։

Տարաւ իրա տուն այդ անգին գիւտը,
Զորացուց նորա մարմնու դիփ հիւթը.
Գեղեցիկ տաւիղ չինեց ոսկերից,
Քաղցրաձայն լարեր հիւսեց մազերից։

Երբ որ ամէն բան պատրաստեց կարգին,
Գընաց արքունիք տաւիղը ձեռքին.
Երբ մըտաւ պահլիճ չըքեղ զարդարած,
Տեսաւ ոգեղին փեսին մօտ կանգնած։

Բացեց բերանը, լարերին խփեց,
Հիւրերի առջև քաղցրաձայն երգեց.
«Հնչէ՛, իմ տաւիղ, հնչէ՛ համարձակ,
Հարազատ քոյրս խլեց իմ պատկ.

«Լսէ՛, իմ ծնող, լսէ՛, սիրական,
Հարազատ քոյրս խլեց իմ փեսան.
Լըսէ՛, ժողովուրդ, լըսէ անխըռով,
Հարազատ քոյրս գլորեց ինձ ծով»։

Միւս օր դահիճքը խարոյկ չինեցին,
Մահապարտ քրոջ մէջը գլորեցին։
Հուրը պլպլաց, աղջիկը կանչեց.
«Իմ մեղաց համար Աստուած ինձ պատժեց։»

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.

ՀԱՐՍՆԻՔԻ ԵՐԳ

ՄԵՆՔ, ա՛յ աղուոր աղջիկ, եկեր ենք ձերը,
Քեզ հազար նազերով 'տի տանինք մերը·
Շարէն չափիկով, ադիզ լաթերով,
Քեզ տանել ենք եկեր, մայրիկդ լացուր,
Ոտքդ խառէմլի է, դուն մեզ խնդացուր։

Աղջիկ, քեզի բերեր ենք Փիլտիշի սանտր,
Սըրմաթէլ մազերդ հիւսուած է ծանտր·
Սէվլի պօյիդ վրայ սէվայ ծանտր,
Մի՛ լար, աղուոր աղջիկ, եար եղիր ինծի,
Եախուլթ՝ զիւմրիւթ, անգին քար եղիր ինծի։

Աղջիկ մըն ալ կու տանին ալով ու լալով,
Ծամերն ալ են հիւսեր սրմայի թելով,
Գլուխն ալ են ծածկեր լաչօրի շալով·
Մի՛ լար, աղուոր աղջիկ, եար եղիր ինծի,
Եախուլթ՝ զիւմրիւթ, անգին քար եղիր ինծի։

Հարսնուկ, քու հագածդ ալ է,
Ելիր խալըն վրայ քալէ։
Քալէ ու մանըրտուկ քալէ,
Ալուկ փէշերդ վեր ծալէ։

Բաղնեց դուռը զարկին սազը,
Ներուըտաքըդ հիւսեն մազըդ,
Տալուըտաքըդ քաշեն նազըդ·
Նազ ըրէ, նազդ վերցընեմ,
Ալայ թօզ չաքոր կերցընեմ։

(Հաւաքեց) ՏԻԿ. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ

ՄԵՐ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՐ

ՄԵՆՔ անկեղծ զինուոր ենք առանց խվիճակ,
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել է նամակ,
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,
Արիւն, սուր ու հուր պատերազմի դաշտ կոպասեն մեզի:

Դուշմանը մեզ տուել «ջան ֆիդայ» անուն,
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն.
Մենք չենք ուզեր ազատ կամքի բռնութիւն,
Ուխտել ենք կռուել, այդ սիրով մեռնիլ,
Համոզուած ենք որ տուով միայն կայ հայոց փրկութիւն:

Ստամբոլը պիտի լինի արեան ծով,
Ամէն կողմից կռիւ կըսկսի չուտով.
Կոտորենք Բաշկալայ, անցնենք հնչա կերպով,
Այլից վարդանը, ձախից Իշխանը,
Գրաւենք Աղբակ, տարածենք տարտափ,
Փառք Դաշնակցութեան:

Բաշկալայ գաւառում, այն պատերազմին,
Աւելի մեծ տարտափ տիրեց թշնամուն.
Քաջ Զէյթունը յաղթեց վատ, չար դաշնին,
Կեցցէ Զէյթունը, խրոխտ Սասունը, կուսակցութիւնը,
Բաղդաւոր օրեր, պարծանք հայերուն:



ՄԵՆՔ ՊԻՏՔ Է ԿՈՒՈՒԵՆՔ

Մենք պէտք է կռուենք և ոչ լաց լինենք,
Ազգի կորուստը մահով յետ խլենք,
Այոքան դար լացինք, ո՞վ է լսողը,
Մեզ ի՞նչ չահ բերեց արցունքի ծովը:

Էլ չը պանդատուենք և ոչ լաց լինենք,
Կըրակուած սրտով մեր գործը վարենք.
Անվեհեր քայլին այս է պատկանում —
Միշտ ազատ մեռնել կռուի լայն դաշտում:

Մոլի և երկչոտ թշնամին թող լայ,
Երբ հայ քայլի դէմ կռուի դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք սուվից, տանջանքից,
Ոչ էլ մահառիթ դաժան գնդակից:

Անէ՛ծք այն հօրը՝ որ ազգի սիրուն
Չի մղում որդուն թափելու արիւն.
Անո՛թ այն հային և բիւր նախատինք,
Որ ազգի սիրուն չէի գործում բարիք:

ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂ

Մեր գիւղացու հարսանիքում,
Տղերքն ուրախ ճալլի են խաղում.
Կռնաբռնուկ ծլլաշարվում,
Կրկնակոխ քայլում, շարժվում,
Ապա քաղցր ձայնով երգում.
«Ճալլին ա հա՛, ճալլին ա՛,
Մեր սիրտ, ձեր սիրտ բարին ա՛,
Հէնց էս խաղի տարին ա՛,
Հըլէ՛, հըլէ՛, բարին ա՛,
Հէնց էս խաղի տարին ա՛...
Մին ձա՛խ, մին ա՛ջ,
Հէ՛յ, հա՛յ, հէ՛յ, հա՛յ,
Թռչենք առաջ,
Հէ՛յ, հա՛յ, հէ՛յ, հա՛յ...»

Ահա՛ այդպէս թռչկոտում են,
Իրանք իրանց կոտրտում են.
Առաջ կամաց — ծանր ու օրօ՛ր,
Յետոյ միջակ, ապա յորդոր...

* * *

«Ասա՛, տեսնեմ, մեր գիւղում
Կովերն ի՞նչպէս են կթում».
— Ահա՛ այսպէս են կթում. —
Հորթին կապում մօր ծնկնից,
Ծիծը լւում գաւակից,
Կովկիթն իրանց ձեռքն առնում,
Ապա կողքին կըկըզում —
Փը՛շշ, բը՛ժժ...
Փը՛շշ, բը՛ժժ...

Ահա՛ այսպէս են կթում,
Փոքրիկ հորթին լացացնում...

* * *

«Ո՞նց են հարում խնոցին,
Հէնց էս օր էլ հարեցին»։
—Ահա այսպէս հարեցին՝
Թոկը ծառից կապեցին,
Հաստ խնոցին կախեցին,
Երկու չարթուայ հաւաքսը,
Նորա մէջը ածեցին,
Տաք ու զով ջուր խառնեցին.
Ապա ծայրից բռնելով,
Տարան, բերին, չարժեցին —
Թըլը՛խկ, չըլը՛խկ,
Թըլը՛խկ, չըլը՛խկ...։
Ահա այսպէս հարեցին,
Դեղին կարագ հանեցին։

ԱՂԷՔՍԱՆԴՐ ԱՐԱՐԱՏԵԱՆՑ

ԱՆՎԵՐՋ ԳԱՆԳԱՏՆԵՐ

ՄԵՐ ԽԵՂՃ ազգը ուսում չունի,
Չունի ուսում՝ խելք ալ չունի.
Խելօքներըս այդ լաւ գիտենք,
Բայց ա՛խ, միայն մենք կը խօսենք։

Մեր խեղճ ազգը հալածուած է,
Երկրէ երկիր տարագրուած է.
Բախտաւորներս այդ գիտենք,
Գիտենք և միայն կը խօսենք։

Հայ մշակը երկիր չունի,
Երկիր չունի՝ հարկ չատ ունի.
Հարուստներս մենք այդ գիտենք,
Գիտենք և միայն կը խօսենք:

Հայն ազան գրքեր չունի,
Վարժարանը՝ վարպետ չունի.
Գիտուններս այդ լաւ գիտենք,
Գիտենք և միայն կը խօսենք:

Հայ ատրտերը կարդալ չգիտէ,
Հայ տիրացուն շատ ազէտ է.
Եպիսկոպոսքս այդ լաւ գիտենք,
Օգնելու տեղ՝ լոկ կը խօսենք:

Հայ գեղջուկի աղջիկն ու կին,
Անվարձ սելեխ են թուրք, պարսկին.
Ամիրաներս մի՞թէ չը գիտենք,
Օգնելու տեղ՝ լոկ կը խօսենք:

Աչքս դարձնեմ արևմուտքին,
Արև ծագէ ալաւն ազգին.
Հայի արևն ահա վեց դար,
Համատարած պատէ խաւար:

Հայի դանգատ, անվերջ դանգա՛տ,
Տրտունջ ու լաց, սուգ անընդհատ...
Ե՞րբ ապա ատատ, ե՞րբ սրոյ շաչիւն,
Փողի ձայներ, մարտի դոչիւն...

Թուրը ձեռքէս թուրքը առաւ,
Տուայտանքէ խելքս թռաւ.
Անգութ ոզնէց, մի՞թէ չես տալ
Ազէտալի բախտս սըգալ:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԳԻՆԵՄՈԼՆԵՐ

Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի,
Միշտ ազատ, ուրախ խմում ենք գինի։
Տրա լա, լա, լա, լէ։
Ամէն սար ու ձոր, ամէն տափ, մէրի,
Մեր պաշարներն են սոխ բոլոր տարի։
Տրա լա, լա, լա, լէ։
Մեր աթամանը մեզ լաւ է պահում,
Մեր ամէն հոգսը, նա ինքն է քաշում։
Տրա լա, լա, լա, լէ։
Թէ գործ պատահի ու լաւ կատարենք,
Միշտ մեր փայը, մենք հալալ տանում ենք։
Տրա լա, լա, լա, լէ։
Ամէն երկրումը ջոկ անուն ունենք,
Ամէն տեղ սիրող մենք միշտ ճարում ենք։
Տրա, լա, լա, լա, լէ։
Ուրեմն խմենք լիք թասով գինի,
Մեզ նման քէֆով ոչ ոք կեանք չունի։
Տրա լա, լա, լա, լէ։

ՀՐԱԺԵՇՏ ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻՆ

Մեր հայրենեաց փափուկ հողեր
Արեան գետակ են դարձուցեր.
Եւ այն դաշտերն ազատութեան,
Թշնամեաց սուրք կը շողշողան։

Բռնաւորին սեւ թեւոց տակ,
Քանի՛ դարեր հեծենք թշուառք.
Արիւն արցունք գիշերն ամէն,
Հերիք իջան մեր աչերէն։

Քաշած աղէտքս ալ կը բաւեն,
Վրէժխնդրութեան հրաւէրք հնչեն.
Ալ չեմ կրնար շղթայից տակ,
Գերի տեսնել իմ քոյրք, եղբարք:

Այսօր ինծի թող օր մ'ըլլայ,
Յաղթանակի և կամ մահուան.
Գերի մնալէն քաղցր է ինձ, ո՜հ,
Հանգչիլ նախնեացս փառօք լիշող:

Զի ո՞րն արդեօք իմ հայերէն,
Հանգիստ մահուամբ լուռ ննջած են...
Այլ պատերազմ և յաղթանակ,
Միշտ թողուցին մեզ յիշատակ:

Օ՜ն, խաչանիշ դրօշովս փութամ,
Հայրենավրէժ ի պատերազմ.
Վատ ազգերուն գահն կործանեմ,
Եւ յաղթական նուագս երգեմ:

Զի խրախուսեն իմ հարց ստուերք,
Ազգիս շղթայք ալ խորտակել.
Իմ հայրենեաց քաղցր ապագան,
Սրտիս կուտայ ուժ քաջութիւն:

Այո՛, հոն տեղ մահն ինձ քաղցր է:
Ազատութեան երբ փողն հնչէ.
Հոն զոհուեցան շատ մեծ քաջեր,
Պարզել յեթերս ազատ դրօշներ:

Հոն թշնամուն արիւններով,
Դիակաց վրայ անջինջ գրով.
Իմ հայրենի փառքն դրօշմեմ,
Եւ իմ ճակատս անոնց ցուցնեմ:

Բայց Աստուծմէ այս կը խնդրեմ,
Որ օր մ'ուրախ սրտով տեսնեմ.
Ազատութեան յաղթանակով,
Վերադարձն իմ սուրբ հարցս քով:

ՔԱՋԱՆ ՎԱՐԴԱՆ

Մեր նախնիքը ազգի համար
Իրենց կեանքը զոհեցին,
Թշնամեաց դէմ միշտ աներկիւղ
Սուրը առած վազեցին:

Անոնց առաջնորդ ազգի սէրն էր,
Անոնց խրախոյսը մեր հաւատն էր,
Ասով անոնք քաջ անունը
Իրաւամբ ժառանգեցին:

Նախնեաց փառքին ժառանգաւոր
Ժառանգ է մեզ քաջ Վարդան,
Մեծ սպարապետ հայրենասէր,
Սուրբ հաւատոյ վեհ պաշտպան:

ՆԱՒԵՐԳ

Մեր նաւն իբրև փետուր
Հովերուն անձնատուր
Սլեաց վրայ ծփուն
Թափառինք օրն իբուն:

Ի՞նչ հարկ թեւձակ ու ղեկ
Այս ծածանքն է աղէկ·
Կապուտակ ջուրերէն
Օրօրուինք հեշտօրէն:

Երկնից տակ լուսափառ,
Սահինք լուռ անբարբառ,
Թող մեր հոգեր չնչին
Ամպերն ի վեր թռչին:

Եւ երազներ թեթեւ
Մեր հոգւոյն տալով թեւ՝
Եդեմի թուփերէն
Բուրումներ քեզ բերեն:

Մեր սրտին անդորրիկ
Սէրն է կուռ փոթորիկ,
Ուր անփորձ մենք նաւազ
Կը դիմենք վազն ի վազ:

Նայուածքներն աչերուն
Տարփալից ու սիրուն,
Փայլակի հանգունակ,
Կը շողան շարունակ:

Եւ լուսնակն ու արև
Կը ժպտին մեր վերև,
Մինչ հեռու եզերքէն
Նուագներ մեզ կ'երգեն:

Մեր նաւն իբրև փետուր
Հովերուն անձնատուր,
Սլեաց վրայ ծփուն
Թափառինք օրն ի բուն:

Ա. ՓԱՆՈՍԵԱՆ

Իտալացի Աղջկան Երգը

Մեր հայրենիք թշուառ անտէր,
Մեր թշնամեաց ոտնակոխ.
Իր որդիքը արդ կանչում է,
Հանել իր վրէժ, քէն ու ոխ:

«Մեր հայրենիք չղթաներով
Ամբան տարի կապկապած,
Իր քաջ որդուց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած:



«Ահա՛ եղբայր, քեզ մի դրօշ
Ձոր իմ ձեռքովս գործեցի,
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքովս լուացի:

«Նայիր նրան, երեք գոյնով,
Նուիրական մեր նշան.
Թող փողփողի թշնամու դէմ,
Թող կործանուի սէգ հսկան:

«Ինչքան կին մարդ մի թոյլ էակ,
Պատերազմի գործերում
Կարէ օգնել իւր եղբօրը,
Զանց չարեցի քո սիրուն:

«Ահա՛ իմ գործ, ահա՛ դրօշ,
Շուտ ձի հնծիր քայի պէս,
Գնա՛ փրկել քո հայրենիք
Պատերազմի վատ հանդէս:

«Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի՛, որ իր ազգին
Ազատութեան կը զոհուի:

«Գնա՛ եղբայր, Աստուած քեզ յոյս,
Աղգի սէրը քայլերը.
Գնա՛, թէև չեմ կարող դալ,
Բայց իմ հոգին քեզ ընկեր:

«Գնա՛, մեռիր դու քայի պէս,
Թող չառնէ թշնամին,
Քո թիկունքը, թող նա չասէ
Թէ վատ է Խոպալային:»

* * *

— Ասաց, տուեց օրիորդը
Իր եղբօրը մի դրօշ.
Մետաքսից էր, ալնիւ գործած,
Ուր երեք գոյն կար որոշ:

Եղբայրն առաւ և ողջունեց
Իր սիրական քնքուշ քոյր.
Առաւ գէնքը, սուր, հրացան,
Հնծաւ իր ձին սևաթոյր:

«Ֆուրիկ՛, — կանչեց քաջ պատանին —
Մնա՛ս բարեաւ, սիրական:
Այս դրօշակին պիտի նայի
Ամբողջ բանակն Իտալեան:

«Նա սուրբ է ինձ, երբ մկրտուած
Արտասուքով ու կնքուած,
Դու յանձնեցիր ինձ յիշատակ,
Հայրենիքի նուիրուած:

«Թէ մեռանիմ, դու մի ափար,
Իմացիր որ սարնցի
Դէպի մահու արքայութիւն
Իմ հետ քանի թշնամի:»

* * *

Ասաց, վազեց դէպի հանդէս
Աւստրիացւոց յանդիման,
Իւր արիւնով գնել յաւէրժ,
Ազատութիւն Իտալեան:

Ո՛հ, իմ սիրտը կտրատւում է,
Տեսանելով այսպէս ակը
Դէպի թշուառ մի հայրենիք,
Որ ոռնակոխ եղած էր:

Սորա կէսը, կէսի կէսը,
Դէթ երևէր մեր ազգում:
Բայց մեր կանայք ... ո՛ւր, եղիչէ,
Ո՛ւր մեր «տիկնայք փափկասուն:»

Ո՛հ ... արտասուք ինձ խեղդում են,
Այլ չեմ կարող բան խօսել.
Չէ՛ ... թշուառ չէ՛ Իտալիան,
Եթէ կանայք այսպէս են:

(Թարգմ.) Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ



Ղ. ԱԼԻՇԱՆ

ԶԱՅՐԵՆԻՔԻ ԱՍՏՂԻՆ

Մեր Սիրուն հայրենեաց
Բևեռը չողչողուն,
Մեր սիրուն քաջազանց
Ամիւններն ցարդ հսկող,
Պայծառ աստղ որ այժմիկ
Լոյսդ կ'ընես թափանցիկ:
Մինչև հայ պանդխտոց
Սրտերուն կուտաս լոյս:
Ո՛վ քաղցր լոյս դու մխիթար
Տարագիր հայոց թշուառ,
Ի՛նչ աչխուժ նորինոր,
Ինչ աչխուժ ոգևոր,
Կ'արծարծես սրտերնուս,
Ո՛վ միակ հայոց լոյս:

Չէ՛, ալ չը վհատինք բնաւ, ո՛վ հայեր,
Մեզ քաջալեր են լոյս և ժամանակ:
Չէ՛, ալ չը վհատինք բնաւ, ո՛վ հայեր,
Ժամանակին հետ առաջ ընթանանք.
Առաջ ընթանանք հոն, ուր հրաւէր
Հրաւէր կարդան մեզ նախահարց աստղեր,

Թէ Հայկայ որդիք ենք,
Թէ Հայկայ արիւն կրենք.
Ամէնքս ալ ի սուրբ սէր
Հայրենեաց ինուէր,
Քաջ որդիք պանծալի
Ըլլանք միշտ արժանի:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Մեր սիրուն վայելչական տեղերն ուրիշներ են առեր
Արի՛ք եղբարք, միասին գո՛ւ Հայաստան ո՞ւր տեղ
Ով որ իւր ազգն ուրանայ [են.
Երկու աչքը կուրանայ.
Յետնեալ աղքատի նման՝
Դանէ ի դուռ մուրանայ:
Ճանապարհումդ նայելով՝ աչքերումս քուն չի մնայ.
Երկնային աստղերո՞ւ մէջ ես, դու Հայաստան, ո՞ւր տեղ
Կշտին կպչի գեղարդը, [են.
Փորիցը թափի լեարդը,
Գետինն անցնի բիւր անգամ՝
Ազգն ուրացող վատ մարդը:
Քու փափաքով վառուում եմ ես, իմ սիրական ո՞ւր տեղ ես
Երկնային աստղերո՞ւ մէջ ես, դու Հայաստան, ո՞ւր տեղ
Ով որ իւր ազգն ուրանայ, [են.
Երկու աչքը կուրանայ.
Յետնեալ աղքատի նման՝
Դանէ ի դուռ մուրանայ:

ՍԻՐՏՆ ԸՄՏՅԻ

Ինձմէ էի, ո՛հ, մինակ,
Տարտամ խոհովս զբաղած՝
Կը դիտէի ջրին տակ
Պարող կրակն աստեղայ:

Կարած էր հովն իր լացեր,
Թռչնիկն՝ անույշ մեղեդին,
Գետն ու լուսինն ալ կեցեր՝
Լուիկ գիրար դիտէին:

Ժամ էր անդորր ու մէկին.
Երբ սիրտն յուզեալ խառվի,
Ըղձանք մ՚ունէր իմ հոգին.
Կարօտ մ՚անհուն գորովի:

Որպէս թռչնիկ վիրաւոր,
Որ իւր ճամբան կը մոռնայ.
Եւ երթալով իւր հէք մօր
Թափուր բոյնէն հեռանայ:

Խոհերս ալ այն իրիկուն,
Անգէկ էին ցիրուցան.
Մերթ յանցեալին ծոցն անհուն
Մերթ յանծանօթ ապագայն:

Սիրտս տենչով կը զեղուր,
Չէի գիտեր ցաւս ինչ էր.
Տխուր էի, ո՛հ, տխուր.
Լալու փափաք մ՚իս տանջէր

Յանկարծ թփոց մէջ դալար
Համբոյր մ՚հնչեց մեղմագին,
Շրթանց նուագ մը երկար —
«Ամէն»ն սիրոյ աղօթքին:

Ո՛վ մեծութիւն անտառայ,
Անդորր չքնաղ երկնային,
Երկու սրտեր հոն թառած
Սիրոյ կարօտն առնէին:

Աչերս լուսնին վերցուցի
Գթոտ նայուածք մ՚լինձ ուղղեց,
Հոգւոյս լըքուցին ղգացի
Կեանքս պահաս մ՚ունէր մեծ:

Սիրտս հառաչեց անարգել,
Գլուխս դրի ցուրտ մարդին,
«Սիրել կ՚ուզեմ, ո՛հ, սիրել»,
Ըսի, լացի պառնագին:

ԽՈՐԷՆ Մ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

ՄՕՆԹ

Մէ ՊՍՏԸՏԻԿ խայիկ մը կէր,
Անապատայ վանք կը մնէր.
Օր կորեկէ կուտ մը կուտէր,
Կէսն աղքատաց բաժին հանէր:

Տկլօզ քեամով գեազ կը կրէր,
Պէօպիկ ոտնով փուշ կը քեաղէր.
Ինք կը գրէր, ինք կը կարդէր,
Ձիւմ իրիկուն աղօթք կանէր:

Օրն էր շաբաթ, լոս կիրակի,
Բաժկին պակսաւ պատարագի.
Ձիւմ վան քաղաք մէկ կընացի.
Գլխիկս դրի կնքիկ մ՚առ:

Ոտնակուտոր ճամբիցն ելայ,
Կիւլ ախպրի մ՚ըռաստ էկայ,
Երեք հատ գող իմ դէմս էլան.
— Մէնն ասաց զարնենք թիւլցուցենք:

Մէնն ասաց զարնենք կուրցըցենք,
Ո՛չ կուրցըցենք, ո՛չ թիւլցուցենք.
Սալչունի սէրն խսկենք վերէն,
Քառսուն տարի թող դպայ վէրէն:

Կտոր մը տեղ որ կընացի.
Սաղմոսարանս կըլորեցի.
Կտոր մը էլ կընացի,
Աւետարանը խորեցի:

Կտոր մը տեղ ես կընացի,
Ժամագիրքս թաղեցի.
Կտոր մը տեղ էլ կընացի՝
Ձիւմ «խար մեղէն» էլ մոռացի:

Քեարվան մ'երթ Ամդայ դաշտէն,
Մէջ էն քեարվանին ջորի մը կէր.
Վեր էն ջորուն անուկ մը կէր,
Մէջ էն անուկին ախչիկ մը կէր:

Ախչի՛կ, ախչի՛կ, անունդ ի՞նչ ի.
կրօշի տարած տավիտ ի՞նչ ի,
Իմ անուն ի Սալչուն փաչայ,
Իմ խէր չի տայ պատռելդ ի՞նչ ի:

— Սալչուն փաչայ ես քե գերի,
Կրակդ ինկե սիրտս կ'էրի..
Պալանարոց բերնէս կ'ելնի:

— Ծօ՛ Օվանէս «կեավուր օղլի»,
«Պէան միւսիւլման, սէան էրմէնի»,
Քեռ սէրն մօտ ծիկ ինչ բան ունի.
Իմ խէրն իմանայ քե կ'ապանի,
Արուընդ խետ գինուն կը խմի:

Մէրիկ, մէրիկ, որ ես մեռայ,
Վաղ Օվանէս օրտիւից գայ,
Ինոր չիւյապ էն վո՞վ կուտայ:

— Քեռ սևաւոր ծուռ մասկարա,
Որ Օվանէս օրտիւից գայ
Տաճկըցուցենք կ'անեենք մօլլայ,
Ութըսէ օրեր կ'ճամբենք կարդայ.

— Էն լայիղ չէ ելնի մօլլայ,
Էն լայիղ ի էլնի քահանայ,
Բուռվառ իձեռ, խունկն իվերայ:

Ա՛խ, Օվանէս մօր մէկ որդի,
Կրօշը մախ քե չը խորտի.
Ժամու չապիկ քե կարեցի,
Փիլոնը մէջ փոթիթեցի:

ԿԻԿՈ՛Ն Ի ԳԻԱՍԻՄ ՓԱՇԱ

ՄԸՐ ԽՕՐ պապկը գերեզման
Թօղնի հօնտեղ, կիգամ ման·
Խօգիս կէլնի իւքի սակ,
Խաւտա՛ դժուար է վաստակ։
Վայլէ լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛ լէ՛։
Քանի ղուրպաթն եմ ընկեր,
Միջացս գօտին չեմ քակեր,
Խարսնուկ անոյշ անթառամ,
Քեզնից զատ կինն է հարամ։
Վայլէ լէ՛, ևն։
Հիմիկ լաճերս ի՞նչ կ՚անեն,
Մեռա՞ն, կորա՞ն, ի՞նչքան են,
Սիրուն Շուշան ներօտիկ,
Կըրպօն, Մըրտօն խօրօտիկ։
Վայլէ լէ՛, ևն։
Հիմիկ իմ արտ ի՞նչ կեղնի,
Ընձից մահրում կու դեղնի,
Մամքի ռեհան, նունուփար,
Գոմից պակսի մըր տաւար։
Վայլէ լէ՛, ևն։
Արև չողցեր ա պայծառ,
Նաչխուն ա դաշտ, ճեղն ու ծառ,
Ջէրդիս վերև են հաւքեր։
Կու ճըլվըլան մըր հաւքեր։
Վայլէ լէ՛, ևն։
Ա՛խ, չաչխո՞ւն եմ, ի՞նչ էրի,
Ղարիպ ընկայ, սիրտս կերի,
Տղա՛յ, սո՛ւս կաց, ի՞նչ պէտք երգ,
Կիգա՛մ, կիգա՛մ, իմ տղերք։

ՎԱՆԻ ԿՈՏՈՐԸՆԴՐ

Մի գեղեցիկ պարզ գիշեր էր,
Երկինքը լի աստղերով,
Եւ լուսինը մեղմ փայլում էր
Կաթնանման իւր լոյսով։

Նա նայում էր լուիկ ինջիկ
Իբրև մի կոյս՝ դէպի վան.
Նրա աչքին երևում էր,
Մի ցաւալի տեսարան։

Նա տեսնում էր անթիւ քիւրդեր
Բռնած սուր, թուր, հրացան՝
Կատրում են, կողոպտում են,
Աւերում են անառէր վան։

Եւ կարծես թէ վեր երկնքից
Լսում էր այդ լուռ վըկան.—
«Վըրայ հասի՛ր, հայ ազգասէր,
Ձեռքից կ՚երթայ Հայաստան։»

Ս. ՍԱՓԱՐԵԱՆՑ



ՀԱՅԱՍՏԱՆ

Մինչդեռ յոյսով խայտայ բնութիւն
Ցեղ դառնաչունչ ձմրանւոյն,
Եւ ի գաւառն իմ հայրենի
Գեղածիծաղ գառնայ գարուն:

Մինչ բոյր ի բոյր փթթին ծաղկունք
Եւ ճառուղեն նորեկ ծիծառունք.
Ի քեզ ես դարձ առնեմ յայնժամ,
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:

Ոչ Հելուէտեան ինձ դաշտավայր
Եւ կամ զուարթ մարգագետին,
Ոչ քան զքեզ չքնաղագեղ
Իտալական պայծառ երկին:

Հեռի ի քէն պանդուխտ գոլով
Քոյովդ յար տապիմ անձկով
Ի խանձարուրդ իմոց կենաց՝
Ո՛վ Հայաստան, առնում քեզ գարձ:

Գայցեն աւուրք ուր մանկութեան
Անկգի տիոցս իմ գեղ գալար,
Եւ յինէն խոյս տացեն վայելք
Կենաց թեթեւ ի գարշապար:

Ուր հէգ մուսայս մատն ի չերեր
Մոռանայցէ երգել զսէր.
Զքինէ ի ծոցդ առնում յայնժամ
Ո՛վ ցանկալիդ իմ Հայաստան:

Մ. ՊԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԽՈՍՏՈՒՄԸ

Մինչեւ մահուան անյիշատակ ի չիրիմ,
Մընամ քո սիրոյդ միշտ հաւատարիմ.
Կրնայ ըլլալ որ դուն, աւա՛ղ մոռնաս զիս,
Բայց ես հաստատ եմ միշտ իմ խոստմունքիս:

Ո՛վ իմ հրեշտակ, յոյս իմ նազելի,
Քեզի կեանք ու բաղդ բոլորն ալ տուի.
Իմ մանկութեան տիոց դու սէր նախընծայ:
Սիրտըդ գերել միշտ փափաքեցայ:

Սակայն, ափսո՛ս, երջանկութեան այն փափուկ,
Մահուան ծանր ձեռքով ըլլայ վաղանցուկ.
Այս է վըճիռ զոր գըրեց ճակտին մեր երկինք,
Պէտք է իրարմէ անդարձ բաժնուինք:

Սակայն իմ սիրտս քուկին սըրտէդ անբաժան,
Քեզնէ չի զատուիր մինչ ի գերեզման.
Սիրոյս յետին բաղձանք՝ յետին նըշանակ
Քու քովդ է հանգչիլ, մահուան քարին տակ:

Սոխակն երգէ իւր դայլայլիկ գիշերին
Նըստած ի վերայ մեր ցուրտ դամբանին.
Մինչ երկուքնիս մենք ի տեղուոյն այն դադար
Մահուան գրկացդ մէջ կը նըմջենք անդադար:

Վրկայ ըլլան աստեղք երկնից կամարաց,
Ըզքեզ յաւիտեան սիրեմ անմոռաց,
Չը պիտի դադրիմ ըսել քեզ,
«Ես քուկդ եմ յաւէրժ սիրով բոցակէզ»:

Ա՛խ, ի՞նչ ընեմ, ըսէ՛ արտիս իմ հատոր,
Արի՞ւնըս կ՚ուզես, թո՛ղ վազէ բոլոր.
Բայց թէ անով ալ գոհ չըլլաս, ո՛վ անգութ,
Իմ կեանքս ալ զոհ կուտամ քու սիրոյդ:

Պիտի սիրես զիս յետ մահուան, գիտեմ ես,
Բայց անօգուտ տեղ արտասուք թափես,
Շիրիմիս վրայ անմըխիթար ողբալով,
Այն սիրելիդ որ կորուսիր չուտով:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՐԽԱՆԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ թերութիւնը,
Հանեցին մեզ լեռները.
Վատ Թիւրքին դէմ կռուելու,
Հայրենիքը փրկելու:

Առաւօտ արշալոյսին,
Չորս կողմերնիս պատեցին.
Ամբողջ չորս օր չորս գիշեր,
Չորս հարիւր թշնամիներ:

Թուով հինգ ընկեր էինք,
Քարայրներու մէջ էինք.
Երբէք չէինք յանձնուեր,
Աւա՛ղ անօթի էինք:

Մարթինիկս տո՛ւր, մայրիկս,
Սուրս տո՛ւր, եղբայրիկս
Թէ որ ազգիս չի զոհուիմ,
Հապա ի՞նչու ծնած եմ:

Խո՛րէն, սուրդ քաշեցիր,
Վրէժ առնուլ փորձեցիր.
Երբոր գնդակի եկիր,
Հայաստանդ յիշեցիր:

Հայրենիքս է Արմուտան,
Մականունս է Արխանեան.
Խմբապետ եմ հայ խումբի,
Դարձեալ խումբեր պիտ կազմեմ:

ԿՌՈՒԻ ՄՆԱՑՈՂ

ՄՆԱՍ բարեա՛ւ, քաղցր մայր իմ, ես պիտի գնամ,
Տուր մայրական վերջին համբոյր սիրտս զովանայ.
Երկնքի երեսի գոյնը կամար է կապեր,
Կարծես հայ տղաների սիրտ խաւար է պատեր:

Ա՛յ խղճալի հայ ծնողներ, չի լաք իզուր տեղ,
Այլ խնդրեցէք Աստուածանից՝ ձեր վերքին մի դեղ.
Այս ի՞նչ սարսափելի բան էր որ ինծի եղաւ,
Կարծես դիտմամբ սեւ նօմբրը իմ ձեռքս եկաւ:

Արդեօք կը լինի՞ որ կրկին կենդանի մնամ,
Ուրախ զուարթ գամ հայրենիք նոր կեանք ստանամ:

ՍԱՐԴ

ՄՆԱՑԵՍ բարեաւ, սէր իմ սէր,
Հրաւէր մարտին օրստաց.
Թէ չեմ քաջաց ես ընկեր,
Զկայ բաժին ինձ փառաց:

Մի՛ լար, հոգեակս իմ հատոր,
Գուցէ դառնամ, ո՛հ, մի՛ լար.
Թ՚անկայց մարտին ես ի գոռ,
Տեսցուք յերկինս մենք զիրար:

Եղբայրադաւ չէ նախանձ,
Որ բորբոքեալ յիս վառի,
Ի սուրբ հողոյ հայրենեաց.
Բառնամ ը գլուծ օտարին,

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԿՈՒԿՈՒՆԵՆԸՆ ԽՄՐԻՆ

Մնաք բարեաւ սուր հրացան,
Մնաք բարեաւ ընկերներ.
Անցան օրեր ազատութեան,
Եկան բանտ ու կապանքներ:

Երբ ես վառուած ատելութեամբ,
Դէպ գարշելի բանութիւն.
Թռչում էի կատաղութեամբ,
Տալ եղբարցս օգնութիւն:

Այնժամ անյագ սիրտս լի էր,
Մաքուր և սուրբ իղձերով,
Կեանքիս գնով նա ուզում էր,
Տալ խեղճ հային սէր գորով:

Բայց թշնամին ինձ թակարդեց,
Պղծեց սէրս սրբալից.
Անպարտութեան դրօշմ դրեց,
Գործի վրայ սխրալից:

Բայց ծանր չեն կապանքներս՝
Մութ բանտը չէ պիս տանջող.
Ա՛հ, այլևս թշնամու դէմ,
Ձեմ անյողդողդ մարտնչող:

Սակայն նորէն եթէ ազատ,
Վիճակուած է ինձ լինել,
Այն ժամ սուրը ձեռքս առած,
Կիջնեմ նորից մարտնչիլ:

Եւ կատաղած սրտիս յոգը,
Այդ սրովը ես կ'առնեմ.
Եւ թշնամու գարշ վարմունքը,
Իր երեսին կը զարնեմ:



ՔԱՅԼԵՐԳ

ՀԱՅ ՅԵՂԱՓ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ՄՇԱԿ, բանուոր, ընչպէր ախպէր,
Արի՛ք, միանանք, յառաջ գնանք...
Աշխատանքի դատի պաշտպան
Դաշնակցութեան թև թիկունք տանք:

Ա՜խ, մենք տանջուենք, քրտինք թափենք,
Արիւն վաստակ դատենք, դիզենք,
Շահագործող ցեցեր վատնեն,
Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն:

Դէ՜հ, սև օրեր, բողոք դարձէ՛ք,
Արիւն, քրտինք երկունք մաէք,
Տանջանք, զրկանք լեզու առէ՛ք,
Սոցիալիզմի ճամբան բացէ՛ք...:

ՎԱՆԱՅ ՆԱՀՐԸ

Պոյթ է գիշերս, ինչպէս սիրտս ալ·
Եւ թուխ ալիք մըշտափըրփուր
Վանայ ծովուն ծիածաւալ
Հառաչանօք լի են տըխուր։
Գոց են ամպով աստղունք··· և յոյս,
Դեռ շատ հեռու է արշալոյս։

Ո՛վ նազուհի դուստր իմ Մեհիկ,
Շուշան և վարդ գաշտաց մերոց,
Եկո՛ւ, և հօրդ ծերուկ ու հէգ
Առաջնորդէ՛ ի Զորն Հայոց։
Գոց են ամպով, ևլն։

Ֆու սիրատարփ կըտրիճ Արտակ
Տըխուր երգեց, ո՛հ, այս գիշեր·
Սէրն էր երգոց իր նըպատակ,
Բայց թորգոմայ զաղէտս յիշէր·
Գոց են ամպեր, ևլն։

«Ո՛հ, ինչուան ե՞րբ հաճոյք և սէր,
Առանց սուգի պիտի չըլլան»,
Այսպէս ի քնարն իւր նա երգէր,
Ու արցունքով աչք մեր լըցան։
Գոց են ամպով, ևլն։

Հոս են չիրիմք մեր նախահարց,
Նոճ մի ունի ամէն դամբան,
Երբ փոթորիկ գոռայ յանկարծ,
Հնձեն ննջող ոգւոց փոխան։
Գոց են ամպով, ևլն։

Հին են ցաւերս, հնձեմ և ես·
Ժամ է իջնեմ ի գերեզման,
Երթամ վեհոց հայոցն ի տես,
Վանայ կոհակք թող պիս ողբան։
Եւ դու, Մեհի՛կ, կուլա՞ս անյոյս,
Ո՛հ, ո՛չ, գընա՛··· գոյ արշալոյս։

Մ· ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ



ԼԵՒՈՆ Ա· ԹԱԳԱՒՈՐ

ԼԵՒՈՆ ՕԶՊ Ի ՓԸՐԻԶ

ԻՒՐ ԿՈՐՈՒՍԱԾ ԳԱՀԸ Կ'ՈՂԲԱՑ

ՄՏԱՒ արեւս երջանկութեան, գլխիս պատեց մութ,
Գլխիս պատեց մութ,
Քաղցրիկ օրերս, պայծառ ժամերս ինչպէս անցան
Շուտ, ինչպէս անցան չուտ:
Գիշեր ցերեկ կը հառաչեմ, չկայ ինձ օգուտ,
Չկայ ինձ օգուտ,
Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս որո՞ւ ես պատմեմ,
Որո՞ւ ես պատմեմ.
Աշխարհ ինձի աւերակ է՝ մինչ գահէս զուրկ եմ,
Մինչ գահէս զուրկ եմ.
Ո՛հ, հայրենիք իմ անտէրունչ ցաւոց մէջ հեծէ,
Ցաւոց մէջ հեծէ.
Մինթէ սիրտս ապառաժ է, որ չհառաչէ,
Որ չհառաչէ.
Իւր հայրենիք, պալատ, գինուորք ի՞նչպէս չյիշէ,
Ի՞նչպէս չյիշէ.
Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս որո՞ւ ես պատմեմ,
Որո՞ւ ես պատմեմ.
Աշխարհ ինձի աւերակ է, մինչ գահէս զուրկ եմ,
Մինչ գահէս զուրկ եմ.
Ամիսս է դար, օրըս տարի, ո՛հ ժամերս ամիս,
Ո՛հ, ժամերս ամիս,
Սէր կիլիկիոյ անտէր գահոյս լալով կոչէ գիս,
Լալով կոչէ գիս,
Եգիպտացիք ազգ խուժադուժ քանդեն հայրենիքս,
Քանդեն հայրենիքս,
Ես իմ ցաւերս, ես իմ վշտերս Բարիզ քեզ պատմեմ,
Բարիզ քեզ պատմեմ.
Դու ալ ինձ աւերակ ես, մինչ գահէս զուրկ եմ,
Մինչ թագէս զուրկ եմ:



Մտնեմ ծոցդ խնձոր քաղեմ,
Ծոցըդ՝ դրախտն եդեմական,
Ծծերիդ մէջ գըլուխս պահեմ,
Քնեմ քընով անմահական։

Քո չըթունքից ծծեմ գինի,
Ծծեմ, արբեմ, ինձ մոռանամ,
Ցետոյ թող գայ գրողն ինձ տանի,
Դժոխք թէկուզ յետոյ գնամ։

Բայց ի՞նչ անեմ, եար, ա՛խ ու վա՛խ,
Ուրիշներինն ես, ա՞վ ինչ կասի։
— Տօ, մի նայիր, մարդ անվախ,
Լեզուն չորնայ ով բամբասի։

Ն. ՔՈՒՉԱԿ

Գահակալութիւն Տրդատայ

ՅԱԶԱՏՆ ի վեր ի Մասիս,
Արի՛ք, որդիք Հայկեան,
Ծրուեալք ի մի խումբ պարու,
Բառից հողմոց փող աղդու՝
Ցաստուածախրախոյս ձայն։

Նախնի կամար բազմերփեան,
Ահա պատի զնովաւ.
Ցամպրոպայող մրրրկաց,
Հաշտարան պատերազմաց,
Տարփալլին ցոլացաւ։

Ձայն որոտաց, ձայն ահեղ,
Խորանաձեւ յարկէն,
Արիագունդ տուն Հայկայ
Զտապալեալ գահիդ արքայ,
Վերականգնեմ անդրէն։

Երդուեալ յաղեղն երկնածիր,
Բարձի զրազդ ձեր ի միաս,
Թաթ ձեր յեթեր սլացաւ,
Հակառակորդն սուզաւ
Վայր ի սանդարամետս։

Դիւցազանց պար Թորգոմեան,
Տրխրազգեաց յեղիւսեանս,
Ըղըրթագոյն դիմաց մէգ ,
Ցաստեղաց բոց վառին չէկ,
Ցաւետեաց հրաւիրանս :

Արդ , իմ արի սպառազէնք,
Տուք կայթս հսկայաքայլ ·
Դաշտք ի պղինձ բոցասցին ,
Լերինք ի նշոյլ շլասցին ,
Ջոկատիցն ի զեռալ :

Ահա ձեզ Հայկ երկնաճեմ,
Հայր ձերում բանակի ,
Ասպարափակ հովանեաւ ,
Զձեօք ի բարձանց փարեցաւ ,
Անթափանց նիզակի :

Շուրջ պար առեալ զարքայիւ ,
Զօրավարք Արամայ ,
Բոլորեցէք համերամ ,
Պսակ փառաց անթառամ ,
Կեցցէ՛ Տրդատ մեր արքայ :

Հ. Ա. Վ. ԲԱԳՐԱՏՈՒՆԻ





Կռուի կոչ

(«Մարսէյէզ»-ի նշանակով)

ՅԱՌԱ՛Ջ, հայեր, հայրենիքի
Ազատութեան ժամն է հասեր,
Չէ՞ք տեսներ, բռնաւորն մեզի
Դէմ արնոտ դրօշ է պարզեր.
Չէ՞ք լսեր դեռ Հայաստանի
Ժողովուրդի հառաչանքներ,
Ֆիւրտեր, թիւրքեր հայ պիւղերու
Մէջ կը մորթեն մեր եղբայրներ:

Զէնքեր առնենք, հայեր,
Շուտով կազմենք դունդեր,
Ֆալենք յառա՛ջ, թող թիւրք արիւն
Ծծեն հայոց դաշտեր:

Ի՞նչ կուզեն այդ ցած ու վայրագ
Ֆիւրտեր, թիւրքեր, մատնիչ հայեր
Ո՞ւմ համար են այս անարգանք,
Ո՞ւմ համար են այդ հին շղթաներ,
Մեզ համար են, հայեր, ա՛հ մեզ

Կ'արհամարհեն, դեռ համբերե՞նք.
Կ'ուզեն որ մեզ գերիի պէս
Իրար ծախեն, ի՞նչ կեցեր ենք:

Զէնքեր առնենք, հայեր, ևն:

Սոսկացէ՛ք, ով բռնաւորներ,
Եւ մատնիչներ Հայաստանի.
Սոսկացէք, գի ժամն է հասեր
Որ վրէժ առնենք ձեր գործերի,
Ամէն հայ ձեզ դէմ պիտ կռուի,
Մեռնողին տեղ՝ մեր հայրենիք
Նոր զաւակներ կը ծնի մեզպէս,
Եւ չենք հատնիր մինչև մեռնինք:

Զէնքեր առնենք, հայեր, ևն:

Կռուին մէջ մեր եղբայրներ
Թէ մեռնին, մենք հոն կը մտնենք
Կ'երթանք գտնել անոնց հետքեր
Ուր քալաբար մեռնիլ կուզենք.
Մեր եղբայրներ երբ մեռած են,
Մենք ալ կ'երթանք մեռնիլ անահ.
Այսպիսի գառն կեանք մեզ պէտք չէ,
Մենք ուխտած ենք վրէժ կամ մահ:

Զէնքեր առնենք, հայեր, ևն:

Ո՛վ դու սուրբ սէր հայրենիքի,
Վեր վերցուր մեր թոյլ բազուկներ.
Ազատութիւն մեր պաշտելի,
Զօրացուր զո հայ պաշտպաններ.
Թող յաղթութիւն լսէ զո ձայն
Եւ վազէ գայ մեր դրօշին տակ.
Թող բռնութիւն մահմետական
Տեսնի զո փառք՝ մեր յաղթանակ:

Զէնքեր առնենք, հայեր, ևն:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԿՈՅՍ ԼՈՒՍԱԳԵՂ

Երկոի ձեռին երկու մատ՝
Ինձ ընդ առաջ ել ի տուն,
Մի՛ հարցընէք — ո՞վ էր նա
Հրեշտակ, թէ կոյս լուսագեղ

Ամօթն զնա վարդ արար,
Ես հիացեալ դարձայ քար,
Այն ի՛նչ օր էր, և ի՛նչ ժամ,
Ցորում տեսի ես կեանք նոր։

Լիաճըրագ յայնմիկ տան,
Ի մարդաչատ բազմութեան,
Ի մէջ աղջկանց և հարսանց
Ցոտիս կայր սմն անդ յանկեան։

Այն օրիորդն էր պարկեշտ,
Ինձ պատահեալ առ դրամբ տան
Զոգիս դրաւեալ յիւր ի սէր,
Ի նմա տեսի ես կեանք նոր։

Մարգարտատիպալ մարմին էր,
Հասակն էր յոյժ վայելուչ.
Զոտիւքն իւր վարսք քարչ գային,
Ի գոյն քըրքմոյ փայլէին։

Դիմաց չքեղ երևոյթ,
Ցօնից, աչաց, այտից գեղ.
Շրթանց լեզուին համանոյշ՝
Խոստանային ինձ կեանք նոր։

Ա՛խ, ասացի, թըմբեցայ,
Սիրտս սկսաւ դողդըղալ,
Զաչխարհ համայն մոռացայ
Ի գեղ կուսին ափչեցեալ։

Բամբ կոչելոցն յայն հանդէս
Անդ իմ մեծ բաղդ մախսային,
Չի մերձաւորք այն կուսին
Փեսայ զանցն իմ ձայնէին։

Եթէ զաչխարհ լի գանձիւք
Ինձ ոք բաշխէր ի պարգև,
Ո՛չ տեսանէր այնքան բախ,
Որքան ի գալս առ կուսին։

Արդեօք գուցէ՞ յաչխարհի
Սիրոյ նըման ի՞նչ հըզօր,
Սէր ի ձեռաց Արարչին
Մեզ մահացուածս է ձիր նոր։

Նանրախորհուրդ ազգ մարդկան՝
Շատ մի սիրեր դու զաչխարհ,
Նա թշնամի է անգութ,
Չար քան զքարր մահաթոյն։

Ցանկիւ սիրոյ գքեզ կարթէ,
Ի հաղը անել ըմբռնէ,
Ապա զսիրոյդ առարկայ
Ի քէն արագ կողոպտէ։

Ց. Վ. ԱԼԱՄԴԱՐԵԱՆՑ



ՍՐԲՈՒՀԻ ՍԱՆԴՈՒԽՏ

ՏՕՆԻ ՕՐԵՐ

ՅՈՒՆՎԱՐԻՆ մենք ունինք Ծնունդ,
Փետրվարին Տաճար-Գալուստ,
Մարտը բերէ մեզ Ս. Զատիկ,
Հետն ալ մի թունդ նաւակատիք:
Ապրիլն մեզ մեծ Աւետում,
Մայիսին ալ սուրբ Համբարձում,
Յունիսը մեզ բերէ վերստին
Շնորհք բաժնող Հոգեգալուստ:
Յուլիսը միշտ փայլուն, պայծառ,
կը բերէ մեզ Սուրբ Վարդավառ,
Օգոստոսին ալ ճիշդ կէսին
Վերափոխումն Սուրբ Կոյսին:
Սեպտեմբերին Սուրբ Խաչ կուգայ
Անկէ վերջն ալ Խաչ Վարագայ:

ԴԸՐՊ ՎԸՐԴԻՆԻ

ՅՈՒՍԱՀԱՏԻԼ մեղք է, ընկեր,
Արիացի՛ր, ոտքի եկ.
Նայիր, փայլեց հեռուում լապտեր,
Մենք էլ կ՚առնենք չուտ դադար:

Արիացիր, սիրտ առ ընկեր,
Շարունակենք մեր ուղին.
Լսիր, կարծեմ թէ զանգակներ
Ղօղանչեցին սարերին:

Ահա բացուեց ազօթարան,
Վատահ ընկեր, առաջ քալենք.
Ջինուոր ենք մենք արդարութեան,
Եւ անփորձ տեղ կը հասնենք:



ՆԱՆԻԿ ԱՐԱ

ՆԱնիկ արա, սիրուն որդեակ,
Դու նանի՛կ, նանի՛կ, նանի՛կ,
Նանիկ արա, չուտ մեծացիր,
Քեզ մատաղ է իմ ջանիկ։

«Օրօրոցդ մօր ձեռքով՝
Մեղմիկ, հանդարտ՝ կը չարժեմ,
Քո մեռած հօր յիշատակը
Քեզ երգելով կը պատմեմ։

«Հայրդ էր հզօր առիւծ,
Այն քաջ — արին երուանդ,
Նա ունէր դէպ իւր կեղը՝
Շատ սիրտ, շատ գուխ, շատ եռանդ։

«Մի օր հեծաւ իր սև ձին,
Ելաւ նա դէմ ոսոխին,
Իւր հետ իւր քաջ ծառաները,
Գնաց վանել թշնամին։

«Թշնամին էր քաջն Ռափօ՝
Այն վիթխարի ահեղհան,
Զարկեց հօրդ սրտի մէջ,
Իւր նիզակը հոգեհան։

«Զարկեց հօրդ սպաննեց,
Մեր հօտերն աւար տարաւ,
Վրաններըը կողոպտեց,
Նա մեզ ոչինչ չը թողաւ։

«Նանի՛կ արա, աչքի լոյս,
Նանի՛կ, որ չուտ մեծանաս՝
Քո անտերունչ քաջ ցեղին,
Հօրդ փոխան տիրանաս։

«Մեր ծաղկաւէտ սարերը,
Մեր խոտաւէտ արօտներ,
Սրածում են Թշնամեաց
Եւ օտարներու հօտեր։

«Մեր պաղ, յստակ աղբիւրներ
Պղտորում են պիղծ չրթունք,
Մեր Թշնամեաց կուրծքերը,
Զարդարում են մեր ծաղկունք։

«Հպարտ, ազատ մեր ցեղը,
Ամօթալի յիշատակ...
Ծռել է իւր պարանոց,
Մեր յաղթողի լծի տակ։

«Իսկ մենք պանդուխտ, անտէրունչ,
Թափառումե ենք սարէ սար,
Օտար ձեռքերու կարօտ,
Հողին եղած հաւասար։

«Անա՛րգ, գերի՛, անպատիւ,
Որպէս պիղծ աղգ, անամօթ,
Թքում են մեր երեսին,
Ապտակ զարկում մեր գլխին:

«Նանի՛կ կ՚ասեմ, իմ հրեչտակ
Նանիկ կ՚ասեմ երգելով,
Նանիկ կ՚ասեմ երգելով,
Ողբալով ու լալով...:

«Երբոր մեծցար Աստուծով,
Առ հօրդ նեղ - աղեղը
Հեծիր նրա նժոյգը,
Կրկին սիրէ քո ցեղը:

«Ինդրէ հօրդ վրէժը,
Այն սէգ, անգութ յաղթողին,
Առ նրանից հօտերը,
Արտաքսէ մեր սարերէն:

«Նորա երկաթի կուրծքի մէջ,
Դու էլ ցըցէ քուռ մզրախ,
Երկու բուռն արիւնից
Դու խմէ ուրախ - ուրախ:

«Խմէ՛, և թող զովանայ
Քու մօր կրակուած սիրտը,
Խմէ՛, և թո՛ղ հանդարտուին
Հօրդ կարօտ ոսկերքը:

«Նանի՛կ կ՚ասեմ, դու քնէ՛,
Ո՛վ իմ հրեչտակ արդար:
Քնէ՛, զի դու ես միայն
Մօրդ սրտին մխիթար...:

ԲԱՑՑԻ

ՆՈՐ ԿԸ ԼՌԷՐ

ՆՈՐ ԿԸ ԼՌԷՐ ծառոց եւին
Սոխակին երգն այն գիշեր,
Հով մը թեթեւ թերթեր վարդին,
Իւր թփոց տակ կը քէէր։

Ծառն ունէր շուք լուսնակ նշոյլ
Այն լճակին մէջ փայլուն,
Ուր կը պարէր զեփիւռն ի լոյս
Հետ եթերին աստղերուն։

Հեռուն գիւղին լոյսերուն փայլ,
Հոն քաղաքին խուլ չըշուկ
Մարգաց վրայ հազիւ մի քայլ
Կը գծէր ձև մը անշուք։

Եւ միայնակ ու երազուն
Չէի խորհեր ես գաշխարհ,
Թէ ես անոր մասն էի խուն,
Սիրտս այն պահուն չէր զգար։

Կըղճայի վեր ելլել ի վեր,
Ամպէն ալ վեր, և աստղէն՝
Կը խնդրէի լուսոյ թևեր,
Հասնիլ երկինք հրեղէն։

Ո՛հ, ի՞նչ կայ հոն, միայն արև՞,
Միայն հո՞ւր, բո՞ց, կայծ ու շո՞ղ,
Այդ միօրինակ տարերց եռև
Զըկա՞յ գէթ սիրտ մը սիրող։

«Սիրտ մը սիրող ունիս դու, զայն,
Մելամաղձոտ հոգւոյդ մօտ,
Հնչեց քովէս անոյշ մի ձայն
«Այդ սիրտ, սիրոյդ է կարօտ։»

Եւ տեսայ քոյրս այն կոյս մատաղ,
Գեղով բոցով, կեանքով վառ
Ձերմակ ձեռաց մէջ իւր չքնաղ,
Փունջ մը ծաղկանց կը ցոլար։

Բոլորն էին միօգթիս,
Կապոյտ փոքրիկ ծաղիկներ,
Ուր բնութիւնն «մի մոռնար զիս»
Անոյշ գոյնով է գրեր։

«Ֆօրկէթ մի նաթ» առ պահէ դու,
Ցարեց իւր ձօնն ինձ տալով,
Քեզ մօտ լինիմ կամ հեռու,
Միշտ պահէ դու ինձ գորով։

Գրքի մը մէջ պահեցի զայն,
Իբրև մի գանձ թանկագին,
Այն եռանդուն սիրոյն վկան,
Ուր ամփոփուած էր հոգին։

* * *

Դեռ նոր կը լսուէր ծառոց եռին
Սոխակին երգն այն գիշեր,
Հով մը թեթև, թերթեր վարդին
Իւր թփոց տակ կը քշէր։

Եւ միայնակ ու երազուն,
Քունն աչերէս խոյս կուտար,
Մխաքս կ'երթար չըլչիլ հեռուն,
Հո՛ն, ուր կ'երթան արտեր կոյս։

Գրքի մը էջ բացի խակոյն,
Գիրքն այն՝ չատ լաւ պահուած,
Եւ լեցուեցաւ հոգիս անհուն,
Հեղեղներով արտասուած։

Փունջը տեսայ, ո՛հ, փունջն այն սուրբ,
Այն պաշտելի ձեռաց ձօն,
Եւ կարդացի գրերով նուրբ,
«Ֆօրկէթ մի նաթ» գրուած հոն։

Այլ ո՞ւր այն ձեռք, ո՞ւր այն պատկեր,
Ո՞ւր սիրող սիրտն այն բոցեղ,
Ո՞ւր այն հրեշտակ, ո՞ւր այն աչեր.
Ո՞ւր բարձրաձայն իւր գեղգեղ։

Արդ կը ծածկուին ցուրտ չիրմին տակ,
Ձեռքեր՝ որ փունջն ինձ տուին,
Սիրտն որ զգաց ո՛հ, այնքան չուտ,
Զոր հողն ունի իւր բաժին։

Եւ դու հոս ես «միօզոթիս»,
Ո՛հ, սին պատկեր սիրոյն իւր,
Անոր արտէն ինձ կը խօսիս,
Մինչ իր չրթունք մնան լուռ։





ՏՂԱ Ի ԳՅԱՎԱՌՆ

Նեռ Թափանցիկ, սուսեր հատու երկաբան,
Խայթոց մահու ահեղ դնդին պարսկական,
Ո՞ւր է հնչիւն քո լայնալիճ աղեղան,
Քաջ զօրավար Մամիկոնեան Գայլ-Վահան:

Փող բարձրացեալ, որոտացեալ ի Տարօն,
Վտարեցիր ըզթշնամին ի ցրօն.
Ընդէ՞ր լռես, ո՛վ դիւցազունդ բարեկրօն,
Քաջ զօրավար Մամիկոնեան Գայլ-Վահան:

Գետ բոցեղէն ըզխեալ յաշխարհ Հայաստան,
Ծաւալեցիր որպէս զհուր եղեգան,
Որով կիզեց զսպարապետն զՄիհրան,
Քաջ զօրավար Մամիկոնեան Գայլ-Վահան:

Քաջաց ձեռնաց քոյ չառաւիղ բարեկիր,
Ոհեմ, արի, անպարտելի մարտադիր,
Ի մահ հարեր զիշխան զօրուն ըզվարչիր,
Քաջ զօրավար Մամիկոնեան Գայլ-Վահան:



ՀԱՅՈՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ

ՆՈՐ ՏԱՐԻՆ եկաւ փառօք անհամար,
Զուարթ ու ազատ ազգերուն համար.
Բայց մեզ չի բերաւ նչոյլ մ'իսկ յոյսի,
կամ մխիթարիչ Ծնունդ մ'Յիսուսի.

Քանի մեր երկիր, մեր
Տունն է քարքանդ,
Մեզ չի կայ կաղանդ:

Ջրհատոս ծնաւ քսան դար առաջ,
Եկաւ մեղմելու աշխարհի հառաչ,
Բայց մեզի բերաւ ցաւ, արիւն, վշտեր,
Մահ ու կոտորած, հայրենիք մ'աւեր.

Մինչև չի փշրի Հայու
Լուծն անգութ,
Ջունինք մենք Ծնունդ:

Մեզ թշնամի են աշխարհ ու մարդիկ,
Թշնամի Եւրօպ, հեթանոս Տաճիկ,
Աստուած ալ մենէ երես դարձուցեր,
Մոռցած է դժբաղդ մեր անտէր հայեր.

Մինչև մեր ժանգոտ
Շղթան չի փշրի,
Ջունինք նոր տարի:

Ցխտուսը ծնաւ՝ աւետի՛ս մարդոց,
Քարուքանդ ըրաւ հիմունք դժոխոց,
կրակէն անչէջ չատերն ապատեց,
Բայց մեր Հայ ազգը կրակի մատնեց.

Մինչև որ մեր ազգին այդ
Հուր չի մարի,
Ջունինք նոր տարի:

Նոր տարին եկաւ, բերաւ իր հետ լոյս,
Աչխարհի համար աւետիս և յոյս,
Բայց ոչինչ մեզի, մեր արև ծածկած,
Մեր աստեղք յերկինս խաւար են մար

Մինչև Հայ աստղը
Չը ծագի, բարի
Ջունինք նոր տարի:

Նոր տարին եկաւ Ծնունդն իրեն հետ,
Դառնութիւնք այլոց հալեցան անհետ,
Բայց կը մնան մեր ազգային սառեր
Անհալ, բարդ ի բարդ Հայկական ցաւեր.

Բայց մինչև սառեր
Չի հալին անյայտ,
Չի գար մեզ կաղանդ:

Երբ սակայն փչրին կապանք մեր անուր,
Մեղմանան ցաւեր ազգին ընդհանուր,
Երբ Հայի արևն բարձունքէն Մասեաց,
Ծագի, յոյս բերէ մեր հէգ Հայրենեաց,

Ցայնժամ մեր միայն
Կուգայ նոր Տարի,
Ամանոր բարի:

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ՆՈՒԻՐԱԿԱՆ Է ՀԱՅՐԵՆԻՔ

ՆՈՒԻՐԱԿԱՆ է հայրենիք հէգ հայուն
Զոր քանդեցին ժանդ մեքենայք անցելոյն,
Հին դարուց մէջ ծանօթ է մեր ազգութիւն,
Մեծ հեղեղներ ցրուեցին մեր մխիթիւն:

Հայ զաւակ մ'եմ կ'ապրիմ ցաւով,
Ես պանդուխտ եմ խիստ կարօտով:

Մինչև ցամաքը բարձրացած էր ահագ հայուն,
Հայ անունը սարսափ կ'ազդէ դարերուն,
Անցան դարեր փոփոխեցան շատ անհուն
Հայ անունը հռչակուեցաւ վայ անուն.

Հայ զաւակ մ'եմ խեղճ, անտերունջ
Միշտ կ'արտասուեմ լուիկ ինջիկ:

Հայաստանը դժբաղդ հայուն որորան,
Հոն փայլեցուց նա իւր ոգին արուեստեան,
Արդ չունի սիրտ, ուժեղ թիկունք և արուեստ,
Չի խլեցաւ իւր արմատէն խիստ տոկուն.

Հայ զաւակ մ'եմ հեռի ձայնէս,
Խիստ հեռի եմ հայրենիքէս:

կենդանարար հող, ջուր, օդ հայրենեաց,
Որ կեանք տուին անմահ քոյոց դիւցազանց,
Ո՛հ, չեն կամիր իրենց բարիք օտարին,
կուզեն պահել զայս հայ թշուառ զաւակին.

Հայ զաւակ մ'եմ կարօտակէզ,
Ես չուշան մ'եմ արեւակէզ,

Հայք կը յարին օտար ազգի և փառքի.
Օտար կրօնի, օտար ազգի և փառքի,
Աղ անդ ցրուեալ թափառական կը շրջին,
Օր լսելով մեր հայրենեաց մօր ձայնին.

Հայ զաւակ մ'եմ պանդխտական,
Ես չուշան մ'եմ աստանդական:



ՍԻՐԵՑԻ ՔԵԶ

ՇԱՂԻ, շողի ժամք էին,
Վարդից հըրդեհ կար յերկին՝
Փոխան ամպոց հուր հիւսքի
Տեղա՛ր մարգրիտ ու ոսկի։

Թաւուտքի մը խոր ծաղկոտ
Ընկողմանած նուաղկոտ՝
Կը հեայիր դու տըժգոյն,
Ամրան սիւգի մը հանգոյն։

Աչերդ սիրոյ տարուշան...
Եւ մատներովդ գերդ շուշան
Կը փետտէիր ծաղիկ մի,
Յառած շողից աչքդ երկնի։

Հիանայի թէ ի՛նչպէս
Փետտել թերթեր վարդին մէս,
Եւ թափթփել ի քո գիրկ
Զօրէին մատունքըդ գիրգ։

Եւ նուաղկոտ այդ աչեր
Նշուլէին նո՛ր եթեր,
Եթե՛ր մ՚աստեղց, ուր փոխան
Հրաշէկ սըլաքք կը շողան։

Ըրէր աչացդ մէկ կայծին
Եւ մէկ վանկիդ զիս գերին,
Շղթայեցիր զիս, անգո՛ւթ,
Նշոյլներովդ վեհ հոգւոյդ :

Թո՛ղ սիրտս, ինձմէ գնա՛ հեռի,
Չուզեմ հոգւոյս թագուհի,
Քեզ՝ որոյ կուրծըն վարդի թերթ
Այլ կրանիտ սիրտըն է գէթ :

Դու որ գիտես լոկ բուրել,
Գիրգ սիրտերու վէրք փորել,
Ես կը սիրես՝ երբ կարի՛
Քեզ պաշտող սիրտն արիւնի :

Թաւուտքի մը շուք նըսեմ
Երբ որ մենիկ արտասուեմ,
Հոն ես դու, կը գըտնես զիս,
Տերեւներէն կը խօսիս :

Երբ առուակին մէջ փաղփուն
Կ'ուզեմ մոռնալ դէմքըդ, դուն
Դարձեալ հոն կը գտնես զիս,
Ալիքներէն կը ժըպտիս :

Երբ կը փախչիմ ժայռ ու սար,
Ջախջախել սիրտըս ու քընար՝
Հովին մէջէն միշտ մընչես՝
Թէ ընաւ զիս սիրած չես :

Գըրկեմ սըրտովըս արդ ցուրտ հող,
'Ի տըւ շըր դիպչիմ քեզի թող,
Կոյս մ'է նաեւ գերեզման...
Կա՞յ խորունկ սիրտ մ'անոր նման :

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՈՒՂԵՐՁ ԱՒ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴ Բ. ԹԱԳԱՒՈՐ ՏԱՃԿԱՑ

Ի ԴԻՄԱՑ 36 ԴԱՒԱՃԱՆ ԷՖԷՆԴԻՆԵՐՈՒ

ԵՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ, վեհափառ սուլթան,
Որ դու քալ ու քանդ արիր Հայաստան,
Օրը հազարով հայեր մորթեցիր,
Հայոց չէն գեղեր ամայացուցիր:

Փա՛ռք և պարծանք քեզ, վեհափառ Համիդ,
Որ հնազանդելով պաշտած Ղուրանիդ,
Մեր Աւետարան դու կոխկըրտեցիր,
Ու զայիր աղբով խաչ նկարեցիր:

Գոհութիւն և փառք, մեծդ փադիշահ,
Որ Հայ ջնջելուդ գտար դու քեզ չահ,
Հէն չէրքէզները ու գող քիւրդերը,
Դարձան սրտակից քու ընկերները:

Մոայլ բանաերէն հազար հայ բերան,
Կ'օրհնեն անունդ, վեհափառ սուլթան,
Որ աօնացուցում տեղ չի թողուցիր,
Բիւր նահատակաց անուամբ լցուցիր:

Բնաւ չի մոռնար քեզ, վեհդ սուլթան,
Քո երջանկացած տեր Հայաստան.
Քու մեծ անունն ու սիրագործութիւն,
Յաւէրժ կը յիշէ հայոց պատմութիւն:

ԴԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ



ՍԱԹԻՆԻԿ

ՍԱԹԵՆԻԿ

ՈԼՈՐ մոլոր կուրն էր գալիս Կովկաս սարերէն ,
Մի աննըման ձայն էր գալիս էն միւս ափերէն ։
Փախէ՛ք , ասաղեր , արև ծագեց Կովկաս սարերէն ,
Սաթենիկն եմ , սիրուն եմ ես երկնից լուսնակէն ։

Հայո՛ց քաջեր, քաշ դրէք զէնքեր շուտ ձեր ձեռքերէն
Սաթենիկն եմ , կը յաղթուիք դուք իմ սիրոյ սրէն ։
Քեզ եմ ասո՛ւմ , քա՛ջ Արտաշէս, դո՛ւրս եկ վրանէն ,
Սաթենիկն եմ , կը յաղթուիս իմ սև սև աչերէն ։

Տաք տաք արիւն զուր մի թափեր անմեղ սրտերէն
Սաթենիկն եմ , կը յաղթուիս իմ կարմիր թշերէն ,
Մի՛ պարծենար քո զօրքերի պէս պէս գունդերէն ,
Սաթենիկն եմ , կը յաղթուիս իմ սիրուն ունքերէն ։

Մի՛ խրոխտար քո յաղթական սէգ սէգ քայլերէն ,
Սաթենիկն եմ, կը յաղթուիս իմ փունջ փունջ մազերէն ,
Բա՛ց շուտ շղթան գերի բռնած եղբօրս ոտներէն ,
Սաթենիկն եմ , կը յաղթուիս իմ բլբուլ լեզուէն ։

Քէն մի պահիր, վրէժ մի ուզիր իմ Ալաններէն,
Բարձր է Կովկաս, քաջ են Ալանք Մասեաց քաջերէն,
Զայն եմ տալիս, ձայն տուր ձայնիս քո խոր բանակէն,
Դուրս եկ մէյդան, թէ չես վախնում սիրոյս նետերէն։

* * *

Ալա՛ն, Ալա՛ն յաղթութիւնը առիր իմ ձեռքէն,
Ո՞նց դիմանամ, հալւում է թուրս քո կրակներէն։
Ալա՛ն, Ալա՛ն, փառք ու պսակ առիր իմ գլխէն,
Ո՞նց դիմանամ, սիրուն ես դու մեր սիրուններէն։

Ա՛յ դու ա՛նգութ, այրվում է սիրտս քո չոր ծարաւէն,
Ո՞նց դիմանամ, չես զովացնում Կուրի ջրերէն։
Տուր ինձ թևերդ, քո մօտ թռչեմ Կուրի վըրայէն
Մի թիթեռնիկ դարձայ ես քո ճրագի լուսէն։

Հազար կըտամ, տասը հազար անթիւ գանձերս,
Քեզ ինձ կ'առնեմ հարս-թագուհի քաջ Ալաններէն,
Ոսկւոյ անձրև շաղ կը տամ քո գլխի վրայէն,
Սէլ կը գնայ մարգարտէ քո ոտքի տակերէն։

Կը թափեմ Կուրը լայքա ոսկի կարմիր մօրթերէն,
Ծածկուի գետը ընծայաբեր բարձած ուղտերէն։
Ասաց, հեծաւ արի արքայն իր սև ձիերէն,
Արծուի նման, ճչեց անցաւ Կուր գետի մէջէն։

Հասաւ, հանեց իր կարմիր թօկ օղն ոսկեղէն,
Զգեց, ընկաւ Սաթենիկի մէջքի մէջտեղէն.
Թռի՛ր, փախի՛ր, իմ գեղեցիկ սև ձի հրեղէն.
Մէջքիդ մարալն որս եմ բռնել Կովկաս սարերէն,
Թռի՛ր, փախի՛ր, մեծն է սա իմ բոլոր որսերէն,
Թևիդ վրայի կոյսն եմ խլել քաջ Ալաններէն։

ՍԱՄՈՒԷԼ ԴՈՒԼՋԱԴԵԱՆՑ



ՊԼՊՈՒԼՆ ԱՒԱՐԱՅՐԻ

Ո՛Հ, ԴՈՒ բարեկամ այրած սրտերու,
Խօսնակ գիշերոյ, հոգեակ վարդերու,
Երգէ՛ պլպուլիկդ, երգէ ի սարէդ,
Զանմահ քաջքն Հայոց երգէ՛ հոգւոյս հետ։

Թադէի վանուց ձենիկդ ինձ դիպաւ,
Սրտիկս՝ որ ի խաշն էր կից՝ թունդ առաւ
Ի Խաչին թեւէն թռայ ու հասայ,
Գտայ զքեզ ի դաշտ քաջին Վարդանայ։

Պլպուլ քեզ համար մեր հարքն ասացին
Թէ չէ հու՝ պլպուլ մէջ Աւարայրին.
Եղիշեայ հոգեակն է քաղցրագրուցիկ,
Որ զՎարդան ի վարդն տեսնէ կարմրիկ։

Զմեռն յանապատ կը գնայ, կայ ի լաց.
Գարունն յԱրտազ գայ ի թուփ վարդենեաց
Երգել ու կանչել յԵղիշէին ձայն
Թէ պատասխանիկ մը արդեօք տա՞յ Վարդան։

Հ. ԱԼԻՇԱՆ

ՊԱՏԳԱՄ

Ո՜Հ, ԻՆՉ անուշ ինչ գեղեցիկ,
Մեր Հայրենեաց գեփիւռիկ,
Շնչէ գուարթ մեր սրտերուն,
Տալով աչխոյժ զօրութիւն:

Ա՛ռ ինքն կոչէ զմեզ հայեր,
Գգուել յիւր ծոց ծնեալսէր,
Պար խմբելով երթանք լեռ ձոր,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր:

Հոն պարզ վճիտ և գեղեցիկ,
Մեր Հայրենեացն աստղիկ
Հորիզոնէն արդ բարձրացած,
Կուգայ հայոցս յոյս փառաց:

Անոր ուղղենք մեր աչեր,
Անոր վառուինք, ո՛վ Հայեր.
Պար խմբելով երթանք լեռ ու ձոր,
Համբոյր սիրոյ տալ մեր մօր:

Ս. Պ. Պ. ՓԱՓԱԶԵԱՆ





ԳԱՐՈՒՆ

Ո՜Հ, ԻՆՉ անուշ և ինչպէս զով
Առաւօտուց փչես, հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով
Եւ մազերուն կուռին փաթիկիկ։
Բայց չես հովիկ իմ հայրենեաց.
Գնա՛, անցիր սրտէս ի բաց։

Ո՜Հ, ի՜նչ աղու և սրտագին
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գնա՛, թռիր սրտէս ի բաց։

Ո՜Հ ի՜նչ, մրմունջ հանես, վտակ
Ականակիտ և հանդարտիկ.
Քու հայելւոյդ մէջ անապակ
Նային վիրենք վարդն ու աղջիկ։
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գնա՛, հոսէ սրտէս ի բաց։

Թէպէտ թռչնիկ և հովն հայոց
Աւերակաց թռչին վերայ.
Թէպէտ պղտոր վտակն հայոց
Նոճիներու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց.
Նոքա չերթան սրտէս ի բաց։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ



ԵՐԿԱՋ

Ո՜հ, լոկ երազ էր, մի՛ խռովէք ինձ,
Իմ մոլորութեան քաղցր պատկերներ,
Ինձ չէ թոյլ տուած երկաթի կեանքում
Խնդալ, վայելել ոսկի րոպէներ:

Մի՛ յիշեցընէք, մի՛, այն զգացմունքը,
Որով լցուած էր սիրտս ու հոգիս,
Որով չընչեցի, որով ապրեցայ,
Ինչպէս մի ծաղիկ գըգուած զեփիւռից:

Այդ մի երազ էր... կամ գէթ առաջօք,
Որ կրակ ձգեց սըրտիս մէջ անմար...
Թըշնամի վըհուկ, երևի, կախեց
Աչքերիս վերայ բժժանք անհամար...

Ինձ այն ժամանակ քանի՛ ու քանի՛
Երևեցաւ «նա» այն ծառերի տակ,
Մինչ՝ լիալուսին խոր գիշերի մէջ
Երգում էր ուրախ, անհոգ, միայնակ:

Ես տեսայ «նորան», բայց մի այլ տեղում.
Ցաւերժահարսի ունէր կերպ ու ձև,
Թռչում էր, շարժւում օդի մէջ այնպէս,
Ինչպէս մի փետուր, — առաւե՛լ թեթև:

Մի անգամ տեսայ Աթենասի պէս,
Զրահաւորուած գինուորի դէնքով,
Մի ամբողջ խմբի տալիս էր հրաման
Իւր ձեռքի բռնած թեթեւ հրացանով:

Ես տեսայ դարձեալ մի ուրիշ անգամ,
Մինչ անհոգ, ուրախ խաղացած տեղից
«Նորան» բռնեցին, որպէս մահապարտ,
Ի՜նչ անմեղութիւն, ի՜նչ հայեացք աչքից:

Մինչ ոտքից գլուխ սպիտակը հագած
Դիմում էր տխուր դէպի պատժարան,
Սաթի պէս մազեր անհոգ արձակած,
Արցունք թափելով հեղեղի նման:

Մինչ դրպարտողը խոստանում էր կեանք,
Միայն թէ հաճէր... լինել համաձայն՝
Այն ինչ շընորհ էր որ կոթեց մատից,
Որով ցոյց տուեց երկինք ժամտին այն:

Ո՜հ, մի այլ անգամ, ինչպէս փրկեց «Նա»
Աւազակներից մի անմեղի կեանք.
Առանց խօսելու, համբր նշանով
Վրանգի ժամը յայտնեց բացարձակ:

Ի՜նչ կարեկցութեամբ, ի՜նչ անմեղ սիրով
Թունալի բաժակը տեղափոխեց «Նա»,
Որով դաւաճանին թունաւորելով՝
Թմրեցաւ, Մեաց ախոռի վրայ:

Ո՞ր մինը յիշեմ... ես տեսայ դարձեալ
Մինչ դուրս էր գալիս ծովից լայնարձակ,
Հազար պճրանքով, քնքուշ շարժմունքով,
Ջրկնորս էր որսում, որսով համարձակ:

«Նա» խոստանում էր նորան անմահ կեանք·
«Նորան» սիրելը էր անմահութիւն·
Ես տեսայ, ինչպէս ձկնորսը ուրախ
Վայելում էր մի ճոխ արքայութիւն:

Վերջին անգամն էր, աւել չը տեսայ,
Գնում էի ծովով հեռաւոր աշխարհ··
Երկինքը մըթնեց, մըրրիկը սուլեց,
Որոտ, փայլակը անթիւ փայլակեց:

Սարերի նման մեծ մեծ ալիքի
Կատաղած ծովին եղած խաղալիք,
Գալիս էր մի նաւ, ջարդուած կայմերով,
(Առաջ մեր նաւից տեսան նաւաստիք)

Եկաւ մօտեցաւ նաւը մեր նաւին·
Ինչ սիրտ կտրատող մի պատկեր էր այն,
Թշուառ, յուսահատ իբր անխելք նաւորդք
Կորուսել էին և յոյս փրկութեան:

Նաւորդների ես տեսայ «Նորան»,
Բռնել էր կայմից խելքը կորուսած,
Ինչպէս յուսահատ անմեղ աղաւնին,
Բազէի աչքից անդութ հալածուած:

Անդունդի վերայ այսպէս քանի ժամ,
Օրօրաց, ճօճաց տարաբաղդ նաւը·
Գիշերը կոխեց··· կայծակը թնդաց··,
Կաւլ տուեց բոլոր անյատակ ծովը:

Կայծակի թունդը, ձայնը մըրրկի
Խաւլ աղաղակը կատաղի ծովի,
Միախառնուեցան վերջին ձայնի հետ,
Որ արձակեցին այնքան շատ հոգի···

366 Ո՜հ, լոկ երազ էր, մի խռովէք

Մըրրիկը անցաւ, ծովը հանդարտուեց,
Շատ հեռի չէինք մենք ծովեզերքից...
Ջրերէն դաշտում, դեռ նոր խաղաղած,
Մի ապառաժոտ կղզի երևեց:

Ահա՛ «նա» դարձեալ ծովում լողալով
Դիմում է դէպի քարքարոտ կղզին,
Տեսնում ենք «նորան»... բռնեց քարերից,
Եւ շուտ վեր ելաւ իբր աննիւթ մարմին:

Յոգնած, ուժաթափ, մինչ վեր բարձրացրեց
Իւր արտասուքով լցուած աչերը,
Ահա լուսինն ամպերի տակից
Դուրս սողաց տեսնել «նորա» երեսը:

Ես չատ նայեցայ... բայց մեր նաւն արագ
Վազեց դէպ առաջ... կորաւ իմ աչքից,
Եւ այլ միւս անգամ, մինչև այս րոպէիս,
Կամ գուցէ յաւէրժ չերկուեցայ բախտից...:

Չէ՛, այն երա՛զ էր... հեռի ինձանից...
Խօլական ցընո՛րք, հոգի գիշատող.
Թողէ՛ք ինձ հանգիստ մաշել իմ կեանքը,
Եւ խաղաղ արտով մտնել դէպ ի հող...:

Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆ



ԸՆ ՀԱՅՏՍՏՆ

Ողջոյն ընդ քեզ, Հայաստան,
Մեր դիւցազանց գերեզման.
Ողջո՛յն Հայոց թագուհի,
Պսակեալ փառօքն հայրենի:

Երկինք ղրկէ քեզ հրեշտակ,
Բիւր վարդ ծլին ոտքիդ տակ.
Իր մէկ նայուածքն երկնագեղ,
Քու արտասուացդ ըլյան դեղ:

Ո՛հ, ինչ անուշ նուագներ,
Պիտի հնչեն սոխակներ,
Երբ քու ճակատդ պսակէ
Ծաղկէոնեան դաբնիէ:

Մանուկն յօրրոց կը խայտայ,
Եւ ծերունւոյն սիրտ ցնծայ.
Երբոր նշոյլք կը ժպտին
Հայ աստեղաց նորածին:

Ո՛հ, չխրմացդ քով ալ հանգչի
Անմահութեան վեհ հոգի.
Մինչ զուարթունք ի բարձանց
Պսակս սիրեն հայկազանց:

Փափուկ մասունք թող դրոշմեն
Հայ տառերով ոսկեղէն,
Մեր սրտին մէջ՝ սէր և լոյս,
Մեր հոգւոյն մէջ՝ կեանք և յոյս:

Քու վշտերուդ փոխանակ
Երկինք կանգնէ յաղթանակ.
Քու վէրքերուդ ալ դարման,
Քեզի օրէնք չնորհեցան:

Ա. Ց. ԱՑՎԱՋԵԱՆ

ՈՂՋՈՅՆ

Ողջոյն տուէք իմ Հայրենեաց կիսակործան տաճարներուն,
Ողջոյն տուէք աւերակաց Արտաշեսեան գաւառնե-[րուն
Ողջոյն տուէք, դժբախտ հայուն, թշուառ հայուն,
չուառ հայուն, [անկեալ հայուն:
Ո՛հ, ձեռք տուէք, ո՛հ, սիրտ տուէք, ոգի տուէք

Ողջոյն տուէք, Աւարայրի արիւնաներկ տուրբ
վայրերուն, [րուն:
Ողջոյն տուէք ախուր լուսնին, լուսցրնէ սև չիրիմնե-
Ողջոյն տուէք ի հող իջած արքայական պալատներուն,
Ողջոյն տուէք գետնատարած սրբոց անբիծ մասունք-
ներուն: [ներուն,

Ողջոյն տուէք ոլոր, գլոր, մոլոր վազող գետակ-
Ողջոյն տուէք բոլոր պղտոր, աղի, լնդի, աղբիւրներուն,
Ողջոյն ծաղկանց տուք որ խումբ խումբ կան թալկուն
մէջ հողերուն, [դեռ վարդերուն:
Ուր հայ սոխակ թումբէ ի թումբ կեանք կը խնդրէ

Ողջոյն տուէք հայ մուսային որ լայ փառս իւր
հայրենիքին.
Ողջոյն տուէք իմ քնարին որ հայկայ տանն է ողբերգու
Ողջոյն տուէք Հայաստանի լքեալ, ըեկեալ որդիներուն.
Ողջոյն տուէք գառ և հուժկու, առոյգահաս քաջերուն:

Ողջոյն տուէք նոցա խամրած և այրած սև սրտիկներուն
Ողջոյն տուէք քրանավաստակ ու բազմաւուժ հա-
րուստներուն, [ներուն,
Ողջոյն տուէք մերկ և նօթի տարաթափառ աղքատ-
Ողջոյն տուէք իմ սիրելի քաղցրաբառբառ գիտուններուն:

Ո՛հ, չեմ մոռնար և ողջոյնս տալ արիւնգերի չի-
նականերուն,
Որոնց վաստակ և արդար կուլ եղած է վատ քիւրդերուն,
Ողջոյն տուէք հայկեան մանկտուին որ մրմնջէ փառքն
անցելոյն, [գարուն:
Թո՛ղ մրմնջէ, թո՛ղ հառաչէ, մինչև տեսնէ կեանց



ԱՐՏԱՇԷՍ Բ.

ՉԱՓ ՄԵՌՆԻՆՔ

ՈՉ, ԵՂԲԱՐՔ, ոչ. օտարէն չկայ յոյս.
Մի՛ աչքնիդ — մի՛ դարձնէք յայս յայն կոյս.
Օտարն թէև ձեզ սիրէ հիւրաբար՝
Օտար՝ ա՛հ, միշտ է օտար:

Օտարն ձեր վիշտ կը դիտէ անդորով,
Ի՛նչ փոյթ, որ դուք թափէք արցունք արիւնով,
Ով որ հայ չէ՝ հայու ցաւեր ան չըզգա՛ր,
Ի՞նչ կը խաբուիք անդադար:

Մի՛ դուք ձեր յոյս մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերդ ցուցնէք անգութին,
Արգահատա՞նք կը յուսաք՝ օգնութիւն —
Ձեր կը ծաղրե՛ն մերկութիւն:

Գիտեմ, ձեր բեռը ծա՛նր է, ծանր, ո՛վ հայեր,
Բայց կը կարծէ՞ք դայն վերցընեն օտարներ.
Թողէ՛ք զօտար, առէ՛ք եղբայր եղբօր թև,
Եւ զօրացէ՛ք անդեղև:

Բաղդը դարձեր է ձեզի դէմ թըշնամի,
Մի՛ վհատիք, ցուցուցէք սիրտ հայեցի,
Չէ կարող բաղդ յաղթել ազգին այն քաջի,
Որ բաղդին դէմ մարտնչի:

Ձեր հայրերուն՝ ո՛չ չղթայք, ո՛չ սուսերներ
Չը կարացին ընկճել ո՛չ միտք, ո՛չ սըրտեր.
Ինչո՞ւ ձեր սիրտ այսօր դողայ տըկար, հէք,
Ի՛նչ, այն քաջաց որդիք չէ՞ք:

Չէ՞ք դո՞ւք որդիք այն դիւցազանց աննըմանի,
Որ հայրենեաց ճենճերեցան ի սեղան,
Չէ՞ք դուք որդիք այն մեծ հայոց, որոց կեանք
Են մարդկութեան իսկ պարծանք:

Դուք որ ունիք ձեր պատմութիւն մ'ազգային,
Որու վրայ մեծ ազգերն իսկ նախանձին՝
Ինչո՞ւ այսօր մոռցած զանցեալ ձեր փառաց՝
Երանի՛ տաք օտարաց:

Օ՜ն, ով կ'զգայ ի սիրտ եռանդ և հոգի,
Թողու զօտար և մեր նախնեաց հետևի.
Մեր կեանքը հոն է, ուր կրօնից մեր սեղան —
Այն է հայոց վառարան:

Ամէնուդ սիրտ՝ ըզգայ նոյն սէրն հայրենեաց.
Ամէնուդ միտք թռչի յօգուտ համազգեաց,
Որ ձեր յետին եղբօր արցունք ու ցաւ՝ միշտ
Ըզգացէք ձեր իբրև վիշտ:

Օտարին հաց մեզի սընունդ չէ բնաւ,
Օտարին ջուր՝ ո՛չ, չի մարեր մեր ծարաւ,
Մեզի կենաց տուող և մեր պահապան,
Է Աւազանն Հայկական,

Այն Աւազանն՝ այն հայութեան կընքատուն,
Ո՛հ, չուրանանք, եղբա՛րք, յուսովք զաղփաղփուն,
Եւ թէ մեր շունչ պիտի մարի վերջապէս՝
Թո՛ղ մարի ի սուրբ կըկէս:

Թող ամէնքս ալ ընդունինք նոյն գերեզման,
Վասն զի նոյնն էր ամենուս ալ օրըրան,
Հայ ծըծանք մենք, հայ ապրինք, հայ և մեռնինք,
Օ՜ն, հայ մտնենք և երկինք:

ԽՈՐԷՆ ԵՊ. ՆԱՐ-ՊԷՅ



ԱԶԳԱՏԵԱՑ

Ո՛Չ ՁԵԶ, ո՛չ, չէ՛ք, յաջողուած
Ո՛վ ժանտք, առ ձեզ գոչէ Աստուած,
Որ զհայրենեաց ուրանայք սէր·
Եւ զնորոյն խնդրէք աւեր·
Երկինք զձեզ դատապարտեն,
Եւ Հայրենիք խոտեն, մերժեն։

Եղէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք,
Անէ՛ծք ոյց չեն ճշմարիտ Հայք·
Զի՞ կայք, ի մէնջ ի բա՛ց, ի բա՛ց գնայք,
Անէ՛ծք ոյց չեն ճշմարիտ Հայք։

Ի ձեր ճակատ նսեմաստուեր
Զգաստակնիք տանիք դուք ձեր,
Ի ձենջ՝ ո՛վ դուք որդիք Քամայ,
Ամենայն ազգ գարշի սոսկայ·
Ասեն. Դա զծնող իւր անարգու,
Վա՛տ, Հայրենեացն է մատնտու։
Եղէ՛ք ի մէնջ ի բա՛ց գնայք, և այլն։

ԽՈՐԽՈՌՈՒՆԻ



ԹՇՂՈՒՄՆ ՀԱՅՐԻՒՅՆ

Ո՛Չ ՓՈՂ զարկինք, ո՛չ արձագանք լեռնաստղ,
Սարէ ի սար չարաչըչուկ տարին լուր,
Ու չերգեցինք ողբոց երգեր սրտայղդ
երբ պատանւոյն բացինք մռայլ փոսին դուռ:

Գիշերական մուննջ ատուերներ չուրջ կային,
երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք.
Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր ըզդաշտ, բլուր և երկինք:

Պէտք չէր դագաղ, և ո՛չ ճերմակ պատանքներ,
Որով գոցուէր ազատորդին, քաջորդին,
Նա յետ մարտին կարծես յոգնած կու հանդչէր,
Ու վերարկուն կարմիր՝ բաւ էր իւր անձին:

Անձայն ու կարճ ննջեցելոց մի ըրուցեց
Մեր քաջ Տէրտէր, վինւոր Հայոց ե՛ Աստուծոյ,
Գովեց ըզմահն և զքաջութիւնն իւր օրհնեց,
Թոյլ չի տուաւ հառաչ մ՚ու ճիչ հանելոյ:

Բայց երբ գլուխ ի բարձ դրինք հողաչէն,
Տեսանք ըզգեղ ճակտին ու վէրքն պայծառ.
Ո՛վ պատանեակ, ըսինք ամենքս մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, դու չատ ապրեցար:

Գնա՛ ըրուցէ Հայկայ զարմին մեծ որդւոց
Որ կան այստեղ ազատ ու քաջ գեռ Հայեր,
Որոնք իբիւր պատերազմաց թէպէտ խոց,
Մէջ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր:

Մէյ մ՚ալ քամին յանկարծ փչեց ցրտաչունչ,
Լուսնին չաղերն եկաւ գոցեց մթին ամպ.
Ու մեր սարերն գերթ ուրուականք անմռունչ,
Սեւ գըլխանին տնկած դիտեն ապչութեամբ:

Ցայնժամ ցուրտ հող լեցուցինք իւր վրան,
Խաչ մը դրինք, ինչպէս իւր մօր պատուէր եաւ.
Ո՛չ այլ չըքեզ արձանագիր, ո՛չ տապան,
Ձինքն մինակ թողուցինք իւր փառքին հետ:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀՈՎՈՒՆ ԵՐԳԸ

ՈՉԽԱՐՆԵՐՍ ամէն առտու կ'առնէի,
Դէպի դաշտ կը տանէի.
Սիրտս ուրախ, ձեռքս սրինգս առած
Մեղմիւ, մեղմիւ կ'երգէի։

Էմէյէ, էմէյէ կը մայէին,
Աղաւորիկ աղաւորիկ կ'ուտէին.
Երբ սրինգս զարնէի,
Շուտ մը քովիկս կուգային։

Պայծառ օր մ'էր երբ այսպէս կ արածէին
Երգի մը ձայն լսեցի,
Որ անուշիկ, չատ անուշիկ կը լսուէր,
Իսկոյն դէպի հոն վազեցի։

Մազերը սփռած հիւս տարածած,
Գեղջկուհի մը կ'երգէր.
Թչուառականն երբ զիս տեսաւ,
Կամաց կամաց հեռացաւ։

Դառցայ եկայ որ ոչխարներս առնեմ,
Եղո՛ւկ մ'եմ, ալ չի գտի.
Բերանս հովին, բաց աչքերով մնացի,
Մտածեցի թէ ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ։

Զարաճըճի գեղջկուհոյն ձայն,
Ոչխարներս կորսուս համայն,
Խեղճ ու կրակ մնացի,
Արճիճ դառձայ ձեռն ունայն։

Հա՛ պարապ ելայ, հա՛ պարապ ելայ,
Հա՛ պարապ ելայ, ելայ ելայ.
Հա՛ պարապ ելայ, հա՛ պարապ ելայ,
Հա՛ պարապ ելայ, ելայ, ելայ։

ՆՎԷՐ։

ՈՍԿԵԾՂԻԿ, գեղեցկատիպ
Ո՛վ իմ գրքոյկ ոսկեշունչ,
Ազգիս փառքը, անբախտ օրը
Դու քարոզող անմռունչ։

Ո՞վ պիտի տար այն անսպառ
Սէրն ու գութը դէպ Հայրին,
Թէ որ մարդիկ քեզ, ով գրքոյկ,
Երբեմն չի կարդային։

Քեզ կարդալով կը մոռանամ
Ես թերութիւնք մեր ազգին,
Դէպ հայ եղբարքս գութ ու սիրով
Միշտ կը լցուի իմ հոգին։

Մըտքիս մէջը ես միշտ կասեմ․
«Սերունդք Վարդան մեր քաջին
Անհընար է անփառունակ
Ստրուկ մնան կամ կորչին»։

Կամ տեսլով հէգ հայ տէրտէր
Սուրբ Ղեւոնդին կը յիշեմ,
Ու յուսահատ տրտում մտքեր
Ինձմէն հեռու կը քշեմ։

Եղիշէին հայք կարդալով,
Նոր յոյսերով կը լցուին,
Հայի գալոց բարիքն նոցա
Հոգւոց առջեւ կը բացուին։

Հա՛յ պատանի, շուտ շուտ կարդա՛
Այս գրքոյկը ոսկետառ,
Որ համոզուիս թէ մեր հայը
Կորչելու ազգ չէ իսպառ։

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ



ՍԵՐՈՒՆ ԵՂՅՒԿ

Ասկէ գագաթը բարձրիկ Նէմրութայ
Վա՛ռ - վա՛ռ կը չողայ մէջ վանայ ծովուն.
Ազիզ անունդ, քաջ Սերոբ - փաշա,
Ալմաստով փէլուն մէջ մեր սրտերուն.
Թո՛ղ արարքներուդ արժանի գովքն էլ՝
Խղճուկ գուսանիս անզարդ երգերուս,
Ջինջ ակբիւրի պէս գլայ, գլգլայ...

Նէմրութայ սարը հազար ակն ունի,
Հազարն էլ Մշու դաշտն ի վար կերթայ.
Մինակ Սերոբի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտերի մէջ կերթայ —
Ապատ օրերի, դալար օրերի,
Ծարաւ ժողովրդի սրտի մէջ կ՝երթայ...

Նէմրութայ սարը քառասուն ժէռ ունի,
Քառասունն էլ խուն մարմար քարափ կայ,
Էն քարփի վրայ արծիւն է նստեր —
Ժէռերի արքան իր գահի վրայ —
Ու կատուցի մէջ մի սիրտ է բռներ,
Եւ գիլ կը կանչէ, չորս դին ձէն կուտայ
Սարերի արքան ամպերի վրայ...

«Էյ ականջ արէ՛ք, հովե՛ր ու հաւքե՛ր,
Կարիճ Սերոբի սիրտն է կոցիս մէջ,
Սիրտն, որ ձեզնէն բարձանց կը թռնէր,
Էյ, ականջ արէ՛ք, սարեր ու ձորե՛ր,
Սերոբ - փաշայի սիրտն է կըտցիս մէջ,
Սիրտը, որ ձեզնեն մեծ էր ու խորն էր,

Սերոբ - Աղբիւրը ազատ Նէմրութից
Աղբիւրի նման վազեց լեռն ի վար,
Ու հեղեղ դառաւ, ահ ու մահ սիռեց,
Զարկեց ու ջարդեց հայու դուշմնին՝
Քուրդին ու Թուրքին հարո՛ւր ու հազա՛ր,
Ա՛ն քիւրդն ու Թիւրքը վախկոտ են, նամա՛րդ,
Սիրտ չունին կայնել ճակատ առ ճակատ,
Եօթ տարի բոլոր եաևէդ ընկան,
Շուտքդ տեսան, եօթը ծակ մտան,
Վերջն հազար դաւով հազար խաղերով
Ընկար, քա՛ջ Սերոբ... Ու երբ դուն ընկար,
Ես եկայ հասայ, սիրտդ հանեցի,
Որ դէշ դիւշմնին փայ-բաժին չըլնի:

«Իգիթ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում լոյս կուտայ.
Ու քարերում, սև հողերում
Թէկուզ վաթանի, ազգի սիրուն
Զուր յաւիտեան չի մարի.

Կարիճ սիրտը քաջ Սերոբի
Արևի պէս
Նէմրութ սարում բոց կուտայ.
Սարի սառուց, ձիւների մէջ
Թէկուզ թաղեմ՝ չի սառի,—
Ժողովրդի ազատ օրուայ,
Պատուի սիրուն՝ չի սառի,
Զուր յաւիտեան չի սառի»:

Նէմրութայ սարը հազար ակն ունի,
Հազարն էլ Մշու դաշտն ի վար կերթայ.
Մենակ Աղբիւրի աղբիւրը սրտի
Խեղճ ժողովրդի սրտի մէջ կերթայ —
Ազատ օրերի, դալար օրերի
Ծարաւ վաթանի սրտի մէջ կերթայ:

ՀԱՑ - ԳՈՒՄԱՆ



Ո՛վ դուն գեփիւռ՝ ամրան հովիկ,
Հայ աշխարհէն քաղցրահնչիկ,
Անուշահոտ վարդ ծաղիկներ
Թեւերովդ այս կողմը բեր,
Սիրէ դալար մահճին վրայ
Ուր սիրուհիս կը քնանայ։

Սիրուն թռչունք ոստնաքնակ,
Արտուտ, սարեակ, սիրուն սոխակ,
Ձեր երգերէն մի՛ դադարիք,
Նուագեցէ՛ք քաղցր ու մեղմիկ.
Թող ձեր ձայնը օրօր հնչէ
Սիրականիս որ կը ննջէ։

Օձապտոյտ վճիտ գետակ,
Է՞ր դէպ ի ծով վազես արագ.
Հանդարտ քալէ, մի՛ կարկաչեր,
Լուռ կաց պահ մը՝ մի խոխոջեր.
Ջէ՞ քու մօտդ մարգին վրայ
Սիրականս կը քնանայ...։

ՏԱՐՕՆՑԻՆ





ԵՐԳ ՀԱՅ ՂՂՅԱՑՆ

Ո՞վ ևս որ գաս առանձին,
Ձեռքդ կուրծքիդ խաչապէս,
Ծունր դրած ի գետին՝
Լռիկ աւ ո՞ բողոքես։

Ամբիծ ճակատդ է կնճռոտ,
Ցօնքերդ ի ծուփ ալեկոծ.
Կոյս սիրտդ ինչի՞ է կարօտ,
Որ հրաշունչ հանէ բոց։

Երթալ կ'ուզես, կը յուզիս,
Արդեօք սիրո՞վը մարդու.
Կամ սուրբ սիրո՞վն կրօնի,
Որ Աստուածն է սրտերու։

«Ես Հայ աղջիկ եմ զինուոր,
Տղմուտի մէջ մկրտուած.
Պատմուճաններս են բոսոր,
Ձէնքս խաչն է յաղթապանծ։

Զինուոր կ'երթամ Հայաստան,
Օրօրոցիս օրօրով.
Զինուոր կ'երթամ Հայաստան,
Իմ հայրենեաց կարօտով,
Ազատութեան կարօտով»։

ԱՂԱՒՆԻ ՖԻԼԻԿԵԱՆ

ՈՎ Է ՀԱՅԸ

Ո՞վ է Հայը, միթէ ա՞ն է,
Որ կը չքուի «ալամօտ».
Անհրաժեշտ պէտք կը սեպէ,
Հագնիլ անշուշտ «ռէտինկօտ»։

Որ փողոցը լուռ կը քալէ,
Ոչ թէ համր է կամ թէ նազլու.
Այլ դրացին չի կռահէ,
Թէ ինք ծնունդ է հայու։

Ու կը փոխէ հայ անունը,
Ճօրճ կը դնէ կամ Հարտինկ,
Կօտրրատուելով կը հարցնէ,
«Իմ իզ փըրիթի, ատ՞նչ եու թհինք»։

Ո՞վ է հայը, միթէ ա՞ն է,
Որ մեղք սեպէ մահացու.
Թէ չունենայ պանքային մէջ,
Հազար կանաչ միշտ պահցու։

Որ անտարբեր ծով ցաւերուն,
Բամպակ թխէ ականջը,
Որ չըլլայ թէ իրեն հասնի,
Սոված որբին սուր կանչը։

Ու ժամ կ'երթայ ամէն իրիկուն,
Ծնկան չոքած խաչ հանէ,
Մոմ կը վառէ մօրը հոգուն
Որ Տէրը գործին յաջողէ։

Ո՞վ է հայը· մթէ ա՞ն է,
Որ երկրորդ օրը հոս գալուն·
Մօրուքին հետ պեխն ածիլէ·
Որ նմանի տեղացուն:

Ու կը մոռնայ հայի լեզուն
Ան չատ տրգեղ ու կոշտ է,
«Պըթր, մըթըր, մըսաըր, թասր,»
Մխզխքի պէս կը հնչէ:

Ու օր մըն ալ սիրտը կուտայ՝
Այրիչի մը ազջկան·
Կը կարգուի, տուն տեղ կ'ըլլայ,
Խերը տեսնի... Ամերիկան...

* * *

Ո՞վ է հայը· հայը ա՛ն է,
Որ պինդ կապած Մայր — երկրին·
Արիւն ու կեանք զոհ կը բերէ,
Ազատութեան սուրբ գործին:

Անդրանիկն է, Սերոբն է ան,
Ան Դևեանն է ու վաղգէն·
Ան Մարտիկն է, Աւետիսեան,
Սէմէրճեանն է ու Գուրգէն:

Ա· ՅՈՎՍԷՓԵԱՆ



Հայ եւ Հայութիւն

Ո՞վ է հայը, միթէ նա՞ է, որ խօսում է հայ լեզուով,
Եւ կամ որի մականունը յանգում է «եան» մասնիկով,
Որ ուտում է ամենայն օր ճաշին տօլմա ու փիլաւ,
կամ պարծանօք միշտ հագնում է հայի գաւակ ու հալաւ:

Ո՞վ է հայը, միթէ նա՞ է, որ գնում է հայի ժամ,
Ու տարում հաղորդում է խիստ սակաւ իր չորս անգամ:
Որ կեանքումը պաս չի կերել, ծոմ էլ պահում է նոյնպէս,
Յօրանջելիս խաչ է հնքում բայց բերանն ու երես:

Ո՞վ է հայը. միթէ նա՞ է, որ տեսնելիս աէրաէրին
«Օրհնեա ի աէր» պատրաստ ունի ամէն րոպէ իր բերնին.
Որի համար մեծ ամօթ է, նաև մեղք է մահացու,
Թէ Զատիկի թաթախանը չուտէ թերխաչ կարմիր ձու:

Չէ՛, սիրելիս, ազգութիւնը չէ՛ արտաքին արարմունք,
Հայ ծնելդ անգամ չի տալ քեզ հայութեան իրաւունք,
«Ով» և կամ «եան» մականունիդ վերջի վանկի մասնիկը,
կարմիր ձուով կամ թէ անձու կատարում ես Զատիկը:

Քալա - փաչա կամ թէ բօրչէ է ամէն օրուայ կերածդ,
Սէրտուկ, պալաօ է կամ թէ չուխայ է վրայի հագածդ,
Ողջը մին է, ծէսով չես տալ ազգիդ ինաս կամ օգուտ,
Տեղը միայ ազգութիւնը, այդ նաև վարձ չէ հոգուդ:

Թէ դու հայ ես, հայութիւնդ պիտի յարգես անպատճառ,
Հայաստանը պիտի լինի յուսոյ աստղը քեզ համար.
Օտարինը դու մի՛ ատիլ, մի՛ էլ սիրիլ կուրօրէն,
Բայց քու հայի օգուտները միշտ վեր դասէ ամենէն:

Արուեստ, ուսում, չքեղարուեստ տարած է՛ հայ ազգի մէջ,
Բայց բանութեամբ միշտ հետացո՛ւր նրա մէջէն կրօնի վէճ,
Քեզ ի՞նչ չահ է, թէ դու կ՛ասես հոգին ըղձանել է Հօրից,
կամ թէ Որդին Հոգուով Սրբով անսերմ ծնուել է Մօրից:

Թո՛ղ ոխերէի, այդ խնդիրքը, աչքդ դարձո՛ւր դէպ հարաւ,
Բիւր բիւր հոգիք դու կը տեսնես կորած դրա պատճառաւ.
Բայց մինչ այսօր այդ խնդիրքը ճեացել է անվճիռ,
Թոյլ խելքո՞վդ աշխատում ես քակել անքակ այդ կնճիռ:

Սիրէ՛ ազգդ ոչ լոկ խօսքով, սիրէ՛ ինչպէս քո անձը,
Նրա օգտին թէ պէտք լինի, զոհէ բոլոր քո դանձը.
Մի՛ խնայիլ կեանքդ անգամ, արիւնդ բեր նրա զոհ,
Ոչ այն յոյսով, որ քու ազգը խակոյն լինի քեզի գոհ:

Իսկակ սէրը չէ պահանջում ամենևին արիտուր,
Թէ տուածը ես առնուի, դրան կ՛ասեն առուտուր.
Բայց վա՛յ նրանց որ անզգայ են իրենց ազգի վիճակին,
Հազար անէ՛ծք նրանց վրայ, երնէ՛կ թէ չան պէս սատկին:

Թէ դու հայ ես, գիտես արդեօք ո՞վ էր ազգիդ նախահայր,
Ո՞ր տեղ, ո՞ր կողմ նա ընտրել էր ազգին համար հայ աշխարհ,
Քանի՞ տարի անկախ ճեաց հայը՝ օտար ազգերից,
Ի՞նչ էր պատճառ, որ նա ընկաւ իր առաջուայ փառքերից:

Ո՞ւր ցրուեցաւ քո խեղճ հայը, ունի՞ այժմ օգնական,
Կա՞յ հնար, միջոց կամ յոյս նրա կրկին նորոգման.
Թէ կայ հնար, դու պատրա՞ստ ես անձդ ազգիդ զոհ անել,
Եթէ կատանք, սատիկ տանջանք սով ու ծարաւ միշտ տանել:

Դու պատրա՞ստ ես թողնել կայքդ, ծնողք, եղբարք սիրական
Սիրելուդ տեղ, կրծքիդ սեղմել միշտ մահառիթ հրացան.
Դու պատրա՞ստ ես անվախ երթալ թշնամիի սուրի դէմ,
Սարսափելի մահդ տեսնել դու կարո՞ղ ես ծաղրադէմ:

Այդ ժամանակ քեզ հայ կ՛ասեմ . . . . . .
. . . . . .
Բայց թէ փորդ աօլմաններից, կամ փլաւից տըռաքի,
Հաւատացի՛ր, ուտելովդ օգուտ բերել չես ազգի:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻԿԱ

ԼԱՅՐԻԿ

Ո՞վ է ՈՐ գայ մեզ, ճեղքած օդն, ալին,
Ճակատն գոհարք, աստեղք կը փայլին.
Թագաւո՞ր մ'է հայ որ ցատկեց չիրմէն.
Ո՛չ, դէմքը վառոդք արցունք ըսպի են,
Նա սև է հագեր:

Նա մեր հայ եղբարց արցունքն է քաւեր,
Ցոյց կուտայ մեզի արիւն ու աւեր,
Դիւցազն է որ գուրս թռաւ դամբանէն,
Ո՛չ, թուր չէ ձեռին, այլ խաչ բռներ արդէն,
Չի ցայտեր աչքէն չանթեր, այլ սէր գութ.
Դողայ անկէ քիւրդ:

Նա կուգայ հայոց մարգերէն կարմիր,
Ազատեց քրդէն հայը վչտակիր,
Խաչափայտով մը պանծացաւ յաղթող,
Հնչեցուց իր այս ազատութեան փող,
Տեսէ՛ք, քաւրձ հագեր, կարծես ինք դրակ,
Բայց սիրտն է կրակ:

Գայ Մասեաց սարէն՝ նա ձախն ու աջը,
Մովսէսի քնարն, Ղևոնդի խաչը,
Ատպի մը նայուածք, քնարի մը ձայն,
Աղեաց խորերէն կը սիրէ նա հայն.
Դեռ չի ճանչցա՞ք այն, ճակատ վչտացած,
Հրեշտակն է հայոց:

Ահա կը հնչէ անոր հեչտ սրինդ,
Արձագանք կուտան հայոց դաշտ, լերինք,
Երթանք իր չուրջը, հայեր, արտալած,
Զը խաբեր, մտաներ նա մեզ օտարաց.
Զը սիրեր ոսկի, փառք ու վատ մարդիկ.
Հայուն է Հայրիկ:

Գլխիկը դրած ազաւոր սրքեմ,
Զը թափեր ճակտէն դեռ ալիք վրսեմ,
Բայց դէմքի վրայ կանուխ են փթթած
Անցքի ու վչտի խորշոմներ միշտ թաց,
Միակ վարձք մ'ուներ, այն է կոչել գինք՝
«ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ»: Պ. ԴՈՒՐԵԱՆ


ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵՍՐՈՊ ՂԱԶԱՐԵԱՆ
ՄԱՏԹԷՈՍ ՅԱՄՈՒՐՃԵԱՆ
ՀՈՎՀ. ՏԷՐՈՒԵԱՆ-ՊԱՐԱՒԱՐ
ՍՏ. ՅԱՒՍԻՓ ՇԱՀԱԶԻԶԵԱՆ ԴԱՒԱԹ
ՀՈՎՍԷՓ ՀԱՅԿԱԶՆԵԱՆ
ՅԱԿՈԲ ՄԵԼՔՈՆ-ՅԱԿՈԲԵԱՆ
(ՊԱՏՐԻԿ)
ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆԵԱՆ
ՅԱԿՈԲ ՊԱՐՈՒՆԱԿԵԱՆ
ՍՏ. ՊԱԼԱՍԱՆԴԵԱՆ
ՏԻԿ. ՄԱՐԳԱՐԻՏ ՏԱՆԱՐԻ
ԳՐԱԿԱՆ ՄԵՇԿՆԵՐ
LES ECRIVAINS ARMENIENS



ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

ՈՎ ԾԻԾԵՌՆԱԿ, վարանած թռչնիկ,
Ի՛նչ տըխրագին ձայնիւ
Կ'եղանակես մօտ իմ բանտին.
Մի՞թէ վարուժանդ սիրուն
Հոս միայնա՞կ թողուց զքեզ,
Եւ դուն անմխիթար կը հեծեծես,
Ո՛հ, լաց ուրեմն ինծի պէս:

Բայց երանի՛, քեզ բիւր երանի՛,
Կրնաս թռչիլ՝ թեթեւ
Թեւոցդ ի ծայր ընդ սար ու ձոր,
Իսկ հոս՝ արեւուն նշոյլն աղօտ
Մութ բանտիս է անթափանց,
Եւ ոչ մեղմ հովիկ մ'ալ կը փչէ,
Որ տանի ձայնն իմ սիրելեաց:

Գէթ դուն գնա՛ գըտնել սիրելիս,
Սըլացիր արագ, սակայն
Դարձի՛ր նորէն մօտ չուառիս,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն,
Լեր դու վըկայ տըխուր մահուանս,
Եւ շիրմիս վրայ ճըռճըռալով
Գէթ դու յիշէ զիս անմոռաց:

ԳՐՕՍՍԻ

ԵՐԳԻ ՕԳՈՒՏԸ

Ով կենդանութիւն կամենում
Հարկաւոր է օդ շնչէ.
Ով վայելչութիւն ցանկանում,
Պարտական է երգ հնչէ։

Եղբա՛րք, խրատիս լսեցէք,
Մինչ ի մահ երգեցէք։

Երգ՝ ամէն օտար զգացումներ
Սրբում է իր ազդեցութեամբ.
Եւ ամենայն վիշտ տառապանքներ,
Նուազում սրա մխիթարութեամբ։

Եղբա՛րք, խրատիս լսեցէք, ևն։

Չն մարդու մէջ հոգի չկայ,
Որ երգերից զարչում է.
Որպէս դիակ նա անզգայ,
Երկրիս վրայ չբջում է.

Եղբա՛րք, խրատիս լսեցէք, ևն։

Ինչ ազգ զուրկ է երգարանից,
Սէր չունի, բարբարոս է.
Ոչինչ յոյս չըկայ նրանից,
Մարդ կայ ազգի մարազ է։

Եղբա՛րք, խրատիս լսեցէք,
Մինչ ի մահ երգեցէք։

ՄԸՅՐԻԿՍ

Ով կերակրեց իս՝ տալով ծիծ անուշ,
Ով առաւ իր գիրկն որ ննջեմ մուշմուշ,
Իմ վարդ երեսին ծաղիկներ թափեց· — Մայրիկա՛

Երբ իմ աչքերէս փախաւ քուն գնաց,
Ով ինձ անուշիկ օրօրներ ասաց,
Եւ թևերուն մէջ օրրեց որ չը լամ· — Մայրիկս:

Ով նստաւ հակեց իմ մատաղ գլխուն,
Երբ որբանիս մէջ ննջէի սիրուն,
Եւ սիրոյ քաղցրիկ արցունքներ թափեց· — Մայրիկս:

Երբ կծու ցաւով կուլայի ես միշտ,
Ով իմ աչք սրբեց, թեթևցուց իմ վիշտ,
Ահ ու դող զգաց որ ես չմեռնիմ· — Մայրիկս:

Ով վազեց օգնել, երբ ես ինկայ վար,
Եւ պատմեց ինձ վէպ, որ լինի ինձ ճար,
Պագաւ ցաւած տեղն որ տանի դարման· — Մայրիկս:

Ով աղօթք ուսուց իմ բերնիս քնքուշ,
Որ պաշտեմ Աստուած, լինիմ միշտ զգուշ,
Եւ խելքով, չնորհքով իմ կեանք անցնեմ. — Մայրիկս:

Եւ կրնա՞մ երբէք մոռնալ քեզ, հո՛գիս,
Դու որ սիրեցիր և հոգացիր պիս,
Եւ այնչափ ցաւեր առ ոչինչ դրիր, Մայրիկս:

Ո՛հ, այդպիսի բան մտքէս չի անցնիր,
Եւ դո՛ւ, ո՛ Աստուած, իմ արև պահիր,
Ծուսամ վարձատրել քու անբաւ հոգեր, Մայրիկս:

Իսկ երբ դառնաս դու ակար պառաւուկ,
Իմ հզօր բազուկ քեզ լինի նեցուկ,
Ես պիտի սիրեմ քո բոլոր ցաւեր, Մայրիկս:

Եւ երբ տեսնեմ որ գլուխդ ծռի,
Ես պիտի հոկեմ մօտ քու մնարի,
Եւ սրտիս խորէն պիտ արցունք թափեմ, Մայրիկ:

Մ· ՄԱՄՈՒՐԵԱՆ,



ՍԱՐՄԻՐՆ ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ ԵՒ ԶՕՐԱԿԱՆՔ ԻՒՐ

Ո՛վ ՀԱՅԿԱԶՈՒՆՔ, ո՛վ դիւցազունք,
Ահա ձեզ նոր հանդիսարան.
Բացէք աչքերդ, հերիք ննջէք.
Տարիք, դարեր են անցական:

ԶՕՐԱԿԱՆՔ

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր կեանքը զոհ բոլորանուէր
Մատաղ անել Հայոց ազգին,
Նորա լեզուին և կրօնին:

ՎԱՐԴԱՆ

Առէք սուսեր, նետ ու աղեղ,
Ելէք ընդդէմ ձեր թշնամեաց.
Ձեր հաւատը և ձեր ազգը
Պաշտպանեցէք յօտար ազգաց:

ՉՕՐԱԿԱՆՔ

Հայ պինուորի կեանքը դառն է,
Երբ որ պարապ տանն է նստած.
Մեզ ասպարէզ անմահ փառաց
Կռուի դաշտն է նշանակած:

ՎԱՐԴԱՆ

Հայ զօրականք, ձեր նետերը
Կապարճից մէջ հերիք մնան,
Ձեր երկիրը Պարսիկ ոտից
Ընդէ՞ր լինի այդպէս կոխան:

ՉՕՐԱԿԱՆՔ

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք
Մեր սուրը երկրից հալածական
Անել անկրօն Պարսից ազգը,
Փրկչի խաչն է մեզ օգնական:

ՎԱՐԴԱՆ

Հայոց հովիւք, ձեր ոչխարներ
Է՞ր սար ու ձոր թափառական,
Գազանաց ճանկն ընկած ողբան.
Է՞ր չը լսէք նոցա կական:

ՉՕՐԱԿԱՆՔ

Մենք պատրաստ ենք, մենք ուխտել ենք,
Աւետարան խաչ ի ձեռին
Առաջնորդել Հայոց ազգին,
Ի ժամ սրբոյ պատերազմին:



ՀԱՅՐ ՄԵՐ

Ով ՀԱՅՐ, մեր հայր, որ ես յերկին.
Սուրբ եղիցի անուն քոյին,
եկեսցէ մեզ Ատուած հզօր,
Արքայութիւն քո երկնաւոր,
Եղիցին կամք քո խնկելի,
Որպէս յերկինս և աստ յերկրի:

Զհաց հոգւոյն մեր և մարմնոյ,
Տուր մեզ այսօր չնորհիւ քո.
Եւ թող մեզ, թող զմեր պարտիս,
Որպէս և մեք թողումք յաստիս,
Ամենեցուն որք մեզ մեղան.
կամ մնացին մեզ պարտապան:

Ո՛հ, մի տանիր, ի փորձութիւն,
Այլ հանապազ հաս յօգնութիւն.
Եւ յամենայն չարին մրցմանց,
Փրկեա զմեզ, Տէր զթութեանց.
Զի քո է միշտ արքայութիւն.
Քո փառք, պատիւ և զօրութիւն:

ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

Ո՛Վ ՀԱՅՐԵՆԻՔ, երբ կը տեսնեմ քեզի լաւ,
Ուրախ զուարթ ապահովուած առանց ցաւ.
Երբ կ՚ատանաս քաղաքական մեծ համբաւ,
Որ դու հագնիս արքայական նոր հալաւ,
Ջը մեռնէի մէկ տեսնէի անդրաւ,
Քա թշնամուն կայքը լինէր քեզ դրաւ:

Մէկ տեսնէի կարին նստած հայ իշխան.
Հայ տառերով գրէր հայոց հրաման.
Տիգրանակերտ, Մուշ, Պայազիտ դէպի վան,
Ուղարկէին հայոց զօրքեր պահապան.
Քիւրդ և տաճիկ գլուխ ծռած հայու թեան,
Ճանաչէին թէ սա՛ է ազգ մ՚իրաւ:

Փառքն այն աւուր, ո՛հ, հազար փառք այն ժամին,
Երբ հայոց տալ զՀայաստան կը կամին.
Թո՛զ նկատեն յայնժամ Հայկայ Արամին,
Տեսնեն ինչպէս չուտ կը յաղթեն թշնամին.
Ապերախտ չեն քալ Թոռները Արամին,
Միշտ կը պահեն իրենց ցեղքն անպարտաւ:

Պիտի տեսնե՞մ արդեօք մի հայ պատուր,
Տաճկահայաստանը նստած փառաւոր.
Պիտի վերնայ լուսինը կիսաբոլոր,
Անոր տեղը խաչը փայլի լուսաւոր.
Այն տեղ իշխէ քրիստոնեայ թագաւոր,
Ժպտի մէկ օր Հայաստանի բախտ բոլոր:

Ա՛խ, ե՞րբ կուգայ այն օրը մեզի համար,
Ազատութեան հոգի քաշեմ անդադար.
Այս աշխարհս մի բան չկայ անհնար,
Աշխատելով մարդ կը գտնէ նոր հանճար,
Եթէ Աստուած մէկուն լինի բարերար,
Այնպէս ազգը չի ջնջուիր ոչ բնաւ:

ՋԻՒԱՆ

ՄԱՀ ԻՄԱՑԵԱԼ ԱՆՄԱՀՈՒԹԻՒՆ Է

Ով մահ քեզ համար,
Լաւը եմ թէ կաս,
Անթիւ, անհամար,
Ցոյցեր միչտ կուտաս,
Թէ ինձ ալ պիտ' գաս:

Մինչդեռ այսպէս է,
Քեզմէ ի՞նչ վախնամ,
Մինչ քո գալուստն է,
Տխուր, դառնահամ,
Եւ օրդ անպայման:

Ես չեմ անհնգմէ,
Երբ անուն մա՛հ
Լսեմ յերկիւղէ,
Հոգւոյս սարսռուի պայ,
Երբէք, կամ անահ:

Զի երբ ալ լինի,
Իմ անձն անվախ,
Ուր և գտնուի,
Քեզմէ չունի վախ,
Եւ միչտ է անկախ:

Դու անդիմադիր,
Զօրեղ էակ մ'ես.
Զուներս դաչնագիր,
Կուգաս, երբ ուզես,
Միչտ պատրաստ կամ ես:

Թող այս վերջնական,
Լինի կամաւոր՝
Կտակ մը համաձայն,
Սրտիս ուխտաւոր,
Երբ կարես, եկո՛ւր:

Լաւ քան թշնամոյն,
Կամաց համաձայն,
Կամ նորա սրէն,
Զոհիմ լուռ անձայն,
Չէ՛, չէ՛, հրացան:

Այո՛, հրացան,
Ի ձեռն մեռնիմ,
Իմ փառքս է այն,
Որ կամաւ մեռնիմ,
Մինչ պիտի մեռնիմ:

Ով ազատ մեռնի,
Այն միայն կապրի,
Ով գերի ապրի,
Այն ալ պիտ' մեռնի,
Ի՞նչ արդիւնք կեանքի,

Արդ, ըսէք Հայեր,
Ինչո՞ւ գերուիեան,
Մէջ ենք մնացեր,
Սոսկ վախէն մահուան,
Ու ստրնացեր:

Ով զարմ է Հայկին,
Թող գոչէ ուժգին,
Կամ ազատ ապրիլ,
Կամ ազատ մեռնիլ,
Այս է փառք անգին:

Մ. ՀԱՑԿՈՒՆԻ

ՄԱՆԻՇԱԿ

Ով՛ ՄԱՆԻՇԱԿ, մանիշակ,
Ինչո՞ւ այդպէս գլխիկոր
Նայիս հողին սրգաւոր...
Ինչի՞ է այդ նըշանակ:

Միթէ դու կո՞յս մը տեսար
Որուն աչաց քով կապուտ
Ընդեղ գաար այնչափ մութ,
Որ կը սրգաս սեւահար:

Եթէ դու ալ վարդին պէս
Ունենայիր դոյզն բոսոր,
Կը չիկնէիր, ինչպէս որ
Շիկնեցաւ այն վարդը վէս:

Երբ տեսաւ օր մը նէրա
Վարդերն անբիծ այտերուն,
Շուշանին պէս դալկութիւն
Եթէ ըլլար քու վըրայ,

Դըժգունէիր որպէս նա,
Ինչպէս որ օր մը չուշան
Դըժգունեցաւ աննըշան,
Տեսաւ ձեռներն երբ նէրա:

Եւ դեռ ըսե՞մ... օր մ՛երկին
Ամպոտեցաւ... է՞ր արդեօք...
Երբոր կ՛ընէր նէ աղօթք
Վէրը յառած աչքն ու հոգին:

Փ. ԴՈՒՐԵԱՆ



Ով ՄԵԾԱՍՔԱՆՉ դու լեզու,
Ո՛վ հեչտ բարբառ մայրական,
Փափկահընչիւն բառերուդ
Նման արդեօք այլ տեղ կա՞ն:

Դու որ նախ ինձ հընչեցիր
Սիրային, ո՛հ, հեչտ խօսքեր,
Այն նախ գքեզ թոթովելս՝
Դեռ իմ մրտքէն չէ ելլեր:

Իմ մայրենի քաղցր լեզու,
Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ,
Կեա՛ց միշտ լեզուդ Հայկաբժան,
Կեա՛ց ծաղկալից ծաղկաւէտ:

Ի՛նչ գառն վիշտ է սըրտիս,
Երբ օտար տեղ ու լեզու՝
Բըռնի իրեն գիս քաշէ,
Սըրտէս արիւն կը հեղու:

Ո՛հ, այն օտարն ես սիրել
Բնաւ չեմ կարող ի սրտէ,
Չէ՛, այն չէ քաղցր իմ լեզու
Որ սիրով դիս ողջունէ։
Իմ մայրենի քաղցր լեզու, ևն։

Լեզու համակ սիրաչարժ,
Քանի ճոխ, պերճ ու պայծառ
Մինչ կը հնչես դուն քեզի,
Սըրաերն ամէն գողացար։

Հընչէ՛, հընչէ՛ յաւիտեան,
Վեհ դիւցազանց պերճ երգ դու,
Թօթուէ՛ փոշին խոր մութէն,
Ե՛լ երևան, պերճ երգ դու։
Իմ մայրենի քաղցր լեզու, ևն։

Քաւերժական Սուրբ Գրոց մէջ
Կեա՛ց միշտ նորէն ու նորէն,
Կըռնալ անոյշ քու աղերդ
Թող ամէն սիրտ արծարծեն։

Շնորհ ունել Արարչէն,
Կամ պէտք ըլլայ ազօթել,
Շըրթունք սըրտէ բորբոքած
Կ'աղաղակէ անարգել։
Իմ մայրենի քաղցր լեզու, ևն։

Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ





ՍԵՐՈԲ ԱՂԲԻՒՐԻ ԵՐԳԸ

Ով որ քաջ է, ի՞նչ կ'ապասէ,
Արի էն ժամանակ է՝ թող գայ,
Մահ, պատերազմի օրհաս է,
Ով որ անվախ քաջ է՝ թող գայ։

Կամ կռուելով մեռնենք, անցնենք,
Կամ ղէնքով փրկութիւն ստանանք,
Կռուելով փրկենք Հայաստան,
Ապնիւ մատաղը թող գայ։

Մերթ Սասնոյ մէջ, մերթ Սիփան
Միշտ կռիւ մղենք անխափան,
Կռուելով փրկենք Հայաստան,
Այս յոյս ունեցողը թող գայ։

Այս հինգ դար է՝ մեզ կ'ապանեն,
Բռնի մեզ կրօնքէ կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թող գայ։

Քարէ հոգի, երկաթէ մարդ
Հալածէ թող քիւրտը նամարտ,
Անվախ քարի տակ չոքողը,
Անխնայ խփողը թող գայ։

Վերջապէս մենք ունինք կռիւ,
Ձէնքով մաքրենք պիտ մեր հաշիւ,
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ —
Սերոբին սիրողը թող գայ։



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈԳԻՆ

Ո՛Վ ՊԱՏԱՆԻՔ, աւերց նեըքև,
Ալ մարեցաւ հայուն արև,
Լանջս խոցոտ, սրինքս արիւն
կաթեն, և չիք ինձ փրկութիւն։

ՀԱՑ ՊԱՏԱՆԻՔ

Օ՛հ, անուշ մայրիկ,
Մի քիչ համբերէ.
Թէ այսօր մըրիկ,
Վաղը անպորը է.
Եւ մօտ է վաղն այն,
Մերն է ապագան.
Մայրի՛կ, հրճուէ դուն,
Մօտ է փրկութիւն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳԻՆ

Ձեռքս զարկի վերայ չիրմաց,
Եւ կարկեցան ոտուերք արեաց.
Դէպ կենդանիս դարձի զերեաս,
Կայր ձևացան, լքեալ եմ ես։

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՔ

Ո՛չ, անոյշ մայրիկ,
Լքեալ չես բնաւ,
Քեզ հետ մեր հոգիք,
Տիրին կամ անձկաւ,
Օ՛հ, քեզ հետ խայտան,
Մերն է ապագան, ևն։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳԻՆ

Շատեր լինէ յոյս չոայլեցին,
Ամէն խոստում մոռցուց ոսկին.
Եւ ես միայն դարձեալ ի սուգ,
Վախեմ, մանկունք դրժէք և դուք։

ՀԱՅ ՊԱՏԱՆԻՔ

Անէ՛ծք մեր վրայ,
Թէ անարգ ոսկին,
Մեր առջև չոգայ
Քան արտասուք քոյին.
Երդնուանք միաձայն
Մերն է ապագան, ևն։

Մ. ՉԵՐԱԶ



Ի ՎԱՂՆ ՄԱՄՈՒԿՈՆԵՆՆ

Որդիք Հայկայ, որդիք փառաց,
Զարթի՛ք կոչէ զձեզ Աստուած.
Տեսէ՛ք Մասեաց ի գլուխ ազատ,
Զբաղդ հայոց նորահրաշ:

Աչք ձեր ի գոյն լուսասցին բոց
Սիրտք վառեսցին, սիրտք հայոց.
Եւ մխեսցին կուռ բազուկք,
Ջան ի հնոյ գեղարդունք,
Յաղաւութեան ասպարէզ
Թափել չանթիս սատակավրէժ:

Օ՜ն փողեցէ՛ք, ելէք ի գլորդ,
Աստուած է ձեր առաջնորդ.
Լուա՞յք, փառք ձեզ կարդան հրաւէրք.
Տեսէք անդուստ հարց աստուերք:

Անվրէժք առ ձեզ կարկառեն ձեռս.
Որդիք, խո՞ւլ հարցդ էք յայգերս:
Արի՛ք ընդ ձեզ դաչնաւոր
Արդարութիւնն է հզօր.
Եւ գլայնալիճն առեալ Հայկ
Էջ քաջորդւոցն ի բանակ: ԽՈՐԽՈՒՐԱՑԻ

ՀԱՅԱՍՏԱՆ

Ո՞ՐՆ է աշխարհ Հայաստան.
Մխիթ աո՞ է Ռուսաստան,
Որ իր բռնութեամբ գերել է զաշխարհ,
Ազգին կեանք, կրօնք յաւիտեան կորան։
Չէ՛, չէ՛, չէ՛, չէ՛, սխալ է,
Մեր աշխարհն այլ է։

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մխիթ աո՞ է Պարսկաստան,
Որի պատկերն է Սոդոմ ու Գոմոր,
Ընտանի կեանքն է Բաբելոնեան խմոր։
Չէ, չէ, ևն։

Ո՞րն է աշխարհ Հայաստան.
Մխիթ աո՞ է Տաճկաստան.
Որ իր փառքերէն բնաւին զրկուած՝
Կանանոցի մէջ կենդանի թաղուած։
Չէ, չէ, ևն։

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Մխիթ աո՞ է Ֆրանկիստան,
Որ իր ճոխ զգեստիւք տիրել է աշխարհ,
Լուսաւորութեամբ առաջինն է այն։
Չէ, չէ, ևն։

Ո՞րն է աշխարհ Հայաստան,
Ահա աո է Հայաստան,
Որ իր քաջութեամբ հաւատն ու կրօն
Պահպաներ է խակ, մինչև ի ցայսօր։
Հա՛, հա՛, հա՛, հա՛, ճիշտ է,
Մեր աշխարհն այս է։

ՈՐՍԿԱՆ ՂՂՐԻՐ

ՈՐՍԿԱՆ աղբէր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փընտռես.
Ասա՛, եարաբ դուն չը տեսա՞ր
իմ մարալըս, իմ բալէս:

Դարպի ձեռքէն սարերն ընկաւ
իմ արևըս, իմ բալէս.
Գլուխն առաւ քարերն ընկաւ
իմ ծաղիկըս, իմ լալէս...»:

— «Տեսայ, քուրիկ, նըշխաուն բալէդ
Կարմիր-կանանչ է կապել
Սիրած եարի համբուրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլել:

— «Որսկան աղբէր, ասա՛, եարաբ
Ո՞վ է հարսը իմ բալիս,
Ո՞վ է գրկում չոր գլուխը
իմ մարալիս, իմ լալիս:

— «Տեսայ, քուրիկ, գարդասա բալէդ
Ֆարն է գըրել բարձի տեղ,
Անուշ քընով տաք գընդակն է
կըրծքում գըրկել եարի տեղ:

«Սարի մարմանդ հովն է չոյում
Ճակտի փունջը մարալիդ,
Ծաղիկներ են վըրան սըգում,
Ագիդ բալիդ, խեղճ լալիդ...»:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ԸՐՆԵՑՈՂԻ ԵՐԳԸ

Ուղիղ գիներանից ես տուն եմ գընում,
Փողո՛ց, ա՛յ փողոց, էդ ի՞նչ եմ տեսնում,
Ա՛չ գնամ թէ ձախ՝ ծուռ են երկուսն էլ։
Փողո՛ց, տեսնում եմ, դուն էլ ես հարբել։

Լուսին ջան՝ ռէխբդ ինչի՞ է ծռած,
Մէկ աչքըդ կապուել, մըսը կէս բաց։
Դու էլ ես կոնծե՞լ, ա՛յ դու անամօթ,
Ամաչի՛ր ինձնից, վաղուցուան ծանօթ։

Բա՝ էստեղ, էստեղ,— տես լապտերներն էլ
Չեն կարող ուղիղ ոտքի վրայ կանգնել։
Մէկ պարզ են վառվում, մէկ սաստիկ խաւար
Կամ թէ պատից պատ կըպչում անդադար։

Աղբէր՝ էս գիշեր ամենքն են հարբել,
Ի՞նչ բան է մենակ-մենակ ծոմ պահել,
Չէ՛, էդ կըլինի խտակ գժութիւն,
Ուրեմն նորից նոր դառնամ գինետուն։

Գ. ԴՈՂՈՒԽԵԱՆՑ

ԵՐԳ ՈՒՍԱՆՈՂԱՑ

ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԵՄՔ Հայկազուն,
Գիտեմք, պարտքեր ունիմք անհուն.
Յառաջացման դար է այս դար,
Վատ է այն որ յառաջ չերթար.
Յառաջդիմութեան
Ձինուոր մեզ գրեց
Այս տուն փրկութեան,
Ապրի՛ անսասան:

Երկիր մ՚ունինք՝ Հայաստանն է,
Հին փառքերու պերեզմանն է,
Կեանք կը խնդրեն իր աւերներ,
Մեր կեանքն իրեն եմք մենք ուխտեր.
Հայրենեաց չինման
Բանուոր մեզ գրեց
Այս տուն փրկութեան.
Ապրի՛ յաւիտեան:

Ձաւակներ եմք մի վեհ ազգի.
Պայծառ օրեր տեսած ունի.
Արդ կը հեծէ իրեն վէրքեր,
Պատել ուսան մեր այս ձեռքեր:
Ազգասիրութեան
Հուրն ի մեզ վառեց
Այս տուն փրկութեան.
Ապրի՛ անսասան:

Ի լոյս, ի լո՛յս. կ՚ատեմք խաւար,
Մեր աղետից դա մեծ պատճառ.
Բարին, իրաւն ու գեղեցիկ
Անհուն սիրով մենք գրկեցինք.
Լուսոյ՝ գիտութեան
Ուղին մեզ հարթեց
Այս տուն գիտութեան.
Ապրի՛ անսասան:

Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՀԱՅԴՈՒԿՆԵՐԸ ՎԱՆԱՅ ԾՈՎԻՆ ՎՐԱՅ

ՈՒՇ ԳԻՇԵՐԻՆ ԾՈՎՆ ԷՐ ԽԱՂԱՂ,
Ջրեր վճիտ ու յատակ.
Ջինջ է երկինք մխապաղաղ,
Աստեղազարդ, կապուտակ:

Պարզ հորիզոն մէկ էլ յանկարծ
Սև ամպերով մռայլուեց,
Քամի բրդաւ, քամի անասնձ.
Եւ ծովակն այլայլուեց:

Կուրծքն ուռած ու փրփրուն,
Ալիքներն ահագին,
Սուգ ու հառաչ, գոռ ու գոչիւն
Թռան ծոցից ծովակին:

— Սիրո՛ւն ծովակ, ասա դու մեզ,
Էլ ի՞նչ նորից յուզուեցիր.
Այն ի՞նչ բօթ էր, որ բերեց քեզ
Քամին մոլար անձանձիր:

Արդե՞օք ողբեր ու հառաչանք
Երգեց նա քո ականջին,
Կոյսի մրմո՞ւնջ, մօր հեծեծա՞նք,
Թէ՞ ձիչ անմեղ մանկիկին...

Արիւնապատ մեր ձորերո՞ւմ
Հիւսել է իր մեղեդին.
Թէ՞ աւերակ մեր գիւղերում
Կազմել երգը ցաւագին...

Ահա այդ ցաւոտ սև երգերով
Մեզ քուն ասին մեր մայրեր,
Ու սարսափի զրոյցներով
Խլացրին մեր ճիչեր։

Եւ այնուհետ շատ տարիներ
Նոյն երգերը տխրագին
Սև դարձին կարմիր օրեր,
Վախով լցրին մեր հոգին...

Մի անգամ էլ մեր լեռներում
Մի հողմ փչեց ահաւոր,
Էլ արտասուք նա չէր երգում,
Ոչ ոք ասում ոգաւոր։

Սև լեռների մռայլ ծոցից
Խլած հսկայ գոչիւններ,
Սև ժայռերի գոչիւններից
Նա կազմել էր իր երգեր։

Պղտոր—կարմիր գետը յուզուած
Այնտեղ ունէր իր բաժին,
Մայր բնութիւնը զարհուրած
Մնացել էր այդ երգին...

Երբ ժայռերը գոռում էին,
Հայն ինչպէս լուռ կենար,
Երբ լեռները դողում էին,
Մեր սիրտն ինչպէս դիմանար։

Եւ խլեցինք մենք պատեանից
Սրեր վազուց մոռացուած,
Եւ դուրս ինկանք մեր տներից
Դէպ սուրբ վաթան աւերուած...

Լո՛ւռ կաց, քամի՛, մի փչեր, լո՛ւռ.
Շատ յուզեցիր ծովակին,
Թո՛ղ չընչայ մեղմիկ զեփիւռ,
Թո՛ղ, հանգիստ թող ծովակին:

Լո՛ւռ կա՛ց, ծով, դարերի լալկան,
Էլ բաւ այսքան հառաչներ...
Մենք գօրք ունինք, սուր, հրացան,
Շուտ վերջ կանեն քո ցաւեր...

Թո՛ղ միայն մեզ հուսով լողանք,
Թող որ հասնինք այն ափին.
Տե՛ս, լուռ են ճիչ, հառաչանք,
Ակերա ու ողբ անմեղին:

Դէ՛հ, ընկերներ, զարնե՛նք թիեր,
Հզօր բազկով միասին.
Մօտ է ափը, հէ՛, ախպէրներ,
Հա՛, հասանք ձեր հաւարին..



ՀՈՎԻԿ ՀԱՅՐԵՆԻՆ

ՈՒՐ ԵՍ Հայրենեաց իմ հովիկ անո՛ւշ ...
Գարուն է եկել ծաղկամբ իր քնքուշ,
Արեգ կը ժպտի բնութեան առջև,
Ա՛խ, Հայո՛ց հովիկ, չառա՞ս մեզ բարև ...

Օտար երկնի տակ, գո՛ւրկ մեր աստղերէն
Երբ գարուն փայլի, ա՛խ, կ՚արտասուեմ ես ...
Պանդխտին համար արև փայլ չունի՛ ...
Ո՛ւր ես, ա՛հ, ո՞ւր ես հովի՛կ հայրենի.

Գարուն՝ յորոյ ծոց չըլլար ծաղիկ
Որ բուսած լինի ի Հայ եդեմիկ,
Գարուն չէ՛ Հայուն, ձմեռ կերևի ...
Ո՞ւր ես, ա՛խ ո՞ւր ես հովի՛կ հայրենի:

Ո՞ւր ես, քեզ կարօտ եմք հովի՛կ Մասեաց,
կարօտ քեզ հրծծիւն Արմաւրեան սօսեաց.
Մոռցա՞ր թէ մենք քեզ կ՚սպասենք ի տուգ:
Ո՞ւր ես, ա՛խ ո՞ւր ես հայրենեաց իմ սիւգ:

Ահա բնութիւն հեշտ հրաւէր կարդայ
Տօնել յաղթութեան նորա զօրանկայ.
Հալեցան սառոյցք, զարթեր են ծաղկունք,
Ո՞ւր էք հայրենեաց իմ սո՛յլք անուշունք:

Հովի՛կ, ա՛խ յերկար ոգւոց ձմերուն
Եկուր մեզ բերել զՀայոց գարուն.
Եկուր արթնցնել մեր վհո պարծանքներ,
Հովիկ հայրենի, մոռցա՞ր դու զՀայեր:

Մոռցա՞ր մեր աչեր, մեր սրտեր մոռցա՞ր,
Ինչո՞ւ չես խառներ մեր յողբ և յաչխարհ,
Ինչո՞ւ մեր քնար հեծէ յարտասուք
Եւ դու չես թրթռեր զայն, ո՛վ հայոց սիւք:

Ա՛խ, մեր հայրենեաց բիւր աւերներէն
Փոշեակ մը մեր Հոյոց ոսկրներէն.
Բեր նոցա հառաչ, հընծծէ՛ մերին հետ,
Ո՛վ Հայաստանեաց հովիկ կենսաւէտ:

Բեր Հայաստանի գէթ մէկ յիշատակ,
Ցափանց Երասխայ հասցուր մէկ կայլակ,
Ծառնին մեր հարց հետ արտասունք և ծիծաղ,
Ո՞ւր ես հայրենի սիւք կենսախաղաղ:

Ո՛հ, գրկէ զՀայուն դու ճակատ և բոց,
Արծարծէ ի նա հայրենավառ բոց,
Հասիր մխիթար զգացմանց ազգասէր,
Ո՞ւր ես հարց ծընծեալ հովիկ կենսաբեր

Ո՞ւր ես... Հայ բամբռան չընչէ զօրութիւն,
Գողթան քերթողաց բեր սայլ և զարիւն.
Հայոց սրտերուն ազդէ նոր խրախոյս,
Հովիկ հայրենի արթնցուր մեր յոյս:

Խ. ԵՊ. ՆԱՐ — ՊԷՑ



ԵՐԿ

ՈՒՐ էր թէ զեփիւռիկ
Հլլայի թափառիկ,
Ոսկեթել մազերուդ
Տայի համբուրիկ.

Ո՞ւր էր թէ վարդ գոհար
Հլլայի վառ ի վառ,
Ընտրէի ինձ բազմոց
Կուրծքդ ձիւնափայլ.

Ո՞ւր էր թէ քանարիկ
Հլլայի ես թռչնիկ,
Թըռչիլ, գալ ու չոյել
Դէմքդ գեղեցիկ.

Կամ երազ խուսափուկ
Որ գայի մեննակուկ,
Քունիդ մէջ խոովել
Քու սիրարդ փափուկ.

Ի՞նչ ըրի ես քեզի
Որ ցաւոց այդպիսի
Եւ անբոյժ հարուածոց
Հլլամ արժանի.

Հրեշտակ էր Թըռաւ,
Երազ էր որ անցաւ,
Այդ քու սէրդ փափուկ
Շուտով Թոռմեցաւ:

Մ. ՊԼՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՇՈՒՆԿԸՈՒՐԸ

ՈՒՐ ԿԸ փախչիս, ո՛վ չոգեկառք,
Կեանքի նման սլանաս.
Ո՞վ կը վազէ քու եաւէդ՝
Շունչդ կտրած հովանաս:

Թշնամիներ չի կան եաթէդ,
Բայց կը փախչիս անդադար,
Քու եաւէդ քիւրտեր չեն գար,
Ոչ ալ թիւրքեր անհամար:

Քու ճամբորդներ պատճառ չունին
Երկրէ երկիր փախչելու,
Ձեր եաւէն ոսոխ չի գար՝
Ձեզ ճամբուն մէջ թալլելու:

Բայց դու փո՛ֆ, փո՛ֆ կ'ընես, կ'երթաս,
կ'անցնիս լեռներ ու ձորեր,
կը տատանիս որպէս անդարձ
Իմ մանկութեան քաղցր օրեր:

Բայց, չոգեկա՛ռք, երկնից սիրուն.
Հայն ալ հետդ առ ու տար,
Մեր եաւէն թուրքն է ինկած՝
Սուր, սուսերօք անհամար:

Մենք, չոքեկա՛ռք, տէր ալ չունինք,
Անօգնական ենք, անօգ.
Աստուած անդամ մեզ մոռցած է,
Մեր ցաւերուն՝ միչա անհոգ:

Մարդիկ ձեզ ձեռք չեն կարկառեր,
Առիթ չեն տար որ փախչինք.
Կ'ուզեն որ Հայք ոչնչանան,
Կ'ուզեն մեռնինք, կորնչինք:

Բայց դու թերեւս անյաղթ ճամբո՛րդ,
Մեր արեան մէջ չես ուզեր,
Շահ մը փնտռել մարդոց նման,
Շա՜հ՝ արիւնոտ հաշիւներ։

Կեցի՛ր, պահ մը, Հայն հետդ ա՛ռ,
Ցո՛յց տուր մարդոց թէ դու շատ
Գթոտ սիրտ մ'ունիս քու մէջ,
Քան այս աշխարհ նիւթապաշտ։ Հ. ԷԿԻՆԵԱՆ

ՈՒՐՏԵՂ ՍԻՐՈՒՆ ԿԻՆ ԿԸ ՏԵՍՆԵՄ

ՈՒՐՏԵՂ սիրուն կին կը տեսնեմ՝
Կը նորանան դարդերըս,
Ու երբ անուշ երգ կը լսեմ,
Կը խորանան դարդերըս։
Սահման չունին, դարման չունին,
Չեն վերջանում, չեն անցնում,
Ա՜խ, մահուան պէս, սեւ մահուան պէս,
Իմ դարդերըս, դարդերըս։
Ջառ յոյսերով, անմահ սիրով
Ես քեզ խորունկ սիրեցի.
Աստղ ու երկինք — մատաղ սիրտըս
Ոտներիդ տակ փռեցի.
Սէր չը տուիր ու աշխարհէն
Սիրտըս կըտրաւ, Շուշան ջան,
Ա՜խ, գըմրուխտէ, ա՜խ, գըմրուխտէ
Իմ յոյսե՛րըս, իմ սէ՛րըս...
Կարօտ կեցայ կընոջ սիրուն —
Սըրտի ոսկի արեւին,
Պապակ կեցայ մութ սարերին,
Բաշը փըրփուր նըժոյգին.
Կեանքըս անցաւ թեւերը թափ,
Սիրտը կոտրած սազի պէս,
Ա՜խ, ծովէն խոր, սարէն ծանըր
Իմ դարդե՛րըս, դարդե՛րըս... Ա. Ի.

ԴՈՒ ՉԵՍ ՀԱՒԱՏՈՒՄ

Չե՞Ս հաւատում որ քեզ եմ սիրում
Թէ գիշեր ցորեկ անքուն անհանգիստ,
Միայն քեզ համար մաշում եմ միշտ
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:

Թէ քու վառ սիրով ես հիւանդ պառկայ,
Ուժս սպառած, լեզուս չորացած.
Անեմ քո սիրուն հոգիս կաւանդեմ,
Դու չե՞ս հաւատում թէ քեզ եմ սիրում:

Բայց եթէ յանկարծ ես խելագարուիմ,
Ձեռներս ծոցիս փողոցներ շրջիմ.
Եւ սիրոյ երգը երգեմ ոգալով
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:

Վերջապէս թէ քո սիրտը յաղթելով
Սպաննէ յանկարծ վերջին շունչս տալով,
Քեզ համար միայն արիւնս թափեմ
Դու չե՞ս հաւատում թէ քեզ եմ սիրում:

Թէ սառ դիակս ամփոփուած լինի
Մի քանի չոր չոր տախտակների մէջ.
Ընկերներս տանին դագաղս գրկած
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:

Ամէնք դառն արցունք թափելով պիտի,
Ինծի համբուրեն հրաժեշտ տալով,
Դու չես մօտենար գէթ վերջին անգամ
Բարեւ տալու մինչև յաւիտեան:

Ծնողք, բարեկամք, երկինք և երկիր.
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում,
Որ սիրեմ անկեղծ, դու էլ ինձ սիրես
Դու չե՞ս հաւատում որ քեզ եմ սիրում:

Երբ արև, լուսին խաւարին յանկարծ,
Երբ ինձ իջեցնեն խաւար գերեզման,
Գերեզմանիցս էլ մի ճիչ կարձակեմ,
Որ քեզ եմ սիրում, է՞լ չես հաւատում:


ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ
LES RÉVOLUTIONNAIRES ARMÉNIENS

ՍՈՒԻՆԱՄԱՐՏ

ՉԻՔ ԳՆԴԱԿ, վառօդ, փամփուշտ հատաւ,
Հրացանդ ալ գուցէ կարգէ դուրս ելաւ,
Բայց ընաւ մի վհատիր, հերոյ երկնչիր:
Հաւատքդ թող լինի՝ չի պիտի ընկճիս·
Լեր դու ունկնդիր պետիդ հրամանին,
Սուինք ի կա՛զմ, զգո՛յշ փողն հնչէ ուժգին:
Օ՛ն, ուրեմն յառա՛ջ, գոչէ բարձրաձայն
Կեցցէ՛ Հայ զինուորն, կեցցէ՛ Հայաստան,
Թո՛ղ թնդայ դաշտը, դո՛ղայ թշնամին,
Ա՛հ ու սարսա՛փ տայ անոնց բանակին:

Տեսնե՞ս սա գծուծ, վախկոտ սինլքոր,
Որ քեզմէ փախչի արագ, գլխիկոր·
Տուր հարուած մ՚ուժգին սրուոր կռնակին
Գայ հոգին բերան, տապալի գետին:

Այժմ ընդոստ դէպ յառաջ քայլ մ՝ կամ երկու,
Լեր ճարպիկ, հանէ ճիչ մը աչարկու·
Օ՛ն, յաջմէ վանէ, ապա յանկարծ մխէ խոր,
Ուր լինի հոգ չէ՛, քիթ, բերան կամ փոր:

Դարձ ընդոստ դէպ ձախ, զգո՛յշ, պատրաստ
Կատղած գազան մը քեզ հասնի սրընթաց·
Հա՛ր մէկ մը սրտին, մէկ մ՚ալ ուղեղին,
Արեամբ վլիժու թող հողք հեղեղին:

Այժմ վանէ յետից և մխէ՛ փութով,
Դարձ յետս երեսդ, տո՛ւր հարուած մ՚ալ կոթով·
Դրոշմէ լաւ ընկնի նա յետս հեւալով,
(Մազ մնաց գլուխդ պիտի կորէր սրով):

Այժմ առ քայլս յառաջադէմ ըլտապաւ,
Չի դիմաւորես վայրագ քիւրան ձիարշաւ.
Գլխիդ վանէ, ապա միակ ուզիղ կամ կոր,
Մարդու կողին, ձիու փորին խոր խոր:

Բայց գլո՞ւդ կանգ առնուս, յապաղիս ապշած,
Ցաղթութեան ոգին գլո՞ւխդ է պարկած.
Զե՞ս լսեր եղբարցդ օգնութեան ձայնին,
Ջրդերի մը խումբ հասած է վրանին:

Դարձ յետս յանկարծ, օ՛ն, անդր շտապաւ:
Ցաջմէ, ձախմէ վանէ, հար ու մխէ՛ լաւ.
Թող գլորին գետին և ատ անդ ցրուին,
Եւ հող քար ու ժայռ արիւնով ներկուին,
Մինչև չի մնայ մի հատ քիւրդ ու մուրդ,
Լինին ամէնն ալ լաւ մը ջարդ ու բուրդ.
Գոչէ դու յայնժամ կրկին բարձրաձայն,
կեցցէ՛ հայ գինուորն, կեցցէ՛ Հայաստան.

Պիտ՝ անդրադարձնէ ձայն իւր պատասխան,
Գիտէ՞ք ուսկի — ի Մայր Հայաստան —
«կեցցե՛ս հայ գինուոր, տարիր յաղթանակ,
Պարտքդ կատարեցի՛ր, վայլէ քեզ պսակ.
Տոչորեալ չբթանցս համբոյրներ հրակէզ,
Պի՛տ՝ բուժեն վէրքերդ, կրկին կեանք տան քեզ.
Ե՛կ գրկեմ անգամմ՝, փարեմ քեզ սրտիս,
Եւ կոչեմ իմ քաջ, արժանի որդիս:»

Գ. ԳԱՍՊԱՐԵԱՆ



ԼՈՐԻԿ

Պաղ Աղբիւրի մօտ
Կանգնած հայ աղջիկ,
Սափորը ուսին՝
Ինքն էր գեղեցիկ:

Առաւօտուց թոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար.
Նման ես կարմիր խընձոր լորիկ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ:

Պաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ աղջայ,
Հրացանը ուսին՝
Ինքն էր քաջ հըսկայ,

Առաւօտուց թոնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար
Նման ես կարմիր խնձոր, լորի՛կ,
Լորի՛կ, լորի՛կ, ջանըմ լորի՛կ:

ՍԱՀԱԿ ՄԵՍՐՈՊ

(«Թէ Հայրենեաց Պատկառը»ի եղանակով)

ՊԱՆԾԱՑԷ՛Ք, օն՛, Սահակ, Մեսրոպ,
Հայ բաղդին քալ պահապան.
Ձեր չաւիղին մենք սրտատրոփ
կը հետեւինք անխափան:

Դուք սերունդներ բիւր՝ մթապատ
Մահուան ճանկէն փրկեցիք,
Ձեզմով հայուն կեանքն անապատ
Դրախտ եղաւ գեղեցիկ:

Ճառագիներով ձեր կենարար,
Ո՛վ զոյգ աստղեր մեր երկրին,
Հայ հոգիները պարէ ի պար
Պիտի պարծին ու բերկրին:

Սուրբ Տաճարները հայ կեանքին
Որքան ճնան վե՛հ, կանգուն՝
Պիտ՝ օրհնուի ձեր քաղցր, անգին
Եւ խնկելի զոյգ անուն:

Ցոյսի, լոյսի հայրենիքէն
Մեզ նայեցէք սեւեռուն,
Ու ձեր աչքեր թող միշտ հսկեն
Մեր կազդուրուած քայլերուն:

ՄԽԻԹԱՐ ՊԱՆՏԱՑԻ



ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ



Ա Շ Ա Կ

ՊԱՅԾԱՌ առաւօտ մէյդանի վերայ
Անհամար մարդիկ չարժուում են ահա՛.
Մին արհեստանոց, մին կրպակ վազում,
Միւս դէպի կչխռ բեռը չալակում,
Արծաթ վաստակել,
Ընտանիք պահել:

Փոքր առ փոքր արև է բարձրանում.
Նորանոր մարդիկ աչքի են ընկնում.
Կանայք ըսպիտակ էչրամով ծածկուած
Փոքրիկ մանուկներ գիրկները առած,
Անցնում են փողոցից,
Ուրախ, խնդալից:

Եւ ահա՛ մինը, աչքերը ճղթռած,
Նա անցորդներին նայում է ապշած.
Ետրը հառաչանք վրդոված հանում,
Աչքից արտասուք դեռի պէս թափում.
«Ընտանիք ունիմ,
Բայց ինչ օրի են»:

Ֆաչուեց պատի տակ, բարդանին յենուեց,
Ծրռելով վիզը, ծանր ա՛ի քաշեց,
«Շուրջ տասը տարի հայրենիք թողած,
Այս օտար երկիր եմ պանդխտացած.
Արծաթ վաստակեմ,
Պարտքից ազատուեմ:

«Բայց մինչև այսօր, մինա երկու չեղաւ,
Դարձեալ նոյն տանջանք, նոյն վիշտք և նոյն ցաւ,
Իմ չուրջս պատած, տանջում են, տանջում,
Ընտանեացս հոգւի հետ հալումաշ անում.
Արծաթ էլ չունեմ,
Նոցա ուղարկեմ»:

Մրմնջաց մշակը դեռ անյայտ խօսքեր,
Դէպի բարդանը պարզեց իր ձեռքեր,
Զաքեց, անքալով բեռը չալակեց,
Քրտինքում կորած՝ աղի տուն հասցրեց.
Աչքը աղայի
Զգած է ձեռին:

Երկու ևս փարայ խնդմին չըպրդեց,
Դուռը երեսին չըխկալով խըփեց:
Առաւ մըշակը, ասաց ինքն իրան,
«Սրանո՞վ պահեմ ողջ մի ձերդաստան».
Գլուխ քաշ գնաց,
Թուլացած, յոգնած:

«Զուրկ ընտանեկան քաղցրութիւններից,
Ու իմ սիրելեաց քաղցր տեսութիւնից,
Պանդուխտ տանջուում եմ երկար տարիներ,
Վաստակածս ուտում եմ պարապ օրեր.
Հանգիստ էլ չունիմ,
Աստուա՛ծ, ի՞նչ անեմ:

«Բայց ինձ նմաններ, թէ ինձ կը լսեն,
Ատած խօսքերիս ականջ կը դնեն,
Իրեանց հայրենիք զուր տեղ չեն թողնիլ,
Հարուստի դրան դառնապէս տանջուիլ.
Քիչ կը վաստակեն,
Բայց հալալ կ'ուտեն»: Սէթ



ՊԱՏՈՒՀԱՆԻՍ ՏԱԿ

ՊԱՏՈՒՀԱՆԻՍ տակ
Իր բոյնը չինեց,
Սիրուն ծիծեռնակ,
Հաւկիթներ ածեց։

Ձագերը ելան,
կատուցներ գեղկան.
Իրենց մօր ընկեր
Ձայնով խնդագին։

«Բի՛, բի՛, բի՛, բի՛,
Մայրիկ սիրելի,
Ձի՛, պի՛, պի՛, պի՛,
Ուտեստ բեր մեզի»։

Բանաստուեղծին

ՊԱՏՈՒՀԱՆԻՍ տակէն ամէն առաւօտ
Ուրուականի պէս կ'անցնիս.
Եւ կուսագեղ գլխուդ վրայ կ'արտասուէ
Տերեւաթափ վարդենիս:

Լուռ թաղին մէջ կը լսեմ քայլդ՝ ու գարթնող
Շունն որ վրադ կը հաչէ.
Կամ կը լսեմ քունիս մէջէն ձայնն հազիդ՝
Որ ծոցդ աղուոր կը տանջէ:

Եւ կը խորհիմ թէ քընատ ես ու նօթի,
Իրանդ հովէն կը դողայ,
Եւ կը նայի գանգրներուդ վրայ, քոյր,
Եղեամն իրրեւ չափիւղայ:

Կամ մուճակներդ են պատռտած, փողոցին
Ջուրն անոնց մէջ կը ճողփայ,
Կամ եաւէդ չուայտօրէն կը սուլէ
Սրիկա մը անոպայ:

Եւ կը խորհիմ թէ տան մէջ մայրդ է հիւանդ.
Ցամքած է ձէթն ալ ճրագին.
Ու դուն կ'երթաս գործատան աշխատիլ.
Լոյսին համար ու կեանքին:

Ես կը խորհի՛մ.— և խեղթի պէս կը բաղձամ
Վար իջնել, քո՛յր դալկադէմ,
Քովդ իջնել, համբուրել ձեռքդ նիհար,
Եւ հրծծել — «Քեզ կը սիրեմ:»—

Կը սիրեմ վիշտդ՝ որ իմ վիշտս է գերագոյն,
Կը սիրեմ կուրծքդ քանդուած՝
Որուն մէջ դեռ կը յամառի Սէրդ երգել
Արտոյտի պէս սքրարբած։

Կը սիրեմ քու անօթութիւդ ու ծարաւդ,
Եւ ոսկրներդ ուժասպառ.
Ես կը սիրեմ կոյս աղիքներդ ցամքած,
Մաղերուդ սուգն ուսէդ վար։

Եւ ես կ'ուզեմ ամփոփել քեզ սրտիս վրայ
Տատրակի պէս տարագիր,
Տալ ուժըս քեզ, մըրցանակներս փառքի,
Եւ ազգանունս անբասիր։

Կուրծքըս վահան ընել կուրծքիդ նըշաւակ,
Եւ քօղն ըլլալ պատիւդ,
Կրանիթէ բազուկիս տակ պաշտպանել
Սեռըդ ու գեղդ անժպիտ։

Կուզեմ քեզ տալ ինչ որ պայքարն ինձ տուաւ,
Ինչ որ խլեցի մարտերով.
Քեզ պսակել արիւնիս գոյնն ունեցող
Ցաղթանակիս զարդերով։

Միայն թէ դուն չըլլաս ժժգոյն ու քաղցած
Արեւուն տակ չը հազաս,
Մօրդ վերև չը մարի ճրագն, ու, ո՛վ քոյր
Դուն գործատուն ա՛լ չերթաս։

(Եւդոկիա) ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



Վաճեցի Մօր Երգը

ՊԸՋՏԻ՛ տղայ, չեմ օրօրեր օրորանքդ, որ քուն՝լաս,
Հայ աղբարքդ առաքելան, մինակ դո՞ւ ետ պիտ՝ մնաս·
Զարթի՛ր հոգիս, անուշ քունէդ, թող աչքերդ լոյս տեսնեն,
Արևմուտքէն արև ծագեց, բաղդը բանեց Հայ ազգին:

Չար Սուլթանի ոսկի գահը ջարդուեցաւ, վար ինկաւ,
Գահի տակէն հազար ազգաց ազատութիւն ծագեցաւ·
Ով որ չուսաւ առքի ելլէ, ազատութիւն կը գտնէ,
Սիրուն որդի՞ս մինակ չար լուծի տակ պիտ՝ մրտնէ:

Մենք սուլթանէն չատ խնդրեցինք, կողկողացին ու լացինք,
Աղի աղի արտասուքով ձեռք ու առքը լուացինք,
Բայց նա չանսաց պաղատանքին ողորմելի Հայերուն·
Այժմ նայինք նա կը լսէ՞ չառաչիւնը սուրերուն:

Տուր, սիրական, քակեմ ձեռքիդ պալուլները, արձակեմ,
Ու այդ թուլիկ, աչքիդ մէջը մի պոզպատէ սուր դընեմ·
Ըստուկ գընա՛ արեան դաշտը, վերադարձիր ազատուած,
Արդեօք մի օր պիտի լսե՞ս մեր խնդիքը, ո՛վ Աստուած:

ԴԱՄԱՌ-ԲԱԹԻՊԱ.

ԵՐԳ

ՈՒՍԱԿԱՆ պետութիւնն, հայեր, ըսաւ աչխարհի,
Բաւ է քրիստոնեայք, ո՛հ հայեր, մնայք խեղճ գերի·
Բացեց պատերազմ, հայեր, ընդդէմ թուրք ազգին
Ափսոս այն ազգակից վախ հայեր ի զուր զոհ գացին:

Ռուսական բանակն, հայեր, մտաւ Հայաստան,
Օսմանեան բանակը ո՛հ, դէմ դէմի ելաւ·
Հրացան թնդանօթներ, հայեր, գոռալ սկսան,
Ափսոս այն ազգակից խեղճ հայեր ի զուր զոհ գացին:

Հայկազն Մելիքով, հայեր, գեներալ ռուսաց,
Կարսը չրջապատեց ո՛հ, հայեր, վրան ռումբ տեղաց·
Ռումբերն այրեցին, հայեր, մզկիթքն թրքաց·
Ափսոս այն ազգակից վախ հայեր ի զուր զոհ գացին:

Տաճկաց լուր ղրկեց, հայեր, Լօրիս Մելքումին,
Հայոց մայրաքաղաք պիտ լինի ցանկալի Կարին·
Եթէ չուտ չը հասնիք, հայեր ժամը մարտնչին,
Ափսոս այն ազգակից վախ հայեր ի զուր զոհ գացին:




ՋՕՐԱՎԱՐՆԵՐ ԵՒ ՊԵՏԱԿԱՆ ԱՆՁԵՐ
LES GENERAUX ET LES HOMMES D'ETAT ARMÉNIENS

ՀԱՅԴՈՒԿ

Սաղոյ ձորերում, կռուի ձորերում,
Հայդուկն է ընկեր խոր վէրքը սրբտին,
Վէրքը վարդի պէս բացուած կարմրրուն,
Ու ձեռքն է քըցեր կատրած հրացանին։

Արնոտ դաշտերում ծըղրիկն է ծըղրում,
Հայդուկն է ընկեր մահուան խոր քընով,
Հայդուկը հոգում երազ է տեսնում,
Հայրենի աշխարհն ազատ, ապահով...

Տեսնում է... սրբտում հոգին է չընկչընկում,
Փայլուն գերանդին դընդում է անուշ,
Ու փոցխ են քաշում սիրուն աղջկունք,
Հայդուկի վերայ երգելով անուշ...։

Սաղոյ ձորերով ամպեր են անցնում,
Հայդուկի վերայ արծիւն է գալիս.
Ա՛խ, սև աչքերը արծիւն է հանում,
Հայդուկի վերայ ամպերն են լալիս...։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



ՍԱՍՈՒՆ

ՍԱՍՈՒՆ գաւառ, հին Հայաստան,
Համբաւդ լսեց աշխարհ համայն,
Երիտասարդ են քաջազուն,
Հայոց պարծանք միայն Սասուն:

Սասուն պարարտ հովիտներով,
Պարծի ընդմիշտ իւր քաջերով,
Որք թ'եւ ունեն կըլկըլ կորեկ,
Խաղան ընդ սուր գիշեր, ցորեկ:

Սասուն գաւառ, անտառներով
Պարսպապատ բարձր լեռներով,
Դիմադրեց միշտ քուրդ զօրքերուն,
Հայոց մատաղ եղաւ Սասուն:

Սասուն երկիր լեռներու մէջ,
Ալ որբացաւ իւր ելեւէջ,
Քարոտ, լեռնոտ ու խորտ ու բորտ,
Սասուն բուրէ այժմ արեան հոտ:

Սասուն երկիր յոյժ բարելի,
Լեռներ, դաշտեր ծաղկօք են լի,
Թէեւ Թահսին քանդեց Սասուն,
Բիւր Հայք բաղձան սեւ հողերուն:

Սասուն կտրել ետ հրաման,
Գազանատիպ Համիտ սուլթան
Կանայք, մանկունք եւ արք ինկան,
Իբր քաւչարար զոհ Հայկական:

Ցուրտ դիակաց բարդեալ դէզ դէզ,
Եւրոպացիք եկան ի տես,
Մարտիրոսաց կարգն է Սասուն,
Արժանացաւ սրբոց դասուն:

Քայլերգ Սասնոյ

ՍԱՍՈՒՆ եւս ապստամբեց,
Աչխարհի մէջ հանեց թնդուն,
Ամերիկա, Եւրոպ ցնցեց,
Քաջաց բանակ գունդ առ գունդ:

Հայոց սրտեր թրթռացին,
Հայու ձայնը որոտաց,
կարիճք յառաջ չուտ խաղացին,
Ազատութիւնը թնդաց:

Ահա, Սասունցիք, քաջ Սասունցիք,
Ձեր արիւնին մենք զուրպան,
Մխութեան սուրբ սերմեր ծըլին,
Ազատութեան մենք զուրպան:

Թուրքը լսեց և կատաղեց,
Զօրքեր հանեց բիւրաւոր,
Ցիսան հազար քիւրտեր կանչեց,
Արիւնարբու զօրաւոր:

Եւ Սասունը պաշարեցին,
Այն վայրենի գնդերը,
Թնդանօթներ որոտացին,
Քարքանդ ըրին գիւղերը:

Ահա, Սասունցիք, քաջ Սասունցիք,
Ձեր արիւնին մենք զուրպան,
Ահա սուրբ հողիդ անմահ արդիք,
Դիակներնուդ մենք զուրպան:

Մօր արգանդը թուրքը պատռեց
Դլուխն անցուց նիզակին,
Մինչ վերջին չունչ Սասուն կռուեց
Ազատութեան կարօտով:

Ա՛խ Թուրք ու քիւրտ բռնաւորներ,
Նզովք ըլլայ ձեր գլխուն,
Միշտ կարիճ են Սասունցիներ,
Նզո՛վք, Զէքի, քո անուն:

Եւ արիւնը գետի նման,
Թրջեց Սասնոյ վեհ սրտեր,
Հայք բիւրաւոր կոտորուեցան,
Բռնութեան քալ սուրը զոհեր:

Եւրոպ տեսաւ ցնցեց անդին,
Ապշած նայեց Հայերուն
Տեսաւ վիճակ գէշ է Թուրքին,
Եւ խորհեցաւ չահերուն:

Եւրոպ արեան չը հաւատաց
Եւ յանձնախումբ մը ծնաւ,
Թուրքն ալ յառաջ ինկաւ խնդաց,
Զիւնոտ լեռներ ցոյց տուաւ:

Եւրոպա, ա՛խ, մօր մը պէս խորթ,
Հայ դիակներ կը ծաղրես,
Թուրքը կընտրես քեզ առաջնորդ,
Այս ի՞նչ կատակ մեզ կ՛անես:

Կեցցէ՛ կռիւ, կեցցէ՛ արիւն,
Այս է ճամբան միշտ մեզի,
Մեր արիւնը Եւրոպային
Անշուշտ թէ քիչ կը թուի:

Ազատութեան համար անմահ
Թող ելլէ ազգ Հայաստան,
Մեր արիւնով մեզ է ներկած
Շահախնդիր Եւրոպան:

Սասունցի կի՛ն, Սասունցի քա՛ջ,
Ձեր արիւնին մենք զուրպան,
Մխութեան սուրը սերմեր ձլին,
Ազատութեան մենք զուրպան:

ՊԵՐՃ ՄՈՒՇԵԼՈՒ



Նահատակ Սասուն

ՍԱՍՈՒՆ, Սասուն, քաջաց գաւառ հայ երկրի,
Ջո ջանիւդ վեհ նպատակաւդ սուրբ, բարի,
Ցանկարծ չարժար, ցուցիր համայն աշխարհի
Կուրծք լայնալանջ, բազուկ հզօր, սիրտ արի։

Սասնոյ կարիճք, քաջ նահատակ,
Անմահ ջանիցդ յիշատակ,
Մէն մի Հայու սրտին ի մէջ
Մնայ յաւերժ վառ, անշէջ։
Ինկար, բայց կ'ապրիս,
Ի փառս Հայ ազգիս,
Անմահից դասուն,
Նահատակդ Սասուն։

Կարի՛ճք անմա՛հք, Ձեր վեհ ճգանց փառաւոր
Մէն մի Հայ սիրտ, լի ի սուգ՝ վիշտ ահաւոր,
Կ'ուխտէ անդէն, ազգին խաչին երբ զինուոր
Ձեզի նման կռուի՛լ, զոհուի՛լ կամաւոր։
Սասնոյ կարի՛ճք, քաջ... և այլն։

Սասունցիների Գանգատը

ՍԱՍՈՒՆ վազեց արևան դեմեր,
Ձէնքեր չունինք առանք վէտէր.
Մըր տարտը դուք հէչ չէք քաշեր,
Խայե՛ր, խայե՛ր, խայե՛ր, խայե՛ր:

Անգութ տաճիկ խըտ քրդերուն,
Աւերեցին մըր տեղ ու տուն.
Մըր ջիվաններ տարան գերի,
Թորկին մըր տներն անվերի:

Խարտ ու ախջիկ բռնին թուանք,
Տընով տեղով մենք քանդուանք,
Մեռաւ մամ, պապ, ճժեր մեռան,
Սովէն թե թիկունքներս կ'եռան:

Սասուն ձեռնէ գնաց, կ'ասէք,
Զուր տեղ մարդու մի բամբասէք.
Զոր խաց տուէք ու քանի մ'պէնք,
Էլ ուրիշ բան ձեզնէ չուզենք:

Քըզի մեռնինք սուրբ Տիրամէր,
Դու մի' թորկի մըզիկ անտէր,
Խըղճուկ խըղլար, կանչէ ու լայ,
Բալքի քու ձէն լսէ Աստուած:



ՍԱՍՈՒՆՑԻ ԼԵՒՈՆ

ՍԱՄՈՑ գաւառում ծնաւ մի մանուկ,
Անունն էր Լեւոն՝ ուժեղ ու կարճուկ,
Դեռ նա չհասած պատանեկութեան,
Ցանձն առաւ զոհուիլ ի սէր ազգութեան:

Վրիժառու լինել ուզեց իւր նախնեաց,
Լցնել կարօտը իր փափագանաց.
Բիւրակեան լերանց ստորոտն իջան,
Այնտեղ կանգ առին, մի քիչ քնացան:

Ցանկարծ արթնցան՝ մօտ էր կէս օրուան,
Բարբարոս քրտեր վերևից տեսան,
Ընկերք զոչեցին, Լեւոն արթնցաւ,
Հրացան ձեռք չառած գետին փռուեցաւ:

Արցունք աչքերից վառ վառ կը թափուէր,
Լեւոն ցաւոց մէջ ընկած տառապուէր,
Ո՛վ հայեր, հայեր, թափեցէք արիւն,
Ցաւերժացուցէք ձեր նախնեաց անուն:


ԲԱՐԵՐԱՐՆԵՐ
LES BIENFAITEURS ARMÉNIENS

ԵՐԵՔ

ՍԱՐՍԱՓԵԼԻ երազ տեսայ այս գիշեր.
Որպէս թէ մի պարտիզի մէջ կանգնած եմ.
Մշտադալար զարդարուած է կանաչով,
Բիւր ծաղիկներ իւրեանց հոտը բուրում են:

Ուրախ ուրախ թռչունները երգելով,
Ծառէ ի ծառ ողջունեցին իմ գալը,
Ծաղիկները քնքուշ գլուխը խոնարհած,
Ողջոյն տուին — զմայլեցաւ իմ սիրտը:

Գնում եմ խոր պարտիզի մէջ — մարդ չկայ.
Ոչ մի տեղից ձայն, աղաղակ չէ լսւում,
Միայն հեռուից հասանում է ականջիս
Ջրի ձայնը, բայց ջուրը դեռ չեմ տեսնում:

Իմ գնացած ճանապարհի ծայրումը
Ահա բացուեց մի գեղեցիկ հրապարակ,
Մարմարոնեայ, գեղեցկաչէն աւազան,
Ուր գործում էր ջուրը այնքան աղաղակ:

Երբ մօտեցայ աւազանին — ի՛նչ տեսնեմ,
Մի հրաշագեղ, մատաղահաս օրիորդ,
Աւազանի ափի վերայ խոնարհած
Լուանում է իատակ ջրում մի լուացք:

Գերբնական է այդ աղջկայ տեսիլը,
Ոչինչ չկայ նորա վերայ հողեղէն,
Լուսեղէն է, թափանցիկ է մարմինը,
Նչքը, յօնքը սև սաթի պէս փայլում են:

Ջըքնաղ իրան, մէջքը բարակ, իսկ կուրծքը
Դուրս է նայում բարակ հագուստի տակից,
Որպէս երկու հասունացած մեծ նռներ,
Թաւիշապատ, խելք է թըռցնում գլուխից:

Կերպարանքը կանոնաւոր ու սիրուն,
Ոսկիամայրն չարժէ նորա մօտ աչինչ.
Ծածանւում են ուսի վերայ մազերը,
Բերնի վերայ ծաղկում է քաղցր ժպիտ:

Երգ երգելով նա կտաւ է լուանում,
Նորա ձայնը կախարդում է թովչի պէս.
«Ջաղա՛, աղբիւր, նա երգում է, խայտալով,
Իմ կտաւը ճերմակացրո՛ւ քո ջրերով»:

Ո՛վ իմ չքնաղ, սա՛, լսեմ, ո՞վ ես դու,
Ես մօտեցայ և ասում եմ նազելով.
Ո՞րտեղից ես եկած այստեղ և ինչո՞ւ,
Այդ ի՞նչ բան է, լուանում ես երգելով:

Ինձ պատասխան տուեց այսպէս. «Պատրաստ կաց,
Մահու պատանք լուանում եմ քո համար...»
Եւ այս խօսքը ասած-չասած՝ ծուխի պէս
Անյայտացաւ իմ աչքիցը ամէն բան:

Տեսանում եմ, որ կանգնած եմ անտառում,
Ծառի կատարքը հասանում են երկնքին,
Իւր մռայլոտ գագաթովը անտառը
Ոսկալի էր ահաբեկուած իմ սրտին:

Լսելիքս ամբոխուեցան, վատատեցան աչքերս,—
Կացինի ձայն հեռուից յանկարծ լսում եմ.
Ախտ ծառերի մէջերից դուրս վազելով,
Յանկարծ մի այլ նոր երևոյթ տեսնում եմ:

Մի հաստաբուն բարձ կաղնի ահագին,
Նորա տակին նոյն օրիորդն է կանգնած,
Կացին ձեռքին. ջարդատուելով մեծ կաղնին,
Հրաժարւում է իր դարաւոր արմատից:

Օրիորդը կարում է ու երգում է,
Նորա երգը սիրտ կախարդող է դարձել.
«Կարի՛ր, կարի՛ր, սրաբերան իմ տապար,
Փայտ կտրատիր, տախտակ տաշիր իմ համար»:

— Իմ նազելի՛, իմ սիրակա՛ն, ասա՛ ինձ,
Մտանում եմ նորան դարձեալ ասելով.
Ասա՛, ո՞վ ես և կամ ուսան՞ ես եկած,
Էր տախտակներ կտրատում են երգելով: —

Իմ հարցմունքին այսպէս տուեց պատասխան.
«Քո օրհասը մտեցել է, տախտակներ
Պատրաստում եմ ես քո դագաղի համար».
Ասաց, դարձեալ անյայտացաւ. ես մնացի:

Քայքայուելով հոգիս ու սիրտս, նայում եմ.
Ահա դաշտը սեանում է շորս կողմից,
Ես չգիտեմ, թէ ինչ պիտի գայ գլխիս,
Բայց դողում եմ բոլոր մարմնով երկիւղից:

Երթում եմ ես... բայց ամպի պէս մի պատկեր,
Հեռուից երևնցաւ իմ աչքին.
Մտա վազեցի, դարձեալ տեսայ... ես նորան,
Մի դունաթաւ, տխուր դէմքով ուրուական:

Մի ծանր մուրճ բռնած էր պինդ իւր ձեռքում,
Որով գեանին փորում էր անդադար.
Ո՛հ, թէև այնքան գեղեցիկ էր իմ աչքին,
Բայց երկիւղից սիրտս գարկում է յուսահատ:

Նա փորելով դարձեալ երգում է մի երգ.—
Մի սրտաչարժ, մի շատ տխուր, սրտառուչ երգ.
«Մո՛ւրճ իմ, մո՛ւրճ իմ, փորիր դու ինձ մի փոս խոր.
Փորի՛ր մուրճ իմ, մի դրկաշուի գերեզման»:

Մօտենում եմ նորան դարձեալ խնդրելով,
— Իմ նազելի՛, իմ սիրական, ասա՛ ինձ,
Ասա՛, ո՞վ ես և կամ ուսո՞ւմ դու եկար,
Կամ այդ փոսը դու փորում ես ո՞ւմ համար:

Իմ հարցմունքին պատասխանում է այսպէս.
«Ես քո համար պատրաստում եմ գերեզման».
Ձայթեց սիրտս... և երկիւղից և ցաւից,
Բայց կամեցայ տեսնել իմ այս օթևան:

Երբ գնացի ես փոսի մօտ նայելու,
Սարսափելի մի ձայն եկաւ ականջիս.
Ցետս եմ նայում, տեսանում եմ այլ աղջիկ,
Նոյնպէս չքնաղ, նոյնպէս մատաղ, թափանցիկ:

— Իմ նազելի, գոնէ դու ինձ դիտա՛, ասա՛,
Ո՞վ է փորող օրիորդը և դու ո՞վ.
Ինչո՞ւ այդպէս գիշատում էք իմ սիրտը,
Շուտ պատասխան տուր, նազելի, խղճալով: —

«Մենք երկուքս էլ քոյր ենք միմեանց անբաժան»,
Օրիորդը պատասխանեց հեգնելով.
«Նա երէցն է, իսկ ես կրտսեր հարազատ...
— Բայց ո՞վ էք դուք, ես հարց արի գոռալով:

«Նա ալևոր Հայաստանի հոգին է...»
«Իսկ իմ անունս է «Անմահաբանութիւն»,
«Մենք շատ տարեր անցուցել ենք խառովով,
«Եւ շատ մարդիկ փոս են ընկել մեր ձեռքով»

Ասաց, ժպտաց. կատաղաբար երկու քոյր
Գլորեցին ինձ փոսի մէջ, ես ընկայ...
Շնչարգելուած նեղութիւնից զարթնելով,
Ստուգեցի, թէ երազ էր, որ տեսայ:

ԿՈՄՍ ԻՄՄԱՆՈՒԷԼ (Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ)

ԱՇՈՒՂԸ

ՍԵՒ ԽԱՒԱՐԸ իմ ընկերս է անբաժան․
Ես չըգիտեմ, ի՞նչ ասել է պայծառ օր,
Բայց այսօրուայ խաւարն է խոր, հոգեհան․
Դիակները փախչում են աչաւոր,
Եւ պատմում են իրենց ցաւերն անպատում,՝
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում։

Հին դարերից ցաւեր չալկած յամրօրէն,
Հառաչելով անցաք արեան ծովերով,
Համբերութեան դասեր առիք լեռներէն…
Քնէ՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով․
Եւ պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում։

Այս իմ անճար քնարն ունի երեք լար․
Այն՝ ողբաձայն, լալկան, խղճուկ, դողդոջուն,—
Ի՞նչպէս ողբամ ձեր ցաւերն անհամար,
Սրտեր վառեմ, արցունք քամեմ ես անհուն…
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում․
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում։

Տառապանքի, սուգ ու սեր ինձ ընկեր
Մարդ չմնաց իմ արիւնոտ վաթանում․
Լուռ են չուրջս լեռներ, ձորեր, չիրիմներ․
Լոկ քամին է կողկողագին մրմնջում…
Դո՛ւք պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
Որից Աստուած դուցէ դողայ երկնքում…

Ես էլ ցաւի դաշն կապեմ քամու հետ,
Եւ արցունքի երգեր հիւսենք միասին․
Նա խաղում է ամպրպների շանթի հետ,
Նա յոյզ ու բոց կուտայ նաև մեր երգին․
Կոյր աշուղը, մրրկաչունչ, խոլ քամին
Կը պատմեն ձեզ տառապանքներն աշխարհին։

Ոռնա՛, քամի, հազար ու մի ձայներով,
Թո՛ղ սարսռան լեռներ, ձորեր, անդունդներ·
Անցի՛ր մէկ-մէկ դղեակների վրայով,
Լիզի՛ր վէրքեր ու հաւաքիր հառաչներ...
Կոյր աշուղը, մրրկաշունչ, խոլ քամին,
Կը պատմեն ձեր տառապանքներն աշխարհին։

Ի՞նչ ես վազում աննպատակ դէպ հեռուն,
Հառաչանքներ, խոր-խոր ցաւեր չալակած·
Վե՛ր սլացիր դէպի երկինքը անհուն,
Գտի՛ր գահը, ուր բազմած է մի Աստուած։
Թէ անզօր է սրբել արցունքն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ՛, և ոչ Աստուած երկնքում։

Փչիր վրան աւերաշունչ որոտով,
Թող իր գահը դողայ այնտեղ և Աստուած·
Թող երկինքը մթնի իր վառ աստղերով,
Տիեզերքը դարձրու՛ քաօս, աւերած...
Թէ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ, և ոչ Աստուած երկնքում...

Ջուր ես խառնում ծեր ալիքներն աշուղին·
Այնտեղ միայն հին օրերի խոհեր կան·
Դու խօմ գիտես լեզու, խօսք տալ ժայռերին,
Նրանց ասա՛, թող քեզ պատմեն, ի՞նչ տեսան...
Երբ անզօր է այն Աստուածն աշխարհում,
Գահ էլ պէտք չէ, և ոչ Աստուած երկնքում...

Անցիր հանդարտ շիրիմների վրայից,
Հողի տակ էլ թշուառները քուն չունին·
Շարան-շարան հողաթմբի խորքերից,
Խուլ մրմունջներ գուցէ լսես ցաւագին...
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ աշխարհում,
Գահ էլ պէտք չէ, և ոչ Աստուած երկնքում...

442 Սև խաւարը իմ ընկերս է

Կոյր աշուղը, մրրկաշունչ խօլ քամին,
Սև երգ կ'ասեն, ցաւ կը պատմեն աշխարհին.
Երբ այսքան ցաւ ու արիւն կայ երկրում,
Գահ էլ պէտք չէ, և ոչ Աստուած երկնքում...

Խօսի՛ր քնար... Արար-աշխարհ թէ լռի,
Ցաւի, արեան, տառապանքի լուռ ծոցում,
Կոյր աշուղը հառաչանքի պարտք ունի
Թշուառութեան ու անէծքի վայրերում.
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ կարդայ հային նախատինք:

Երեք լար կայ, մէկը մէկից սգաւոր.
Մէկն արիւն, մէկն արցունք է քամում,
Եւ երրորդը — այն ամենից թունաւոր,
Անէծք ունի իր թրթռուն խաղերում.
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ հային կարդայ նախատինք:

Սև բռնութեան, աւերածի զինուորներ,
Խոպան աւեր բոց փռեցիք ձեր ոտքով,
Բնակութիւն, շէն քաղաքներ ու տներ,
Անապատի վերածեցիք անվրդով.
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ կարդայ հային նախատինք:

Դիակների վիշտը լացի ու ցաւեր...
Քանի՛ դարեր լոկ ողբ ու սուգ ենք ասում,
Այժմ անէ՛ծք, դահիճներին մարդակեր,
Վրէ՛ժ միայն, լոկ վրէժ եմ պահանջում...
Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
Թո՛ղ ողջ աշխարհ կարդայ հային նախատինք...

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՍԻՐՈՒՆԻ ԸՂԵՐ

Սիրուն աչե՛ր, աչե՛ր սևորակ·
Ձեր մէջ փայլում է մի վառ վառ կայծակ·
Դուք իմ սրտիս մէջ կրակներ էք թափում,
Դուք էք իմ ախըը, ես ձեզ եմ պաշտում:

Աչեր սևորակ, սևորակ աչեր,
Ձեր մէջ տեսնում եմ մի երկնային սէր·
Դրանց սիրելու եմ մինչև գագաղ,
Դուցա պէտք է ես լինիմ զոհ, մատաղ:

Դուք սիրուն աչեր, դուք քնքուշ աչեր,
Սև էք դարձրել իմ պայծառ օրեր·
Դուք մաշում էք ինձ անողորմագին,
Եւ չէք խնայում հասակիս ծաղկին:

Շողում էք սիրով մինչ ի մահ գրաւիչ,
Լցուած էք չնորհով, հոգեկան աչեր,
Ինչո՞ւ ձեր միջից այդպէս կախարդիչ
Թափում են տաք տաք բոցեղէն կայծեր:

Քանի՛ սպանիչ ցանում էք վիշտեր,
Սրտիս մէջ անփորձ և դեռատղիկ·
Քանի՛ արտասուքիւն, քանի՛ դառն վէրքեր,
Ագդում էք նրան անբուժ, թափանցիկ:

Թափեցէ՛ք, ուրեմն, բռնաւոր աչեր,
Ձեր ողջ թունաւոր նետերն իմ վրայ,
Թող այրեն, ուտեն իմ կեանքիս թելեր,
Երջանիկ վայրկեան ինձ համար չկայ:

Բայց կը մոռնա՞ս, կոյս դու նազելի,
Այն խաղաղ, պայծառ ժամեր սիրելի,
Երբ մենք ձեռն ի ձեռն լուսնակ գիշերով
Զրուցում էինք անուշ խօսքերով:

Երբ ուսիս վրայ գլուխդ խոնարհած
Իբրև մի քնքուշ սրտակից ընկեր,
Համբուրում էինք միմեանց, ցնորուած,
Խոստանալով սէր և՝ ոսկի յոյսեր:

Դեռ չէ թառամել քո վարդն ինձ տուած,
Ի նշան անմեղ գրկախառնութեան·
Ինձ դու մոռացար, անգութ, անաստուած,
Այո, մոռացար և պարտք սրբութեան: Ս· Շ·



Սէր իմ, ով սէ՛ր, սէ՛ր,
Ա՜խ, դու անգութ սէր,
Տարար խելք-միտքս՝
Գլխիս եղար տէր։

Ո՛վ իմ սիրոյ կոյս,
Հաւատր իմ հոգւոյս.
Առանց քե՛զ, մի ժամ
կեանքից չունիմ յոյս։

Մարդիկ անհամար,
Ինձ խեղճ, խելագար,
Կոչում են այժմուս,
Դո՛ւ եղար պատճառ։

Մինչ ե՞րբ դու այսպէս,
Ինձ պիտի տանջես,
Մինչ ե՞րբ դո՛ւ ճրագ —
Այրուող թիթեռն ես։

Ե՛կ առ իս, ե՛կ առ իս,
Գոնեա՛, առ հոգիս,
Սիրով կը բաշխեմ՝
Քեզ իմ հրեշտակիս։

Գուցէ քեզ համար՝
Գրիչն արդար,
Ինձ նշանակեց —
Զոհուիլ չարաչար։

Աւա՛ դու, Լոգման,
Գիտե՞ս դու դարման,
Սիրահար սիրտը,
Բուժելու միայն։

—«Ո՛հ, չունի՛, չունի՛,
Նա դարման չունի,
Սիրահար սրտին՝
Սէրը դեղ կ՛անի»։

Սուրբ ես դու, ով սէ՛ր,
Քեզ ստեղծող Տէր —
Երկնից և երկրի։
Արեց հէր և մէր։

Ես էլ քո պաշտօն՝
Առի անարատ ընչ,
Միշտ սէրը պաշտել,
Մինչև վերջին շունչ։

ՐԱՖՖԻ

ՍԻՐԱԿԱՆ

ՍԻՐԱԿԱՀՆ, սիրակահն,
Դու սէր իմ պատուական.
Մինչև ե՞րբ վչտահար,
Ես մաշուիմ սիրավառ:
Ա՛խ, մինչ երբ ես այսպէս,
Տագնապիմ ասատկապէս.
Մինչև ե՞րբ անընդհատ,
Հառաչեմ յուսահատ,
Սիրական, սիրական, ևլն..

Գիշերը քուն չունիմ,
Ցերեկը վիշտ ունիմ.
Բոլոր կեանքս անհանգիստ,
Ինձ չըկայ կաց ու նիստ:
Սիրական, սիրական, ևլն.

Քո սէրը ինձ մաշեց,
Եւ կեանքս խարշատեց.
Մի՞թէ դու, ո՛վ անգութ
Չես զգում սիրոյս ուխտ:
Սիրական, սիրական, ևլն.

Մի՞թէ դու սէր օտար,
կը պաշտես քո սրտում.
Իսկ և ինձ այց կ՝անես,
Սև մահուան դագաղում:
Սիրական, սիրական, ևլն.

Ո՛հ, խղճա՛ սիրական...
Տուր ինձ յոյս հարանական,
Թող կապուինք մի հոգւով,
Վայելենք սէր սիրով:
Սիրական, սիրական, ևլն.

Ց. Դ.

ՕՐՈՐՈՑԻ ԵՐԳ

ՍԻՐԱՀԵԶԻԿ սիրուն աղջիկ,
Քնիր անուշիկ քնով.
Որ զօրանաս, սրտիս ծաղիկ,
Քնքուշ տեսքով, կարօտով:

Քեզ սիրում է քո մայրիկը,
Մաքուր կաթըս քեզ տալով.
Եւ օրհնում է քու հայրիկը,
Քեզ փարելով գգուելով:

Ինձ մի տանջեր, իմ անուշիկ,
Թող ճնայ սրտիկս խաղաղ.
Ննջիր հանգիստ հոգուս հատիկ,
Թող ես չտեսեմ ա՛խ ու վա՛խ:

Աչն Յիսուսի քեզ պահապան,
Գիշեր, ցորեկ, օրն ի բուն.
Որ զարգանաս իմ աննման,
Եւ ըլլաս մայր սրբասուն:

ՍԻՐԵՑԻ ԵԸՐՍ

ՍԻՐԵՑԻ եարըս տարան,
Եարայ տուին ու տարան,
—Էս ի՞նչ գուլում աչխարհ է,
Պոկեցին սիրտս ու տարան:

Ցաւըս խարն է, ճար չը կայ,
Ճար կայ, ա՛խ, ճարող չը կայ.
— Էս ի՞նչ գուլում աչխարհ է,
Արտացու ընկեր չը կայ:

Լաւ օրերը գընացի՛ն,
Ափսոս ասին, գընացին,
— Էս ի՛նչ գուլում աչխարհ է,
Սև դարդերը մընացին:

ՍԻՐԱՀԱՐԻ ՄԸ ԱՂԵՐՍԸ

ՍԻՐԱԿԱՆՍ, ալ չի խայնիմ չ'ամաչեմ,
Ոտքդ ինկած կուլամ, կողբամ հառաչեմ,
Զիս մի մերժեր, յանուն երկնից կ'աղաչեմ,
Աշխարհիս մէջ դու մէկ հատիկ սիրական։

Ինչո՞ւ արդեօք լուռ կը մնաս՝ չես խօսիր.
Դեռ յուսատու բառ մը անգամ ինձ չըսիր.
Ժպիտ մը գէթ դէմքիդ վրայ՝ անբասիր
Չի տեսայ դեռ, ի՞նչ անգութ ես, սիրական։

Րոպէ մ'իմ ամէն հոգ կրնաս վանել,
Կասկած, երկիւղ սրտէս ամէն վախ հանել,
Զիս քու սէրդ՝ սրտիդ տէրը անուանել.
Բայց մունջի պէս լուռ կը մնաս, սիրական։

Արդեօք ինչե՛ր քեզ խօսեր են իմ մասին.
Գուցէ շատեր իմ ետեւէս դէշ ըսին.
Բայց չարախօսք թող կորնչին միասին.
Թշնամիի խօսքին մ'անսար, սիրական։

Կասկածոտ ես՝ աչքդ զքեզ կը մատնէ,
Այլեկոծեալ հոգիդ սիրտդ կը յայտնէ.
Բայց իմ սէրս սրտիդ դրան կը զարնէ.
Բա՛ց իմ առջեւ անոր դռներ, սիրական։

Ալ հերիք չէ՞. ինչո՞ւ բերանդ ես գոցեր,
Սիրտս կրակ ձգեր, հոգւոյս մէջ՝ բոցեր.
Զիս գերեզման կրնան տանիլ այս խոցեր՝
Թէ չի գթաս իմ վիճակիս, սիրական.

Նաւի մը պէս ծովին վրայ ալեկոծ՝
Խաղալիք մ'է եղած սիրտս, ցաւս ու կոծ
Բարդած միայն սրտիս վրայ ծանր ու հոծ,
Ժպիտով մը վանէ զանոնք, սիրական։

Ինչ որ ուզես սիրոյդ փոխան կուտամ ես,
Դրամ, ոսկի, սիրտս ալ նուէր՝ հոգիս քեզ.
Եթէ պահ մը խորհիս ինծի պէս՝
Ես երջանիկ դու գոհ կըլլաս, սիրական։

Սակայն թող որ սիրտս երգէ՝ լայ հոգիս,
Մինչեւ ամպեր ցրուին երթան՝ դու ժպտիս.
Ճակտէդ քաղեմ համբոյր, սեղմեմ քեզ սրտիս,
Ալ անբաժան ապրինք սիրով, սիրական։ Հ. Է.



Դաշնակցականի Երգ

Սիրելի դաշոյն, ա՜խ ատրճանակ,
Մանաւանդ ռմբին կեանք ես դու մեր,
Երբ քեզ ձեռք առնէ հայդուկ ընդունակ,
Ցիր ու ցան կ'անէ թշնամու բանակ:

Դուք էք մեզի կեանք չնորհողը,
Փրկիչ ու արև հանդիսացողը,
Թշնամուց վրէժ սրտիս թախիծը
Լուծող թշնամիից, ցաւ փարատողը:

Ժըննէից եկած նուէր թանկագին,
Կռուող անձնուէր այն դաշնակցականին,
Ներչնչէ հոգի վեհ ազատութեան,
Այս պէնքով փրկենք ամբողջ Հայաստան:

Ժըննէից եկած ռմբին հրացան,
Դեռ քեզ կրելու չեմ եղած արժան, [սեղմեմ
Պարզ հոգուսով կ'երդնում, պաղ կուրծքիս
Հայդուկի վրէժը քեզնով լուծեմ:

Սուրբ Դաշնակցութեան անվեհեր անուան
Անչէջ կրակը սուիր ֆէդայուն.
Սրտիկն այրուած անձնուէր ֆէդան,
Կը փութայ գնալ դէպի Հայաստան:

ՍԻՐՈՒՀԻՍ

Սիրուհիս, քեզ համար
Կեանքս կէս եղաւ.
Քո անունն էր միայն՝
Որ ինձ կեանք տըւաւ:
Աղջիկ դու սիրուն,
Շքեղ անունով,
Սեւորակ աչքով,
Երկնածիր ունքով,
Այրուի՛ ֆո սիրտը,
Այրեցիր հըրով,
Վառուի ֆո սիրտը,
Վառեցիր սիրով:
Մանուշակ, նունուֆար,
Վարդ, մեխակ, չուչան
Ոչինչ են ինձ համար
Իմ անգին հոգեակ:
Մօրիցդ գաղտուկ՝
Աբի մեր պարտէզ,
Ման դանք միասին,
Սիրուն, դու եւ ես:
Այրուի՞ քո սիրտը,
Այրեցիր հըրով,
Վառուի քո սիրտը,
Վառեցիր սիրով:
Բայց ափսոս, չեմ կարող,
Որ գամ քեզ տեսնեմ,
Իմ վիրաւոր սրտին
Կարօտը առնեմ:
Դէ, բաւական է,
Նայիր երկնքին,
Կապոյտ երկնքին,
Քո խղճմտանքին:
Այրուի՞ քո սիրտը,
Այրեցիր հըրով,
Վառուի քո սիրտը,
Վառեցիր սիրով:

Սիրէ Հայը

Սիրէ հայը թէ ըլլայ
Աղքատ, տնանկ, անկարող,
Հագուստները հին ու մին,
Դռնէ դուռ մուրացող։

Անունն է հայ՝ պարտ է քեզ
Սիրել զնա հայու պէս։

Սիրէ հայը թէ ըլլայ
Հարուստ, փարթամ, մեծատուն,
Ունենայ պէյ, էֆէնտի,
կամ ամիրա պատուանուն.

Անունն է հայ՝ եւայլն։

Սիրէ հայը թէ ըլլայ
Հայր-սուրբ, սէրտէր, վարդապետ,
Վրան փիլոն, ծոցը խաչ,
կաթողիկոս, Հայրապետ։

Անունն է հայ՝ եւ այլն։

Սիրէ հայը թէ ըլլայ
Բողոքական, այլ կրօն,
Ըսա քո կարծեաց անապաշա,
Հերետիկոս, անկրօն.

Անունն է հայ՝ պարտ է քեզ
Սիրել զնա հայու պէս։

Գ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

ԳԸՐՈՒՆ

Սիրո՛ւն գարուն, կանաչ գարուն,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն —
Էլ ես ուրախ երգ չունեմ:

Երգում էի ջերմ կարօտով,
Գովքդ անումամեն օր,
Երբ մեր երկրում քո քաղցր հոտով,
Միշտ լցուած էր սար ու ձոր:

Երգում էի քնարս լարած՝
Մեր կեանքի լոյս օրերում,
Երգում էի բլբուլ դառած՝
Քանի վարդ կար մեր երկրում:

Ա՛խ, ի՞նչ սրտով երգեմ հիմիկ,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ,
Փուչ են դառել վարդ ու ծաղիկ,
Էլ ես ուրախ երգ չունեմ:

Մեր աուն ու տեղն — հող, աւերակ,
Մեր լոյս օրերն խաւարել.
Մեր յոյսերը ուև մոխրի տակ,
Մեր դարդերը ծով դառել...

Ամպամթութիւնք է եկել, պատել
Խեղճ եղբօրս ուև կեանքին.
Անվերջ լալուց արցունքն հատել,
Էլ վերջ չըկա՛յ սանձանքին...

Սիրա՛ւն գարուն, կանա՛չ գարուն,
Քեզ ի՞նչ սրտով ողջունեմ.
Դու մեզ բերիր լաց ու արիւն —
Էլ ես ուրախ երգ չունեմ:



Որբը եւ Թռչունը

ՍԻՐՈՒՆ գուարթ թռչնիկ, եկուր,
Թառէ մօտիկ սրտիս տխուր,
կանգնէ քովս, երգէ վիշտեր,
Որ փարատէ իմին ցաւեր։

Ազատ թռչիլ կուզեմ ես միշտ,
Զունիմ երբէք ես ցաւ ու վիշտ,
Ինչո՞ւ գամ մօտ քեզի թշուառ,
Ինչո՞ւ վերնան հրճուանքս վառ։

Որբ ու անտէր մինակ եմ հոս,
Չկայ մէկը տեսնայ ցաւերս,
Չայնով անուշ դանէ թռչնիկ,
Միշտ քովս կեցիր, երգէ քաղցրիկ։

Ազատ կեանքի եմ ես մոլի,
Բոլոր ժամերս խինդով են լի,
Միշտ պիտ թռչիմ, ազատ երգեմ,
կեանքըն է աշխարհի եղեմ։

կեցիր, թռչնիկ, քեզի պատմեմ,
Թէև քու ձայնն ալ չի լսեմ,
Բայց կը խնդրեմ լսես ցաւերս
Որ քու լեզուովդ մարդոց պատմես։

Ինչո՞ւ փոխեմ ձայնս հրճուալի,
Ատելով մէջն իսօք ցաւալի,
Փոխան ժպտի լսողներ լան.
Դառն արցունքներ շուտով տեղան։

Սիրուն թռչուն, լսէ դուն ալ,
Կուզեմ քեզ պէս ազատ ըլլալ.
Բայց ունեցար դու մի մայրիկ,
Որ հոգաց քեզ և երջանիկ:

Պատմէ, որբուկ, տեսնեմ ինչո՞ւ
Զունեցար մայր ու հոգածու,
Ես կը խնդամ գի է գարուն
Է՞ր քո դէմքդ ալ չէ ինձ ժպտուն:

Բաղդի հարուածն ծնողքս տարաւ,
Զմխորդ օրեր իմ բաղդս եղաւ,
Հիմայ չիկայ մայր գիս հոգայ,
Նաև սիրտ մը որ ինձ գթայ:

Գնա՛ ազատ վազէ դաշտեր,
Փնտռէ արօտ ու ծաղիկներ,
Ծծէ թարմ օդ, եղիր ժպտուն,
Տուր փայլ մըն ալ քո պատերուն:

Գարնան օրեր պիտի անցնին,
Անուշ օդեր, մարդիկ սառին,
Եւ ես բոպիկ մերկ ու նօթի
Պիտ տառապիմ կարօտ գուրթի:

Ի՛նչ բան կրնամ ընել քեզի
Գնա՛ տուք տեղ նման մեզի,
Միշտ է գարուն, կրնամ թռչիլ
Հոն, ուր որ կայ տեղ ինձ հանգչիլ:

Քա այդ թեթև թևովդ կրնաս,
Ես զրկուած եմ գիս կը տեսնաս.
Մթին օրեր հոս ցրտագին
Ինձ եղկելոյս միշտ են բաժին:

Թող որ տեսնամ որբուկ թշուառ,
Գիտեմ անտէր ես մինակուկ,
Ընկերքս սիրուն գիս կսպասեն,
Անբաւ փշտեր ինձ համար չեն:

Մինակ կեանքի եղած գերի,
Ո՞վ պիտի միշտ մօտ ինձ ապրի,
Անանկ աղքատ միշտ որբ մնամ,
Անյոյս անտէր լամ ու ողբամ:

    Մի լար, մի լար, բաւ է նեղուիս
    Ցաւք են տիրած այս աշխարհիս,
    Ես ալ ունիմ շատ փորձանքներ,
    Բայց միշտ զուարթ են իմ օրեր:

Որչափ ըլլաս թշուառ անտէր,
Կրնաս թռչիլ ունիս թեւեր,
Ծունկերս տկար, սիրտս նեղուած,
Հոս պիտ մնամ ցաւով կապուած:

    Մի լար անյոյս, չես դու անտէր·
    Պիտ ունենաս բազում մայրեր,
    Աստուած հոգայ պիտի քեզ ալ,
    Հայր է որբոց ամենակալ:

Գիտեմ, թռչնիկ, մօտ է Աստուած,
Կը տեսնեմ իմ մօտ է կայնած,
Բայց միշտ որբ եմ, աւաղ, այստեղ,
Կեանքն է ինձ մութ, չիկայ մի դեղ:

    Այս կեանքն է կարճ, միշտ վեր նայէ,
    Պիտ զատուիս դու շուտ աշխարհէ·
    Ցաւոց մէջ ալ թող սիրտդ ցնծայ,
    Անշուշտ Տէրը պիտի հոգայ:



ՍԻՐՈՒՆ ԹՌՉՆԱԿ

Սիրուն թռչնա՛կ,
Ա՛հ, երջանիկ ծիծեռնակ,
Երբ կը լսեմ քու ուրախ ձիչերը,
Սրտէս ինչե՞ր կ՚անցնին, ինչե՛ր:

Ա՛խ, ծիծեռնակ,
Երնէկ երբ ես էլ թռչնակ,
Ֆեզ պէս թըռիլ, թռչտիլ անհոգ,
Երգել, սիրել գիտէի լոկ:

Սիրուն թռչնակ,
Ալ անցաւ այն ժամանակ,
Ալ թև չունիմ ու կը սողամ,
Երգելու տեղ՝ լուռ կը միամ:

Ալ չունիմ ո՛հ,
Ո՛չ խօսք, ո՛չ ձայն, միայն խոհ,
Հոտ, գոյն չունիմ, ալ չեմ ծաղիկ,
Փայլ, փողփ չունիմ:

Սիրուն թռչնա՛կ,
Ալ էակ մ՚եմ տարօրինակ,
կը նուաղիմ ի մի ակնարկ,
Շոգիանամ ժըպտի մը տակ:

Սիրուն թռչնա՛կ,
Արդեօք ե՞ս եմ, ես մինակ,
Որ երկրի վրայ ուրախ մի ապրեր,
Իսկ ճաճանչ մը երկրէս ի վեր:

Սիրուն թռչնա՛կ,
Գիտե՞ս մարդ մը այս գունակ,
Երբ քուն չունի, երազ ունի,
Ցաւ չըգիտեր ու կը հառնի։

Սիրուն թռչնա՛կ,
Տեսա՞ր ոք ինձ նմանակ,
Որ նուրբ, վըտիտ մամ մը է ճիշդ,
Ու կը վառուի, կը հալի միշդ։

Ինչո՛ւ, պիտե՞ս,
Կուլամ շողի մը ի տես,
Ձիւղի մը հետ կը դողդոջեմ,
Տերեւոց հետ կը հառաչեմ։

Մերթ հրդեհ մ'եմ,
Կամ մգեղ մը հոգմոց դէմ,
Մերթ չիթ մը ցօղ պիս կը թաղէ,
Մերթ սիեզերքն ալ ինձ նեղ է։

Ո՞ւր թռչնակ, ա՞ւր,
Ինձ թըռիչ մ'ո՛հ, թըռիչ տուր.
Որ սըլանամ մինչեւ իծոց,
Արշալուսոյն ճառագայթօք։

Գուցէ և նա
Ինձ հրեղէն թեւեր տայ,
Թռիմ, ուր սէրն չըտայ վէրք, խոց,
Ուր պեղեցիկ չունի հուր, բոց։

ԱՌԱՔԵԼ ՊԻՏԻԿԵԱՆ



Սոխակ, ինչո՞ւ դադրեցար,
Քո անուշ երգը երգելից.
Որ քամում էր արտասուք,
Շատ իմ էրուած աչերից։

Մի՞տքդ է, երբ ծագում էր,
Արշալոյսը գարնանային,
Քանի՛ դու մխիթս բերիր,
Իմ առարկան ցանկալին։

Այն յիշատակ անուշ էր,
Որպէս երազ վաղանցիկ.
Որ գէթ վայրկեան մ՚թշուառին,
Դարձնում է նա երջանիկ։

Համակ աչխարհ մոռացած,
Քու ձէնին ունկըս յառած,
Մոքովս թռչում էի ես,
Իմ հայրենիք կարօտած։

Ո՞վ կուտայ ինձ թև թռչնի,
Որ բարձրանամ, սլանամ,
Օդն ու ամպերը ճեղքեմ,
Ու տանիմ իս Հայաստան։

Թէ նրա օդը չնչեմ,
Այն կենսատու սուրբ օդից.
Գիտեմ փրկուելու եմ,
Անբուժելի իմ ցաւից։

Գիտեմ դու էլ ես կարօտ,
Մշտագարուն այն դրախտին.
Որից հեռու մեզ չիկայ,
Քաղցր ժըպիտ մեր բաղդին։

Գարունն անցաւ, ա՛խ սոխակ
Ծօսուն լեզուիդ կապ դրաւ,
Ու խեղճ վարդի թերթկին հետ,
Շարաբանդ էլ սարաւ։

Կը բանամ դուռս վանդակիդ,
Ազատութիւն քեզ կըտամ.
Բայց աղաչում եմ քեզի,
Թռիր դէպի Հայաստան։

Վարդ ես ուզում այն տեղ է,
Անամպ երկինք, մեղմ օդեր.
Ճաճանչափայլ արեգակ,
Կարկաչահոս առուներ։

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ՊԱՆԴՈՒԽՏՆ ԸՈՒ ՍՈԽԱԿ

Սոխակն ունի կարմիր վարդ,
կարմիր, ճերմակ վարդ ու գարդ.
վշտացն է դա մեծ սփոփ,
Սփոփ սրտին իր ամփոփ:

Յարշալուսին հրաւէր
կարդայ մարդկան քնասէր՝
Տեսնել, լսել գոռն ու գոչ —
Թռչո՞ւն մ'է սա թէ ժամկոչ:

Նա բնութեանն է քնար,
Քնար, ջուխակ կամ կիթառ.
երգ ի լեզու յար ճչէ,
ճչէ, գոչէ և ճռչէ:

Նա գարնայնի է մուսայն,
Սիրուն մուսայն և գուսան.
ի թուփ վարդին յար թառի,
Թառի, թռի և մարի:

Տեսէ՛ք, քանի՛ ճևեր հոծ
ի տես բերէ վառ ի բոց՝
Գգուել վարդին ըզտերև,
Ջարև, տերև, խեղդ ու խև:

Ի տես մարգաց գեղադէմ
Տեսէք ժպիան վարդին դէմ,
ի գիլ ի քայլ ընդոստում,
Ծայտանք, խնդում և ոստում:

Յաչըս փայլին մերթ արտուք,
Արտուք և աուդ և պատուք,
Եւ մերթ ցօղէ ի թերթիկ,
Ցօղն ի թերթիկ, ո՛հ, փափկիկ:

Վարդի թուփն է նորա բերդ,
Բերդ՝ որ թուէ զեկն ու զերթ.
Հազար քիչ է ժամուան մէջ,
Թռիչ, կամ ճիչ, եւ էջ:

Հոս կը պաչտէ, հոն կ'երգէ,
Հոս բարձրանայ, հոն կ'իջէ,
Երգել սիրէ գայգ ու տիւ,
Գեղգեղ անթիւ միշտ ճիւ ճիւ։

Հոս կը փարի, հոն կը քծնի,
Հոս կը մարի, հոն խրտչի,
Սիրոյն հակէ միշտ թագուն,
Թագուն ի բոյն կամ անքուն։

Հոս կը ճախրէ, հոն սխրի,
Հոս կ'աւազէ, հոն սխրի,
Ան՞նի թէ խելօք՝ չունի կարգ,
Ջունի կանոն, կարգ ու կապ։

Նա չէ թշուառ՝ չէ հանդարտ,
Թէ խինթ ունի և թէ դարտ.
Մեռնիլ և ճնիլ վարդին տակ —
Այս է իր փառք և իր կեանք։

Գնա՛, սոխակ, վարդ ու մարգ,
Քեզ թող լինին ձորք ու սարք.
Երգ ու ճիւանք, ճիչ, ճռուոզ՝
Քեզ թող ճնան անփոփոխ։

Քեզ ճախր ազատ ի յեթեր,
Ծոդն ու յեթեր կամ յայեր,
Գնա՛, սոխակ, քեզ լինին
Արև, լուսին և երկին։

Դու վարդ ունիս՝ իսկ ես սուգ,
Դու խինթ ունիս՝ ես արտասուք.
Քեզ կեանք ճնան, ինձ չիրիմ —
Շիրիմ մթին մի լռին։

Ատաց պանդուխտն և հեծէր,
Քամակ տալով սոխակին.
Ատուած գիտէ թէ ո՞վ էր —
Կո՞յս, պատանի՞, այր թէ կին։

Տ. ՃԳՆԱՒՈՐԵԱՆ

Աստուածածնի Կիրակի

ՍՈՒՐԲ Աստուածածնի կիրակի,
Արևը դեռ չէր ծագել.
Գեղեցկուհին լճաւ այգի.
Կանաչ կարմիրն էր հագել։

Եւ մանրաքայլ յուշիկ յուշիկ
Պատրուսինէն նա անցաւ
Քաղեց խաղող մեղր անուշիկ.
Շատ չմաթի մէջն ածաւ.

Բայց չմաթը վեր քաշելիս.
Նրա տակից լոյս չողաց
Արև չկայ մէգն է լալիս
Ինչո՞ւ այգին չողչողաց.

Իսկ խաղողը, ա՛յ դաւաճան,
Խայտաց ծոցում խենդի պէս,
Լեզու առաւ կանչեց «Ջան, ջան,
Մուրազս առայ վերջապէս։

«Լաւ է մի ժամ ինձ այս անուշ,
Ծոցում քաղցր տրօրուել,
Քան մայր ճիւղիս վրայ մուշ մուշ,
Տարիներով օրօրուել»։

Ն. ՔՈՒՉԱԿ



ՍԱՆԱՍԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ՍՈՒՐԲ գերեզմանին
Քո, մատաղ լինիմ,
Ո՜հ, անգուգական,
Վեհ Սանասարեան։
Ի՛նչպէս անբաւ և անհամար
Քո բարիքը չ'յիշեմ յար,
Զոր հայ ազգդ, Հա՛յր ցանկալի,
Կ'վայելէ արդ լիուլի։
Սուրբ գերեզմանին, ևն։

Քոյդ յիշատակ սուրբ խնկելի,
Սրտիս մէջ կայ անջնջելի.
Եւ հետևող պիտի լինիմ
Քո սխրալի օրինակին։
Սուրբ գերզմանին, ևն։

ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

ՍՈՒՐԲ Կարապետ չայիր չիման,
Բոլոր բարձր մէրմէռ դիւան,
Վանքերն հեռուէն կ'երևան,
Մշու Սուլթան սուրբ Կարապետ։

Սուրբ Կարապետ գեղին մօտիկ,
Երեք օր վազեցի բոպիկ,
Ինքն կանէ մարդու մտիկ,
Մեծ զօրաւոր սուրբ Կարապետ։

Սուրբ Կարապետ աղբիւր ու ջուր,
Ոտքդ կուգայ չատ կաղ ու կուր,
Դու ամենուն մուրազը տուր,
Մուրազատուր սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ կայնեցուցին,
Լուսեղէն հանդերձ հագուցին,
Քրիստոս գիրկը մկրտեցին,
Մկրտարար սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ յէլման գետեր,
Մէջն է բուսեր կանաչ խոտեր,
Քենէ կուգայ խնկի հոտեր:
Ջանկլի-դիւան սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ բարձր բլոր,
Ճամբէք ունի ոլոր մոլոր,
Ուր դուռ կերթայ չատ ուխտաւոր,
Ո՛ր ոտաւոր, ո՛ր ձիաւոր:

Մուրազ կուտայ ոտաւորին,
Օսկէ խնձոր ձիաւորին,
Որ դուռ կերթայ գառ ու մաքին,
Մատաղ կենին լուս կիրակին:

Սուրբ Կարապետ քեօչայ-քեօչայ,
Դուռդ կուգայ բէկ ու փաշա,
Ճանփէք ունի ղօչայ-ղօչայ,
Լուս-գերեզման սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ է մէջ դաշտին,
Սրբանունքն իրեն հետ հաշտին,
Շատ խաչապաշտ իրեն պաշտին,
Մչու Սուլթան սուրբ Կարապետ:



ԻՄ ՑԱՒԸՔ

ՈՒՐԲ տեղիքով լոկ ծարաւած՝
Ցամաք գտնել աղբէրքն յամայր,
Ցամքի՛լ ծաղիկ հասակի մէջ,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Ջերմ համբոյրով մը դեռ չայրած,
Սա ցուրտ ճակատս դալկահար՝
Հանգչեցնել հողէ բարձին,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Դեռ չը գրկած էակ փուճ մը,
Ժպտէ՝ գեղէ՝ հուրէ չաղեալ,
Գրկել սա ցուրտ հողակոյտը,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Քաղցր երազող մ՚յղի մրափ մը,
Զանդորրած գլուխս մրրկահար՝
Ննջել հողէ վերմակին տակ,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Հագնիլ հիւղին մուր — անուռը,
Ծրծել նորա մրմուր — օդն յար,
Միշտ ցաւիլը միայնգամայն,
Ո՛հ, չէ՛ այնչափ ցաւ ինձ համար:

Հէգ մարդկութեան մէկ ոստը գոս՝
Հայրենիք մը ունիմ թշուառ,
Զօգնած անոր մեռնիլ աննշան,
Ո՛հ, ա՛յս է ոսկ ցաւ ինձ համար:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ԵՐԳՈՒՄ

Սուրբ օրօրանով զաւակիս կ'երգնում,
կ'երգնում իմ ծնողաց ես գերեզմանով.
Ինձ կեանք պարգեւող արգանդով կ'երգնում,
Եւ մկրտութեան սուրբ աւազանով:

Թող լինի վկայ ինձ լեռն Արարատ,
Նոյեան տապանի ամուր պատուանդան.
Եւ Արաքս գետի ջուրը անարատ,
Որով կ'ոռոգուի մայր մեր Հայաստան:

Թող լինին վկայք իմ անսուտ երդման,
Պարծանք հայութեան ազգովին նախնիք.
Սուրբ Սահակ, Մեսրոպ, Ղեւոնդ, քաջ Վարդան,
Ողորմած Աչոտ, անսիրտ Գագիկ:

Ազգիս սեղանի վրայ ես դրի,
Իբրև աղջակէզ իմ այս սուրբ ուխտին,
Իմ ինչք, կեանք, վայելք աշխարհի,
Աւելի քան զայն քաղցր իմ ամուսին:

Ահա այս սուրբը որ ձեռքումս ցոլաց,
Էլ նա չի մոնիր վերատին պատեան.
Մինչև չդադրի հայի սուգն ու լաց,
Մինչև չպատուի սարուկ Հայաստան:

Իսկ եթէ դրժեմ իմ այս սուրբ երդմունքս,
Ձլինել նահատակ ազգիս ազատման.
Անէծքով յիշէ Թող իմ անունս,
Եւ հայք Թող կոչեն զիս երկրորդ Վասակ:

ԳԱՄԱՌ—ՔԱԹԻՊԱ

ՎՐԺԻՒՍ ԼԵՕՒՈՆ

ՍՈՒՐՍ եմ քաշած յոյսերով վառվռուն,
Սրբոտիս մէջ արիւնս եփած ու եռուն,
Ու եռեփս ալ ձգած վիթխարի,
Բանակ մը հայկական, ռմբազէն, արի։

Ֆանֆառի խրոխտ, դոռդոռումներով,
Հայաստան մտնել կ'ուզեմ անխըռով,
Թըռթըռացունել կ'ուզեմ ես բոլոր
Հայկական սրտերն ա՛խ, վշտաւոչոր։

Զարնել ու ջնջել կ'ուզեմ այն ամէն
Վատեր՝ որ հայուն մխիթը կը ծամեն.
Ու կոխկըրտելով անոնց վրայէն
Անցնիլ կ'ուզեմ, փոյթ չէ՛, ըսուիմ «կայէն»։

Հայոց դժբաղդներ, այրիներ, որբեր,
Հրճուեցնել կ'ուզեմ անհամբեր,
Տալով այն աւետիսն երջանկութեան
Թէ «ալ կանգնեցաւ մեր խեղճ Հայաստան»։

Զի ալ վերջապէս յայտնի է սա բան,
Թէ՝ «Հայը միայն կարող է ճամբան
«Գտնել իր վիշտեր թեթևցնելու,
«Ու վարելու կեանք մ'անուշ, հնգ, հլու,»։

Ա՛հ, փոյթ չէ դարձեալ թէ կորուստս մեծ
Ըլլայ, ժամանակ մ'ալ վիշտն իբր ցեց,
Կրծէ հայ սրտեր... մտնել կ'ուզեմ ես
Հայաստան, կատաղած բանակով մը վէս...։

ՎԱՀԱՆ ՉՈՒԽԱՃԸՉԵԱՆ

Եղսօ Չան

Սօլեր խազի երթանք ժամ, եղսօ Չան, եղսօ Չան,
Օհ, օհ, օհօ, էհ, էհ, էհէ, ահ, ահ, ահա, եղսօ Չան,
եղսօ Չան,
փօռ թօմպան, թօռ խօնչան, ժալեա միւթաեր
քե կուրպան,
Ֆա թօմպընին ինչ կէր նչան, եղսօ Չան:

Շիլայ թէօմպան խեա կըրընկան, եղսօ Չան,
Թուխ կարկըտան վերև ծնկան, եղսօ Չան, եղսօ Չան,
փաչա բերան, կարմիր խայթան, եղսօ Չան,
Դիւ զեկ արիր խեղճ փարիչան, եղսօ Չան, եղսօ Չան:

Դիւ խազեր ես կարմիր Ֆեսան եղսօ Չան,
Ծաղիկ քաղես, դաստա չինես, եղսօ Չան,
ես քե խամար կես մեռնիմ, եղսօ Չան,
կես քե խամար խոգիս կելնի, եղսօ Չան, եղսօ Չա:



ՎԱՐԴԱՆ

ՎԱՐԴԱՆ մեր քաջ զօրավար,
Թուրը ձեռին ոսկեվառ.
Կանչում է իր քաջերին՝
Ջարդել զգլուխ Ցաղկերտին:

Հայոց զօրքերն գունդագունդ,
Մեծաբարբառ գոռով թունդ,
Հաւաքուեցան Արտաշատ,
Մայրաքաղաք մարզպետ:

Հայոց զօրքերն անհամար,
Դրօշակներով պայծառ,
Ամէն կողմից ըչտապած,
Վազվզին կատաղած:

Ղևոնդեանց խումբն անմահ,
Անվախ, անդող և անահ.
Ձաչը բռնած Քրիստոսեան,
Բորբոքեցին զօրքն հայկեան:

Կանայք համեստ, աննըման,
Վառուած սիրով աստուածեան.
Դուրս թափուեցան տներից
Վազել դաշտը ծաղկալից:

Քաղցրահոսիկ և սիրուն,
Օրիորդներ փափկասուն.
Թողին իրենց ոսկի չորեր,
Երկաթ հագան մահաբեր:

Փա՛ռք և պարծանք յաղթական,
Քեզ սիրելիդ իմ Վարդան.
Որ քո սիրով բորբոքիչ,
Հանդիսացար քաջ փրկիչ:

Դու և քու քաջ բնկերներ,
Առաւծաբար անվեհեր.
Ջարդեցիք զօրքն պարսկական,
Դրիք գետին անկենդան:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

Մեր Քաջաց Ընծաները

ՎԱՐԴԱՆ, Վահան, Սմբատ, Մուշեղ,
Տարօն երկրի արև, աստեղ,
Է՞ր ձեր երկիր կողոպտեցիք,
Եւ կողոպուտն երկինք տարիք։

Երկինք, Աստուած կարօ՛տ էին
Խեղճ Տարօնցւոց կողոպուտին.
Դուք Աստուծոյ ինչո՞ւ տուիք
Ընծայ՝ ձեր սուրք, սիրտ ու հոգիք։

Եւ ձեր որդւոց թողիք մինակ
Զոսկորոտիք ձեր յիշատակ.
Ձեր չխրխիներ, փլած բերդեր
Մեր թշնամեաց վախ չեն ազդեր։

Այսպէս մենք ալ գերի եղանք,
Ու դարէ դար տանջուեցանք,
Մատաղ լինիմ ձեզի, քաջե՛ր,
Ետ խնդրեցէ՛ք ձեր ընծաները։

Առէ՛ք զանոնք՝ իջէ՛ք Տարօն,
Զարկէ՛ք, վանէ՛ք թուրքն ի գրօն։
Երբոր ձեր սէր, սուրն ու հոգին
Տարօնն զգայ իր ներսիդին,
Եւ ձեր սիրով՝ զինի, վառի,
Ազատ, անկախ պիտի լինի։

ՏԱՐՕՆՑԻՆ

ԱՐՇԱԼՈՅՍ

ՎԱՐԴԵՐ ու վարդեր
Թերթ ի թերթ փըթ-
թեր
Ի կապոյտ եթեր
Ձիւնափայլ ամպեր՝
Քայլերուդ առջև
Սըփռելով թեթև,
Քեզ բնութեան հետ,
Յայս ժամ հեզաւէտ՝
Մընան մեծալոյս,
Ո՛վ քաղցր արշալոյս։

Ահա շող ի շող
Շուշանաց ի քող,
Ձիւր ոսկենըշոյլ
Վարսեր հոյլ ի հոյլ
Ծուփ ի ծուփ ի սփիւռ՝
Թողլով ի զեփիւռ,
Եւ մարգըրտայեռ
Պարզելով թևեր՝
Նազի արշալոյս,
Երկնքի այն կոյս։

Ահա վառ ի վառ
Ճակատուն գոհար՝
Եւ բըբերն անուն
Քըթթելով քնքոյշ.
Զերկին և զերկիր
Գըրկէ սիրալիր,
Ի ժպիտ զուարթ՝
Ծաղկանց թոյր ի թոյր
Հեշտից ցօղէ բոյր։

Ահա սոյլ ի սոյլ
Թըռչնեկացն բոյլ
Ճռուողեն ընդ բոյս,
Ողջո՛յն արշալոյս.
Ողջոյն որ զմռայլ
Փոխարկես ի փայլ,
Ու զտխուր երկիր
Գործես ցնծալիր.
Ո՛հ, յ՚էից ողջո՛յն,
Արշալո՛յս ողջո՛յն։

Քեզ ամէն ոք տայ
Ձիւր ձօն նախընծայ,
Քեզ ըզսրբագոյն,
Քեզ՝ ըզփափկագոյն,
Քեզ՝ ամպ, սիւք, վըտակ,
Ծաղկունք և սոխակ,
Ամենք տան քեզ գով,
Հալին քո սիրով,
Ով երկնային կոյս,
Սիրուն արշալոյս։

Ո՛հ, դու որ այսպէս
Մեր սիրտն զմայլես.
Մեր բիբերն աղօտ
Մի՛ թողուր կարօտ,
Երբ գերեզմանին
Ցաղջամուղջ փակուին...
Այլ զանուշ քո լոյս
Եւ աչացս ոգւոյս
Շողշողեա ի յոյս,
Կուսան Արշալոյս։

Խ. ՆԱՐ - ՊԷՅ



ՎԵՐՋԻՆ վարդ, վերջին վարդ,
Սիրականիս վերջին զարդ,
Նա քեզ հանեց իր կրծքից,
Ինձ պարգևեց վերջին վարդ։

Մանկութեան ոսկէ ժամերն,
Անցեր են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ,
Դու ես միայն, վերջին վարդ։

Գարնան օրերն անցել են,
Տօթ ամառն է ինձ էրում,
Միշտ սպասում եմ քու տեսքին,
Դո՛ւ ամառուայ վերջին վարդ։

Երջանիկ կեանքիս օրերը,
Ճաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
Միտքըս բերիր, վերջին վարդ։

Շատ չի տևել՝ կը բացուի
Առաջիս սև գերեզման,
Էս աշխարհիս միայն քեզ
Հետս կ'առնում, վերջին վարդ։

Ֆ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՍԵՐԵՄՃԵԱՆԻՆ ՅԻՇԸՏԱԿԻՆ



Վ ԷՐՖԵՐՈՎ ԼԻ ՋԱՆՓԻԱՅ ԵՄ.
Թափառական աուն չունիմ.
Եարխ փոխան գէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ:

Արիւնոտ երկիր, սուգ ու չիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից,
Տանջուած հայրենիքի սէրը
Զի վախեցուց ինձ վտանգից:

Ես կոչուեցայ ջանֆիդայի,
Դարձայ գինուոր գաղափարի.
Թող իմ թափած արեան չիքեր
Օրինակ դառնայ Հայ գինուորի:

Մակեդոնիա իմ եղբայրս
Իմ խաչովս պսակուեց.
Եղբայրական սիրուն գէնքով
Գազան խուժանն խորտակուեց:

Ահա՛ հանգիստ հոգ կը մտնեմ,
Ցոյս դո՛ւք էք ընկերնե՛ր,
Շարունակէ՛ք մեր սուրբ գործը,
Դաշնակցութեան վեհ քայլեր:

Կախաղանից երբ որ քամին
Ինձ տարբերեց ճօճալէն,
Ցիշէք Պետրոս Սերեմճեանին,
Թշնամիէն վրէժ գոռալէն:

ՏԱԼՈՐԻԿ



Ալիորիկցի կըտրիճ եմ ղորդ,
Քաղքցու պէս չեմ թուլամորթ.
Սարի զաւակ, քարի որդի՝
Հին քաջ հայոց եմ մընացորդ։

Տալուորիկցի զաւակ եմ քաջ,
Չեմ խոնարհիր թիւրքին առաջ,
Քարուտ լերանց ես ազատ լաճ՝
Չեմ տեսեր ոչ արօր, ոչ մաճ։

ՅՈՐԴՈՐԱԿ

Հայ աղբըրտիք, ջան աղբըրտիք,
Տալուորիկցի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրոյն համար,
Նկէք դէպ ինձ յառա՛ջ, յառա՛ջ,

Երբ իմ աչեր բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչև փակեմ աչքըս խաւար,
Պիտ չի կոխէ հոս ոտք օտար։

Իմ մամ ծնաւ զիս պալու ծոց,
Ընկուզի կոճղ մ'եղաւ օրրոց,
Տրկլոզ ծընած՝ մեծցայ տրկլոզ,
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց։

ՅՈՐԴՈՐԱԿ

Ոտքըս բոպիկ, սիրտըս միչա բաց,
Ի՛նչ փոյթ թէ քոյրս ալ մերկ մընաց,
Իմ մօտ մէկ է արև, բուք, ցուրտ,
Բա՛ւ է, չիչխեր հոս թիւրք կամ քիւրտ։

Իմ կեանքըս խիստ է և չարքաշ,
Փափուկ կեանքի վայլից չեմ վարժ,
Դրնակարանս է ապառաժ,
Ընկերս՝ մրրիկ ու երկրաշարժ։

ՑՈՐԴՈՐԱԿ

Թող այլք բնակին հովիտ ու դաշտ,
Վաստ անգութին հետ լինին հաշտ,
Ես պիտի մնամ միշտ աննուաճ,
Թէև վըրաս գայ քըսան վաշտ:

Իսկի չքաշեմ բանի մ'կարօտ,
Քանի ունիմ գընդակ, վառօդ,
Ազատ ապրիմ, մեռնիմ ազատ,
Սասնոյ որդին եմ հարազատ:

ՑՈՐԴՈՐԱԿ

Ցորենի տեղ կուտեմ կորեկ,
Երկաթ ծեծեմ գիշեր ցորեկ,
Շինեմ փէտատ, խոփ, խաչ-երկաթ,
Ծանր է դատումս, բայց եմ ազատ:

Հարըստութիւն, ուսում, հանճար,
Պատիւ և փառք չեն ինձ համար,
Բա՛ւ է ունիմ տէգ, թուր, խանչար,
Բնաւ չի կոխեր հոս ոտք օտար:

ՑՈՐԴՈՐԱԿ

Ջէնքն է միակ իմ խաղալիք,
Կ'ատեմ հանդարտ կեանք խաղաղիկ,
Կը սիրեմ որս, կռիւ, աւար,
Կը սպասեմ երբ ընկնի հաւար:

Գիշերն ալ զէնք վըրաս քընեմ,
Երազիս մէջ կռիւ կ'ընեմ.
Կռուիլն ինծի մօտ խաղալ է,
Կռիւով մեռնիլը հալալ է:

ՑՈՐԴՈՐԱԿ

Կռուաւի մէջ մեռաւ իմ պապ,
Այդ կերպ մահն է անուշ մըրափ,
Կ'ուզեմ ես ալ մահ մէջ կռուուի,
Որ իմ անուն անմահ գըրուի:

Այս քարուտ տեղ խիստ դըժուարին,
Իմ քալ պապեր երբ ընտրեցին,
Ըսին՝ ազա՛տ որդոց որդի
Ֆալաց սերունդ թո՛ղ հոս ապրի։

ՅՈՐԴՈՐԱԿ

Եւ իմ խելօք ջոջ պապ Ցարէ,
(Ատուած հոգին լուսաւորէ)
Ինձ կ'ըսէր միշտ. «Աղքատ ապրէ՛,
Բայց մի՛ ծռէ վիզ, հարկ մի վճարէ»։

Սակայն մի՞թէ կրնայ աղքատ
Կոչուիլ այն մարդ որ է ազատ.
Մի՞թէ կայ բան մ'աւելի թանկ՝
Քան անիշխան և ազատ կեանք։

Տալւորիկն է սև սև սարեր,
Խոր, մութ ծործորք, սեպ-սեպ քարեր,
Վերև ջուխտակ ծեր Մարաթուն,
Հոգիս մատա՛ղ մեր Մարաթուն։

Մենով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք իրաւոյս հայոց նըկուն,
Տալւորիկ սար, ժեռուտ Զէյթուն,
Տան իրարու ազա՛տ ողջոյն։

ՅՈՐԴՈՐԱԿ

Հա՛յ աղբըրտիք, ջա՛ն աղբըրտիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրոյն համար
Եկէ՛ք դէպ ինձ յառա՛ջ, յառա՛ջ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ



Տանջւում եմ

Տանջւում եմ անքուն գիշերն անկողնում,
Տանջւում յուսահատ, վաստակած, տրկար,
Ու մըտքերն հոգիս հանգիստ չեն թողնում,
Ու գիշերը մո՛ւթ, գիշերը երկար:

Ա՛խ, մի ժամանակ, և դեռ նոր էր այն,
Մայրական գիրկ էր աշխարքն ինձ համար,
Հրճուանքը սրտիս չէր թըւում ունայն,
Ոչ գիշերն այսպէս տաղտկալի երկար:

Է՛հ, անցա՛ւ, գընա՛ց, և ցընորք, և սէր,
Եւ այժ, և եռանդ—կորա՛ւ՝ ինչ որ կար,
Լկան սև օրեր ու ծանր հոգսեր
Ու դարձրին այսպէս գիշերը երկար:

Տանջւում եմ անքուն այժմ անկողնում,
Եւ յուսակըտուր, յոգնած, ուժասպառ
Նայում եմ, նայո՛ւմ, դեռ չի լուսանում.
Ա՛խ, այս գիշերներն ի՛նչքան են երկար:

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ




ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՂՆԵՐ
LES PUBLICISTES ARMÉNIENS

ԶԱՐՍԱՆՔ

ՏԱՆՈՒՏԷՐ, աղջիկ, տղաք,
Թող յառաջ գան խումբ կազմեն,
Երբ հնչեն նո ազարանք՝
Ցառկեն պարեն:

Թող երգեն ուրախ, զուարթ,
Փեսային մաղթեն օրեր,
Ամօթխած հարսին համար՝
Երջանիկ սէր:
Գին՝ գին՝ գին՝ անգին գիննատու,

Գինիովդ եկուր գինով,
Բաժակներ բաժնէ լեցուն,
Թող խմեն ուրախ սրտով,
Չի սա օր մ՝է ուրախութեան ամենուն:

Ըսէք հարսին թող չի լայ,
Թող չ՝արտասուէ ակէ վերջ.
Թագուհի սրտի մ՝անկեղծ
Ի տան մը մէջ:

Այսօր երկինք տան իրեն
Պաշտօն մը՝ մեծ աստիճան.
Սրտի մը սիրոյն կ՝ըլլայ
Տէրն անբաժան:
Գին՝ գին՝ գին՝ անգին գիննատու, ևն:

Փսփսացէք ականջին
Մայր մ՝ըլլալու կոչուած է.
Երկինքէն այս հրամանն
Ալ արուած է:

Պարտի սիրել իր էրկան,
Հնազանդ՝ կամացն անոր.
Ինքն անոր թագուհին է,
Նա՝ թագաւոր։
Գին՛ գին՛ գին՛ անգին գինետու, են։

Հարսներ հանդիսական,
Խրատ տուէք փեսին, որ
Հաստատ մնայ իր երդման
Հանդիսաւոր։

Եթէ դրժէ իր երդում,
Խստապահանջ են երկինք,
՚Թէ հաւատարիմ՝ ուրախ
Էն ու մարդիկ։
Գին՛ գին՛ գին՛ անգին գինետու, են

Տանուտէր, աղջիկ, տղաք,
Փեսան պարին մէջ առէք.
Թող լսուի ամէն կողմէ
Նուագ ու երգ։

Ամէնքս ալ միաբերան
Հարս ու փեսին կեանք ու օր
Մաղթենք, կրկնենք բարձրաձայն
Շնորհաւո՛ր։
Գին՛, գին՛, գին՛, անգին գինետու, են։

Հ. ԷԿԻՆԵԱՆ



Հայ Զինուոր

ՏԱՐԻ մ՛ալ անցաւ,
Գնաց սահեցաւ.
Այլ դու հայ զինուոր
Թափառական մնաս:

Ցերկիր հեռաւոր,
Սուգ անմխիթար
Զքեզ. շուրջ պատած.
Եւ դժբախտ սիրտդ ալ
Ցուսաբեկ եղած:

Սուրդ ու քու տէգդ
Ժանգոտ վար դրած.
Եւ զօրեղ արմուկդ
Տէգիդ յեցուցած:

Դի՛ր դու հայ զինուոր
Քու յոյսդ առ Աստուած
Վեր վերցուր գլուխդ,
Տես, ո՞վ է կանգնած:

Առ քեզ կ՛ակնարկէ,
Ազատիչն Աստուած.
Ցաղթութեան պսակ,
Իր սուրբ ձեռքն բռնած:

Ա՛ռ ուրեմն նիզակդ,
Ոաք ելիր կանգնէ.
Եւ սրտիդ խորէն
Անոր փառք խրկէ:

Մի՛ վհատիր բնաւ,
Քաջ զինուոր դու հայ
Չի այսուհետև,
Էն Աստուած դթած
Ընդ քեզ է յաւէտ:

Ազգասէր եղբայր,
Կուտայ քեզ պսակ,
Բոլոր ճգանցդ փառք,
Ցանկալի ազատութ.:

Մ. ԱՆԴՐԻԱՍԵԱՆ



ԹԻՖԼԻԶԵՑՒՈՑ ԳԻՐՆԳԻՐՏ

ՏԵՀԱՐ մէկը շլապայով ,
Քաշած ձեռին չան կաշի
Ծուչի կտորն աչքերին ,
Լուս ընկաւ քո առաջին :
Էսենց է ; — մօդա է :

Պետերբուրգումը միթօմ
Աւարտել է իր ուսում ,
Փիլիսօփայ է , կօսեն ,
Խուրը արկէմէն է խօսում .
Էսենց է , — մօդա է :

Մէկ էլ տեսնում իս պուչը
Թռել է տալիս դայրաթով ,
Կօսիս քուչի աւլիլը
Վիր է կալել փուդրաթով .
Էսենց է , — մօդա է :

Մէկ էլ աէշնիս բժիշկը՝
Իր վիզիտի փուղն առած ,
Դեռ ինք էլ տուն չի հասած
Հիւանդն էլ յետնէն մեռած
Էսենց է , — մօդա է :

Մի ձեռը նա փքուելով
Ունի շալվարի ջիբում ,
Կոտրատուելով միւս ձեռով
Իւղած մազիրն է քօքում .
Էսենց է , — մօդա է :

Ու բերնում ծխելով
Սատանայի բուրվառը ,
Մէջքը կոտրած կատուի պէս
Երբ չափում է բուլվարը :
Էսենց է , — մօդա է :

Մէկէլն ոչխարի նման ,
Էդնէն կախիլ է դմակ ,
Կօսիս դարբնի մեծ փուքսով
Փչած ըլին իր քամակ :
Էսէնց է , — մօդա է :

Ախ էն դամբի պէս գործած
Երեսների էն քուղը ,
Սապոկների ճռճռոցը՝
Քանդում ին իմ ըղուղը .
Էսենց է , — մօդա է :

Զիմ կանացի, հա՛խ Աստծու
Բարկութիւնը իմ սանձել .
Սկսում եմ վա՛յ տալով
Մեր կնանիքը անիծել .
Էսենց է , — մօդա է :

ՋՐԱԻԵՐ

ՏԵՍԷՔ աղաւնին Նոյեան տապանին
Եկած ու կանգնած ի սար Տաւրոսին՝
Աւետիս կուտայ Հայկեան սերունդին,
Թէ եկաւ գարուն Թորգոմայ զարմին:

Արթնցէ՛ք հայեր, քաջաց զաւակներ
Առէք միութեան տէգ ու նիզակներ.
Շուտով կազմեցէք սիրոյ խմբակներ,
Հագէ՛ք քաջութեան զէն ու զրահներ:

Հինգ հարիւրամեայ մի քուն քնացանք,
Զ'Աստուած ու զեղբայր խպառ մոռացանք,
Սիրոյ, միութեան լաթեր մերկացանք,
Ատելութեան ձեռք խաղալիք դարձանք:

Մոռցանք հայրենիք, մոռցանք Հայաստան,
Կորուսինք մեր փառքն ու Արմէնիստան
Մաս մը Ռուսաստան, մաս մը Պարսկաստան
Մնացինք թշուառ, անտէր, անպաշտպան:

Երկինք բարկացաւ, հայրենիք լացաւ,
Մեր ջուրն ու գինին մեզ արիւն դարձաւ,
Խաչեալն Յիսուս մեզի մոռացաւ.
Հայերուն բաժին մնաց սուգ ու ցաւ:

Այսչափ քնանալ մեզի հերիք է,
Թմրիլն ու պառկիլ խիստ մեծ չարիք է.
Սիրելն ու սիրուիլ արդէն բարիք է,
Հայու զինուորին համար պարտք է:

Եկէ՛ք միանանք, բանանք դպրոցներ,
Մեր մատաղ մանկանց համար վարժոցներ.
Վառե՛նք, բորբոքենք սիրոյ հնոցներ,
Մեր սառած սրտին ըլլան հալոցներ:

Շուքի պէս անցան այս հինգ մեծ դարեր,
Լացին հայրենեաց դաշտեր ու սարեր
Հերիք ալ ձեզի, հերիք է, վատեր,
Հերի՛ք մեր բաժին արցունք ու ահեր:

Հայ Մօր Մը Աղօթքը

ՏԷՐ ԻՄ Աստուած, քեզ կ'աղաչեմ,
Տուր զօրութիւն որդուս բազկին,
Ան պատրաստ է կռուի երթալ,
Մեր ոխերիմ թշնամեաց դէմ։

Պիտի զոհէ իր կարիճ կեանք,
Վասն հայրենեաց ազատութեան.
Պիտի թափէ անգին արիւն,
Իր քերց, եղբարց ազատութեան։

Շատ խնդրեցինք, շատ ողբացինք,
Գիտենք լսեր ես մեր խնդիրք.
Այժմ հասեր է ժամանակ,
Պէտք է ազատուի Հայաստան։

Տէր, աղաչանքս ո՛հ. մի մերժեր,
Արիացուր հայ զինուորներ.
Քաջ առաջնորդ կարգիր անոնց,
Որ սատակեն վատ տաճիկներ։

ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ

ՏԷ՛Ր, ԿԵՑՈ դու զհայս,
Եւ արա զնոսա պայծառս,
Կեցո զհայս։

Զողորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել նոցին.
Զի նուաւ մարդասցին.

Ապրիլ յատին։

Ով Տէր մեր, Տէր փութա՛
Զազգ մեր համայն փրկեա՛
Ի թշնամեաց։

Կափո՛ զաչս նոցուն
Հաա զարմաւոցն զբուն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա հըզօր։

Ի քո իջեալ տեղի
Զաթոռ Հայրապետի
Մեր հաստատեա։

Զերկարութիւն կենաց
Հօր մեր աստուածգեաց
Շնորհեա պետին մեր հարց,
Որ զմեզ հովուէ։

Այլովք համառատրած
Զազգ մեր արտահալած
Փոյթ գումարեա։

Յաչխարհ Հայաստանեան
Ի վայր մեր ծննդեան
Որ այժմ է սեփական,
Օտար ազգաց։

Առաքեա ի բարձանց
Զհամակրութիւն կամաց
Ի մերազնեայս։

Զանձն ի մէնջ յարո՛
Պաշտպան ազգի մերոյ,
Տուր նմա ցուպ հուժկու.
Հովուել զմեզ։

Մ. Գ. ԹԱՂԻԱԴԵՍՆՑ

Վաճեցոց Աղօթքը

Տէ՛ր ողորմե՛ա Հայոց ազգին,
Տուր զօրութիւն մեր թոյլ բազկին,
Հալածէ դու անգութ սաճկին,
Տէ՛ր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

Շնորհեա՛ մեզ մէկ քաջ զօրավար,
Ժողովել հային ի միագումար,
Մարտնչեցնել կրօնի համար.
Տէ՛ր ողորմեա՛, Տէր ողորմեա՛:

Թող դադրի մեր գերութիւնը,
Յառնէ հայի ազգութիւնը,
Վերջանայ մեր հեգութիւնը,
Տէ՛ր ողորմեա, տէր ողորմեա՛:

Յիշեա՛ զմեզ, Տէր, այս անգամը,
Ուշայն չանցնի պատեհ ժամը,
Հայքս ալ ազգաց ըլլանք անդամը,
Տէ՛ր ողորմեա, Տէր ողորմեա՛:

Տէ՛ր, թէ այժմ ալ չես ողորմիլ,
Ա՛լ, հայիս մէկ բան չի օգնիլ,
Մեզ կը մնայ ջուրը ընկնիլ,
Տէ՛ր ողորմեա՛, Տէր ողորմեա:

Ապա՝ թշուառ եղբայր հայեր,
Ձեռքերնիս առնենք մէկ մէկ սուրեր,
Դրօշակ բանանք, փչենք փողեր,
Տէրն խըղճայ ի վերայ մեր:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՏԻՄՆԱՅՔ ՓԸՓԿԱՍՈՒՆՔ

Տիկնայք փափկասունք Հայոց Աշխարհին
Եկան, ժողուեցան ու խորհուրդ արին.
— «Ըմպնաց այր մարդ հայրենի երկրում,
Ըմպնաց որդի մայրերի գըրկում:

«Սուրբ հայրենիքը կանչել է նորանց,
Դուրս գալ կատաղած թշնամու դիմաց.
Առիւծների պէս կռուել ու մեռնել,
Հայրենի հողը պարսկից ազատել:

«Գնաց և՛ վարդան, և՛ վահան, Տաճատ.
Գնաց և՛ սարուկ և՛ իշխան ազատ,
Իսկ մենք մնացինք մեր պալատներում,
Փափկասուն կեանքի անվայել գըրկում:

«Մեր դահլիճները ոսկեզօծ նախշած,
Մեր գաթաները չաքարով թըխած,
Հագնում ենք ոսկի օղեր, մանեակներ,
Մետաքս և կերպաս, թանկագին քարեր»:

Տիկնայք փափկասունք Հայոց Աշխարհին
Եկան ժողուեցան ու խորհուրդ արին.
— «Ըմպնաց այր մարդ հայրենի երկրում,
Ըմպնաց որդի մայրերի գըրկում:

«Էլ ո՞ւմ համար են ոսկի ու արծաթ,
Էլ ինչո՞ւ հագնենք յակինթ, ադամանդ.
Էլ ինչո՞ւ համար մենք հագնուենք, զարդարուենք,
Ճոխ դահլիճներում էլ ո՞ւմ սպասենք:

«Մեր որդիները, մեր առիւծ մարդիկ՝
Մինը կը սպանէ հինգ հազար պարսիկ.
Բայց չի կշտանալ, կը գայ չարունակ,
Մինչև վիրաւոր ընկնի ծառի տակ:

«Եւ նորան չեն տալ մի բաժակ ցուրտ ջուր,
Երբ նորան կայրէ մահու դաժան հուր.
Եւ նա կը մեռնէ տանջուած պապակով,
Իսկ մենք ապրում ենք այստեղ ապահով»:

Տիկնայք փափկասունք Հայոց Աշխարհին
կանչեցին իրենց աղախիններին.
— Առէք այս ամէնն, ասացին նրանք,
Ոսկի, աղամանդ, ակն ու զարդարանք:

«Տարէ՛ք, ծախեցէք վաշխառուներին,
կիսով տուեցէք թէ գին չը տուին.
կտաւ առէք շատ, վիրակապ չինէք,
Վէրք պովացնող դեղեր շատ առէք»:

Եւ չուտ կարեցին բոլոր հայ կուսանք
Հագար երեսուն վէրքերի կապանք.
Մի վայրկենի մէջ կապեցին բեռները,
Եւ ժողովեցին առոյգ նրժոյգները:

Հընչեց բամբիռը, երգեցին կոյսեր,
Ամէն մէկի ձեռք փայլեց մի սուսեր.
Տիկնայք փափկասունք Հայոց Աշխարհին,
Դէպի Աւարայր Թըռան, սըլացին...:

Ս. ՀԱԽՈՒՄԵԱՆ



ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Երգ կեանց

Տխուր ոչխով մ'ըսեր ինծի,
կեանքս է միայն երազ.
Գործ կայ ինծի, գործ կայ քեզի
Ամէն առիղ հանապազ:

կեանքը իրական է, փութաջան,
Եւ նպատակ ունի,
Անոր վախճան չէ գերեզման,
Անդին ալ կը նայի:

կեանքը օգտակար և թանկագին
Ընել ինք հրաւիրուած.
«Դուն հող էիր, դառնաս հողին»,
Հոգւոյն վրայ չէ ըսուած:

Ապառնիին չ'ապաւինինք,
Անցեալը թող թաղուի.
Մենք ներկային մէջ թող ապրինք
Արթուն և կենդանի:

Ամէն գարուս մեծ, բարեբար
Մարդոց կեանքն կը փայլի,
Մեր առէն հետք օգտակար
Ձգել է պարտք մեզի:

Օ՜ն, ով եղբարք, վեր նայելով
Մեր կեանքն վսեմ ընենք.
Արթուն ըլլանք, և միշտ յուսով
Ջանանք և ապասենք:

ԼՕՆԿՖԷԼԼՕ

Մարտի Կոչ

Տղաց՛ք, ժողովուինք հեռուէն ու մօտէն,
Զինուոր կանչելու փողեր ձայն կը հանեն.
Սաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ քալենք:

Առաջ ալ քալենք, օ՛հ, առաջ ալ քալենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք.
Սաստիկ պատերազմ ընելու պատրաստ ենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք:

Ահա մեր առաջ կայ անթիւ թշնամի,
Բայց մեզ վանելու զօրութիւն, ուժ չունի.
Զօրութիւն է մեր կամք, մեր երգն այս ընենք,
Չէնքերնիս առնենք ու առաջ ալ քալենք:
Առաջ ալ քալենք, ևն:

Մինչ մահ կը հասնի մենք կ՝ուզենք մարտնչիլ,
Մեր քաջ զօրավար չի կրնար յաղթուիլ.
Հայկայ փայլուն սուրը մեր ձեռքը առնենք,
Յաղթութիւն տանենք ու առաջ ալ քալենք:
Առաջ ալ քալենք, ևն:

Շատ նեղութիւններով կ՝ստացուի յաղթութիւն,
Թշնամուն երբէք չընենք մենք դիւրութիւն.
Սակայն վստահ ենք թէ պիտի մենք յաղթենք.
Երբ անյողդողդ մենք միշտ դէպ յառաջ քալենք:
Առաջ ալ քալենք, ևն:

ԵՐԳ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԱՆ

ՏՈՒՐ ՁԵՌՔԴ, եղբայր, ժամ է զարթնելու,
Ժամ է, ժամ յառաջ ոտքի ելլելու.
Մօտ է վախճանին հայերուս օրհաս,
Լինել չլինել մեզնից է կախուած:

Տուր ձեռքդ, եղբայր, հերիք համբերենք
Հերիք օգնութիւն ուրիշից հայցենք,
Մենք ենք տանջուողը, մենք չարչարուողը,
Մենք պիտի լինինք մեզի փրկողը:

Մեր վեհ հայրենիք դարերով ճնշուած,
Դարեր չատ ու չատ մեր արեամբ ներկուած,
Պահանջէ մեզնից արիւնով ներկել
Թշնամու արեամբ լեռներ ու դաշտեր:

Շտապիր, եղբայր, առ ահա քեզ զէնք,
Սրանով միայն փրկուելու ենք մենք,
Այս է գործածում մեր դէմ թշնամին,
Այս պիտի լինի պաշտպան մեր անձին:

Շտապիր, եղբա՛յր, ի դաշտ պատերազմ
Սպասում է քեզ թշնամին միշտ կազմ,
Աչխարհի սկիզբից ամբողջ մարդկութիւն
Այնտեղ է գտել իր ազատութիւն:

Այն տեղ է քո կեանք, այն տեղ է քո մահ,
Ելի՛ր ընդ առաջ, ելիր դու անահ,
Արդարութիւն է գործին նչուած,
Այն տեղ կը կանգնէ նա իւր յաղթանակ:

Շտապիր, քանի դեռ չէ անագան,
Քեզ կը հեռւի ամբողջ Հայաստան,
Ազատութիւն է գործին գրաւական,
Այն տեղ կ'ըստանաս պսակ պատուական:

Տուր Ձեռդ Ընկեր

Տո՛ւր ձեռքդ, ընկեր,— այս ծանր օրերին
Թո՛ղ գործի սիրով յուզուին մեր սրտեր.
Նայի՛ր, մեր առջև չատ նեղ է ուղին,
Մեր չուրջը—սրժգոյն, սրտամաշ պատկեր...

Դեռ խոր թմրութիւն հայրենի երկրում,
Ազգը ծարաւի ուսման, գիտութեան.
Ազգային ղեկը անչարժ ձեռքերում,
Եւ իչխող ոգին յետապիսութեան...

Վառ մրտքի առաջ փակուած ասպարէզ,
Թըզուկին պահած, և՛ գործ, և դափնիք.
Օ՛, ընկեր, կարծես, մեր կեանքն է կըրկէս՝
Ուր քաջ վըխտում են խեղկատակ մարդիկ...

Տըգէտը՝ գիտուն, անգործը՝ մշակ,
Ազգային հացով նա՛ է կշտանում՝
Ով հագուով աղքատ, երեսին դիմակ,
Հայրենի արտում որոճն է ցանում...





ՎԱՆԻ ՄՆՋ.

ՑԱՄԱՔ յարդի վերայ պառկած,
Թշուառ Մրտօն կը քնէ,
Երկու օր է՝ չէ կերել հաց,
Ի՞նչ ճար անէ, ուստի՞ց գանէ։
Վե՛ր կաց Մրտօ, եւ մի՛ քնէ,
Քիւրդն էլ կը գայ քեզ կը թալնէ։

Քո աղքատիկ, մերկ յարկին տակ,
Թէպէտ սովն է միայն քո բաժին,
Սակայն ունես դեռ մի հրեշտակ, —
Քո լաճ սիրուն, քո ամուսին։
Վե՛ր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ.
Քիւրդը կը գայ նրան կը տանէ։

Արդէն մեռան սոված, քաղցած,
Երկու քնքոյշ քո զաւակներ.
Նրանց դիակունք դեռ չեն թաղուած,
Խեղճ մայրերնին մօտն է պահեր։
Վե՛ր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ,
Քիւրդը կը գայ մեզ կ՚անպատուէ։

Այն րոպէին քիչ հեռուից,
Ջիւների ոռնաձայնը
Վեր թռաւ խեղճ մայրն իր տեղից,
Որ զարթեցնէ քնած մարդը։
Վե՛ր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ,
Քիւրդը եկաւ, որ մեզ թալնէ։

Վե՛ր կաց, արև, հոգիս իմ ջան,
Պաշտպանիր ինձ, տես մօտեցան,
Թշնամին գտաւ մեր ճամբան,
Վե՛ր կաց, գտիր քո հրացան։
Զարթի՛ր Մրտօ, էլ մի՛ քնէ,
Ահա քիւրդը մեզ մահ բերէ։

Լսիր, գիւղի շներն հաչեն,
Խարխուլ դռներն կը կոտրեն,
Լսիր ինչպէս մահ կը գոչեն,
Սև օրն հասաւ, լոյս է արդէն.
Վե՛ր կաց Մրտօ, զարթիր ժամ է,
Էլ ինձ այստեղ դու չես գտնէ։

Նա պինդ բռնեց մարդու ձեռքից,
Ուժով թոթուեց որ վեր կենայ,
Սակայն սառած՝ ցնցուեց ահից, —
Արդէն սովից մեռած էր նա։
Վե՛ր կաց Մրտօ, էլ մի՛ քնէ,
Քիւրտն ահա մեզ թալանէ։

Քիւրտն էլ հասաւ, ու ներս մտաւ,
Երեք անշունչ դիակաց հետ՝
Կիսամեռ զողար մի կին գտաւ,
Շալակն առած եղաւ անհետ։
Թէ խեղճ Մրտօն խոր քնոյ մէջ է,
Արդեօք կինն ո՞վ կը պաշտպանէ։

Պ. Հ. ԱԴԱՄԵԱՆ

ԿՕՏՕԼԻ ՆԱՀԱՏԱԿԱՆԵՐԻՆ

Ցնծա՛ Հայաստան, ցնծա, ուրախ լեր,
Զի ծոցումդ դեռ կան դիւցազունք անվեհեր.
Այդ համար քաղցր է մեռանիլ ազատ,
քան թէ ճանչցուիլ քեզ անհարազատ:

Եւ դո՛ւ, ով լուսին, ճշմարիտ վկայ,
Լուր տար Եւրոպա և անդ ուր հայ կայ.
Թէ հայ երակաց մէջ այսօր կ'եռայ,
Անարատ արիւն դիւցազնին Հայկայ:

Թէ կօտօլայ նեղ ահարկու ձորում,
Ընկան զերդ առիւծ վէրք առած սրտում
Անճնուրաց Նշան, անվեհեր Ղազար,
Եւ արի Մաչիկ իբրև զոհ արդար:

Հանգչեցէք խաղաղ, ոդիք անճնուրաց,
Պատիւ և պարծանք ձեր մայր հայրենեաց.
Որ դառն երկունքով խիստ քիչ կը ծնանի,
Զեզ պէս զաւակներ ընտիր ու բարի:

Գ. Պ.





Գիշեր Յորեկ կը հառաչեմ

ՅՈՐԵԿ գիշեր կը հառաչեմ ա՛խ օրխորդ քո սիրոյդ.
Սև աչքերուդ, վարդ այտերուդ զարնուեցայ ի՞նչ օգուտ.

Աչքերուդ, այտերուդ և ոսկեթել մազերուդ
Միայն քեզի սա կաղաչեմ որ ունենաս ֆիչ մը գութ:

Գիտես անգութ, որ իմ սրտիկս չի դիմանար այս ցաւուն,
Քեզի համար ալ չի դադրիր աչքիս արցունքն օրն ի բուն.
Քեզի միայն կը յիշեմ, թէ քուն ըլլամ թէ արթուն,
Թէ մութ ըլլայ միաքս կուգաս, նոյնպէս և առաւօտուն:

Շատ աղուորներ թէև տեսայ, սիրտս միայն քեզ սիրեց,
Ո՛հ չեմ գիտեր, ըսէ ինծի, թէ քու սրտիդ ո՛վ սիրեց.
Ա՛խ քո խաթուն բարի մայրիկդ իրեն փեսայ ո՞վ ընտրեց,
Գերի կըլլամ քո մօրկանդ եթէ ղիս զուրկ չի ձգեց:

Ուրախ էի, գիտե՞ս, օր մը ես քեզի նատեցուցի,
Սա ներսի դիս ինչ կայ չի կայ ամէնն ալ հասկցուցի,
Անոյշ բոյրդ գիս թովեց, քենէ վարդ մը փրցուցի,
Այն ի՞նչ օր էր, ի՞նչ ժամ, խելքս գլխէս թըռցուցի:

ԱՂՔԱՏ ԿԻՆ

ՑՈՒՐՏԸ փչեց, ձմեռ սաստիկ,
Ջիւնը պատեց գետինը·
Ամենայն մարդ մտաւ իր տուն,
Պատսպարուել ցրտից:
Ժամի դռնում դողդողալով
Կանգնած է մի աղքատ կին,
Նորա հանդերձ պատառ պատառ,
Չունի չապիկ իր հագին:
Անհամարձակ նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին —
«Ողորմութիւն արէ՛ք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ձեզ, սիրելիք, ասեմ ո՞վ էր,
Այս խղճալի աղքատը,
Այն ցրտումը սառբապիկ
Կանգնած ժամի դռնումը·
Շատ ժամանակ դեռ չէ անցել,
Երբ նա փառքով ու պատւով
Ման էր գալիս փողոցներում
Իր սեփական կառքերով:
Այժմ վախով նա իր ձեռքը
Պարզում է անց կացողին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Մինչ թատրոնում յայտնուում էր,
Մինչ խաղում էր հանդիսում,
Դղրդում էր թատրոնը,
Նա դափնիք շատ էր հնձում:

Ժողովուրդը հաւաքւում էր
Մօտ թատրոնի պատշգամին,
Չէր կշտանում նայել նորա
Ինքոյչ, չքնաղ երեսին։
Այժմ նորան չեն ճանաչում,
Մոռացել են բնաւին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր նորա դռնում
Կանգնած էին չատ կառքեր,
Միշտ հացկերոյթ, ընթրիք, գինի,
Նուագարան և տաղեր.
Ամենայն աք ցանկանում էր
Լինել նորան բարեկամ.
Ամենայն ժամ նորան բաց էր
Շռայլ քսակը մեծատան.
Այժմ զրկուած ամէն բանից՝
Չունի անգամ հացի գին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Ամենայն օր իր մարմինը
Անուշահոտ ջրերով
Լուանում էր, մազը սանտրում
Կրիայի սանտրով.
Նա հագնում էր բեհեզ, կերպաս,
Դիպակ, թաւիշ թանկագին,
Նա չը գիտէր ի՞նչ ասել է
Արծաթի կարօտութիւն.
Այժմ անլուայ, մազերն արձակ,
Չունի հագուստ, թէև հին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»։

Նորա չքեղ ննջարանում
Բնակւում էր Աստղիկը,
Նորա որդին փայփայում էր
Նորան ամբողջ գիշերը...
Ախտաբորբոք երիտասարդ
Իւրեանց անձը երջանիկ
Կը հաշուէին, թէ լինէին
Նորա ձեռքում խաղալիք...
Այժմ փողոցում քնում է նա
Ծոնաւ պատերի տակին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

Ժամի դռնում նա կանգնած է,
Աչքերը կոր, վիզը ճուկ,
Նորա նախկին բարեկամքը
Չեն ասում նորան. «խղճուկ,
Ե՛կ դու մնդ մօտ, մենք կ՛ամոքենք
Քո վիճակի դառնութիւն.
Կը թուլացնենք ճակատագրիդ
Խիստ հարուածի սաստկութիւն»:
Նա տանում է տառապելով
Այս սոսկալի վշտերին —
«Ողորմութիւն արէք, պարոն,
Անտուն, անտէր աղքատին»:

ՄԻՔԱՅԷԼ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ



Հայու Արիւն

ՓԱՌՔ Աստծու, հայի արիւն ալ փօթեցաւ,
Եւրօպայի արեան պասքը յագեցաւ.
Զուզէր գիտնալ, որ աշխարհի մէջ հայ կայ,
Հայի մէջ ալ մարդկային սիրտ, հոգի կայ.
Երբ հոտոտեց հայի արեան գոլորշին,
Միտքը ձգեց թքած-մրած հայ ազգին:

Փառք Աստըծու հայ արիւն ալ փօթեցաւ,
Եւրօպայի արեան պասքը յագեցաւ:

Արի՛ւն փօթել... վաղուց մոռցել են մարդիկ,
Քասմնելի արեան հեղման արհաւիրք...
Արիւն փօթել այն չէ ինչ որ դուք գիտէք...
Բաղմաչարչար մեռածներուն հարցուցէք.
Հարցուցէք դուք որդեկորոյս հայ կնկան —
Ի՞նչ ասել է տեսնել հեղումը արեան...

Փառք Աստըծու, եւն:

Տեսե՞լ ես դու հօրըդ վզին պինդ չուան,
Ու քաշքշած տարած մինչև կախաղան.
Տեսե՞լ ես դու գիրկը աղան քու մօրը,
Անգութ տաճկի սուրը երկուսի փօրը.
Դու տեսե՞լ ես կոյս քրոջդ նոր փթթած,
Տըռփոտ տաճկի կուսութենէն իր զրկած:

Փառք Աստըծու, եւն:

Դու տեսե՞լ ես այն ալեւոր երէցին,
Ձեռքը բաժակ — նշան արեան Քրիստոսին,
Տաճիկն եկաւ ձեռքը ցոլաց սուր դաշոյն,
Բաժակի մէջ սըրսկեցաւ թարմ արիւն...
Այս պատմածս չէ գրքերէ հնութեան,
Այս ոճիրը շատ նոր տեսաւ Հայաստան:
Փառք Աստծու, ևն:

Բայց դու հայ մարդ մինչև ե՞րբ պիտի համբերես.
Ազգայ, աղանց առջև ճնալով սևերես.
Մի՞թէ ցայնօր պիտի ճնաս անզգայ,
Որ ասեն քեզ «Ալ աչխարհքըս հայ չիկայ»...
Էջմիածին, դէհ հա՛ն քու ցուցակէն
Վեց հազար հայ — այժմ սև հողի տակ են...
Վերջ իվերջոյ հայ արիւնն ալ վօթեցաւ.
Եւրօպ, արդեօք արեան պատգդ յագեցա՞ւ:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԱՂՕԹՔ ՄԱՆԿԱՆԱՆ

Ա՛ՈՒՔ քեզ Աստուած իմ,
Որ տուիր այսօր,
Ինչպէս յարաժամ,
Ինձի կերակուր:

Շնորհացդ ցօղէն
Կաթէ՛ իմ վրայ,
Որ հոգիս անբիծ,
Սիրտս սուրբ ըլլայ:

Լայս տուր իմ մտքիս
Եւ ուղիղ ճամբան
Ցո՛յց տուր, որ մանրիկ
Քայլերս ընթանան:

ԵՐԳ ՄԱՐՏԻ

ՔԱՂՑՐ հայրենեաց ազատութեանը համար,
Եւ լուսափիռ սուրը հաւատոյս վեհափառ
Այս երկու վեհ առթիւս ահա
Թէ ինձ մեռնել արժան չըլլայ,
Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ
Երբ գերութիւնն ալ յիս անէ:

Ո՛վ սուսերդ իմ փաղակուր սայրասուր,
Եւ դու հրացանդ որ կը ժայթքես բոց և հուր,
Դուք թշնամին խորտակեցէ՛ք
Եւ բռնաւորն նուաճեցէ՛ք․
Կեցջի՛ք միշտ իմ հրացան, սուսեր,
Ձեօք Հայրենեացս կանգնին աւեր:

Ո՛վ սուսերդ իմ երբ քեզ տեսնեմ շողշողաս,
Եւ դու հրացանդ իմ շողադէմ որոտաս,
Վատ թշնամւոյն իրանն փռուի,
«Աւա՜ղ» կանչէ ու այնպէս մեռնի․
Ապրի միշտ մեր հէք Հայրենիք,
Կեցցեն միշտ մեր վեհ Հայրենիք:

Ով սուսերդ իմ պողովատիկ կատաղի,
Եւ դու հրացան վատ արիւնին ծարաւի,
Թող թշնամուն իրան փռուի,
Մեր բռնաւոր շունը սատկի․
Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ, ևն․

Հայրենիքի արիւնաներկ սեմոց տակ
Թշնամինուս փռենք շատով սև դիակ․
Եւ նախահարց շունչ և կտակ
Հայրենիք՝ ըլլայ անո՜նց ժառանգ:
Կեանքն ինձ ալ ինչ կը ծառայէ, ևն․

Թող հայրենիք տխուր ճակատն վեր առնէ,
Եւ իր աչաց աղի արցունքը սրբէ․
Եւ իր որդւոց սիրոյ բարև
Տայ և ծագի պայծառ արև․
Կեանքն ինձ յայնժամ թող ծառայէ
Երբ հայրենիքն ազատ տեսնէ:

(Թարգ․ Յուն․) Մ․ Ց․ ՏԱՄԱՏԵԱՆ

Պանդուխտն Լայ

ԲԻՁ կը մնայ սիրտս պատռի,
Խելքս թռի, ո՛վ ախպէր.
Գլուխս առնեմ սարեր ընկնեմ,
Գոռամ, պոռամ ջան ախպէր:

Թէ որ դարդս կը հասկընաս,
Ձէն տուր սազիդ, ախպէր ջան.
Էրուած սիրտս սազիդ հետ լայ,
Դարդս հալի հովանամ:

Տունս ու օճախս էն ինչ թողի,
Քամու բերան ընկայ ես.
Քանի՛ արիւն արցունք թափի,
Գնաց գարունն իմ սրտէս:

Զարկ թելերին, աշուղ ախպէր,
Երգերն անուշ թող խօսան.
Ախ, վաղուց է որ չեմ լացեր
Էսպէս սրտանց, ախպէր ջան:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ



Օրօրէ Հայաստանի

ՔՆԷ՛, քընէ՛, իմ Հայրենիք,
Իմ կաթոգին Հայաստան.
Ես քեզ օ՛րօ՛ր կ՛ասեմ մեղմիկ,
Որ չը զարթիս անգուման:

Քանի՞ դարեր այդ խոր քունը,
Քեզ կաշկանդել, կապել է.
Քընի սերմունք, ասես, Մորփէն,
Լոկ քու վրայ թափել է:

Եւ ի՞նչ զարմանք, ազգ ու ազինք,
Միշտ լաւակամ քեզ համար.
Քունըդ վըրդովել չուզելով՝
Օրօրում են անդադար:

Քեզ Ռուսը թուր ձեռը բռնած,
Մարդ չի թողնում քեզի մօտ.
Թէ մօտ եկան՝ դարձեալ չէ՛ վոյթ,
Ունի չատ ռումբ, չատ վառօդ:

Որ աչքերդ չի խատղեն,
Վառ չողերը արեգին.
Անթափանցիկ ու մեծ ասպար,
Ունի բռնած իր ձեռքին:

Կամ թէ՝ անուշ քընիդ խափան,
Չլինին նաև քու որդիք.
Ըսպառազէն պահապաններ,
Նրանց վրայ կան հերիք:

Թէ ճիչ բանաս՝ այն ժամանակ,
. . . . . :
Այդ պատճառաւ հենց քո որդիք
Եւ՛ երկչոտ են, և զգաստ:

Արդ՝ դու ննջէ՛ ծանր քընով,
Ու մի զարթիլ չատ դարեր.
Պարտքն աշխարհի դու արել ես,
Կատարել ես չատ բաներ,

Ունիս քաջեր (թէև մեռած),
Ունիս գրքեր անհամար.
Սխրալի գործ քո զաւակաց,
Կ'անցնին կ'երթան դարէ դար:

Աստուածախօս քո լեզուն է,
Ծոցըդ դրախտ երկրաւոր.
Նոցա սերունդք են քո որդիք,
Դէ՛հ Հայաստան իմ, օ՛ր օ՛ր:

Երբեմն դու խիստ լաւ կ'անես,
(Այս քեզ խրատ իմ բարի.
Հաւատացիր, սրտով բաղձամ,
Որ այդ ճշդիւ կատարի):

Թէ սեփական զաւակներիդ,
Տաս խրատներ քո մայրական.
Որ կործանած իրանց գահը,
Վերականգնել չը կանան:

Շուտ շուտ գրկէ քարոզիչներ.
Սևագլուխ, մրքաւոր,
Որ յորդորեն ապրիլ նոցա,
Թէև աղքատ, բայց անդորր:

Խաղաղասէր կեանք քարոզեն,
Մեծ մեծ յոյսեր երկնային.
Ամէնու զգացմանց ցընորք ասեն,
Անօգտաւէտ բնաւին:

Զը հասկանան վախճան կենաց,
Կոյր են եկել՝ կոյր կերթան.
Կրօնքն էլ ինչպէս հարք կը մեկնեն,
Անոնք այնպէս հասկանան:

Մաքուր կրօնն է, ասեն պատը,
Ժամուց տալը մեռած հարց.
Կուշտ ուտելը, ճոխ ապրելը,
Այս է վախճան մեր կենաց:

Դիւրահաւան մեր հայերը,
Բարի խրատը լսելով՝
Զեն վրդովիլ, ու քեզ կուտան,
Լաւ կըշտանալ խոր քընով:

Դէ՛հ, իմ պատուական մայր Հայաստան,
Քընէ՛ անուշ ու անդորը,
Ամպէս յաւէրժ քեզ կը կարդան,
Ազգ ու ազինք օ՛ր, օ՛ր, օր:

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ.





Օրօրոցի Երգ

Քնէ՛ քնէ՛ սիրուն որդի,
Քու մօր սրտին սփոփանք.
Քեզ օր կ'ասեմ տխուր ձէնով,
Օրեր, օրեր ու շատ կեանք:

Օրօրոցդ ձեռքով շարժեմ,
Բերնով երեսդ համբուրեմ.
Քեզ շատ օրեր, քեզ շատ օրեր,
Քեզ շատ արև կու երգեմ:

Աչքերդ փակէ այդ լուսափայլ.
Աստղի նման փայլածը.
Որ մինչև այդ երկնքումը,
Երևում է ցոլածը:

Աչքիդ շողը սիրտս է ծագում,
Նորոգում է իմ խոցը.
Աչքերդ փակէ, իմ սիրական,
Հերի՛ք, սրտիս այրածը:

Աչքըդ փակէ, քաղցր քնէ՛,
Քեզ օր կ՚ասեմ ես լալով.
Քու հօր բանը իմաց կ՚անեմ,
Դու ականջ դիր նիրհելով:

Հայրըդ զօրեղ երիտասարդ,
Առաւ բակէն գութանը.
Լծեց երկու զոյգ եզները,
Իր սրածայր արօրը:

Գնաց դաշտը երգ երգելով,
Երգ ասելով, ողբալով
Քաղցր ձէնով երգ կանչելով,
Երգ երգելով ու լալով:

«Ինչի՞ համար սուգ ես անում,
Սուգ, արտասուք ու լալով»:
Ասաց հօրըդ հարևանը՝
Աչքէն արցունք վազելով:

«Եզներդ գէր դէր ու պարարտ,
Վազիվազեն պէպի դաշտ.
Շատ կու վարեն, չատ կու հերկեն
Շատ կու կամնին քու արտը:

«Արեգակը մարը մտած՝
Դու կու դառնաս աւօրէն.
Քեզ Զանանը առաջ կուգայ,
Գրկում բռնած երեխէն»:

Գօրգին երգով հարևանին;
Այսպէս տուեց պատասխան.
«Եզներս չեն ինձ ծնալու,
Իմ աչքի լոյս հարևան»:

«Օրավարս ես՝ չեմ կարող,
Այսօր վերջը հասցընել.
Պիտի ինայ հող ու արաբս,
Անվարուցան, անայցել»։

«Դիակիս մօտ գէր ու պարարտ,
Իմ եզները, վիզը ծուռ,
Պիտի ինան թէ ո՞վ նոցա,
Երեկոյին կուտայ ջուր»։

Հարևանը աչքը արցունք,
Մեզ ևս համբաւը բերեց,
Դէ՛ «չուտ արէ՛ք, եկէք տեսէ՛ք,
Թէ ձեր Գորգին ի՞նչ արեց»։

Ի՞նչ ես արել, գանք ու տեսնենք,
Վա՛յ իմ անբախտ աչքերուն.
Նետը ցցուած է սրտիդ մէջ,
Տակը ճապախքը արիւն։

Նետը ցցուած քու սրտիդ մէջ,
Օդը պատռեց, գիծ արաւ.
Գիծը ևս էր երկնքումը,
Աչքս ծառի մօտ տարաւ։

Ծառի յետնէն թագ կեցած էր,
Մեր գիւղացոց թշնամին,
Մեր գիւղացոց հին տեսլին,
Տավարի գող եզիդը։

Դու սիրական, սիրուն որդի,
Քնէ, քնէ, զօրանաս.
Քու մօր համար մխիթարիչ,
Ու սիրուիչ մեծանաս։

Մխաքըդ պահէ քու՝ հօր արտը,
Գեր ու պարարտ եզները,
Մխաքըդ պահէ մանն ու սամիքը,
Ու սրածայր արօրը։

Երբ մեծանաս երթաս դաշտը,
Ուզես վարել քո արտը,
Քու մօր համար ուսով բերել,
Ցորնի խուրձը ու չարդը...

Առաջ գնա՛, գետը անցիր,
Այն սրահաս երասխէն.
Գնա գտի՛ր այն եզիդին,
Որ այն ծառի ետևէն

Նետը քաշեց, օդը պատռեց,
Քու հօր կեանքը սև արեց.
Թող Գօրգիի եզները տայ,
Որ այն օրը վախցըրեց...

Գեր ու պարարտ քու եզները,
Այլևևն լծէ՛, սիրական.
Դարձիր որբէ քու մօր աչքէն
Այս արցունքը տրամուխանն։

Քաղցր ձէնով երգ հնչելով,
Երգ երգելով դուն արի...
Ա՛խ, երբ կը լինի որ մեծանաս,
— Իմ բալճանքը կատարի։

Այժմ քնէ՛, աչքդ խփէ,
Հանգստացիր օր, օր, օր.
Թող քու մայրը աչքէն թափէ,
Արտասուքը իր յորդոր։

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՎՆԷ, ՎՆԷ, ՍԻՐՈՒՆ ԹՈՌՆԵԱԿ

ՎՆԷ՛, ՔՆԷ՛, սիրուն թռռնեակ
ՔՆԷ՛, անուշ դու քընով,
Որօրօցդ հանդարտ կը չարժեմ,
Ես մայրական ջերմ սիրով։

ՔՆԷ՛, ՔՆԷ՛, անմեղ հրեշտակ
ՔՆԷ՛ անուշ դու քնով,
ՔեզՕ՛ր կ՛ասեմ, քաղցր օ՛ր օ՛ր...
ՔեզՕ՛ր կ՛երգեմ մեղմ ձայնով։

Աչքդ փակի՛ր, իմ աղաւնա՛կ,
Այդ աչերդ վառվռուն.
Քաղցր քունը վերադ սփռէ՝
Իւր թևիկները նաչխուն։

Աչքդ փակի՛ր, իմ սիրական,
ՔՆԷ՛, որ չուտ մեծանաս,
Քո վաստրախտ ծնողաց համար՝
Խելօք տղայ դու դառնաս։

Երբ մեծացար, իմ նազելի,
Մանուկ եղար դու սիրուն,
Տէրտէրի մօտ կ՛ուղարկեմ քեզ,
Սերտել տաղեր, երգ անոյշ։

ՔեզԿը սովրեցնէ Տէր Հայրիկը՝
Սաղմոս, ժամագիրք, նարեկ,
Փառաբանել Աստծոյ անուն՝
Ամբողջ գիշեր ու ցորեկ։

Երբ որ ծաղկին սև մօրուքով՝
Այդ լուսափայլ լիքը թշեր,
Անապատը կ՛ուղարկեմ քեզ,
Ճգնել անդ օր ու գիշեր։

Քնէ՛, քնէ՛, սիրուն որդեակ,
Քո մօր սրտին մխիթար·
Քնէ՛, և շուտ մեծացիր դու,
Ինձ քո ձեռքով հողը տար։

Այդ հրեշտակի սուրբ լեզուովդ՝
Աղօթք կարդա՛ իմ վրայ,
Տէրը շուտ կը լսէ քեզ·
Տարիդ հոգւոյ ճարն արա։

Իմ հոգւոյս դու նուիրէ,
Քո առաջին պատարագ,
Որպէս Բիբին արիւն ծովէն,
Ինձ մեղքից փրկէ՛, որդեակ։

ՐԱՖՖԻ

ՔՆԻ՛Ր ղաւակս, քնի՛ր որդեակ,
Հայն մնացեր է գերութեան տակ·
Քնի՛ր մեծացիր, զօրացիր,
Որ թշնամեաց ձգես գնդակ։

Մեր հայրենեաց նախնի քաջեր,
Զըմոռանաք հայ մանուկներ·
Հայկ, Արամ, Վարդան, Վահաններ,
Ձեզ կը յանձնեն իրենց նետեր։

Տարիքդ կը լինի քսաներկուք,
Դու կը նստիս մի ձի նժոյգ·
Իմ մայրական դառն արտասուք,
Կը փարատէ հայոց սև սուգ։։

Քնիր ղաւակս, քնիր որդեակ,
Ո՛հ, ես կուտամ Աստուծոյ փառք·
Ես քեզ պահեմ մեծացընեմ,
Այդ դաստակարդին հասցընեմ։

ՆԱՆԱՅԻ ՕՐՕՐԸ

Քնի՛ր իմ բալիկ, օրօր ել արա՝,
Դու լաց մի լինիր, ես չատ եմ լացել։

Կոյր կառնկները սուգ ու չիւանով
Մեր ևս երկնքից եկան անցկացան,
Ահա, մեր լեռներում նրանք կուրացան.
Դու լաց մի լինիր, ես չատ եմ լացել։

Հոգնին է հեծեծում ևս անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալիկ,
Անտէր ու անթաղ մեռելները չա՛տ.
Դու լաց մի՛ լինիր, ես չատ եմ լացել։

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,
ԵՒս անտառներում ծունկ չոգեց մնաց.
Այն մեր աշխարհի դարդն ու զուլումն է,
Դու լաց մի լինիր, ես չատ եմ լացել։

Ցուլունք եմ չարել, կապել օրոցքիդ՝
Չար աչքերի դէմ մեր չար դուշմանի—
Քնի՛ր ու ճախր, չուտ արա՛, բալի՛կ,
Դու լաց մի լինիր, ես չատ եմ լացել։

Դալուկ շրթունքիդ իմ կաթը ատեց.
Գիտեմ այն պատն է, չես ուզում, բալիկ—
Ահա, վշտից թոյնն է քամուել նրա մէջ...
Դու լաց մի լինիր, ես չատ եմ լացել։

Կաթից հետ մէկտեղ ևս վիշտը ծծիր,
Հոգուդ մէջ թոյլ նա ևս վրէժ դառնայ.
Ծլիր, բոյ քաշիր, բոյիդ ես զուրբան,
Դու լաց մի լինիր, ես չատ եմ լացել...։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԻՄ ՄԱՆԻԿԻ ՕՐՕՐԸ

ՔՈՒՆ եղիր, Մանիկ,
Քնիր, իմ բալա՛ս,
Աչքդ խո՛ւփ արա,
Հերիք, քանի՞ լաս։

    Գուցէ քաղցած ես,
    Ուզում ես ուտել․
    Գուցէ ցաւ ունես,
    Ասա՛, ի՞նչ անել։

Ահա՛ քեզ կաթը,
Կեր ու կշտացիր․
Ահա տաք շորեր,
Դէ, հանգստացիր․

    Բայց չէ, լալիս ես,
    Չես ուզում լռել,
    Քո անքուն մօրդ
    Խղճալ ու քնել։

Դէ, ե՛կ իմ գիրկը,
Քեզ լա՛յ-լա՛յ կանչեմ,
Լայ-լայով գուցէ
Աչքիդ քուն բերեմ։

    Լայ-լայ սիրուն, իմ Մանիկ,
    Լայ-լայ նախշուն, իմ մանկիկ,
    Մատաղ գնամ աչերիդ,
    Մատաղ կամար ունքերիդ։

Պաչիկ կըտամ ճակատիդ,
Պաչիկ փափլիկ թաթիկիդ,
Գիշեր ցերեկ ես կանեմ․
Լա՛յ-լա՛յ, լա՛յ-լա՛յ, իմ Մանիկ,
Լա՛յ-լա՛յ-, իմ մանկիկ։

    Ահա քնեց Մանիկս,
    Նախշուն աչեր խուփ արաւ․
    Դէ, այժմ արի, հրեշտակ,
    Որ պահպանես թևիդ տակ։

Կ. Կ. ՄԵԼԻՔ-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ՀԱՅՐԵՆԻՔ



ԴԴ ՍԻՐՈՒՆ, ջուրդ սիրուն, դուն սիրուն.
Պէս պէս գոյնով ծաղիկներդ գալարուն.
Ձեն դադարիր աչխատելուց օրն ի բուն,
Քու հարազատ մշակներդ, Հայրենիք:
Երբ որ լինի գարնանամուտ նոր գարուն,
Կը բազմանան վտակներդ, Հայրենիք,
Շարիչար ցնծութեամբ երգելով գուարթուն,
Շարժում են բանակներդ, Հայրենիք:

Մարդիկ կուգան քու սարերը ման գալու,
Իբր արարդ եղնիկներդ որսալու.
Ե՞րբ կը փոխեն երգը ուրախ կարգալու,
Քու ազատգեաց սոխակներդ, Հայրենիք:

Դուն դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ,
Քու մէջդ անմահութեան հոտ կուգայ,
Հազար ափսոս լուսաւորուած չեն հիմայ.
Ժողովուրդ, գաւակներդ, Հայրենիք:

ՕԽԹԸ ՍԱՐՈՎ

Օխթը սարով հեռո՛ւ քեզնէն,
Ջու չուաքով ապրում եմ, եա՛ր,
Օխթը սարով բաժան քեզնէն,
Ջու կարօտով էրում եմ, եա՛ր:

Դարդիս դարմա՛ն, եարիս մահլա՛մ,
Կեանք ու արև եարըս ո՞ւր ա:

Գիչեր-ցերեկ ղրկուած քընիդ՝
Ծով է կըտրում աչքըս ճամբին,
Բալի ղարիբ մի ճամբորդից
Կարօտ եարէս խաբար առնեմ:

Դարդիս դարմա՛ն, եարիս մահլա՛մ,
Թոպ ու պատակ եարըս ո՞ւր ա:

Օխթը սարի ծում ու պատով
Օր ու արև սևցուցի, եա՛ր,
Բալի Մըչու Սուլթան ղօրքով՝
Իմ մուրազս տար ինձի, եա՛ր:

Դարդիս դարմա՛ն, եարիս մահլա՛մ,
Թև ու թիկունք եարս ո՞ւր ա:



Նոր Տարի

Օն, ՓՈՒԹԱՑԷ՛Ք, հասեալ է ժամ,
Հարէք մարտի փողերն ուժգին.
Մեզ ահարկու կայ պատերազմ,
Արեամբ պինեալ է թշնամին:
Փշրե՛նք, ազատ բանանք դռներ
Զար նախանձին մեր սիեբիմ,
Որ դարերով է մեզ փակեր
Ի կուրութեան, ի բանտ մթին:

Ի զէ՛ն, օ՛ն փութացէք,
Գունդ ի գունդ հայկազունք,
Լուսոփն այս նոր տարուոյս վանեննք
Բռնութիւն, դաւ ու նենգ:

Մեր մարք, մեր քորք խոցեցան շատ
Ձղթայակապ ի գերութեան,
Մինչդեռ մեր հարք, եղբարք ազատ
Անփոյթ էին կոյրզկուրան:
Արդ և սոքա լուսոփն ուսման
Տեսան վէրքերն իրենց ազդած.
Ուստի լինին մեզ օգնական
Առնել նախանձ արտահալած:

Ի զէ՛ն, օ՛ն փութացէք, ևն:

Ազատութեան կանգնենք դրօշ,
Մեր իգական փափուկ սեռին.
Տեսանեն մեր քոյր ընկերք անյուշ
Թ՛այնու իրենց է մեծ բարին:
Նոր տարուոյ գէնք առէք, պինուա՛րք
Մեր բառն ընենք հաւատ, յոյս, սէր,
Իմաստութեան դատերք ենք, քորք,
Այս մեր փառք՝ պատակ, այս ձեզ հրաւէր:

Ի զէ՛ն, օ՛ն փութացէք, ևն:

ՊԱՆԴՈՒԽՏԸ

ՕՏԱՐ աստեղց տակ կը հնծէ պանդուխտը,
Երկինք օտար, երկիր օտար, ինք թշուառ.
Աւա՛ղ, աւա՛ղ, աւա՛ղ ինք թշուպռ,
Սիրուն հայրենիք, անուշ հայրենիք,
Սիրտս և հոգիս քեզ կարօտի, հայրենիք:

Հացն է աղի, ջուրն անհամ, պալատ իրեն է դժոխք,
Չի սիրելիք և բարեկամք չկան հոն:
Աւա՛ղ, աւա՛ղ, ևն:

Ամեն էանց, գարուն ժպտի սիրադէմ,
Բայց պանդխտի հին վիշտերը միշտ հետ են.
Աւա՛ղ, աւա՛ղ, ևն:

Ծաղկունք փթթին, սոխակն կ'երգէ, ինք կ'ողբայ
Իր վշտալի ան-սև օրերն ու ժամեր.
Աւա՛ղ, աւա՛ղ, ևն:

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՕՏԱՐ երկիր, օտար պանդուխտ կը հնծեմ,
Դու, հայրենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ.
Չը կայ ծնող, չկան որդիք, քոյր, եղբայր,
Չիք ամուսին, որուվ ցաւերս մեղմանայր:

Օտար երկին, արև, աստղեր և լուսին
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին.
Բնակարանս տրխուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն.
Սակայն ունիմ քովս Քիսուս, փրկէ զիս.
Նա օտար չէ, նա իմս է, սիրէ զիս:

Հայրենիքի Ձայնը

Օ ՏԱՐ ափունք գրուած ի սիրտ
Ո՛վ սիրասուն իմ զաւակունք,
Ձեր հայրենիք տրտում, տխուր,
Ձեզ կը դիտէ արցունք յաչկունս։
Իմ տաճարներս՝ սէր կը կանգնէ,
Իմ նախատինքս արի՛ն սրբէ։

Ո՛հ, այս քանի՞ տարի անցաւ,
Ուխտեցիք ինձ սէր, յոյս և կեանք.
Ամուլ մրցում, հեռ, վիշտ և ցաւ,
Այս իմ բաժին, այ՞ս է ձեր ջանք։
Իմ տաճարներս սէր՝ կը կանգնէ,
Իմ նախատինքս արի՛ն սրբէ։

Հնոց, ո՛վ ցաւք, որ օտարին
Փառաց, պատուոյ էք խնկարկու,
Անմահութեան դրոշմ, սէր ազգին,
Նախնեաց քրտինք՝ ծախած շքոյ։
Իմ տաճարներս՝ դուք չէք կանգներ
Իմ նախատինքս՝ դուք չէք սրբեր։

Կ՛անցնին այսպէս անթիւ օրեր,
Եւ յաւերակս նստած յերեր.
Իբրև այրի՝ հրոյ մատնած,
Կոյս՝ ոյր օժիտն է անարգուած։
Գոչեմ տաճարս ո՞վ կը կանգնէ,
Իմ նախատինքս ո՞վ կը սրբէ։

Ե. ՄՈՒՐԱՏԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ

Օ՜Տ՜ԱՐ երկինք, օտար արև,
Որ չողում էք գլխիս վերև,
Ինչքա՛ն չողաք··· դուք ինձ համար
Միշտ կը մնաք գիշեր խաւար···

Սիրտս տաչոր՝ ձեզ նայելով,
Անտէր, պանդուխտ կեանքս լալով,
Օր չի անցնում—Հայրենիքիս
Վառ կարօտը չ՝այրէ հոգիս։

Մատաղ լինիմ նորա պայծառ
Էն երկնքին, ուր սիրավառ
Ոսկի՛ արևն ինձ վերեւից
Փայփայել է մանուկ օրից։

Հայրենիքիս խաղաղ ծոցում,
Ինչպէս փափուկ օրօրոցում,
Ես մեծացել, կեա՛նք եմ առել,
Նրա չնորհով մարդ դառել։

Ո՞նց մոռանամ ես էն օրհնած
Սարն ու ձորը ծաղկով լցուած.
Էն կենսատու ջուրն ու հողը,
Գարունքի էն հովն ու ցօղը։

Ո՞նց մոռանամ ես էն փարթամ
Դաչտն ու արտը, ուր չատ անգամ,
Ասես, թիթեռ, թըրթըռացել,
Արար-աչխարհ եմ մոռացել···

Ուր լսել եմ արտիս ագիլ
Գեղջուկ մշակ եղբայրներիս
Դառն լացը, կուշտ ծխծաղը,
Ուրախ-ուրախ երգն ու սազը···

Օտ՛ար երկինք, օտար արև,
Որ չողում էք գլխիս վերև,
Ինչքա՛ն չողաք···դուք ինձ համար
Միշտ կը մնաք գիշեր խաւար···

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՕՏԱՐՈՒՀԻՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

ՕՏԱՐՈՒՀԻՆ ինձ ասաց. «Հէ՞ր ես լալիս, արցունքը
Հեղեղի պէս ի՞նչու են ոռոգում քո աչկունքը.
Քու տրտմութեան ճար ունիմ կըփարատիմ քո դարդը
Թչիս վրայ չե՞ս տեսնում փայլած չուչանն ու վարդը»:

— Զուր մի ջանար, սիրական, իմ դարդը չես փարատիլ,
Հոգիս հոգսից, ցաւերից ինձ փրկել չես ազատիլ.
Թո՛ղ իմ աչքէս հեղեղայ արցունքի աղբիւրը,
Արցունքն է լուանում սրտի խոր-խոր ցաւերը:

Օտարուհին ինձ ասաց. «տե՛ս, հասել է գարունը,
Դաշտերի մէջ բացուել են հազարերանգ ծաղկունք.
Իջնենք դաշտը օգ քաշենք, ծաղկունք քաղէ, փունջ մինջէ,
Հայրենիքիդ կարօտն աւ որ թախիծ քեզ չը տանջէ»:

— Հայրենիքիս կարօտը ձեր դաշտերում չեմ առնիլ,
Սառ հիւսիսում երկինքը Հայաստանի չեմ տեսնիլ.
Ուր բիւրապատիկ ցոլուն են արեգակի շողերը,
Կենսատու է՝ անձրևը, մեղրածին են ցօղերը:

Օտարուհին ինձ ասաց. «մոռացիր քու հայրենիք,
Քու հայրենիքն այն տեղ է, ուր սիրում են քեզ մարդիկ.
Տե՛ս արևին, ան պայծառ չէ՞ շողշողում հիւսիսում,
Հայաստանը կորել է, խե՛ղճ, դու ցընորք ես ուզում»:

— Սուտ են, սուտ քո զրոյցքը, Հայաստանը չէ կորած.
Նա այն տեղ է, ուր Եփրատ ու Տիգրիս են գըրկուած.
Ուր Երասխը մըրմունջով յուզած ջուրն է գլորում,
Ուր Մասիսի գագաթը ամպերից ցած է նայում:

Ուր փայլում է արեգը իր կուսական շողերում,
Ուր ջրում է երկինքը՝ երկիրը գով ցօղերով.
Ուր որ չըկայ բորբաս, չըկայ չիմուն ու խորշակ,
Օդը չունչ է հրեշտակի, ջուրը մեղր է անուշակ...

Հայաստանը կայ... աւա՛ղ, խոպանացած ամայի,
Եւ կը ծաղկի, երբ նորից ծըծէ քրտինքը հայի...
Նորա ատինքը յամառ է, չի կերակրում օտարին.
Օտարն խաբուած ասում է, չիջաւ աստղը հայերին»:

Բայց ի՞նչ, դու չես հասկնալ իմ սրտամաշ դարդերը,
Մի՛ չանար, ինձ չեն սփոփիլ թըշխէդ փայլուն վարդերը,
Իմ սրտմտութեան ցաւակից խանդաղակաթ գրկելով,
Օտարուհին ինձ տուաւ գաւաթը լի գինիով:

Երկնակապոյտ աչերը անթարթ աչերիս յառած.
Լաց ու ժպիտ երեսին՝ նա մեզմ ձէնով ինձ ասաց.
«Խմէ՛ գինի, պատանի, ի յիշատակ այն երկրին,
«Որ սրտամաշ կարօտով կոչում ես քու հայրենին:

«Պարզէ՛ ազնիւ ճակատդ, զուարթացիր, ոգի ա՛ռ,
«Ցուսակտուր այդ դէմքով, խղճալի մի՛ ձևանար.
«Ձիւնաթաղ ու կիսամեռ դաշտը գարնան շնչից,
«Ձե՞ն ըսթափում և յառնում մահահանգոյն խոր քընից:

«Երբ ծագում է արևը՝ մըռայլը չի՞ հալածում,
«Մեռած բնութիւնն դէպ նոր կեանքը նա չի՞ վերածում.
«Դէ՛հ պատանի, քա՛լ եղիր, խմէ գինի՛, երգ երգէ՛,
«Տէրն է որբոց օգնական, նա քու ազգն էլ կը փրկէ»:

ԳԱՄՍՈՒՐ - ՔՍԹԻՊԱ.

ՕՐ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ

Օր գարնանային, օ՛ր թարմ և սիրուն,
Շնչում է արփին նոր կեանք ջերմութեան
Բայց դեռ դաշտերը ձմեռուայ քընով,
Թմրած նիրհում են, զարթնել չեն ուզում։

Եւ լի յոյսերով մշակը ժրաջան,
Նիհար եզներով վարում է դուքան.
Զարթնցէք խոր քնից, ո՛վ թմրած արտեր,
Մինչ ե՞րբ պիտ ննջէք՝ ամայի դաշտեր։

— Յաջողութիւն քեզ, ո՛վ անբախտ մշակ,
Մշակ անպատուղ խոպան դաշտերի,
Բարեմաղթում է մշակը մտքերի,
Որ կարեկից է քո դառն վիճակի։ ՐԱՖՖԻ

Օրերգ Առ Հրանտիկ

Օրօր, օրօր, օրօրօ՛ր...
Իմ անդրման, իմ ազուո՛ր
Հրանտիկ
Դու իմ յուսոց, բերկրութեանց
Պայծառ արեւն ես և գանձ
Մէկ հատիկ.
Օրօր, օրօր, ևն։
Ո՛վ կենսատուղիս իմ ազբիւր,
Որ ցնծութեամբ լնուս բիւր
Զ'իմ սրտիկ։
Օրօր, օրօր, ևն։
Հրեշտակիկդ իմ գեղանի,
Հոգիս միայն քե՛զ լինի
Հըպարտիկ։
Օրօր, օրօր, ևն

Ունիս լուանի կերպարան,
Շուշան-ճակատ, նուռ-բերան,
Վարդ-այտիկ:
Օրօր, օրօր, ևն:
Ո՛րքան կակուղ, որքա՛ն գէր
Մարմին ունիս և ձեռքեր
Ու ոտիկ:
Օրօր, օրօր, ևն:
կարծեմ տեսեր ես արփին
Բիրեռուդ մէջ այն նրբին,
Պզտիկ:
Օրօր, օրօր, ևն:
Ագաւնեակ մ՚ես դու, ի՞նչ ես,
Որ օրրանիդ մէջ նընջես,
Հանդարտիկ:
Օրօր, օրօր, ևն:
Թռչնի՞կ մ՚ես դու ձայնարկու,
Ուր կը պակսին թևք երկու
Կատուտիկ:
Օրօր, օրօր, ևն:
Եթէ ինձ գահ նուիրեն,
Ո՛չ, ես չեմ տար փոխարէն
Քո մատիկ:
Օրօր, օրօր, ևն:
Քընէ՛, մեծցիր անխափան.
Թող լինի քեղ պահապան,
Սուրբ Ջատիկ:
Օրօր, օրօր, ևն:
Ով իմ կենաց վառ աստղիկ,
Ո՛վ իմ թռչնիկ իմ ծաղիկ,
Խորատիկ:

Ա. Գ. ՓԱՆՈՍԵԱՆ

Խ աչ, Օգնեա Ինձ

ՕՐՕՐԱՆԻՍ մօտը նստած՝
Մայրս անուշ երգելով
Ինձ չատ անգամ քուն էր տրած՝
Խաչանշան կնքելով։

«Աչն ու խաչը քեզ պահապան,»
Անթիւ անգամ կրկնել էր,
Խաչն իր սիրոյն միշտ ապաստան
Ամէն ժամուս կանչել էր։

Երբ որ թոթով լեզուս բացաւ՝
Խաչի դասն աւանդեց.
«Խա՛չ, օգնե՛ա ինձ» կրկնիր, ասաց,
Գլխուս սիրով պատուիրեց։

Քանի տարի էս սիրուն դասն
Ես չարունակ կրկնեցի,
Մօրըս հետը ժամ գընացի,
Խաչելութիւն սիրեցի։

Ուխտատեղի, թէ մատուռներ,
Ուր որ ես ուխտ գնացի,
Համբուրեցի ես խաչ-քարեր՝
«Խաչ, օգնեա ինձ» կրկնեցի։

Երբ որ փոքր ինչ ես մեծացայ,
Մայրըս տուաւ քերական.
«Խաչ, օգնեա, ինձ, կրկնիր», ասաց,
«Խաչն է ուսման օգնական»։

Ախչն օգնական ինձ կանչելով
Այլ ու բեննէն ակըսայ,
Ամէն գասում միշտ կրկնելով,
Շուտով կարդալ սովրեցայ:

Քերականն աւարտեցի,
Յետոյ մտայ վարժարան.
Եօթը տարի ես կարդացի,
Ուսմունք առի զանազան:

Քանի՛ քանի՛ չարադրածներս,
Որ ես ինձնէն գրեցի,
Դիս չըակըսած՝ ճակատներն
«Ախ՛չ, օգնեա ինձ» դրոշմեցի:

Աստուածաշունչ, Աւետարան
Որչափ սիրով կարդացի,
Այնքան Ախչին սիրոյ նըշան
Սըրտիս մէջը զգացի:

Ըզգացի որ խաչի ճառըն
Մեծ ուսմունք է մարդկութեան,
Մեր փրկութեան դրօշըն է նա,
Ճշմարտութեան սուրբ նշան:

Ըզգացի որ նախատանքով
Գողգոթայում անկուեցաւ,
Բայց և յետոյ անհուն փառքով
Գրմբէթներում փայլեցաւ:

Ըզգայի՛ որ նա է բաժին
Ճշմարտութիւն գոչողին,
Նա է կենաց անձուկ ուղին
Ճշմարտութիւն սիրողին:

Արդարութիւն, ճշմարտութիւն,
Նըրան ծնունդ երկւորեակ,
Խաչն է նրանց ոյժ, զօրութիւն,
Անեղութեան մայր դայեակ:

Ըզգացի որ երկունք խաչին
Ծանր է քան ծնող մարց,
Բայց և ծնունդք արի, ուժգին
Եւ ոչ որպէս հեգ կանանց:

Ըզգացի որ Խաչեալն Աստուած
Սիրոյ համար խաչ չալկեց,
Մարդկանց սիրով խաչը գրկած՝
Խաչ վեր առնուլ քարոզեց:

Ըզգացի որ խաչ կայ պատրաստ
Ամէն մարդու առաջին,
Ով կը ցանկայ լինել զգաստ
Գնալ զհետ մեր Փրկչին:

Ըզգացի որ ես էլ ունիմ
Իմ յատուկ խաչն աշխարհքում,
Որ անտրտունջ պիտի տանեմ
Սիրով ամէն դիպուածքում.

Խաչ կայ մարդուն իր կրքերից,
Խաչ ամէն տեղ, ամէն ժամ,
Խաչ կայ անքուն սուխներից
Դաւ, հալածանք յարաժամ:

Խաչ կայ կենաց աղէտներից,
Խաչ բնական, դիւրատար,
Խաչ կայ մանիչ յուղաներից
Խաչ դժուարին, ծանրատար:

Խաչ կայ անմիտ տգէտներից
Իմաստասէր հանճարին.
Խաչ կայ աչխարհ պաշտողներից
Աչխարհի մէջ մրցողին:

Խաչ կայ խաւար յամառներից
Լոյս որոնող մտքերին.
Խաչ—բարբարոս իշխողներից
Գերութեան լուծ ատողին:

Խաչ կայ անչարժ թոյլ վատերից
Յառաջադէմ ձգտողին,
Խաչ կայ մոլար կարիքներից
Ճմարտասէր դիւցազնին:

Խաչ կայ նենգժոտ խարդախներից
Պարզ և ուղիղ սրտերին,
Խաչ կայ սրտուկ ոգիներից
Պարտք իրաւունք խնդրողին:

Ըզգացի որ էսքան խաչեր
Էն Խաչի մօտ ոչինչ են,
Որ մարդասէր գթոտ Տէրն
Բարձաւ իր ուսն հեզօրէն:

Նա է սիրոյ անհուն նշան
Խաչեալն սէր գլխովին,
Սփոփանաց մեծ ապաստան
Սիրով խաչ բարձողին:

Ըզգացի՛ որ Փրկչի խաչն էր,
Որ օգնական ինձ դուչեց,
Երբ որ մայրս հեզ, որդեսէր
«Խաչ, օգնեա ինձ» դաս տուեց:

Քանի՛ քանի՛ նեղութիւններ,
Որ իմ հանդէպ դուրս եկան,
Միտքս բերի մօրըս պատուէր,
Կաշեցի խաչն օգնական:

Քանի՛ քանի՛ հեշտութիւններ,
Որ ես ինձէն զրկեցի,
Թափեցի յորդ արտասուքներ,
«Խա՛չ, օգնեա ինձ» կրկնեցի:

Վիշտ ու վտանգ փարատեցան,
Ըզգացի մեծ սփոփանք,
Բուք, փոթորիկ կուտակեցան,
Անցի մէջէն անվտանգ:

Օրհնուի՛ քո գերեզմանը,
Որդեխնամ մայր գթոտ,
Որ դու խաչի փրկարար դասն
Ուսուցիր ինձ համառօտ:

Թէ որ մանուկ, թարմ հասակէս
Ձաղկիր ինձ Խաչին սէր,
Ինչպէ՞ս պիտի լինէի ես
Մըրրկաց մէջ անվեհեր:

Մա՛յր իմ, դասըդ չեմ մոռանալ,
Քանի որ ես կենդան եմ,
Նեղութեանց մէջ չեմ թուլանալ,
Խաչն ինձ պարծանք կ'անուանեմ:

Ուրախութեամբ ես կը տանեմ
Ամէն զրկանք ամէն խաչ,
Քանի սիրով ես կը տեսնեմ
Փրկիչն 'ի Խաչ բարձրացած:

Գ. ԱՍՈՂԻԿ



ԿԱԹՈՒՂԻԿՈՍՆԵՐ ԵՒ ՊԱՏՐԻԱՐՔՆԵՐ

LES PATRIARCHES ARMENIENS

ՅԱՒԵԼՈՒԱԾ



ՆՕԹԱԳՐՈՒԱԾ, ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ ԵՐԳԻՉԱԿԱՆ ԵՐԳԵՐ

ԳԵՂՕՆ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Ազատութիւ՛ն, մեր բերնին
Ազօթքըն ես սրբազան.
Կորագլուխ թող մեռնի՛ն
Բռնաւորները գազան:
Հին բռնութեան գարշ ալիք
Զընէ ըզմեզ խաղալիկ,
Փոթորկին
Մէջ կրկին:

Ազատութի՛ւն, փակեցիր
Դուռները մութ գնատանին.
Վհմակն ըրիր ցանուցիր,
Հիմա մեզ ուր կը տանին:
— Մեզ կը տանին հայրենիք
Ուրախութեան հարսանիք
Թունդ երգերով
Հոգեթով:

Ազատութի՛ւն, դուն մերին
Պահապա՛նն ես յաղթական.
Մ'ըներ հայը հին գերին,
Մ'ըներ հայը գաղթական:
Զունինք զէնքեր ու կապար,
Զունինք դաշոյն ու տապար,
Դէմ վատերու
Կռուելու:

Ազատութիւ՛ն, թռչըտէ՛,
— Խաղաղութե՛ան վարուժան:
Իրաւունքնիս թող չուտէ
Օտար մէկը դրուժան:
Հերիք որքան ճըւացին
Հայ գեղացին, քաղքըցին:
Միշտ ծարաւի
Անօթի:

ԹԷՕԴԻԿ

Ազիզ Մէրիկ

Ազիզ Մէրիկ, քեզի Թողի,
Դարդ ունէի դուրս ընկայ.
Սուրբ վաթանիս ժողովրդի
Ձէնը կանչեց դուրս ընկայ։

Դուման սարեր, դարդլու սարեր,
Դարդ ու դուման մեր վաթան.
Ահա, գլուխս քո ուղուրին...
Ահա մեր անուշ մէր-վաթան։

Էյ Սիս, Մասիս, ձեզի մեռնիմ,
Իմ Սիս-Մասիս ջան տղերք.
Դուք տասի չափ, հազարի չափ,
Ձեզի մեռնիմ, ջան տղերք։

Առիւծի պէս առուն կուգայ,
Բաշը տուած քարերին.
Առիւծի պէս հայ ախպրանք,
Վո՛ւհ վրայ տանք դուշմանին։

Մէկ սիրտ դառնանք, բիւր սուր դառնանք,
Ջարդենք, փշրե՛նք դուշմանին,
Ջան տղերք, պարնանք պարկուինք
Մեր վաթանի ուղուրին։

ՀԱՑ-ԳՈՒՍԱՆ

Ալ ու Ալուան

ԱԼ ՈՒ ալուան ես դառէ ,
Կարմիր լալա ես դառէ ,
Ինձ ասա , քեզի մատաղ ,
Իշլիկդ ո՞վ է կարէ :
Աղբէրջան , ջան Փէտա ,
Դուն արի իմ կիւման :

Ձեռքըդ առել ես թուվանք ,
Դուշմանի դէմ ես կանգնէ ,
Կոլորակ բարակ մէջքդ
Փամփուշտներով ես ծածկէ ·
Աղբէրջան , ջան Փէտա , ևն.

Մէջքըդ կապել ես խանչար ,
Տօսթին նախշած է խալ խալ ,
Գօտիդ խանչարին մատաղ ,
Կերածդ կաթը հալալ :
Աղբերջան , ջան Փէտա , ևն.

Առիւծի պէս կանգնել ես ,
Պեխերդ ոլորել ես ,
Սև ու թուխ պեխիդ մատաղ ,
Յաղթանակը տարել ես ·
Աղբէրջան , ջան Փէտա , ևն.



ԱՆՈՒՆ

ԱՅՏԵՐՍ վարդ կանուանես միշտ,
Սոխակ մը կ'ըլլաս դուն.
Իսկ աչքերուս համար կ'ըսես
Զոյգ մը աստղեր են անքուն:

Բայց միամիտ երիտասարդ,
Լաւագոյն մը տուր՝
Յարմար տիտղոս մը ինծ համար
Անուն մը որ չի մեռնիր:

Անուն մը որ աստղերու պէս
Արեւէն չի մարի,
Անուն մը պարզ, անուն փոեմ,
Որ հոգւոյս յարմարի:

Երբ ամառ գայ վարդը կ'իյնայ,
Կը մեռնի գալկահար,
Ձմեռ չեկած անոր թփեր
Կը թափին ցրտահար:

Աստղեր մեզմէ շատ հեռի են,
Աշխարհներ իրենց մէջ,
Բայց իմ աչքեր մօտ են քեզի
Կրակ սիրոյ անշէջ:

Բոլոր աստղեր կը մթագնին
Երբ կը ծագի արեգ,
Բայց քո սիրով իմ աչք վառին՝
Ըլլայ մութ կամ ցորեկ:

Մի անուաներ զիս մարգարիտ,
Ոչ գոհար, ոչ ոսկի.
Հայ աղջիկ մ'եմ սիրով լեցուն
Ունիմ սիրտ մ'ու հոգի:

Մի անուաներ շրթունքներս
Մեղր, կեռաս, սալոր,
Զի մեղուներ չաշխատեցան
Հոն մի րոպէ կամ օր։

Հոն տեսնուած չեն պտուղներ,
Ոչ ծառ ու ծառաստան.
Ժիր մշակը չէ մտած հոն,
Խոփն արօր ու գութան։

Բայց քո շրթանց հոն հպումէն
Կրակ մը կայ անվերջ՝
Սիրոյ պայծառ հուր լուսաւոր
Որ կը վառի իմ մէջ։

Զիս անուանէ այսուհետեւ
Քեզ ընկեր անբաժան,
«Սէր» թող ըլլայ իմ անունս,
Սէր՝ և ես քեզ արժան։

Զի երբ կեանքի ձմեռը գայ,
Ձիւն տեղայ մազերուս,
Գեղս երթայ, թառմին այտերս՝
Մթնէ լոյսն աչքերուս։

Նոյն անունով սիրտս նորէն
Պիտի չարժի ուժգին,
Նոյն անունով քեզ կը կանչեմ
Իմ ընկերս անգին։

Կենաց աշնան հովերէն վեր՝
Սառոյցներէ հեռի
Նոյն կրակը սիրոյդ անկեղծ
Յաւիտեան պիտ՝ վառի։

Ուրիշ անուն մի տար ինծի
Ըլլայ ծաղիկ կամ վարդ,
Ես Հայ աղջիկ մ'եմ պարզ անկեղծ,
Ծաղիկն է սիրոյ զարդ։

Հ. ԷԿԻՆԵԱՆ

ԱՌԱՋԱՐԿ

ԱՅՍ ՏՈՂԵՐՆ ալ նուէր քեզի.
Զի կը սիրեմ սրտէ քեզ.
Թող անունս ալ քուկդ ըլլայ,
Բաղդս, հոգիս, սիրտ մը հեզ։

Զայն ընդունիլ կընա՞ս արդեօք,
Կամ թէ թոյլ տալ կը հաճի՞ս,
Որ ասկէ վերջ անուանեմ քեզ
«Իմ Հոյակապ Պաշտելիս»։

Նոյն իսկ րոպէ մ'ես պիտի չ'ըլլամ
Հանգիստ՝ մինչև որ ըսես —
«Նուէրներդ քո պատուական
Պիտ՛ ընդունիմ սիրով ես»։

Ինծի թոյլ տուր խօսիմ ազատ՝
Գիտնան աշխարհ ու մարդիկ,
Թէ ասկէ վերջ ես քեզ գերի,
Դու՝ իմ սէրս մէկհատիկ։

'Ի ինչ անհամբեր պատասխանիդ
Պիտ՛ սպասեմ, շուտ գրէ.
Բառ մը միայն բաւ է ինծի,
Հեգուած երեք հայ գրէ։

Ինծի երեք վարդեր ղրկէ
Նշան անկեղծ ջերմ սիրոյ՝
Մէկին վրայ Այր մը գծէ,
Մէկին Յի մը, վերջնոյն Ո։

* * *

—Սիրուն վարդեր կը ղրկեմ քեզ,
Մէկին մէջը Այր մը կայ.
Մին Ցի մ'ունի, վերջինը՝ Ո,
Իսկ փունջին մէջ սիրտ մը կայ...

Հ. ԷԿԻՆԵԱՆ

Սրինգիս

Ընապատն ու հողը զգեզ կ'ընդունին,
Ունչն ամայութեան և չունչն անհունին
Ու այդ երկուքէն ժառանգած ես դուն
Մենաւոր խոկումն ու չռինդն անանուն:

Անչարժ մեծութեան յաւակին վըրայ
Շարժուն ծըղօտիդ չուքն ամենօրեայ՝
Տաղնապութիւններով աենդի մ'անորակ
Գիծերու գաղանիքն ուրուագրեց արագ:

Այդպէս յըղացար արուեստը գըրչի՝
Որ սեղմ կոպիդ մէջ սաղմնած կը թագչի,
Ու փըշաճիերուն՝ որ փողէդ անցան՝
Պահեցիր քու մէջդ ալորակն ու ձայն:

Եղէգ, հիմա սրինգ եղար խորոտիկ,
Երբ լուռ խոկացող կուրծքի մը մօտիկ
Շուրթերէ յորդող չունչ մը հըրաւառ
Արթընցուց հոգւքերդ ու երգդ ազեատառ:

Բայց թէ պակսի հոգի մ'ունկընդիր...
Դու նորէն, ծրարած՝ սոյլերդ ու թըրթիռ,
Ընարէ անապատ ու հովիտ որ ունին
Ունչն ամայութեան ու չունչն անհունին:

ԵՂԻՇԷ ԵՊ. ԴՈՒՐԵԱՆ

ՕՐՕՐ

ԱՆՈՒՇ քնիկ աչերն առեր,
Անուշ հովերն ալ տարուբեր·
Իմ տատրակիս քունն է եկեր,
Անուշ երգով ըսեմ օրօր։

— Ես քուն չունիմ, անգութ մայրիկ·
Հերիք աչերս կապես, հերի՛ք·
Մէկ պահիկէն կ'ըննեմ պաճիկ,
Ձիս արձակէ մ'ըսեր օրօր։

— Մինչև չիլան մատաղ մանկտիք,
Ծիծ չեն խտար անոնց, գառնի՛կ,
Դուն չլացած, իմ մէկհատիկ,
Ես ծիծ կուտամ, կ'ըսեմ օրօր։

— Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր,
Կը ճըվճըվամ դուն չես լսեր·
Անուշ ձայնիդ ես զմայլեր,
Ես կուլամ, դուն կ'ըսես օրօր։

— Արցունքներդ մարգարտի պէս
Երեսդ խլար ի՞նչ կը թափես·
Մի լար ձագուկ, մի լար, մեղք ես·
Ով կ'ուզես՝ ան ըսէ օրօր։

— Գիրկդ ինծի հանգստարան,
Ծիծերդ բերնիս անուշ ծորան·
Իրիկուան դէմ պառկիմ օրրան,
Աչքըս գոցէ, ըսէ օրօր։

— Քնացնեմ իմ աղաւնիս,
Մեծացնեմ սիրով որդիս.
կարմիր վարդի նման բացուիս,
Շուքըդ նստիմ ըսեմ օրօր։

— Քիչ մը թուլցուր թևերս, ոտքերս,
Ալ թմրեցաւ փափուկ մսերս,
Անուշ մըրափն առնէ աչերս,
Ապա սիրէ, կարդայ օրօր։

— Այդ սուտերովդ չեմ խաբուիր ես.
Կ'ուզես որ ինծի նստեցնես,
Ձի քնանաս, ծիծս ուտես,
Դատարկ տեղը ըսեմ օրօր։

— Քիչ մը ճորճոր, քիչ մը ճարճար,
Քիչ մը տանտան, քիչ մը պարպար,
Քիչ մ'ալ պապան՝ առ հօպպա տար,
Քիչ մ'ալ մէնմէն, եառքը օրօր։

— Այդ քու լեզուդ կ'ուսեմ հիմա
Քու կանգունովդ կտաւ չկայ.
Տանտան, մէնմէն ալ հարարա,
Աչուկ պահպահ, ըսեմ օրօր։

— Սիրտդ քար է, ալ հասկցայ,
Լացի, լացի, ճար չգտայ.
Ալ քնանամ, ճարը չկայ,
Էրկա՛ն, էրկա՛ն ըսէ օրօր։

Բ. Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

Նավահ ընկերիմ

Ա ՆՎԱՀ, ընկերք, քալենք չար-չար,
Հոգուով կռուում ամրանանք.
Ազատութեան վեհ ճանապարհ,
կրծքով հարթենք մեզ համար:

Մեր օրրանը — ազքատութիւն,
Մեզ ծնողը — աչխատանք.
«Եղբայրութիւն, ազատութիւն» —
Այս լինի մեր դաւանանք:

Շղթաներում չատ տանջուեցինք,
Շատ էլ սուված մընացինք.
Սև օրերը ահա անցան,
Մօտ է ժամը հատուցման:

Ժամ է այժմ էլ գործի դիմել,
Դէպի կռիւ պլանալ.
Մեզ քաջերիս չէ էլ վայել
Մութ ուժերից վախենալ:

Եթէ նոքա գոհ են և կուշտ —
Այդ էլ չնորհիւ բանուորին.
Ե՛կ, ինքներս լեցնենք փամփուշտ,
Հրացաններին կապենք սուին:

Հըզօր բազկով մենք յետ մղենք
Լուծը ընկած մեր մէջքին.
Եւ մայր հողի կըրծքին մխենք
Ավ դրօշն աչխատանքին:

ԻՄ ԳՐԻՔԸ

Աշխարհ ինձի բարեկամ էր
Երբ քսակս կար դրամ,
Մեծ ու պզտիկ հարուստ աղքատ
Անկեղծ էին բարեկամ:

Ճամբուս վրայ բիւրաւորներ
Կ'աղջունէին պիս սիրով,
Մեռնիլ անդամ ինձի համար
Ծօսք կուտային երդումով:

Ինձի նման առաքինի
Մէկը չէին դեռ տեսեր,
Աշխարհի մէջ չէին տեսած
Ինձ հաւասար աղգասէր.

Իմ խօսքերս մարդոց համար
Պատգամ էին սրբազան,
Կը հաւատային թէ կեանքի մէջ
Քաջ գիտէի ամէն բան:

Իմ անունս երբոր լսուէր՝
Զայն իմ անթիւ չոլոքորթ
Բարեկամներ կողջունէին
Կեցցէներով մեծադղորդ:

Բայց երբ բաղդը երես դարձուց՝
Հարստութիւն ու դրամ
Կորսնցուցի ամէն առիթ.
Թէև շատ կար բարեկամ:

Կը յուսայի թէ համակիր
Բարեկամներս ինձ կ'ըլլան
Դժբաղդութեան օրերուս մէջ
Թև ու թիկունք օգնական:

Բարեկամաց իմ այդ բանակ
Կարծես բաղդիս դաշնակից
Ինչ երես դարձուցին չուտ
Այդ անկեղծներ սրտակից։

Բայց այդ դժբաղդ օրերու մէջ
Իմ ցաւերուս լոկ մեղմիչ
Դու միացիր ընկեր անկեղծ
Ով չախչախեալ իմ գլխէ։

Դու երգեցիր իմ ցաւերս,
Դու եղար ինձ մխիթար
Երբ իմ սիրտս կալեկոծէր,
Զայն տուիր ինձ յոյս արդար։

Սիրեմ զքեզ, ով գլխէ իմ՝
Հաւատարիմ անվեհեր.
Իմ ցաւերուս դու ցաւակից,
Ուրախութեանց իմ ընկեր։

Լաց ինձի հետ երբ ես կուլամ,
Երբ ծիծաղիմ՝ ժպտէ դու,
Դու իմս եղիր՝ ես քեզ գերի՝
Մէկտեղ ապրինք ես ու դու։

Քեզ իմ կոտրած սրտիս սեղմեմ
Պաչեմ հոգւով համբուրեմ.
Քու միջոցաւ հոգիս խօսի,
Սիրտս ու միտքս քեւ զրեմ

Ես քեզմէ պատ չունիմ երբէք
Սէր մը անկեղծ մաքրիմ.
Կեղծ բարեկամ չողոքորթին
Ալ պիտ՝ չըսեմ «Ընկեր իմ»։

Է. Էկինեան

Պլպուլին

Ա՛ՀԻ՛ ՊԼՊՈՒԼ, մեկտեղ նստենք,
Չէն-ձէնի տանք ու երգենք,
Էս օրուանից դառնանք աղբէր,
Իրար խառնենք մեր ցաւեր:

Անցա՛ւ գարուն, աչուն կուգայ,
Շատ հեռու չէ և ձմեռ,
Լա՛ց, աղբէր ջան, էլ վարդ չկայ,
Թուփը ճնաց կիսամեռ:

Երգե՛նք աղբէր, ցա՛ւը երգենք,
Դու՝ քո մեռած ա՛լ վարդի,
Երգե՛նք աղբէր, ցա՛ւը երգենք,
Ես՝ իմ աւեր վաթանի...

Անցա՛ւ գարուն, արնո՛տ գարուն,
Մօտ է աչուն, ցուրտ ձմեռ,
Ա՛խ, աղբէրս ճնաց անտուն,
Ջոյրս քաղցից կիսամեռ...

Ահի՛ պլպուլ, ցաւը երգենք,
Վարդի, աւեր վաթանի,
Ահի՛, աղբէր, իրար խառնենք
Մռմռուռ ցաւը մեր սրտի...

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ



ԾՈՎ

ԱՐՇԱԼՈՅՍԻ աղօտ լոյս,
Կը թափանձէ խոր ծովյս·
Քաղցր զեփիւռ կը շնչէ,
Համբուրելով կուտայ խոյս։

Հին դարերէ մեզ ժառանգ,
Մնացեր է սուրբ նշան,
Ըստ մեր Փրկչի խոստման,
Երբէք չըլլար աննըշան։

Հարաւային սաստիկ հովն,
Երբ կը փչէ Հարաւէն·
Քո բարկաձայթ ալիքովն,
Վրէժդ կ'առնես եզերքէն։

Երբ կը փրփրին ալիքներդ,
Մի՛ պարծենար դու ծովակ,
Դարերու մեծ յիշատակ,
Ծածկեր ես դուն քո յատակ։

Քաղաք, գիւղեր և արօտ,
Որչափ ալ որ դուն ծածկես,
Դարձեալ հաւատքս է անկեղծ,
Կարելի չէ որ ծածկես։

Աստուած դրաւ այդ քո սահման,
Մի՛ զայրանար դու ծովակ,
Թէ ծածկած ես ցանկալի
Զեր շնորհալիին դղեակ։

ՄԱՆԱՍԷ Ս. ՄԵԼՔՈՆԵԱՆ



Մ. ԻԶՄԻՐԼԵԱՆ

ԻՕՄԻՐԼԵՆՆ ՀԱՅՐԻԿԻՆ

ԲԱՐԵԱՒ եկիր հայր պատուական,
Մեր ամենուս դու սիրական,
Ազգն անձկանօք ձեզ կ'ապասէր,
Հովիւդ քալ և ազգասէր,
կե՛աց դու յաւէտ, կե՛աց անսասան,
Հայրենեաց զոհ, Հայր Սրբազան:

Ազգը համայն ուրախ զուարթ,
Փա՛ռք Բարձրելոյն գոչէ և արդ,
Որ պագեւեց հէգ Հայ ազգին,
Ազատութիւն չնորհ անգին:
կե՛աց դու յաւէտ, Հայր Իզմիրլեան
Ազատութեան վեհ ախոյեան:

Հայ եզբայրներ, գիտնանք յարգել,
Ազատութեան լոյն անարգել,
Որ մեզ տուաւ նոր կեանք, նոր յոյս,
Յառաջնորդել դէպ անչէջ լոյս,
կե՛աց դու յաւէտ, Հայր Իզմիրլեան
Ազատութեան քալ ախոյեան:

Գորովագութ Սրբազան Տէր.
կարօտըդ մեզ կը տաչօրէր,
Այլ արդ հրճուիմք մեք հոգեպէս,
Անձնանուէր հովուիդ 'ի տես:
Մատչիմք առ քեզ Հայր սիրալիր,
Համբուրելով զԱջդ օրհնաձիր:

ԱԲՐԱՀԱՄ ՓՀՆՑ. ԷՊԷԵԱՆ

Երգ Աշոտ Թաթուլի

ԲԱՐՁՐԷՆ եկաւ հրամանը, տուեց Թաթուլի անունը,
Մնաք բարեաւ ազնիւ ընկերք. մօտ է կեանքիս վախճանը,
Կարմրագոյն պատանքս, բանտի պատէն մեխել են,
Դիւապաշտպան անգութ փարմանը գլխիս վրան կախել են:

Թող չթաղէ ինձ օտարն, թողնէ հողի երեսին,
Թող կատարէ անգութ փարման գազանական հանդէսին:
Ես պաշտել եմ գաղափար, ուխտել եմ զոհուիլ ազգիս,
Կախաղանի անգութ սարսափ, չի փոխել իմ սուրբ վճիռս,

Բայց դուք, ազնիւ ընկերներ, ձեր սրտի մէջ գերեզման,
Թող Թաթուլին հանդերձներով, մահս յիշէք մըշտական:
Արև լուսնի կարօտով, երկար տարու տանջանքով.
Էրուած, վառուած իմ կեանքին, վերջ դրեց իմ թշնամին:



Հայաստանի Կռունկ

ԲԱՐՈՎ եկիր սիրուն կռունկ,
Ի՞նչ լուր բերիր հայրենիքէս,
Ծօսիր ինձ հետ ազատօրէն,
կեանքս կը նուիրեմ ես քեզ:

Տեսա՞ր իմ հայրենեաց տունը,
Գեղեցիկ զարդարուած դոյնը,
Նորա սիրուն տանջուած եմ,
Աչքերիցս կթաւ քունը:

Ազա՞տ տեսար մեր լեռները,
Հաղորդեցի՞ր դու իմ սէրը,
Այն լեռներու պաշտպանողը,
Արծուի, կորիւնի նետերը:

Տեսա՞ր մեր փոքրիկ բուրաստան,
Վարդ, մեխակ, շուշաններ շատ կան,
Եդեմական դրախտավայր, —
Նա կոչուում է Մայր-Հայաստան:

— Այնտեղ ունիս եղբայր ու քոյր,
Մինչ ո՞նչ կ'սպասես ի զուր,
Արի առնեմ իմ թևերուն,
Գնանք այնտեղ ուրախացուր:

Վանեցոց Զուռնապը

Բաւ է՛ եղբայր վիզ ճկել,
Ողորմելի երևիլ.
Ժամանակը հասել է,
Հայ դրօշակին ծածանիլ:

Հայոց լերինք թող թնդան,
Հայոց բերանք թո՛ղ գոռան,
Հայաստանի պաշտեցում,
Քաջ հայերու պի «ուռան»:

Արիւն վոթէ թող հայը,
Աղաղակէ միշտ ուռա՛,
Մեր թշնամին այսուհետ,
Սրտի վախէն թող դողայ:

Այսուհետև արտասուք,
Վախկոտները թող հեղուն,
Հայքս արդէն պատրաստ ենք,
Վոթել ազնիւ մեր արիւն:

Ու չենք դադրիլ վոթելու,
Մեր Հայ, ազնիւ արիւնը
Մինչև Ազգը չ՛ստանայ,
Իրա ազատութիւնը:

Ա՛ռ ու վախը մենք մոռցանք,
Այժմ պիտենք մենք ուռա՛,
Հա՛յք, դուշեցէք միշտ ուռա՛,
Թող թշնամին մեր դողայ:

ՔԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԳԵՐԵԶՄԱՆ ՊԱՆԴՈՒԽՏԻՆ

ԳԱՐՆԱՆ առաջ մ'էր մեղրակաթ երբ փչեց
Հովիկն անուշ, սոխակին հետ գիս քշեց
Իլուր թռչնոց գայլայլիկին, երգերու,
ի տես բնութեան ծաղիկներու, վարդերու։

Ծառերը տեսայ ճամբուս վրայ ախրագին՝
Փունջեր առած՝ թարմ ծաղիկներ կ'երթային
Սիրեցեալոց գերեզմանին յ'ուխտ, ի տես.
Այդ խմբերուն ընկերացայ նաև ես։

Մեռեալներու տուրք քաղքին մէջ անխտիր
Դալարներով շրջապատեալ ցան ու ցիր
Գերեզմաններ տեսայ անշուք, փառաւոր,
Հարուստներու, աղքատներու բիւրաւոր։

Հոն այցելուն իւր սիրելւոյն գերեզման
Երթար, և հոն վարդեր դնէր ցիր ու ցան,
Ծունգի կուգար, հոն կը թողուր և մի փունջ,
Արցունք, աղօթք՝ հառաչանքներ և մրմունջ։

Տեսայ և հոն աչաց անտես մի տապան՝
Մի անտերունջ, լքեալ անտէր գերեզման,
Երբ մօտեցայ ես այն չիրմին՝ ակնկոր,
Արձանագիրս այս կարդացի անտուող.

«Հոս կը ննջէ մի խեղճ պանդուխտ
Որ կեանքին մէջ չունեցաւ
Օր մը հանգիստ, րոպէ մ'ուրախ,
Այլ միշտ հոգեր, վիշտ ու ցաւ։
Գուցէ իւր նինջ այս հողի տակ
Կրնայ լինիլ անխռով,
Եթէ անցորդք հաճին դնել
Վարդ մը այս ցամքած չիրմին քով։»

Այլ ոք չ'եկաւ ուշ դնել այդ տողերուն,
Ոչ ոք տուաւ այդ տապանի հողերուն,
Ի յիշատակ փունջ մը ծաղիկ կամ մի վարդ
Հէգ պանդխտի գերեզմանին առ ի զարդ:

Չէ՛, ոք չեկաւ արեւակէզ այդ շիրմին
Կաթիլ մ'արցունք գէթ նուիրել նժդեհին,
Երկնից աչքերն երբեմն դրկեն արտասուք
Պանդուխտներու ցամաք շիրմին սեւասուգ:

Արձանացեալ հոն կանգնեցայ ակնկոր,
Եւ հառաչներ դուրս ժայթքեցին սրտէս խոր,
Պանդուխտներու դի ցամաքեալ իսկ ոսկերք
Ողբացող մ'ալ չունին եղեր, ո՛չ երբէք:

Ես չունէի հետս փունջեր ու ծաղիկ,
Որ այդ անտէր շիրմին տայի՝ մունջ լռիկ.
Իմ արտասուաց կաթիլներն ալ էին քիչ
Թրջել հեգի գերեզմանին կափարիչ:

Սեւ խորհուրդներ գլխս պատեցին, և լացի,
Զի ես ալ հոն պանդուխտ մ'էի դրսեցի:
Մօտենալով մէյ մ'ալ շիրմին այդ անոք,
Վերընթերցայ արձանագիրն անձկանօք.

«Հոս կը ննջէ մի խեղճ պանդուխտ
Որ կեանքին մէջ չ'ունեցաւ», են:

Բայց պահ մը վերջ մանկիկ մ'եկաւ սիրանոյշ,
Վարդ ու ծաղիկ՝ փնջեր բերած, զոր քնքոյշ
Իր ձեռքերով հէգ պանդխտի տապանին
Դրաւ, և հոն ծունգի եկաւ առանձին:

Ծռեց գլուխն իւր հերարձակ, ոսկեգոյն
Մազերն այտից վրայ ինկան վարդագոյն.
Ձակատն առաւ ձեռքերուն մէջ՝ աղօթեց,
Խեղճ նժդեհի հիրմին վրայ արտասուեց:

Արտասուքներ իր աչքերէն սև, դիւթիչ
Թափթփեցան, զայդ թրջեցին կափարիչ
Գերեզմանին որոյ ներքև կար փակեալ
Հօր սիրելոյն իւր ոսկորներ ցամաքեալ:

Տէ՛ր, կոչեցի, հէգ պանդխտին այս դառեր,
Ինդրեմ լսէ այս արտաբուխ աղօթքներ,
Մ՚ընէր անտես աչացն արցունք մանկական
Որ կը թափի գերթ մարգարիտ պատուական:

Ըսի, եթէ ես ալ այսպէս խնդճ, օտար
Մեռնիմ հեռի Հայրենիքէս՝ տար յաշխարհ,
Թող բարեկամք՝ իմ յիշատակ յարգողներ
Իմ ալ հիրմիս վրայ գրեն այս տողեր.

Թէ «հոս ննջէ պանդուխտ մի հայ,
Որ կեանքին մէջ չ՚ուեեցաւ,» ևն:

Հ. Էկինեան



Նուէր առ Հայկուհի

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ երբ արև
Այրարատայ տայ բարև,
Ո՞ այդ սիրուն քաղցր էակ
Իբր արմաւոյ բարունակ․
Դէմքն սպիտակ լուսանման
Վարդից կարմիրով ցօլանան,
Աստեղք աչաց սեւորակ
Աղեղնաձև բոլորակ,
Եւ ոլորուն վարսից ծոպք
Սեաւ մետաքսեայ են խոպոպք․
Իսկ երբ փափկիկ մատերով
Ցամիկ կակաչ ծաղկերով
Պսակ հիւսուի իւր դնէ
Եւ սիւք պճակաւոն իւր համբուրէ․

Ո՞ սա, ծաղկանց Թագուհի,
Կամ սիրո՞յ աստուածուհի,
Ո՛չ․ սա Հայոց Օրիորդ,
Սա գեղեցիկն Հայկուհի․

Ով որ զնէ չէ տեսեր,
Նա Սէրն ինչ է չէ գիտցեր,
Նա Շնորհքն ինչ է չէ ճանչցեր։

Ցամարայնի երբ արեգ
Ի միջօրեայն գայ հրաշէկ,
Ո՞ այդ սիրուն վեհն էակ
Այտքն ի տապոյ կարմրորակ,

Աստեղք աչաց զոյգ են Հրատ,
Սուսեր ընդ մէջ պողովատ.
Տե՛ս, դրօշ իճեան վէտ ի վէտ
Դիմէ ընդ առաջ քաջք գհետ
Հոն՝ ուր փառաց հունձք հասուն
Տաս պարսիկք մի հայկազուն.
Իսկ երբ յաղթող իւր աջով
Բարձրացնէ լի փառքով,
Մատամբ ցուցեալ գյաղթանակ,
Ֆաջաց թագ՝ գափնի պսակ.

Ո՞ սա, Մասեա՞ց Դիցուհի
Կամ ռազմից աստուածուհի,
Ո՛չ. սա Հայոց Օրիորդ,
Սա վեհազունն Հայկուհի.

Ով որ ըզնէ չէ տեսեր,
Նա Սէրն ինչ է չէ գիտցեր,
Նա փառքն ինչ է չէ ճանչցեր:

Ց. ՈՍԿԱՆ



ՎԵՐՋԻՆ ԳԻՐՈՒՆ

ԳԱՐՈՒՆՆ Է ԵԿԵԼ ՆԱԽՇՈՒՆ ԹԵՒԵՐՈՎ,
ՆԱԽՇՈՒՆ ԹԵՒԵՐԸ ՊԷՍ ՊԷՍ ԳՈՅՆԵՐՈՎ,
ԳՈՅՆ ԳՈՅՆ ԾԱՂԻԿՆԵՐ՝ ԿԱՐՄԻՐ, ԱՊԻՏԱԿ,
ՎԱՐԴ, ՄԵԽԱԿ, ՉՈՒՉԱՆ ԱՆՈՒՇ ՀՈՏԵՐՈՎ։

ԵՐԿԻՆՔ ԵՒ ԵՐԿԻՐ ՔԵԶ ՏՈՆԵՆ, ԳԱՐՈՒՆ,
ՁԻ ԵՍ ՔԱՆ ԶԱՄՔՆ ԵՂԱՆԱԿ ՍԻՐՈՒՆ.
ՆԱ ԱՆՁՐԵՒ ՅՕՂՔ ԱՌԱՏ Ի ՎԵՐՔՆ
ԴԱ ՕՐՀՆԵԼ ՏԱՅ ՔԵԶ ԵԿՈՒՈՐ ՀԱՒԵՐՈՒՆ։

ՈՍԿԻ ԱՐԵԼԸ ՓԱՅԼԷ ՔԵԶ ՎԵՐՔՆ,
ԿԵՆԱՏԱՐԵՐ ՀՈՎԸ ՓՉԷ Ի ԼԵՌՆՔՆ.
ԱՀԱ, ԱՂՆԻՒ ԳԱՐՈՒՆ, ԵՂԱՆԱԿ ՍԻՐՈՒՆ,
ԱՐԴԵՕՔ ԴՈՒ Ի՞ՆՉ ԲԱՂՁ ԲԵՐԻՐ ԻՆՁ ՏԷՐՔՆ։

ԳԼԽԱՔԱՐՉ ԵՐԹԱՄ Ի ՊԱՐՏԷԶ ԱՅԳՈՒՆ,
ԱՀԱ ՈՒ ՎԱԽ ՔԱՇԵՄ ԵՍ ԱՆՁ ՕՐՆ Ի ԲՈՒՆ,
ԶՐԿԱՅ ԻՆՁ ՀԱՆԳԻՍՏ, ՑՆԾՈՒԹԻՒՆ ՍՐՏԻՍ,
ԵՍ ՎԱՂ ԵՄ ՄՈՌՑԵԼ՝ ԶԻ՞ՆՉ ԱՆՁՈՐՐ Է ՔՈՒՆ։

ՄԵՌԱԾ, ՊԱՏԱՆՔԱԾ ԳԵՏՆԻՆ ԿԵԱՆՔ ՏՈՒԻՐ
ՏԵՐԵՒԹԱՓ ԾԱՌԻՆ ՍԱՈՒԵՐԱԽԻԱ ԱՐԻՐ,
ՓԵԶ ԹՈՒՉՆՈՑ ԵՐԱՄ ՀԱՆԴԷՍ ԿԱՆՉԵՑԻՆ,
Ի՞ՆՁ ՄԻՆԱԿ ԽԵՂՃԻԱ ԷԱՊԷՍ ՄՈՌԱՑԱՐ։

ԱՌԱՋ ԳՆԱ՛, ԳԱՐՈՒՆ, ԴԷՊ ՀԻՍԻՍԻՆ Ի ԽԱՐ,
ԳՆԱ՛, ԿԱՆԱՆՉՅՈՒՐ ԴՈՒ ԱՆԴ ՈԱՐ ՈՒ ՁՈՐ,
ՈՐՈՆՔ ԱՆՀԱՄԲԵՐ ՔԵԶ ԿԱՆ՝ ՏՈՒՐ ԲԱՐԻ,
Ք'ՈՒՐԱԽ ԳԱԼՍՏԵԱՄԲ ՆՈՅԱ ՂՈՒԱՐՃԱՑՈՒՐ։

ԿՈՒԳԱՍ ԴԱԼ ՏԱՐԻ՝ ԴՈՒ ԻՆՁ ԿԸ ԳԱՆԵՍ
Ո՛Չ Ի ՄԵՐ ԱՅԳԻՆ ԵՒ ՈՉ Ի ՊԱՐՏԷԶ,
ԱՅԼ ԱՆԳԱՐԹ ՔՆՈՎ ՀՈՂԻ ՏԱԿ ՊԱՏԱԿԱԾ,
ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ ՄԻ ՎՐԱՍ ԿԸ ՏԵՍՆԵՍ։

Ռ. Տ. Գ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ԱՐՄԷՆ ՂԱԶԱՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԳԵՐԵԶՄԱՆԻՍ թող արձանին վերայ,
Գրեն յաղթութիւն, թէ կոթող է սա,
Թող տեսնէ Հայաստան, թող կարդան հայ քաջեր,

Տեսնեն զիրենց ընկեր
Նահատակ է պառկեր,
Ծոցն Հայաստանի:

Անձնուէր և քաջ Ղազարեանի պէս,
Ծուցնեն գերեզման քաջ Արմէնի պէս,
Գալարին ալիքներ, թափեն աղի արցունքներ

Տեսնեն զիրենց ընկեր,
Նահատակ է պառկեր,
Ծոցն Հայաստանի:

Ցուսով եմ կնքած աչացս վերջին քուն
Տեսնայ Հայաստան իր ազատութիւն,
Իմ գերեզմանիս քով թող կայնեն ու ձայնեն,

Ահա ազատութիւն,
Ահա փրկութիւն,
Ջաղցր Հայաստանի:

Հանգչին ոսկորներ մէջ իմ տապանին,
Տեսնեմ փրկութիւն Մայր Հայաստանին,
Այն օրը թող կնքեն իմ գերեզմանիս վէմ,

Ազատ դրօշակներով,
Հայ զինուորներով,
Ու քահանաներով:

Ո՞Վ ԷՐ

ԳՐԱՍԵՂԱՆԻՆ առջև՝ անձնուէր
Նստի մտազբաղ ցորեկ ու գիշեր,
Տքնի աշխատի իւր անձ մոռացած,
Յօգուտ իր ազգին Հայոց Հայրենեաց:
Առ ոտս կոխէ խոչընդոտ արգել,
Մութին դէմ կռիւ մղէ անարգել,
Իր հայրենիքի փրկութեան գործին,
Նուէր է բերած գրիչն ու հոգին:
Ո՞վ է այն սակայն անխոնջ կ՚աշխատի,
Առանց մեծ յոյսի ու քաջալերի:
— Հայ գրագէտն է:

Թշնամիք ներքուստ, արտաքուստ նեղեն,
Խոչնդոտք իրեն գերեզման պեղեն.
Բայց ինք անվեհեր՝ չի յուսահատիր
Կռուիլ թշնամւոյն առջև անձանձիր:
Յամենուստ փորձեն խղդել՝ անողոք,
Բռնաւորին դէմ իր արդար բողոք,
Բայց կ՚արհամարհէ նա վտանգն՝ անահ
Բանտ, աքսոր և քաղց, կախաղան թէ մահ.
Ո՞վ է որ այսպէս իրեն կեանքն անգին,
Կուտայ զոհուելու ի նպաստ ազգին:
— Հայ գրագէտն է:

Գրիչ մ՚է միայն զէնք իրեն համար,
Տպագրութեան տառք բանակ անհամար.
Բայց նա կեանք կուտայ գրչին ու տառին՝
Յաղթել թշնամւոյն, օգնել թշուառին:
Իր անպարտելի սուսեր սայրասուր,
Կրակ կը ցայտեն, բոց կայծակ ու հուր.
Սարսեն թշնամի վատեր սինլքոր,
Դաւալիք անխիղճ, մատնիչներ բոլոր:
Բայց ո՞վ է այն որ լեզու տայ գրչին,
Որմէ թշնամիք երկիւղէ խրչտին:
— Հայ խմբագրողն է:

Թէև հարուստ էր՝ բայց չ'ունի այսօր
Տառ ու գրչէ զատ բան մ'արժէքաւոր.
Զոհեց ամէն բան, վտանգեց իր անձ,
Իր առողջութիւն, իր դրամ ու գանձ.
Չ'ունի հանգիստ տեղ մ'ուր դնէ գլուխ,
Ննջէ անվրդով մինչ առտու կանուխ.
Ձիք չայթայթելու միջոց ամէն օր,
Հանապազօրեայ պիտոյք կարևոր:

Ո՞վ է որ իր կեանք ամէն օր մաշէ.
Զրկելով իր անձ հազուստէ, ճաշէ:

— Հայ հեղինակն է:

Թէև ծեր մը չէ, բայց ճերմակ մազեր
Զարդարեն անոր ճակատն անվհեր.
Դառն հոգերու յաւոց տակ ընկճած,
Թէև տարաժամ թուի ծերացած.
Այո՛, ծեր մըն է, ծեր երիտասարդ,
Հազուստներ ոգեղ, խեղճուկ ու անզարդ,
Բայց անոր վիճակ, աւա՛ղ, չատ Հայոց
Դէմքին կը բերէ ժպիտ դժոխոց:

Բայց գիտէ՞ք ով է այդ ծերը տրտում,
Որ դիմադրած է ցաւոց անպատում:

— Հայ աշխատաւորն է:

Պէտք չէ որ մոռնանք թէ կան չատ հայեր
Որք անձնուէրի անունով պինուեր՝
Ջանան համոզել թէ բարիք անգին,
Մատուցած են մեր առաւօտ ազգին.
Եւ թէ ի փոխան պարտին վայելել,
Հայ մարդուն դրամ մսխել անարգել:

Այսպիսիք հայ են անունով սակայն,
Մենք կ'ատենք դանոնք, մեր սէրը միայն

— Հայ անձնուէրն է:

Հ. Էկինեան



ԿՐԻՉՍ ձեռքս առի ըսի թէ ուր եմ,
Ես բոլոր ցաւերս քեզի կու դրեմ,
Չի գիտնաս սիրելիս որ քեզ մոռցեր եմ,
Սիրտս Աստուած ըրած, միշտ քեզ կը յիշեմ:

Քանի տարի կ'անէ խուրպէթ ես գացեր,
Խուրպէթին չէօլերը թիւքեան Ես բացեր,
Ամ տեղացի եարիդ քիւրք ես հագցուցեր,
Ամ տեղացի եարդ չատ ես լացուցեր:

Գիշերը քուն չունիմ պառկիմ քնանամ,
Թղթիկ մը չես դրեր, տարտիկդ իմանամ,
Ես այս ցաւերուն ինտո՞ր դիմանամ,
Կուլամ ողորմած Տէր, ատ ինտո՞ր բան է,
Պարտականն ալ եկեր տընէն կը հանէ:

Անձեղն ալ կը կանչէ իշալլահ խեր է,
Մայրիկ, ելիր ժամ գնա աղօթք ըրէ,
Քեռվանն եկաւ կ'անցնի, քու տղան ո՞ւր է,
Կուլամ ողորմած-Տէր, ատ ինտո՞ր ատրա է:

Ա. Յ. Դ. ՀԱՅՆԱՄԵՆԻՆ

(«Ազատութեան Սիրուն»ի եղանակով)

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ քաջ զինուորներ
Բերդան, Մօսին են գրկեր,
Ազատութեան սիրուն համար
Արիւն թափել են ուխտեր։

Դաշնակցութեան վեհ ծրագիր
Իր մէջ ունի անխաթիր,
Ազատութիւն, արդարութիւն
Պէտք է լինի ամենուն։

Երբորգ Քէօչկի ճգնաւորը
Քուն չունէր գիշերները,
Դաշնակցութեան գաղափարը
Սարսափ ձգած էր սիրտը։

Դաշնակցութիւնը անսասան
Հնչեց փող ազատութեան,
Ազատութիւն, արդարութիւն
Առանց ցեղի խտրութեան։

Ազատութեան չահը վառեց
Մեր հայրենիքի գլխին.
Եղբայրութեան լոյսը ծագեց
Օսմանցիներու սրտին։

ՍԱՐԳԻՍ. Գ. ՍԱՐԱՖԵԱՆ

ՆԱՎՐՈՒԶԻ ԵՐԳԸ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ քաջ խմբերը պերնա դիւդում միացան), [հրացան
Ամբապետն էր քաջ Նավրուզ, բաժանեց քաջից
Երդուեցին դրօշակին ՀԱՀԱՆայով միասին
Շարժուեցաւ խումբը յառաջ, երկու սահմանից անցան:

Արշալոյսը նոր բացւում էր, տեսան թշնամեաց զօրքեր,
Քաջ Նավրուզը հրահանգ տուեց, — յառաջ եկէք տասնեակներ,
Ամէն մէկս հազարի դէմ պիտի կռուենք, եղբայրներ,
Կարկեցի քաջ Դերենիկին ասաց, — բռնէ լաւ դիրքեր:

Դերենիկն ու Արտաշէսը, ինչպէս կորիւն եղբայրներ,
Բաւէն դաշտում մէջ լցրին թշնամու չատ դիակներ,
Քաջ Սերոբը և իւր որդիք, ինչպէս ազնիւ էակներ,
Նահատակուած քաջերն այնտեղ, մեզի ճնաց վրէժներ:

Հայաստանի հողի վերայ զօրշակ ծածանուեցաւ,
Երեսուն ճակատամարտ, հազարաց դէմ կռուեցաւ,
Հայ քաջերի գնդակներից չատ թշնամիք կոտրուեցան,
Ես, մինչազս կը պարծենամ, ունիմ փամփուչտ հրացան:



Երգ առ եզնիկ

ԴԱՏԱՐԱՆԻՆ իմացուցին,
Ժողովրդէս զիս զատեցին,
Տիգրանակերտ ուղարկեցին.
Արի եզնիկ, ա՛յ քաջ եզնիկ:

Մնաք բարեաւ, նորէն կուգամ,
Վատ քրդերին սարսափ կուտամ,
Ու եռանդով քարոզ կուտամ,
Արի եզնիկ, ա՛յ քաջ եզնի՛կ:

Ալէճուլուին տակ կայնեցայ,
Դէպ Հայրենիքս նայեցայ,
Սուրը ձեռքս բանակ մտայ,
Արի եզնիկ, ա՛յ քաջ եզնի՛կ:

Քահանաներ զիս զատեցին,
Սեւ զգեստներս հագուցին,
Ձերմակ ձիս նստեցուցին,
Արի եզնիկ, ա՛յ քաջ եզնիկ:

Օր պիտ՝ ըլլայ վերադառնամ,
Գահիս վրայ հանգստանամ,
Ժողովրդիս հետ միանամ.
Արի եզնիկ, ա՛յ քաջ եզնիկ:



ՔԱՅԼԵՐԳ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

ԴԱՏԷ մեր դատը դաշան ոսոխին դէմ,
Մինչ չը գիջանի քաջ հայերիս դէմ,
Ինչ կարող է վանդակից ազատուած,
Առիւծի յառաջ կանգնել դէմ առ դէմ:

Ազատ լեռների կորիւնի նման,
Կանգնել ենք իրենց դէմ յանդիման,
Ինչքան որ կ՚ուզէ թող վառէ վառօդ,
Չի կարող անել մեզի ոչ մի բան:

Շատ թշնամիներ մեզ դէմ միացան,
Քանիցս անգամ եղան ցիր ու ցան,
Դաշնակցութեան դրօշակի ահից,
Չեն կարող բռնել ոչ սուր ոչ հրացան:

Նա թող սպասէ՝ ձմեռ թէ գարուն,
Ինչ պիտի անէ Սասնոյ սարերուն,
Գնա դէպ հարաւ քո պաշտած վայրը,
Շատ չի բերէ քեզ քո թափած արիւն:

Անդրանիկ ունինք մենք քաջ խմբապետ
Դու լաւ ճանաչիր ով սպարապետ,
Անառիկ ամրոց մեր գլխի վերև,
Կանգնել է մեզ համար Սուրբ Կարապետ:

Կայծակի նման տղերք ձախ ու աջ,
Զարնելով տանենք դրօշակն յառաջ,
Չէնքերիս ձայնից թող լեռներ գոռայ,
Յաղթութիւն է մերն, մերն ուռա՛յ:

Տ. Պ.

ՄԵՆԱԿԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԴՈ՛ՒՆ էլ վեր կեցար դէմ արև ծագին,
Գօտիդ կապեցիր քո մէջքը հպարտ,
Աչքերդ դարձուցիր շողուն աստղերին,
Սուր կը հասնեմ դեռ լոյս չբացուած,
Եւ կեանքի բեռը դրիր քո մէջքին,
Ճամբորդի ցուպը քո ձեռքը առար,
Յոյսն էր շողշողում քո սաթ աչքերին,
Եւ հպարտ հպարտ էն ճամբան ինկար:
Ու սիրտդ յուսոտ,
Հոգիդ մրրկոտ,
Միշտ քայլում էիր,
Քո ճամբան փշոտ:
Քալէ՛ ու քալէ՛
Էն ուղին մօտ է,
Ալ վառ շողերով,
Արև կը ծագէ:

Է՛յ, աղիզ ախպէր, շատ ջահիլ ջիվան,
Կերաւ ու կերաւ էս անկուշտ ճամբան,
Շատերը ինկան էս ճամբու կիսին,
Սրտերը վառուած յոյսը աչքերին:
Հէ՛յ վախ, հէ՛յ վախ, հէ՛յ նամարդի նման
Քեզ էլ կուլ տուեց էս անկուշտ ճամբան,
Հէ՛յ վախ, հէ՛յ աշխարհ, քեզ էլ կուլ տուեց
Էս աղիզ ճամբան՝ անծէր անվախճան:

Թէ սաղ մնացինք, ու հազար բարով,
Կրցանք յաղթանակ բերել մեր երկրին,
Թէ որ մեր երկրէն հազար արիւնով,
Կրցանք դուրս քշել վաւթար դուշմանին,
Կը գամ կը կանչեմ Բասենայ դաշտին,
«Հէյ աղիզ, ախպէր, ե՛լ, մենք յաղթեցինք,
Մենք դուրս քշեցինք անգութ դուշմանին,
Հազար հազարով վրէժ հանեցինք»:

Անձրևից մաշուած քո ոսկորները՝
Կըգամ կը ժողուեմ մէկ երգելով;
Տանեմ կը թաղեմ Անտոքայ սարը՝
Սասուն ապահով հանգչիս անխռով: ԻՇԽԱՆ

ԹԱՂՄԱՆ ՔԱՅԼԵՐԳ

ԴՈՒՔ ԶՈՀ գնացիք վճռական կռւում,
Ժողովրդի անսահման սիրոյն,
Դուք չ'խնայեցիք նրա կեանքի համար
Ոչ սէր, ոչ պատիւ, ոչ ազատութիւն։

Եւ ժողովուրդը կը զարթնի մի օր
Ազատ ժողովուրդ, վեհ և զօրաւոր,
Ազնիւ ընկերներ, դէհ մնաք բարև,
Ձեր վսեմ ուղին դուք պատւով անցաք։

Ձեզ հետևում են մարտիկ խմբեր,
Մեռնելու պատրաստ քաջեր անձնուէր,
Դէ՛հ մնաք բարև՛, դէ՛հ մնաք բարև՛,
Ձեր վսեմ ուղին դուք պատւով անցաք։

Խոնաւ բանտերում հալ ու մաշ եղած,
Ձեզ չարչարում էր անգութ թշնամին,
Տառապում էիք անյոյս, շղթայուած,
Հնազանդ ձեր դահճի քմահաճոյքին։

Իսկ բռնակալը իր պալատներում,
Գինով է վանում սև մտքեր դաժան,
Բայց պատի վրայ խօսքերն ահաւոր,
Գծում է արդէն աջն օրհասական։

Եւ ժողովուրդը կը զարթնի մի օր,
Ազատ ժողովուրդ, վեհ և զօրաւոր,
Ազնիւ ընկերներ, դէհ մնաք բարև,
Ձեր վսեմ ճամբան դուք պատւով անցաք։

ՀՆՁԱԿԵԱՆ ՀՐԱԺԵՇՏԸ

Ե՛կՈՒՐ, կնիկ, պագնեմ քեզի՝
Վերջին անգամ թերևս,
Կ՛երթամ ահեղ դաշտը մարտի—
Հառաստատ ըլլայ թող թևս։
Թըմբուկ չալէք,
Ցառաջ, ընկե՛ր կորիճներ,
Ցառաջ քալէք,
Մեր դէմ կուգան դահիճներ։

Քաղցր մանուկ որ կը ժպտաս
Մօրըդ գրկէն երեսիս,
Պայծառ յուսոյ դու լոյս ինձ տաս,
Մինչ մահն է իմ առաջիս,
Պիտի մեռնիմ,
Իսկ դու մահովս իմ մեծնաս.
Դողով կ՛օրհնեմ՝
Գերեզմանիս աէր ըլլաս։

Տուէք սուրս, կապեմ գօտիս,
Ձէնք ու հրացէն և դաշոյն...
Ինչո՞ւ ոտքիս կը փաթաթիս,
Հառաստարիմ դու իմ չուն։
Զարագուչա՞կ
Ունիս զգացում, ո՛վ անբան։
Մո՛ւս, քո փէշակ—
Տանս ըլլաս պահապան։

Նժոյգս ահա կը խրխնջայ
Եւ պայտերով կը գարնէ...
Ո՞վ ականջիս կը մրմնջայ,
Կարծես հառաչանս կ՛առնէ։

Դո՞ւ ես, իմ հա՛յր,
Դէմքիդ վրայ տխրութիւն...
Ինչո՞ւ համար...
Տուր ինձ քո սուրբ օրհնութիւն:

Որի՞ խեղդուկ հեծկլտանքը
Սրտիս խորն իմ հանգաւ...
Մա՛յր իմ, մա՛յր իմ, քո տանջանքը
Օրօրանէն իմ ծագաւ:
Լա՛, արցունքը
Քո ծերունի հասակին
Ի սփոփանքը
Եւ գոհարն իմ պաակին:

Բայց է՞ր տխրիք, արտով գուարթ
Դէպի մահ չէ, որ կերթամ,
Այլ դէպի փառք, այլ դէպի մարտ,
Ազգիս գինուոր մէկ անդամ:
Ասպատակը
Կուի սիրած դաշտի վրան
Երկնի տակը
Պիտ ունենայ գերեզման...:

Աւ՛աղ, ի՞նչ է... արտասուքը
Իմ աչքս ալ կը թրջէ...
Հերի՛ք... ծնող և կին, սուգը
Զեզ կը թողում... ինձ պէտք չէ...:
Թմբուկ չալէք,
Բառաչ, ընկեր կտրիճներ,
Բառաչ քալենք,
Պիտ՝ յաղթենք, մեր կտրիճներ:

Խենթ

ԵՂԲԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ

ԵՂԲԱՅՐ ենք մենք,
Հայ, Թուրք, Պուլկար, Յոյն, Հրեայ,
Մէկ ամէնուս քաղցր հայրենիք, — Թուրքիա,
Թէև տարբեր լեզուներով կ'երգենք մենք,
Իրարու ձեռք այսօր սիրով կը սեղմենք։

Եղբայր ենք մենք,
Թուրք, Հայ, Հրեայ, Յոյն, Պուլկար,
Հերիք դիրար մենք առեցինք ընդ երկար,
Մէկ հօր որդիք ենք մենք, ծրնած հաւասար,
Լեզու, կրօնք ըզմեզ բաժնել չեն կրնար։

Եղբայր ենք մենք։
Պուլկար, Թուրք, Հայ, Հրեայ, Յոյն,
Նոյն երկնքին ներքև՝ չընչենք օդը նոյն,
Նոյն մահիկը կը ծածանի մեր վերև,
Նոյն աստղիկը մեզ կ'ողջունէ, նոյն արև,

Եղբայր ենք մենք,
Յոյն, Հայ, Հրեայ, Պուլկար, Թուրք,
Թող բորբոքի մեր մէջ ընդ միշտ նոյն սուրբ հուրք,
— «Մէկտեղ ապրիլ, գործել՝ առանց նախանձի,
Միշտ վեր բռնել դրօշն և անունն Օսմանցի։

Եղբայր ենք մենք,
Հրեայ, Պուլկար, Յոյն, Թուրք, Հայ,
Ըզմեզ բաժնել չանացողին վա՛յ...
Մէկ սիրտ, մէկ կամք, չունչ ու մէկ նպատակ,
Եղբայր ենք մենք։

Ա. Կ. ԿԻՒԼԷՆԿԵԱՆ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՈՒՂԱՐԿ

Եղբարք, յառաջ գանանք քաջ,
Դիմաւորենք թշնամին,
Մեր սուինով միշտ աննուաճ,
Մահ տարածենք ամէն դին։

Ֆէտայի ենք լի վրէժով,
Հայրենիքի ջերմ պաշտպան,
Ազատութիւն մեր արիւնով
Պիտի գտնէ Հայաստան։

Յառաջ նետուինք ու քաջ,
կըռուե՛նք, գոռանք ուժգին,
կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛
Ձէնք ու կռիւ։

Դաշնակցական ենք լի վրէժով,
Հայրենիքի ջերմ պաշտպան,
Ազատութիւն մեր արիւնով
Պիտի գտնէ Հայաստան։

Ալ հերիք մնանք թշնամոյն,
կուրծք տանք,
կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛,
Դաշնակցականնե՛ր, Դաշնակցականնե՛ր,
Ի գէն, ելէք խմբուեցէք,,
կռուի միշտ պատրաստ։

Գործը կ'ընէ գաղափարը միշտ յաղթական,
Գործի մարդիկ, կռուի մարդիկ թող ոտքի ելլեն,.
Քաջ կռուենք պիտի յաղթենք անկասկած,
Մեռնինք ալ չենք պարտուած,
Ապագան մերն է միշտ անկասկած։

Իմ Կտակը

Ես կը մեռնիմ, ո՛վ ընկերներ,
Ալ յոյս չի կայ ապրելու.
Մահու քրտինք պատեց ճակատս,
Հոգիս պատրաստ մեկնելու:
Ա՛խ, կուզէի ապրիլ քիչ մ՚ալ՝
Երթալ հասնիլ Հայրենիք,
Հոն գոհ սրտով մեռնիլ, գրկել
Իմ հարց ոսկերք, իմ նախնիք:

Բաղդին սակայն ձեռքերն այսօր
Ձիս կը բաժնեն ի կենաց,
Կեանք՝ որ յանտի մատաղ տիոց
Նուիրեցի Հայրենեաց:
Սո՛ւրբ Հայրենիք, ներէ՛ արդյոք,
Որ քոյդ այսօր կարօտով
Ննջէ ի տար, յօտար աշխարհ,
Հեռու քեզմէ՝ ոչ սրտով:

Մնայ բարեաւ՛ իմ Հայաստան,
Մնայ բարեաւ՛ Հայրենիք,
Ողջամբ մնան հայ զաւակներ,
Ողջամբ մեր տուն, սիրելիք.
Ողջա՛մբ մնաք, սիրուն ընկերք,
Նժդեհ սրտեր, մ՚արտասուէք.
Ես կը մեռնիմ, մի՛ մոռնաք պիս,
Իմ յիշատակս յարգեցէք:

Հայ պանդուխտնե՛ր, ալ կը մեկնիմ
Քաղցր Հայրենեաց կարօտով,
Ոչ հայր, ո՛չ մայր, ո՛չ քոյր, եղբարք
Ներկայ են հոս մահճիս քով.

Իմ այս պատկեր ախուր մահուան
Ձեր մտաց մէջ պահեցէք,
Եւ թողուցէք այս օտար հող,
Ձեր ընտանեաց դնացէք։

Երբ որ մարմինս անշնչանայ,
Ամփոփեցէք զայն ի հող,
Շիրմիս վրայ տապանագիր
Դրէք միայն երկու տող.
Ըսէ՛ք թէ «հոս ննջէ մի հայ,
Որ կարօտով իր երկրին
Իր Հայրենեաց, իր սիրելեաց
Փչեց զշունչ իր յետին»։

Երբ գիս դնէք ցուրտ գերեզման,
Հայաստանէն ափ մը հող
Լցէ՛ք վրաս, գէթ հայրենի
Հոտ մը բուրէ շիրմէս թող.
Հայ եղեմէն կաթ մը ցօղիկ,
Հայ աչխարհէն փունջ մը վարդ
Թող իմ անշուք գերեզմանին
Փառք, պաճուճանք լինին զարդ։

Օր մը գուցէ Հայաստանէն
Սոխակն հայու հոտ առած՝
Թռչի՝ անցնի մեծն Ովկիան,
Գտնէ տապանն իմ սառած.
Տաք արտասուօք թանայ ղերեզն
Իմ ցամաքեալ տապանին,
Գուցէ յայնժամ իմ ոսկորներ
Հողին ներքև կը հանգչին։

Հ. ԷՄԻՆԵԱՆ

ԲԱՆՏԷՆ ԱՊՍՊՐԱՆՔ

ԵՐԲ Հայաստանի խոշոր երակին,
Եփրատին, հուժկու և ողմափրփուր
Խոլ կոհակներէն անցնիս խնդագին,
ինձմէ բարև տուր:

Մեր հայրենիքին արևին, լուսնին,
Դաշտերու համայն, լեռներու ողջո՛յն,
Վճիտ ջուրերու անձկայրեաց ջերմին հաղորդէ
ողջոյն:

Թխպայորդ մութին և սուր ճաճանչին,
Խուլ ամայութեան և անմեղ երգին,
Ցօղին, քթթումին, փթթուն բողբոջին, բարե՛ւ
սրտագին:

Սիրահար ատոնց իղձերս անհնար,
Որոնց համար միշտ կուրծքս տրոփէ,
Այլ զուրկ եմ, բարէ՛, գնա՛ մի՛ մնար, և ոչ
մի բոպէ:

Մթին գիշերը երբոր հանդիպիս
Խաւարը ծակող անհամար աստեղց,
Ըսէ՛ թէ բանտը՝ թոշնած ծաղկի պէս՝ կայ մի
բանաստեղծ:

Առաւօտին երբ որ ծաղկունք կէս կոկոն
Սուրբ սարսուռով մը հեշտիւ դողդողան
Ցօղաթուրմ ոստոց, մարգին վրայ, հոն, քա-
լէ ինձ փոխան:

Վեհ արշալոյսը, Աստուածոց աղջիկ,
Երբ մայր բնութեան բոլորէ նարօտ,
Անթիւ պերճանքին, փառքին հիացիկ, յայտնէ զիմ
կարօտ՛:

Նաչխուն գարունը երբ սիրուն ծիծառ
Հոլանի ճախրէ քու գլխուն վերև,
Կամ սոխակին, որ թռչի ծառէ ծառ, յայտնէ
գիմ բարև:

Ժպտուն մանուկին, լոյսին բարեչող,
Ցողին պաղպաջուն, ծաղկին հեչտաբոյր,
Երգող թռչունին, գեփիւռին չոյող, տուր մէյ-
մէկ համբոյր:

Բնութեան չքնաղ մեծկակ կիթառին
Բիւր լուրերը թէ թրթռան բեկբեկ,
Հոգւոյս աչերն ալ հոն կը թառին, նուագ
սրտաբեկ:

Երբ տարերք խառնուին, ամպերը գոռան,
Կայծակը սուրայ, արեւը չուէ,
Բնութեան ահեղ մեծ քերթուածն է այն, գիտէ ու
հրճուէ:

Ու եթէ օր մը չուշանապզեստ,
Մեծ արդարութիւնը, երկնից փոխարքայ,
Այդ չնաչխարհիկ պարիկը տեսնես, թող ին-
ծի մօտ գայ:

Ըսէ՛, թէ բանաս ահեղ կիկլոպ մ՚է,
Ջեմ կրնար պրծիլ անոր կլափէն,
Թող գայ գիս փրկել այրող ցաւերէն՝ որ գիս կը
լափեն:

Իսկ աչունը՝ երբ մեծ քայքայումին,
Ծոլ խարչափումով ծառերը հսկայ,
Գետին կը ծռէ ամեհի քամին.
Ցիչէ՛, լո՛ւռ, աղբա՛ր, յիշէ՝ թէ բանտ կայ:

ԳԱԳԻԿ ՏԻՎԻՃԵԱՆ

Մշեցոց Նոր Սերունդը

ԵՐԲՈՐ մայրը երկունքով
Աչխարհ բերէ երեխայ,
Հայրը որդուն մի սըրած
Պիտի դաչոյն տայ ընծայ:

Երբ երեխան մեծանայ,
Խաղալիքներու փոխան՝
Հայրը ձեռքը պիտի տայ
Մի մահաբեր հրացան:

Երբոր տըղին վարժասուն
Գայ ժամանակ երթալու,
Նախ սուր խաղցընել և ապա
Պիտ՝ սովրեցնենք կարդալու:

Կարդալ, գրել լաւ բան է...
Բայց որ հասաւ քննութիւն՝
Աչակերտին հարցուցէք, —
Վօթել գիտէ՞ նա արիւն:

Լոկ դուք այսպէս յուսացէք
Փրկել խեղճուկ Հայաստան,
Ազատ, անկախ մարդ երբէք
Լինելու չէ մուրացկան:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ



ՉԸՐՄԱՑՆԱԼԻ ԷՇԸ

Երկու ոտքով էշ մը գիտե՞ս
Կարճ ականջներ ունենայ,
Խոշոր գլուխ, տափակ երես,
Մարդանման ըլլայ նաև:

Տեսած ունի՞ս առանց պոչի՝
Հազուած սգուած ատանակ,
Որ մարդու պէս խօսի, քալէ,
Զարին միայն ընդունակ:

Ես գիտեմ զայն, լաւ կը ճանչնամ,
Բայց անուն տալ չեմ սիրեր.
Դու ալ կրնաս գտնել զանի՝
Այդ մարդէշը անճնաւեր:

Այս մեր էշը յամառ է շատ,
Ցած կը խօսի, չի գոռար,
Բայց խօսածը կ'օրինակէ
Էշի երգէն բառ առ բառ:

Երբ չահ ունի՝ քեզ պաչած նա,
Պատուական մարդ ես արթուն,
Բայց երբ գործը գլուխ հանէ՝
Ինչ փուճ, ագէտ անձ ես դուն:

Հպարտ է շատ, կը կարծէ թէ
Ինք նժոյդ մ'է պատուական,
Երբ կը գռայ՝ կը խորհի թէ
Քաղցրահնչիւն երգ մ'է այն:

Բայէ սև բաղդը հոս է ձգեր
Այս ինքնապաչա հոտած ձուն,
Որ արժան էր մեր խեղճ ազգի
Պետը ըլլալ իշխանցուն:

Երբ կը քալէ դանդաղաքայլ՝
Սիրամարգի պէս հպարտ,
Քեզ չի տեսներ, չի բարևեր
Եղած չեղած ամէն մարդ:

Չի մեծ է ինք, մեծ է ծներ,
Լեցուն գլխով խմաստուն.
Ինչպէ՞ս կրնայ ստորնանալ
Բարև տալ այդ խեղճ մարդուն:

Երբ ինք ծնաւ, կը պատմէ մեզ,
Երկինք երկիր լռեցին.
Հրեշտակներ պար բռնելով
Փառք ի բարձունս երգեցին:

Բայց ոչխարաց երամ մը դեռ
Կը հաւատայ այս պատմութեան,
Կը հեռւի, կ'ըզմայլի դեռ
Անոր ցանցառ հմտութեան,

Բայց ինք էշ մ'է, երդում կ'ընեմ,
Ինչքով մտքով էշ է այն,
Բայց թէ կուզես պաչել զանի՝
Քու գիտնալիք բանն է այն:

* * *

Սակայն երբ քո կամաւ գոցած
Աչքերդ բանաս սրատես,
Պիտի տեսնաս դուն ալ անոր
Պաշն ու ականջ, թուխ երես։

Հ․ ԷԿԻՆԵԱՆ



ԴԱՐԲՆԻ ԵՐԳ

ԶԱ՛ՐԿ, զա՛րկ, ընկեր մեր բաղդ կռենք,
Թող դողդողայ մեծ սալը·
Շանթի տարափ մեր չուրջ փռենք,
Լուսաւորուի աշխարհը։

Մենք բնութեան առողջ զաւակ
Քրտինք հեղունք, սև արիւն,
Ջղուտ բազկով ճարենք վաստակ,
Մոհտաճ չըլինինք թշնամուն։

Զա՛րկ, զա՛րկ, ընկեր, էլ կանք չառնենք,
Մօտ է ահա լաւ օրը·
Այնպէ՛ս թափով սալին զարնենք,
Որ դողդողայ աշխարհը․․․։

ԿՈՉ

ԶԱՐԹԵԱ՛Ի սուսեր ի պատենի
Հապա իմ քաջք ի պայքար,
Ի պաշտպանել զփառս հայրենի
Կանգնեացին լանջք մեր պատուար:
Գոռ չեփորից բոմբիւնք ահեղ,
Շաչիւն գինուց, ձիուց տրոփիւն
Գուժ թօթափէր Սասանեանց,
Եւ քայլէր վհանեանց:

Ամբարձ Մասիք զգլուխն ի վեր,
Ի տես զորդիս ի գուպար,
Լուաւ Երասխ յալիսն երեր
Եւ մռնչեաց հակայաբար:
Գոռ չեփորից, ևն.

Ողջոյն բնդքեզ, Մայր Հայաստան,
Ահա որդիքդ յասպարէզ
Առաքինեաց Տէրն օգնական
Սրբեաց արտօսրդ ալէկէզ:
Գոռ չեփորից, ևն.

Ողբ դառնակիցք գացին դադար,
Ի յաչխարհիս մեր սիրուն,
Մուսայն Հայոց ի կայթ ի պար
Հիւսեացէ երգ մեր դրօշուն:
Գոռ չեփորից, ևն.

Գետնաթաւալ եկեղեցի,
Եւ հոյակապ պալատունք
Մատնեալ յաւէր ի ձէն Պարսկի
Ցոան կացցեն հայ գինուք:
Գոռ չեփորից, ևն.

ՍՕՐԿՕԻՃՃԵԱՆ

Հարսանեկան

ԵՐԳ ԱՌ ՓԵՍԱՑՆ

ԹԱԳՒՈՐԻՆ մայրը դուն դուրս եկու,
Քու թագուոր որդիդ է եկեր.
Թէք գնացեր՝ ջուխտ է եկեր,
Քեզի կաքվա ձագ է բերեր:

Թագուոր դովեմ պոյիկդ ի վար,
Առաջ ես քու մազերդ ասեմ,
Որ արմայի թել նմանի,
Անկէց ես քու երեսդ ըսեմ,
Որ լուսնակի կալ նմանի,
Անկէց ես քու պոյիկդ ըսեմ,
Որ սէլվէի ծառ նմանի:

Հա՛յ իմ աննման աղուոր,
Չի կայ քեզի նման աղուոր:
Բարի լուս, աղուոր, բարի լուս,
Բարի լուսուն բարին վրադ,
Առաւօտուն դէմն ի արև,
Թագուորը տայ մօրը բարև:

Հա՛յ իմ աննման աղուոր,
Չի կայ քեզի նման աղուոր,
Աղուոր, քեզ ո՞ր մարն է բերեր,
Այդ Թուխ աչեր մարդը է բերեր,
Մարդը է բերեր մեզի համար,
Մինակ ենք եկեր քեզի համար:

Հա՛յ իմ աննման աղուոր,
Չի կայ քեզի նման աղուոր,
Առաւօտուն կելլես պաղ պաղ հովերուն,
Սոխակ անուշ կու կանչէ իր վարդի սիրուն,
Պաչիկ մը առմ երեսիդ, աչերուդ քովերուն,
Ի՞նչ կը պակսի անյառակ ծովերուն:
Կուգաս կ'անցնիս չես ի տար բարև,
Ես ալ չըսի բարի եկար դուն բարի արև,
Ջընց լուանկան լուսով, քընց արևուն:

ԵՐԳ ԱՌ ՀԱՐՍԻՆ

Ամէն առաւօտուն դէմդ բուանէի,
Վարդի ծառ ըլլայի, դէմդ բացուէի,
Ուր գայիր անցնէիր՝ փէչիդ քսուէի,
Եկուր, աղուոր աղջիկ, եար եղար ինձի,
Եախուէթ գիւմրիւթ՝ անգին քար եղար ինձի:

Առաւօտուն կելլես արև կու ցաթէ,
Բերանդ որ կու բանաս մեղր կու կաթէ:
Եկուր, նատէ, անուշ անուշ խորաթէ,
Եկուր, աղուոր աղջիկ, եար եղար ինձի,
Եախուէթ գիւմրուէթ անգին քար եղար ինձի:



ՄԻ ՎՀԱՏԻՐ

ԹՎ ԳՐՊԱՆԴ դրամ չունիմ,
Հանդերձներդ ալ պատռտած,
Ցրտին՝ տաքին դէմ անպաշտպան,
Անբարեկամ մոռցուած։

Մի վհատիր, դու մարդ ծնար,
Արժան եղիր քո անուան.
Նեղութիւնը իր վերջն ունի·
Ցաւիտեանս չերթար ան։

Թէ մահիճդ հողն է խոնաւ,
Վերմակդ՝ ամպեր երկնընթաց,
Քարայր է քեզ պատսպարան,
Հողն անկողին, քարը՝ բարձ.

Մի վհատիր, քալի մը պէս
Տոկա, փորձէ, դու մարդ ես.
Վստահ կերպով վճռէ, կրկնէ
«Պիտի կանգնիմ օր մը ես»։

Նեղութիւնը վերջ մը ունի, հոս
Երեւոյթ մ'է ամէն բան.
Ինչ ալ ըլլայ ներկայ դիրքդ
Մինչ յաւիտեան չերթար ան։

Մի վհատիր, տրտում մ'ըլլար,
Ցուսա, գործէ ծաղրերես.
Վստահութեամբ ըսէ «Օր մը
Պիտի կանգնիմ ոտքի ես»։

Թէ օրն ի բուն դու չարչարուիս,
Ուրիշները քո քրտանց
Արդիւնք խլեն, ապրին փարթամ,
Դիզեն դրամ, առատ գանձ։

Մի վհատիր, գործէ, յուսա.
Դու Աստուծոյ չունչն ունիս.
Վատահ ըսէ «Օր մը անշուշտ
Պիտ՝ չի գրկեն մարդիկ գիս»։

Եթէ անգործ դառնէ ի դուռ
Աչխատութեան ի խնդիր
Մինչ երեկոյ չրջիս յոգնած,
Վատտակաբեկ ի նանիր։

Տոկա, ջանա վատահ եղիր
Թէ անիւը մեր բաղդին
Օր մը չուրջդ սիրէ պիտի
Վարդեր ատգին ու անդին։

Թէ քեզ կոչեն դատարկապորտ,
Ծաղրեն վիճակդ անյայտող,
Եւ կամ մարդիկ քեզ նկատեն
Ծոյլ, անճարակ անկարող։

Մի վհատիր, յուսա, գործէ,
Դու Աստուծոյ դէմք ունիս.
Վատահ կերպով ըսէ՝ «Օր մը
Մարդիկ պիտի յարգեն գիս»։

Թէ սիրածդ քեզ ուրանայ՝
Մարդիկ զքեզ ծաղր ընեն,
Թէ սէրն անոր քեզ տարապիր
Վտարէ իսկ քու տնէն։

Մի վհատիր, համբերէ միշտ,
Անկեղծ սէրը մահ չունի,
Ցուսա, ըսէ «Օր մ՝անշուշտ
Պիտի չահիմ ես զանի»։

Երբ կը տեսնես թուրք չղթան
Կը կաչկանդէ քեզ գերի,
Իրաւունքէդ կը գրկուիս
Տառապանօք անթերի։

Մի՛ վհատիր Հայ քաջաց հետ
Ձէնք առ, կռուէ, դու Հայ ես,
Գերութիւնն ալ իր վերջն ունի
Ազգի մ՚համար Հայուն պէս։

Եւ երբ տեսնես հայրենիքդ
Թուրքին գերի, չունի ձէնք,
Հայաստանը՝ արեան աշխարհ,
Աւեր ամէն տուն ու շէնք։

Մի՛, բարեկամ, մի վհատիր.
կեանքդ ուխտէ մարդու պէս,
Երդմամբ ըսէ «Հայաստանս
Պիտի փրկեմ օր մը ես»։

Հ. ԷՔԻՆԵԱՆ

ԹԷ ՁԻՍ տանին օտար օտար
Թափեն առաջս ազնիւ գոհար,
Եւ պատրաստեն ինձ կեանք վըտեմ,
Ես լոկ ծոցիկդ հանդչիլ կուզեմ,
Հա՛յր իմ.

Թէ ձայն քաղցրիկ զարնէ սըրտիս,
Ըսէ. «Թո՛ղ հայրըդ, սիրէ զիս,
Հրեշտակ մըն եմ վերէն ինձած».
Ես զայս մերժեմ բացէ ի բաց՝
Հա՛յր իմ։

Ես վանդակիդ փոքրիկ թըռչուն,
Կ՚երգեմ անուշդ քաղցրահնչիւն,
Մաղթեմ օրեր շատ երջանիկ,
Ցանկամ քեզի ամէն բարիք
Հա՛յր իմ։

Թո՛ղ ընդ երկար կեանացդ արև
Փայլի պայծառ մեր տան վերև,
Վայելես կեանք ուրախ, անվիշտ,
Զուկիդ մաղթանքն այս է ընդ միշտ՝
Հա՛յր իմ։

ԵՍ ԵՔ ԴՈՒՆ

Թէ ՁՄՐԱՆ օրեր երկինքը ամպոտ՝
Անձրևը անոր աչքերէն հոսի,
Լալկան տիեզերք սև մելամաղձոտ՝
Տխրութիւն սիրէ, տրտմութիւն խօսի.
Բայց ուրախ եմ ես, զուարթ և արթուն,
Քանի որ կապրինք մէկտեղ ես ու դուն։

Թէ աղքատ ըլլամ՝ սեղանս համեստ,
Չի կրնամ ապրիլ չքեղ ու փարթամ.
Օրապահիկ մը չհնելու համար
Հոգ չէ թէ ուրեր սահպուհի երթամ.
Սրճիթս ինծի պալատ կ'ըլլայ տուն,
Երբոր հոն մէկտեղ կապրինք ես ու դուն։

Եթէ այս կեանքի ճամբան փշերով
Ծածկուած ըլլայ՝ ճանապարհ անել.
Թէ մարդիկ կարծեն այս ճամբէն ոչ ոք
Կարող է անցնիլ զայն գլուխ հանել.
Ես անկէ կանցնիմ ուրախ և խնդուն
Երբ կընկերանանք մէկտեղ ես ու դուն։

Եթէ փոթորիկ գայ ու խորտակէ
Մեր կեանքի պարտէզ՝ ծառ, ծաղիկ, բոյսեր,
Անյաջողութիւնք թէ դան ջախջախեն
Մեր ակնկալած ապագայ յոյսեր.
Բնաւ չի վազեր արցունք իմ աչքէս,
Չի պիտի կուլինք մէկտեղ դուն ու ես։

Թէ բաղդը խոժոռ երես դարձնէ՝
Կուլի մնգի դէմ իր բոլոր ուժով,
Սրգելքներ հանէ մեր ճամբուն վրայ՝
Մեզ չախչախելու մի միայն յոյսով.
Բաղդին դէմ կուլի կը մղեմ ընդ քեզ,
Անոր կը յաղթենք անշուշտ դուն ու ես։

Թէ բաղդին նաւը ալեաց կատաղի
Յաղալիք դառնայ՝ ծովերը դուման.
Թէ ծուխ ծուխ առապատաք պատուին,
Ճամբորդք արտասուեն աղօթք իրերան.
Ես չեմ երկնչիր ոչ տխուր երես,
Քանի որ մէկտեղ կ՚ըլլանք դուն ու ես:

Երբ օր մը մահուան անկողին մտնեմ
Ցուրտ քրտինք վազէ յոգնաթոր ճակտէս,
Երբ մահու հրեշտակ անարիս վերև
Կեցած՝ պիս բաժնել ուզէ այս կեանքէս,
Ես ուրախ սրտով ննջեմ վերջին քուն
Երբ գլխուս վերև անքուն հակես դուն:

Հ. Էկինեան

ԵՂԱՆԱԿ

Թէ ՏԱՅԻՆ ԻՆԾԻ
Թագ, աղամանդ, դաւազան,
Քեզ զայն ձօնէի՝
Թագուհեաց դշխոյ, Հայաստան:

Թէ տային ինծի
Միրանի չողչող պատմուճան,
Քա յուս ձգէի՝
Ո՛վ իմ թշուառ Հայաստան.

Թէ տային ինծի
Հուր, բոց իմ աւուրց պարմանեան,
Քեզ պարգևէի՝
Ջաւիւն իմ և խանդ, Հայաստան:

Թէ տային ինձի
Դարուց հոյլ ի հոյլ չըրջան,
Սիրով քեզ տայի՝
Իմ կեանքն ու հոգին, Հայաստան:

Թէ տային ինձի
Սիրտ ու սէր կուսի չուշան,
Ես քեզ ընտրէի
Սրտիս միակ սէր, Հայաստան:

Թէ տային ինձի
Պատկ յիմ ճակատ մարգարտեան,
Զաչքիդ ընտրէի՝
Արտասուաց մի չիթ, Հայաստան:

Թէ տային ինձի
Գոռ ազատութիւն անսահման,
Ես վեր ընտրէի՝
Քո վեհ գերութիւն, Հայաստան,

Թէ տային ինձի
Հայրենիք ամբողջ Եւրոպան,
Ես քեզ խնդրէի
Բոլոր ցաւերով, Հայաստան:

Թէ տային ինձի՝
Սիրտ իմ ընտրել օթևան,
Ձաւե՛րդ ասէի՝
Ինձ արքայութիւն, Հայաստան:

Թէ տային ինձի
Հրեշտակի քնար բոցեղեան,
Ես քեզ կ՚երգէի՝
Բոլոր իմ չընչով, Հայաստան:

Ա. ԵՊ. ՆԱՐ-ՊԷՅ

ԹԻԿՈՒՆՔԴ ԼԱՅՆ

ԹԻԿՈՒՆՔԴ լայն, թեւերդ ուժգին,
Կռնակդ ամուր պինդ պողպատ,
Սիրել գիտես, կռուիլ չիտես,
Դու անզգայ երիտասարդ։

Քոյրդ տանում են քիւրդերը,
Եղբօրդ արիւնն են ծծում,
Դու անտարբեր սառն արիւնով,
Հանգստութիւն ես փնտռում։

Ամօթ քեզի, հազար ամօթ,
Որ զէնք չունիս քո ձեռքին,
Քո եղբօրը կռուի դաշտում,
Տապալում է թշնամին։

Ձեռքդ տուր ինձ երդուենք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի,
Գնանք, կռուինք առիւծաբար,
Ի սէր ճնշուած Հայ ազգի։

ՎԻՇՏ ԱՌ ՀԱՅՐԵՆԻՔ

ԹՇՈՒ՛ԱՌ հայրենիք, ո՛հ դու լաս հերիք,
Հոսես արտասուք քո հեզիկ հեզիկ,
Ո՛հ, թո՛ղ հանդարտին հառաչանքդ ու լաց,
Թո՛ղ լռէ տխուր Մուսայդ ողբասաց։

Քօղըդ առ մէկդի, թո՛ղ աչկունքդ ժպտին,
Դէմ մայրակարօտ քո Հայ պանդխտին,
Որ ձեռն ի ճակատ՝ մէջ օտար վայրաց
Կուլայ քո վսեմ փառքըդ անմոռաց։

Հայրենիք, քո սիրտըդ բացաւ ծաղիկ,
Քո չուրջըդ ներկեց այգդ գեղեցիկ,
Է՛լ, է՛լ, արջնաթոյր այդ ամպոց տակէն,
Որ վեց դարէ վեր գլուխըդ ծածկեն,

Է՛լ, է՛լ, ձեռքըդ տուր, որդի քո եմ ես,
Տո՛ւր որ համբուրեմ սիրով սրտակէզ,
Եւ քեզ սիրա մ՛ունիմ տամ զանի յօժար,
Զօր Հայութիւնը ինձ տուաւ քեզ համար:

Ց. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

ՍՈՒՐ

Թող պլպուլ չ'երգէ Մշոյ դաշտերում,
Թո՛ղ երգ չհնչէ Սասնոյ լեռներում,
Թո՛ղ ժպիտ չգոյ Հայերուս դէմքին,
Թող թախիծ տիրէ Հայերուս սրտին:

Հայի ձեռքեր արիւնով ներկուած,
Հայոց սրտեր վշտով է պատած
Ալ ինչո՞ւ ծաղկի քաղցրահոտ շուշան
Հայոց եդեմի դաշտում աննման:

Քանի՛ Հայ աղջիկ չէ զարդարելու,
Ծաղկով իր կուրծքը չքեղ պճնելու
Թող երգ չ'հնչէ Մշոյ դաշտերում,
Թո՛ղ պլպուլ չ'երգէ Սասնոյ լեռներում:



ԵՐԳ ՇՂԹԱՅԱԿԱՊ ՀԱՅՈՑ

Ի ՀՈՒԲ ԵՆ Ի ՀՈՒԲ, ԲՌՆԱՒՈՐ,
Ըսպառնալիք քո ամենայն.
Ոչ, քո չղթայք չեն զօրաւոր
Ընկճել զոգիս մեր հայկական:

Ըզմարմին, միայն զայս մարմին
Կարես գերել քեզ ի նախատ.
Սակայն ոգիք մեր երկնային՝
Սիրտք հայկազանց են միշտ ազա՛տ:

Ազա՛տ են, ազատ մեր լեզուք,
Մաղթել ըզչանթս Արդարութեան
Ի գլուխ ձեր, ո՛վ արիւնարբուք՝
Որ աւերէք ըզՀայաստան:

Ի դժո՛խս անկցին թշնամիք,
Անհետասցին մինչ յաւիտեան,
կեցցէ արքայ և հայրենիք,
կեցցէ անմահ մերս Հայաստան: ՆԱՐ-ՊԷՑ

ՀԱՅ ԵՄ ԵՍ

ՀԱՅ ԵՄ ԵՍ, մեռնիլ գիտցող հայ եմ ես.
Մեռնելով ապրիլ գիտցող հայ եմ ես.
Ո՛հ, հայ եմ ես, նախահօրս Հայկին պէս.
Ազատ ապրող, ազատ մեռնող հայ եմ ես:

Հայու վէրս իմ կրծքէն
Հանեն բոցեր սրտակէզ.
Հայ ազգութեան նուիրուած՝
Մահ փնտռող զոհն եմ ես:

Հայ եմ ես, սարսափեցէք իմ դէմքէս,
Վատ թշնամուն մահ կը թռչի իմ գէնքէս,
Ինչ մ'առաջուայ ատրուկը կամ գերին չեմ ես,
Քաջ Արամայ հատուած թոռը, հայ եմ ես:
Հայու վէրս և այլն:

ԻՄ ԱՆՈՒՇԻԿ ՄԱՅՐԻԿՍ

Իմ Անուշիկ մայրիկս,
Կանչէ Թող գայ քոյրիկս,
Տամ իմ վերջին համբոյրս,
կանչում է հայրենիքս։
Ուխտել ենք կռուելու, մեռնելու, յաղթելու,
Ցուսով դէմ դնել քաջի պէս թշնամոյն,
Փրկել հայրենիք։

Պարզուել է սուրբ դրօշակ,
Գնանք մանենք նրա տակ,
Սերոբ փոչին նամանենք,
Լինենք աղնիւ նահատակ։ Ուխտել ենք, ևն.

Այստեղ թիւրքն է մեզ մորթում,
Այնտեղ ռուսն է մեզ տանջում,
Համարում են մեզ մրջիւն,
Մեր ունեցածը ձեռքից խլում։ Ուխտել, ևն.

ՀԱՅ ՋԻՆՈՒՈՐՆԵՐԸ

Ինչից գալով հայ զինուորները քաջ,
Արեան դաշտից եկած և պարտաճանաչ,
Հին հին վրէժներ առնել էր նոցա պահանջ,
Քաջի պէս վազեցին թշնամու առաջ։

Մօտ թուով տասն ու չորս և իրանք անվախ,
Ղեկավար Տիգրանն էր, գործում էր անկախ,
Անմահ Մուշեղ հերոս, Շապուհ և Մելիք,
Համազասպ, Մարտիրոս կանգնած էին դիրք։

Թաթօն ընտրեց Մօսոյ, Շապուհ և Միխիկ,
Անուանեցան սրանք խմբեր թուցիկ,
Խարբուխ թաղի դիրքերումը միչտ անքուն
Այրեցին, ջարդեցին անգութ Մօլի տուն։

Վրաստանի չքեղ Թիֆլիս քաղաքը,
Ջէր հանդչում կանխաւ իրա որդոցը,
Երբ նրանք Մուղնու թաղում կանգնեցան,
Այն ժամանակ հայերն ուրախացան։

Թէպէտ քաջ Մուշեղին նրանք զոհ տուին,
Անդո թ թշնամեացը չուտով յաղթեցին,
Կը լինի ազատութեան գրաւական,
Նրանք պատիւ բերին հայ Դաշնակցութեան։

ՉԻԼԼՕ ԿԱԽԱՂԱՆԻ ՀԱՆԴԻՊ

ԿԱԽԱՂԱՆԸ պատրաստուեցաւ, ելէք երթանք. ընկերներ
Թող Համիտը յագեցնէ իր անօրէն չար կիրքեր,
Թող նկատէ բռնութիւնը՝ հայը մահէն չի վախնար,
Չի դադարիր պատերազմիլ իր ազատութեան համար:
Օ՜ն, Յովհաննէս և Մկրտիչ, կ՚առաջնորդեմ ես ձեզի,
Մի՛ վհատիք, մի՛ վշտանաք, հետեւեցէք դուք ինձի.
Մնաք բարեաւ, ո՜վ ընկերներ, մնաք բարեաւ, ո՜վ հայեր,
Մի մոռնաք ձեր եղբայրներ, անգթութեան ո՜հ զոհեր,
Հնչակեան վեհ կուսակցութիւն. վրէժխնդիր դու եղիր,
Մեր հայրերուն, մեր մայրերուն մխիթարիչ դո՛ւ եղիր:

ՍՈՒՐԷՍ ԱՐԻՒՆ ԿԸ ԿԱԹԻ

ԿԵԱՆՔԻ շիթեր, լուսածրար խանդ ու աւիւն,
Հոգւոյս կաթին
Մէջ կը կաթին՝
Եթէ ծորի սուրիս ծայրէն երբէք արիւն:

Մահուան հողէն պիտի բայուի դեղին փոշին,
Եւ դամբարան՝
Սրտիս վըրան՝
Եթէ ցամքին ճապաղիքներն սուրիս ծայրին:

Պիտի ծաղկի ոսկի բաժակն անմահութեան,
Շիթեր ո՜հ սին
Եթէ հոսին
Սուրիս ծայրէն կաթիլ կաթիլ միշտ յաւիտեան:

Մ. ԲՐՈՒՏԵԱՆ

ԸՏՆԱՅԻ ԿՈՏՐԱԾՔ

ԿՈՏՐԱԾՆ անգութ, հայերը թող լան,
Անապատ դարձաւ չքեղ Ատանան,
Կրակը, սուրը ու անխիղճ թալան,
Ռուբէնի տունը, ա՛խ, ըրաւ վերան։

Ալ մի՛ տար լոյսդ, պայծառ արեգակ,
Լուսին, չուրջ կապէ դուն սուգի մանեակ,
Անցաւ մեր երկրէն հարաւի խորշակ,
Զորցուց, թոռմեցուց ծառ ծաղիկ համակ։

Բոպէ մը չանցաւ ու հայոց խեղճեր
Ինկան սուրին տակ խուժանին ահեղ,
Ժամեր ու գպրոց բոցի մէջ կորան,
Բիւրաւոր հայեր անխնայ մեռան։

Անգգայ՝ անօրէն վատը որբ թողուց
Զաւակը մօրմէն, հարսը իր փեսէն,
Ճէվատն անգգամ, Ատիլը գծուծ,
Կերան, կչտացան հայու արիւնէն։

Պարապ է, աւա՛ղ, հարուստ Ատանան,
Մոխիր է դարձեր ամբողջ Կիլիկիան,
Միայն ապրեցաւ Հաճընի սիրոյն,
Ինչո՞ւ չզարժիր ապառաժ Զէյթուն։

Երեք օր գիշեր կրակը մէջէն,
Թշնամւոյն սուրը, գնդակը դրսէն,
Ջնջեցին հայը երկրին երեսէն,
Արիւն կը վազէ մեր ջինջ դեռերէն։

Ալ բաւ է որքան վատերուն լուծը
Կրեցինք, թողուանք մեր լայն ու կոծը,
Օտարին սուրը ալ չէ ապահով,
Հայ հողերու վրայ մեռնինք մենք փառքով։

Նորածիլ Տերեւ

ՀԱԶԻՒ լուսոյ դողդոջ փայլ
Պատռտեց գամպոց սեւ մռայլ,
Մեր դաչտերուն հազիւ ձիւն
Գարձոյց գիւրեանց սեւութիւն.
Եւ դուք վակժոյժ ի փթիթ
Գայք մեզ ժպիտ ի քըթիթ.

Նախածի՛լ տերեւք,
Բարե՛ք ձեզ, բարե՛ւք:

Դեռ մարգերուն մեր ցրտիկ
Զեկաւ այցող ծիծառնիկ,
Դեռ սոխակին հեչտավանդ
Չեռուն ծործորք արձագանք,
Եւ դուք փութայք սիրալիր
Ծընդի՛ց հրեշտակք ի յերկիր.

Նորածիլ տերեւք,
Բարե՛ւք ձեզ, բարե՛ւք:

Կանաչ երանգ ձեր փափկիկ,
Չև և իրան ձեր մանրիկ,
Ո՛հ, աչերուն մեր ծարաւ
Ինչպէս անուշ փայլեցաւ.
Տխուր ոգիք ձեր տեսքին
Կը զուարթանան կ'ըսփոփին.

Նորաբո՛յս տերեւք:
Բարե՛ւք ձեզ, բարե՛ւք:

Եկէ՛ք, եկէ՛ք մեր հովտաց
Շողալ ի ծոց մթագնեաց.
Եկէք ծառոյ մեր ի գագ
Զբգել ի գլուխ կանաչ քօղ.
Նոր չըպարել կերպարան.

Առաջին տերեւք
Բարե՛ւք ձեզ, բարե՛ւք:

Եկէք գարնան նորաբոյս
Ծագել վարդից արշալոյս:
Եկէ՛ք հրաւէր տալ առ սիք
Ծաղալ ընդ ձեր խոպոպիք.
Ծաղկանցն ասէք քաղցրահոտ՝
Գա՛ն ա՛հ, կարօ՛տ եմք կարօտ.

Նախածիլ տերեւք,
Բարե՛ւք ձեզ, բարե՛ւք:

Եկէ՛ք, եկէք, ա՛հ տերեւք.
Եկէ՛ք յուսոյ յանուշ թեւք
Մեր սիրելեաց տապանին՝
Ծածկել զհող տխրագին.
Ա՛հ այն ոսկերց անձկալի
Եղէք պատկ ցօղալի,

Նորածի՛լ տերեւք,
Ո՛վ հրեշտակա՛ց թեւք:



ՀԱՄԵՍՏ ԱՂՋԻԿ

Համեստ աղջիկ, ինձ մի տանջեր չարաչար,
Չարաչար, սիրուն ջան, չարաչար:
Հազիս հազուդդ մատաղ լինի ամէն ժամ,
Ամէն ժամ, սիրուն ջան, ամէն ժամ:
Ես Հայ դու Հայ, մեր մէջ չկայ խտրութիւն,
Խտրութիւն, սիրուն ջան, խտրութիւն:
Նազլո՛ւ, նազլու, ինձ մի քցեր սարէ սար,
Սարէ սար, սիրուն ջան, սարէ սար:
Մատաղ կեանքումս ինձ մի դներ գերեզման,
Գերեզման, սիրուն ջան, գերեզման:

ԻՄ ՆԱԶԵԼԻ

Ոգի կուտամ, հոգի տո՛ւր ինձ,
Իմ նազելի աշագեղ,
Սիրտս — գիշեր, աչքդ — վառ-աստղ
Թո՛ղ չողչողայ նա այնտեղ.
Սիրտս — սև արտ, աչքդ — ալ-վարդ,
Ա՛խ, թող ծաղկի նա այնտեղ:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՆՈՐ ԱԶԳԱՍԷՐԸ

ԾՈՑԸ, ճեպը դրամ լեցուն,
Հանդերձներն ալ մեծագին.
Ճերմակ շապիկ, մաքուր փողպատ,
Ոսկի ակնոց մ'ալ քթին:

Զայն կը տեսնես Նիւ Եորքի մէջ,
Լայն փողոցէն դէպ շուկայ,
Ճորճորալով՝ կամաց կամաց
Տանին գործի նոր կուգայ:

Սա ազգասէր մ'է խելացի,
Սխալ բնաւ չի գործեր.
Դրամ ունի, անոր խօսքը
Մարդիկ հերքել չեն փորձեր:

Սա երբեմն խրոխտ ձայնով
«Է՛հ, եկ տեսնենք ինտո՞ր ես»,
Կը հարցունէ՝ աննպատակ,
«Դրամ ունի՞ս, կը գործե՞ս»:

Բայց պատասխան չուզեր երբէք.
Եթէ փորձես բան մ'ըսել,
Վհուկի պէս կ'անհետանայ,
Ձի կը վախնայ քեզ լսել:

Բայց ազգասէր մ'է խելացի,
Անհոգ անցնիլ չի կրնար.
Դրամ ունի իր վարմանց մէջ
Մարդիկ սխալ չեն գտնար:

Եթէ սակայն ունիս վզկապ,
Մաքուր փողպատ ու շապիկ,
Սուղ հագուստներ, ոսկի շղթայ,
Ընտիր ձեռնոց, նոր կօշիկ,

Ազգասէրը քեզ մօտ կուգայ,
Ձեռք կը թօթուէ շամաշեր·
Մետաղային սուր ձայնով մը
Կ'ողջունէ քեզ — «Հէլօ, տէր։

Ջի ազգասէր մ'է հանճարեղ,
Անկիրթ վարմունք չի գիտեր·
Փարա շատ կայ· իր գործոց մէջ
Մարդիկ յանցանք չեն գտներ։

Մի զարմանար թեդ մտած
Երբ քեզ տանի ի հօթէլ,
'Պառ'ին առջև· — «Ի՞նչ կը խմես·
Պիրա՞, հուիսքի՞, գինֆըրնաէ՞լ։

Ընտիր օղի՞· գօնեակ մը առ,
Կամ քօքթէյլ մը պըրկանտի·
Բան մը խմէ· հոգիդ սիրես,
Ծխէ սիրտդ հանդարտի»։

Մեր ազգասէրն այս նորելուկ
Կարգ ու կանոն քաջ գիտէ·
Դրամ ունի· անոր ընթացք
Գէշ ու ըլլայ ո՞վ կ'ատէ։

Երբ դուրս կ'ելլէք զուարթ դէմքով՝
Մօտ անկիւնէն մի նորեկ՝
Ազգասէրին կը մօտենայ
Խոստովանիլ այդ ցերեկ։

Ճաշի համար չունէր սէնթ մ'իսկ,
Անօթի էր և անգործ·
Քիչ մը դրամ փոխ կը խնդրէր՝
Մինչ ուէ գտնէր գործ։

Այս ազգասէր մ'է անուանի·
Հայ մը ատել չի գիտեր·
Դրամ ունի· իր գործոց մէջ
Մարդիկ յանցանք չեն գտներ։

Բայց հարուստը ոչինչ կուտայ
Ողորմելի նորեկին,
Դառն ժպիտով կ'ըսէ անոր
Սուր չեչտով մը անմեկին.

«Եղբայր գիս ալ ազքատ ըրիք,
Ալ հերիք է դրամ տամ.
Ես ալ ունիմ տուն ընտանիք,
Շատ մ'ալ կարօտ բարեկամ»:

Բայց ազգասէր մ'է ինք նորէն,
Կ'երդնու ազգը միշտ սիրել.
Չի փող ունի. ոչ ոք կամի
Իր դիմակը վար բերել:

Բայց նորեկը եթէ քիչ մը
Փորձէ խնդրել, աղաչել,
Մեծատունը ատտելով զայն
Կը վռնտէ — «կո թու հէլ»:

Օր մը սակայն ժողովին մէջ
Դու կը լսես այդ մարդը.
Կը ճաթըրտի թէ «մեր կեանքը,
Մեր արևը, մեր բազդը

Զոհ տալու ենք մեր հայրենեաց,
Զոհ՝ մեր դժբազդ ազգայնոց,
Մեր անօթի եղբայրներուն
Օգնելու ենք մենք անոնց:

* *
*

Բայց եղբայրներ, ազգասէրին՝
Խօսքը նչան չէ փքուն.
Անկեղծ մարդը հաւատարիմ
Կ'ըլլայ մեծին ու փոքուն:

Հ. Էկինեվեան

ՈՐՍՈՐԴՔ

ՀԱՊԱ քաջազունք, Հայոց զաւակունք,
Առէ՛ք աղեղունք ի մահ երագունք.
Անտառք սպասեն, կենդանիք սարսեն,
Զինուցդ ի ձայնէն կենդանիք սարսեն.
Շեշտակի նետեր թափեցէք՝ քաջեր
Յերէս անվեհեր:

Վազենք ուր վտանգ՝ այս մեր դրօշանք,
Որոց արշաւանք՝ մարտից են կրթանք.
Երթանք գունդ ի գունդ՝ յաղեղ և մկունդ,
Յուսով սրտաթունդ՝ յաղեղ և մկունդ,
Շամփրեմք զկենդանիս երբ զթշնամիս,
ի մեր հայրենիս:

Զի օր մ՛այլ նոյնպէս՝ մարտին ի հանդէս
Զարնենք մահազդեաց զոսոխս հայրենեաց,
Եւ յաղթանակաւ լցեալ աւարաւ՝
Դառնամք քաջարշաւ լցեալ աւարաւ,
Եւ ի մեր դափնիք ծափ տան սիրելիք,
Պանծան հայրենիք:

Խ. Վ. ԳԱԼՖԱԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ

ՀԱՒԱՔՈՒԵԼ էինք բազմաթիւ հայեր
Մի շատ կարեւոր մեծ գործի համար.
Ժողովում Կիրքը մեզ նախագահ էր,
Լուտանքը—հռետոր, Ոխը—քարտուղար...
Եւ ակընթարթում մենք իրար անցանք,
Տեղ տուինք նոյն իսկ տուր ու դմբոցին,
Վերջն էլ ժողովը թողինք հեռացանք՝
Մազի՛ չափ մի շահ չը բերած գործին...
Միայն դուրս գալիս՝ դռան մօտ անձայն
Տէսանք մի էակ՝ վիզը ծուռ կանգնած,
Արդարութիւնն էր այդ հալածական,
Որին նախագահն ժողով չէր թողած...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՔԱՅԼԵՐԳ

ՀԵՐԻՔ որչափ աշխատեցանք անդադար,
Յոգնեցուցինք մեր թարմ մտքեր քաջաբար,
Օ՛ն, քիչ մըն ալ բաց օդին մէջ մենք երթանք,
Պարկեշտօրէն խաղանք, ընենք զբօսանք:

Զբօսանքն ալ մեծ դաս մըն է իրա՛ւ որ,
Եթէ գիտնանք զայն վայլելու կերպն աղուոր·
Պէտք չեն բնաւ խենդ ու խելառ շարժումներ,
Որոնք մեզմէ ցաւը պակաս չեն ըներ:

Զբօսանքը հաճելի է այն ատեն
Երբ իրարու հետ կը յաջորդեն
Աշխոյժ, սիրուն, անմեղ խաղեր ու երգեր,
Որ կը կրթեն մեր մարմիններն ու սրտեր:

Զգուշանանք չարաչար ալ վազելէ,
Եւ անխնայ արիւն քրտինք թափելէ,
Որովհետեւ չնչին պաղ մը, ցուրտ հով մը
Պատճառ կըլլան խանգարելու մեր կազմը:

Եւ երբ այսպէս վայելենք մեր զբօսանք,
Մարմնով, մտքով մեծ հաճոյքներ կ՚զգանք,
Օ՛ն, ուրեմն, խաղաղ, աշխոյժ ու զուարթ,
Մեր դէմքերը թող կարմրի ինչպէս վարդ:

Բայց ալ բաւ է, դադրեցնենք խաղ ու պար,
Երթանք նորէն զբաղելու մեղմաբար,
Մեր դասերով ու զանազան գործերով
Առջինէն ալ շատ արդիւնքներ ցոյց տալով:

ԲԱՆՒՈՐ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

ՀԻՒԾՒՈՒՄ, մաշւում էք գործարանին մէջ,
Ծխորով լեցուն պատերի տակին.
Գոյութեան համար արնաքամ եղած....
Մարմնական ոսկի ոյժերնիդ ծախում,
Ցամաք հաց ստանում:

Մութ ու շատ խոնաւ հանքահորերում,
Հսկայ կամարների տակ, անյատակ,
Խեղդող ու ճնշող մթնոլորտի մէջ
Դարձեր էք գերի հլու հպատակ,
Ի՞նչ ունիք նպատակ:

Հորերի հսկայ խախուտ պատերի
Բացուած ճեղքերից ջրեր են թափւում,
Եւ գետ շինուելով ձեր գլխին լեցւում,
Ու ձեզ բոլորիդ բողոքներ կարդում,
Վեհ մարտի կոչում:

Թողէ՛ք հորը մռայլ, մուրճը ահագին,
Դո՛ւրս եկէք փողոց շեփորի կոչին,
Դուք որ հոգի էք տալիս աշխարհին,
Ինչո՞ւ չունեցաք կեանք մի երջանիկ.
Ազատ, խաղաղիկ:

Ել՛էք հարազատ որդիք աշխարհի.
Ելէք ցրուելու թանձր մառախուղ.
Մութ տգիտութեան, մռայլ խաւարի
Դուք աշխատանքի զաւակներ արի,
Նոր կեա՛նք ձեզ բարի:

ՎԱԳՐ—ԹԱԹ

ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԳ

Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ,
Կեանքի չափ սիրենք մօսին հրացաններ.
Նորից պիտ՝ ելլենք Սասնոյ սարերը,
Զոր ու դաշտ ներկենք կարմիր արիւնով:

Մեզի ասացին հանգիստ նստեցէք,
Սուլթանի հետ գործ մի ունեցէք.
Ձեր ազգին դատը մեզի յանձնեցէք,
Նրա վճիռը մեզնից ուզեցէք:

Ուղիղ եօթ տարի ոչինչ չարեցինք,
Եւրոպի խօսքին ականջ դրեցինք.
Ակ բառական է, ինքզինքնիս գանենք,
Հնչակեան դրօշը կրկին վեր առնենք:

Մենք պիտ պաշտպանենք մեր արդար դատը,
Սարսափ պիտ ձգենք ամբողջ Եըլարզը,
Գացէք ու ըսէք սուլթան Համիտին՝
Կեանքը չատ սուղ է Հնչակեան զինուորին:

Քանի որ սուլթան չունի գթութիւն,
Ուժով պիտ առնենք ինքնավարութիւն.
Ողջ Հայ Սասուն, ապրի մեր Ջէյթուն,
Կարմիր տողերով թողնենք պատմութիւն:

Թութուլն եմ ես ձեր միշտ աւետաբեր,
Ոտքի կայնեցէք Հնչակեան զինուորներ.
Կենաց և մահու հնչեն զանգակներ,
Ակ մեզ համար չեն աշխարհի օրեր:

Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ,
Մահու չափ սիրենք մօսին հրացաններ,
Նորից պիտ ելլենք Սասնոյ սարերը,
Զոր ու դաշտ ներկենք կարմիր արիւնով:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԱՂՋԿԱՆ ԵՐԱԶԸ

ՀՊԱՐՏ աղջիկ, Հայու աղջիկ,
Որո՞ւն համար կըսպասես.
Վարդ երեսներդ ա՛լ կը խամրին.
Կեանքդ ի զուր կը մաշես։

Դու կ'երազես քալ կարիճ մը՝
Տարիք քսան, քսան հինգ՝
Հասակ երկայն, դէմք վայելուչ,
Կրթեալ, գիտուն ըլլայ ինք։

Դու կ'երազես որ ինտուածդ
Գործ մ'ունենայ չահաբեր,
Առատ ստակ, տուն ու կալուածք,
Բարձր դիրք մ'ալ պատուաբեր։

Իր աչքերէն կրակ ցայտեն,
Այտերն կարմիր իրիկ վարդ,
Ազուամազով պատած ծնօտ,
Սև գանգուրներ դէմքին զարդ։

Երբ նա անցնի հէգ աղջիկներ
Ծապուշ կրթին և կենան.
Անոր գեղոյն վառին սիրով,
Զմայլին ու սրբենան։

Դու կ'երազես որ քու չքնաղ
Երիտասարդն ի տիպ՝
Գերի ըլլայ սիրոյդ համար,
Անձը զոհէ, մեռնի ալ։

Եւ երբեմն զայն սուտ մերժես
Նազանքներով յանցաւոր.
Զայն չարչարես՝ որ քու առջև
Հալի, մաշի ամէն օր։

Դուն կ'երազես որ ամէն մարդ
Երանի տայ քու անձին.
Ընկերներդ բաղդիդ համար
Այրին, տապին, նախանձին:

Եւ վերջապէս օր մը հաճիս
Բաղդդ, ձեռքդ տալ անոր,
Ինչին վրայ իշխան դառնալ՝
Թագուհի մը բռնաւոր:

Կը նախընտրես նա հայ չըլլայ.
«Ոհ, Հայերը անկիրթ են»,
Կը փափաքիս որ օտարներ
Սիրտդ գերեն՝ կախարդեն:

Բայց, սիրելիս, մի սպասեր
Ի զուր տեղը այդ անձին,
Երազները իրական չեն,
Անոնք կուգան ու կանցնին:

Հայուհի աղջիկ, անփորձ աղջիկ,
Ի զուր տեղը կըսպասես.
Վարդ այտերդ տես, խամրած են,
Սիրտդ քու մէջ կը մաշես:

Երբ տարիքդ երտուն անցնի՝
Ճերմակն իյնայ մազիդ մէջ.
Պիտի գգաս մեծ սխալդ,
Պիտ' լաս անշուշտ անկէ վերջ:

Քանի որ դեռ ուշ չէ արդէն
Ընտրէ սէրդ, մ'ուզեր զոհ,
Իտէալդ թող նա ըլլայ,
Ջանա իրմով ըլլալ զոհ:

Հ. Էկինեան

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ 1864

ՀՐՃՈՒԻՆ երկինք, խայտայ երկիր անթերի,
Եւ Հայկազանցս դէմք կը ժպտին գեղանի.
Զի տարեդարձ մեր փրկութեան նոր հասեր,
Դարձեալ հանդոյն Արուսեկին լուսաբեր:
Ցոր նորոգին մեր սրտեր,
Կրկին հոգի անմեհեր:

Ազգասիրաց վսեմ ճակտին քրտնաթոր,
Այսօր Մասեաց հրեշտակն յաշխոյժս նորանոր.
Բառեակ պսակ մ'ալ գայ հիւսել ծաղկափայլ,
Զոր եթերին կապմէն մատունք բարեփառ:
Ցոր խրախուսին մեր սրտեր,
Կրկին հոգի անմեհեր:

Զայն հնչաւորց Թինախնդրին ալ ընդհա՛տ.
Հնչեն գոռան բարբառքն Հայկեան անընդհատ.
Օրէնք արդար և Միութի՛ւն երջանիկ,
Զոր «մայր բարեաց» գրեն անշուշտ անջինջ գիրք:
Ցոր կը ցնծան մեր սրտեր,
Կրկին ի խինդ անեպեր.

Հապ օ՛ն որդիք Հայկեան յայս պերճ ասպարէզ,
Եկէք տօնել սերկեանս չքեղ մեծ հանդէս.
Նուիրական ըլլայ օրս յարաժամ,
Ուր միութեան ճանչնանք ոգին ու Ազգութեան:
Եւ յոյս ըլլան մեր սրտեր,
Կրկին ի լոյս անստուեր:

Թող հնչէ ազատ,
Մինչ վէհն Այրարատ.
Ընդ նմին երգեն,
Դաշտ, լերինք ամէն
Թէ բաղդն հայերուն,
Դեռ ողջ է անքուն.
Եւ մեք անդադար,
Զարնենք Հայկեան քնար:

Ուրախ ապրի Հայն,
Կեցցէ միութիւն.
Եւ փառքն աննման,
Սահմանադրութի՛ւն. Ս. ԽԱՆՃԵԱՆ

Սասնոյ Մուրատին

ՁԱՅՆ ՄԸ մարտագոռ խրոխտ ու ազատ,
Օ՜ն ինքն է ինքը, Մուրատն պայազատ,
Նա մեզ կը գոչէ, Ընկերք հարազատ,
Սուսեր, սուր, սլաք, սուին ու Մօսին,
Ասոնցմով միայն անվախ կը խօսին,
Սէգ բռնութեան դէմ փառատենչ ու սին,
Նուաստն եւ նկուն, զրկուած գերին,
Ու բոլոր անոնք, որք կը դեգերին,
Յաղթ չղթան փշրել սարուկ ազգերին,
Հնչել փրկութեան չեփորն յաղթական,
Եւ ազատութեան վէր առնել մական,
Բռնել նոր փառքով զերկիրն Հայկական,
Ուրախ ու պայծառ օր երջանկաւէտ,
Սուգին այն առեն, յաջորդեն յաւէտ,
Միայն, ո՛վ ընկերք՝ միանգամ եւ եթ
Ուխտենք լինել յար, մէկ սիրտ մէկ հոգի.
Ի'առաթուր կոխենք վէճերն փոքրոգի,
Րոպէներն անգամ թանկ են ու յարգի,
Ա՛լ բա՛ւ է, հայե՛ր, յառա՛ջ՝ միշտ արթուն,
Տէր լինենք սրտի, մտքի եռանդուն,
Իսկ և իսկ ցոյց տանք Հայուն քաջութիւն,
Նրանով ծագէ մեզ լոյս, Ազատութիւն:

Մ. ՊԵՏԻԿԵԱՆ

ՁԱՅՆ ՏՈՒՐ ՈՎ ՖԻՏԱ

Ձ Ա Յ Ն Տ Ո Ւ Ր , ով Ֆէտա , ինչո՞ւ ես տրտում ,
Լուռ ու մունջ նստած երկար մտածում ,
Ասա՛ղ երկար մտածում ,
Տիսուր երկար մտածում :

Շարժեցէք տղերք , սրեր չորչորուն ,
Թափեցէք կրակ թշնամեաց գլխուն ,
Գազան թշնամեաց գլխուն ,
Դաժան թշնամեաց գլխուն :

Թափենք մեր արիւն իբրև ախոյեան ,
Լինինք առաջնորդ մեր ազատութեան
Սիրուն մեր ազատութեան ,
Անուշ մեր ազատութեան :

Շտապեցէ՛ք , ընկերք , խմբուիլ միասեղ ,
Մեռաքէ դրօշակ ծածանի այնտեղ
Թող միշտ ծածանի այնտեղ
Սիրուն ծածանի այնտեղ :

Պարզեցէք դրօշակը Դաշնակցութեան ,
Լինի առաջնորդ մեր ազատութեան ,
Սիրուն մեր ազատութեան ,
Սիրուն ազատութեան :

Քանի այսպէս է հայը խղճալի ,
Զինուած պիտի լինի ամբողջ Ֆէտայի .
Սիրուն ամբողջ Ֆէտայի .
Կորիճ ամբողջ Ֆէտայի :

Մօսին հրացան ձեռքերնիս բռնած ,
Թունաւոր փամփուշտ կուրծքերնիս չարած ,
Հապա կուրծքերնիս չարած ,
Սիրուն կուրծքերնիս չարած :

ՄԻ՞ԹԷ

Մի՞թէ պիտի ես վախենամ,
Խծբծանքէն վատերու,
Որք Սկզբունքէ հեռու
Խածխծել գիտեն միայն:

Մի՞թէ ռամկին, ոգէտին
Բամբասանքին աղտոտ, վատ
Զոհեմ Իտէալս հարազատ,
Օ՛, երբե՛ք, ամենևին...:

Մի՞թէ գձուձ ոսկիին
Զոհել կ'արժէ գաղափարն
Չէ՛, չեմ ուզեր հաւատալ,
Գաղափարն է թանկագին:

Մի՞թէ ակարն ծնած է
Կեր երթալու բիրտ ոյժին.
Թող բոլորն ալ կորնչին,
Թող վրէժն աշխարհ տիրէ:

Աստուա՞ծ մ'ստեղծեց միթէ
Հարուստն, աղքատն առանձին.
Եթէ իրօք այդպէս է —
Չար է Աստուածն երկնքին: Վ. ՉՆԱՐ

ՄՆԱՔ ԲԱՐՈՎ

ՄՆԱՔ բարով, արև, գարուն
Եւ խնկաբոյր ծաղիկներ,
Կարկաչահոս վտակ սիրուն,
Կանաչազգեստ բլուրներ:

Մնաք բարով, համբոյր և սէր,
Դէմքով հրեշտակ կոյս չքնաղ,
Վայելչութեան պայծառ ժամեր,
Քաղցր ժպիտ, կեանք մատաղ:

Աղքատութիւն ես սիրեցի,
Խեղճի լացը, հառաչանք,
Ես քնարս նուիրեցի
Վիշտ երգելու և տանջանք: Ց. Ց.

ՅԱՌԱՋ, ՄԻՇՏ ՅԱՌԱՋ

ՅԱՌԱ՛Ջ, միշտ յառա՛ջ... անկցի գերութեան
Կաչկանդող չղթան
Այսօր թէ վաղը — մերն է յաղթանակ
Սուրբ ազատութեան
Չէ՞ որ ծնունդ ենք ցուրտ նկուղներին,
Անհաց ու քաղցած,
Տառապանքների, տանջանքի սալին
Կռած ու կոփուած.
Չէ՞ որ անցել ենք կեանքի ճահիճով՝
Մինա՛կ, տարագիր —
Ուժեղին՝ հլու, վզերս ճկած,
Որպէս բեռնակիր.
Վայելուչ կեանքի չեղանք մասնակից,
Գձուձ ու մրոտ՝
Տիրոջի համար մանուկ հասակից
Թչուառ ճնշորդ...
Բա՛ւ է, ընկերներ, պարզենք կոչտացած
Մեր չլուա ձեռքեր —
Յառա՛ջ համարձակ, կեանքի մեծ բեմում
Փոխուում են դերեր:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

ԵՊԱՏԱԿԻՍ գէթ մի մասը կատարուէր,
Եարալի բլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւն տեսնեմ ու մեռնեմ.
Եար արի, տուն արի, չուտ արի բլբուլ,
Սարևրի գիւլն եմ:

Ա՛հա իմ դարդս չատացել է, չեմ կարող,
Եարալի բլբուլ եմ,
Դարդի ձեռքից ո՞ր կողմն ընկնեմ, ազատուեմ,
Տուն արի, չուտ արի, եարալի բլբուլ եմ,
Սարևրի գիւլն եմ:

Ա՛հա, անբախտ հայդուկիս, Տէր իմ, դու խղճա,
Եարալի բլբուլ եմ,
Մի թողնիր քուրդի գնդակով զուր գնամ կորչեմ,
Եար արի, տուն արի, չուտ արի բլբուլ եմ,
Սարևրի գիւլն եմ:

ՆՆՋԵԱ ՈՐԴԻՍ

Ննջե՛ա, որդիս, անուշ քնով
Օրօր կասեմ ու նանի,
Քնոյ հրեշտակ իւր թեւերով,
Քո երեսին հով անի։

Ննջեա՛ ննջեա անուշ զաւակ։
Շուտ մեծացիր ու մարդ դառ,
Հայրենիքիդ լեր պիտանի,
Նորա արեան վրէժն առ։

Գիտե՞ս արդեօք ո՞վ էր պապդ
Եւ ինչ գործեր նա արաւ,
Նա վարդանն էր իւր քաջ գործով,
Հայրենիքին փառք բերաւ։

Քո անունն էլ նոյնպէս վարդան,
Քաջ վարդանին նմանիր,
Նորա տուած օրինակով,
Հայրենիքիդ ծառայիր։

Գիտացիր որ ամենայն մարդ,
Պարտական է իւր ազգին,
Սիրել, օգնել, թէ որ պէտք է
Հայրենիքին զոհ լինել։

Դէ՛հ, մեծացիր ու քաջացիր
Ազգիդ վրայ մտածիր,
Ձեռքէդ եկած ամէն բարիք
Նորա համար մի խնայիր։

ԿԱՄՐ

Հատ մեծ չէր ան տարիքով,
Երբ օրն ի բուն մեծ ջանքով
Կը գլորէր իր դասերուն՝
Աչխոյժ, ճարպիկ, վառվռուն։

Հազիւ տասը գարուններ
Վարդ կարմիրներ են բաններ
Կուներ ու կլոր դէմքին վրայ,
Ուր խայտանքը կը ցոլայ։

Մէկ հատիկն էր իր մօրը,
Որուն կըրած վիշտերը
Կ՚ուզէր մեղմիւ ամոքել՝
Իր ջանքերովն անարդել։

Ընկերները չար, ծոյլեր,
Անոր յաջող այս քայլեր
Շեղեցընել կ՚ուզէին
Նախանձով մը մոլեգին։

Բայց գիտէ՞ք թէ ի՛նչ մեծ կամք
Ծոյց կուտար ան, բարեկամք,
Անգոսնելով քաջաբար
Այս չեղումներ վնասակար։

Ու այսպէս քիչ առեն էն
Աւարտեց ան ամենէն
Դըժուար դասերն ու ճիւղեր
Բարի կամքովն անվեհեր։

Աչխատութեան եռանդուն
Երբ միանայ կամքն տոկուն
Վատահ ըլլանք ես և դուն,
Մեր ջանքեր չեն ապարդիւն։

ՀԻՆ ԳԻՇԵՐ ԸՏԵՆ

Ո՞ՐՉԱՓ մարդիկ ափսո՜ս
Երբ որ գլխուն աեւանեն
Բարեւ կուտան սիրով
Ինչ կայ չիկայ կըսեն։

Վա՛յ, գէշ սաեն հա՛, հա՛, հա՛,
Անշահ բան հա՛, հա հա՛,
Գէշ սաեն
Իրաւ չատ անպիտան։

Որովհետեւ հիմայ
Պոլսեցւոց հարկ չիկայ,
Եւրոպացիք բոլոր
Քաակնիս պարպեն կոր։ Վայ ևն։

Մեր ազգիկներն ըսես,
Մօտայի խենդեր են
Ֆիստան, ճանֆէս, բարէս
Շինես՝ բուքլէ կ'ուզեն, վա՛յ ևն.

Քուռչի մը կաորին
Հազարաւոր ֆրանք
Կուտան կը հագնին
Եւ կրնեն չատ յորդ։ Վա՛յ ևն.

Զուկին աւելցուկէն
Ֆիլէ մը ալիւր կ'առնեն
Աղուորնալու համար
Երեանին կը քսեն։ Վա՛յ ևն.

Որն իր էրկանը
Կը պօռայ կ'սպառնայ,
Ուրիշ մ'ալ անդին
Նոր էրիկ կը գտնայ։ Վա՛յ ևն.

Շատ մ՚ալ աղջիկներ
Որ էրիկ չեն գտեր
Վանքերը կ՚երթան
Որ սրբուհի ըլլան: Վա՛յ ևն,

Երիտասարդները
Թէ հաչուի տակ առնես,
Աղջկանց ինչ որ ըսես
Նոյնը պիտի գտնես: Վա՛յ ևն.

Գօմօսիօն խանէն
Շատ աշակերտներ ելան,
Տուն ու խանութ ծախած
Բուրդ ու բաբուճ փախան: Վա՛յ ևն.

Շատ մը անկուժիններ
Բանի գործի տէր չեն,
Կարգուելու կ՚ելլեն
Թրախօմայ կ՚ուզեն: Վա՛յ ևն.

Թրախօմայով
Աղջիկ կը փնտռեն,
Նայիս քիչ տանէն
Տունէն կը վռնտեն: Վա՛յ ևն.

Աղգին գործերն ըսես
Պէ՛ տան քէնտինէ
Թէ որ տասնակ երթայ
Բաներնիս բուսած է: Վա՛յ ևն,

Աղգատէր ննք կ՚ըսեն
Մինակ իրենք կը լսեն,
Ստակի եկած տեղը
Մէկէն կծիկը կը գնեն: Վա՛յ ևն.

ՏՈՒՐՈՒԱԽԻ ԵՐԳ

ՈՒՐԵՄՆ ինաք բարո՛վ ազնիւ ընկերներ,
Մեռնիմ ձեր հոգուն երջանիկ քայլեր·
Քո հոլին մեռնիմ Տալորիկ ազատ,
կեցցես դու յաւէտ, Անդրանիկ քո զարդ:

Քայլի համբոյրով տուաւ հրաժեշտ,
Անվեհեր Տուրուախ ընկեր հարազատ,
Բոլէ անցաւ սլացաւ ուժգին,
Վեհ Դաշնակցութեան անուան արժանի:

Երկինք պատել էր գունդ-գունդ սև ամպեր,
Արեգակ չկար, մութ ու խաւար էր·
Դժուար էր զատուիլ քայլ ընկերներից,
Հայ ազգի սիրած ու պաշտած տեղից:

Հեռուից տեսնող՝ էլ ու աչխարք,
Երնէկ կուտային քեաֆուր Տուրուախին·
Ա՛հ ու ասրատով լցուած թիւրք միլլաթ,
Կապուտ աչերից արցունք կը ցայտէր:

Նժոյգ ձի նստած ահռելի դէմքով,
Երկինք ձայն տուեց վեհ քայլի արարք,
Ինուսայ փաչէն լցուած էր դողով,
Թռչում էր Ցոլակ, ցայտում էր կրակ:

Անհամբեր սրտով Դաշնակի ճիւղեր՝
Կարիճ Տուրուախի գալուն կ'սպասեն,
Փառք ու պարծանք են մեզ այսպէս քայլեր,
Ուրախ լուր բերաւ ազատ Սասունէն:

ԳԱՐՆԱՆ ԵՐԳ

Պայծառ արև, կայտառ հովեր,
Առուի կարկաչ ու խոխոջ,
Կոյս դայլայլներ, ժպտուն չողեր,
Վարդի կոկոն ու բողբոջ,
Անվերջ սրտեր, անվերջ երգեր,
Սիրոյ արցունք ու հառաչ.
Սար ու ձորում կազմած խըմբեր
Կ'երթան գարնան ընդ առաջ:

Ջընգոյշ ձեռքեր, մատաղ մատներ
Վառ պսակներ ոլորէք.
Լոյս ճակատներ, վճիտ աչեր,
Գարնան չուրջը բոլորէք:
Կոկոն սրտեր, չուչան կրծքեր,
Անուշ երգեր բուրեցէք.
Վարդ լեզուներ, յակինթ շրթներ,
Գարնան վեհ մուտքն օրհնեցէք:

Սիրուն աղջիկ վարդի թերթիկ,
Գարուն եկաւ իմ սրտին,
Ծաղկի ցօղիկ, գարնան հովիկ,
Էլ օտար չեմ քո չնչին:
Ես վարդի թերթ, դու զով զեփիւռ,
Ինձ գուրգուրա այսուհետ.
Ես ծաղկի ծոց, դու ցօղ ու բոյր,
Ապրի՛ր, ցնդիր գարնան հետ:

Ալ-վարդերով, թարմ վարդերով
Անկողին եմ յարդարել,
Սիրոյ սրտի արցունքներով
Մարգարիտներ եմ չարել,
Անտէր թռչնիկ, որը բլբուլիկ,
Արի՛, նրնջիր վարդին մէջ,
Շուչան աղջիկ, սըրտիս ծաղիկ,
Արի՛, բացուիր հոգուս մէջ:

ԱՐԱՄ-ՉԱՐԸԳ

ԳԱՐՈՒՆ

Պայծառ, կանանչ թևերով
Եկաւ հասաւ գարուն նոր.
Իրեն հետը բերելով
Անթիւ բարիք բիւրաւոր:

Բոլոր ծառերն ու դաշտեր
Կանանչ ըզգեստ են հագեր.
Եւ գեղեցիկ ծաղիկներ
Անուշ հոտեր են ցաներ:

Տես նորածին գառնուկին
Մանրիկ, դողդոջ քայլերով
Ցատկռտելը հրճուագին
Եւ մօրն ալ սէրն ու գորով:

Ո՛հ, չես տեսներ սա սիրուն
Վառեակներն ալ գոյնզգոյն,
Որոնք մօր չուրջ բոլորուն
Կը թռուբռան ճրճըռուն:

Թռչնիկներն ալ ոստոստուն
Իրենց անուշ ճիւճիւով
Կերգեն աչխոյժ ու սիրուն
Գարնան երգը հրճուանքով:

Անոնց հետ մենք ալ ահա՛
Կ'երգենք գարնան երգն աղուոր
Թրա լա՛լա՛, թրա լա՛ լա՛,
Կ'երգենք գարնան երգն աղուոր:

Հնձուորդ Ալիքը

Ջա՛ն ընկերնե՛ր, դէպ ի փողոց
Հեղեղի պէս թափուեցէ՛ք,
Մուրճ ու քլունգ, կացին, սղոց,
Ինչով լինի, զինուեցէ՛ք։

Ծառեր, սիւներ, տանկապատեր
Կարեցէ՛ք, աւրեցէ՛ք...
Կառուցէք չուտ բարրիկադներ,
Ներանց ներքև ամրացէ՛ք։

Ահա կը տան ազդանշան,
Մեր դրօշը կը պարզուի,
Ու թշնամին ամպի նման
Դէպի նորան կը վազի։

Բայց մենք նրան յետ կը մղենք
Ու փառաւոր կ՝տանք ջարդ,
Փողոցն արնով կը հեղեղենք,
Նորան կանենք յուսահատ։

Դէ՛հ, ով քաջ է, իմնի փողոց,
Այնտեղ է մեր յաղթութիւն,
Բարրիկադը, ռումբն ու սղոց,
Պիտի տան մեզ փրկութիւն։

ՊԱՐ ԱՒԱԶԱԿԱՑ

Վառեց երկինք իր մոմերը,
Աւազակաց համար.
Թրա լա լա լա:

Սահի զուարթ թող գիշերը,
Մեր պալատն է անտառ:
Թրա լա լա լա:

Երգեն հողմունք փոթորիկք,
Աւազակաց համար.
Թրա լա լա լա:

Գինով լեցուին մեր փորիկք,
Եկէք, օ՛ն դուք ի պար.
Թրա լա լա լա:

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Վրէ՛ժ կը գոռան շիրմաց խորէն
Գոռ դիւցազանց ստուերքն ահեղ.
Վրէ՛ժ կը մրմռան արդ ախրորէն
Մեր հէք եղբարց արեան հեղեղ:

Մասեաց ժեռուտ սարն բոցավէժ
Մեր սրտերուն խոր ժայթքէ վրէժ...
Օ՛ն, անվեհեր փանենք գրկանք,
Որ Հայաստան առնէ նոր կեանք:

Բիւր սուր, հուր, մահ,
Զազդեն մեզ ահ...
Արդ քաջալանջ
Նետուինք յառաջ:

Սուր մը յագուրդ
Վատ և անգութ՝
Թող թշնամւոյն
Խմէ արիւն...:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ԵՐԳ ՎԱՐԴԱՆԱՅ

ՓԱՌՔ մեր անմահ և հարց մերոց,
Եկեղեցի որ չնչես բոց,
Հայոց սրտիկ տայ քեզ ողջոյն,
Հանդիսագոյն
Հայ ազգ ողջոյն:
Ի սէր քո մեր քաջ
Նախնիք խոյացան
Սուր ի ձեռ և խաչ
Յասպարէզ մահուան:
Այլ նոցա արիւն
Եւ վեհ քաջութիւն
Եւ հայոց սէրն
Եւ կենդանութիւն:

Հաւատարիմ քեզ մենք ամէն
Իբր զՄեսրոպ, Ներսէս, Սահակ,
Իբր զՎարդան, Վահան, Մորէն,
Թռիցուք առնուլ ի գլուխ պսակ.
Տգիտութեան դէմ մենամարտ,
Լիցուք յաղթող յանարիւն մարտ:

Քրիստոսամարտ
Հայաստանեայց եկեղեցի,
Մեր սիրտ հոգի՝
Սուրբ սեղանոդդ լիցին առ քեզ
Միշտ ողջակէզ,
Ներ հովանի մեզ ամրապահ
Մինչև ի մահ,
Եւ քեւ կեցցէ մինչ յաւիտեան
Ազգ Հայկազեան:

Մ. Զարդարեան

ՀԷԳ ԲԱՆԱԿԸ

ՎԱՁԼԱՄՈԼՈՐ հէգ բանակը,
Ջնջել ուզեց հրոսակը,
Վատին այս չար նպատակը
Ջը գառաւ իր յաղթանակը։

Մուրատեանի քաջ խմբակը
Սարսեցուց չորրորդ բանակը.
Քաջդ Մուրատ, առ պիտակը,
Տե՛ս Արմենակ նահատակը։

Սեպուհն ինկաւ ժայռին առակը,
Նա էր խմբին հրեշտակը.
Բացուի՛ր, բացուի՛ր մերին բաղդը,
Բացուի՛ր, բացուի՛ր հայուն վարդը։

Երեք ընկերք գերի եղան,
Լեռներ, ձորեր գնդակ տեղան,
Բաֆֆի, չարժի՛ր դրչիդ բերան,
Հաց խնդրեցինք, օգնող չեղան։

Անիծապարտ միւչիր Զէքի,
Դու հայութեան վատ թշնամի,
Վեց հազար զօրք կոչեց զէնքի,
Կռուիլ ընդդէմ տասնեօթ քաջի։

Գարուն ըլլար սուր առնէի,
Զէնք ի ձեռին դաշտ վազէի,
Բացուի՛ր, բացուի՛ր մերին բաղդը,
Բացուի՛ր, բացուի՛ր հայուն վարդը։

Ի ՍԳԱԼԻ ՄԱՀ ԳԱԲՐԻԷԼԻ ԵՐԱՆԵԱՆ

ՔՈՒ ցուրտ շիրմիդ վրայ ուր, վա՜հ, կայ թողուած,
Առոյգ հասակդ և սրտիդ հուր երկնասլաց
Չէ թէ միայն սփռենք ծաղիկ լի ձեռքով,
Չէ թէ միայն արցունք անհուն ցաւերով:

Այլ և ձօնենք վշտահար
Երգերն անոյշ քնարին,
Որոյ փափուկ թելերը
Դու հնչեցիր սրտագին:

Այն նուագներն որ քու բերնէդ սլացան,
Երթալ յողջոյն աւերակաց ցիր ու ցան,
Լսեց զանոնք ի դամբանացն հայրենիք,
Եւ սփոփեցան Հայաստանեայց վեհ Ոգիք:

Լսէ զանոնք և դու ես,
Մահուան քունէն արթնցիր,
Այն քնարին թելերով,
Յանմահութիւն ե՛լ թռի՛ր: Մ. Պ.

ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

ՕՏԱՐ երկիր թափառած,
Անքուն աչօք կամ ցաւած,
Իմ սիրելույս կարօտցած.
Չըկայ մէկն որ կարեկից
Ըլլայ ցաւած իմ սրտիս:

Ո՛վ հայրենիք իմ սիրուն,
Ա՜հ, տաչորէ գիս անունդ.
Արդեօք պիտի չը տեսնե՞մ
Քու լուսափայլ զուարթ դէմքդ:

Հառաչանք բիւր ի սրտէս,
Արտօսր հեղում աչերէս,
Չեն ինձ երբէք մխիթար,
Ոսկի, պատիւ, սէր օտար:

Այլ ես անոր սիրոյն զոհ,
Կրնեմ զամէնք սրտով գոհ,
Միայն թէ յոյս մ՚ունենամ,
Իմ սէրս տեսնել միանգամ: Ս. Պ. Փ.



ՄԵԾՆ ՏՐԴԱՏ



ԱՇՈՏ Ա. ԹԱԳԱՒՈՐ



ՔԱՋԱԿՈՐՈՎՆ ՄՈՒՇԵՂ



ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ

ԵՐԳԻԾԱԿԱՆ

ԶԻՆՈՒՈՐԻՆ ԿՈՐՈՒՍՏԸ

Ա՛ՅՍ ԻՆՉ կորուստ ինչ մեծ ցաւ,
Բանթալոնիս կռճակը,
Կռճկելնիքէն բրթեցաւ,
Գնաց մտաւ ո՞ր ծակը։

Ահ, կ՛աղաչեմ պարոններ,
Թէ որ տեսաք նէ տեղ մը,
Իմացուցէք ո՞ր ծակն է,
Երթամ հանեմ պայն չուտ մը։

Ոչ պզտիկ էր ոչ մեծ էր,
Զափաւոր ալ չէր ըսուէր,
Ինչ գոյն բլլալն ալ մոռցայ,
Կարմի՞ր էր թէ սեւի վրայ։

Ահ մի՛ խնդաք պարոններ,
Այս կորուստը քիչ բան չէ,
Ցիանապետս իմանայ նէ,
Վերջը բանիկս բուսած է։

Միտքս կուգայ թէ վրան,
Թռչուն մը կար խոչորկէկ.
Եւ կորուսեալ այն կռճակն,
Գամուած էր հոս ամուրկէկ։
Ահ մի՛ խնդաք պարոններ,

Խանութները չեն ծախեր,
Ֆապրիգան ալ չեմ գիտեր,
Շուներ անորդի կռճակիս
Ծառն ու արմատն է չորցեր։
Ահ մի՛ խնդաք, ևն։

Ջինափորձին ատենը,
կը դիտեն մեր չորս կողմը,
Ոտքէս բռնէ մինչև վեր,
կը խառնեն տեղ չեն ձգեր։
Ա՛հ մի խնդաք, ևն։

Կուտան ձեռքս հրացան,
կրեն «չալկէ ուսիդ վրայ»։
Ի՛նչպէս կայնիմ, դուք ըսէք,
Բանթալոնս վար կ'իյնայ։
Ա՛հ մի խնդաք, ևն։

Բարեկամացս հանդիպիմ նէ,
Հարկաւ պիտի բարև տան,
Ձեռքս հո. կէ պակաս չէ,
Պիտի տեսնեն ու խնդան,
Ա՛հ մի խնդաք, ևն։

Աղջկանց ալ բան մը պէտք է,
Երբոր տեսնեն կը խնդան,
Ճամբաս հատաւ փոխելով,
Թռչելու է պալոնով։
Ա՛հ մի խնդաք, ևն։

Պառաւ կանանց բերանն ալ,
Կրնաս գոցել նէ գոցէ,
Անանկ բաներ կը մաղեն,
Որ կոճակս բամբասեն։
Ա՛հ մի խնդաք, ևն։

Սիրուհիս ալ Ատաւաճ տայ
Ա՛ս կորուստս չիմանայ,
Քանզի գիտեմ վախկոտ է,
Պզտիկ բանէ մը դող կ'ելլայ։
Ա՛հ մի խնդաք, ևն։

Կեցէք միտքս բան մ'եկաւ,
Վազեմ երթամ ճար չկայ,
Տիօժէնը ուր որ է,
Գուցէ կոճակս ան գտնայ։
Ա՛հ կ'աղաչեմ պարոններ, ևն։

ՄՐԳԱՎԱՃԱՌ

ԱՐԹՆՑԻՐ տիկին քունէդ,
Մրգավաճառն եկաւ.
Ու թօմպուլիկ զաւկըներուդ
Փայլուն ու թարմ միրգ բերաւ:
Աժան աժան տամ պիտի
Որ սակարս պարպուի:

Զմիւռէն բերել տուի
Խոշոր հատիկով նուռը,
Թէ անուշ և թէ թթու
Որն որ կուզես զայն առ դու:
Զառնես նէ ալ մէյ մը տես,
Երթամ նէ ետ չեմ դառնար ես:

Եաֆայէն նոր ղրկեցին
Գլխուս չափ փորթուգալներ,
Երբ մէկ հատ մը կեղուեցի
Բերնիս ջուրերը կը վազէր,
Եթէ կ'ուզես մէկ հատ առ,
Բայց բոլորէն վար չեմ տար:

Անմահական հոտ բուրէ
Խնձորն Ամասիայի,
Որ աղէկ մէզէ կ'ըլլայ
Անուշիկ մաստիքայի,
Թէ օղի չես գործածեր
Զաղմաղի մէջ եփէ կեր:

Հապա այս մեծ սերկեւիլ
Որուն նման տեղ մը չկայ,
Թէ ինծի չես հաւատար
Ելիր մէյվախօշ գնայ,

Չես երթար նէ ասկէց առ
Ծաթըր խուրձըր խած ատ կեր։

Մոռցայ կարագի նման տանձս
Որ կ'արժէ բոլոր գանձս.
Հատ մը առ կեր լաւ մը փորձէ
Թէ սկռաններդ կարծր է,

Չառնես նէ ալ մէյ մը տես,
Երթամ նէ չեմ դառնար ես։

Հոգիս բերանս եկաւ
Մինչև որ գտայ այս նուշ.
Կոտրէ կեր չաթըր չութըր,
Երակներդ կաթ լեցուր,

Չառնես նէ ալ մէյ մը տես
Երթամ նէ չեմ դառնար ես։

Այսօր ծառէն առի վար
Այս ընկուզ կարծր ու թարմ
Որ պիստակի պէս լեցուն
Եւ նուշէն վար չի ճնար,

Չառնես նէ ալ մէյ մը տես
Երթամ նէ չեմ դառնար ես։

Դեռ ո՞ր մէկ մխրճս գովեմ,
Թուխ կաղի՞նս թէ չամիչս,
Կամ Շամէն բերած արմաւս,

Ամէնքն ալ անուշ ու թարմ
Ուտես նէ դու կ'առնես համ։

Թէ քու ուզած մխրճերդ
Սակառիս մէջ չունիմ ես,
Այսօրուընէ ապագէ
Վաղն առաու կը բերեմ քեզ։

Ամէնքն ալ անուշ ու թարմ,
Ուտես նէ դու կ'առնես համ։

Տես կ'առքս ալ ինձ նման
Մաղի չափ ծուռ մուռ չունի,
Մանաւանդ սրամիներս
Որ ցորեն մը պակաս չունի.

Աժան աժան տամ պիտի
Որ սակառս չուտ պարպուի։

Իսկ թէ առնելու միտք չունիս,
Մեղք եմ, մի վար դներ գիս.
Կանուխկէկ երթամ գործիս,
Հայ ճարեմ տուտուիս,

Զի թէ պարապ տուն դառնամ,
Հէմ ծեծ, հէմ դուրսը կը ճամ։



ԳԷՇ ԱՏԵՆ

ՄԱՐԿՈՍ

ԲԱՐԵՒ պարոն Ղուկաս
Ինչո՞ւ կ'աճապարես.
Թէ որ խանութ կ'երթաս,
Պարապ ես կը դառնաս, վա՛յ,
Գէշ ատեն, հա հա հա,
Անշահ բան, հա հա հա,
Գէշ ատեն, իրաւ շատ անպիտան:

ՂՈՒԿԱՍ

Խանութիս փեղկերը,
Շատ ուշ կը բացուին կոր.
Վախնամ կամաց կամաց
Ամբողջ գոցուի պիտոր:
Գէշ ատեն, ևն:

ՄԱՐԿՈՍ

Եթէ ասկից առաջ,
Ջէինք շահեր ալ նէ՝
Գոնէ գործ մ'ունէինք՝
Աս ան կը խաբէինք:
Գէշ ատեն, ևն:

ՂՈՒԿԱՍ

Դիւրին վաստակ մը կար,
Թէ որ ծեր չըլլայինք.
«Փարատանան» սուլելով
Տէրտէր մը կ'ըլլայինք:
Գէշ ատեն, ևն:

ՄԱՐԿՈՍ

Հինգ հատ գաւկի տէր եմ,
Մսխող կին մ'ալ ունիմ.
Մօտս պօմպէ կ'ուզէ,
Ես հին ֆէս մը չունիմ.
Գէշ ատեն, ևն:

ՂՈՒԿԱՍ

Հապա աղջիկս ըսես,
Վեց տարի դպրոցն է.
Սիրեմ բայը աղէկ.
Ինչ մ'ալ բառնաւն գիտէ:
Գէշ ատեն, ևն:

ՄԱՐԿՈՍ

Իմին լակոտներս ալ,
Ժամ ու աղօթք մոռցան,
Թղթի ատակ կ'ուզեն,
Կ'առնեն թատրոն կ'երթան:
Գէշ ատեն, ևն:

ՂՈՒԿԱՍ

Տանս մէջ եղածները,
Բոլորն ալ ծախուեցան.
Կնկանս քօղքը մնաց,
Աչքս անոր եմ տնկած:
Գէշ ատեն, ևն:

ՄԱՐԿՈՍ

Տանտէրս առջի օր գիս,
Տունէն վռնտեց նէ.
Նայեցայ որ արդէն
Ամէն բան կրուեր է:
Գէշ ատեն, ևն:

ՂՈՒԿԱՍ

Վաղը անուշիս օրն է,
Զգել փախչելու է.
Օրացոյցը չինողը
Բռնել կախելու է։
Գէշ ատեն, ևն։

ՄԱՐԿՈՍ

Ամէն փողոց պարապ կայ,
Թէհնա ճամբայ չունիմ.
Թէ որ ատանկ երթայ,
Օդէն պիտի թռչիմ.
Գէշ ատեն, ևն։

ՂՈՒԿԱՍ

Զբաես՝ ալ մեզ համար,
Ծուռալը փուճ բան է.
Անկուտի ապրելէն,
Ոտքը տնկելու է։
Գէշ ատեն, ևն։

ՄԱՐԿՈՍ

Թէ որ ինձ հարցնես,
Ատ ալ աժան բան չէ.
Արդէն մեռած կըսուինք,
Պատանքնիս պակաս է։
Գէշ ատեն, ևն

ՂՈՒԿԱՍ

Եկուր վճիռ մը տանք,
Միջոց մը մտմտանք.
Անօթի ապրելնուս,
Խեղդուինք չը մուրանք։
Գէշ ատեն, ևն։

ՄԱՐԿՈՍ

Խեղդուելու համար,
Ջուան պէտք ըլլայ նէ,
Ո՞ւակից պիտի գտնենք,
Անոր ալ կուտ պէտք է։
Գէշ ատեն, ևն։

Գ. Հ. ՌՇՏՈՒՆԻ

ՓԹԻՆ ԴԻՊՈՂ ՄԱՐԴ ՄԸ

Գետինն անցնի սա ձմեռուան,
Հազն ու հարբուխն և ամէն բան,
Որ խեղճ մարմնոյս եկան վրաման,
Չիս դարձուցին ապուշ, անբան,

Քիթս ու բերանս ալ ուռեցաւ,
Բռնքտալէն բանըս բուսաւ.
Միշտ կը հազամ, միշտ կը խնջեմ,
Եարին չեկաւ, խերն անիծեմ:

Դեղ մը ըսէք, երթամ ընեմ,
Ամբան անցաւ չատ կ'ապաչեմ,
Քթախոտը կամ շաքարը,
Օգուտ չունին, ազէկ գիտեմ:

Սիրուհւոյս ալ աչքէն ելայ,
Երբ քովէն երթամ, կ'ըսէ, «գնա,
Չիս ալ հետդ կը պըղչկես,
Չիս պագնելդ յայտնի կ'ըլլայ»:

Խեղճ ու կրակ տուն կը դառնամ,
Լռիկ անկողին կը մտնամ.
Բայց հարբուխս այնչափ կատղեր
Որ քիթս մաեր ու դուրս չելլեր:

Դեղ մը ըսէք, երթամ ընեմ,
Ահ, պարոններ, չատ կ'ապաչեմ.
Քէհրիպարն ու նէօպէթ-չէքերն,
Օգուտ չունին, ազէկ գիտեմ:

Քաղցրիկ ձայնիկս ալ մարեցաւ,
Զռնչական բան մը եղաւ,
Երգ երգելու կամչնամ կոր,
Կ'ըսեն էշը կը գոռայ կոր:

Շատ աղջիկներ առաջ ինծի
Կանչել տային չարգի մանի.
Հիմա երբոր բերանս բանամ,
Երկու բառին կը բռնգտամ:

Դեղ մը ըսէք, երթամ ընեմ,
Ախթուն սիկնայք չատ կ'աղաչեմ.
Օխլամուրը ու տաք ջուրը,
Օգուտ չունին աղէկ գիտեմ:

Մէյ մը տաքէն, մէյ մը պաղէն
Կուգայ այս գէշ ախտը, կ'ըսեն.
Բայց ես կ'ըսեմ որ այս ցաւուն,
Բուն պատճառն է գօգօղութիւն:

Ալ աղէկ է որ չբռնանամ,
Մինչև մեռնիմ այսպէս մնամ.
Երբ պարտատէրս ատակ ուզէ,
Երեան ի վեր թաքնեմ բռնգտամ:

Դեղ չեմ ուզեր, ցաւէս գոհ եմ,
Բարեկամներէս չնորհակալ եմ.
Գինի, օղին և սիկառը
Երթամ տնկեմ, ծխեմ, թաքնեմ:

Գ. Հ. ՌՇՏՈՒՆԻ

Երաժշտաց Ֆաթուման

Դեռ մանուկ էի, ծնողս ինձ կ'ըսէր
«Գնա՛ գործ գտիր, ինչո՞ւ ես նստեր,
Եթէ այսպէս դուն միշտ տունը նստիս՝
Գիտցած ըլլաս որ ծեծով կը մեռնիս»։

Ցուսահատելով ելայ ես գացի,
Գործ գտնեմ ըսի ըլլամ չուկացի,
«Խե՞նթ ես ծօ՛, տղայ, ո՞ւր է գործ հիմա»,
Ըսին պօռալով, «կորսուէ՛ գնա»։

Ճարըս հատնելով մտմտուքս առաւ,
Ի՞նչ պիտի ընեմ թէ ըլլամ չուտ պառաւ.
Օհ մինչև եաքը ես անգործ ձնամ,
Կարգուիմ ալ նէ խայտառակ կ'ըլլամ։

Ալ գլուխս ես ամէն դի զարկի,
Որ բարեկամ մը գտնեմ խելացի.
Սրճարան նստած երբ մտածէի,
Տեսայ «Միածան որ ինձ կը նայի։

Կարդալուս տակն բան մը աչքիս դպաւ,
Մէյ մ'ալ ի՞նչ տեսնեմ, Պարոն Վարդովեան
Սատրագրութեամբ մէկ յօդուած մը կար,
Դերասանութեան հրաւէր կը կարդար։

Կեցայ մէյ մը գլխս դիտեցի,
Այս պաշտօնին յարմարցուցի
Շուտով ելայ Թատրոն գացի
Որ քիչ մը տակ ճարեմ հացի։

638 Դեռ մանուկ էի, ծնողս ինձ

Դերասաններն երբ զիս տեսան,
Մէկ մէկու երես նայեցան.
«Ու սկի՞ց եկաւ այս չան տղան»,
Ըսելով զիս նախանձեցան:

Մէկէն ձեռքս մաս մը տուին,
«Կարդա՛ սա որ փորձենք» ըսին,
Ասդին անդին հրմրկեցին,
Զինքս գտայ վերայ բեմին:

Այս արհեստին մէջ մնացի,
Որ սորվիմ ըլլամ խելացի.
Սակ ճարեմ փարն հացի
Ամէն հովի բերան բացի:

Տասը տարի համբերեցի,
Հով կըլլելով համբաւ առի.
Սակի տեղ առատ համբաւ,
Ծափ կեցցէներ, ա՛լ բաւ է, բա՛ւ:

Բայց ես միտքս դրեր եմ որ,
Կանցնին օր մը ասոնք բոլոր,
Թատերասէր պարոնները
Քաջալերեն մեր ձեռնարկը:

Ս. ՊԷՆԿԼԵԱՆ



ԱՆԽԵԼՔ ՉՈՒՆ

ՁՇՄԱՐԻՏԸ ա՛հ պարոններ,
Գիշեր ցորեկ քունս եմ ծախեր.
Ինձի յարմար կին մը կ՛ուզեմ,
կը փնտռեմ ու չեմ գտներ։
Տարի մ՛է որ դուռ չի թողի,
Հարուստ աղքատ ամէն զարկի,
Որ աղջկան որ հաւնեցայ,
Մէկէն բերնիս չափը առի.
«Անխելք չունը անմտօրէն
Մաս կը յուսայ կարկանդակէն»։

Թէ որ տարիքս է պատճառը,
Նոր ալիսի կոխեմ վաթսունը,
Ի՞նչ անխելք են սա աղջիկներ,
Որ չեն ճանչնար եփուն մարդը.
Ա՛ս տարիքն է որ էրիկներ,
Լաւ կը ճանչնան կնկան յարգը,
Շատ կը սիրեն մ՛իւս կը սիրեն,
Բայց կիները տես ինչ կ՛ըսեն.
«Անխելք չունը անմտօրէն», ևն։

Ցոյս կտրած, ճարս հատած,
Կարգուելէն ալ վազ անցած,
Երբ յուսահատ տուն դառնայի,
Կը մտածեմ մէկը ինձի.
«Եղբայր, կըսէ, ի՞նչ ես եղեր,
Պէտք է պատմես ցաւդ ինձի.
Ա՛հ, բարեկամ, թող ղիս, կ՛ըսեմ,
Ցաւս մեծ է, ի՞նչպէս պատմեմ.
Աղջիկները ինձ չեն հաւնիր,
Կ՛ըսեն՝ ծերերը չեն սիրուիր»։

Ան որ լսեց բարեկամս,
Քիչ մը խնդաց, բռնեց ձեռքս.
Ըսաւ, «այս չատ դիւրին բան է,
Բայց լաւ բռնէ սա խրատս.

Արդի աղայք ինչ որ կ՛ընեն,
Նոյնը դուն ալ ըրէ մէկէն.
Կը յաջողիս կը կարգուիս,
Դա խօսքէն ալ չուտ կ՛ազատիս.
«Անխելք չունը անմտօրէն» ևն:

Օր մը ելայ Մահմուտ բաշա,
Ճաթ մը լաթով ես ճօվինա.
Ելայ գացի աղջիկ-տեսի,
Ալ ո՞վ չիտար աղջիկ ինծի.

Բայց բանթալօնս այնչափ նեղ էր,
Որ յառակը կը պատռտէր.
Ան ձայնին վրայ մայրը եկաւ,
Ականջս ի վար սա խօսքն ըսաւ.
«Անխելք չունը անմտօրէն», ևն:

Ուզեցի որ դէմքս ալ փոխեմ,
Կարմիր ներմակ լաւ մը ծեփեմ.
Լայն բանթալօնն մեծկակ բալթօն
Հագնիմ երթամ աղջիկ առնեմ:

Բայց ներկն այնչափ քսեր եմ որ,
Աղտօտեցի լաթերս բոլոր.
Աղջիկները զայս կը տեսնան,
Կը փսփսան, կըսեն, խնդան.
«Անխելք չունը», ևն:

Թեթև, հակիթ ըլլալ կուզեմ,
Որ աղջկանց աչքը մտնեմ·
Բառտօն, մէռսի, պօնժուռ, մամզէլ,
Քիչ մ՚ալ մանի, եանըխ կազէլ·

Զորս հինգ օրուան մէջ կը սորվիմ,
Որ սուարէները գտնուիմ,
Թշուառական բաղդս գէշ է,
Ամէն աղջիկ միշտ սա կ՚ըսէ·
«Անխելք շունը», են։

Ես վաղ անցայ կարգուելէն,
Բերանս երեցաւ կնիկներէն,
Ինչ որ ըրի չի յաջողեցաւ,
Ստակ տալով բանս բուսաւ·

Հիմա ձեզի ես կը խրատեմ,
Քանզի ձեզմէ փորձառու եմ·
Թէ որ կնիկ առնել կ՚ուզէք,
Սա խրատիս լաւ ուշ դրէք·

Հասակ պզտիկ,
Ունի՞ք հատիկ,
Կարգուեցէ՛ք,
Կուտան կնիկ։

Ս. ՊԷՆԿԼԵԱՆ



ԹԵԹԵՒՈՒԻԿ ՍԻՐԱՀԱՐԸ

ՓԱՅԼՈՒՆ աչքով, փոքր ոսքով
Կարմրուկ ալջիկ մը երբ տեսնեմ,
Չեմ դիմանար, մեծ փութով
Սիրաս անոր կը յայտնեմ.

Քաշուիլն ինչ է չեմ գիտեր,
Պատիւն ինչ է չեմ սեպեր,
Թէև ելլէ պիտ չախէ՝
Կ'ուզեմ զայն իսկոյն գրկել։

Ինջոյք, հարսնիք, անուան տօն,
Պարահանդէս կամ թատրոն,
Հրաւէրի չեմ նայիր,
Ներս կը նետուիմ «առանց հասօն»։

Քաշուիլն ի՛նչ է չեմ գիտեր,
Գավալիեռն ալ չեմ սեպեր,
Թէև հրէ ու մշէ՝
Կ'ուզեմ ձեռքը սղմռտել։

Գիշերները քուն չունիմ,
Փողոցները կը չրջիմ.
Կը քավռտիմ աղջկանց,
Ինծ կը նետեմ հեռուանց։

Քաշուիլն ինչ է չեմ գիտեր,
Պատիւն ինչ է չեմ սեպեր.
Թէև կիցով դուրս նետեն՝
Կ'ուզեմ զանոնք կամաուել։

Ամէն աղջկանց ծանօթ եմ,
Շաքար, փունջեր ղրկած եմ.
Ամենուն ալ նամակաւ,
Կեանքս զոհել ուխտած եմ։

Քաշուիլն ի՞նչ է, չեմ գիտեր,
Ծիպ ու ամօթ չեմ սեպեր.
Թէեւ երեսիս թքնեն՝
Կ'ուզեմ զանոնք համբուրել։

Դեռ անցեալ օր նոր հարս մը,
Որ էրկանն հետ պտըտէր,
Գացի ըսի կամաց մը,
«Ագուոր էրիկ չես առեր»։

Քաշուիլն ի՞նչ է չեմ գիտեր,
Մահըն ի՞նչ է չեմ սեպեր.
Ջի ամէն օր չարունակ,
Ես սովրած եմ ծեծ ուտել։

ԵՐԳ ԲԻԿՕԼԷԹԹԻ

Կին փոփոխամիտ է,
Ձայն վստահողը խենթ է.
Շատ անգամ կին մը
Հովին դէմ փետուր մը։

ՎԻԿԴՕՐ-ՀԻՒԿՕ



ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԵՐ

ԱԼ ՄՕՏ ՓԵՋԻ

Ալ մօտ ըլլամ, ով Տէ՛ր,
Ալ մօտ քեզի.
Թէեւ ճամբան ըլլայ
Դառն, յաւալի,
Միշտ ազօթեմ սիրտ,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:

Թէև թափառական,
Գիշեր ատեն
Մուխ տեղ քարի մը վրայ
Իմ գլուխս դնեմ,
Երազներուս մէջ, Տէր,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:

Սանդուխ մը հոն տեսնեմ
Գովէդ լեցած,
Անթիւ սուրբ հրեշտակներ
Վրան ալ կայնած,
Որ աչք ընեն ինծի.
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:

Գուշէս ելած ես քեզ
Պիտի գովեմ,
Ու դառն վշտէս Բեթէլ
Պիտի չինեմ,
Որ տառապանքներովս
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:

Երբոր ուրախ թեւով
Ես վեր թռչիմ,
Աստղէն ու արեւէն
Երբոր անցնիմ,
Հոգիս երգէ սիրտ,
Ալ մօտ ըլլամ քեզի,
Ալ մօտ քեզի:

ԿԱՐԵԻՈՐ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Հիսարհ եկայ, կ'ապրիմ,
Օրերս, տարիքս կ'անցնին.
Մտայ հոս յոյսերով,
Խորհիմ, գործեմ, խօսիմ.
Բայց ետքը ո՞ւր:

Հանիմ յաջողութեան,
Բարեաց և օրհնութեան,
Առատ վաստկութեան,
Գրեթէ դրախտի նման.
Բայց ետքը ո՞ւր:

Թէ չատ օրեր վայլեմ,
Առողջ կեանք ալ վարեմ,
Բայց վերջապէս կարճ է,
Ցաւեր պիտի գտնեմ,
Ես ետքը ո՞ւր:

Կ'ելլեմ ես այն ատեն
Ողորմութեան կեանքէն.
Ցոյս, փրկութիւն մէկէն
Կ'անցնին մահուան գալէն.
Իսկ ետքը ո՞ւր:

Ահեղ փողին ձայնէն
Ատեանն պիտի ելլեմ,
Ես մեծ դատաւորէն
Վճիռս պիտի լսեմ.
Բայց ետքը ո՞ւր:

Ա՛հ, ո՞ւր անկէ ետես,
Մեզ ո՞վ կրնայ պատմել.
Մէկը երկինք կ'ելլէ,
Իսկ միւսն դժոխք կ'իջնէ,
Ես յայնժամ ո՞ւր:

ԱՇԽԱՐՀ ԵԿԱՅ ԿԱՊՐԻՄ

ԱՅՍ աշխարհիս ունայնութիւն
Խաբեց, ո՜հ մեծ բազմութիւն.
Չըլլայ մենք ալ անով խաբուինք.
Հոս միայն քաղաք չունինք:

Ագահութեան չար ծնունդներ՝
Ատելութիւն նախանձ ու հեռ,
Մէկդի ձըգենք, հեռու փախչինք.
Հոս միայն քաղաք չունինք:

Ամէն ինչ որ շահինք հոս մենք,
Անով մարդոց բարիք ընենք.
Գանձ դիզելու թող չըզբաղինք.
Հոս միայն քաղաք չունինք:

Օ՜ն, ցնծումով դէպի երկինք
Քալենք, ան է մեր հայրենիք,
Թէ որ հաւատք ու սէր ունինք.
Հոս միայն քաղաք չունինք:

Բարի, խոհեմ ու գործունեայ
Կեանք մը վարենք, քանի լոյս կայ.
Երբ մահը գայ, հասնինք երկինք,
Հոս միայն քաղաք չունինք:

Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ



ՆՈՐ ՏԱՐԻ

Ա՛ՅՍ նոր տարուան սեմէն, Հայր իմ,
Ներս անցնելու կը վարանիմ.
Ամէն բան գոց, ծածուկ մթին,
եւ անծանօթ ինձ կը թըւին:

Լի թերութեամբ անցեալն անցաւ,
Ջոր լոկ յիշելն սրտիս տայ ցաւ,
Արագ արագ կ'անցնի ներկան,
Սարսափ կ'ազդէ մութ ապագան:

Տարուէ տարի եւս աւելի
Սիրտս կը գանամ չար, մեղաւոր.
Տըգէտ եմ ես, յիմար, անզօր,
Իսկ թշնամիս՝ խիստ զօրաւոր:

Ով հինաւուրց, անխախտ դու վէմ,
Հոգւոյդ քաղցրիկ ձայնն կը լսեմ
Թէ ինչպէս լոյսն քու երեսդ
Ցրուէ խաւարն, վանէ ի բաց:

Տկարն ի՞նչպէս կը զօրանայ՝
Եթէ սրտանց քեզի հաւատայ,
Եւ թէ օրէնքըդ միայուն
Կրնէ ազէտը խմաստուն:

Ուստի հայր իմ, բռնէ ձեռքէս,
Որ հետեւիմ ուր գիս ուղղես.
Հաստատ գիտնամ ոչ կեանք, ոչ մահ,
Ո՛չ հրեշտակներ, ոչ չարին ահ:

Ո՛չ չարչարանք, ո՛չ նեղութիւն,
Ո՛չ թշնամեաց իշխանութիւն,
Ո՛չ վախ, վտանգ, սիրելեաց սէր,
Ոչ ապառնի, ներկայ բաներ:

Ո՛չ բարձրութիւն, ոչ խորութիւն,
Եւ ոչ իրաց փոփոխութիւն,
Եւ ոչ երբէք մի արարած
Կարեն կորզել գիս քու ձեռաց:

ՏԻԿԻՆ ՀՌԻՓՍԻՄԻ ՇՄԱՒՈՆԵԱՆ

ԵՂՐԱՅՐՈՒԹԻՒՆ

Նղբայր ենք մենք, մէկ Հօր որդիք,
Զրկայ մեր մէջ մեծ կամ պզտիկ.
Մէկ ուսուցիչ ունինք՝ Յիսուս,
Մէկ մեր հաւատք և մէկ մեր յոյս:

Մէկ ճամբով կ'երթանք մէկ տուն,
Տուն լուսեղէն, յաւերժ սիրուն,
Ուր մահ կամ վախ չը կայ մեզի,
Ամէնքը հոն սիրով են լի:

Ի միասին հոն յաւիտեան
Պիտի բնակինք մենք համաձայն.
Ուստի սիրենք հոս մէկզմէկ,
Մէկ սիրտ ըլլանք և մէկ խորհուրդ:

Գ. Մ. ՇՄԱՒՈՆԵԱՆ

ԵՐԿՐ ՊԱՆԴԽՏԻՆ

"Home Sweet Home"-ի եղանակով

Թէեւ բնակիմ հոյակապ պալատներ,
Իսկ դուռ աննչան երկիր մըն ես կոչուեր,
Քաղցրիկ հայրենիք, հաճոյքներ երկնատուր
Բուսեալ են ի քեզ միմիայն, ոչ այլուր,

Իմ հայրենիք քաղցրիկ,
Նման քեզ վայր չիք,
Ո՛հ, նման քեզ վայր չիք:

Պանդուխտ մըն եմ հոս, ունայն է պերճութիւն,
Տուք ինծի հայրենի աղքատիկ հօրս տունն,
Զայն որ երգեցին թռչուններ իմ ձայնիս
Տային անվրդով և հանգիստ տաք սրտիս։

Իմ քաղցրիկ հայրենիք,
Նման քեզ վայր չիք,
Ո՛հ, նման քեզ վայր չիք։

Տխուր այս վայրէս կը տեսնեմ երբ լուսին,
Գիտեմ որ մայրիկս կը յիշէ իր որդին.
Նաև կը դիտէ այս լուսին մեր տունէն՝
Ինծի սիրելի դեղազարդ դաշտերէն։

Իմ քաղցրիկ հայրենիք,
Նման քեզ վայր չիք,
Ո՛հ, նման քեզ վայր չիք։

ՏԻԿ. Ս. Ս. ԲՐՈՒՏԵԱՆ



ԻՄ ՏԷՐՍ ԻՆՁ ԿԱՌԱՋՆՈՐԴԷ

Իմ Տէրս ինձ կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը գիս կ'ուղղէ.
Ուր որ ալ ըլլամ, ինչ որ ընեմ,
Առաջնորդող ձեռքն կը տեսնեմ։

Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը գիս կ'ուղղէ.
Ես աչակերտ միշտ գտնըւիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։

Թէ անապատը թափառիմ,
Կամ եղեմի չուքէն անցնիմ.
Լոյս կամ խաւար թէ գիս պատէ,
Դարձեալ Աստուած կ'առաջնորդէ։

Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը գիս կ'ուղղէ,
Ես աչակերտ միշտ գտնըւիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։

Տէր, ձեռդ ձեռքիս մէջ ես բռնեմ,
Այսուհետեւ չըը տրտընջեմ,
Գոհ եմ վիճակըս ինչ որ է,
Զի Տէրս ինձ կ'առաջնորդէ։

Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը գիս կ'ուղղէ,
Ես աչակերտ միշտ գտնըւիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։

Երբ հոս ընթացքս կատարեմ,
Շնորհքովդ երբ աչխարհիս յաղթեմ,
Մահուան ցուրտ գետն գիս չըը խռովէ.
Հոն ալ Տէրն ինձ կ'առաջնորդէ,

Կ'առաջնորդէ, կ'առաջնորդէ,
Իր սուրբ ձեռքովը գիս կ'ուղղէ.
Ես աչակերտ միշտ գտնըւիմ,
Եւ հետեւող հաւատարիմ։

ԻՋԻՐ, ԱՐՓԱՅ ՀՋՕՐ

Իջիր, արքայ հզօր,
Անունըդ փառաւոր
Տուր որ գովենք.

Ամենատէր եղող,
Ամէն տեղ միշտ յաղթող
Եղիր մեր վրայ տիրող.
Քեզ կ'աղաչենք:

Իջիր, Յիսուս Փրկիչ,
Եղիր մեզ պահպանիչ,
Մեզ միշտ օգնէ.

Քու օգնութիւնըդ մենք
Մեզի պարիսպ ընենք,
Քու վրադ մեր յոյսն դնենք
Տէր, մեզ լսէ:

Իջիր, ով սուրբ հոգի,
Եւ հիմա տուր մեզի
Վկայութիւն,

Թէ Տէրն մեզ կը սիրէ.
Մեր սիրտն առ, դուն սիրէ
Մի հեռանար մեզմէ,
Հոգի սիրուն:

Ով դու երրեակ և մի,
Մեծ գովութիւնք քեզի
Անդուլ արուին.

Քու փառքդ տուր որ մենք
Երկնից մէջ վայելենք,
Ու քեզ փառաբանենք,
Տէր երկնային:

ԼԱԼԸ ՉՓՐԿԵՐ ԶԻՍ

Լալը չփրկեր զիս.
Անդադար դառն արցունքներըս
Չեն կրնար սրբել մեղքերս
Ոչ հեռացնել վախերս.
Լալը չփրկեր զիս:

Տէր Յիսուս իմ տեղս մեռաւ.
Ինձ համար չարչարուեցաւ,
Զիս փնտռել յերկնից իջաւ.
Ինք պիտի փրկէ զիս:

Գործը չփրկեր զիս.
Անձնուրաց երախտիքներ,
Ձիգն ու ջանք ալ մարդասէր,
Բնաւ հոգիս չեն նորոգեր.
Գործը չփրկեր զիս:

Տէր Յիսուս իմ տեղս եւն:
Ոչ ալ ըսպասելը.
Ըսպասելն է մեռնիլ.
Ինձ չօգներ անյոյս պառկիլ
Արարչիս դէմ գանգատիլ,
Տէր Յիսուս իմ տեղս, եւն:

Կը փրկէ հաւատքը.
Աստուծոյ Որդւոյն նայիմ,
Եւ իր բազուկներն նետուիմ
Ալ անոր ապաւինիմ.
Տէր Յիսուս իմ տեղս, եւն:

ՆՆՋԵԼՔ ՅԱՆԴՈՒՆԴՍ

(Անգլ. Asleep in the Deep)

ԾՈՎՆ մրրկալից, գիշերն մութ է յոյժ,
Վէհ նաւ մ'ալեաց վրայ,
Յո՛ւշ, լուսատուն զանգակն հնչէ գոյժ,
Ահեղ անդունդն գոռայ:
Նաւայարկին մի զոյգ գերազանց,
Սիրտ սրտի կից որպէս ձեռք ձեռաց.
Մահն առընթեր, նէ անվեհեր,
Իր մօտն ունէր զոր անհունս սիրէր:

Կրկներգ

Զանգն հին բուրգէն բարձրագոչ կը հնչէ,
Ո՜հ, հէգ կենաց մեծ վտանգ գուշակէ.
Նաւո՛րդ, զգոյշ լեր, նաւորդ, զգոյշ լեր,
Մահն մօտ է քեզ, ո՜հ, զգո՛յշ լեր, զգո՛յշ լեր.
Զգո՛յշ լեր, զգո՛յշ լեր.
Բազում քաջ սիրտք են ննջեալք յանդունդս.
Արդ զգո՛յշ լեր, զգո՛յշ լեր:

Ի՞նչ լուր մրրկէն երբ անցաւ գիշերն,
Նշան կամ հետք չկա՜յ...
Սոսկ խորտակեալ նաւու բեկորներն,
Արեւն հանդարտ շողայ:
Մինչդեռ կատղած հողմերն դադրեցան,
Երկու սիրտք ընդ ծովն հանդարտեցան.
Ոչ եւս անջատ, վիշտէ ազատ,
Ի զուր վտանգ գոչէ զանգն անընդհատ:

Թարգմ. Ս. Պ. ԵԱԳՈՒՊԵԱՆ

ԴԷՄ ԸՈՒ ԴԷՄ

(Անգլ. «Face to Face»)

Ըր դիտեմ այժմ ո՛րքան չուտով
Պիտի հասնիմ ես Աննունին,
Ըր դիտեմ, ո՛հ, երբ այս աչքով
Պիտի տեսնեմ դուռն երկնային:

Բաբէ՛, հոգիս, այս է բարին,
Թող չուտ անցնին երթան օրերն,
Զի այս գիտեմ երբ հոն հասնիմ,
Պիտի տեսնեմ զինք դէմ առ դէմ:

Ո՛հ, պիտ՝ տեսնեմ զինք դէմ առ դէմ,
Պիտ՝ միանամ սիրելեացս հետ,
Ո՛հ, պիտ՝ տեսնեմ զինք դէմ առ դէմ,
Կեանքն վայելեմ Տիրոջն հետ:

Կեանքս է մէկ թիզ, կ՝անցնի կ՝երթայ,
Կը հետևի ձմրան գարուն,
Կենաց վայելքն կարճ ալ ըլլայ,
Վերջին յաղթողն է ցնծութիւն:

Դեռ մի քանի տարիներ ևս,
Հոգ չէ որչափ չուտ աւարտեմ,
Վստահ գիտեմ թէ իմ Տէրս
Պիտի տեսնեմ ես դէմ առ դէմ:

Ո՛հ, պիտ՝ տեսնեմ զինք դէմ առ դէմ,
Պիտ՝ միանամ սիրելեացս հետ,
Ո՛հ, պիտ՝ տեսնեմ զինք դէմ առ դէմ,
Կեանքն վայելեմ Տիրոջն հետ:

Թարգմ. Ս. Պ. ԵԱԳՈՒՊԵԱՆ



ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑԻ

ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

ԵՐԳ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՄԵԾԻ ՈՒՐԲԱԹՈՒ ԳԻՇԵՐԻՆ ԱԻԵՏԱՐԱՆԱՑՆ

Ա յսօր անճառ լուսոյն ծագումն ի փրկութեան մեր կատարումըն, խոնարհի ի վերնատունն ի ստուերական տօնից լրումն. նախ քան զընթրիսըն խորհըրդոյ սփածաւ զննջակ անկողն լուսոյ, և ջուր առեալ ծառայարար զտոքս լուանայր զաշակերտացն:

ԲԱՆԻՆ Հօր փառաց լուսոյ Պետրոս մերձիլ յոտս ոչ ներէր. այնըմ ձեռաց որոյ են գործք երկնից երկինք և երկրաւորք, որով կուրաց աչըք բացան, խուլք և համերք արձակեցան. որ վերածեաց պինք ի ծովէն, ոտատեաց ալեացն և լրեցին:

ԳԼԽՈՑՆ ընտրեալ հօտին փոքու ոտատէր զխորհուրդն ոչ գիտելոյ, որով զառնայր և հնազանդէր, զոտս և զգլուխս մաքրել մաղթէր. գլխոյս ասէ, չէ ինչ պիտոյ լուացումըն ջրոյ, զի լուացեալ է. ոտիցըդ պէտք են մաքրութեան, յօդիլ ի գլուխըս սըրբութեամբ:

ԴԱՍՈՒՑ իւրոց աշակերտաց զոր նախ բանիւ վարդապետեաց, այսօր գործով ըզծայրագոյնն եցոյց յինքեան գխոնարհութիւն, սպասաւորեալ հողեղինաց այն որ անառնն է հրեղինաց. տարեալ պաշտօն իւր ծառայիցն այն որ պաշտի ի սրովբէից:

ՍԹԷ ՏԷրս, ասէ, էից և վարդապետըս բոլորից, զաշակերտացդ և զծառայից զոտըս լուացի ի հնոյ ազոից, միմեանց և դուք համաբնութեամբ ցուցէք զնոյն խոնարհութիւն, բարձրացելոյն ի կործանումն և անկելոյ բնութեանդ կանգնումն:

ԶՈՐ մաքրեցիր յաւազանին մաքուր ձեռօք զոտըս նոցին, և ուսուցեր խոնարհութեամբ յազթող լինել չար հրպարտին, և գիմ լուա զտիղմըն մեղաց աղաչանօք սրբոյ գընդին. և զգնացս ուղղեա զոտին խոնարհութեամբ ելիւք յերկինս:

ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՈՂԲԵՐԳՈՒԹԻԻՆ ԱՆՁԻՆ ՋՂՋԱՅԵԼՈՅ ԵԻ ԲՈՂՈՔ
ԻԻՐԱՔԱՆՉԻՒՐՈՑ ԴԻՄԻ ԹՈՍՏՈՎԱՆԱԲԱՐ

ԱՇԽԱՐՀ ամենայն, առ իս նայեցեա՛լ, ախտակից լերո՛ւք: Բանամ զբերա՛ն. բարբառիմ լեզուա՛ս. բողոքեմ զանձնէս, Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛. Տէր ողորմեա՛:

ԳՈՂ եղէ մեղայ, զբտող կորատեան. գուբ ինձ փորեցի: Դաւեցի զանձն իմ. դաւաճանեցի. դարան գործեցի. Տէր ողորմեա. Տէր ողորմեա:

ԵՐԲԵՄՆ էի լոյս, և այժմ եմ խաւար, և ըստուեր մահու: Զի՞րդ պատմեցից, զթիւ մեղայ իմոց, զի բազում են յոյժ. Տէր ողորմեա:

ԷՐԿԻՆՔ և երկիր, եկայք ողբայէք, եղկելի զանձն իմ: Ընտրեցի ըզչարն. ընկալայ կամաւ, ըզհոյլըս մեղայ. Տէր ողորմեա:

ԹԱԹԱԻԻՄ տըղմով. թաւալիմ ի մեղըս. թոթաւփիլ չկարեմ. ժանտ ախտիւ լըցեալ, ժահահոտ եղէ, ժամանակս բաղումս. Տէր ողորմեա:

Ի ԲԱՑ մեկնեցայ, ի սուրբ խորհրդոց, ի բարեաց գործոց: Լաւ վարկաւ զանձն իմ, լուսոյն հեռանալ, լինիլ ընդ խաւար. Տէր ողորմեա:

ԽՈՐՀՈՒՐԴՔՔ չարին, խաբեն զհոգիս, խորասոյզ առնեն: Ծածկեն անդնդօք. ծիծաղին գլորմամբս. ծանակ զիս առնեն. Տէր ողորմեա:

ԿԱՄԱԻ կորացայ, կարկամեալ անձամբս, կանգնիլ ոչ կարեմ: Հուր մեղայ կիզող, հըրդեհեաց որ յիս, հոգևոր բարիս. Տէր ողորմեա:

ՁԱՂԿԵՑԱՑ մեղօք. ձաղեցին տեսողք. ձանձրացաւ հոգիս: Ղեկի դառնութեան, ղօղեալ ի սիրտ իմ, զամպար իմ չիջաւ. Տէր ողորմեա:

ՃԱՇԱԿՄԱՄԲ մեղաց, ճաշեցի ըղձմահ. ճոխս աղքատացայ: Մեռեալ եմ հոգւովս, մոլորեալ մտօքս, միայն կամ մարմնովս. Տէր ողորմեա:

ՅՈՐՈԳԱՅԹ մահու, յորսողին անկայ. յաղթեցայ յախտից: Նետից թշնամւոյն, նըշաւակ եղէ. միշտ նոր խոցոտիմ. Տէր ողորմեա:

ՇՈՒՐՋ պատեալ զինև, շունք բազումք եղեն. չարախին արեամբ: Որս եղէ չարին, ուռկանաւ մեղաց, որսացաւ զանձն իմ. Տէր ողորմեա:

ՉԱՐԱՉԱՐ վշտօք, չարչարի անձն իմ. չունիմ դադարումն: Պարտապան գըտայ պարտուց յանցանաց, պարտեալս ի մեղաց. Տէր ողորմեա:

ՋԱՆԱՄ զըղջանալ. ջեռանիմ դարձեալ. ջեռնում հրով մեղաց: Ռաբբի կոչեցայ. ռակայ անուանիմ, ռամկական վարուքս. Տէր ողորմեա:

ՍԻՐՈՎ ցանկութեան, սաստիկ բարկութեան, սիրտ իմ խոցեալ է: Վիրօք յանցանաց, վշտանայ հոգիս. վարանեալ շրջիմ. Տէր ողորմեա:

ՏԻՐԵՑԻՆ ինձ չարք. տարագիր հանին, տիրական գրկացն: Րաբունւոյ բարւոյ, րախճական ձայնին, րատինս ոչ լուայ. Տէր ողորմեա:

ՑԱՆԿՈՒԹԻՒՆ չարեաց, ցանկալի դիմօք. ցաւեցոյց զաչս իմ: Ւրաքանչիւրոց, ւիւսմամբ խուռն ախտից, ւիւծեալ է հոգիս. Տէր ողորմեա:

ՓՈՒԹԱՑԻՐ անձն իմ, փախչիլ ի չարեաց փափագիլ բարեաց: Քեզ միշտ մերձ ծանիր, քուն մահու եկեալ, քննող դատաւոր. Տէր ողորմեա:

Աստուածածնին բարեխօսութեամբ յիշեա Տէր, և ողորմեա:

ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՐԳ ԱՂՕԹԱԿԱՆ Ի ԴԻՄՍ ՍՐԲՈՑ ԵՐՐՈՐԴՈՒԹԵԱՆ

ԱՌԱՒՕՏ լուսոյ, արեգակն արդար, առ իս լոյս ծագեա: Բղխումն 'ի Հօրէ, բղխեա ի հոգւոյս, բան քեզ 'ի հաճոյս:

Գանձդ ողորմութեան, գանձիդ ծածկելոյ, գըտող զիս արա: Դուռն ողորմութեան, դաւանողիս բաց· դասեցո վերնոցն:

Երրեակ միութիւն, եղելոց խնամող, և ինձ ողորմեա: Զարթիր Տէր, յօգնել· զարթո զթմրեալս, զուարթնոց նըմանիլ:

Էդ Հայր անըսկիզբն, էակից Որդի, է միշտ սուրբ Հոգի: Ընկալ զիս գթած· ընկալ ողորմած· ընկալ մարդասէր:

Թագաւոր փառաց, թողութեանց տըւող· թող ինձ ըզյանցանս: Ժողովող բարեաց, ժողովեա և զիս, ժողովս անդրանկաց:

Ի քէն Տէր, հայցեմ, 'ի մարդասիրէդ, ինձ բըժըշկութիւն: Լեր կեանք մեռելոյս, լոյս խաւարելոյս լուծանող ցաւոյս:

Խորհըրդոց դիտող, խաւարիս շնորհեա, խորհուրդ լուսաւոր: Ծնունդ Հօր ծոցոյ, ծածկելոյս ըստուերաւ, ծագեա լոյս փառաց:

Կենարար Փրկիչ, կեցո ըզմեռեալս· կանգնեա զգլորեալս: Հաստեա հաւատով· հաստատեա յուսով· հիմնեցո սիրով:

Ձայնիս աղաչեմ· ձեռօքս պաղատիմ· ձիր բարեաց շնորհեա: Ղամբարամբ լուսոյ, ղեկավար ճարտար, ղօղեալս ամրացո:

Ճառագայթ փառաց, ճանապարհ ինձ ցոյց, ճեպել 'ի յերկինս: Միածին Հօր մոյծ զիս յառագաստ մաքուր հարսանեացդ:

Յորժամ գաս փառօք, յահագին աւուրն, յիշեա զիս Քրիստոս: Նորոգող հնութեանց, նորոգեա և զիս, Նորոգ զարդարեա:

Շնորհատու բարեաց, շնորհեա զքաւութիւն. շնորհեա զթողութիւն: Ուրախացո Տէր, ոգւոյս փրկութեամբ, որ վասն եմ 'ի սուգ:

Չար մշակողին, չար սերմանց նորին, չորացո զպտուղն: Պարգևիչ բարեաց, պարգևեա իմոյ, պարտեացս թողութիւն:

Ջուր շնորհեա աչացս, ջերմ հեղուլ զարտօսր, ջնջել ըզյանցանս: Ռետինդ քաղցու, ռամ հոգւոյս արբո. ռահ ցոյց ինձ լուսոյ:

Սէր անուն Յիսուս, սիրով քո ձմլեա, սիրտ իմ քարեղէն: Վասն զթութեան. վասն ողորմութեան, վերստին կեցո:

Տենչալւոյդ տեսլեամբ, տուր ինձ յագենալ, տէր Յիսուս Քրիստոս:

Րաբունդ երկնաւոր, րաբեա զաշակերտս, րամից երկնայնոց:

Ցօղ արեան քո Տէր, ցօղեա 'ի հոգիս. ցնծացէ անձն իմ: Ւիւծեալս մեղօք, ւիւծեալ աղաչեմ, ւիւսել ինձ բարիս:

Փրկիչ բոլորից, փութա զիս փրկել, փորձութեանց մեղաց: Քաւիչ յանցանաց, քաւեա զօրհնաբանս, քեզ երգել ըզփառս:

ԵՐԳ ԱՌԱՋՆՈՑ ԱՒՈՒՐ ՄԻԱՇԱԲԱԹԻՆ, ԵՒ Ի ԽՈՐՀՈՒՐԴ ԱՐԱՐՉՈՒԹԵԱՆՆ, ԵՒ Ի ՅԱՐՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ

ՆՈՐԱՍՏԵՂԾԵԱԼ բանն յանէից 'ի սկզբանէ զերկլինս երկնից, և զերկնային զօրս անմարմնոց իմանալեացըն զուարթնոց, և ըզգալի տարերց քառից հակառակաց միաբանից, որով յաւէտ փառաբանի Երրորդութիւնն անճառելի։

Երեքսրբեան մի տէրութիւն, միով բնութեամբ աստուածութիւն, լոյսն որ անեղ արարչական ասաց լինել լոյս եղական․ զոր և ծագեաց յօրն առաջին միաշաբաթ կիւրակէին, որով յաւէտ փառաբանի Երրորդութիւնն անճառելի։

Բարունօրէն բացատրեսցուք, զծածկեալ խորհուրդըն ծանիցուք․ զի լոյսն անտես իմանալի մաքուր հոգւոց տեսանելի, 'ի սոյն ծագեաց միաշաբաթ մեզ յարութեան սուրբ ճառագայթ․ եկայք փրկեալք ընդ զուարթնոյն տուք օրհնութիւն յարուցելոյն։

Սէրըդ սիրով խոնարհեցար, 'ի փրկութիւն մեր մարմնացար․ նովին մարմնովն խաչեցար, 'ի գերեզման մահու եդար․ այսօր յարեար աստուածաբար, 'ի հրեշտակաց քարոզեցար․ եկայք փըր։

Երեւեցար խնկաբերիցն յողջոյն կենացն ուրախալից․ և 'ի լերինըն Գալիլեա առաքելոց մետասանից․ արժանացո զմեզ ընդ նոսին զքեզ տեսանել յօրըն վերջին․ եկայք։

Սիոնի որդիք, զարթիք․ հարսին լուսոյ տուք աւետիք․ եթէ փեսայն քո յարուցեալ յաղթեաց մահու իշխանութեամբ․ գայ պըսակէ զքեզ փառօք․ ել ընդ առաջ պճնեալ զարդուք․ երգեա երգ նոր յարուցելոյն ննջեցելոց կենաց պըտղոյն։

ՔԱՐՈԶ ԾՆՆԴԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱԻԵՏԵԱՑ ԵՒ ՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԵՒ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ՛,

ՄԱՅՐ աստը, սքանչելի լուսոյն, որ զԱստուածն ամենայն յաւիտեանց յորովայնի քում կրեցեր և ցնծութիւն աշխարհի ծնար ըզբաբանըն Աստուած· աղաչեմք:

Մայր աստը, բարեխօսեա:

Աղաչեա վասն մեր զառ 'ի քէն ըզմարմնացեալն Աստուած, որ խոնարհեցաւ 'ի հայրական ծոցոյ· էառ մարմին մարդկային բնութեանս առնել խաղաղութիւն յերկինս և յերկրի աղաչեմք: Լուր Տէր և ողորմեա:

Աղաչեա վասն: Ներել մեզ անաես առնել զյանցանըս մեր, և տալ օգնականութիւն ընդդիմակաց լինել հակառակամարտից ի պատերազմի աղաչեմք:

Լուր տէր և ողորմեա:

Աղաչեա վասն: Զի լուեցին պատերազմունք· դադարեցին յարձակմունք թշնամեաց, անկեցի սէր և արդարութիւն 'ի յերկրի ալաչեմք: Լուր Տէր և ո:

Աղաչեա վասն մեր: Ամեցուցանել յերկրի մերում զքաղցր ըղխուճն աղբերաց, զառատ պտղաբերութիւն բուսոց և արնկոց, առ 'ի զուարճալի լինել ամենայն հարկաւոր պիտոյից մերոց· աղաչեմք: Լուր:

Աղաչեա: Զի միաբանեսցէ զեկեղեցի իւր աստը չինեալ 'ի վերայ հիման առաքելոց և մարգարէից· պահել անարատ մինչև յոր երեւելոյ գալստեան իւրոյ· աղաչեմք: Լուր Տէր և ողորմեա:

Աղաչեա վասն մեր արբունի, զմիածին քո զՈրդին և վասն հոգւոցն հանգուցելոց՝ ընդունիլ յարքայութիւնըն երկնից, և տալ մասն և բաժին ընդ աստըս ամենայն· աղաչեմք:

Ցիշեա Տէր և ողորմեա:

Եւ եւս առաւել կյորդորումն սիրոյ և զգործս բարեաց պարգեւել մեզ խնդրեմք:

Տուր մեզ Աստուած:

Զանձինս մեր և զմիմեանս տեառն Աստուծոյ ամենակալին յանձն արասցուք:

Քեզ Տեառնդ յանձն եղիցուք:

Ողորմեաց մեզ Տէր Աստուած մեր, ըստ մեծի ողորմութեան քում. աստացուք ամենեքեան միաբանութեամբ: Տէր ողորմեա. Տէր ողորմեա· լուր Տէր և ողորմեա:

ՏԱՐԱԾԵԱԼ ՁԵՌՔ ԸՆԴ ՁԵՌԱՑ

Տարածեալ ձեռք ընդ ձեռաց, ոտք ընդ ոտից ընթանալեաց. փայտ ընդ փայտի դառնալ պղտղոյ, կեանք ընդ մահու փոխարկելով. 'ի մէջ երկուց անօրինաց կայր մերկացեալ աստուղն օրինաց, զոր ոչ տեսին ազգքն կուրաց, բայց 'ի միոյն յաւազակաց:

Բոպէից արեգականն ըզտիւն արար գիշերանման. զբոտուերքն քօղ արկ մերկութեան, զի մի տեսցէ ակն անարժան. 'ի միջօրեային նըսեմացաւ, յորժամ Ադամ մեղօք մեռաւ. 'ի յինններորդ 'ի լոյս դարձաւ, յորժամ մահուամբ մահքն լուծաւ:

Ծողէր արտօսրը ցաւագին մայր Տեառքն որ կայր մերձ առ խաչին, յորժամ լըսէր ըզծարաւին բարբառելոյ իւր Միածնին. նաւն քացախ խառնեալ լեղի այնմ որ բըղխեաց գետ յաղենի. և 'ի վիմէն վըտակ բարի արբոյց տոհմին դառնացողի:

Ի ծեալ յերրորդ ժամու օձին ըզմխաս նախընդոյ մօրն Եւայի, ՚ի վեցն անկեալ մարդն առաջին հաւանական բանիւ նորին. ՚ի սոյն ժամու Տէրն ՚ի խաչին գի քաւեսցէ զմեղս նոցին. և յորժամ եւ Ադամըն հին, զաւազակն ՚ի մէջ դրախտին:

Փարելի բարբառ ընդ իմ էլի էլի առ Հայր գոչէր, զհոգին կամաւ Հօր աւանդէր, զհոգիս մարդկան նոյն ընծայէր, երկիր հիմամբք սասանեցաւ և վարագոյրն ընդ մէջ հերձաւ. վէմք ՚ի յինքեանց պատառեցան եւ գերեզմանք մահու բացան:

Քարոզի ՚ի սքանչելեացս Աստուած մարմնով վասն իմ խաչեալ. մերով բնութեամբս մեռանի, Աստուած անմահ խոստովանի. կըրկնավտակ կողին աղբերք եկեղեցի իւր հաստատի. ջրոյն մաքրի, զարիւնն ըմպէ, զՈրդի ընդ Հօր փառաւորէ:

Նորոգող տիեզերաց, որ զգեցուցեր մեզ լոյս փառաց, արկար ըզքեւ ՚ի զինուորաց քղամիդ կարմիր նախատանաց, մերկեա յինէն ըզքուրձ մեղաց ըզտրտմագինն արեամբ ներկած. և ըզգեցո զուրախալին ըզպատմուճանն իմ զառաջին:

Երկնաւոր Թագաւորիդ ՚ի ծուռն իջեալ խաղառնէին՝ծածկեալ ըզգլուխդ կըռփէին և եղեգամբ հարկանէին. և գիմ անկեալ մինչ ՚ի գետին ՚ի հնազանդել կամաց չարին, մի Թողուցուս խաղալ սովին, այլ կանգնեսցես գիս վերատին:

Բամեալ բոլորդ քո մարմին յետ վըճռոյ դատաւորին, սաստիկ էառ ըզհարուած գանին վասըն գանից նախատեղծին. գիս որ յոտից մինչև ցըգլուխ ցաւօք նեղիմ անհրնարին, առողջացո դարձեալ կըրկին, որպէս չնորհօք յաւազանին:

Սրբափայլ պճնեալ զարդուն զոր ըզգեցուցեր Ահարոնին, փոխան պսակ 'ի փշոց եդին մըշակք այգւոյն Իսրայելի· ըզփուշ մեղաց հանցես յինէն զոր յիս եհար իմ թշնամին. և ողջացո ըզխայթուած վէրին, զի սպիք մեղացըն ջընջեսցին:

Ետուն ըմպել քեզ ըզլեղին և ըզքացախն 'ի ծարաւին· արբեր կամաւ, զի քաղցրասցին ճաշակք պըտղոյն դառնագունին. ըզդառնութիւն թունաւորին զոր 'ի մասունս հոգւոյս արկին, հերքեա 'ի բաց հանդերձ սովին և քաղցրասցի սէր քո 'ի սմին:

Սաեղխեալ ծառոյ մահաբերին այնմ որ բուսաւ 'ի մէջ դրախտին, փոխան բարձեր ըզփայտ խաչին 'ի Գողգոթա հաներ տեղին. զիմ առ 'ի մեղս անկեալ զօգի և ծանրագոյն բարձող բեռին, բարձ 'ի յուսոյդ բառ ոչխարին. հան 'ի յերկինս յուխտեալ տեղին:

Ի յուրբաթու ժամ երրորդին բեւեռեցար Տէր, 'ի խաչին. լուծեր ըզկապանս նախաստեղծին և կապեցեր ըզթշնամին. զիս ամրացո ընդ հովանեաւ կենդանարար քո նըշանին. և 'ի ծագելն յարեւելից լուսաւորեա լուսով նորին:

Էրանեալ աւազակին բացեր ըզդուռըն Եդին դըրախտին. ըստ հաւատոյ սըրտի նորին կատարեցար ըզխընդրելին. առ և ինձ Տէր, ընդ նըմին լըսել ըզնոյն պատասխանին. այսօր ընդ իս լիցես յԵդին 'ի հայրենիս քո առաջին:

Բարբառելով զէլի էլին հիմունք երկրի սասանէին. և վարագոյր հին օրինին վերուստ 'ի վայր պատառէին. արդ ընդ վիմացն որ շարժէին, շարժեա

զանշարժ սիրտս 'ի բարին · ընդ պատուել փարագուբին զիմ պատառեա ըզգիր պարտին :

Արեգական լոյս փող արկեալ խաւարանայր միջօրէին, և գերեզմանք բանային, մարմինք սրբոցն յառնէին · ընդ խաւարել լուսաւորայցն մաքրեա յինէն զգործ խաւարին · ընդ մեռելոցն որք յառնէին, կանգնեա զմեզօք մեռեալ հոգիս :

Նոր սիրոյ պատուիրանին գործով լըցող եղեր բանին · աղօթելով առ Հայր յիրկին, թողուլ ըզմեղս որ 'ի խաչին · ինձ որ հոգւովս հաւատացեալ, երկըրպագեմ քեզ Միածին · թող ըզլուծումն հրամանին · մի յիշեսցին մեղքն առաջին :

Սարսեցին սանդարամետք 'ի յաւանդել առ Հայր զհոգիդ · որ 'ի դժոխս իջեր ներքին 'ի բանտ մահու և խաւարին · կապեալ զիշխանըն մահածին, հաներ զհոգիսն որ 'ի բանտին · և զիս հանցես Տէր, ընդ ձոցին բանտէ մեղաց աղջամղջին :



ԾՆՆԴԵԱՆ ԵՐԳ

Խորհուրդ մեծ եւ սքանչելի՛, որ յա՛յսմ աւուր յայտնեցաւ. հովիւքն երգեն ընդ հրեշտա՛կս, տան աւետիս աշխարհի: Ծնաւ նոր արքա՛յ ՚ի Բեթղեհէմ քաղաքի. որդի՛ք մարդկան օրհնեցէ՛ք, զի վա՛ն մեր մարմնացաւ: Անբաւելին երկնի եւ երկրի՛ ՚ի խանձարուրս պատեցաւ. ո՛չ մեկնեալ ՚ի հօրէ՛, ի սո՛ւրբ այրին բազմեցա՛ւ:

Այսօր ցնծան երկինք ՚ի վերո՛ւստ մեծա՛պայծառ աւետեօք, եւ արարածք ամենա՛յն զվեցա՛ն հանդերձ փրկութեա՛ն: Այսօր յայրին ընծայեցա՛ւ Քրիստո՛ս որդին Աստուծոյ, եւ հրեղինայ բազմութի՛ւնք երկնի՛ց յերկի՛ր վայր իջեա՛լ: Ի հօրէ ծագեցա՛ր լուսաւորել զ՛բարածս. Ա՛րդարութեան արեգակն Տէ՛ր վա՛ռք քե՛զ:

ՅԱԽԵԼՈՒԱԾ

ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ԱԼ ԱՑԼՈՒՂՍ

Աղջիկ

Ալ այլուղըս կորաւ ձեր դուռ,
Փոթոթել է սիրտս մըրմուռ,
Բաղդը լինձի գըցեց էս դուռ, ջանո՛, ջանի՛,
Սիրուն տղայ տուր այլուղըս:

Տղայ

Ալ այլուղըդ ես չը գըտայ,
Երգըւում եմ՝ Աստուած վըկայ.
Ով գըտել է՝ թող բերի տայ, ջանի՛օ, ջա՛նի.
Սիրուն աղջիկ, քո այլուղըդ:

Աղջիկ

Ալ այլուղըս եարս էր բաշխել,
Ալ աբըրչում չուրջը նաշխել,
Պատկերս վըրէն էր քաշել. ջա՛նիօ, ջա՛նի.
Սիրուն տղայ, տո՛ւր այլուղըս:

Տղայ

Քու վարմունքին ի՞նչ անուն տամ,
Քիչ է մնում որ անվերջ լամ.
Մօտըս լինի՝ բերեմ կուտամ, ջա՛նիօ, ջա՛նի.
Սիրուն աղջիկ քո այլուղըդ:

Աղջիկ

Ա՛խ ի՞նչ ասեմ իմ խարթ մօրըս,
Կամ ի՞նչ պատմեմ ադիլ հօրս.
Ծաբար կուտան չէկ եղբօրս, ջա՛նիօ, ջա՛նի
Տղա՛յ, տղա՛յ, տո՛ւր այլուղըս

Տղայ
Սէրըդ ինծ՚նէն վաղ է սառել,
Տըւած խօսքէդ ետ ես դառել,
Հաւատա՛ որ ես չեմ առել, ջա՛նիս, ջան։
Սիրուն աղջիկ քո այլուղըդ։

Աղջիկ
Մխիթարէդ կուտամ, այլուղըս բեր,
Դու ամէն օր կեր կաթի սէր,
Ինծի քարևրուն մի խըփեր, ջա՛նիս, ջան։
Անո՛ւշ տղայ տո՛ւր այլուղըս։

Տղայ
Սեւուկ աղջիկ, սիպտակ հագիր,
Առ այլուղըդ՝ վէրքս կապիր։
Սիրուդ գերի՝ ինձ մի տանջիր, ջա՛նիս, ջան։
Էրուած աղջիկ, ա՛ռ այլուղըդ։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԿԻԼԻԿԻԱ

Այգուն, այգուն իմ խըցկի մօտ,
Լուսաժըպիտ մինչ ցառուօտ,
Երգէ պըլպուլն իմ Սիսուվանայ՝
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։
Գարուն կուգայ, ծաղկունք փթթին,
Դաշտերու մէջ, ի ծոց հովտին,
Բայց պըլպուլիկն իմ դեռ ողբայ
Կիլիկիա՛, Կիլիկիա՛, Կիլիկիա՛։
Ախ այն վարդին կարմիր թերթեր,
Արեամբ նահնեայ են ներկուսեր,
Եւ այն ցօղեր որ կը կաթին,
Արիւնն են, արցունքն են Զաւակին։
Լո՛ւռ կաց, պըլպուլ, ա՛լ մի երգեր,
Մ՚ի նորոգեր մեր հին վիշտեր.
Լուռ կաց, քո տաղ վէրքեր բանայ՝
Կիլիկիա, Կիլիկի՛ա, Կիլիկիա՛։

ՊԱՐԵՐԳ

Տղան. Ա՛յ սիրուն աղջիկ,
Դրախտի ծաղիկ,
Դուրս արի, տեսնեմ՝
Տեսքիդ խելառն եմ:
Խումբը. Ջա՛ն Վարդավառ,
Վարդավառ,
Մեր դրռանը
Ոսկի ծառ:
Աղջիկը. Ա՛յ խելառ տըղայ,
Վարդերի վըրայ
Իսկի չե՞ս քընել,
Երազ չե՞ս տեսել:
Խումբը. Ջա՛ն Վարդավառ,
Վարդավառ,
Ոսկի բըլբուլ
Վարդին՝ թառ:
Տղան. Ա՛յ երազ-աղջիկ,
Դրրախտի ծաղիկ,
Մի պահ տուր ինձի,
Ծարաւ եմ քեզի:
Խումբը. Ջա՛ն Վարդավառ,
Վարդավառ,
Վարդ եմ քաղել
Քեզ համար:
Աղջիկը. Ա՛յ ծարաւ տըղայ,
Գիչեր լուսընկայ,
Բըլբուլի երգով
Ջե՞ս հարբել գինով:
Խումբը. Ջան Վարդավառ,
Վարդավառ,
Թէ տըղայ ես՝
Արի՛, տա՛ր...:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԻՄ ՉԻՆԱՐ ԵԱՐԸ

Արեւ թըռնելով ելաւ, իմ չինարի եարը,
Մեր բանը կըռուով ելաւ, Դարդիման եարը,
Թըչնամու որդին մեռնի, իմ չինարի եարը,
Իրա չար սըրտով ելաւ, Դարդիման եարը:
Իմ չինարի եարը, իմ չինարի եարը.
Իմ չինարի եարը, գովական եարը:

Ճըրագը վառայ, վառայ,
Հօր հետ վատամարդ գառայ,
Մէր ու աղբէր թող տուի,
Ես իմ սիրածի առայ:

Քարափի ծէրին կանչի,
Թող թըչնամին ամաչի.
Արեւիդ մեռնիմ, եար ջան,
Չինարի պէս կանանչի:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱՐԾԹԻ

Արծթի բարձր գեղ ա,
Լո, լոլո, լոլոլո, լոլոլո ջան
Ջուրը հիւանդին գեղ ա,
Լո, լոլո, լոլոլո, լոլոլո ջան,
Էս ի՞նչ անօրէն գեղ ա՛,
Լո, լոլո, լոլոլո, լոլոլո ջան,
Սիրածն սիրածին չեն տա,
Լո, լոլո, լոլոլո, լոլոլո ջան,
Ուզածն ուզածին չեն տա,
Լո, լոլո, լոլոլո, լոլոլո ջան,
Ջոբս կողմը կարմիր եղայ,
Լո լո լո, լո լո լո, լո լո լո ջան:

ԱՐՕՐ–ՏԱՏՐԱԿ

Արօրն ասաց տատրակ հաւքուն.
«Ինչի՞ կուլաս կուց կուց արուն,
Երթայ լըցուի բարակ առուն»:
Տատրակն ասաց արօր հաւքուն.
«Գընաց գարուն, եկաւ աշուն,
Կըտրաւ ջրիկ աղբիւրներուն,
Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն,
Կըտրաւ ձէնիկ կաքաւներուն.
Էնքան պիտի լամ երերուն,
Արիւն կաթէ իմ աչքերուն, —
Ես ի՞նչ անեմ իմ ձագերուն»:
Ասաց «Դու մի լա էս աշուն,
Չէ՞ վաղը կուգայ բարի գարուն,
Լոյս կը բացուի վեր աշխարհուն,
Դուռ կը բացուի խեղճիկներուն,
Ես քեզ կառնեմ իմ թեւքերուն,
Թրռնեմ բանձրիկ վեր ծառերուն,
Տանիմ հանեմ վեր սարերուն,
Բուն կը դնեմ մէջ քարերուն,
Տուն կը շինեմ մէջ գեագերուն,
Երթիկ բանամ դէմ հով քամուն,
Թոնիր թաղեմ մէջ այրերուն,
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն, —
Մեր ցաւ կուտանք հարաւ քամուն»:
Գընաց աշուն, եկաւ գարուն,
Երթար, լըցուեր բարակ առուն.
Կաթէր ջրիկ աղբիւրներուն,
Աղբրանց արիւն մէջ քարերուն,
Դեղին սուսուն վէր սարերուն,
Փունջ մանուշակ մէջ ձորերուն,
Կանանչ կարմիր գոյն գոյն ծաղկունք,
Դաշտերն ամէն էրանք, թըռչունք.
Ձէնիկ կուգայ գառնիկ, մաքուն, —
Մեր ապրելիք վեր Աստծուն:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Ի ՄԻՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ

Ահա հրեշտակ ոսկեփետուր
Թռուցեալ բարձուստ երկնաճէմ:
Հայոց բաղդին հեծեալ ի կառս
Բարձր գոչէ պուարթադէմ.
Հզօր պատգամ,
Ի վերուստ գամ,
ՄիուԹի՛ւն, Հա՛յք,
Եւ նոր ձեզ կեանք:
Տրոփեն այժգին ե՛ւ լանջք ե՛ւ սիրտք,
Ծաղայ արիւն ի թինդ ի թինդ.
Մեղր կաթէ սուրբ սէրն ի խինդ
Ցառաքինւոյ ի Հայու սիրտ:
Սիրասրբոք համբոյրք բղխեն,
Արտասուաթոր աչքունք ցօղեն,
Ա՛րի՛ք Հայկազունք,
Ի սէր փուԹասցուք.
Եռանդուն մատիք
Ի համբոյր հեղիկ:
Տուք համբոյր մի եւս,
Բացէք ըզձեր թեւս,
Տուք համբոյր մի եւս,
Սիրոյ է պարգեւս:
Կեցցե՛ն յաւերժ վեհ Հայկազունք,
ԱնմահուԹեան սիրուն սերունդք,
Կեցցէ յաւէրժ Հայկայ ոգին:
Մեզ են վկայ երկինք երկին:
Անկաւ պարիսպ ժանտ նախանձուն
Ոչ ի չանԹէ ահարկու
Այլ յակնարկի եւեթ սիրոյ
Վերստացեալ կենսատու,
Երկին երկիր
Կան ի հակճիռ
Ընդ Հայ ազգիս
Բիւր հրաշալիս.

Բացցին անդունդք սեաւ անյատակ,
Ծածկել զբաղդին հին յիշատակ.
Տիեզերաց բացցին մատեանք.
Անդէն գրոշմել Հայոց պարծանք:
Կեցցէն Հայոց սէր պանծալի,
Բերող փառաց նախանձելի:

ՀԱՅՐԵՆԻՔՍ ՀԵՌՈՒՆ

Ալիք սեւ Ծովուն տարին զիս հեռուն,
Սիրտս խոցոտած, դէմքս միշտ տխրած,
Աչերս մոլորուն, մտքով չատ հեռուն,
Հայրենեաց սիրով ազգային ոգւով.
Հոգիս զգայուն, հայրենիքս հեռուն,
Անդադար կ'ողբամ ես իմ վատ բաղդը,
Անիծեալ բաղդը նետեց չատ հեռուն,
Հոսանք հայերուս Հայկայ սերունդին,
Նետեց Պուլկարիայ Հայաստանն հեռուն,
Մենք հոս միշտ ազատ կ'օրհնենք Պուլկարիան,
Աւա՛ղ որ եղբարք դերի են հեռուն,
Վառնան հիւրընկալ Հայ գաղթականաց,
Հանդարտ կը ննջենք, երազենք հեռուն,
Հայաստանն աւեր Հայոց կոտորած,
Մեզ մահ կ'սպառնան թուրքերը հեռուն,
Ծանր չղթաներ ձեռքերն ու ոտքեր,
Հայ եղբայրներուս բանտերը հեռուն,
Երէկ մեծատուն այսօր ալ աղքատ:
Քանդի կողոպտեց վատ թուրքը հեռուն,
Զոհեցինք ազգին մեր սիրտ ու քսակ.
Չյուսահատինք դիմենք մենք հեռուն,
Ունինք բազուկներ, կորովի հանճար,
Անվհատ Հայեր գործող միշտ հեռուն,
Երէկ վաճառական, այսօր ներկարար.
Հոգ չէ վաղ կըլլանք ժէնէրալ հեռուն
Հայոց երկրի Հայ ազգի համար,
Օտար երկիրը ձգենք մենք հեռուն,
Երթանք հայրենիք, ըլլանք պարզ գինւոր:

Ց. ԲԱԳՐԱՏ

ԱՆԷԾՔ

Անէծք քեզ, անգութ, խրոխտ դաւաճան,
Շքեղ փառքերուդ հասցուցիր վախճան,
Դուն որ ամէնքէն կ'առնէիր վրէժ,
Հիմայ անդունդին ինկար գահավէժ:

Զարչարել տուիր ծեր, կին ու տղայ.
Քեզմով փճացան կեանքեր անխնայ.
Ոտքերդ ածեցիր, հանդարտ, անխռով՝
Նահատակներու սուրբ արիւնով:

Մի՞շտ վրդովեցիր կեանքերն ամէնուն,
Հա՛ցն ալ խլեցիր, համեցի՛ր արիւն,
Հողերն արգաւանդ ըրիր ցան ու ցիր,
Ու գայն արիւնով միայն ծածկեցիր:

Պիտի չը գանես մահուան մէջ խակ քուն,
Զըկա՛յ քեզ համար մեռելոց սուրբ տուն.
Անմեղներու վէհ արեամբ ոռոգուած՝
Պիտի մերժէ հողն խակ դիակդ՝ ի բաց:

Իսկ եթէ փորձեն գէթ ծուխդ յատակ
Սուզել կեղտ մարմինդ զազիր՝ խայտառակ՝
Պիտի փըրփըրի՛ն ծուխերն ու գոռա՛ն,
Երբ տեսնեն սեւ դէմքդ իրենց մէջ դաժան:

Ծովն իր խորքին մէջ ունի ոսկորներ
Նահատակներու քաջ հայրենասէր,
Այդ սուրբ նշխարներն անբիծ, անճնուրաց,
Գոռ պատգամներով ըրիր կեր ձկանց:

Մարմինդ, անգո՛ւթ, հողն ալ չուզեր,
Ո՛չ ալ ծովերու հանդարտ ծփանքներ.
Դուն տեղ մը չունիս աշխարհի վրայ,
Քանզի ամէն բան քեզմէ կը սոսկայ:

ՊԱՐ ՆԱԻԱՍՏԵԱՑ

Աշխոյժ նաւաստին,
Անվեհեր ճակտին՝
Ընդդէմ փոթորկին,
Երդէ անփոյթ զուարթ,
Լարիթ թիւմպէրլէյլէ, հա հա հա:

Կոհակք փրփրադէզ,
Ձեն առակում վախ մեզ.
Հոգմոնք սասթկահար,
Գրգռեն մեզ ի պար:
Լարիթ թիւմպէրլէյլէ, հա հա հա:

Օ՛ն, խաճնք զուարթ,
Գինին մինչ յառաջ.
Օ՛ն, գրկենք գիրար,
Պարենք անզադար:

Լարիթ թիւմպէրլէյլէ, հա հա հա:
Լռեցէ՛ք, դիտեցէ՛ք,
Մինչդեռ մենք հոս եկած ենք.
Ահա ծերն՝ իւր ուրքերն;
Հոս հոն չուտ՝ տանի վոյթ:
Ա՛յ, այ, այ, պիտ իյնայ,
Օ՛ն բռնենք՝ մեղք է մե՛ղք.
Հա՛ հա՛ հա կը խնդայ,

Հոս եկէք ամէնքս ալ ծափ զարնենք:
Զանգակն ուժգնապէրկ,
Կոչէ մեզ ի կարգ.
Վերջ տանք խնդութեան,
Քաչենք մեր պարան:
Լարիթ թիւմպէրլէյլէ, հա հա հա:

ՊԱՐԵՐԳ

Ալագեազ սարն ամպել ա,
Վայ՛ լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Աղբէր իր ձին թամբել ա:
Իմ մա՛յրիկ, ջան, իմ մայրիկ, ջա՛ն:

Աղբէր իր ձին թամբել ա,
Եարոջ դռնէն անցել ա:

Եարոջ դռնէն անցել ա:
Ելէ դաչտը խաղցել ա:

Ելէ դաչտը խաղցել ա:
Անձրեւ եկէ, թրջել ա:

Անձրեւ եկէ թրջել ա,
Արեւ գարկէ՝ չորցել ա:

Արեւ գարկէ՝ չորցել ա,
Քան կարմիր վարդ բացուել ա:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԱԼԱԳԵԱԶ ԷՋՄԻԱԾԻՆ

Ալագեազ բարձր տեղ ա, եար,
Ջուրը հիւանդին դեղ ա, եար,
Ես սիրեցի, վայ, խալխը տարաւ իմ սիրած եարը,
Թէ որ չառնեմ, վայ, ես կը մեռնեմ, իմ անուշ եարը:
Քեզի մեռնիմ Էջմիածին,
Աշատ անող Աստուածածին,
Նանէ, նանէ, նանէ, նանէ ջան:
Նանէ, նանէ, նանէ, նանէ ջան:
Նանու դարդեր սարերուվ է,
Էրուում եմ, վառուում եմ,
Չեմ գնա նանէ ջան,
Նանէ, նանէ ջան:

ԵՐԳ ՇՐՋԱՆՈՎ

Արեւն ըրաւ օրուան շրջան,
Ահա աստղերը կ'երեւնան.
Թռչնիկ գնաց որ հոն հանդչի,
Նոյնպէս եւ մենք, գիշեր բարի:

ՎԵՐՋԻՆ ՑՈՑՍ

Ալէտաձէ հոգւոյս միակ մխիթար,
Ծաղկիր վարդի պէս, փթթիր անդադար.
Օրօր իմ հոգեակ, թանկագին զաւակ,
Դու կեանքիս միակ հզօր աշտարակ:

Գալիս է գարուն, ծաղկում են դաշտերը,
Այրի մայրիկիդ չատանում վշտերը,
Օրօր իմ հոգեակ, թանկագին զաւակ,
Դու սիրոյս միայն անգին յիշատակ:

Արցունքից խաւրած՝ աչքերս են լալիս,
Երբ անցած օրերս իմ մխքս են գալիս.
Աչխատիր լինիս դու բարի պարծանք,
Դու հոգւոյս միակ բարի հրեշտակ:

Օրօր իմ հոգեակ, թանկագին զաւակ,
Հայրենի տանըդ արժանի ժառանգ.
Թէ մեռնիմ, հոգ չէ, եւ այն ժամանակ
Անթաղդ մայրիկդ յիշէ շարունակ:

Ա. ՓԻԼՕԵԱՆ

ՓԱՌՔ ՄԻՈՒԹԵԱՆ

Աւետի՛ս, Հայեր, ալ սուգը մեկդի,
Նոր արեւ ծագեց մեր ազգին վերեւ.
Հայութիւնն ամբողջ կուտայ ձեռք ձեռքի՝
Հայկական Միութեան դրօշին ներքեւ:

Հայե՛ր միանանք մէկ սիրտ մէկ հոգի՝
Ազգաշինութեան վսեմ գործին չուրջ.
Մոռնալով վէրքերն եւ ախն երէկի,
Ժամ է որ ըլլանք վաղուան աչալուրջ:

Հարուստ ու աղքատ, անուս թէ գիտուն,
Երթանք կանգնելու օճախը կործան,
Երթանք հիմնելու դրպրոց, գործատուն,
Երթանք մշակին տալ ցանք ու լծկան:

Եթէ ճիշտ է որ Միութիւնն է միայն,
Վերջին զօրութիւնն ազգիս քար ու քանդ,
Մէկ սիրտ մէկ հոգի փութանք Միութեան
Սուրբ Գործին բերել մեր ուխտն ու եռանդ:

Եւ դուն ալ մի՛ լար, թշուառ հայրենիք,
Քանզի հրաշքով Հայը միացաւ.
Քանզի վաղն ամէնքս՝ գոհ եւ երջանիկ՝
Միութեան փառքը պիտ՝ երգենք կարգաւ:

ՎԱՀԱՆ ՄԱԼԷԶԵԱՆ


A. F. C. W.



ՅԻՄԱՐՆ ԷՇԻՑ ԳԷՇ Է

Այն անցեալ գիշերն, տասնումէկ ժամին,
Պարզ էր եղանակն, փչում էր քամին.
Ցանկարծ սարսափելի ձայն եկաւ ականն,
Սիրտս դողաւ, գնաց աչքիցս քունն.
Ո՛չ փող էր, ո՛չ զուռնայ, ո՛չ թմբուկ, ո՛չ սազ.
Վախվըխելով կամաց վեր կացայ տեղէս,
Աչքերօք սա տեսի՞լք է, թէ՞ անտուտ երազ:
Կասես քար կայ կախած ամէն մէկ բեղէս.
Տեսայ դռան մէջին մին սեւ աւանակ,
Ականջներն գլած, կանգնել է մենակ:
Երբ որ ինձ տեսաւ, կրկին բղաւաւ,
Նորա դէչ ձայնիցըն գլուխս ցաւաւ.
Ձեռս ընկաւ մէկ մեծ երկաթէ չամփուր,
Այս անկանջ դոնադին որքան կարաս, տուր:
Իմ ձեռս նեղացաւ, ջանս թուլացաւ,
Նորա ձայնն քանի գնաց՝ գըլացաւ.
Աստ որդին մեռնի սկիզբ գնողիդ,
Աստուծ հօրն ողորմի անուն գնողիդ.
Լա՛ւ են անուանել քեզ. էչ ես որ էչ ես:
Անզգայ հայվան ես, գզուելի լէչ ես:
Ցայնժամ անբան էչն, իբրեւ բանական,
Ահա՛ տեսէք ինչպէս տուաւ պատասխան.

«Թէպէտ ինձ ասում ես՝ էշ ես. որ էշ ես,
Եթէ լաւ մտածես, ինձանից գէշ ես,
Ես չեմ փոփոխում իմ հայրենեաց վարքն,
Չեմ ընկնում մին ուրիշ հայվանաց շարքն,
Մեզի դուք բեռնում էք, խոտ էլ տալիս էք,
Եթէ որ կորչում ենք՝ ման էլ գալիս էք.
Մենք ձեր էշն ենք իլել, դուք տէրտէրների,
Մենք ժամանակաւոր, դուք միշտ էք գերի.
Նորանք գիշեր-ցերեկ ձեզ բեռնում են,
Ի տեղ խոտ տալոյ՝ փող էլ առնում են.
Ո՛չ ձեզի քորում են, ո՛չ ջուր են տալիս,
Եթէ կորչում էք՝ ման էլ չեն գալիս.
Ինչ որ աշխատում էք, նորանց փորումն է,
Երբէք չի երեւիլ, անտակ հորումն է.
Տուններդ քանդուել ա, դուք չէք հասկանում,
Մենք անբան էշ գոլով՝ ձեզ ծաղր ենք անում:
Հինգ նաւակատիկն անում է պաշտում,
Ամէնէն մէկ մանէթ չառած չի հաշտում.
Եթէ որ պատահաւ, մատոյց պատարագ,
Տանից պակաս մի՛ տալ, կանես սրտաճագ,
Ծնվելիս՝ տու՛ր, կնքվելիս՝ տո՛ւր, քաշվի ջուր,
Փոքր տաս՝ կանիծի, տունդ կընկնի հուր.
Տօն օր է՝ տո՛ւր, պաս է՝ տո՛ւր, մեռաւ՝ տո՛ւր,
Որտեղ տեսնես ոսկով զուգված մին տիկին՝
Իմացիր որ կու լինի նա տէրտէրակին:
Եթէ քարող ուզար՝ նա անպատրաստ է,
Եթէ մէկ մարդ մեռաւ գործին զգաստ է:
Ոչ թէ քահանայքն ամէնքն են այդպէս,
Շատ կան սուրբ քահանայք Աստուծոյ տնտես.
Ամենայն մարդ պիտի խօսալ տեսածըն,
Ածական է խօսողներից լսածըն:
Ահա՛, տեսա՛ր, ո՛վ մարդ, որ դու ես էշն,
Քեզանից խելօք են եզն ու գոմէշն.
Կայսր Սողոմոնից մնաց մին նզովք,
Յորժամ որ նա արար անբանից ժողովք,
Մեր ազգն արզ արին, ասան շատ լաւ ենք,
Ափսո՛ս, անասնոց մէջն ողջից սակաւ ենք.

Սողոմօնն նորանց տուաւ պատասխան,
Ասաւ՝ ահա ձեզից յայտնեմ խելօք բան.
Ձեր ազգն ստեղծուած է երկու տեսակի —
Մին տեսակն չունի պոչն քամակի.
Դուք չորս ոտանից էք, ականջներդ ձիգ,
Նորանք երկու ոտով ման են զալիս դիզ.
Նորանք մարդակերպ են, մարդկանց հետ խառն,
Բայց նոցա վիճակն անչափ է դառն:
Զուխէն թէ փալանն՝ երկուսն էլ չոր է,
Մարդումն մարդկութիւն միչտ հարկաւոր է.
Մենք մեր հայրենական լեզուաւն ենք զրում,
Բայց դուք ձեր հայրենեաց լեզուն էք ծռում.
Շատ կան ձեր միջումն մարդիկ միրքաւոր,
Իրանք հայ են, սիրեն խօսալ թուրքաւոր.
Նա այնպէս է կարծում մարդ է, կամ հայ է,
Այնպէս մարդն պակաս, ո՛չ թէ մեր թայ է.
Եթէ մին պատասխան ունես, տո՛ւր, ով մարդ,
Եթէ չունես՝ կասեմ. չօռ ու ցաւ ու դարդ»:
Էշն ո՛չ խօսող է, ո՛չ մարդ խրատող,
Բայց իմացէ՛ք, մարդ չէ՛ ամէն հայ ուսող:
Ինչ մարդ ի մանկութեան չառաւ ուսումն,
Ծեր վախտին կու տեսնէք քեանդիր ուսումն.
Եթէ արջ պարացնողն արջից դիտուն է՝
Ինչո՞ւ մարդավարի մին արհեստ չունէ.
Ինչ աչակերտ որ միչտ կարդալից փախաւ՝
Զափահաս դառնալուց չամփալուդ ծախաւ.
կարող եմ մարդ ասել ես իմ Մայիֆին,
Անօգուտ իշխանաց թող կալնի քէֆին:
Զա՛րկեար, դու էլ եթէ ուսեալ լինէիր՝
Հոգիդ չէիր ծախիլ, մարմին դնէիր.
Հիմիկ դու իլար այն մօլլին նմանող,
Ինքդ այն բանն անող, այլոց խրատող.
Քառասունից մօտ ես, մինչի գայժմ, Զա՛րկեար,
Կայքդ է մէկ չաքուճ, մէկ փոքս, մէկ փարկեար:

ԱԲՐԱՀԱՄ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳՆԱ, ԳՆԱ, ՀԵՏԻԴ ԵՄ

Գնա՛, գնա՛, հետիդ եմ,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սարիցո՛, եար ջան,
Նարիցո՛, եար ջան,
Կարմիր խնձոր դուտիդ եմ,
Հա՛, եարիցո, եար ջան,
Սարիցո, եար ջան:
Դուռ ինձ էատիդ չես թողնի,
Որտեղ երթաս մօտիդ եմ:
Ապարանը քարուտ ա,
Ջարի տակն արօտ ա,
Ուղիղ եօթը տարի ա,
Ջոյրն աղբօրը կարօտ ա:
Եար եմ գըտել՝ նարի պէս,
Ընկոզենի ծառի պէս,
Ուր որ երթայ կայնել եմ,
Ին մեր սիրուն սարի պէս:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳԱՅՔՔ ՏԵՍՔՔ

Գացէ՛ք, տեսէ՛ք ո՞վ է կերել զէծ,
Գացին տեսան զէլն է կերել զէծ,
Զէլն ըզիծուն, էծն ըզտկուն, տիկ զարեւոն,
Հալալ կէրմօ, հալալ է հալալ է ջան հալալ է,
Էս ի՞նչ քեաֆուր զարու հասանք հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ատացանք հալալ է.
Դէ՛ գնա՛ կիդամ, զէ՛ գնա՛ կիդամ չուտ կիդամ,
Կարմիր ասլանս հազնիմ իդամ, չուտ կիդամ:
Գացէք տեսէք ո՞վ է կերել զդէլ.
Գացին տեսան արջն է կերել զդէլ,
Արջն զգիլուն, զէլն ըզիծուն, էծն զտիկուն, տիկ զարեւոն,
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ, հալալ է,
Էս ի՞նչ քեաֆուր զարու հասանք հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ատացանք հալալ է:
Նազ մի՛ աներ, նազ մի՛ աներ նազ ազջիկ:
Մինթանովդ թող մի՛ հաներ, չան ազջիկ:
Նազ կու էնէմ կու, նազ կու էնէմ կու,
Նազ կու էնէմ, նազ կու էնէմ, չան տղայ,
Մինթանովս թող կու էնէմ, չան տղայ,
Ախօրտի՛կ, խօրտի՛կ, խօրտիկ մօրտիկ իմ եարն է:
Գացէ՛ք տեսէ՛ք ո՞վ է կերել զարջ,
Գացին տեսան առիւծն է կերել զարջ,
Առիւծն զարջուն, արջն զգիլուն, զէլն զիծուն,
էծն զտիկուն, տիկ զարեւոն,
Հալալ է կրմօ, հալալ է, հալալ է ջամօ, հալալ է,
Էս ի՞նչ քեաֆուր զարու հասանք, հալալ է,
Էս ի՞նչ խըտար կրմօ ատացանք, հալալ է:
Ծառը ես եմ, բարը դու ես, Աննա ջան,
Սըրտով սիրած եարս դու ես Աննա ջան.
Ծառը դու չես, դու, ծառը դու չես, դու,
Ծառը դու չես, ծառը դու չես, չան տղայ:
Սըրտով սիրած եարս դու չես, չան տղայ:
Ախօրտիկ, խօրտիկ, խօրտիկ մօրտիկ իմ եարն է,
Գրիգորն իմ, Գրիգորն իմ, ձեր մայլեցի Գրիգորն իմ . . . :

ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅԻ

Ես սարէն կուգայի՝
Դուն դուռը բացիր,
Ձեռդ ծոցդ տարար՝
Ա՛խ արիր, լացիր։

Վա՛յ, վա՛յ, վա՛յ, վառւում եմ,
Վա՛յ, վա՛յ, վա՛յ, հալւում եմ,
Հալւում եմ, վառւում եմ։

Ես մի պինդ պաղ էի՝
Դու մբռմռւռ լացիր.
Ջո հրեղէն արցունքով
Ինձի հալեցիր։

Ես մի չոր ծառ էի՝
Դու գարնան արեւ,
Ջո սիրով ծաղկեցաւ
Իմ ճիւղն ու տերեւ։

Թէ ինձ չէիր առնի՝
Ինչո՞ւ սիրեցիր.
Մի բաւռ կըրակ եղար՝
Սիրտս էրեցիր։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԵՍ ՉԵՄ ՍԻՐԵՐ

Ես չեմ սիրեր, ոչ արեւ, լոյս,
Ոչ ալ ծիծաղկոտ առաւօտ,
Տրտում հոգիիս էբբեւ յոյս
Ես լոկ կը պահեմ մի կարօտ,

Եւ այդ կարօտը ահ երբէք
Պիտի չբռնեմ ես օտարին,
Քանի որ աչխարհն ահաբեկ
Կը քնանայ լուռ տրտմագին,
Կը քնանայ լուռ
Կը քնանայ լուռ,
Այս մեր աչխարհն ահաբեկ,
Կը քնանայ լուռ տրտմագին:
Անոր համար ես իմ պահած
Կարօտ եմ անգին սիրական,
Երգեմ այս երգը տխրամած՝
Որ քնացածներն արթննան,
Որ գայ արշալոյս ու յորեկ,
Եւ խաւարին հետ ա՛ի ընդ միչտ
Դառնամ ու երգեմ ահաբեկ՝
Սուգ, ցաւ, տրտմութիւնք, բոլոր վիչտք.
Կը քնանայ լուռ,
Կը քնանայ լուռ,
Այս մեր աչխարհն ահաբեկ
Կը քնանայ լուռ, տրտմագին, տրտմագին . . .

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԻՂՁԸ

Երբ որ մենք մեծնանք,
Պէխեր ունենանք,
Պիտի ուզենք որ
Ընեն մեզ պինուոր:
Ըլլալ անվեհեր,
Պահել մեր կարգեր,
Այժմէն պիտ՝ սորվինք
Որ լաւ մը կռուինք:
Հրացան ուսին,
Թուրը մեր մէջքին,
Խրոխտ քայլերով
Պիտ՝ քալենք սիրով:
Մենք պիտի բաղձանք
Որ մերին պարծանք
Ըլլայ յաղթութիւն
Եւ ոչ պարտութիւն:

ԵՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է

Երկինքն ամպել է,
Ինչ անուշ թոն է.
Գամ դրանէն անցնեմ,
Հոգեակըս հոն է:

Երկինքն ամպել է,
Գետինը թաց է.
Եարս քընել է,
Երեսը բաց է:

Երկինքն ամպել է,
Ի՛նչ անուշ երակ.
Սըրտիս մէջ լըցաւ
Մի բուռը կրակ:

Երկինքն ամպել է,
Գետինը չաղերով,
Ես քեզ սիրել եմ
Անուշ խաղերով:

Երկինքն ամպել է,
Գետինը մութ է,
Ես քեզ ուզել եմ,
Թող ասեն աուտ է:

Շորսը, դու, չէկիկ եար,
Տեսնեմ՝ դու ումն ես.
Իրաւ եմ ասում՝
Դու իմ սըրտումն ես:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



Էս գիշեր լուսնակ գիշեր,
Վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Ջիւնն եկեր, գետին նաչխեր,

Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ.
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ
Աչքըդ դէմ արա պաչեմ,
Վա՛յ լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,

Կեռ ունքեր, կարմիր թըշեր,
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ,
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ:

Ա՛յ գիշեր, դարձի՛ր տարի,
Հացըս թող լինի գարի,
Մինակ եարըս ինձ համար
Սրտով խօսքը կատարի:

Աղջի, քու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կը պահանջեմ.
Դու իմ խօսքին ականջ դիր,
Ես մօրըդ հաւան կ'անեմ:

ԵՐԻ, ԵՐԻ ՋԱՆ

Էս գիշեր լուսը տեսայ,
Երի, երի, երի ջան,
Իմ եարը դուրսը տեսայ.
Երի, մարալո ջէյրան.
Ելել էր ուխտն էր գալի,
Երի, երի, երի ջան.
Հրացանը ուսը տեսայ:
Երի, մարալո ջէյրան.

Արեւ էր ամպի տակին,
Սուրբ Յակոբ ճամբի տակին,
Մի էնպէս աղբէր ունեմ,
Հրեղէն ձին թամբի տակին:

Արեւը սարի վերայ,
Մամուռը քարի վերայ,
Ես ոսկի սարք պիտէի,
Իմ սիրած եարի վերայ:

Հէն, սարէն մարդ ա գալի,
Մարը կրակ ա տալի.
Առաջըս աղուխ բացաւ,
Իմացայ վարդ ա տալի:

ՉԱՒԱՀՔԻ ԴՈՒՍՏՐԸ

Էն տեսակ կին
Ես իմ հոգին
Թէ աչուդն էլ ունենար՝
Առանց զէնքի,
Առանց զօրքի
Շահերի դէմ կը գընար:
Սիրոյ հրնոց,
Կրակ ու բոց,
Էնպէս աչեր թէ ժըպտան՝

Մարդու համար
Օրուայ պէս վառ
Գիշերները լոյս կը տան։

Վարդի թերթեր
Ինպէս չուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն՝
Էլ քեզ ո՛չ Շահ,
Ոչ ահ ու մահ,
Ո՛չ ղէնք ու զօրք կը յաղթեն։

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ



ԵՐԵՒԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՌԵԼ

Երեւան բաղ եմ առել.
Ջան արեւ, արեւ աղբէրըս.
Հոգիս մատաղ եմ արել,
Իմ արեւ, արեւ աղբէրըս.
Լալըս ծիծաղ եմ արել,
Ջան արեւ, արեւ աղբէրըս.
Էլի բարեկամի մօտ,
Իմ արեւ, արեւ աղբէրըս։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ԽՈՍՐՈՎԻԹՈՒՀԻ

ՀԱՅ ՀԵՂԻՆԱԿԻ ԱՂՕԹՔԸ

Աստուա՛ծ, չեմ խնդրում քեզնից դափնիներ,
Ձառեր, յօբելեան, ուղերձ, հեռագիր,
Փառաւոր թաղում, մահից յետոյ սէր —
Այդ ողջն ինձ կը տայ հայրենի երկիր . . .

Մի բան է խնդիրքս, ո՛վ Տէր երկնաւոր,
(Այդ բանն ինձ ազգըս երբէ՛ք չի տալու).
Տո՛ւր ինձ կտոր հաց, կամ այնպէս չընորհ,
Որ կարողանամ օդով ապրելու . . .

ԱԼԵՔՍ. ՇԱՏՈՒՐԵԱՆ

ՄԸՅՒՍ ՄԻԿ

Յառա՛ջ, ընկերնե՛ր, կազմենք միութիւն,
Մեզ ի սպաս դրած մեր կամքն աննկուն,
Մէկ սիրտ, մէկ հոգի ցնծալով կոչենք՝
Կեցցեն պրօլէդարք, կեցցէ Մայիս մէկ:

Ցոյց տանք, ընկերներ, համայն մարդկութեան
Թէ չէ մեր տէրը անխիղճ պուրժուազիան,
Թէ հալալ վաստակ, ազատ կեանք կ'ուզենք,
Կեցցե՛ն բրօլէտարք, կեցցէ՛ ՄԱՅԻՍ ՄԻԿ:

Պէտք է վերջ գտնէ մեր դառն տանջանք,
Մենք կը պահանջենք ութ ժամ աշխատանք,
Արդ ժամ է, ընկե՛րք, սրտագին կոչենք՝
Կեցցե՛ն բրօլէտարք. կեցցէ՛ ՄԱՅԻՍ ՄԻԿ:

Զայն տանք, ընկերնե՛ր, սրտի աշխարհին,
Թէ պէտք է վերջ տալ պատերազմներին,
Թէ ծագմամբ տարբեր, ողջ եղբայր ենք մենք,
Կեցցեն բրօլէտարք, կեցցէ ՄԱՅԻՍ ՄԻԿ . . .

ՊԵՏՐՈՍ ՏԷՐ ՄԻՆԱՍԵԱՆ

ԻՄ ՀԱՅ ԵՂԲՕՐԸ

Թէ միտք ունես քո կոչումը մեծարել,
Քո մարդկային պարտքը սիրով կատարել,—
Ի՞նչ գեղեցիկ, թէ քո չալիով, հա՛յ եղբայր,
Ջանաս ազնիւ գործքերով քեզ զարդարել:

Եւ որպէս մարդ ազնիւ, անբիծ, պիտանի,
Դու մարդկութեան պիտի լինիս ընտանի.
Ընկած տեղը օգնես մարդին անխտիր,
Ի՛նչ ազգութեան, ի՛նչ կրօնի պատկանի:

Հարկաւ, դիտես, այս օրէնքը բնական.
«Սիրել մարդին», դա էր պատուէր Տիրական.
Բայց թէ թողնես քո ընտանին անխնամ՝
Չեմ անուանել քեզ մարդ խոհեմ, բանական:

Քո ընտանիք — քո Հայ ազգն է, իմացի՛ր,
Ամէնից շատ նորան օգնել մտածի՛ր,—
Որովհետեւ՝ նա քեզ ծնաւ, կեա՛նք տուեց,
Դու էլ նորա պատիւը մի՛ մոռացիր:

Ոչ թէ պատիւ, անգամ գոյքդ թանկագին,
Կորած չէ, թէ դու նուիրես քո ազգին.
Հայրենիքիդ, ազգիդ համար, թէ լինի,
Կեա՛նքդ զոհիր, ինչպէս Վարդան, Գարեգին:

Ով եւ լինիս . . . թէկուզ ընտրեալ Ազգապետ,
Գլխից սկսեալ՝ մինչ գերընտիր Հայրապետ, —
Վաճառական, արհեստաւոր, երկրագործ,
Ազգիդ գործում պիտի լինիս կարապետ:

Ինչպէս Նէեմ հայրենասէր, մխրան
Կը նորոգէր այն աւերակ Երէսաստան,—
Դո՛ւ էլ, եղբա՛յր, դարձի՛ր նոյնպէս մի Նէեմ,
Թո՛ղ քեզանով վերածի մայր Հայաստան:

ՅՈՎ. ՔՈՒՉՈՒԲԷԳԵԱՆՑ

ԹՈՒԱԻ ՔԱՋԸ

(Հնչակ· «Արծիւ» խմբի խմբապետ հայ Բաբգէնին)

Թռաւ քաջը ամպերի մէջ դէպի հայրենիք սլացաւ,
Ազատութեան ոգնչով այրուած, մարտի վայրը նետուեցաւ
Պայծառ աստղեր խոնարհեցան դիմաւորել հերոսին,
Ողջունեցին հսկայական վեհ թռիչքը Բաբգէնին:

Ինչպէս ովկեան ալեկոծուած, որպէս առիւծ վշտահար,
Նա դուրս ցատքեց գերթ փոթորիկ մռնչալով քաջաբար:
Սէրը սրտում, սուրը ձեռքում, հաւատարիմ իւր ուխտին,
Երկնից դունդ դունդ հրեշտակներ խնկարկեցին Բաբգէնին:

Մաղափթիթ անտառներում թող ճռուողեն թռչնակները,
Գովեն, զգուեն քաջ Բաբգէնին՝ հետ իր խմբին անձնուէր.
Որ ղէմ դրեց ժայռի նման, կուրծքը տուած թշնամուն,
Վայրկենապէս կրակ թափեց վրանները վատերուն

Արծուաց երամք զմայլեցան, գետն ընթացքը մարմանդեց,
Երբ հերոսը «Արդարութիւն» գոռաց եւ սուրը չարժեց.
Նա որոտաց ամպի նման իւր անվեհեր քաջերին՝
«Աբի՛ւն, վրէ՛ժ բռնակալին, Ազատութի՛ւն թշուառին»:

ՋԻՆՈՒՈՐԻՆ ԵՐԳԸ

Թռի՛ր իմ նժոյգ, սլացի՛ր շուտով,
Տար ինձ ցանկալի կռուի փոթորիկ,
Կուի մէջ մխայն ես արեան գնով
Կը փրկեմ իմ խեղճ, տարուկ հայրենիք:

Պանծալի վայրը իմ քաջ պապերի,
Տար ինձ այն աչխարհ՝ անցեալում հզօր,
Ուր աւա՛ղ, դժբաղդ եղբայրս այսօր
Իւր կեանքն է ողբում ոտաբին գերի . . .

Անցան շատ դարեր, անցան շատ տարիք,
Ազգս շատ ապրեց քաղցրիկ յոյսերով,
Բայց նորան երբէք չը ժպտաց երկինք,
Չը տեսաւ նա կեանք խաղաղ, անվրդով:

Միշտ լուռ ու խոնարհ անողորմ բաղդին,
Երկար սպասեց նա կեանքի դարնան.
Բայց նրա առջեւ ոտից թշնամին
Իւր սրով փորեց կեանքի գերեզման . . . :

Դեհ, թռիր, նժոյգ, սլացիր շուտով,
Տար ինձ ցանկալի մարտի փոթորիկ,
Մարտումն է գինուորն իր արեան գնով
Ազգին պարգեւում յաղթութեան դափնիք:

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ԱՐԾՈՒԻ ՍԷՐԸ

Ժէռ քարափին արծիւ նըստաւ,
Արծիւ նըստաւ ու երգեց.
Զորի միջին աղջիկ տեսաւ,
Նըչխուն տեսքէն զարնըւեց:

—«Հէ՛յ, ջա՛ն աղջիկ, մարալ աղջիկ,
Ախտո՛ս, թըռչիլ չը գիտես,
Էդ ծմակում լրիկ–մրնջիկ
Պիտի Թօչնես ծաղկի պէս:

Թէ թռչէիր — իմ ժայռերէն
Քեզ Թագուհի կ'ընտրէի,
Քուն զար աչքիդ՝ իմ Թեւերին
Անուշ երգով կ'օրրէի:

Էլ աչքերդ՝ ինձ սեւ գիշեր,
Ժըպիտըդ՝ վառ արեգակ,
Անծէր երկինք քեզ չէր իչխեր
Ու կը լինէր հըպատակ:

Եարա՛բ, թըռչել հէչ չը՞ գըտնս,
Ֆեզ ո՞վ ծընեց առանց թեւ.
Եարա՛բ, կեանքում հէ՞չ ուզած չես
Օգում թըռչել միչտ թեթեւ...»:

Էսպէս երգեց ժէռ քարափէն
Հըպարտ արծիւն անգուման,
Թըռաւ, անցաւ, սարէն, ձորէն,
Լալով բախտըն ապըրկան:

ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

ԻՆՉՈ՞Ւ ԲԻՆԳԵՕԼԸ ՄՏԱՐ

Ինչու Բինգեօլը մըտար,
Բաղի բըլբուլը գըտար:

Դրէ՛, Մըկօն, դէ,
Ափօն թըխկոնտէ.
Թրխկօն, թըխկո՛ն, թըխկօնթէ:
Ափօն կոնդէ, թըկոնտէ:
Սուսամ սըմբուլ,
Բաղի բլբուլ,

Ինչո՞ւ կարօին առար,
Անտէր ու գերի գառար:

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԿԱՐՕՏ ԵՄ, ԱՄԱՆ, ԱՄԱՆ

Իմ եարըն նըստել գամով,
Լեզուն քանց շաքար համով,
Ինձ կու սիրէ իւր կամով.
Ջա՛լում, ուրախ եմ, ամա՛ն, ամա՛ն:

Երեսըդ վարդի թեր է.
Խօսքըդ սիրտըս կու երէ.
Ո՞վ ինձ խաբար կու բերէ.
Ջալում, կարօտ եմ, ամա՛ն, ամա՛ն:

Աչքերիդ բանդիւան եմ,
Կ'ուզեմ որ հոգիս հանեմ.
Հէքիմէս գանգատ կ'անեմ,
Ջալում, դարդլու եմ, ամա՛ն, ամա՛ն:

Սեւ խալեր, ծամեր դաստայ,
Պէնի սալուբաուր խաստայ:
Իմ եարըն ինձ մէկ թաս տայ.
Ջա՛լում, ծարա՛ւ եմ, ամա՛ն, ամա՛ն:

Ծաղկած պաղչի նըման ես,
Ի՞նչ կ'ըլնի ըռահմ անես,
Նըռներըն ծոցէդ հանես:
Ջա՛լում, համբուրեմ, ամա՛ն, ամա՛ն:

Գըլխիդ ձըգել ես մանդիլ,
Գօզլարըն եանար ղանդիլ.
Խոցուած սիրտըս մի՛ քանդիլ:
Ջա՛լում, ղարի՛պ եմ, ամա՛ն, ամա՛ն:

Պաղչումըն ծաղիկ քաղես,
Ծածուկ դէպ ինձ ծիծաղես,
Կըրակով սի՛րտըս դաղես:
Ջա՛լում, երվէղ եմ, ամա՛ն, ամա՛ն:

Գիր ես գըրել տէշխարով,
Մէջըն լըցել շաքարով,
Յովնաթանին շատ բարով.
Ջալում, կարդացի, ամա՛ն. ամա՛ն:

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ.

ՉԻՆԱՐ ԵԱՐԸ

Իմ չինար եարին,
Իմ գոհար եարին,
Ո՞վ է բան ասել
Գովական եարին:
Իմ գոհար եարին,
Իմ չինար եարին,
Ո՞վ է բան ասել
Գովական եարին:

ՈՒՆԱՅՆՈՒԹԵԱՆ ՓՈՍԻՆ

Իջէ՛ք, իջէ՛ք, երազներ,
Իջէք գգո՛յշ, երազներ,
Շոյող, անո՛յշ երազներ,
Իջէք, քնքուշ երազներ:
Ծաղիկ, կանաչ, թարմ հիւսեր,
Բաղձի կարկաչ ու յոյսեր.
Դող ու անձուկ ու կարօտ,
Ծածուկ արցունք վարանոտ,
Խելքի, մտքի հակասում,
Մի՛շտ նոր կեանքի սպասում...
Իջէ՛ք, իջէ՛ք, եւայլն:
Գըգուանք, ժըպիտ, գոյն ու բոյր,
Աչեր վըճիտ ու համբոյր,
Իղձեր անվերջ, անմեկին,
Տագնապ ու թենչ մոլեգին,
Օրօր, գըրգիռ ու յոյզեր,
Սըրտի թըրթիռ, երգ ու աչր...
Իջէ՛ք, իջէ՛ք, եւայլն:
Աստղեր թօթիչ, բոց ու կայծ,
Ցնորքներ վառ ու առկայծ.
Հաւատ ուժի, մեծութեան,
Փառքի, կամքի ոգոյութեան.
Շռինդ, թնդիւն, հպարտանք,
Իմաստութիւն, բի՛ւր պատրանք...
Իջէ՛ք, իջէ՛ք, եւայլն: Լ. ՇԱՆԹ

ԻՆՉԻՆԱՐ ԵԱՐ ՃԱՆ

Ինչ֊ինար եար ջան,
Փունչ֊ինար եար ջան,
Ո՞վ էր բան ասե,
Սիրական եար ջան:

Էս եանը քամի,
Էն եանը քամի,
Արագի վրէն,
Բանըմա գեամի:

Էս եանը նուշ ա,
Էն եանը փուշ ա,
Կողբեգին եկաւ,
Կարմրաթուշ ա:

Արագի վրէն,
Բանըմա լօդկա,
Սիրածս եկաւ,
Գլխին չլապկա:

Ինչ֊ինար եար ջան,
Փունչ֊ինար եար ջան,
Թէ կառնեմ մարջան,
Քե կասեմ եար ջան:

Էս եանը պատ ա,
Էն եանը պատ ա,
Քաղքցուն կառնեմ,
Որ փողը շատ ա:

Ծուչի Ծուչական,
Փարփի Բիւրական,
Սիրեր եմ կառնեմ,
Սրտով սիրական:

Մանէքը խուրդի
Աբի աբասի,
Էն տղին կառնեմ,
Անունն Աղասի...

ԼԷՓՕ ԼԷ ԼԷ

Լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, հօտալի
Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլէ
Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլէ
Գիւղէլ չիրին, եարալլը ջան եարալլէ:
Գիւղէլ չիրին, եարալլը ջան եարալլէ:

Հօլէյ, հօլէյ, հօլէյլէ,
Հայրըս տունը թող ճգնի,
Մայրըս տունը թող չեղնի,
Դէ տղերք եկէք թող հանենք,
Ձար թչնամու աչքը տանենք:

ԾՆԻՐ ԳԱՐՈՒՆ

Ծնիր գարուն որբան կրնաս,
Տերեւ, ծաղիկ, բեհեղ.
Ծնիր կեանքը ինչ որ անհաս
Հրաշքը կուտայ քեզ.

Եւ քանի որ է սահմանուած
Ապրիլ մեզի այս աշխարհն աղուոր,
Թող միշտ ծաղկին յայնատարած
Դաշտեր, հովիտ, լեռ ու ձոր:

Ծնիր գարուն առաւօտներ,
Լոյսով, ցօղով օժտուած.
Ուր ծիծառներն երկինքն ի վեր
Լողան թեւատարած,

Որոնց թեւէն կախենք մենք ալ,
Երազները մեր երջանկութեան,
Եւ սեւանենք թէ կրնան մեզ գալ
Սուրբ յուզումներ մանկական:

Ռ. ԶԱՐԴԱՐԵԱՆ

ՋԱՆ ԳԻԼՈՒՄ

Ծառիս տակը մանիշակ,
Ջան գիլում, ջան, ջան,
Իմ եարը քանց քեզ չիշակ,
Ջան ծաղիկ, ջան, ջան:

Սարի թըրթընջուկ թազա,
Ջուղ ու մեխակ քեզ մազա.
Ինձ պէս նազանի աղջիկ
Քեզ պէս տըղին ո՞նց սազայ:

Այ տղայ, եախէդ մով ա,
Սուրբ Կարապետ քեզ գով ա.
Ես քեզ խիստ չատ եմ սիրում,
Քո սիրտ ինձանէն հով ա:

Նախրատափին խնկի ծառ,
Ալընճոր գըցեմ արի տար,
Ուրբաթ, չարթաթ քեզ մօհլաթ,
Լոյս կիրակի արի տար:

Մեր տան առաջին դարան,
Աղջկերք եկան ետ դառան.
Կուզես տարայ որ բռնեմ՝
Շարած մարգարիտ դառան:

Ա՛յ տղայ, բաղի մէջին,
Ոանեըըդ չաղի մէջին,
Կանչի՛ կանչերուդ մեռնեմ,
Ես եմ քո խադի մէջին:

Մեր տան եռեւը մառան,
Տըղերքն եկան յետ դառան,
Ձեռըս տարայ թէ բռնեմ՝
Ռեփ լալ ու մարջան դառան:

Ես աղջիկ եմ ալ կուզեմ,
Բողչէս ծալէծալ կուզեմ,
Երբոր եարի տուն երթամ՝
Գօտիկս քիրմա շալ կուզեմ:

Ամպեր ա, ձիւն չի գալի,
Մթնել ա, տուն չի գալի,
Էս անտէր բարձի վըրայ
Առանց եարի քուն չի գալի,

Ա՛յ աղջի, ասա՛, մասա՛,
Ծամերիդ տէրը խաս ա,
Թուշիդ դէմն արա՝ պաչեմ
Վազի՝ գնա մօրըդ ասա:

Ալխալուղըս կարել եմ,
Ոսկէ կոճակ շարել եմ,
Նանի ջան, դարդ մի՛ անիր,
Ես սիրածըս ճարել եմ:

Արտումըս ցանել եմ գարի,
Աստուած տայ նանիս բարի,
Ինձ տուեց ջահիլ եարի,
Դարչին-մեխակ քահրբարի:

Բարտի ծառը բարձր ա,
Սիրած եարը քաղցըր ա,
Գընամ մօրըս հարցընեմ,
Թէ որ չհտայ՝ փախցըրա:

Կանգնել ես բարձր հովին,
Փրփրում դօշիդ մովին,
Էրնէկ ծոցիդ քընողին·
Շամամ ծծերդ բռնողին:

Ես լիսաստղ եմ երկնքին,
Շողքըս տրուած գետինքին,

Դեռ չատ կարօտ ման ըլգան
Էս իմ չալ աչք, կեռ ունքին:

Քաքուլիդ կալին մեռնեմ,
Երեսիդ խալին մեռնեմ.
Լըսել եմ կարդացուր ես,
Սաղմոսիդ ծալին մեռնեմ:

Ծառի տակը հով քամի,
Քաքուլըդ քամին տանի,
Բա դու սարում ու ձորում,
Իմ քունը ո՞նց կը տանի:

Ծիրան եմ քաղել նուշը,
Պաղընգիս վարդի փուշը,
Փունջ կապեմ՝ աղբօրըս տամ,
Պաչ անեմ կարմիր թուշը:

Հա ղէտը գնա, ղէտը գնա,
Մէջքիդ քիրմէն ետ գընայ,
Դէմն արի, թուշդ պաչեմ,
Ունքամէջըդ ես գընայ:

Մանուշակ երկու թեր է,
Սիրտդի տունը կէրի,
Ով իր սիրածն ինձ չի տայ,
Զը տըւողի տունն էրի:

Սիրել եմ սէրն երեսին,
Ռեհան թերըն երեսին,
Ով իմ սիրածն ինձ չը տայ՝
Աստըծու կերն երեսին:

Զաւխարի տակ չափ կը տամ,
Քխտով ոսկի թափ կը տամ,
Էս իմ պզտիկ տեղովըս
Քեզ պէս չատին խաբ կը տամ:

Չէթ եմ հազել—սալով ա,
Գըլխիս մազը զազով ա,
Հալբաթ ես էլ նազ կանեմ,
Երբոր ետրըս նազով ա:

Չէթ մինթան էդ հին մաշա,
Ունքերըդ զալամքաշ ա,
Աղջի՛կ, ի՞նչ ես մխաք անում,
Իմ չանըս քեզ փէշքաշ ա:

Պուճուր աղջի՛կ, լաւ աղջի՛կ,
Դու ինձ համար ցաւ աղջիկ,
Ես քեզ թագուն սիրեցի,
Էս ո՞վ արաւ, չա՛ւ աղջիկ:

Սարերի սինձ ի՞նչ կանեմ,
Կաթով բըրինձ ի՞նչ կանեմ,
Թո՛ղ իմ սիրած ինձի տան,
Ոսկի, արծաթ ի՞նչ կանեմ:

Սարերումը տուն ունեմ,
Մէջին ոսկի սին ունեմ,
Ա՛յ չան տըղայ, քիչ խօսա,
Քեզ պէս հազար չուն ունեմ:

Կանգնել ես, կանչում էլ չես,
Բօյիդ ամաչում էլ չես,
Եկայ՝ կըչտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանաչում էլ չես:

Ամպել ա ամպի տակին,
Ծունկըս ծընկանըդ տակին,
Ես քեզ ո՞րտեղ սիրեցի—
Մեխակի ծառի տակին:

Ա՛յ տղայ, դու հէրիս, մէրիս,
Ո՞ւր եկար կէս գիշերիս,
Տեղումըս քեզ տեղ չի կայ,
Գըլուխըդ դի՛ր կըռներիս:

Ճըրագ դընեմ լիսացաւ,
Կարմիր խառէն քիսացաւ,
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու:

Աղջի՛կ, մազերդ հիւսէիր,
Թուշդ երեսիս քսէիր,
Ելնէիր բարձիս վըրայ՝
Բիւլբիւլի պէս խօսէիր:

Աղջի՛կ, ղընանք մեր բաղը,
Պոկեմ չամամիդ թաղը,
Էդ երեսիդ չաֆաղը
Հանել ա սըրտիս դաղը:

Զուն ղընեմ թաւէն՝ խաչեմ,
Գընամ կարովը եաչէմ,
Եթէ եարըս գալիս է,
Զոքեմ՝ չէքմէքը քաչեմ:

Գիւլիմ գիւլիմ, գիւլ չիչակ,
Ես–դու մանենք մին գօշակ,
Մինչեւ լոյսը քըչփըչանք,
Լոյսից յետոյ կըչկըչանք:



ԿԱՆՉԷ ԿՌՈՒՆԿ

Կանչէ՛, կռունկ, կանչէ՛, քանի գարուն է,
Ղարիբներու սիրտը գունդ գունդ արուն է:
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
Ա՛խ, սիրտըս արուն է:
Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արօտ է,
Աչխարհն է արեգակ, սիրտըս կարօտ է:
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է,
Ա՛խ, սիրտըս կարօտ է:
Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արեւ է,
Աչնան կերթաս երկիր, եարիս բարեւէ:
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
Ա՛խ, եարիս բարեւէ:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ԳԵՂՋԿԱԿԱՆ ԵՐԳ

Կուժն առայ, ելայ սարը,
Զը գըտայ ֆիղան եարը.
Ֆիղան եարը ինձ տըւէք,
Զը քաչեմ ահուզարը:

Մեծ սարի հովին մեռնեմ.
Շէկ տըղի բոյին մեռնեմ.
Մի տարի ա չե՛մ տեսել.—
Տեանողի աչքին մեռնեմ:

Բլբուլը գարի վերայ,
Արնճարը ծառի վերայ.
Սիրած սիրածի տային,
Զար գեանին՝ քարի վերայ:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ



ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստա՛ն, երկիր պրախատվայր,
Դու մարդկանոյ ցեղիս որբան,
Դու եւ բնիկ իմ Հայրենիք,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ
Ոգեւորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ, ի քեզ, յո՛յս իմ միայն
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան, անուն փարելի,
Ի քեզ հանգիստ Նոյեան տապան
Եգիտ, եւ քեւ ապրեցաւ Նոյ,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Գետք քաջառաջք աղենաբուղխք
Զհողդ բարի առնեն յուռթի,
Քեւ ապրիմ ես, քեւ միշտ ցնծամ,
Քեւ, քեւ պանծամ փառք իմ միայն
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան, ծնող դիւցազանց,
Եւ հրաշագեաց հանդիսարան,
Քո զեփիւռին քաղցր է շնչիւն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Զոր շնչեցին եւ զօրացան
Հայկ, Արմենակ, Արամ, Տիգրան,
Տրդատ, Սմբատ, Վարդան, Վահան,
Ըզքեզ յիշեմ, ըզքեզ սիրեմ,
Ըզքեզ, ըզքեզ, սէ՛ր իմ միայն
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Ց. ՄԻՐԶԱ-ՎԱՆԱՆԴԵՑԻ

ՄԱՐՇ

Հայ երիտասարդներ շուտ շտապեցէք,
Րոպէն շատ թանկ է, առաջ քալեցէք,
Օտարք հայերին կ'ասեն վախկոտ են,
Քաջութեան դրօշակը պարզեցէք:
Միթէ մենք Վարդանի ցեղից չե՞նք,
Մէկս հազարի դէմ կը կռուենք,
Մի ժամանակ մենք շղթայուած էինք,
Հիմա ազատ ենք եւ ունինք շատ զէնք:
Օգնութեան հասան քաջ Խանն ու Մուրադ,
Ճիշտ հայու զաւակ, ծնունդ անարատ,
Մոկացի Գրիգոր եւ երկու Արշակ
Գնդակ թափում են կարկուտից արագ:
Քաջ Թումանեանցը, սրտոտ Գէորգը
Կազմել, պատրաստել են իրենց խմբերը,
Դաշնակցութեան Դրօշակի ահից
Սարսափահար փախչում են քրդերը:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Հայրի՛կ, հա՛յրիկ, քո հայրենիք
Վաստուրական մեր աշխարհ,
Վարդի վտհան քեզ փուշ բերաւ,
Յաւերդ դառան բիւր հազար:

Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի թըփիկ որոնեց,
Փոխան թըփի փըշեր գտաւ,
Լալահառաչ ձայն հանեց:

Հայրիկն ասաց.— «Իմ հայրենեաց,
Փուշն անուշ է քան զվարդ,
Ես այն փշոց մէջը գարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ:

Այն սայրատուր փշերն ամէն,
Փունջ կապեցէք չարի չար,
Թողէ՛ք գլխիս պսակ կապեն,
Որուն ճակատս է յօժար:»

Հա՛յրիկ, հա՛յրիկ, քո սուրբ ճակատ
Արիւն արցունք են, ո՛հ, միշտ,
Փթթեալ վարդից կարմիր թերթեր,
Կը պսակեն վաւօք գարդ:

ՀԱՅՐԱՊԵՏ ՃԱՆԻԿԵԱՆ



ՊԱՐԵՐԳ

Հայկազունք պար բռնենք,
Թեւ ի թեւ օ՛ն ելնենք,
Ցնծութեան ձայներով
Եւ զուարթ սրտերով:
Զի ահա՛ ի նոր բաղդ
Զայն կուտայ երկինք արդ,
Ի սուրբ կոչում ուխտեմք Հաստատ
Անձնուէր գոլ պատրաստ:

Ս. Գ. ՓԱՓԱԶԵԱՆ

ՀԱԲԸՐԲԱՆ

ՏՂԱՅ

Հա՛բըրբա՛ն

ԱՂՋԻԿ

Ջանէ ջան.

ՏՂԱՅ

Սիրել եմ՝ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին,
Ով իմ սիրածն ինչ չի տայ,
Աստըծոյ կերն երեսին։

ԱՂՋԻԿ

Հա՛բըրբա՛ն

ՏՂԱՅ

Ջանէ ջան.

ԱՂՋԻԿ

Սարի թըրթընջուկ թազա,
Մեղր ու շաքար քեզ մազա,
Ինձ պէս նազանի աղջիկ,
Քեզ պէս տղին ո՞նց սազայ.

ՏՂԱՅ

Պըզտիկ աղջիկ, համ ունիս,
Զորեքըղիմաց ծամ ունիս,
Խունջիկ-մունջիկ մի՛ անի,
Ինձ տանելու կամ ունիս։

ԱՂՋԻԿ

Գուլթանըդ հոլա՛, հոլա՛,
Գուլթանիդ տակը քոլ ա,
Քանի՞ գըժութիւն անես,
Քեզի առնողը տոլ ա։

ՏՂԱՅ

Ձեր տան տկին վար կանեմ,
Ջար ագռաւին քար կանեմ,
Թող իմ սիրածն ինձի տան,
Գըժութիւնըս թարկ անեմ։

ԱՂՋԻԿ

Ջուրը իր ճամբով կերթայ,
Ցօղածը վարդի թերթ ա,
Ինձ սիրող կտրիճ տղէն՝
Հազարի մէջ մի բերդ ա։

ՏՂԱՅ

Բուսել ես բաղի միջին,
Շամամի թաղի միջին.
Գիշեր ցերեկ միայար,
Դու ես իմ խաղի միջին։

ԱՂՋԻԿ

Աշուղի պէս խա՛ղ ասա,
Բլբուլի պէս տա՛ղ ասա,
Ինչքան որ ուզես՝ արժեմ,
Իմ մօր գովական փեսայ։

* * *

Հաբըրբան, ջան է ջան,
Աղջի անունդ է Շուշան,
Արի երթանք սուրբ նշան,
Ջան է ջան,
Մատնիք տուր քեզ նշան:
Արեւ դիպաւ սարերուն,
Կաքաւ թռաւ քարերուն,
Եղսօն կայնէ վրր դարուն:
Զուկն էկաւ, նստաւ կալին,
Թըմահ չունիմ ձըր մալին,
Կարօտ եմ յերսիդ խալին:

* * *

Հաբըրբան, ջան է ջան,
Արագից ջուր ա գալի,
Հարցըրէք ո՞ւր ա գալի
Մի լար սիրուն սիրական,
Բաժանման լուր ա գալի:
Ապուր իմ եփել ազի.
Ուտողի սիրտը դաղի,
Ես ու դուն իրար սիրենք,
Թող դուշմանը կատաղի:
Ոնց անկի ես բար չունիս,
Ոնց ջահել ես, եար չունիս,
Երկնքի դուշ ես դառել,
Իջնելու ումուտ չունիս:

* * *

Հաբըրբան
Խօր ամպ ա պարզում չի,
Սախտակ դէւրեն սառում չի.
Օխար տարի ու Հաանիս. Ջանէ ջան.
Սիրտդ սեւ ա սաղում չի:
Քուչուր առջին դալում ես,
Մանեռ սատում ես.

Ամեն ինձի տեսնելիս, ջանէ ջան,
Աչքով ունքով անում ես:
Ամպել ա բուլթա-բուլթա
Կերածդ կարմիր թութ ա
Ես սիրել եմ, ես կառնեմ, ջանէ ջան,
Թող գեղով ասեն սուտ ա:
Կայնել ես ախա-պախայ
Եայլուղիդ տուտը կախ ա,
Սեւ աղայ, սպիտակ աղջիկ, ջանէ ջան,
Բռնել են իրար եախայ:
Արաղն յընգայ էն կուռը,
Քաղեցի դաստայ նուռը,
Ես չեմ առնի էն ծուռը, ջանէ ջան.
Կերթամ կընկնիմ սեւ ջուրը:

* * *

Հաբըրբան,
Ջանէ ջան,
Հաբըրբանը նստել ա,
Սընամ սարը մթնել ա.
— Մողնըքայ ջուրը լողցայ,
Մողնըքայ չուչէն գողցայ,
Օխտը տարի հիւընդցայ,
Եարիս տեսայ լաւ ընցայ:
— Մողնըքայ ջուրը սառն ա,
Մողնի է թողն իմ եարըն ա,
Թող էրթայ մուրազն առնի,
Ես դառնայ սիրածն առնի:
— Ջուխտ գութան արտ կը բանի,
Ծէկ աղջիկ հաց կր տանի:
Ծէկ աղջըկայ ծամերը
Խելքս ու խմանս կը տանի:
— Այագեարը ձրնել ա,
Եարըս տակին քընել ա,
Ձէն եմ տամ՝ ձէնս չառնի,
Ես ինչ անում քընել ա:

ՀՈՎ ԱՐԷՔ

Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Սարերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ գո՛վ արէք,
Վարար անձրեւ թափէք, ծո՛վ արէք.
Գէշ մարդու օր—արեւը
Սեւ հողի տակով արէք։

Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Ամպերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Սարե՛ր, ձորե՛ր, դաշտեր ու ջրե՛ր,
Մարմանդ մարմանդ վազող աղբիւրներ,
Մի վե՛ր կացէք, իմացէ՛ք,
Տեսէ՛ք իմ սիրտի ցաւերը։

Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։
Սարերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՍՐՏԻՆ ՄԷՋ

Հունձք կը ժողվեմ մանգաղով,
(Լուսնակը եարս է.)
Ակօս ակօս ման գալով։
(Սիրածս հարս է։)

Գըլխերաց եմ ու բոպիկ,
(Անո՛ւշ են հովերը.)
Արտերուն մէջ թափառիկ:
(Մազերն են ծովերը.)

Ցորեն, կակաչ, կարօտով,
(Կաքաւը կուլայ.)
Կապեցի մէ՛կ նարօտով:
(Ձեռքերն են հինայ:)

Հասկերուս մէջ, վերեւէն,
(Աստղը անցաւ,)
Աստղեր միւռոն կը ծորեն:
(Դէմքը լուսացաւ:)

Քանի՛ խուրձեր՝ չաղերով՝
(Վարդենին թաց է.)
Ես կապեցի խաղերով:
(Ծոցիկը բաց է:)

Արտըս խոզանով մընաց.
(Կ'երթայ լուսնակը.)
Դէզերով լեռ եմ չինած.
(Սիրտս է կըրակը:)

Մանգաղըս քարին եկաւ,
(Եարըս եա՛ր ունի.)
Քարէն լոռի՛կը թըռաւ:
(Հոգի՛ս կ՚արիւնի:)

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

ՀՕԴԱԼՕ ՋԱՆ

Հօդալլօ, ջան, հօդալլօ, ջան, հօդալլօ,
Աղջի՛կ սիրուն, աղջիկ անուշ, գալալլօ,
Կայնել ես աղբերակին,
Հօդալլօ, ջան հօդալլօ,

Շող կը տաս արեգակին,
Հօդալլո, Ջան, հօդալլո,
Քո շող երեսին մեռնեմ,
Հօդալլո, Ջան, հօդալլո,
Ունքերիդ աղեղնակին,
Հօդալլո, Ջան, հօդալլո,
Մազերդ ոլորել ա,
Աչքերդ բոլորել ա,
Երկ՝ օր ա, չեմ տեսել,
Իմ սիրտը մոլորել ա:
Փող ես ուզում, քեզ փող տամ,
Ոսկի տամ, ո՛չ թէ հող տամ.
Թէ դրան էլ հաւան չես,
Հոգիս հանեմ քեզ փոխ տամ:

ԽՆԿԻ ԾԱՌ

Մեր դրանը խընկի ծառ,
Գիւլո՛ւմ Ջան,
Ձե՛ր դրանի խընկի ծառ,
Գիւլո՛ւմ Ջան:
Խընկենին ա բերել բար,
Իմ խորոտիկ, պըղտիկ եար:
Գիւլո՛ւմ Ջան:
Մեր դրանը խընկի ծառ,
Նաչխուն բըլբուլ վըրէն թառ,
Երթար ու դար, չորոր տար,
Մեր դրանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ,
Գընար ու դար, չըլին տար,
Անուշ եարի թևերին տար:
Մեր դրանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խնճոր անել տար,
Ալուան ծաղիկ տանել տար:

ՄԱՅՐ ՄԸ ՈՒՆԷԻ

Մայր մ'ունէի ես միայն,
Այն ալ դնաց դէրկ մահուան,
Անմխիթար թողուց զիս
Գերեզմանաց պահապան:
Հայրենիք մը ունէի
Ցեղս Աստուծոյ սիրելի,
Այն ալ իր ճակ փառքերէն
Զգեց լինճ սեւ չղթայ մի:
Ես որ չառի ձեռքս աւուր
Ինչ կը կրեմ այս անուր,
Պարսիկ, քակէ այս չղթան
Զիս մօրս հետ հողին տո'ւր:
Ամէն դիէն սեւ խուժան
Կը կոխտէ Հայաստան,
Հայք կը հեւան վիրաւոր
Պալատ եւ հիւղ կը մխան:
Զը կայ հուժկու Հայ գինուոր
Զի կատրեցաւ աւերն անոր.
Զիք ապօթող քահանայ
Եւ չիք տաճար փառաւոր:
Սուգ է պատեր ամէն վայր
Ազատերն անգամ չեն իսկ վառ,
Այն Հայաստանն ալ չըկայ
Այլ գերեզմանք ու խաւար:
Շղթայ կապած իմ վզին
Գերի վարեն ցաւագին.
Կ'ուզեն պաշտել տալ ինձի
Օտար մարդ հող ու երկին:
Աւերակներ ես կ'ուզեմ
Հայաստանիս տխրադէմ,
Որ հոն լամ իմս հայրենիք
Մինչ ոդիւնեմ մահուան սեմ:
Ո՛հ անոնք սեւ թող ըլլան
Ես կը սիրեմ յաւիտեան.

Ձի երբ իմ մայրս մեռաւ
Ըսաւ, «Սիրէ զՀայաստան»:
Պիտի սիրեմ զայն ես
Ցյետին շունչ իմ արտէս,
Մինչ որ ժպտի Հայաստան
Հանդէպ չիրմիս բոցակէզ:
Թող Հայք ուանին միաբան
Ինձ պէս սիրել Հայաստան,
Հետ իմ աչաց ցօղեն ցօղ
Երբ զայն աւեր կը տեսնան:
Թէեւ է անկեալ Հայաստան
Պիտի կանգնի հուսկ յապան,
Երբ որ Հայեր միասիրտ
Գոչեն «կեցցէ Հայաստան»:

ՊԵՏՐՈՍ ԴՈՒՐԵԱՆ

ՄԻՈՒԹԵԱՆ ՍՈՒՐԲ ԴՐՕՇԱԿԸ

Մխութեան սուրբ դրօշակը,
Մասիս լերան կատարէց —
Ծածանում է դէպի երկինք,
Փողփողելով հրճուալից . . .
Հնչակ, Դաշնակ մէկ սիրտ մէկ հոգի զարթման
Հայոց զաչս ու լերինք, նոր կեանք առացան.
Նայեցէք հայք այն դրօշին,
Մեզ կանչում է կռուի դաշտ,
Մխութեան հոգին —
Մեզ օրհնում է ջեմ առաջ:
Հնչակ, Դաշնակ, եւն.
Դիմենք յառաջ մենք անվեհեր,
Մեզ հետ երկնից սերովբէք,
Գունդ-գունդ իջնեն հուր ու սուրով,
Ազատելու Հայրենիք
Հնչակ, Դաշնակ, եւն.

ՄԵՐ ՏԱՆ ՄԷՋԸ ՔՆՈՂ ՏՂԱՅ

ԱՂՋԻԿ· *Մեր տան մէջը քնող տղայ,*
Կարմիր խնձոր ծախո՛ղ տղայ,
Վարդ կօշիկս գտնո՛ղ տղայ,
Տղա՛յ գրկէ՛ վարդ կօշիկս։
ՏՂԱՅ· *Ձեր տան մէջը քնել չեմ ես,*
Կարմիր խնձոր ծախել չեմ ես,
Վարդ կօշիկդ գտել չեմ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ։
ԱՂՋԻԿ· *Լաւ օրս եղաւ ախ ու վախ,*
Կորուցի կօշիկս, աւա՜ղ,
Հայի տղա՛յ, հոգո՛ւդ մատաղ,
Տղա՛յ գրկէ՛ վարդ կօշիկս։
ՏՂԱՅ· *Որ՞ մօտս չէ ուրտի՞ց ճարեմ,*
Ընի խօսքդ կը կատարեմ,
Աղնի՛ւ աղջիկ, հոգիդ սիրեմ,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ։
ԱՂՋԻԿ· *Ես մի անթառամ ծաղիկ եմ,*
Անուշ երգող աղունակ եմ,
Պատկերովս գեղեցիկ եմ,
Տղա՛յ գրկէ՛ վարդ կօշիկս։
ՏՂԱՅ· *Ես գիտեմ դու անդրանիկ ես,*
Սիրովդ ինծի մօտիկ ես,
Իսկ հասակովդ էլ փոքրիկ ես,
Իմ մօտս չէ վարդ կօշիկդ։
ԱՂՋԻԿ· *Մի մնար ինծի պարտական,*
Աղջիկ եմ տաս–չորս տարեկան,
Ես կը լինեմ քեզ սիրական,
Տղա՛յ, գրկէ՛ վարդ կօշիկս։
ՏՂԱՅ· *Ինչո՞ւ մնամ քեզ պարտական,*
Կամիս տամ հազար դահեկան,
Եթէ կը լինես ինձ սիրական՝
Ես կը ճարեմ վարդ կօշիկդ։

ՄՈՄԻՆ ՓԱՐԱՆ

Մեր պապերը դարեր առաջ թողուցին
Կուռք ու մեհեանն. կրակ տուին՝ ազգային
Մեր պատմութեանց, որ չմնայ յիշատակ
Հին օրերէ, քառաթեւիդ շուքին տակ:

Խաչիդ յառած ալ աչքերնիս շարունակ,
Մենք թողուցինք սուր, հրացան ու գնդակ.
Ու անկարող ազգ մը եղած՝ այն օրէն
Լալ ու ողբալ գիտցանք միայն մեղկօրէն:

Դժոխքիդ վախ, Արքայութիւնդ երկնային
Գրաւեցին համակ ուշը մեր ցեղին.
Գալիք փառքով, գալիք վախով՝ միտք ու խելք
Յափշտակուած, մոռցանք ներկան ու վայելք:

Մեր սեւազգեստ կղերները մեզ ըսին.
«Մէկ երեսնուդ երբ որ զարնեն, դուք անդին
Դարձէք անխօս, որ միւսին ալ՝ պերճօրէն
Փրկչական նոյն չախչըռախը շնորհեն:

«Գայլին առջեւ դուք ոչխար եղիք միշտ,
Եւ կամ կատուին եղէք մուկը ճիշտ ու ճիշտ.
Հոգ չէ ձեզի թող բզքտեն, հերիք որ
Ժառանգորդն էք արքայութեան երկնաւոր:»

Ըսին անոնք ու մենք յօժար սուր երկաթ
Դէն նետեցինք. առինք ոսկի ու արծաթ
Ու շինեցինք սըկիհ, քշոց, խաչ, բուրվառ,
Ծնծղաներով քեզ օրհնելու դարէ դար:

Քեզմէ ի զատ՝ Յոյն ու Լատին՝ ջերմօրէն,
Միւրիտներդ ալ պաշտուեցան մեր ցեղէն.
Դուրս չը մնաց ո՛չ սուրբ Գէորգ, ո՛չ Մինաս,
Ո՛չ սուրբ Սարգիս, ո՛չ Կոմիտաս, Բառնաբաս:

Տաճար կանգնել, վանքեր շինել հոյակապ,
Այս եղաւ մեր օրուան հարցը հրատապ.
«Հող չէ փլի ազգի տունը փառայեղ,
Եկեղեցի մենք կը կանգնենք անոր տեղ:»

Ըսինք, «Մեզի պէտք չէ՛ իշխան, Թագաւոր,
Փրկիչն է մեր Թագաւորը երկնաւոր»:
Շուքին ի տես մենք՝ պատառը պատրաստի
Կորսնցուցինք երազներով սնոտի:

Հիմակ եկո՛ւր, հաշիւ տեսնենք, ով Փրկիչ,
Փրկիչ մը որ փրկող չեղար, այլ քանդիչ
Բռնակալին Թիկունք կըլլաս, որ սրբէն
Հայ անունը երկրագնդիս երեսէն:

Քեզի՛ ըլլան եկեղեցի, վանք, խորան,
Միայն թէ սա վառած մոմին տաս փարան.
Խունկ ու կնդրուկ, ծնծղայ, քշոց միշտ քեզի,
Քեզի՛ ըլլան. մոմին փարան տուր մեզի:

Պետութիւններ կը կազմուին, դրամով՝
Զոր մսխեցինք առջիդ մոմեր վառելով:
Մեզի պէտք է այդ դրամը, տո՛ւր կըսեմ,
Տո՛ւր կը ճուամ գերեզմանիս սա սեմէն:

Չե՞ս տար ամբողջ, գիտեմ որ դուն չես Քաւոր,
Ծարտարուրէ՛, հայրէ՛ նայիմ, կէսը տուր.
Կէսին կէսն ալ բաւէ մեզի, տո՛ւր միայն,
Ահա քեզի քօնքօրտա մը եզական:

Քսան հինգով մաքրէ հաշիւդ հայուն հետ,
Գիտես որ սա պահանջ մը չէ անհեթեթ:
Բայց կը սոսկամ լռութենէդ . . . հա՛, ասա՛նկ,
Չես քաշուիր դու հռչակուելէ Մեծ Սնանկ:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՉԱԳԸՐԵԱՆ

ՅՈՒՍԱՀԱՏԻԼ ՄԵՂՔ Է

Յուսահատիլ մեղք է, ընկե՛ր,
Աբխազի՛ր ոգի առ,—
Նայի՛ր, փայլեց հեռում լապտեր,
Մենք էլ կ՚առնենք չուտ դաղար:
Աբխազի՛ր, սիրտ առ, ընկե՛ր,
Շարունակենք մեր ուղին,
Լսի՛ր, կարծեմ թէ զանդակներ,
Ղօղանջեցին սարերէն . . .
Ահա՛ բացուեց աղօթարան,
Վառա՛ւ, ընկեր, առաջ քալենք,
Ձինուոր ենք մենք Ազատութեան,
Եւ անփորձ տեղ կը հասնենք . . . :

ԴԱՒԱՃԱՆ ԸՆԿԵՐԸ

Նա՝ մեզ բոլորիս մատնեց կրակին
Իր ցոփ–դարչելի հանդատեան համար.
Մատնուած բիրտ կամքի քմահաճոյքին,
կանգնեց նրա մօտ որպէս փրկարար,
Սառնասիրտ, մոլար:
կարծր քարերին երբ մենք կուժք տուած,
Զոր հացի համար կուլուն ընտրած . . .
Մարտի դաշտ ելանք մերկ, ծարաւ, քաղցած,
Նա մեզ դիտում էր կուխից խոյս տուած,
Իր խօսքը մոռցած:
«Նախատի՛նք կարդա՛, բանուոր դու հերոս
Անզգայ մարդկանց դարչ արարքներին».
Շեփորը հնչեց ահեղ քո կուռի,
կոչ կարդաց համայն կեղեքուածներին,
Վեհ գաղափարին . . .
Յաղթական օրը դժուար ճնոք բերուած,
Ազատ դրօշը պարզուեց բարձրից
Ըմբոստ ամբոխը խոպան ազատուած
Շուտ տուեց երեսը կեղծ ընկերներից.
Դաւաճաններից . . .

ՎԱԳՐ–ԹՄԹ

ԱԶԱՏԱՄԻՏ ԿԱՆԱՅՔ

«Ներկայ դարուս ազատ հոգով
Մենք զարգացեալ կանայք ենք էլ.
Լուսաւորուած ամէն կողմով
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Կրթուել ենք, առել ուսում,
Առաջ գնացել ամէն մասում,
Ինչ ուզում ենք, այն ակըսում, —
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Դուրս ենք եկել սարկութիւնից,
Մարդկանց կոպիտ բռնութիւնից,
Եւ պրծել ենք նեղութիւնից, —
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Էլ չենք գերի մեր մարդկերանց,
Արել ենք մենք գերի նրանց,
Ազատամիտ, լուսաւորուած
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Չե՛նք հեռեւում մեր նախամօր —
Մագենք ալուր, հունճենք խմոր,
Բան չենք անի այդպէս սոր, —
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Եւ կամ բռնենք մենք ապաջուր,
Դրնենք թրթու, եփենք ապուր.
Իսոնք ի՞նչ են՝ միայն կեզտ-մուր, —
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Հերել մածուն, հանել կարագ,
Ջունլինք մեզի էլ ժամանակ,
Վառենենք այդպէս տեղեր դասարկ, —
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Էն հին կանայք էին ատրուկ,
Տանջանաց մէջ մաշվում յաւուկ,
Մեր գործն ա ապրել վախուկ,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Զեռք չենք ձգում ատն մի բանին,
Մեզ համար ողջ ծառայք կանեն,
Թըչնամի մարդկանց գրպանին,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Փո՛յթ չէ մեզի մեր զաւակը
Թո՛ղ կըթէ օտար դայեակը,
Միայն լաւ անցնի մեր կեանքը,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Մանր–մունր այդպէս գործեր
Չե՛ն չարժում ցանկութիւնը մեր.
Ունենք խղճալ, բարձր մըտքեր,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Չե՛նք աչխատող մենք, այլ մսխող,
Նոր ձեւերին ճիչտ հետեւող.
Հինըն ատող, միչտ նոր հագնող,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Կարելն, անխօսք, չըգիտենք խակի,
Տալիս ենք մենք միչտ մազխատկի,
Որքան ապտ դուրս գայ ոսկի,—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Այդ մասին վոչ չենք խըճայում,
Ոչ էլ մարդկանց կամքին նայում,
Աստուածամբ վարձ ընծայում.—
Մենք զարգացեալ կանայք ենք էլ:

Այս բանում մեծ լաւութիւն
Արաւ մեզի մեր մամուլը,

Որ առաւ այդ ուղղութիւնը,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Նրա սերմանած սերմերն կանուխ
Աճան առատ, տըւան պտուղ,
Դառանք թեթեւ, եղանք կակուղ,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ:

Խաչատո՛ւր, դու չատ մի՛ խօսիր
Ակա՛նջ արա, եւ մեզ լսի՛ր.
Քեզ էլ չուտով կանեն եսիր,—
Մենք զարդացեալ կանայք ենք էլ»:

ԽԱՉԱՏՈՒՐ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՑ

ԵԱՐԱԼԻ ԲԼԲՈՒԼ

Նպատակիս գէթ մի մասը կատարուէր,
Եարալի բլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւնը տեսնեմ ու մեռնիմ,
Տուն արի՛, տուն արի՛, չուտ արի՛, բլբուլ,
Սարերի գիւլն եմ:

Ա՛խ իմ զարդս չատացել է չեմ կարող,
Եարալի բլբուլ եմ:
Դարդի ձեռքից ա՞ր ջուրն ընկնեմ ազատուեմ,
Տուն արի, չուտ արի, եարալի բլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:

Ախ, անբաղդ հայդուկիս, Տէր իմ, դու խղճայ,
Եարալի բլբուլ եմ:
Մի թողնիր քուրդի գնդակով գուր գնամ կորչեմ,
Եար արի, տուն արի, չուտ արի բլբուլ եմ,
Սարերի գիւլն եմ:

ՀԱՌԱՋԱՆՔ

Նպատակիս հասնիմ միայն,
Թող պիս հանեն կախաղան,
Կախաղանէն խեղդուկ ձայնով
Պիտի կոչեմ, ա՛խ, Հայաստան:

Ա՛խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
Քեզ նուիրեմ ընդունէ,
Թէ կարելի, թող ես մեռնիմ,
Հայրենիքս, դուն ապրէ:

Անոր սիրուն բանան ալ դրուիմ,
Պատառ է ան ինձ համար,
Ձեռքերս ոտքերս չպիտյ գարնեն,
Երջանկութիւն է ինձ ան ալ:

Թէ մինչ իսկ աքսորուիմ ալ,
Թափառական ընէ պիս բաղդ,
Հայաստանի սիրոյն համար,
Փշոտ վայրեր կ'ըլլան դրախտ:

Ա՛խ, Հայաստան, դուն սիրուն մայր,
Մինչ ե՞րբ այսպէս քու որդիք,
Քեզնէ հեռու պիտ՝ հառաչեն,
Երբ դու այսահղ անտէր կը մնաս:

Երբ պիտի դայ իմ թագաւոր,
Որ ես հասնիմ իմ ուխտին,
Դրօշակներ ծածան ծածան
Ականակուռ թագը գլխին:

Ա՛խ, Հայաստան, աչքդ գարձուր
Քեզ վնասողդ որբերուն,
Պէս պէս ցաւօք կը տանջուին,
Դարման եղիր Հայ քաջերուն:

Վախնամ մեռնիմ ես այս ցաւով
Ու իմնեմ սեւ գերեզման,
Գերեզմանէն մեռած ձայնով
Պիտի գոռամ, վա՛խ, Հայաստան:

ՇԱԻԱՐՇԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐՈՒՆ

Շաւարշանի հերոսներուն
Արի սերունդ ենք հարազատ,
Պիտի պատուենք անոնց անուն,
Պիտի ըլլանք մենք յար ազատ:

Եթէ աշեն մը գայ չարի,
Պիտի կռուինք միշտ աննահանջ:
Անոնց նման ալ քաջարի՝
Պաշտպանելով բարուրն պահանջ:

Մենք չենք ճանչնար երբէք խաիր,
Սերտ Միութեան ենք ջերմ պաշտպան,
Սիրոյ դերջը գերընտիր
Պիտ՝ ծածանի յար անխափան.

Ճշմարտութեան յառաջապահ:
Աշխատութեան ալ ոահվիրայ.
Գրիչ ու գիրք, բրիչ ու բահ
Մեր յարդանքին են առարկայ:

Կուռ, ներդաշնակ մըչակութեամբ
Պիտի կրթենք հոգի, մարմին,
Նկարագրով, վարկով անամօթ՝
Արժանաւոր Հայկեան զարմին:

Համայն աշխարհ գիտէ այսօր
Թէ վառ լուսի պաշտող են Հայք —
Շաւարշանի դրօշէն բոսոր
Լոյս ծագեցաւ, չոդաց նոր այգ:

Գ. Ճ. ԿԻԼԵԱՆ

ՄԱՏԹԷՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Ողջո՛յն, ողջո՛յն ճառագայթող ո՛վ արեւ,
Պահ մ՚առնէլի փայլէ այսօր մեր վերեւ.
Համայն Հայեր պիտի փութեան հեւ ի հեւ,
Շռայլելու իրենց յարգանքն ու բարեւ
Մեր տառապեալ ազգին
Սիրեցեալ Պատրիարքին:

Սիրեց նա Ազգ, ճշմարտութիւն ու բարիք,
Որով ինքն ալ եղաւ երկրորդ մի Հայրիկ.
Մեծ հրաւէր կայ այսօր «Հայկազունք արիք»
Ողջունելու համար ամէնքս ալ փարինք
Մեր սիրեցեալ Ազգին
Յաղթական Պատրիարքին:

Ազգին սիրուն առանձնեց նա վիշտեր, հոգ,
Տառապանք ու աքսոր կրեց անբողոք,
Չի նետուելու բռնապետաց դիրկն ու գոգ,
Որով հիմա պատիւ կ՚ընէ ամէն ոք
Մեր սիրեցեալ Ազգին
Վեհոգի Պատրիարքին:

Ո՛վ Իզմիրլեան հին ցաւերը մի՛ յիշեր,
Անցաւ քու ու Հայուն գլխէն սեւ գիշեր.
Ալ քաղցրացաւ մեր վիճակը որ շատ դէշ էր
Այն օրերն ուր կ՚այրունէին սեւ փուշեր
Մեր սիրեցեալ Ազգին
Տառապեալ Պատրիարքին:

Կ՚աղերսենք քեզ, ո՛վ երկնաւոր Աստուած մեր
Օ՛ն Հայ Ազգին թեւ եւ թիկունք պահապան լեր,
Թափէ առատ քո երկնային հոգիդ, սէր,
Որ պահպանուին բոլոր իղձեր ու յոյսեր
Մեր սիրեցեալ Ազգին
Ազգասէր Պատրիարքին:

ԿՂԷՄԷՍ Մ. ՏԱՏՐԵԱՆ



Ս. ՍԱՍՈՒԿ ՊԱՐԹԵՒ

ԱՌ ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՍ

Ողջոյն տամք ձեզ սիրտ ի թինդ
Ձեր յիշատակ տայ մեզ խինդ.
Փառաց ձօնեմք ձեզ պսակ,
Օրհնեմք միշտ ձեր յիշատակ:

Ցնծամք եւ մենք խնդագին.
Պարծանք մեր էք թանկագին.
Սուրբքդ Սահակ եւ Մեսրովպ:

Բերիք իբրեւ նոր Մովսէս
Սէր ու հանճար ի հանդէս.
Վարդի թերթեր կը փթթին
Մեր դպրութեան նոր յԱյգին:

Յաւար մտայ բերիք լոյս,
Նոր խանդ, կորով, սէր եւ յոյս,
Անխոնջ ջանիք՝ մեր ազգին
Գտաք գիր սուրբ եւ անգին:

Հանճար եւ լոյս այն դարուն,
Մեզ ձօնեցին նոր գարուն.
Աստուածաշունչ՝ թանկագին
Թարգման եղաք մատենին:

Արդ, մենք, սանունքս ձեր անուան
Ձօնեմք մեր սիրտ հայկական.
Վեհ դպրութեան մի կոթող՝
Թող ձեզ կանգնէ հայ քերթող:

Մեզ ճամբեցիք ուսման սէր.
Վեհ հաճոյից ուսման սէր.
Այդ նախահոգ ձեր հանճար՝
Բացաւ լուսոյ վեհ տաճար:

Սուրբ է, այո, աւ յաւէտ
Ձերին այս գործ օգտաւէտ.
Մաղթեմք յերկնից մի կտակ՝
Լիցի անջինջ ձեր վաստակ:

Կ. ՓՀՆՅ. ՆԱԼՊԱՆԴԵԱՆ

ՈՒՐԱԽ ԵՐԳԵՐ ԻՆՉՊԷՍ ԵՐԳԵՄ

Ուրախ երգեր ի՞նչպէս երգեմ
Իմ քնարով վշտալից.
Սէր, խնդութիւն ինչպէ՛ս հիւսեմ
Իմ սգաւոր լարերից:
Հայրենիքից թռչնակ եկաւ
Արիւն հոսող վէրքերով,
Նա քնարիս վերայ նստաւ
Ազատ օրեր տեսնելով . . . :
Տխուր ձայնով նա երգ երգեց,
Մի երգ անյոյս, դառնալից,
Լարի վերայ արցունք թափեց,
Արիւն—արցունք վէրքերից:
Այն օրուանից ի՞նչպէս հրճուեմ
Ես քնարով վշտալից,
Սէր, խնդութիւն ի՞նչպէս հիւսեմ
Արիւնչաղախ լարերից:

ՕՐ. ՔՆԱՐԻԿ

ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔԸ

Ո՛վ, Տէր մեր, Տէր փութա՛,
Զազգն մեր համայն փրկեա
Ի թշնամեաց:
Կասկո՛ղ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյ զրուն,
Եւ զազգն մեր պարտասուն՝
Արա՛ հզօր:
Աչքովդ համատարած,
Զազգն մեր արտահալած,
Փոյթ գումարեա՛
Յաշխարհ Արարատեան,
Ի վայր մեր ծննդեան,
Որ այժմ է սեփական
Օտար ազգաց:

ԲՕՅԴ ԲԱՐՁՐ

Բօյդ բարձր սալվի չինար,
Աչքդ նաչխուն, ունքդ կամար
Դուն ստեղծուած ես ինձ համար,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:
Գոյնդ նման է մարմարի,
Հաղիպ չարեն է յարմարի,
Դու ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ եմ նոր բուսած:
Քեզ չտեսնել ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ քեզ տամ պահէ.
Ինձնում եղած ինձ ի՞նչ չահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:
Գիշեր ցորեկ նստած լալով,
Աղի արտասունք թափելով,
Ինձ թողել ես տանջուելով,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:
Ես քեզ տեսայ ծաղկանց մէջին,
Ադաչեցի ես իմ Փրկչին՝
Որ չկարէ յոյսն իմ վերջին,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած:

ԱՆՏՈՒՆԻ

Սիրտս նման է էն վրլած տըներ,
կատրեր գերաններ, խախտեր է սըներ,
Բուն պիտի դընեն մէջ վայրի հաւքեր.
Երթեամ՝ ձի թալեյ էն ելման գետեր.
Ընկեր ձրկներուս ձագերաց ընկեր:
Ա՛յ, տօ լա՛ճ տրճատեր . . .
Սեւ ծով մ'եմ տեսել, սպիտակն էր բոլոր.
Ալին կը գարկեր, չեր խառնի յիրար.
Ին ո՞րն է տեսել մէկ ծովն երկթատոր,
Անտունի սիրտն է պղտոր ու մոլոր:
Ախ իսկի մի՛ինիք սըրտիկ սեւատոր:
Ա՛յ, տօ լա՛ճ տրճատեր . . .

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

Սարեըի հովին մեռնեմ,
Իմ եարի բոյին մեռնեմ,
Էսօր օխտն օր չեմ տեսել
Տեռնոզի աչքին մեռնեմ:
Ախ Էնեմ արուն կուգայ,
Սեւ սըրտիս գարուն կուգայ·
Ինչ Էնըմ ես էն եարը,
Պըտըտուի տարուն կուգայ:
Եար, եար, եար, եար, նա նայ,
Ա՛խ, նաճի ջան, նաճի,
վա՛ նաճի, նաճի ջան:
Լուանակը կեռ ու կամար,
Քոյր մեռնի եղբօր համար,
Օխտըն օր պաս եր պահե՝
Իմ եարի ճամբի համար:
Ա՛խ էնիմ արուն կուգայ եւայլն:

ՍԱՐԻՆ ԿՈՒԳԱՅ ՁԻԱՒՈՐ

Սարէն կուգայ ձիաւոր,
վայլէ, լէ, լէ, լէ,
Մեր տունը չարտախաւոր,
Ինճիլիկ, փընճիլիկ, կարճըլիկ եար, եար,
Ինճիլիկ, փընճիլիկ, կարճըլիկ եար, եար,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրուան թագաւոր:
Ծառերի հովին դուրպան,
Իմ եարի պօյի դուրպան,
Երկու օր ա չեմ տեսել,
Տեռնոզի աչքին դուրպան:
Անճրեւ եկաւ չողալէն,
Ուռի տերեւ դողալէն,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Ալ ձին տակին խաղալէն:
Համրայ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ,
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեռնի աչխարհ ալամ:

ՄԻՈՒԹԵԱՆ ՔԱՅԼԵՐԳԸ

Սովն էր տիրած խեղճ Հայրենի տնակը,
Հացի վերջին պատառն էր արդէն.
Եւ յուսահատ դիմումներէ դէս ու դէն,
Հէքն էր թալուած սեւ մտածմանց յատակը:

— Վեր կաց, թշուա՛ռ, վիշտի զաւակ,
Վանէ թախիծ անյուսութեան.
Շուտ կը հասնի քեզ երկնառաք
Զեռքն Հայկական սուրբ Միութեան:

Սուգն է տիրած խեղճ Հայրենի սրտիկը,
Զուլումի սուրն անպակաս էր գլխին յար.
Դեռ նոր լծվարն էին տարեր բռնավար,
Չի կար նոյն իսկ սերմնցուի հատիկը:

— Վեր կաց, թշուա՛ռ, հոգի զաւակ,
Վանէ ստրատիպ բռնութեան.
Շուտ կը հասնի քեզ երկնառաք
Զեռքն Հայկական սուրբ Միութեան:

Մութն էր պատած խեղճ Հայրենի ճրագը,
Գէթ հուրն ուսման բոցավառեր իր հնոց,
Չի պակսիր գէթ մաքի լոյսը իր ապագ,
Որ չի մարեր ցեղին հաւատքն ու կրակ:

— Վեր կաց, թշուա՛ռ, լոյսի զաւակ,
Վանէ խաւարն տգիտութեան,
Շուտ կը հասնի քեզ երկնառաք
Զեռքն Հայկական սուրբ Միութեան:

ԳԱԲՐԻԷԼ ԽԱՆՃԵԱՆ

ՄԱՍԻՍ

Սիրտըս տխուր լի վէրքերով,
Իմ սեւ օրն եմ ես լալիս․
Մի դեղ չո՛ւնիս ցաւիս գնեմ,
Խեղճ ու սըգւոր իմ Մասիս։

Անգութ վէրքիս խորունկ ցաւից
Մինակ տխուր ման կուգամ,
Էրուած սրտիս լացի ձէնից
Գլուխս առած քեզ կուգամ։

Շա՛տ կան ցաւեր, շատ կան դարդեր,
Իմս սեւ է, ազալի․
Ձէնս լսի մի խօսք ասա,
Էրուած սրտիս դեղ լինի։

Սիրտս սեւ է, հոգիս տխուր,
Ցաւս էլ մէկը չը լսեց․
Լոկ արցունքն էր ցաւիս դարման,
Էն էլ չորցաւ ու ցամքեց։

Սարեր ձորեր ես միշտ ընկած՝
Հանգիստ չունիմ զօր, գիշեր,
Եարաբ դո՞ւ էլ, սիրուն Մասիս,
Ինձ չես ուզեր քեզ ընկեր։

Խօսք չես ասում, ես ո՞ւր գնամ
Էս սեւաւոր աշխարհում,
Գոնէ փորիր ինձ մի չիրիմ,
Արնոտ հոգիդ սեւ գրկում։

ՊԵՏՐՈՍ ՄՈՁՈՌԵԱՆՑ

ԱԼԱԶԱ ՊԱՐ

Սասման կ'ելնէր բարակ մուխ — Գլէջան.
Եարիկ մ'ունէինք Պուլանուխ. — Սըրալէ:
Զարկեց մախճան, թալեց պուխ. — Գլէջան,
Երես կարմիր, աչքեր թուխ, — Սըրալէ:
Տլէմ, տլէմ սրնջարի,
Ըմբա տլէմ սրնջարի:

Նախըր գընէն վար կ'էնէնք. — Գլէջան,
Քօռ անծեղուն քար կ'էնէնք. — Սըրալէ:
Իմ հէր քե աղջիկ չիտայ, — Գլէջան,
Զահլուխիւն թարկ անենք, — Մըրալէ:
Տլէմ, տլէմ սրնջարի,
Ըմբա տլէմ սրնջարի:

Շաղ թափեր գետին հալեր, — Գլէջան,
Բոբիկ հետիկն է կորեր. — Մըրալէ.
Առայ զհետիկն ու գայի, — Գլէջան.
Եարոջ դուռ հանդըռայուգի. — Մըրալէ:
Տլէմ, տլէմ սրնջարի,
Ըմբա տլէմ սրնջարի:

Կաքաւ կայներ վըր քարին, — Գլէջան,
Կըռուց գըրեր քնարին. — Մըրալէ:
Ես աղջիկ ենք, բէյլի ենք, — Գլէջան.
Նըչանլու ենք, տէյլի ենք: — Մըրալէ:
Տրլէմ, տրլէմ սրնջարի,
Ըմբա տրլէմ սրնջարի:

Եարիկս ի բաղչէն էր քուն, — Գլէջան,
Բուբայի բարճն էր գլխուն. — Մրրալէ:
Գագի, գագի հետրցայ, — Գլէջան,
Բանձրր ոեռին մօտեցայ: — Մրրալէ:
Տրլէմ, տրլէմ սոնօտոի.
Ըմբա տրլէմ սրնջարի:

Գացի թ՛առնենք թաղա հաց, Գըլէջան·
Անտէր թուղան գլխ չխած· Մըրալէ:
Փախայ, չէլայ վրր քարին, Գըլէնջան,
Ցաւար արի իմ եարին: Մըրալէ:
Տըլէմ, տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:

Եարոջ դըռնով ընցայ ես· Գըլէջան,
Անձրեւ եկաւ, թացւայ ես· Մըրալէ:
Արեւ զարկաւ, թըռփայ ես, Գըլէջան·
Քանց կարմիր վարդ բացւայ ես: Մըրալէ:
Տըլէմ, տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:

Ջեռնակայ բերղն էր փըլեր· Գըլէջան,
Եարիկս ի տակն էր քըլեր· Մըրալէ:
Քըլեր էր ու քըրտըլեր, Գըլէջան·
Հիալով էր, ա՛խ կ՚էնէր: Մըրալէ:
Տըլէմ, տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:

Բաղչոյ քաղաք ձորոյ մէջ, Գըլէջան,
Իմ եար գըռայ քարի մէջ, Մըրալէ:
Ցար ե՛րբ կենանք փախէ փախ, Գըլէջան,
Արի անենք առ ու փախ: Մըրալէ:
Տըլէմ, տըլէմ սընջարի,
Ըմրա տըլէմ սընջարի:

ԱՆՈՒՇ ՍԻՐԱԿԱՆ

Սիրտս վարձեր է մի մանուկ լալկան,
Զուր եմ խաբում նրան չաքարով,
Նա լալիս է միշտ, անո՛ւշ սիրական,
Եւ քեզ է ուզում օր ու գիշերով:
Ես նրան ի՞նչ ճար անեմ:

Ինչքան աչխարհում սիրականներ որ կան
Ցոյց տուի աչքիս, զուր եմ համոզում.
Բեզանից բացի, անուշ սիրական.
Նա ուրիշ ոչ ոք, ոչ ոք չէ ուզում:
Ես նրան ի՞նչ ճար անեմ

Ն. ՓՈՒՉԱԿ

ԾԻՐԱՆԻ ԳՕՏԻՆ

Փոթորիկէն վերջ տարերքն ահարկու
Քամի եւ տարափ, հանդարտ եւ հուր
Շուտով հանդարտին: Փայլի մէջ օդին
Ծիրանի գօտին:

Սրտայոյզ ցնցում, յուզում հոգեկան
Կանցնին հեռացհետ, դադրին բստ ինքեան
Հանդարտ ու խաղաղ, պարզուի միտքին՝
Ծիրանի գօտին:

Արիւնոտ յեղում, մահ, աւեր եւ հուր,
Տառապանք անվերջ, խոր ցաւեր անլուր
Մեզմանան շուտով: Փայլի «Ազատ»ին՝
Ծիրանի գօտին:

ԳԱԳԻԿ ՕՋԱՆԵԱՆ

ՔԵԼԷ, ՔԵԼԷ

Քէլէ, քէլէ, քէլէքիդ մեռնեմ,
Քո դովական խելէքիդ մեռնեմ:
Սիրաւոր լորիկ, վիրաւոր լորիկ,
Լորիկ, սեւաւոր լորիկ, լորիկ ջան: 1
Քէլէ, քէլէ, սոյիդ մեռնեմ,
Քո չինարի բոյիդ մեռնեմ:
Քէլէ, քէլէ, քօղիդ մեռնեմ,
Քո լուանկայ չողիդ մեռնեմ:
Քո սիրունիկ ձէնիդ մեռնեմ:
Քէլէ, քէլէ, քերնիդ մեռնեմ,
Քէլէ, քէլէ, ձեռիդ մեռնեմ,
Քո հուր կրակ սէրիդ մեռնեմ:
Քէլէ, քէլէ, աչիդ մեռնեմ,
Քո անուշիկ պաչիդ մեռնեմ:

ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

ՂԱՐԻԲԻ ԵՐԳԸ

Օ՛խտը տարով, օ՛խտը սարով,
Ա՛յ սիրական իմ աչխարհ,
Հեռացել եմ քեզնից լալով,
Ղարի՛պ ընկել սարէ–սար:
Կեանք եմ մաչում, սեւ օր քաչում,
Ընկած խալխի դռներին.
Քո աչքն է ինձ երում, մաչում,
Հոգիս կը ասամ էդ աչքին:
Կ՛ուզեմ հոգիդ կարօտն առնեմ,
Հող ու ջրիդ եա ղուրբան.
Բայց ո՞նց անեմ՝ ջամբէդ բռնեմ.
Բաղդն է կապել իմ ջամբան:
Վա՛յ դարիբին–օրը՝ օր չի
Վայով կեանքն է անցնում.
Դուրսը մեռնի. չօրում կորչի—
Ո՞վ է խեղճին հարցնում:

Ա. ՇԱՏՈՒՐԵԱՆ

ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԵՐԳԵՐ

Ձայնագրուած երգերու շարունակութիւնը տեսնել իրենց կարգին



ՏԻԱՐ Ն· ԱՄԻՐԽԱՆԵԱՆ



ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ՓԱՆՈՍԵԱՆ

Տիկ. Զապէլ Փանոսեան յատկապէս երգած եւ երաժշտապես Տիար Ն. Ամիրխանեանց ձայնագրած է այս բաժինը:



ԵՐԳ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ


Կարկուտ տե - ղաց Խա - նա - սո - րայ դաշ-տու-մը ,
Կարկուտ տե - ղաց Խա - նա - սո - րայ դաշ-տու-մը
Դաշնակ - ցա - կան ֆէ-տա - յի - ներ վը - րէժ ա-
ռան Հովտու - մը : Դաշ-նակ-ցա - կան ֆէ-տա-յի-
ներ վը - րէժ ա - ռան Հով-տու - մը :

ԻԹԱԼԱՑԻ ԱՂՋԿԱՆ ԵՐԳԸ




Լը - ռեց : Ամ - պե - րը ե - կան ծած - կե - ցին , եր-
կինք , ու լու - սին աչ - քէս խը - լե - ցին , խը - լե -
ցին : Մը - նա - ցի մի - նակ , հո - գիս վըր- դո-
ված , ձեռ - նե - րըս ծո - ցիս , գլու - խըս քար չ - ա-
րած : . Եւ այ - նու - հե - տեւ ա - մէն ի - րի-


կուն, մը - նում եմ լուս - նի խա - ղաղ ծա - գե-
լուն. Նո - րա ոլխ - րա - ված դէմ - քը նայ - ե-
լիս, Ցի - շում եմ Թըշ - ուառ վի - ճա - կը ազ-
գիս: Ա՜խ, ցո - լա, փայ - լէ տխ-րա - դէմ լու-
սին, զու - ցէ քո փայ - լից փայլ տաս և հա-


յին: Գառ - մէ չա-տե - րուն Վար-դա-նի մա-
ռը, Կամ ի՛նչ - պէս կո - րաւ հայ ազ - գի
գա-հը, Կամ ի՛նչ վեհ ու - րով սի-րում էր
Վար-դան, Մայ-րե-նի հո - ղը, աշ-խարհ Հայ-աս-
տան, Մայ-րե-նի հո - ղը, աշ-խարհ Հայ-աս-տան:
(բ)
(բ)


Ես լը - սե - ցի մի ա - նոյշ ձայն,
իմ ծե - րա - ցած մօր մօտ էր, մօր մօտ էր:
Փայ լեց նը - շոյլ ու - րա - խու-
թեան, Բայց տխ - րոս որ
I. II.
ե բաց էր, ե - բաղ էր:


Sopran Solo
Կուրտիկ ու-նիմ, գե-ղին ա, Ճամ-բայտու-էք Թողտունգայ,
Ճամ - բայտու-էք Թող տունգայ, Իմ եա-րը ձեր
գե-ղին-ա, Ճամ-բայտու-էք Թողտունգայ: Իմ եա-րը ձեր
գե - ղէն ա Ճամ - բայտու-էք, Թողտունգայ:


Դուխօսքտուիր ին - ձանից չը զաս - ուէ - իր,
թէզատուէիր հախ Տի-րոջմէն զատ-ուէ-իր,
այ մա-րալաղ - ջիկ, այ ջէյ-րան աղ - ջիկ, այ մա-
Bass.
թալթէզատուէիր հախՏի-րոջմէն զատ-ուէ-իր
այ մարալ աղ - ջիկ, այ ջէյրան աղ - ջիկ։


Ծա - ւալ, ծա - ւալ մա-քուր հով, փը-չիր,
փը - չիր, սաստ-կա - ցիր։ Ան-ծայ-րա - ծիր,
կա - տա - ղիր։ Ա՛խ, Հայ - րիկ ջան
Հայ - րիկ, Ա՛խ, Հայ - րիկ, Հայ - րիկ, Հայ - րիկ։


Ի ՁԷՆ ՀԱՅ - ԵՐ Ի ՍՈՒՐ Ե Ի ՀՐ - ԱՇ
ԼԵ - ՌԻՑ ԼԵՌ ՔԱՆ - ԴՈՒՄ Է Ա - ՀԵԼ ՀՐ - ԱՇ
ՑԱՆ
ՄԱՆ ՔԸ - ՈՒԷՔ ՀԱՅ - ԵՐ ՔԸ - ՈՒԷՔ
ԴՈ - ՀՈՒՄ Է ՄԻ ՁԱՅՆ ԴԷ - ՊԻ, ԴԷ - ՊԻ
ԴԷ - ՊԻ ՀԱՅ - ԱՍ - ՏԱՆ.
ԴԷ - ՊԻ ՀԱՅ - ԱՍ - ՏԱՆ, ՔԸ - ՈՒԷՔ ՀԱՅ - ՐԻ
ՔԸ - ՈՒԷՔ ԴԷ - ՊԻ ՀԱՅ - ԱՍ - ՏԱՆ.

ԱՐԻ ԻՄ ՍՈՒԱԿ


Ա - րի իմ սու - խակ, թող պար-սէզ մէ-
Ա - րի իմ սու - խակ
Ա - րի սու - խակ
Ա - րի սու - խակ
րին, տա - ղե - րովքուն բեր
քուն բեր
թող պարսէզ մէ - րինտաղերով քուն բեր
տա - ղերովքուն
տը - գիս ա - չե - րին, բայց նա լա-լիս
ա - չե - րին, բայց
ա - չե - րին քունքեր բայց նա լա-լիս
բեր քուն բեր բայց
է դու սու-խակ մի՛ գայ
նա լա-լիս է դու սու-խակ մի՛ գայ, մի գայ
նա լա - լիս է
իմ որդին չու - զէ տի - րա - ցու դատ - նալ:
իմ որ - դին չու - զէ դատ - նալ:
իմ որ - դին չու-զէ տի - րա-ցու դատ - նալ:
իմ որ-դին տի - րա-ցու դատ - նալ:


Բոյ - ըդ բարձըր սալ - փի չի - նար, Աչ - քըդ
նախ-շուն, ուն - քըդ կա-մար, դուն ստեղծուելես ին - ծի
համար, Ան - գին ծա - ղիկ իմ նոր բու-սած, դուն ստեղ-
ծուելես ին - ծի համար, Ան-գին ծա-ղիկ իմ նորբուսած։


Ա - հա ե , լաւ լու - սին ար - ծաթ մուխ ամ -
պե - րու ըս-տուե - րէն , Ա - նուշհո - վիկ , փը-չէ յու -
չիկ Ու դէպ ինձ բեր բիւրբիւրա - լիք , ա-նուշ հո -
վիկ , փը-չէ յու-չիկ Ու դէպ ինձ բեր բիւրբիւր ա - լիք ։


Ա - հա սուր-հան-դա-կի սայ-լա - կը ու-ղիղ ճամ-
բով է դուրս թռ-չում, Եւ Վալ-դա - յի տը-խուր զան-
գա-կը կա - մա-րի տակ է զո - ղանչում,, Եւ Վալ-դա-
յի տըխուր զան-գա - կը կա-մա-րի տակ է զո - ղան-չում ։


Մայր Ա - րաք - սի ա - փե - րով,
Քայ - լա - մո - լոր գը - նում եմ,
Հին հին դա - րուց յի - շա - տակ, ալ-
եաց մէ - ջը պը - տում եմ.


Աղ - ջը - կերք, պար բըռ - նե - ցէք,
Ար - մի - կի ե - րես գո - վե - ցէք,
Ա՛յ ե - րես, չար - մաղ ե - րես,
դու մեզ չը քոզ - նես սև ե - րես,


Ձայն տուր, ո՛վ ծո - վակ. ին - չո՞ւ լը - ռում ես,
Ող - բա - կից լի - նել ես կա-
մի՞ս դըժ-բաղ - դիս, Տար-
ժե - ցէք զե-փիւռք ա - լի - քը վէտ-վէտ, խառ-
նե - ցէք ար - տա - սուքս այս Ջը - րե - րի հետ։


Իմ սի-րե-լի դա-ւա-կուն-քըս, կը
թա-փա-ռին օ-տար աշ-խարհ. Ես ո՞ւր գի-
տեմ, ուր փընտռեմ, կը ծա-ռա-յեն այ-լոց խո-նարհ. Ե-
կայք որ-դեա-կըք իմ, ձեր մօրն այ-ցե-լու-թեան, ե-
կայք, որ-դեակք իմ, Ձեր մօրն այ-ցե-լու-թեան։


Ծա-ռիս տա-կը մա-նի-շակ, Ջան, գիւ-լիւմ
Ջան, ջան, իմ եա-րըքանց քեզ չի-շակ
Ջան ծա-ղիկ Ջան, ջան իմ եա-րըքանց
քեզ չի-շակ Ջան ծա-ղիկ Ջան, ջան


Թող չ'եր - գէ բըլ - բուլ Մը - չու
դաշ - տե - րում, Թող երգ չը հըն-
չէ Սար - նոյ լեռ - նե-
րում. Երգ թող չը հըն - չէ
Սար - նոյ լեռ - նե - րում


Թող ժը - պիտ չը գայ հայ - ե-րուս դէմ-
քին, Թող
հայ - ե -
րէ
հայ - ե -


Թող փը-չէ քա-մին պաղ պաղ ե-րե-սիս,
Որ-քան որ կու-զէ Թող փը-չէ հիւ-սիս,
Վե-րէն ամ-պե-րէն սաս տիկ ձիւն թող գայ,
Յա-ռաջ եմ, վաղ ուշ, գա-րու-նը պիտ գայ

ՀԻՄԻ ԷԼ ԼՌԵՆՔ




ի՞նչ ա - նենք հի-մի էլ լը-
ի՞նչ ա - նենք
ասացէ՛ք, եղբարք, ի՞նչ ա - նենք հի - մի լը - ռենք
ռենք ա - սա-ցէ՛ք, եղ-բարք: հայ-եր ի՞նչ ա-
ա - սա-ցէ՛ք, եղ-բարք: հայ-եր ի՞նչ ա-
նենք հի - մի էլ լը - ռենք:


Ա - րեւ ա - րեւ դուրս ե - լիր, Այ - քըդ,
ուն - քըդ ինձ ցոյց տուր, Ծուր - տից ջա - նըս
շղո - ղում է, Ձըպ-լախ որ - րիս տա - քա - ցուր:
Հորս - ու մօ - րըս սղա - նաւ քա - ֆիր
Թուր - քը, ո՞ւր գը - նամ. Փա - րա չու - նիմ,


փայտ առ - նեմ, Օ - ջախ վա - ռեմ, տա - քա - նամ:
Ա - րև, ա - րև, թէզ ա - րա, բուք բո-
բա - նը պա - լիս ա էս - օր ցըր - տից
որ մեռ - նեմ էլ ա - րև - ըդ ըն - չի՞ս ա:


Բամբ ո - րո-տան բարձուստ ամպերինք Ա - րա-րա-տեան
դաշտն ի վայր, Ա - րի ա - րանց արիւնք յե-ռանդ
ա - ռա-տա-նան ի հրաշայր, Հրա - ւէր հայ-րե-նեաց
Հրա - չակ ընդ-հա - նուր, հո - գի հայ - կա - զանց


թոր - թո - քին ի հուր։ Որք երկ-նա - ւո - րի
պատկերն էք կա-րօտ, որք երկնա-ւո-րի՝ փառաց երկնայորդ
Հայ-ո՛ն ա - րի ա - րանցման - կունքհայրե-նավրէժ
հայ - կա - զունք, Հայ-ո՛ն, ի զէնգունդիգունդ


յեռ - եալի պարթունդիթունդ, հա-պօն ի զէնգունդ ի գունդ
յեռեալիպարթունդիթունդ ի զէն, ի վրէժ, օ՛ն, անդր յա-
ռաջ, ի զէն ի վրէժ, մի ձախ, մի յաջ, օ՛ն անդր յա-
ռաջ, յա-ռաջ, յա-ռաջ, հապ - օ՛ն, յա - ռաջ:


Յա-ռաջ, հայ-եր, հայ-րե - նի - քի ա- զա- տու-
Թեւանժամն է հա - սեր, Չէք տես-ներ բըռ-նա - ւորն մե-
զի դէմ առ - նում դը-րօշ է պարզեր, դէմ առ-
նում դը - րօշ է պար զեր, Չ՞էք լը -սեր դեռ Հայ-աստա-
նի ժո- ղո-վուր-դի հա- ռա - չանք - ներ, քիւր-


տեր,Թիւրքերհայգիւղե-րու մէջ կը մորթենմերեղ-բայր-
ներ, Ձէն-քեր առ-նենք հայ - եր, չու-
տով կազմենք գուն-դեր, քա - լենք յա- ռաջ,
Թողթըշնա - մուն ջընջ - ուի ա- նարգ ա - նուն։


Դաշ-նակցա-կան խումբ զը-նանք մենք Սա-սուն,
Մեր հայ եղ-բայր-ներ մեզ են
ըս-պա-սում։ Անդ-րա-նիկ-ը քաջ
իր ըն-կեր-ներ-ով, կռ-վէ պա-տե-
ղամ, կըս-պա-սէ գար-նան։


Տալ - ո - րիկ - ցի կըտ - րիճ եմ ղրդ քաղ - քը -
ցու պէս չեմ թուլա - մորթ , Սա - րի ղա - ւակ , քա - րի
որ - դի , հին քաջ հայ - ոց եմ մը - նա - ցորդ ։ Սա - րի
ղա - ւակ , քա - րի որ - դի հին քաջ հայ - ոց եմ մը - նա -
ցորդ ։ Տալ - ո - րիկ - ցի զաւակ եմ քաջ , չեմ խոնարհիր թուրքին -


չեմ տես-եր ոչ ա-րօր, ոչ
մած. Հայ աղ-բըր-տիք, ճան աղ-բըր-տիք, Տալ-ւո-
րիկ-ցի զա-ւակ եմ քաջ, Հայ աղ-բըր-տիք, ճան աղ-
բըր-տիք, Տալ-ւո-րիկ-ցի զա-ւակ եմ քաջ.


Լուսնա - կը ցո - լաց գը - նաց, վայ լէ,
լէ
լէ, լէ, ջան լէ, լէ, լէ, վայ լէ, լէ, ով էր
տեսնել սի - րած եա - րը մո - ռա - նայ. ով մո-
լէ
ռա - նայ ջուխտ աչ - քե - րով կու - րա - նայ.


Տէր ո - ղոր - մեա՛ հոյ - ոց ազ - գին,
Տուր զո - բու - թիւն մեր թոյլ բազ - կին,
Հա - լա - ծէ՛ դու ա՛ն - գութ տուճ - կին,
Տէր ո - ղոր - մեա, Տէր ո ղոր - մեա։


Համ - բարձման եր - կու - շաբ-թին, համ-
բարձման եր - կուշաբթին, ա - ռաջ զփոխնու
զգերընդին, ա - ռաջ զփոխ-նու զգերընդին:


Հա-բըր-բան, հա - բըր - բան, հտ - բըր - բան,
քնդղուր-բան հա - բըր-բան օյ, օյ, հա - բըր - բան
օյ, օյ: Սի-նամ սա- ըեր օյ, օյ, իր- կու-նը մու-
Թը կո-խեց, դըու-նե-րը չու - քը կո - խեց, հա-բըր-բան
օյ, օյ, հա-բըր - բան, օյ, օյ, էր - է - Թը ձա-



ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԱՅՆ ՎԱՌ ՍԷՐԸ




Օ՛յ նա զա - նըմ, նա զա-նըմ, օյ, օյ,
Օ՛յ նա զա -
Օյ, օյ, օյ, օյ, օյ, օյ,
Օ՛յ, նազա-նըմ, օյ, նա-զա-նըմ, նա-զա-նըմ, օյ, օյ,
նըմ նա - զա-նըմ,
Օյ, նազա-նըմ,
Օյ, օյ, օյ, օյ, օյ, օյ, օյ, օյ,
Օյ, նա - զա-նըմ եար ջան դու րա - բուվ է-կար
Օյ, օյ,
կա-նաչ սա րե - բուվ է-կար, կարմիր ու - ղե-
բուվ է - կար, եար-ջան գու րա - բուվ է-կար,

ԱՆԻՒ ՈՂՐԸ



ԸՆԻՒ ՈՂՐԸ




Կռո - ւե - ցէք որ - դերք, Կռո-ւե-ցէք քաջ
քաջ, Ան - վե - հեր կանգ - նած Թըշ - նա - մու ա-
ռաջ Ցան - կա - լի է մեզ
հը, Հե - ռու մե-զա - նից Թըշ-նա-մու ա հը,



ԸՆՎԵՐՋ ԳՈՆԳԻՏՆԵՐ




Առ — տու մը դեռ մը - թըն - չաղ, կը
ծա - ւա - լի չաղն ու չաղ, Մաղ-կանց մէջ քեզ տե-
սայ ես՝ կը ժըպ-տէ - իր լու-սոյ պէս,


Ա - հա՛ ծա-գեց կար - միր ա - րև Տաք ու պայ-ծառ
Barytone Solo


Կռունկ ուս - տի՞ կու - գաս, ծա - ռայ եմ ձայ-
նիդ,
կը - ռունկ, մեր աշ - խար-
հէն խապ - րիկ մը չու - նիս։


Հա - յը մա-հէն չը վախնար, հա - յը բանտէն չըվախնար,
Միշտ կռւզէ պա - տե-րազ-միլ հայ-կա-կան հո - ղին համար,

MARSEILLES HYMN

ROUGET DE LISLE



HAIL, COLUMBIA!

JOSEPH HOPKINSON J. FAYLES



AMERICA

S. F. Smith — Henry Carey



MY MARYLAND

Jas. R. Randall



STAR-SPANGLED BANNER

FRANCIS SCOTT KEY



HOME, SWEET HOME

JOHN HOWARD PAYNE



ՀԱՄԲԱՐՁՈՒՄ, ԵԱՅԼԱ

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալան,
Ջուքել են հանդեր նախշուն գորգերով,
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան,
Վիճակ հանելու աչխոյժ երգերով:
Համբարձում, եայլա,
Եայլա Ջան, եայլա,
Սեւ սարեր եայլա,
Եայլա Ջան եայլա:
Երգ ու բոյր խառնած,
Թեւ թեւի բռնած •
Ջուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպէս թիթեռներ:
Համբարձում, եայլա,
Եայլա Ջան, եայլա,
Լաւ օրերը, եայլա,
Եայլա Ջան, եայլա:
Եկաւ Համբարձում,
Ծաղկով զարդարուած,
Մեր բաղդին հարցնում
Ով է մեզ պըռած:
Համբարձում, եայլա,
Եայլա Ջան, եայլա,
Սէր օրեր, եայլա,
Եայլա Ջան, եայլա:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

«ՀԱԲԸՐԲԱՆ»

Հաբըրբան, ջանէ ջան,
Հայց եմ թխել դարի ա,
Իմ եարը սաֆարի ա,
Եա՛ր ջան, սաֆարիդ դուրբան,
Ձօսքերդ չաքարի ա:

Հաբըրբան, ջանէ ջան,
Պուճուր աղջիկ սեւաւոր,
Ձալխի դռները սալոր,
Գնա՛, մէրդ կանչըմ ա,
Թո՛ղ ինձ չանէ մեղաւոր:

Հաբըրբան, ջանէ ջան,
Ծառատակին ջուխտըմ ղօչ,
Մինը փնջած, մինը ո՛չ,
Ատուա՛ծ, դարդեահիդ մեռնեմ,
Մընին կ'ատաս, մընին ո՛չ:

Հաբըրբան, ջանէ ջան,
Լուսնեակը պահ ա մտել,
Անուշ եարս չեմ գտել,
Աչքս արտասուք լցուած՝
Ես տեղաչոր չեմ մտել:

Հաբըրբան, ջանէ ջան,
Բաղիդ մէջ կայ երկու ծառ,
Տղա՛յ, արի՛ ինձի տա՛ր,
Ատուծուն մատաղ կ'անեմ
Երկու չիչակ, երկու դառ:

Հաբըբըման, ջանէ ջան,
Շատ մի՛ անի վար ու ցած,
Ես քեզ վաղուց եմ տեսած,
Մենք իրարու նման ենք,
Մէկ խնճոր էրկու կիսած:

Հաբըբըման, ջանէ ջան,
Նոր տնկած բաղի եար ես,
Մեզի թագա նուբար ես,
Անունիդ մեռնեմ, ջիւան,
Աչխարքին բարեբար ես:

Հաբըբըման, ջանէ ջան,
Փափաղդ ծուռ ես դրել,
Գօտիկդ նուռ ես դրել,
Ծոցումս դեղին ոսկի
Դու էրկու բուռ ես դրել:

Ա Զ Ե Ր

(Նուէր Օր ·Մ···ին)

Դու տեսե՞լ ես սրբավայրում
Կանթեղ վառած սեղանին,
Ուր նա աղօթ լոյս է սփռում
Հեզ Տիրամօր պատկերին:
Կամ դիշերը դու տեսե՞լ ես
Շեչա կայծակը չանթելիս,
Սար ու անտառ նկատե՞լ ես
Նորա վայելից դողալիս:
Դու տեսե՞լ ես խուլ ալմուկով

Հեղեղուած գետն յուզուելիս
Եւ ափերից հառաչանքով
Տուն ու աւար դերելիս:
Այպէս էին այն աչերը,
Որոց անյայտ սիրեցի,
Եւ ի՞նչ... նորանց սլաքները
Ինչ չանթեցին — դերեցին...

Յակոբ Յակոբեանց

ՇԱՂԳԸՐ—ՇՈՒՂԳԸՐ

Շապգը՛ր–չուղգը՛ր քեամարըս,
Բօյով–սօյով իմ եարըս:
Աբի՛ ապրէ՛ր, խաղ աննենք,
Զար թշնամուն դաղ աննենք:
Շապգը՛ր–չուղգը՛ր քեամարըս,
Բօյով–սօյով իմ եարըս:
Աբի՛ ապրէ՛ր, խաղ աննենք,
Մեր ցաւերուն ճար աննենք:



ԹԵՒՊԱՐ

Շորորա՛, Աւուշ ջան, շորորա՛,
Աւուշի շորորով ես կորայ,
Աւուշ, լուանակ նորել է,
Շորորա՛, Աւուշ ջան, շորորա՛:
Նորել՝ բակ բոլորել է.
Աւուշի շորորով ես կորայ,
Շարան–շարան ամպի մէջ
Շորորա՛, Աւուշ ջան, շորորա՛.
Մըտել ու մոլորել է.
Աւուշի շորորով ես կորայ:
Վարդ եմ քաղել շաղերով,
Վեր եմ դըրել մաղերով,
Մի ջուխտ չամամ եմ կոլցրել,
Իրա կանաչ թաղերով:
Ծամեր ունիս ծիրանի,
Քամին տա՛յ թել–թել անի,
Էդ կապուտակ ծով–աչեր,
Ո՞ւմ խելքն ասես՝ կը հանի:
Ալ վարդ բացուել է հովին,
Սոխակ կայնել է քովին.
Բացի իրենից ձեռ տալու՝
Մօտ չի թողում ոչովին:

Կոմիտաս Վարդապետ

ԵՐԳ Ս. ՆԵՐՍԷՍԻ

Ցիշեսցուք ի գիշերի զանուն քո, Տէր:

Բղխեսցեն սիրտք մեր զբան բարի, եւ լեզուք մեր պատմեսցեն զգործս երկնաւոր թագաւորիդ:

Ի մէջ գիշերի յարուցեալ խոստովանեսցուք զքեզ, Տէր:

Զաղօթս մեր տացուք քեզ, Տէր, ի գաւիթս քո, ի մէջ նոր Երուսաղէմի:

Ի գիշերի համբարձուք զձեռս մեր սրբութեամբ առ քեզ, Տէր:

Ի ձայն պոհութեան, ամենայն հոգւիք, օրհնեցէք զՏէր:

փ. *Զարթի՛ք, փառք իմ, զարթի՛ք, եւ ես զարթեայց առաւօտուց. ալէլուիա:*

Զարթի՛ք ընդ զուարթունս, մանկունք վերինն Սիոնի. ալէլուիա:

Զարթի՛ք որպիք լուսոյ, ի օրհնութիւն Հօրն լուսոյ. ալէլուիա:

Զարթի՛ք փրկեալք արեամբ, եւ տուք զփառս փրկողին. ալէլուիա:

Զարթի՛ք նոր ժողովուրդք, նոր երգս առեալ նորոգողին. ալէլուիա:

Զարթի՛ք, հարսունք հոգւով, սպասեալք գալոյ սուրբ փեսային. ալէլուիա:

Զարթի՛ք, վառեալք լուսով, ըստ խմաստունն սուրբ կուսանացն. ալէլուիա:

Զարթի՛ք, պատրաստեցէք իւղ լապտերաց ձերոց արտասուս. ալէլուիա:

Զարթի՛ք, եւ մի՛ ննջէք, նման յիմար կուսից ներհէք. ալէլուիա:

Զարթի՛ք, երկիրպագցուք, եւ արտասուօք զայս ասացուք. ալէլուիա:

փ. Զարթի՛ր, ընդէ՞ր ննջես, Տէր, մի՛ մերժեր զմեզ յապառ:

Արի՛, Տէր, օգնեա՛ մեզ, տացուք անուանդ քում զփառս:

Այժմ եւ յաւէտ Հօր եւ Որդւոյ եւ Սուրբ Հոգւոյն. ամէն:

փ. Զարթուցեալքս, ի զբաղմանէ գիշերային հանդերձեսցէք:

Շնորհեսցէ մեզ մարդասէր Տէր ի մխիթարութիւն եւ ի սփոփանքս եկեղեցւոյ:

Ահիւ եւ դողութեամբ կացցուք ի յաղօթս:

Եկեալ խոստովանեսցուք զյանցանս:

Եւ գացուք ի ֆրխաուսէ զքաւութիւն եւ զմեծ զորմութիւն: Ամէն:

Գկ. կցորդ. Անբաժանելի եւ համապոյ երրորդութեանդ. համաձայնեալք ընդ զօրս երկնից. փառս մատուցանեմք:

Փա՛ռք քեզ: Որ յանարուեստ յաթոռ բարձրացեալ հանգչիս. Սո՛ւրբ Աստուած, հզօր եւ աքանչելագործ:

Փա՛ռք քեզ: Որ յանէից գոյացուցեր զամենայն արարածս. Սո՛ւրբ Աստուած, անճառ Հօր անեղ Որդի:

Փա՛ռք քեզ: Որ տեսչութեամբ խնամես զամենայն արարածս. Սո՛ւրբ Աստուած, Բղխումն անսպառ աղբեր:

Տէ՛ր: Ժողովրդապետք եկեղեցւոյ՝ ի քէն հայցեն ասելով. Հովիւ բարի, ողորմեա՛ բանաւոր հօտի:

Ամէն. Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:

Ամէն. Ալէլուիա. Ալէլուիա. Ալէլուիա:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՒԱՒՕՏՈՒ

Գկ· *Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խա-*
ղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն: Եւ օրհնութիւն քեզ
ի բարձունս, օրհնեալ ես, Տէր Աստուած մեր· օրհնեմք
զքեզ եւ գովեմք զքեզ: Խոսովանիմք Տէր զքեզ եւ եր-
կիրպագանեմք զքեզ, փառաւորեմք զքեզ, գոհանամք Տէր
զքէն վասն մեծի փառացդ քոց: Տէր թագաւոր, սուրբդ
երկնային, Աստուած եւ Հայր ամենակալ: Տէր եւ որդի
հօր միածին, Յիսուս Քրիստոս եւ սուրբ որդի: Տէր
Աստուած, Գառն Աստուծոյ եւ որդի հօր, որ առեր ըզ-
մեզս ի կուսէն: Ողորմեցար, բարձեր ըմեղս աշխարհի,
եւ արդ ընկալ զաղաչանս մեր: Սուրբդ որ նստիս ընդ
աջմէ Հօր՝, ողորմեացդ մեզ: Զի դու միայն սուրբ, դու
միայն բարձրեալ ես, դու միայն Տէր մեր Յիսուս Քրիս-
տոս: Տէր եւ հոգիդ սուրբ՝ որ ի փառս Աստուած ընդ
հօր· Ամէն:

Եւ յամենայն ժամ օրհնեմք զքեզ Տէր, եւ գովեմք
զանուն սուրբ քո յաւիտեան եւ յաւիտենից յաւիտենից:
Արժանի արա, Տէր, զօրս զայս խաղաղութեամբ եւ ա-
ռանց մեղացդ պահեա զմեզ: Օրհնեալ ես, Տէր Աստուած
հարցն մերոց, գովեալ եւ փառաւորեալ է անուն սուրբ
քո յաւիտեանս· ամէն: Օրհնեալ Տէր, ուսո՛ւ ինձ զար-
դարութիւնս քո (երիցս կրկնեա): Տէր, ապաւէն եղեր
մեզ յազգէ յազգ: Ես ապաչեմ, Տէր, ողորմեա ինձ եւ
բժշկեա՛ զանձն իմ, ես մեղայ քեզ: Ցո՛յց մեզ Տէր զո-
ղորմութիւնս քո եւ զփրկութիւնս քո տո՛ւր մեզ: Տէր,
ողորմութիւն քո յաւիտեան, զգործս ձեռացդ քոց մի ան-
տես առներ: Տէր իմ, զքեզ ապաւէն արարի, ուսո՛ ինձ
առնել զկամս քո, զի դու ես Աստուած իմ: Ի քէն է Տէր,
աղբիւր կենդանութեան եւ լուսով երեսացդ քոց տեսա-

նեմք զլոյս: Ծագեա՛ զողորմութիւնս քո՝ որք՛ ճանաչեն զքեզ Տէր:

Մաղք. Փառք, պատիւ եւ երկրպագութիւն ի բարձունս Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. այժմ եւ միշտ:

Ա՛ձ. ակ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք, զՓրկչին մերոյ օրհնեսցուք զյարութիւն:

Ցարեաւ Աստուած եւ ցրուեցան ամենայն թշնամիք նորա: Փախեան ատելիք նորա յերեսաց նորա:

Բա՛. բկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Զյարուցեալն զԲրիստոս օրհնեսցուք, եւ զյարութիւն նորա փառաւորեսցուք:

Գա՛– գկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Որ եկն ի բարձունս եւ գերեաց զգերութիւն. էառ սուր, բաշխեաց պարգեւս եւ ետ որդւոց մարդկան:

Դա՛. դկ. Զյարութիւն զՓրկչին օրհնեսցուք:

Որ համբերեաց խաչի եւ եդաւ ի նորափոր վիմի, եւ Աստուածային յարութեամբն զմահացեալս վերաբերեաց ի կեանս:

ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ

Դպ. Խորհուրդ խորին անհաս անսկիզբն, որ զարդարեցեր զվերին պետութիւնդ. ի յառագաստ անմատոյց լուսոյն. գերապանծ փառօք զդասս հրեղինաց:

Անճառահրաշ գործութեամբ առեղծեր զԱդամ պատկեր տիրական, եւ նազելի փառօք զգեստաւորեցեր ի դրախտն Աստենի անդի բերկրանաց:

Զարշաւանօք քո սուրբ մխածնիդ, նորոգեցան արարածք ամենայն եւ վերստին մարդն անմահացաւ, զարդարեալ ի զգեստ անկողոպտելի:

Անճրեւածին բաժակ հրահոսան, որ հեղար յառաք-

եալսն ի սուրբ վերնատան, հեղ եւ ի մեզ Հոգիդ սուրբ Աստուած ընդ պատմուճանին զքո զիմաստութիւն:

Տան քում վայելէ սրբութիւն որ զքեզար զվայելչութիւն. սրբութիւն փառաց ընդ մէջ քո ածեալ, պատեա զմէջս մեր ճշմարտութեամբ:

Որ զարարչագործ բազուկս քո տարածեցեր ընդ դէմ աստեղաց, հաստատեա զբազուկս մեր կարողութեամբ. համբարձմամբ ձեռաց առ քեզ մխիթարդիլ:

Հիւսմամբ թագ ի գլուխ պատեսցես զմիտս եւ զդայարանս, խաչանիշ ուրարմամբ ըստ Ահարոնի ծաղկեալ ոսկեթել ի զարդ խորանին:

Բամիջ բոլորից տիրապէս աստուածպետական, նաւորատապատ սիրով զմեզ զգեստաւորեցեր, քում սուրբ խորհրդոյդ լինիլ սպասաւոր:

Թագաւոր երկնաւոր, զնկեղեցի քո անշարժ պահեա, եւ զերկրպագուս քում պահեա ի խաղաղութեան:

Քհնյ. Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնին:

Սրկ. Սուրբ զԱստուածածնին եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս զարարածս իւր: Ամենակալ Տէր Աստուած մեր կեցո՛ եւ ողորմեա՛,

Քհնյ. Ընկալ Տէր, զաղաչանս մեր բարեխօս:

Դպ. Ցիշեցիր եւ զմեզ առաջի անմահ Գառինն Աստուծոյ:

Քհնյ. Ցիշեալ լիցիք առաջի անմահ Գառինն Աստուծոյ:



ԿԱՆՈՆ ԽԱՉԱՀԱՆԳՍՏԻ

Ջօրուբիւն սուրբ խաչի քո Քրիստոս, որ կանգնեցեր ի փրկուբիւն աչխարհի, սա պահեսցէ զմեզ յամենայն վտանգուբենէ:

Քանզի ի սմա բարձրացար Աստուած, եւ ի սմա հեղեր զպատուական սուրբ զարիւնդ, սա պահեսցէ զմեզ:

Եւ զքո միւսանգամ զգալուստդ նչանաւ խաչի քո ցուցեր աչխարհի, սա պահեսցէ:

Աստուած մարդասէր, որ զմաքսաւորն արդարացուցեր· քաւեա դիս զմեղաւորս:

Որ քղանցիւ հանդերձի քո զմերձեցեալն ի քեզ բժըշկեցեր· քաւեա:

Որ զանապան վիրօք մեղաց հարաք հոգիս ի թշնամւոյն· եւ ի բազմապատիկ հիւանդուբիւնս կարօտացաք մարդասիրիդ բառնալոյ զցաւս մեր· վասն որոյ բժչկեա զմեզ Քրիստոս, որպէս մարդասէր:

Որ նկիր ի փրկուբիւն մարդկան ծննդեամբ կուսին Մարիամու· եւ կենդանարար քո յարուբեամբդ· հրաւիրեցեր զմահացեալքս եւ յարուբիւն անմահուբեան, վասն որոյ աղաչանօք մօր քո կեցո զմեզ Փրկիչ:

Փառք Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ:

Առ քեզ ապաւինիմք, Ամենասրբուհի· զերազոյն եւ հրաչալի եւ բաչխող բարուբեանց· աղբիւր ես ծարաւեաց եւ հանգիստ աչխատելոց· եւ եղեր վերընկալ աստուածային բանին:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեան։

Քհնյ. *Սրբեա՛, Տէր, զմեղուցեալ քոյ ծառայից ըզ-գայարանս, եւ շնորհեա՛ տեսանել զքեզ, եւ լսել զհայ-րական ձայն, եթէ դա է որդի իմ սիրելի։*

Դպ. *Ամէն ալէլուիա, ալէլուիա, ալէլուիա։*

Քհնյ. *Օրհնեսցի եւ սրբեսցի ջուրս այս նշանաւ։ (Ե-րիցս կրկնեա)։*

Դպ. *Ամէն։*

Քհնյ. *Օրհնութիւն եւ փառք։*

Դպ. *Տաճար են սուրբ Հոգւոյն, կենդանի ոսկերք սոցա հիւանդաց բժիշկ, աղաչեսցուք զՏէր սոքօք խնայ-եա ի մեզ։*

Սոքա են դեղ կենաց, պարգեւեալ մեզ ի Քրիստոսէ ի բժշկութիւն, պատուական սուրբ արեամբն իւրեանց։

Սա է կարապետ յաւուր գալստեան Փրկչին, եւ պսակ պարծանաց հաւատացելոց եւ սովաւ յաղթեսցուք յանօ-րէն թշնամւոյն։

Սրկ. *Վասն հիւանդաց։*

Քհնյ. *Փարատեա։*

Սրկ. *Սուրբ խաչիւս աղա.։*

Քհնյ. *Պահպանիչ։*

Սրկ. *Օրհնեցից։*



Ե Ր Գ

Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս· բնակեալդ ի լոյս յանմատոյց, Հայր երկնաւոր ի դասուց լուսեղինացն օրհնեալ· ի ծագել լուսոյ առաւօտուս, ծագեա ի հոգիս մեր զլոյս քո իմանալի:

Լոյս, ի լուսոյ ծագումն արեգակն արդար, անճառ ծնունդ հօր որդի· յառաջ քան զարեւ անուն քո գովեալ ընդ հօր· ի ծա·:

Լոյս, երբեակ եւ մի անբաժանելի սուրբ երրորդութեան, զքեզ ընդ երկնայնոցն երկրածինքս միշտ փառաւորեմք, ի ծա·:

Ե Ր Գ

Փառաց ի փառս բարձրանան, աջակողմեանքն վերանան, յորժամ լսեն զերանական ձայն օրհնութեան ի քէն կոչման, ննջեցելոյս մեր լսեցո զԱստուածային բարբառդ քո, դասաւորեա զսա վերնոցն երգել զփառս ընդ զուարթնոցն:

Քահանայք եւ ժողովուրդք հայցեմք ի քէն Տէր բարեգութ, ընդ ննջեցեալսն հաւատով, ընկալ զմեզ նովին յուսով: յերուսաղէմ քաղաք վերին յորում արդարքն ժողովին, ի փառս վերերգել միշտ ընդ նոսին երրորդութեանդ երբեակ անճին:

Ի վերին երուսաղէմ ի բնակարանս հրեշտակաց, ուր ենովք եւ Եղիաս կան ծերացեալ աղաւնակերպ, ի դրախտին եդեմական պայծառացեալ արժանապէս, ողորմած Տէր ողորմեա, հոգւոցն մեր ննջեցելոց:

Ահեղ խորհուրդ քահանային, բազկատարած կայ ի բեմին, առաջի սուրբ սեղանւոյն, հուր շիջանի, խաւար մերժի, տրտմեալ հոգիքն ուրախանան, զի Թողութիւն մեղաց լինի, ողորմած Տէր:



ՋԱՏԿԻ ԱՌԱՒՕՏ
ԱՒԱԳ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ա՛ձ· *Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ եւ երկնաւոր, քեզ աւետիս խնդութեան, հարան ի յերկրէ եկեղեցի, օրհնեա ի ձայն ցնծութեան, զԱստուած քո Սիոնէ:*

Այսօր անճառ լոյսն ի լուսոյ լուսաւորեաց զմանկունս քո, լուսաւորեա Երուսաղէմ, քանզի յարեաւ լոյս քո Քրիստոս, օրհնեա՛,

Այսօր խաւարն անգիտութեան հալածեցաւ երբեակ լուսովն, եւ քեզ ծագեաց լոյս գիտութեան, յարուցեալն ի մեռելոց Քրիստոս, օրհնա՛:

Այսօր զաւիկ մեր զենմամբ Քրիստոսի, արասցուք ասն ցնծութեամբ, նորոգեալս ի հնութենէ մեղաց ասելով, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Ընդ լուսանալ միաշաբաթին կանխեցին կանայքն ի դերեզման, ի խնկել զանապական մարմինն: Եւ գտին զվէմն բարձեալ ի դրաց դերազմանին եւ լուեալ բարբառ ի հրեշտակէն, եթէ յարեաւ Քրիստոս եւ խափանեց զմահ: Եւ հանդիպեալ քո Տէր, առաքելոցն եւ տուեալ ողջոյն կենդանարար, առաքեցեր զնոսա ի փրկութիւն տիեզերաց:

Փառք յարութեան քո Տէր: Պատրանօք նախաստեղծին մերկացաք ի լուսոյն, իսկ յարութեամբ միածնիդ զգեցաք զանմահութիւն, փառք": Պատրանօք վայրին ճաշակեցաք զմահ, իսկ ի վայրէն կենաց նորոգեցաք ամենեքեան, փառք":

Ընդ կանայսն իւղաբերսն առ քեզ առաւօտեմք կենդանիդ յաւիտենից Քրիստոս, ընկալ եւ զմերս, փոխանակ խնկոցն զօրհնաբանութիւնս: Փոխանակ սուրբ աւետաւոր զուարթնոյն, գթութիւն քո մեզ հանդիպեսցի յուսով գիտութեան, մխիթարել զհոգիս եւ լուսաւորել: Ընդ նոսին աւետարանութեամբ քարոզեսցուք զքո միայն զոքանչելիսդ, որ յարեալդ ի մեռելոց ամենազօր թագաւոր անմահ:

Որ անճառ էութեամբ հօրդ ես փառակից, չարչարիլ մարմնով յանձն առեր վասն մեր, մշտնջենաւոր օրհնութեամբ ի հրեշտակաց օրհնեալ ես Տէր: Որ էակդ ես ընդ հօր եւ սուրբ հոգւոյն, խաչեցար եւ թաղեցար կամաւ հօր վասն մեր, մշտնջենաւոր": Որ միւսանգամ գալոց ես հայրենի փառօք, չնորհելով աստուածապէս յարութիւն տիեզերաց, յամենայն արարածոց յաւիտենից օրհնեալ ես տէր:

ՀՁ. Որ զանարատ բազուկս քո խաչին տարածեցեր Քրիստոս Աստուած, եւ նշան յաղթութեան եղեր մեզ, սովաւ զկեանս մեր պահեա: Որ զաչխարհակեցոյց բազ-

կատարածութիւն խաչի քո Քրիստոս Աստուած, զաւա-
զան զօրութեան եռուր մեզ, սովաւ": Որ զմեռեալն ի
ճաշակմանէ փայտին յանցանաց, կենաց փայտիւն կեն-
սագործեցեր, սովաւ":

Փա՛ռք հօր եւ որդւոյ".— Այսօր հրեշտակն լուսափայլ
ի յերկինից իջեալ, զարհուրեցոյց զպահապանն, եւ սուրբ
կանացն քարոզէր ասելով, Քրիստոս յարեաւ ի մեռելոց:

Այժմ եւ միշտ եւ յաւիտեանս".— Այսօր նոր Իսրայէլ
կոչեցեալք ի Քրիստոս, ազատեալք արեամբ գառինն Աս-
տուծոյ, պարեցուք ընդ երկնայնոցն ասելով Քրիստոս
յարեաւ ի մեռելոց:

ՅՈՐԴՈՐԱԿ

Ճրագնաւորք ճշմարիտք վկայք Քրիստոսի. բարե-
խօսեցէք առ Տէր վասն անձանց մերոց:

Նահատակքք կենդանիք սիրողք Քրիստոսի, որք
չարչարեցայք մարմնով վասն անուանըն Տեառն:

Մարտիրոսքք ցանկալիք մարդկան ըղձալիք, հայ-
ցեցէք ի սուրբ հոգւոյն տալ մեզ ըզբարիս:

Գովելիք վերնոյ գասուց, պարծանք աշխարհի,
խընդրեցէք զիաղաղութիւն տալ եկեղեցւոյ:

Կամաւոր սուրբք պատարագք հաճակաւ մանկունք.
հայցեցէք լինիլ եւ մեզ՝ ձեզ պըսակակից:



Ցանկ Նիւթոց

Ա

Ազատն Աստուած այն օրից, Մ. Նալբանդեանց 9
Ազատ, համաձակ մխիթանց ձեռք տանք 11
Ազատութեան այն վառ սէրը 12
Ազատութեան սիրոյն համար 14
Ազատութեան քաջ զինուորը պատանին
Թարգմ. Գ. Բարխուդարեան 15
Ազատութիւն, եկուր հոս, Թէոդիկ 16
Ազատութի՛ւն մեր բերնին, Թէոդիկ 532
Ազիզ մէրիկ, քեզ Թողէ, Հայ–Գուսան 533
Ազնիւ ընկեր, մեռանում եմ, Ս. Շահազիզեանց 17
Ալադեազը բարձր տեղ ա, եար 676
Ալադեազ սարն ամպել ա, Կոմիտաս Վարդապետ 676
Ալ այլուղս կորաւ ձեր դուռ, Կոմիտաս Վարդապետ 667
Ալ բաւ է հայ եղարբք, Վազգէն 18
Ալէտանջ հոգւոյս միակ մխիթար, Ա. Փիլօեան 677
Ալ մօտ ըլլամ, ով Տէր 645
Ալ ու ալուան ես դառէ 534
Ալ Թող դադրին արցունք Հայուն, Մ. Փորթուգալեան 19
Ա՛խ թէ երկինք դէթ մի վայրկեան, Ա. Ծատուրեան 20
Ա՛խ ի՛նչպէս կ՝ուզեմ տեսնել, Քամառ Քաբիպա 21
Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ, Ա. Խսահակեան 22
Ախչի, հարսնառդ եկաւ 23
Ա՛խ, վասպուրական, տխուր Հայաստան,
Ս. Ժամկոչեան 24
Ականջ դրէք իմ խօսքերուն, Տ. Ամիրջանեան 25
Ակնապիշ, անձայն, խորհուրդ ճակատիդ,
Քամառ Քաբիպա 27
Ակռաի մեծ կարասին, Հ. Վ. Զագրեան 28

Ահա աղաւնին Նոյեան տապանի, Ն. Մէզպուրեան 29
Ահա բաժակ ուրախութեան, Ս. Պ. Փափազեան 31
Ահա եղաւ լուսինն արծաթ, Շանթ 32
Ահա ծագեց կարմիր արեւ, Րաֆֆի 33
Ահա կե՛րթամ սիրելի մայր, 34
Ահա հրեշտակ ոսկեփետուր 672
Ահա մօտեցան մահուան ժամերս 35
Ահա սուրհանդակի սայլակը 36
Աղուէսն եկաւ տափիկ մափիկ 37
Ամէն տեղ տիրած խորին լռութիւն, Րաֆֆի 39
Ամպ... դէպի ո՞ւր այդքան շտապ, Խ. Եպ. Նարպէյ 42
Ամէն առաւօտուն դէմդ բռնէի 581
Այբն ունեախս ազատութեան 44
Ա՛յ սեւ ամպեր, վա՜յ սեւ ամպեր Ա. Ծատուրեան 43
Այ սիրուն աղջիկ, Ա. Իսահակեան 669
Այն անցեալ գիշերն, տասնումէկ ժամին,
Աբրահամ Մարտիրոսեան 680
Այգուն, այգուն իմ խրցկի մօտ 668
Այդ աղջիկը երէկ տեսայ, Շանթ 46
Այն որ ծանօթ է պատմութեան ազգին,
Ղ. Վ. Փիրղալէմեան 47
Այս տողերն ալ նուէր քեզի, Հ. Էկիմեան 537
Այսօր անճառ լուսոյն ծագումն ի փրկութեան 655
Այս ի՛նչ կորուստ, ի՛նչ մեծ ցաւ 627
Այս աշխարհիս ունայնութիւն, Գ. Մ. Շմաւոնեան 646
Այս նոր տարուան սեմէն, Հայր իմ,
Տիկին Հռիփսիմէ Շմաւոնեան 647
Այտերս վարդ կ'անուանես միշտ, Հ. Էկիմեան 535
Այսօր յարեաւ ի մեռելոց փեսայն անմահ 809
Անապատն ու հողը զքեզ կ'ընդունին, 538
Անէծք քեզ, անգութ, խորոխտ դաւաճան 674
Անի քաղաք նստեր կուլամ, Ա. Վ. Արարատեան 49

Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին, Չիւան 48
Անմահ, անուշ դու գինի, Մ. Պէշիկթաշլեան 51
Անուշ քնիկն աչերն առեր, Ռ. Ս. Սահակեան 539
Անվա՛խ ընկերք, քալենք չար–չար 541
Աչխարհ ամենա՛յն, առ իս նայեցար 656
Աչխարհ եկայ, կ'ապրիմ 645
Աչխարհ ինծի բարեկամ էր, Է. Էկիմեան 542
Աչխոյժ նաւաստին 675
Աչնան չորցած թփերու հետ 51
Ապառաժուտ լերան մը կող, Մ. Պէշիկթաշլեան 52
Առ ընկալ ի գիրկդ, Մայր Հայաստան,
Ս. Պ. Պ. Փափազեան 53
Առաւօտ լուսոյ, արեգակն արդար 658
Առուն կանուխ թէ ելնենք 54
Աստղով բանուած գիշերին մէջ, Մուշեղ Եպիսկոպոս 56
Աստուած, չեմ խնդրում քեզնից գանձեր,
Ալեքս. Ծատուրեան 692
Աստուած վկայ, որ մենք կը յաղթէնք,
Գամառ Գաթիպա 57
Արի Աստուած հարցն մերոց, Սիմէօն Կաթողիկոս 58
Արի՛, գութան, վարի՛, գութան, Յ. Թումանեան 59
Արի, իմ սոխակ, թող պարտէզ մերին,
Գամառ Գաթիպա 60
Արի՛ք, ընկերք քաջակորով 60
Արիք Հայկազունք, յառաջ ընթանանք,
Յ. Գ. Սըվաճեան 61
Արի՛, պլպուլ, մէկաւեղ նաւենք,
Շուշանիկ Կուրղինեան 544
Արծթի բարձր դեղ ա 670
Արկածք Հայոց ժամանակին ընդ անխ, Ե. Մելիքեան 63
Արքնցիր տիկին քունէդ 629

Աբշալոյսի աղօտ լոյս, Մանասէ Ս· Մելքոնեան 545
Աբեւելք առաջին, Միքայէլ Սարկաւագ 64
Աբեւ Թըռնելով ելաւ, կոմիտաս վարդապետ 670
Աբեւն ըրաւ օրուան չրջան 677
Աբօրն ասաց տատրակ հաւքուն, կոմիտ· վարդապետ 671
Աւեա՛ւ, Հայեր, ալ սուգը մէկդի, Վ· Մալէզեան 678

Բ

Բարեւ Պարոն Ղուկաս, Գ· Հ· Ռշտունի 632
Բարեաւ եկիր հայր պատուական,
Աբր· Քհնյ· Էպէեան 547
Բարձրէն ելաւ հրամանը, տուեց Թաթուլի անունը 548
Բարով եկիր սիրուն կռունկ 549
Բա՛ւ է եղբարք վիզ ճկել, Քամառ Քաթիպա 550
Բաժակներ առնունք, եղբարք, Քամառ Քաթիպա 70
Բա՛մբ որոտան բարձուստ բամբիւնք Այրարատեան դաշտն ի վայր, Ղ· Ալիշան 71
Բարի, գեղեցիկ, առաքինի ընկերը մարդուն,
Աշըգ Ջիւանի 74
Բարի, ազնիւ եւ օգտակար մարդ մըն ես դուն,
Մ· Վարժապետեան 74
Բերդիցը դուրս եկայ, Ալագեազ տեսայ, 75
Բերէ՛ք չիշը, բերէ՛ք բաժակ, Քամառ Քաթիպա 76
Բլբուլ Թռաւ բարձր քեսրին 77
Բոցիկու սարին սեւ ամպն է չոքեր, Ա· Խսահակեան 78
Բոյդ բարձր սալվի չինար 733

Գ

Գարահիսար լերան կրծքին 79
Գարունն է եկել գեղեցկատեսիլ, Գ· Շիրեանց 80

Գիշեր ցերեկ կը հառաչեմ 81
Գլդգլալով ջուր է իջնում, Հայ–Գուսան 82
Գողթան մանկտի, ահա ձեզ 83
Գետինն անցնի սա ձմեռուան, Գ. Հ. Ռշտունի 635
Գրող տանի քիւրդ Աբօյին 84
Գարնան առտու մ'էր մեղրակաթ, երբ վչեց, Հ. Էկինեան 551
Գարնանային երբ արեւ, Յ. Ոսկեան 554
Գարունն է եկել նախշուն թեւերով, Ռ. Տ. Գ. Պատկանեան 556
Գերեզմանիս թող արձանին վերայ 557
Գրասեղանին առջեւ՝ անձնուէր, Հ. Էկինեան 558
Գրիչս ձեռք առի ըսի թէ ուր եմ 560
Գնա՛, գնա՛, հետիդ եմ, Կոմիտաս վարդապետ 683
Գացէ՛ք, տեսէ՛ք ո՞վ է կերել զէծ 684

Դ

Դաշնակցութեան քալ գինուորներ, Ս. Գ. Սարաֆեան 561
Դաշնակցութեան քալ խմբերը Պերնա գիւղում միացան 562
Դատարանին խմացուցին 563
Դատ է մեր դատը գազան ոսոխին դէմ, Տ. Պ. 564
Դո՛ւն էլ վեր կեցար դէմ արեւմտին, Իշխան 565
Դուք գոհ գնացիք վճռական կռւում 566
Դեռ մանուկ էի, ծնողս ինձ կ'ըսէր, Ս. Պէնկլեան 637
Դաշնակցական խումբ, գնանք մենք Սասուն 85
Դարդս լացէք, սարի սմբուլ, Ա. Խահակեան 85
Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին 86
Դէ գնա՛ կիպամ, վա՛յ գնա՛, կիպամ չուտ կիպամ 87
Դու զո՞վ խնդրես մայր իմ անուշ, Մ. Պէշիկթաշլեան 89

Դուն խելօք հաչուով վաճառական ես,
Քամառ Քաբիպա 91
Դուն նատեր ես ճամբաններուն անկիւնը, Ա. Զօպանեան 93
Դու տեսե՞լ ես երկնքումը, Քամառ Քաբիպա 97
Դու տեսե՞լ ես սրբավայրում, Յակոբ Յակոբեանց 798
Դու փափկաթել մանկիկ գեփիւռ, Մ. Պէշիկթաշլեան 98

Ե

Եկուր, կնիկ, պադնեմ քեզի, Խենիք 567
Եղբայր ենք մենք, Ա. Կ. Կիւլպէնկեան 569
Եղբարք, յառաջ սլանանք քաջ 570
Ես կը մեռնիմ ո՛վ ընկերներ, Հ. Էկինեան 571
Երբ Հայաստանի խոչոր երակին, Գագիկ Տէվէճեան 573
Երբոր մայրը երկունքով, Քամառ Քաբիպա 575
Երկու ոտքով էշ մը գիտե՞ս, Հ. Էկինեան 576
Եթէ ժժգոյն մահու հրեշտակ, Պ. Դուրեան 101
Եկայք թռչունք թեւաւորք, Պետրոս Ադամեան 102
Եկաւ ժամանակ բարեկամ բախտին, Ս. Հ. Ֆելէկեան 104
Եկել է գարուն, սոխակը սիրուն, Կ. Յ. Պուզեան 105
Եկ իմ սրինգ, իմ բարեկամ սրտագին 107
Եկէք մխրանինք լուր մը լսելու 108
Եղբարք, ուժից ընկած պատգարով,
(Թարգմ.) Գ. Բարխուդարեան 109
Ես եմ ազատ հայ պատանի 110
Ես լսեցի մի անուշ ձայն, Ս. Շահազիզ 111
Ես խօ լեզուով չա՛տ բան ըրի, Ա. Յովսէփեան 112
Ես հանեցի սուրս պատեանից 113
Ես մէկ ծառ եմ ծիրանի, Զիվանի 114
Ես մշեցի ճամբորդ եմ հեռու տեղերէն,
Քամառ Քաբիպա 115

Ես ու տանն օրիորդը, երկուքս ենք մինակ
Ա. Փանոսեան 116
Ես քեզ սիրի, որ դու ինծի չը թարկես 119
Ես քեզ տեսայ բանտում խաչուած 120
Երբ ալեկոծ ծովի վրայ, Գ. Թադէոսեան 121
Երբ կը լսեմ Հայաստանիս անունն,
Մ. Փորթուգալեան 123
Երբոր ազգին գահը վերցաւ, Տարօնցի 126
Երբ որ բացուին դռներն յուսոյ, Ն. Ռուսինեան 127
Երբ որ ես մեծցայ, տղամարդ դարձայ, Հայ–Գուսան 128
Երբ որ լինի գարնանամուտ, նոր գարուն, Չիվանի 129
Երբ որ հոգիդ մարդ դարձայ,
(Թարգմ. Գերմ.) Ռ. Տ. Գ. Պատկանեան 130
Երեկոյեան՝ երբոր մի հով, Տ. Ս. Լեւոնեան 131
Երեկոյ է, բոցավառ է հորիզոն, Պ. Դուրեան 133
Երէկ տեսայ քեզ պարտիզում, Ս. Շահազիզեան 134
Երկու դողեր, ժիր ու ճարպիկ, Ալփապեան 134
Երկրի մը մէջ երբ ամէն ինչ, Մագնոս Պարուքճեան 136
Երնէ՛կ թէ այս նոր տարին, Քամառ Քաքիպա 137
Եւ ես երբեմն երգում էի, Ս. Շահազիզ 138
Եօթն օր, եօթ գիշեր 139
Ես տարէն կուգայի, Կոմիտաս վարդապետ 685
Ես չեմ սիրեր ոչ արեւ, լոյս 685
Երբ որ մենք մեծնանք 686
Երկինքն ամպել է, Կոմիտաս վարդապետ 687
Երեւան բաղ եմ առել, Կոմիտաս վարդապետ 690
Եղբայր ենք մենք, մէկ հօր որդիք, Գ. Մ. Շմաւոնեան 648

Զ

Զա՛րկ, զա՛րկ, ընկեր, մեր բաղդ կռենք 578
Զարթեաւ սուսեր ի պատենի, Սօրկունեան 579

Զանգակատունն գիւղին մատրան, Ա. Գ. Փանոսեան 141
Զանկին եկաւ կռիւ տալով 143
Զարթի՛ր, մանուկ իմ նազելի, Քամառ Քաթիպա 144
Զարթի՛ր որդեակ, յուշ բեր, վեր կաց,
Պ. Վ. Նաթանեան 146
Զէյթունցի ենք, ժայռի ձագ ենք, Յ. Յ. Զաքրեան 148
Զէյթունցի ենք մենք քաջազունք 149
Զէնքերս տուր, մայրիկ 150
Զինուորիս երգերը, եղբարք լսեցէք, Դ. Դողոխեանց 151
Զմրուխտեայ երգե՛ր, երազնե՛ր չքեղ,
Ա. Իսահակեան 151
Զօրութիւն սուրբ խաչի քո Քրիստոս 806

Է

Է՛ մնաք բարով Աստուած եւ արեւ, Պ. Դուրեան 152
Էն արծիւն էր թռաւ գնաց 154
Էս հակոտնեայ աչխարհում, Ա. Յովսէփեան 155
Է՞ր հեռանաս քո մայրենի աչխարհից, Յ. Կարինեան 158
Էս գիշեր լուսնակ գիշեր 688
Էս գիշեր լուսը տեսայ 689
Էն տեսակ կին, Յովհ. Թումանեան 689

Ը

Ընդ աստեղօք օտար ափանց 159
Ընկալ դու դիս, Հայաստան 160
Ընկերք յաղթուեան, ժամն է արդ հասեր 161
Ընցաւ տարին, Հայոցս էլ փառք ընցաւ հետ 162

Թ

Թաք տանէին, տանէին 163

Թագաւորին մայրը դուռն դուրս ելու 580
Թէ գլխ կանչեն օտարաց 164
Թէ թեւ ունէի, Ս. Յ. Ֆէլէկեան 165
Թէ ի հրացան, դրօշս մահաբեր, Մինաս Չերազ 166
Թէ իմ ալեւոր հերքս սեւնային, Քամառ Քաթիպա 168
Թէ իմս հայրենեաց քնար սգաւոր, Ս. Հ. Ֆէլէկեան 170
Թէ հայրենեաց պսակադիր, Գ. Վ. Սրուանձտեանց 173
Թէպէտ ես մեծ տան նշանն եմ 175
Թէպէտ փոքր քաղքէ քաղաք կամ թափառ
Մ. Փորթուգալեան 176
Թմրած Հայը զարթեցաւ, Մ. Տամատեան 177
Թող բարձրացնեն ճռինչ, աղաղակ, Ղ. Աղայեան 180
Թող երգէ բլբուլ Մըշու դաշտերում 181
Թողէք գլխ, անէծք, ոճիրք մշտատեւ,
Ս. Հ. Ֆէլէկեան 181
Թող կորնչին տաճիկները, Մ. Մարտիրոսեան 182
Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս, Քամառ Քաթիպա 183
Թուրքը լսաւ անունդ Զաւուշ 183
Թէ գրպանդ դրամ չունիս, Հ. Էկինեան 582
Թէ գլխ տանին օտար օտար 584
Թէ ձմրան օրեր երկինքը ամպոտ, Հ. Էկինեան 585
Թէ տայիր ինձի, Խ. Եպ. Նար-Պէյ 586
Թիկունքդ լայն, թեւերդ ուժգին 588
Թշուառ հայրենիք, ո՛հ, դու լաս հերիք,
Յ. Մանուէլեան 588
Թող պլպուլ չերգէ Մշոյ դաշտերում 589
Թէ միտք ունես քո կոչումը մեծարել,
Յով. Քուչուբէզեանց 693
Թաւ քաջը ամպերի մէջ դէպի հայրենիք սլացաւ 694
Թռի՛ր իմ նժոյգ, սլացի՛ր շուտով, Ա. Ծատուրեան 694
Թէեւ բնակիմ հոյակապ պալատներ,
Տիկին Ս. Ս. Բրուտեան 648

Ժ

Ժէռ քարափին արծիւ նստաւ, Շուշանիկ Կուրղինեան 695
Ժամ է Հայեր, արիք ձեր բախտն ողջունել 184

Ի

Ի գուր են ի գուր, բռնաւոր, Նար–Պէյ 590
Ի բիւր ձայնից բնութեան չքեղ, Մ. Պէշիկթաշլեան 185
Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ 186
Ի պէ՛ն Հայեր, ի տո՛ւր եւ ի հրացա՛ն 187
Իմ հայրենեաց հոգի Վարդան, Ս. Հ. Ֆելէկեան 188
Իմ հայրենիք դիս կը կաչէ, Ա. Հայկունի 189
Իմ հայրենիք թշուառ անտէր 190
Իմ սիրելի զաւակունքս 191
Ինչո՞ւ Բինկէօլը մտար, Ռ. Մելիքեան 696
Իմ անուշիկ մայրիկս 591
Իմ եարըն նստել գամով, Նաղաշ Յովնաթան 697
Իմ չինար եարին 698
Իջէ՛ք, իջէ՛ք, երազներ, Լ. Շանթ 698
Ինչինար եար ջան 699
Ինեկ, Մինեկ, Վարդիկ, Ձինեկ 192
Ինձի կ'ըսեն.— «Ինչո՞ւ լուռ ես», Պ. Դուրեան 193
Ինձ համար չէ գարնան գալը,
(Թարգմ.) Ք. Տ. Գ. Պատկանեան 194
Ինձ համար չէ գերեզման, Հայոց Հայրիկ 195
Ինձ տեղ տուէք, Սիփան սարե՛ր, Հայ–Գուսան 197
Իմչ անենք... Ամո՛թ այսպէս ասողին,
Քամառ Քաթիպա 198
Ինչո՞ւ ապշած ես, լճակ, Պ. Դուրեան 190
Իսլամական գոռ վաչտերը կատաղի 201
Իմ Տէրս ինձ կ'առաջնորդէ 650
Իջիր, արքայ հզօր 651

Լ

Լըճի մէջ նաւակը, Քամառ Քաթիպա 202
Լուսին չկար, մութ գիշեր էր 203
Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունիմ 205
Լուսնկան կամար կամար 205
Լուրը հնչեց ի Հայաստան, Մ. Թ. 206
Լոնց – ամպերը եկան ծածկեցին, Քամառ Քաթիպա 208
Լո՛, լո՛, լո՛, Սիփանայ սէգ սարի վրայ 209
Լէփո լէ լէ, լէփո լէ լէ, լէփո լէ լէ, Հօտաւլի 700
Լոյս, արարիչ լուսոյ առաջին լոյս 808
Լալը չը փրկեր վիս 651

Խ

Խորհուրդ խորին անհաս անակիզբն 804
Խորհուրդ մեծ եւ սքանչելի՛ 666
Խնուսից գալով հայ գինուորները քալ 591
Խաղաղութի՛ւն ձեզ, սուրբ մարտիրոսներ,
Ա. Ծատուրեան 211
Խաղաղ գաշտի որդիք, լեռները ելլենք 212
Խաւարել եմ ինչպէս գիշեր 213
Խլաթի գաւառ 214

Ծ

Ծագեց արեւ ազատութեան 215
Ծաղկաւէտ գաշտի վրայ ցօղը կը փայլի 216
Ծիծեռնակը բոյն է շինում, Ղ. Աղայեան 216
Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ, Գ. Դոդոխեան 217
Ծնիր գարուն որքան կրնաս, Ռ. Զարդարեան 700
Ծառից տակը մանիշակ 701
Ծովն մրրկալից, գիշերն մութ է յոյժ,
Թարգմ. Ս. Պ. Եազուպեան 652
Ծոցը, ճնպը գրամ լեցուն, Հ. Էկիւեան 597

Կ

Կախաղանը պատրաստուեցաւ, ելէք երթանք ընկերներ 592
Կեանքի շիթեր, լուսածրար խանդ ու աւիւն, Մ. Բրուտեան 592
Կոտորածն անգութ Հայերը թող լան 593
Կին փոփոխամիտ է, Վիկդօր Հիւկօ 643
Կանաչ, վիթխարի ընկուզենու տակ, Յ. Թումանեան 219
Կանգնի՛ր, ո՛վ անցորդ, Ա. Ծատուրեան 220
Կանչէ՛, կռունկ, կանչէ՛, քանի գարուն է, Կոմիտաս Վարդապետ 706
Կ՚անցնի կերթայ, չի դառնար, Ալփայեան 220
Կապոյտ երկնքում, Գ. Բարխուդարեան 222
Կար ժամանակ որ եւ Հայերն, Յ. Մ. Վարանդեցի 223
Կարկուտ տեղաց Թանասօրայ դաշտումը 223
Կուշտ եմ եւ առողջ, կեանքից բաւական, Ա. Ծատուրեան 224
Կովկասի քաջեր, խմբեր կազմեցէք 225
Կռուեցէ՛ք տղերք, կռուեցէք քաջ քաջ, Մ. Ն. 226
Կռունկ, ուստի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ, Նահապետ Քուչակ 227
Կրամբամբուլին էն օղին է, (*Թարգմ.*) Ք. Տ. Գ. Պատկանեան 230
Կուժն առայ, ելայ սարը, Կոմիտաս Վարդապետ 706

Հ

Հարբրան, ջանէ ջան 231
Համբոյր մ՚առի ներանէ, Պ. Դուրեան 233
Հայ ազգութեան ազատութիւն, Մ. Թ. 235
Հայ ապրինք եղբարք, մարդկութեան մէջը, Խ. Եպ. Նար-Պէյ 236

Հայաստանի աւերակները, էջ ամայի մնացիք 238
Հայդուկ եմ ես, Դաշնակցական 239
Հայդուկ մի վախնար քիւրդի դնդակից,
Պետրոս–Սամուէլ 239
Հայեր, մինչեւ ե՞րբ արտասուենք, Միհաս Չերազ 241
Հայը բանտէն չի վախնար 242
Հայ չէ՞ք, մի՛ թուլանաք, առէք ձեր վահան 243
Հայկազունք, պար բռնենք, Ս. Փափազեան 243
Հայկ ու Տիգրանին յիշենք միշտ, եղբարք,
Մ. Նալբանդեան 244
Հայ մարդ, հայ ազգ, ասա՛ արդեօք,
Կոմս Էմմանուէլ Նալբանդեանց 246
Հայոց աղջիկները, ձեր հոգուն մատաղ,
Գէորգ Միրիմանեանց 249
Հայոց լեզու, Ազամայ լեզու, Պ. Մատաթեան 250
Հայոց երգերը, սէրն եւ գինին 251
Հայոց մանուկները, վոքրիկ կարիճներ, Վարդենի 252
Հայրենեաց սիրոյ համար 254
Հայրենեաց սիրով վառուած վեհ սրտեր 255
Հայրենիքդ մոռցիր, կ'ըսեն օտարներ 256
Հայրենիքէն ողբի ձայներ կը լսուին,
Մ. Փորթուգալեան 257
Հայրենիք սրբազան, իմ սիրուն աշխարհ
Յ. Քուչուբէկեան 258
Հայրի՛կ, ասաց դուստրը հօրը, Մ. Նալբանդեանց 259
Հայր մեր երկնաւոր, սուրբ ըլլայ քո անուն,
Քահան. Քաթիպա 262
Հանգիստ իմ անոյշ, Ս. Շահազիզ 262
Հեռացել եմ իմ մայրենի աշխարհից,
Ն. Տ. Գ. Պատկանեան 263
Հեռու ձեզանից, հայուհիներ, տարագրուած եմ ես,
Գ. Շերենց 264

Հեռաւոր երկիր նստած դու նժդեհ Մ. Տամատեան 265
Հեռու եմ քեզմէ, օտար երկրի մէջ 266
Հերիք ալ Հայեր, այսչափ լռութիւն 267
Հերիք որդեակք, այսքան տարուան տառապանք Մնակեան 268
Հէ՛յ իմ սիրուն, հազար սիրուն 269
Հիմի է՞լ լռենք եղբարք, հիմի է՞լ, Քամառ Քաթիպա 269
Հիմի է՞լ խօսենք, եղբարք, հիմի՞ էլ, Մ. Նալբանդեանց 271
Հիմի է՞լ չուռնենք, եղբարք, հիմի է՞լ, Կրոյ 273
Հնչակեան զինուոր, ուժգին, համարձակ 275
Հրաբուխ մը ժայթքեց Զէյթուն իր վեհ կողերէն, Տիւնիէ 276
Հուր բարկութեան համայն Հայոց, Սէտէֆճեան 277
Հո՛յ, նազան իմ, նազան իմ 278
Հազիւ լուսոյ դողդղջ փայլ 594
Համեստ աղջիկ, ինձ մի տանջեր չարաչար 596
Հոգի կուտամ, հոգի տո՛ւր ինձ, Ա. Խսահակեան 596
Հայոց քաջազունք, Հայոց զաւակունք, Խ. Վ. Գալփաեան 600
Հաւաքուել էինք բազմաթիւ Հայեր, Ա. Ծատուրեան 600
Հերիք որչափ աչխատեցանք անզադար 601
Հիւծուում, մաշուում էք գործարանին մէջ, Վագր–բաբ 602
Հնչակեան ենք մենք ուխտեալ զինուորներ 603
Հպարտ աղջիկ, Հայու աղջիկ, Հ. Էկիւնեան 604
Հրճուին երկինք, խայտայ երկիր անթերի, Ս. Խանիեան 606
Հայ եմ ես, մեռնիլ գիտցող հայ եմ ես 590

Համբարձումն եկաւ, ծաղկունքը ալան,
Յովհ. Թումանեան 796
Հաբրբան, Ջանէ Ջան 797
Հայրենիքս հեռուն, Յ. Բագրատ 673
Հայաստան, երկիր դրախտավայր,
Յ. Միրզա-Վանանդեցի 707
Հայ երիտասարդներ չուտ չտապեցէք 708
Հայրի՛կ, հայրի՛կ, քո հայրենիք, Հ. Ճանիկեան 709
Հայկազո՛ւնք, պա՛ր բռնենք, Ս. Պ. Փափազեան 710
Հաբրբան, Ջանէ Ջան 711
Հո՛վ արէք, սարե՛ր Ջան, հո՛վ արէք, Կ. վարդապետ 715
Հունձք կը ժողվեմ մանդաղով, Դ. վարուժան 715
Հօդալլօ, Ջան, հօդալլօ, Ջան, հօդալլօ 716

Զ

Զախորդ օրերը ձմռայ նման կուգան ու կ'երթան 279
Զայնը հնչեց Էրզրումի Հայոց լեռներէն 280
Զեռքերս կապած, ոտքերս չղթայ, Քամառ Քաբիպա 281
Զէթ եմ ածել ականջներդ, Ղ. Աղայեանց 283
Զիւնն էր գալիս փաթիլ փաթիլ, Ղ. Աղայեանց 284
Զիւներն հատ հատ երկնքէն վար կը թափին,
Մ. Փորթուգալեան 285
Զմեռն անցաւ, գարունն է արդ 286
Զայն մը մարտագոռ խրոխտ ու ազատ, Մ. Պետիկեան 607
Զայն տուր, ով ֆէտա, ինչո՞ւ ես տրտում 608

Ղ

Ղարիպ աղբէր, արի՛ մեր տուն, Տիկ. Շ. Կուռղինեան 288
Ղարսից դուրս եկան, Թաղբուր ժողուեցան 286

Ճ

Ճամբորդ կուգայ, ի՞նչ խումաշի բեռներ կայ,
Տիկին Ս. Բրուտեան 288
Ճգնաւորք ճշմարիտք վկայք Քրիստոսի 811
Ճշմարիտը ա՛հ պարոններ, Ս. Պէնկլեան 639

Մ

Մայիս ամսոյ դու գեփիւռիկ,
վարդան Տէր-Աւետիսեան 289
Մայր Արաքսի ափերով, Քամառ Քաթիպա 291
Մայրենի լեզու, մայրենի բարբառ, Ս. Նազարեանց 295
Մանեակդ հիւսուած լոյս մարգարիտէ,
Մուշեղ եպ. Սերոբեան 296
Մայրս մանէ մանածս 297
Մանկութեա՛ն օրեր, երազի նման, Մ. Նալբանդեանց 399
Մարդ կայ՝ մարդ է աչխարհումս,
Աբրահամ Մարտիրոսեան 301
Մաքուր արտով մտորուն, Ն. Քուչակ 302
Մեղի մոռցաւ Հայոց ազգը, Քամառ Քաթիպա 303
Մեղի յիշեց Հայոց ազգը 304
Մեղնից չատ առաջ կար մի թագաւոր,
Քամառ Քաթիպա 305
Մենք, ա՛յ աղուոր աղջիկ, եկեր ենք ձերը,
(Հաւաքեց) Տիկին Ս. Բրուտեան 307
Մենք անկեղծ զինուոր ենք առանց ի վիճակ 308
Մենք պէտք է կռուենք եւ ոչ լաց լինենք, 309
Մեր դիւղացու հարսանիքում, Աղէք. Արարատեանց 310
Մեր խեղճ ազգը ուսում չունի, Քամառ Քաթիպա 311
Մեր կեանքի նման ոչ ոք կեանք չունի 313
Մեր հայրենեաց վայրուկ հողեր 313

Մեր նախնիքը ազգի համար 315
Մեր նաւն իբրեւ փետուր, Ա. Փանոսեան 315
Մեր հայրենիք թշուառ անտէր,
(Թարգմ.) Մ. Նալբանդեան 316
Մեր սիրուն հայրենեաց, Ս. Գ. Գ. Փափազեան 320
Մեր սիրուն վայելչական տեղերն ուրիշներ են առեր 321
Մինակ էի, ո՜հ, մինակ, Խ. Մ. Անդրէասեան 321
Մի պստըլիկ խայլիկ մը կէր 323
Մըր խօր պապկը գերեզման 325
Մի գեղեցիկ, պարզ գիշեր էր, Ս. Սափարեանց 326
Մինչդեռ յոյսով խայտայ բնութիւն,
Մ. Պէշիկթաշլեան 327
Մինչեւ մահուան անյիշատակ ի շիրիմ,
Մ. Պէշիկթաշլեան 328
Միութեան թերութիւնը 329
Մնաս բարեա՜ւ, քաղցր մայր իմ, ես պիտի գնամ 330
Մնացես բարեաւ, սէր իմ սէր, Մ. Պէշիկթաշլեան 330
Մնաք բարեաւ սուր հրացան 331
Մշակ, բանուոր, ընջպէր ախպէր, 332
Մութ է գիշերս, ինչպէս սիրտս ալ,
Մ. Պէշիկթաշլեան 333
Մտաւ արեւս երջանկութեան, գլխիս պատեց մութ, 335
Մտնեմ ծոցդ խմոր քաղեմ, Ն. Քուչակ 336
Մի՞թէ պիտի ես վախենամ, Վ. Ջնար 609
Մնաք բարով, արեւ, գարուն, Յ. Յ. 609
Մայր սուրբ, սքանչելի լուսոյն 661
Մեր դրանը խնկի ծառ, Կոմիտաս Վարդապետ 717
Մայր մ'ունէի ես միայն, Պ. Դուրեան 718
Միութեան սուրբ դրօշակը 719
Մեր տան մէջը քնո՛ղ տղայ 720
Մեր պապերը դարեր առաջ թողուցին, Յ. Զագրեան 721

Յ

Յառա՛ջ, միշտ յառա՛ջ... անկցի գերութեան
Շուշանիկ Կուրղինեան 610
Յուսահատիլ մեղք է, ընկե՛ր 723
Յազատն ի վեր ի Մասիս, Հ. Ա. Վ. Բագրատունի 337
Յառա՛ջ, ընկերներ, կազմենք միութիւն,
Պետրոս Տէր Մինասեան 692
Յառա՛ջ, Հայեր, հայրենիքի, Մ. Փորթուգալեան 339
Յերկու ձեռին երկու մոմ, Յ. Վ. Ալամդարեանց 341
Յիշեսցուք ի գիշերի զանուն քո Տէր 801
Յունվարին մենք ունինք Ծնունդ 344
Յուսահատիլ մեղք է, ընկեր, 344

Ն

Նանիկ արա, սիրուն որդեակ, Րաֆֆի 345
Նոր կը լուէր ծառոց ետին 348
Նետ թափանցիկ, սուսեր հատու երկարան 351
Նոր Տարին եկաւ փառօք անհամար, Հ. Էկինեան 352
Նուիրական է հայրենիք հէգ Հայուն 354
Նպատակիս գէթ մի մասը կատարուէր 610
Ննջեա՛ որդիս, անուշ քնով 611
Նորաստեղծեալ Բանն յանէից 660
Նա՝ մեզ բոլորիս մատնեց կրակին, Վագր–Թաթ 723
Ներկայ դարուս ազատ հոգով, Խ. Շահնազարեանց 724
Նպատակիս գէթ մի մասը կատարուէր 726
Նպատակիս հասնիմ միայն 727

Շ

Շատ մեծ չէր ան տարիքով 612

Շաղէ, շողէ ժամք էին, Պ. Դուրեան 355
Շաւարշանի հերոսներուն, Գ. Յ. Կիւլեան 728
Շնորհակալութի՜ւն, վեհափառ Սուլթան,
Քամառ Քաթիպա 357
Շորորա՜, Անուշ ջան, շորորա՜, Կոմ. Վարդապետ 800
Շաղգը՛ր–շուղգը՛ր քեամարը 799

Ո

Ոլոր մոլոր Կուրն էր գալիս Կովկաս սարերէն,
Սամուէլ Գիւլզադեանց 359
Ո՜հ, դու բարեկամ այրած սրտերու, Հ. Ալիշան 360
Ո՜հ, ինչ անուշ, ի՜նչ գեղեցիկ, Ս. Պ. Պ. Փափազեան 361
Ո՜հ, ինչ անուշ եւ ինչպէս զով, Մ. Պէշիկթաշլեան 362
Ո՜հ, լոկ երազ էր, մի՛ խռովէք ինձ, Մ. Նալբանդեան 363
Ողջո՜յն ընդ քեզ, Հայաստան, Ա. Յ. Այվազեան 367
Ողջոյն տուէք իմ հայրենեաց կիսակործան տա–
ճարներուն 368
Ո՛չ, եղբարք, ո՛չ, օտարէն չկայ յոյս,
Խորէն Եպ. Նարպէյ 371
Ո՛չ ձեզ, ո՛չ չի՛ք յաջողուած, Խորխոռունի 372
Ո՛չ փող զարկինք, ո՛չ արձագանգ լեռնաստոյգ,
Մ. Պէշիկթաշլեան 373
Ոչխարներս ամէն առտու կ՚ածնէի 374
Ոսկեծղիկ, գեղեցկատիպ, Քամառ Քաթիպա 375
Ոսկէ գագաթը բարձրիկ Նէմրութայ, Հայ–Գուսան 377
Ո՛վ դու գեփիւռ՝ ամրան հովիկ, Տարօնցին 378
Ո՞վ ես որ գաս առանձին, Աղաւնի Ֆէլէկեան 379
Ո՞վ է Հայը, միթէ ա՞ն է, Ա. Յովսէփեան 380
Ո՞վ է Հայը, միթէ նա՞ է, որ խօսում է հայ
լեզուով, Քամառ Քաթիպա 382
Ո՞վ է որ գայ մեզ, ճեղքած օդն, ալիքն, Պ. Դուրեան 384
Ով ծիծեռնակ, վարանած թռչնիկ, Գրօսսի 386
Ով կենդանութիւն է կամենում 387

Ո՞վ կերակրեց իս՝ տալով ծիծ անուշ, Մ. Մամուրեան 388
Ո՛վ Հայկազունք, ո՛վ դիւցազունք, 389
Ով Հայր մեր, որ ես յերկին 391
Ո՜վ հայրենիք, երբ կը տեսնեմ քեզի լաւ, Ջիվան 392
Ով մահ քեզ համար, Մ. Հայկունի 393
Ո՛վ մանիշակ, մանիշակ, Պ. Դուրեան 394
Ով մեծասքանչ դու լեզու, Ն. Մէզպուրեան 395
Ով որ քաջ է, ի՞նչ կ՚սպասէ, 397
Ո՜վ պատանիք, աւերց ներքեւ, Մ. Ջերազ 398
Որդիք Հայկայ, որդիք փառաց, Խորխոռունի 400
Ո՞րն է աշխարհ Հայաստան 401
Որսկան աղբէր, սարէն կուգաս, Ա. Իսահակեան 402
Ուղիղ գինետունից ես տուն եմ գնում Գ. Դոդոխեանց 403
Ուսանողներ եմք Հայկազուն, Ռ. Յ. Պէրպէրեան 404
Ուշ գիշերին ծովն էր խաղաղ 405
Ուր ես հայրենեաց իմ հովիկ անո՜ւշ...
Խորէն Եպ. Նար-պէյ 408
Ո՞ւր էր թէ զեփիւռիկ, Մ. Պէշիկթաշլեան 410
Ո՞ւր կը փախչիս, ո՛վ չոդեկառք, Հ. Էկինեան 411
Ուրտեղ սիրուն կին կը տեսնեմ՝ Ա. Իսահակեան 412
Որչափ մարդիկ ափսո՜ս 613
Ուրեմն մնաք բարո՜վ, ազնիւ ընկերներ 615
Ողջո՜յն, ողջո՜յն ճառագայթող ո՛վ արեւ,
Կղեմէս Մ. Տատրեան 729
Ողջոյն տամք ձեզ սիրտ ի թինդ,
Կ. Քհնյ. Նալպանդեան 731
Ուրախ երգեր ի՞նչպէս երգեմ, Օր. Քնարիկ 732
Ո՛վ Տէր մեր, Տէր փութա՛ 732

Ջ

Ջե՞ս հաւատում, որ քեզ եմ սիրում 413
Ջիք գնդակ, վառօդ, փամփուշտ հատաւ, 415
Ջր գիտեմ այժմ ո՛րքան չուտով 653

Պ

Պայծառ արեւ, կայտառ հովեր, Արամ-Չարըգ 616
Պայծառ, կանաչ թեւերով 617
Պաղ աղբիւրի մօտ 417
Պանծացէ՛ք, օ՛ն, Սահակ Մեսրոպ, Մ. Պոլսոցի 418
Պայծառ առաւօտ մէյդանի վրայ Սէք 420
Պատուհանիս տակ 422
Պատուհանիս տակէն ամէն առաւօտ,
(Եւդոկիա) Դանիէլ Վարուժան 423
Պտի աղայ, չեմ օրօրեր օրօրանդ, որ դուն
քուն ՚լաս, Քամառ Քաթիպա 425

Ջ—Ր

Ջա՛ն ընկերներ, դէպի փողոց 618
Ռուսական Պետութիւն, Հայեր, ըսաւ աչխարհի 426

Ս

Սալնոյ ձորերում, կռուի ձորերում, Ա. Իսահակեան 428
Սասուն գաւառ, հին Հայաստան 429
Սասուն ելաւ ապստամբեց, Պերճ Մուշեղ 430
Սասուն, Սասուն, քաջաց գաւառ հայ երկրի 432
Սասուն վազեց արեան գետեր, 433
Սասնոյ գաւառում ծնաւ մի մանուկ 434
Սարսափելի երազ տեսայ այս գիշեր
Կոմս Էմմանուէլ (Մ. Նալբանդեանց) 436
Սեւ Ծաւարը իմ ընկերն է անբաժան, Ա. Ահարոնեան 440
Սեւորակ աչեր, աչե՛ր սեւորակ, Ս. Շ. 443
Սէր իմ, ով սէ՛ր, սէ՛ր, Րաֆֆի 444
Սիրակա՛ն, սիրակա՛ն, Ց. Դ. 445

Սիրահեղիկ սիրուն աղջիկ 446
Սիրտս նման է էն վլաձ տներ, կոմ. Վարդապետ 733
Սարերի հովին մեռնեմ 734
Սարէն կուգայ ձիաւոր 734
Սովն էր սիրած խեղճ Հայորդուն տնակը,
Գաբրիէլ Խաւիեան 735
Սիրտս տխուր լի վէրքերով, Պետրոս Մոջոռեանց 736
Սամսան կ'ելնէր բարակ մուխ 737
Սիրտս զարճեր է մի մանուկ յալկան, Ն. Քուչակ 739
Սիրեցի եարըս տարան 446
Սիրականս, ալ չի խպնիմ, չամաչեմ, Հ. Էկինեան 447
Սիրելի դաչոյն, ա՛խ ատրճանակ, 448
Սիրուհիս քեզ համար 449
Սիրէ Հայը թէ ըլլայ, Գ. Շմաւոնեան 450
Սիրո՛ւն զարուն, կանաչ զարուն 451
Սիրուն զուարթ թռչնիկ, եկուր 452
Սիրուն թռչնա՛կ, Առաքել Պէտիկեան 455
Սոխակ, ինչո՞ւ զազրեցար, Քամառ Քաթիպա 457
Սոխակն ունի կարմիր վարդ, Տ Ճգնաւորեան 459
Սուրբ Աստուածածնի կիրակի, Ն. Քուչակ 461
Սուրբ գերեզմանին, Բագրատունի 462
Սուրբ կարապետ չայիր չիմանն 462
Սուրբ տենչերով լոկ ծարաւած, Պ. Դուրեան 464
Սուրբ օրորանով զաւակիս կ'երդնում,
Քամառ Քաթիպա 465
Սուրս եմ քաշած յոյսերով վառուն,
Վահան Զուգասըզեան 466
Սօլեր խագի երթանք ժամ, Եղսօ Ջան, Եղսօ Ջան 467

Վ

Վարդան մեր քաջ զօրավար, Ս. Շահազիզեան 468

Վարդեր ու վարդեր, Խորէն Նար-Պէյ 470
Վարդան, Վահան, Սմբատ, Մուշեղ, Տարօնցին 469
Վերջին վարդ, վերջին վարդ, Ք. Պատկանեան 471
Վէրքերով լի ջանֆիտայ եմ 472
Վառեց երկինք իր մոմերը 619
Վրէ՛ժ կը գոռան չիրմաց խորէն, Պ. Դուրեան 619

Տ

Տալւորիկցի կտրիճ եմ ղորդ, Մ. Տամատեան 473
Տանջւում եմ անքուն գիշերն անկողնում,
Յ. Թումանեան 476
Տանուտէր, աղջիկ, տղաք, Հ. Էկինեան 478
Տարածեալ ձեռք ընդ ձեռաց 662
Տարի մ՚ալ անցաւ, Մ. Անդրէասեան 480
Տեհար մէկը չլապայով 481
Տեսէք տղաներն Նոյեան տապանին 482
Տէր իմ Աստուած, քեզ կ՚աղաչեմ 483
Տէ՛ր, կեցո դու զՀայս, Մ. Գ. Թաղիադեանց 483
Տէ՛ր ողորմեա Հայոց ազգին, Քամառ Քաթիպա 485
Տիկնայք փափկասունք Հայոց աշխարհին
Ս. Հախումեան 486
Տխուր ողբով մ՚ըսեր ինծի, Լօնկֆէլլօ, 489
Տղայք, ժողովուինք հեռուէն ու մօտէն 490
Տուր ձեռքդ, եղբայր, ժամ է զարթելու 491
Տո՛ւր ձեռքդ, ընկեր, — այս ծանր օրերին 492

Ց

Ցամաք յարդի վերայ պառկած, Պ. Հ. Ադամեան 493
Ցնծա՛ Հայաստան, ցնծա՛, ուրախ լեր, Գ. Պ. 495
Ցորեկ գիշեր կը հառաչեմ, ա՛խ օրիորդ քո սիրոյդ 496
Ցուրտը փչեց, ձմեռ սաստիկ, Մ. Նալբանդեանց 497

Փ

Փառք Աստծու, Հայու արիւն ալ վօթեցաւ, Համառ Քաթիպա 500
Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ 803
Փառաց ի փառս բարձրանան 808
Փայլուն աչքով, փոքր ոտքով 642
Փառք մեր անմահ եւ հարց մերոց 620
Փա՛ռք քեզ Աստուած իմ 501
Փոխարինէն վերջ տարերքն ահարկու, Գ. Օգանեան 739

Ք

Քաղցր հայրենեաց ազատութեանը համար, Ա. Տամատեան 502
Քիչ կը մնայ սիրտս պատռի, Ա. Խահակեան 503
Քընէ՛, քընէ՛, իմ հայրենիք, Համառ Քաթիպա 504
Քնէ՛ քնէ՛, սիրուն որդի, Ռ. Տ. Գ. Պատկանեան 507
Քնէ՛, քնէ՛, սիրուն թռչնակ, Րաֆֆի 511
Քնի՛ր զաւակս, քնի՛ր որդեակ 512
Քնի՛ր իմ բալիկ, օրօր էլ արա, Ա. Ահարոնեան 513
Քելէ, քելէ, քէլէքիդ մնոնեմ, Կոմիտաս վ.արդապետ 740
Քայլամոլոր հէդ բանակը 621
Քու ցուրտ չիրմիդ վրայ, ուր վա՛հ, կայ թողուած Մ. Պ. 622
Քուն եղիր, Մանիկ, Կ. Կ. Մելիք-Շահնազարեանց 514

Օ

Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դուն սիրուն 515
Օ՛խտը տարով, օ՛խտը տարով, Ա. Ծատուրեան 740
Օխթը տարով հեռո՛ւ քեզնէն 516

Օ՜ն փութացէ՛ք, հասեալ է ժամ 517
Օտար աստեղց տակ կը հեծէ պանդուխտը 518
Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ 518
Օտար ափունք ցրուած ի սփիւռ, Ե. Մուրատեան 519
Օտար երկինք, օտար արեւ, Ալեքս. Ծատուրեան 520
Օտարուհին ինձ ասաց. «Հե՞ր ես լալիս արցունքը,
Քամառ Քաթիպա 521
Օտար երկիր թափառած, Ս. Պ. Փ. 622
Օր գարնանային, օ՜ր թարմ եւ սիրուն, Րաֆֆի 523
Օրոր, օրորր, օրորո՜ր... Ա. Գ. Փանոսեան 523
Օրորանիս մօտը նստած, Գ. Աստղիկ 525

ՁԱՅՆԱԳՐՈՒԱԾ ԵՐԳԵՐ

Ազատն Աստուած այն օրից 743
Ազատութեան այն վառ աչքը 782
Ահա ելաւ լուսին արծաթ 756
Ահա սուրհանդակի սայլակը 757
Արի իմ սոխակ, թող պարտէզ մերին 754
Աղջիկերք, պար բռնեցէք, 759
Ահա ծագեց կարմիր արեւ 788
Անի քաղաք նստեր կուլայ 784
Աստու մը դեռ մթնշաղ 787
Արեւ, արեւ դուրս եկիր 768

Բամբ որոտան 770
Բոյդ բարձր սարվի չինար 755

Դաշնակցական խումբ գնանք մենք Սասուն 775

Դու խօսք տուիր ինձանից չը զատուէիր 751
Ես լսեցի մի անոյշ ձայն 749

Թող չերգէ բլբուլ	763
Թող փչէ քամին պաղ պաղ երեսիս	765
Ի զէն Հայեր, ի սուր եւ ի հրացան	753
Իմ սիրելի զաւակունքը	761
Լուսնակը ցոլաց գնաց	778
Լռեց: Ամպերը եկան ծածկեցին երկինք	746
Ծառիս տակը մանիշակ	762
Ծաւալ, ծաւալ մաքուր հով, փչիր	752
Կարկուտ տեղաց Յանասօրայ գաշտումը	744
Կուրտիկ ունիմ, գեղին ա	750
Կառնեցէ՛ք տպերք, կառնեցէ՛ք քալ քալ	785
Կառնիկ ուսաի՞ կուգաս, ծառայ եմ ձայնիդ	789
Հաբրբան, հարբրբան	781
Համբարձման էրկուշաբթին	780
Հայը մահէն չի վախնար	790
Հիմի ե՞լ լռենք, եղբարք, հիմի էլ	766
Զայն տուր, ով ծովակ	760
Մայր Ազաքսի ափերով	758
Մեր խեղճ ազգը ուսում չունի	786
Մեր հայրենիք Թշուառ անտէր	745
Յառա՛ջ, Հայեր, հայրենիքի	773
Տալտրիկցի կարիճ եմ գորդ	776
Տէր ողորմեա Հայոց ազգին	779
Օ՛յ, նազանըմ, նազանըմ	783
Marseilles Hymn	791
Hail, Columbia, happy land	792
America, My Maryland	793
Star-Spangled Banner	794
Home, Sweet Home	795

ՑԱՆԿ ՆԿԱՐՆԵՐՈՒ

Հայ բանաստեղծներ 7
Մ. Նալբանդեան 8
Աւարայրի ոգին 13
Բաֆֆի 38
Ա. Ահարոնեան 55
Մ. Պէչիկթաշլեան 88
Արշակ Զօպանեան 92
Խ. Աբովեան 100
Խրիմեան Հայրիկ 106
Մ. Փօրթուգալեան 122
Սահակեան Մուրատ 201
Ա. Ծատուրեան 210
Յ. Թումանեան 218
Շուշան Վարդենի 229
Սրբուհի Տիւսաբ 232
Անդրանիկ 240
Տիգրան Բ. 248
Գամառ Քաթիպա 290
Հայ արուեստագէտներ եւ գիտուններ 300
Լեւոն Ա. Թագաւոր 334
Սրբուհի Սանդուխտ 343
Գայլ Վահան 351
Սաթենիկ 358
Սրբուհի Սանդուխտ 343
Հայկական գինանչան 707
Քրիստոսի մուտքը Երուսաղէմ 812
Ն. Ամիրխանեան եւ Տիկին Փանոսեան 741
Արտաշէս Բ. 369
Հայ գրագէտներ 385
Մերոբ Ազբիւր 397
Մայր Հայաստան 398
Հայ յեղափոխականներ 414
Սուրբ Մեսրոպ 419
Հայ զօրավարներ եւ պետական անձեր 427
Հայ բարեբարներ 435
Հասարակական գործիչներ 477
Սուրբ Էջմիածին 488
Հայ կաթողիկոսներ եւ պատրիարքներ 530
Մ. Իզմիրլեան 546
Մեծն Տրդատ 623
Աչոտ Ա. Թագաւոր 624
Քաջակորովն Մուշեղ 625
Վարդան Մամիկոնեան 626
Մ. Գրիգոր Լուսաւորիչ 644
Մովսէս Խորենացի 654
Գիրուքեան ոգին 679
Կամիտաս Վարդապետ 683
Խորովիզուհի 691
Գիրուքեան ոգին 679
Մ. Սահակ Պարթեւ 730
Քրիստոսի խաչելութիւնը 807



ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ԱՆԳԼԻԵՐԷՆԷ ՀԱՅԵՐԷՆ
ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ

ՓՐՕՖ. Յ. Յ. ՉԱՊՄԱՊՃԵԱՆ

ՄՕՏ *1500* ԷՋ ԱԻԵԼԻ ՔԱՆ *100,000* ԲԱՌ

ԳԻՆ, Լաթակազմ $8., Կաշեկազմ $10



ՆԱՍՐԷՏՏԻՆ ՀՕՃԱՅԻ ԶՈՒԱՐՃԱԼԻՔՆԵՐԸ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԵՒ ՃՈԽԱՑՈՒԱԾ

ԳԻՆ 75 ՍԷՆԹ

Կը Պարունակէ Աւելի Քան 250 Զուարճալիքներ 160 Երեսներու Մէջ

Ամենէն մելամաղձոտն անգամ չի կրնար զսպել իր խնդուքը երբ Նասրէտտին Հօճայի Զուարճալիքները կարդայ: Խնդալ եւ խնդացընել ահա Նասրէտտին Հօճայի Զուարճալիքներու կոչումը, ինչ որ երջանկութեան եւ երկարակեցութեան գլխաւոր ազդակներէն մին է:

Մենք Հայերս ամենէն շատ պէտք ունինք կարդալու Նասրէտտին Հօճայի Զուարճալիքները, անոր հեղինակին պէս հեզնել սորվելու համար մեր վրայ խուժող դժբախտութիւնները:

Եթէ ուզես ջիղերդ հանդարտեցնել, բարկութիւնդ զսպել, ասկէ ետք պէտք չունիս տասը, քսան եւայլն համրելու, Նասրէտտին Հօճայի Զուարճալիքները աւելի ազդու եւ աւելի գործնական են: Անգամ մը փորձէ ուրիշ միջոցի դիմելէ առաջ:

Օրինակ մը Սրափէնի Զարուհի Հնարամտութիւնները **Բացատրականաւ ԶՐԻ** *պիտի տանք ամէն մէկ օրինակ Նասրէտտին Հօճայի Զուարճալիքներուն հետ, կարճ ժամանակի մը համար:*

Երան Հրատարակութիւններ

ԱՆԳԼԻԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Ընդարձակ Բառարան, Անգլ.-Հայ.	$8.00
Նոյնը, կաշեկազմ	10.00
Բառարան Անգլ.-Հայ եւ Հայ.-Անգլ. միասին	1.25
Գատկեբազարդ Զրուցատրութիւն, Հայ.-Անգլ.	1.75
Մուսավվէր Միւֆեալէմէ, (Հայատառ) Տաճ.-Անգլ.	1.00
Ամերիկահայ Նամականի, Հայերէն եւ Անգլիերէն	2.00

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒ

Նոր Քերականի, Ամերիկահայ մանուկներու համար	.15
Մայրենի Լեզու, Ա. Տարի, Բ. Տպագրութիւն	.50
Միջին Դասընթացք Մայրենի Լեզուի	.50
Տետր Գրավարժութեան, Հայերէն	.15
Ընդարձակ Պատմութիւն Հայոց (սպառած)	
Ժողովրդային երգարան	2.00

ԱՌՈՂՋԱԲԱՆԱԿԱՆ

Գործնական Առողջաբանութիւն	1.25
Սեռային Առողջաբանութիւն (սպառած)	
Պինդութիւնն ու անոր դարմանը	.15
Գաղտնիք կանանց	.10

ՋԱՆԱԶԱՆ

Փարլամէնթական կանոններ	.20
Սխափէնի Զարանճի Հնարամտութիւնները	.25
Նասրէտին Հօճայի Զուարճալիքները, Բ. Տպագր.	.75
Աֆլօր Եղբայր (սպառած)	
Բաղդացոյց եւ երազահան	.10
Լուսանկարչութիւն	.25

E. A. YERAN, 29 Middlesex Street
BOSTON, MASS., U.S.A.